Կարլեն Արամի ՉԱՉԱՆՅԱՆ
(Կարլենե ՉԱՉԱՆԻ)

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ (1850-1990 թթ.)

Տպագրվել է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Գիրքը հրատարակվել է
«ԳՐԱՆԴ ՀՈԼԴԻՆԳԻ»
հովանավորությամբ

Խմբագիր՝
Ռզգան ԼԱԶԳԻՅԱՆ (Ռզգանե ՋԱՆԳՈ)
Երեւանի պետական համալսարանի
քրդերեն լեզվի եւ գրականության դասախոս,
«ՌՅԱ ԹԱՋԱ» թերթի պատասխանատու քարտուղար

ՀՏԴ 891.5.0
ԳՄԴ 83.3 Քրդ
Չ 230

ՉԱՉԱՆՅԱՆ ԿԱՐԼԵՆ (ԿԱՐԼԵՆԵ ՉԱՉԱՆԻ)

Չ 230 Հայ մտավորականության ավանդը քրդական մշակույթի եվ պատմության ուսումնասիրության գործում:
-Եր.: «Վան Արյան», 2004 թ.,-304 էջ:

Չ---4603020102---- 2004
854(01)2004

ԳՄԴ 83.3 Քրդ

ISBN 99941-38-26-X

© Չաչանյան Կ., 2004թ.

Նվիրում եմ գրող, բանահավաք
հորս՝ Արամե ՉԱՉԱՆԻՒ,
մայրիկիս Կազոյի
եւ եղբորս՝ Վալոյի
պայծառ հիշատակին:

ՆԱԽԱԲԱՆ

Հայ և քուրդ ժողովուրդների դարավոր բարեկամությունը պատմական, մշակութային խոր արմատներ ունի: Օսմանյան բռնատիրական լծի տակ հեծող բախտակից երկու ժողովուրդների բարեկամությունը չէր կարող շաղկապվել առանց հոգևոր հանգույցների, որոնք էլ, իրենց հերթին, առավելապես նպաստել են ազգային հոգեբանություններում և սովորույթներում առկա ընդհանրական գծերի զարգացմանն ու խորացմանը: Այս փոխկապվածությունն իր արտացոլումն է գտել քրդերի ու հայերի ազգային մշակույթներում:

Պրոֆեսոր Վ. Բայբուրդյանը, անդրադառնալով հայ-քրդական մշակութային կապերին, գրում է. «Բնակվելով միևնույն կուլտուր-պատմական միջավայրում, իրենց սոցիալ-տնտեսական ու հատկապես մշակութային զարգացման մեջ ևս հայ և քուրդ ժողովուրդները ունեցել են բազմաթիվ ընդհանրություններ և փոխազդեցություններ, որոնց ակնառու վկայությունն է, օրինակ, նրանց հարուստ ժողովրդական բանահյուսությունը»:[1]

Սույն ուսումնասիրության մեջ քննարկվող հարցերի շրջանակներում բոլոր դիտարկումներն արված են հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության, հայ մտավորականության մեծագույն ավանդի նվիրական գաղափարի արտացոլման տեսանկյունից: Ի դեպ, մեզ հասած գրավոր հիշատակությունների, հիմնականում Մ. Մաշտոցի անվան մատենադարանում պահպանվող մասունքների ուսումնասիրությունից պարզվում է, որ դեռևս շատ վաղուց հայ մտավորականները բազում էջեր են նվիրել քուրդ ժողովրդին ու նրա մշակույթին՝ բանահյուսությանը, լեզվին, պատմությանը, ազգագրությանը, երաժշտությանը, թարգմանական գրականությանը: Հետևաբար, անհերելի կլիներ թե՛ հայ և թե՛, հատկապես, քուրդ պատմագրության կողմից հայ բազմահարուստ գրականության և դրա սկզբնաղբյուրների նկատմամբ անտարբերություն դրսևորելը, քանզի դրանց օգնությամբ է հնարավոր դառնում քրդական մշակույթի զարգացման գործընթացում հայ ժողովրդի մշակութային առաջադիմական տարրերի, հայ մեծերի ներգրման ու ներգործության լուսաբանումը: Առավելևս անհերելի է հայ պատմիչների, ուղեգրությունների հեղինակների, բանահավաքների, գրողների, հասա-

րական-քաղաքական գործիչների, մտավորականների երկերում հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությանը, նրանց համատեղ կյանքին, պայքարին ու մշակույթին վերաբերող ուսանելի էջերը, հնարավորության սահմաններում, ի մի չբերելը: Անհրաժեշտ է ձեռքի տակ եղած բոլոր նյութերի խորաքնին գիտական լուսաբանումներն ընթերցողների լայն շրջանի սեփականությունը դարձնել, պատմության էջերից քաղել ամբողջ դրականը, միաժամանակ քննադատական խոսք ուղղելով թեկուզ սակավադեպ, սակայն, անընդունելի կարծիքների ու տեսակետների հասցեին:

Հայտնի է, որ թուրքական կայսրության կազմավորման առաջին տասնամյակներից սկսած, օսմանյան Թուրքիայի համար կենսական խնդիր դարձավ հպատակ այլազգի ժողովուրդների միջև հակասությունների ու երկպառակությունների սերմանումը, այդ թվում նաև՝ հայ-քրդական հակամարտությունների հնարավորինս խորացումը: Հայտնի է նաև, որ օսմանցիների այդ դիվային ծրագիրը բազմիցս հաջողություններ է հասել: Ինչ խոսք, մենք նպատակադրված չենք իրարամերժ կարծիքների խառնակույտը քրքրել և ուշադրությունը սևեռել երկու ժողովուրդների փոխհարաբերությունների այդ բացասական պահերի վրա, քանի որ դրանք արդեն պատմության կողմից դատապարտվել են:

Ելնելով աշխատության հիմնախնդիրներից, մենք կանգ ենք առել քրդական մշակույթին առնչվող հարցերի վրա, վերհանել հայ մտավորականության մեծագույն ներդրումը քրդական մշակույթի բնագավառում, ի մի ենք բերել հայ մտավորականության գնահատանքի խոսքը քուրդ ժողովրդի, նրա պատմության, բանահյուսության, ազգային սովորույթների, լեզվի և երաժշտության մասին, ինչն անչափ նպաստել է հայ-քրդական կապերի ամրապնդմանն ու քրդական մշակույթի զարգացմանը: Իսկ դա բնավ պատահական չէ, քանզի հայ լայնախոհ մտավորականները հետևողականորեն ու անշահախնդրորեն ջանացել են արծարծել քրդական մշակույթի ու պատմության հարցերը, իրականում պայքարել են հանուն հայ-քրդական մշակութային կապերի ամրապնդման, քրդերի մեջ լուսավորության տարածման, երկու ժողովուրդներին էլ պատգամել են փոխադարձ բարեկամության անհրաժեշտությունն ու օգտավետությունը:

Նկատի ունենալով հայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների ավանդի ոչ միայն պատմական կարևորությունը, այլև գիտական նշանակությունը, ուսումնասիրման ու հետաքրքրության ծավալման շրջանակները, բազմաթիվ հարցերի նորահայտությունը, մենք նպատակահարմար գտանք նրանցից յուրաքանչյուրի գործունեությունը քրդական մշակույթում ու պատմությունում առանձնացնել: Այլ խոսքով, նրանց մասին խոսել առանձին-առանձին՝ ուսումնասիրություններից, նյութերից մեջբերելով առավել արժեքավորները, և դրանք գիտական ընդհանրացման ենթարկել:

Անհրաժեշտ ենք համարում մեկընդմիշտ հավաստել, որ պատմական երկերին, աղբյուրներին, ժամանակագրություններին, վերլուծություններին մի պարզ ակնարկով անդրադառնալն իսկ բավական է համոզվելու, որ հայ մտավորականությունը բարձր է գնահատել քուրդ ժողովրդին ու նրա մշակույթը:

Քրդական մշակույթին առնչվող ծավալուն գործունեությամբ առաջինը աչքի

ընկավ Արևմտյան Հայաստանի հայ մտավորականությունը՝ հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին: Դա հենց այն ժամանակահատվածն էր, երբ ժողովուրդը հեծում էր աշխարհավեր սուլթանների բռնությունների տակ: Այս շրջանում Արևմտյան Հայաստանում աստիճանաբար նկատելի էին դառնում սոցիալ-տնտեսական ու քաղաքական տեղաշարժերը, որոնք անխուսափելիորեն դրական ներգործություն ունեցան հասարակական մտքի վրա, ծնունդ առան գաղափարախոսական տարբեր հոսանքներ, առաջ եկան քաղաքական կազմակերպություններ, հայ գրականությունը սկսեց զարգանալ ռեալիզմի ուղիով: Հենց այդ ճանապարհին էլ հայ մտավորականության կողմից գործնական հիմքերի վրա էին դրվում ոչ միայն «սեփական» կեղեքիչների դեմ պայքարի, այլև միևնույն ճակատագրին արժանացած, թուրքական անհանդուրժելի լծի տակ տառապող հայերի ու քրդերի համատեղ պայքարելու կենսական անհրաժեշտության, բարեկամության, փոխադարձ մշակութային առնչությունների ամրապնդման, քրդերի մեջ լուսավորություն տարածելու օգտավետության գաղափարները: Բնականաբար, այս օգտաշատ գործին լծվեց հայ առաջադեմ աշխարհիկ և հոգևոր մտավորականությունը: Պետք է երախտագիտությամբ նշել, որ 19-րդ դարի երկրորդ կեսին հայ մտավորականության ջանքերով ստեղծվեց գիտական մի նոր ուղղություն՝ հայ քրդագիտությունը, որն արծարծում էր քուրդ ժողովրդի մշակույթի ու պատմության ուսումնասիրման բազմաթիվ խնդիրներ: Եվ, ամենակարևորը, դրա շնորհիվ կործանումից ու անհետացումից փրկվել են քրդական մշակույթի այնպիսի լավագույն գոհարներ, որոնք առայսօր անհայտ են եղել գիտական աշխարհին:

Հայ մշակութային և ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսներ Խ. Աբովյանը, Սկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Հայրիկը), Րաֆֆին, Գր. Արծրունին և շատ ուրիշներ հեռատեսորեն հետևողական պայքար էին մղում՝ մերձեցնելու հայ և քուրդ ժողովուրդների ջլատված ուժերը:[2] Այդ ծրագրի իրագործման համար գործնական քայլերի դիմեցին նաև հայ մտքի լայնախոհ ներկայացուցիչներ Պաղտասար Նորատունկյանը, Սկրտիչ Պեշիկթաշլյանը, Գրիգոր Չիլինկիրյանը, Հարություն Սվաճյանը, Սկրտիչ Տիգրանյանը և այլք, առաջարկելով հեղաբեկել քրդերի կյանքը, լուսավորություն տարածել նրանց մեջ, վեր հանել ու գիտական հիմքերի վրա դնել նրանց մշակութային լավագույն նմուշները, ցույց տալ հայ և քուրդ ժողովուրդների մշակութային դարավոր առնչությունները: Եվ ամենակարևորը՝ քուրդ ժողովրդին դուրս բերել օսմանցիների համար ձեռնտու խավարի ու անգրագիտության մթնախորշից: Վերը նշված մտավորականների գործունեությանը աշխատության մեջ անդրադարձել ենք մանրամասնորեն:

Պատմական պարզ իրողություն է, որ հայ և քուրդ ժողովուրդների համագործակցության և մշակութային կապերի ջերմացման ցանկացած փորձ մշտապես մտահոգել է հետադեմ, առավելապես հաշվարկներով առաջնորդվող որոշ հեղինակների: Եվ, ուրեմն, բնավ էլ պատահական չէր, որ հենց 19-րդ դարում մի շարք օտար հեղինակներ, այդ թվում՝ Ն. Վամբերիին, Պ. Ռոհրբախը, Տ. Նոլդեկին և մյուսները, չխորանալով հայ-քրդական տնտեսական, կենցաղային, քաղաքա-

կան, մշակութային կապերի մեջ, ազգամոլ քաղաքականություն են վարել ոչ միայն հայ ժողովրդի ու նրա պատմագրության նկատմամբ, այլև աղավաղել են արժեքավոր իրողություններ, տվել ոչ ճիշտ բացատրություններ, մերժել հայ մշակույթի դերը քրդական մշակույթում:[3]

Ավելին, թաթախվելով թուրքաֆիլության մոլուցքի մեջ, նրանցից ոմանք մինչև իսկ ժխտում են քրդական մշակույթի տեղը Արևելքի մշակույթի հարուստ գանձարանում և նրա ամեն մի ազդեցություն հարևան ժողովուրդների վրա:

Իսկ անգլիացի «քրդագետ» Գ. Դրոյվերն անհիմն և, կասեինք՝ անտեղյակ լինելով քրդական մշակույթից, նշում է՝ «քրդերը չեն ունեցել գրավոր հիշողություններ... քրդերը չեն կարողացել հիմնել իրենց ազգային գրականությունը» (տե՛ս թ. Дройвер, "Изучение курдской истории, Журнал по изучению Востока и Африки, 1922 т II, пр. 3, ст. 505, անգլերեն լեզվով):

Այդ և այլ կեղծ «գիտական» կոնցեպցիաների ժխտման, մերկացման կարիքն այնքան չէր լինի, եթե նրանք սահմանափակվեին հակաքրդականության քարոզչության շրջանակներում և չնպատակմղվեին հայ-քրդական, առանց այդ էլ դժվարին պայմաններում սաղմնավորվող, բարեկամական, այդ թվում՝ մշակութային կապերն ականահարելու չարագուշակ ծրագրերին, որոնք որոճվում էին սուլթանական գաղափարակենտրոնում:[4]

Անհրաժեշտ է նշել, որ ինչպես արխիվային վավերագրերը, այնպես էլ պարբերական մամուլը, հայկական հարուստ գրականության նյութերը հավաստում են քրդական մշակույթի բնագավառում հայ մտավորականության ծավալած գիտական լայն գործունեության ու մտահորիզոնի, նրանց կողմից բարեկամական հետաքրքրության ծավալուն շրջանակների մասին: Այդպիսով էլ հիմնովին ժխտվում են վերոհիշյալ տեսակետները: Եվ այս ուսումնասիրությունն էլ, համադրելով ու համապատասխան վերլուծության ենթարկելով առկա պատմական փաստերը, շեշտը դնելու է այն անհերքելի իրողության վրա, որ հայ մտավորականությունը, հայ հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու մամուլը ջանացել են մշակույթի և հատկապես լուսավորության միջոցով էլ ավելի ամրապնդել հայ-քրդական կապերը, քուրդ ժողովրդին հանել խավարի հետնախորշերից, հեռու պահել այն չարագործություններից, որոնք Թուրքիայի հրահրմամբ որոշ քրդական ցեղեր տանում էին հայերի նկատմամբ, վեր հանել քրդական մշակույթի լավագույն նմուշները և դրանք փրկել կործանումից:

Ինչ վերաբերում է քրդերի մշակույթի ժխտման հեքիաթին, ապա մեկընդմիշտ փաստենք. ինչպես պատմական տարեգրությունները, այնպես էլ բազմապիսի ուղեգրություններն ու անցած դարերից մեզ հասած սրբազան մասունքներն անհերքելիորեն վկայում են, որ թե՛ վաղ, թե՛ ուշ միջնադարում քրդերն ունեցել են իրենց նշանավոր գիտնականներն ու գրողները, նաև բանիմաց հասարակական-քաղաքական գործիչները, որոնք իրենց ավանդն են ներդրել ինչպես քրդական, այնպես էլ մահմեդական Արևելքի այլ ժողովուրդների մշակույթների բնագավառում, այդ թվում (Քաբա Թահիր (935-1010), Ալի Հաֆրի (1009-1079), Ֆակե Տայրա (1302-1375), Մալա Բատե (1417-1491), Ահմադե Խանի (1591-1652), Շարաֆ Խան Բիթլիսի (16-րդ դ.) և մյուսները:

Հայ պարբերական մամուլը, անդրադառնալով այս հարցին, գրում է. «Քուրդերը արիական ժողովուրդներու ամենեն խելացի ցեղերեն մին կը համարվին, և անհատապես տվեր են բարձրագույն ընդունակության ապացույցներ»:[5] Իսկ քրդագետ Ժաբան իրավամբ հաստատել է, որ Սուրբիական Քուրդիստանի կենտրոն Սոուջբուլաղը 17-18-րդ դարերում դարձել էր արևելյան մշակույթի կենտրոններից մեկը:[6] «Մշակ» թերթը անդրադառնալով Պարսկաստանի նշանավոր բանաստեղծ Բաբա-Թահիր Օրհնյանում գրում է. «Այս բանաստեղծական երկիրը տվել է քյուրդին Բաբա-Թահիրի նման բանաստեղծ, որին երկրպագության կարժանացնեին, եթե Անգլիայում ծնված լիներ»: («Մշակ», 1915, N21):

Քրդական մշակույթը բարձր են գնահատել ականավոր հայագետներ Ն. Մառը, Լեոն, Հ. Օրբելին, Հ. Մանանդյանը և ուրիշներ: Մեր ժամանակների խոշորագույն արևելագետներից Հ. Օրբելին գրել է. «Նա, ում հայտնի է քրդական ժողովրդական պոեզիան, ում հայտնի է քրդական հեքիաթը, նա, ով թեկուզ մեկ անգամ լսել է քրդական երգը, որը բխում է քրդերի ոգուց և նրանց հարևան հայերի ոգուց... Եվ նա, թեկուզ մեկը, որ մի փոքր ծանոթ է քրդական հեքիաթի վառ ու պատկերավոր լեզվին, քրդական սիրային երգերի լեզվին, նա պետք է հասկանա, որ քրդերը ինչքան շատ նոր թարմ ու վառ բան կարող են ներդնել արևելյան պոեզիայի գանձարանում»:[7] Անդրադառնալով 17-րդ դարի քուրդ նշանավոր բանաստեղծ Ահմադե Խանու «Մամ ու Զին» պոեմին, անվանի գիտնականը գրել է. «Ահմադե Խանին այս գեղեցիկ պատմվածքը վերածեց բանաստեղծության բարձր աստիճանի, որպեսզի մարդիկ չասեն, որ քրդերը զրկված են իրենց արմատական մշակույթից, իրենց բնատուր լինելուց, որպեսզի մարդիկ չասեն, որ քրդերը չեն հոգում ողջ կյանքի գեղեցկության համար»:[8]

Պատմական իրողություն է, որ օսմանյան Թուրքիայի կառավարող վերնախավը հասկանալիորեն ոչ մի միջոցի առջև կանգ չի առել՝ քուրդ ժողովրդին իր բազմադարյան հարուստ ժառանգությունից խորթացնելու, նրա միջավայրում իր մշակութային «ժառանգությունը» արմատավորելու համար, նպատակը՝ ուծացման ցնորամիտ քաղաքականության իրացում: Նույնքան և ավելի թուրք կառավարողները ճգտել են սեպ խրել քուրդ և հայ ժողովուրդների միջև, ոչ թե լոկ խոչընդոտելու, այլև՝ անհնարին դարձնելու նրանց ամեն մի մերձեցում ու բարեկամական առնչակցում, ականահարելու հայ և քուրդ մտավորականության օգտավետ համագործակցությունը՝ հատկապես մշակույթի, լուսավորության բնագավառում: Ինչ խոսք, այդ չարամիտ գործելակերպն իրականացնելիս, Թուրքիան որոշակի հույսեր էր կապում նաև քրդական միջավայրի իր ռեակցիոն կամակատարների համագործակցության ու աջակցության հետ: Եվ որոշ դեպքերում նրան հաջողվում էր գրգռել քրդական վերնախավի՝ հատկապես հոգևորականության կույր մոլեռանդությունը՝ չիրագործել հայ մտավորականների ժողովրդանպաստ ծրագրերը: Հայ և քուրդ ժողովուրդների փոխհարաբերությունների պատմության մեջ, իհարկե, եղել են մութ ու ցավալի անցքեր, որոնց մեղավորը, սակայն, իշխող, թուրքական սիրաշահումներին կուլ գնացող խավերն են եղել: Դրանք, նախ, թուրք փաշաների և պարսիկ խաների, ապա, իհարկե, նաև ո-

րոշ քուրդ աղաների և շեյխերի ձեռքով են իրագործվել: Այս բոլորն էլ բախտակից երկու ժողովուրդների միասնությունը կազմալուծելու նպատակով են աշխատել նրանց միջև սեպ խրել, արհեստական հակադրություններ ու գժտություններ առաջացնել: Նրանց բարեկամությունը մթագնելու և խորտակելու համար վերջիններս դիմել են կրոնադավանական մոլեռանդության հրահրմանը, քրիստոնեական ու մահմեդական կրոնների միջև հակամարտության բորբոքմանը: Իհարկե, այստեղ կար նաև մեկ այլ նպատակ. ոչնչացնել ինչպես հայերին, այնպես էլ քրդերին: Այս առիթով Փարիզում հրատարակվող «Յառաջ» թերթը գրում է. «Անոնք էլ (քրդերը - Կ. Չ.) ատեն մը ի վեր և մինչև այսօր կը կոտորվին, ճիշտ այնպես, ինչպես քուրքիոյ հայ ժողովուրդը... 1915-16-ին հայաջինջ սարսափները նույն յարատեւությամբ եւ կատաղությամբ կգործադրվեին քուրդերու գլխին»:[9]

Չնայած վերը նշված հանգամանքներին և այն բանին, որ քրդական բազմաթիվ աշիրաթապետեր տարվեցին թուրքական փայլուն ոսկեդիրներով, շլացուցիչ կեղծ խոստումներով ու ընդգրկվեցին համիդյան գնդերի մեջ, մասնակցեցին ինչպես հայկական, այնպես էլ քրդական կոտորածներին: Բայց հայ մտավորականությունը, հայ ժողովուրդը չշեղվեցին իրենց ազնիվ, հումանիստական ուղուց, ընմրոնեցին թուրքական կառավարության հակահայկական ու հակաքրդական բիրտ քաղաքականությունը, է՛լ ավելի ընդլայնեցին իրենց ազնիվ բարեկամական գործունեությունը քուրդ աշխատավոր ժողովրդի մեջ:

Եվ այսպես, հայ լայնախոհ մտավորականության, հայ քաղաքական-հասարակական կազմակերպությունների, մամուլի ծավալած լուրջ ու նպատակասլաց գործունեությունը, հատկապես քրդական մշակույթի բնագավառում, տվեց իր դրական ու շոշափելի արդյունքները, հարստացրեց քրդական ողջ մշակույթի գանձարանը:

Ելնելով պատմական իրողությունից, պետք է նշել, որ 20-րդ դարում 70 տարուց ավելի աշխարհը բաժանված էր երկու մեծ՝ սոցիալիստական ու կապիտալիստական ճամբարների, քրդական հարցը դարձել էր մեծ տերությունների, առավելևս՝ թուրքական, իրանական, արաբական երկրների խաղաքարտը, ազատատենչ քուրդ ժողովուրդը և նրա մշակույթը զոհ էին գնում այդ քաղաքական դաշտում: Ամենուր տարվում էր հակաքրդական քարոզչություն, որի հիմնական նպատակն էր՝ թուլացնել քրդական շարժումները, խաթարել քուրդ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, նրան պահել խավարի մթնախորշերում, խոչընդոտել այդ ժողովրդի մշակույթի զարգացմանը: Թուրքիայում նույնիսկ խստագույնս արգելված էր քրդերեն խոսելը, որի դեպքում նախատեսված էր հինգ տարվա ազատազրկում: Սիրիայում արգելված էր քրդական տարազ հագնելը, Իրանում թույլատրվում էր միայն մայրենի լեզվով խոսել, իսկ քրդերենը ճանաչված էր որպես պարսկերենի բարբառ:

Մեր ուսումնասիրության՝ խորհրդային ժամանակահատվածին վերաբերող բաժնում հերքվում է այժմյան որոշ պատմաբանների, գրականագետների այն անհիմն ու բյուր կարծիքը, ըստ որի, ելնելով քաղաքական իրադրությունից, անտեսվում են անցյալի ձեռքբերումները, ենթագիտվում ակնհայտ նվաճումները:

Եվ հենց այս տեսակետից էլ այսօր մեզ համար չափազանց կարևոր է խորհրդային տարիների քրդական ժառանգության օբյեկտիվ և անաչառ գնահատումն ու իմաստավորումը, այն գիտական խորաքննին ուսումնասիրության ենթարկելը, քանզի քրդական մշակույթը միայն Հայաստանում էր առաջատար դիրք գրավում: Անշուշտ, Հայաստանի վարած ազգային քաղաքականությունը, տարածաշրջանի մյուս երկրների և Քուրդիստանի հատվածների խնդիրների հետագա կարևորության առումով, միանգամայն բարենպաստ էր, այն նաև ազգային հարցի լուծման օրինակելի ծրագիր էր:

Այս առթիվ հայկական պարբերական մամուլը իրավմամբ գրում է. «Հայ ժողովուրդը քրդերի նկատմամբ ցույց տվեց իր ասպետական ոգին իր գոյության պայքարի ընթացքում բարեկամանալ ձեռք մեկնեց Հայաստանում ապրող քուրդ բեկորներին» («Ալիք», 1971թ., 24 մարտի, N62):

Հայաստանի կառավարության և մտավորականության ծավալած գործունեության շնորհիվ Խորհրդային Հայաստանում բնակվող քրդական համայնքը կարճ ժամանակամիջոցում ոտք դրեց կուլտուրական զարգացման նոր մայրուղի: Առաջին հերթին զարկ տրվեց քրդական գրականությանը և լուսավորությանը, որոնք հանդիսացան քրդական նոր մշակույթի հիմնաքարերը: Հայ գրականության ու արվեստի մարդասիրական դարավոր ավանդույթները բացահայտ ներգործություն ունեցան քրդական նորաստեղծ բազմաբնույթ գրականության վրա, իսկ քրդական արվեստն, մշակույթն ու պատմությունը աստիճանաբար սկսեցին զարգանալ՝ ստեղծագործական սերտ առնչություններով կապված լինելով, առաջին հերթին, հայ գրականությանը: Քուրդ ընթերցողն ու գրողը հայերենի միջոցով ոչ միայն ծանոթացան հայ դասական ու ժամանակակից գրականությանը, այլև՝ համաշխարհային գրականությանը, ինչին նպաստեց առավելապես թարգմանական գրականությունը: Քրդական թարգմանական գրականությունը քրդական մշակութային կյանքի նշանակալի հատվածն է կազմում: Այդ իսկ պատճառով, անդրադառնալով քրդական գեղարվեստական գրականության զարգացման շարժառիթներին, մենք անհրաժեշտ չափով տեղ ենք հատկացրել նաև քրդական թարգմանական գրականությանը, որի հիմքերը նույնպես դրվեցին հայ մտավորականության կողմից: Ինչ վերաբերում է հայ գրականության ազդեցությանը քրդական գրականության վրա, մենք այն դիտարկել ենք հայ մշակույթի բոլոր ճյուղերի՝ քրդականի վրա ունեցած բարերար ազդեցության տեսանկյունից: Գրական ազդեցությունների, այս կամ այն սյուժեների, թեմաների ու երկերի փոխազդեցությունների մասնավոր հարցի վերլուծությունը կատարված է այնքանով, որքանով դա առնչվում է ուսումնասիրվող հարցին:

Նաև պետք է նշել, որ կարճ ժամանակահատվածում Հայաստանում լայն թափ հաղորդվեց քրդերի մեջ անգրագիտության վերացմանը: Ինչպես Երևանում, այնպես էլ քրդական գյուղերում հիմնվեցին քրդական մշակութային օջախներ, դպրոցներ, խրճիթ-ընթերցարաններ, ակումբներ ու գրադարաններ, սկսեցին զարգանալ քրդական մշակված երաժշտությունը, թատրոնը, մամուլը, գիտական բարձր հիմքերի վրա դրվեց քրդագիտության հարցերը: Եվ այս ամենը՝ Հայաստանի կառավարության, հայ մտավորականության, հայ մշակույթի բարերար

ներգործության շնորհիվ: Քրդական մշակույթի նման զարգացումով էր պայմանավորված, որ Հայաստանը դարձավ յուրօրինակ այցեստուն Իրանի, Իրաքի, Սիրիայի և նույնիսկ Թուրքիայի քրդերի համար:

Նպատակ չունենալով տալու քրդական մշակույթի, դրա զարգացման պատմական ուղու վրա հայ մշակույթի ներգործության ու բարերար ազդեցության չափազանց մանրազնին, ամբողջական լուսաբանումն ու վերլուծությունը, սակայն, գիտակցելով այդ ազդեցության հսկայական նշանակությունը, աշխատել ենք հնարավորինս գիտական վերլուծություններով կանգ առնել տվյալ ժամանակաշրջանի այն կարևորագույն հարցերի վրա, որոնք առնչվում են մեր ուսումնասիրության հիմնական խնդրին, ներկայացրել և մեկնաբանել ենք այդ մասին վկայող ուշագրավ հուշերը, աղբյուրներն ու փաստերը, որոնք առ այսօր դուրս են մնացել ինչպես հայ, այնպես էլ քուրդ պատմագրության տեսադաշտից:

Հայ մտավորականության և մշակույթի դերը քրդական մշակութային կյանքում պատմական ոչ մի ժամանակահատվածում, առավելևս 19-20-րդ դարերի հատվածում, պատմաբանների և գրականագետների կողմից դեռևս գիտական լուրջ ուսումնասիրության առարկա չի դարձել: Չնայած ինչպես հայ, այնպես էլ քուրդ պատմաբանների, գրականագետների, արվեստագետների որոշ աշխատություններում հանդիպում ենք մասնակի տեղեկությունների և, չնայած այն հանգամանքին, որ քրդագիտական հարցերի լուրջ ուսումնասիրությունը հենց Արևմտյան Հայաստանում և հատկապես Խորհրդային Հայաստանում է սկսվել, այնուամենայնիվ, առայսօր չի եղել գիտական ամբողջական այնպիսի մի ուսումնասիրություն, որը համակողմանիորեն արծարծեր հայ մտավորականության ու մշակույթի բարերար ներգործությունը քրդական ողջ մշակույթի վրա, վեր հաներ այդ հարուստ ու կարևորագույն պատմությունը:

Հայ-քրդական փոխհարաբերությունների, այդ թվում՝ խնդրո առարկայի վերաբերյալ հետաքրքրական տեղեկություններ կան ակադեմիկոսներ Մ. Ներսիսյանի, Մ. Զուլալյանի, պրոֆեսորներ Վ. Բայբուրդյանի, Հր. Սիմոնյանի, Ս. Պողոսյանի, Ա. Ղանալանյանի, Հ. Փափազյանի, Ջ. Կիրակոսյանի, Կ. Խուդավերդյանի, Հ. Ղազարյանի, Մ. Հասրաթյանի, Ա. Համբարյանի, Վ. Ղազանչյանի, Ս. Ամանեսովի, Գ. Ակոպովի, Գ. Աստրյանի, Ա. Փոլադյանի, Հ. Ջնդիի, Ս. Ավդալի, Ջ. Ջալիլի և այլոց աշխատություններում, որոնցից կարևորներին անհրաժեշտ չափով անդրադարձել ենք աշխատության համապատասխան գլուխներում:

Այստեղ կարևոր է առանձնացնել հայ պատմագրության ականավոր ներկայացուցիչ Լեոյին, որն իր մի շարք աշխատություններում ուշադրությամբ անդրադարձել է քուրդ ժողովրդի պատմամշակութային և ընդհանրապես հայ-քրդական առնչությունների հարցին:[10]

Ինչպես մեր, այնպես էլ օտարերկրյա, այդ թվում՝ հայ և արևմտաեվրոպական մի շարք առաջադեմ պատմաբանների, գրականագետների, ազգագրագետների ու լեզվաբանների ուսումնասիրություններում հանդիպում ենք պատմական բազմաթիվ արժեքավոր տեղեկությունների, որոնք վերաբերում են քուրդ ժողովրդի մշակույթի ու պատմության հարցերին, որոնց այս կամ այն չափով անդրադարձել ենք սույն ուսումնասիրությունում:

Բազմաթիվ փաստական տվյալներ է ամփոփում Հակոբ Շահբազյանի «Քիւրդո-հայ պատմութիւն» աշխատությունը:[11] Սույն մենագրությունն ուսումնասիրողին է ներկայացնում պատմական բազմաթիվ փաստեր, որոնք ապացուցում են հայ և քուրդ ժողովուրդների համատեղ պայքարը օսմանյան մղձավանջային տիրապետության դեմ: Իրավամբ պատմաբանի աչքից չեն վրիպել իր ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները, որոնց ականատեսն է եղել հենց ինքը: Դրանք հիմնականում հայ-քրդական հարաբերությունների հարցերն են: Սակայն հեղինակը մասամբ է անդրադառնում երկու բախտակից ժողովուրդների մշակութային կապերին, հայ մտավորականության ու մշակույթի դերին ու նշանակությանը:

Բազմարովանդակ է Ե. Տրանգյանի «Ասորպատական»[12] աշխատությունը, որում տեղեկություններ կան քրդերի սոցիալ-տնտեսական կյանքի, կենցաղի, պաշտամունքի վերաբերյալ, որոնք կրում են տեղեկատվական բնույթ, այնուամենայնիվ այնտեղից քաղել ենք որոշ նյութեր:

Հայ-քրդական տնտեսական, կենցաղային, մշակութային և այլ կապերի վերաբերյալ որոշակի փաստագրական նյութեր առկա են արևմտահայ պատմագիրներ Ամղրանիկի «Դերսիմ, ճանապարհորդություն և տեղագրություն», Գ. Երևանյանի «Պատմություն Չարսանջակի հայոց» աշխատություններում:[13] Սակայն պետք է նշել, որ նրանց շարադրանքը որոշակի ժամանակագրական բնույթ է կրում և զուրկ է գիտական մեկնաբանություններից:

Վերոհիշյալ հեղինակների, ինչպես նաև հայագրի մի շարք այլ մտավորականների պատմագրական, ուղեգրական, գեղարվեստական, հուշագրական աշխատություններում շոշափված են նաև հայ և քուրդ ժողովուրդների միացյալ ուժերի ստեղծման փորձերի, նրանց ազատագրական համատեղ պայքարի պատմության ուշագրավ հարցերը: Մեզ համար հատկապես կարևոր է այն իրողությունը, որ անդրադառնալով հայ-քրդական հարաբերություններին, նրանք ցույց են տվել, թե որ նահանգներում, քաղաքներում ու գյուղերում են եղել հայ և քուրդ ժողովուրդների կենցաղի ու մշակույթի առավել մերձեցման փորձեր, ընդհանրություններ: Պետք է ընդգծել, որ այդ նյութերը տվյալ ժամանակի արտահայտություններն են և համարվում են սկզբնաղբյուրներ: Այս իսկ տեսանկյունից հայ և քուրդ ժողովուրդների միասնական պայքարին, հայ-քրդական հարաբերություններին, կենցաղին, ազգային բարքերին և սովորույթներին է նվիրված Արշակ Սաֆրաստյանի «Քրդերը և Քյուրդիստանը» խորագրով արժեքավոր աշխատությունը:[14]

Թեմային առնչվող հարցերի վերաբերյալ առանձին դրվագներ են նկարագրված Ս. Եղիազարյանի՝ Հայաստանի քրդերին, առաջին հերթին, Երևանի նահանգի քրդերի կենցաղին ու բարքերին նվիրված ծանրակշիռ աշխատությունում, որը տարիների քրտնաջան աշխատանքի արդյունք է: Ճիշտ է, մեթոդաբանական տեսանկյունից ունենալով թերություններ, այն յուրաքանչյուր քրդագետի կարող է ծառայել որպես անփոխարինելի սկզբնաղբյուր և դարձել է մեր ուսումնասիրության կարևորագույն աղբյուրներից մեկը:[15]

Իր մասնակի թերություններով հանդերձ, հիշատակության արժանի է Պ.

Լերխի՝ իրանական քրդերին վերաբերող հետազոտությունը, որի էջերում հանդիպում ենք հայ-քրդական կապերին, կենցաղին վերաբերող նյութերի: Սակայն, քանի որ աշխատությունը գրված է հիշողությունների, պատումների ձևով, փաստերը ընդհանրացող բնույթ են կրում:[16]

Ուսումնասիրվող հարցի վերաբերյալ որոշ նյութեր ենք քաղել Ուրմիայում Ռուսաստանի փոխհյուպատոս Վ. Պ. Նիկիտինի «Քրդերը» արժեքավոր աշխատությունից, որի վերջին գլխում թռուցիկ խոսվում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ապրող քրդերի ու նրանց մշակույթի մի քանի հարցերի մասին: Սակայն անտեսված է հայ մտավորականության դերը քրդական մշակույթում: 1956 թվականին նրա աշխատությունը՝ «Քրդերը. սոցիոլոգիական և պատմագրական ուսումնասիրություն» խորագրով, ֆրանսերեն լույս է տեսել Փարիզում, այնուհետև թարգմանվել է նաև ռուսերեն:[17]

Ուսումնասիրվող հարցի վերաբերյալ որոշ նյութեր քաղված են քրդագետ, պրոֆեսոր Մ. Հասրաթյանի "Курды Турции в новейшее время, Ереван, 1990" աշխատությունից:

Պետք է ընդգծել, որ արտասահմանյան բազմաթիվ քուրդ պատմաբաններ, գրողներ, ազգագրագետներ երախտագիտությամբ են վերաբերվել ու բարձր են գնահատել հայ մտավորականության գործունեությունը քրդական մշակույթի, քրդագիտական հարցերի ուսումնասիրման բնագավառում: Նրանցից են Աբդուլա Ոզակը, Աբդուլ Ղադրին, Աբդուլ Ազիզը, Նուրի Դերսիմին, Էմին Չեքին և ուրիշներ: Աշխատության համապատասխան բաժիններում կանգ ենք առել այդ ուղղությամբ նրանց կատարած գործունեության վրա, մեր հանել մեզ հետաքրքրող պրոբլեմների վերաբերյալ նրանց ներդրումն ու կապերը հայ մտավորականության հետ:

Պատմագիտական և քաղաքական տեսակետից, հատկապես հայ և քուրդ ժողովուրդների հարաբերությունների վերաբերյալ, չափազանց հետաքրքրական տեղեկություններ կան քուրդ նշանավոր պատմաբան, պրոֆեսոր Քեմալ Մազհարի՝ «Քուրդիստանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» արժեքավոր աշխատությունում, որը 1977 թվականին հրատարակվել է Բաղդադում: Աշխատության ամենածավալուն՝ 5-րդ գլխում, որ վերնագրված է «Քրդերը և հայերի հեղված արյունը», հեղինակն անդրադարձել է հայ և քուրդ ժողովուրդների դարավոր բարեկամությանը, նրանց նկատմամբ թուրքական կառավարության ազգահալած քաղաքականությանը, մեր հանել երկու ժողովուրդների հակամարտությունների հիմնական պատճառները, որոնք պայմանավորված են եղել Թուրքիայի և իմպերիալիստական մյուս տերությունների անմիջական գործունեությամբ: Սակայն նրա ուսումնասիրման դրդրից դուրս են մնացել մշակութային հարցերը, հատկապես հայ մտավորականության գործունեության այդ ուղղությամբ:

Ավելի առատ, գիտականորեն համակարգված ու մշակված նյութեր կան մեր օրյա հայ հեղինակների տարաբնույթ ուսումնասիրություններում: Խ. Ավդալբեկյանը «Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1881-1917 թթ.)» աշխատությունում (Երևան, 1959), կանգ առնելով ցարական Ռուսաստանի տիրապետության տակ ապրող քրդերի սոցիալ-տնտեսական վիճակի վրա, ցույց է տալիս, որ հայ և քուրդ աշխատավոր ժողովուրդների կենցաղում և ազգային սովորույթներում կան բավականին համանմանություններ, որոնք գալիս են դարերի խորքից: Իր՝ «Հողաշինարարությունը Հայաստանում ազգային փոքրամասնությունների շրջանում (1921-1927 թթ.)» և «Սոցիալիստական հողագործությունը Հայաստանում» (1920-1929 թթ.)» աշխատություններում (Երևան, 1962) Գ. Շառոյանը, նպատակադրվելով ցույց տալ ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ քրդերի սոցիալ-տնտեսական վիճակը, չի անդրադարձել մշակութային տեղաշարժերին ու հայ մտավորականության գործունեությանն այդ բնագավառում:

Հատկապես հետաքրքիր ու բազմաբովանդակ փաստերով են հագեցած Վ. Բայբուրդյանի «Հայ-քրդական հարաբերությունները օսմանյան կայսրությունում», Ա. Համբարյանի «Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում», Հ. Մ. Պողոսյանի «Վասպուրականի պատմությունից» աշխատությունները: Ճիշտ է, նրանց ուսումնասիրության դրդրից դուրս են մնացել քրդական մշակութային հարցերը, սակայն, անդրադառնալով հայ-քրդական հարաբերություններին, Թուրքիայում առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակին, միանգամայն օբյեկտիվ ներկայացրել են նաև հայ և քուրդ ժողովուրդների միասնական պայքարն ու փոխհարաբերությունները:

Մեզ համար անհամեմատ հետաքրքրական են նաև Կ. Խուդավերդյանի, Ա. Համբարյանի և Հ. Մակինցյանի ուսումնասիրությունները,[18] որոնցում հեղինակները, խոսելով Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող աշխատանքների մասին, որոշ չափով փորձել են անդրադառնալ հայ մտավորականության կողմից քրդական շրջանում տարվող տնտեսական ու մշակութային աշխատանքին:

Քուրդ պատմաբան Խ. Չաուոն իր «Սովետական Հայաստանի քրդերը (1920-1940 թթ.)» (Երևան, 1965) պատմական ակնարկի չորրորդ գլուխը ևվիրել է քրդերի կյանքում արձանագրված մշակութային վերափոխումներին: Սակայն նրա տեսադաշտից դուրս են մնացել մշակութային այն հիմնական հարցերը, որոնք արծարծվել են հայ մտավորականության գործունեության մեջ:

Մեր շոշափած թեմայի կապակցությամբ ուշադրության են արժանի Ջ. Ջալիլի «Քրդական գիրքը Հայաստանում (1930-1980 թթ.)», (Երևան, 1981) և «Սովետական Հայաստանի քրդերը (1920-1980 թթ.)», (Երևան, 1987) բիբլիոգրաֆիաները, Տահար Աբասյանի «Հարազատ ընտանիքում» (Երևան, 1982) գրքույկը:

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամական ու ռազմական կապերի, հերոսական համատեղ պայքարի մասին կարևոր հիշատակություններ կան ինչպես քրդական, այնպես էլ հայկական հարուստ ավանդապատումների, երաժշտական բանահյուսության մեջ: Այս հարցերին է անդրադարձել պրոֆեսոր Հաջիե Ջնդին իր «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ» (Երևան, 1965) արժեքավոր աշխատության էջերում: Այդ խնդրին ուսումնասիրությունում անդրադարձել ենք միմիայն մշակութային տեսանկյունից, կանգ առել հարցի պատմական արմատների և շարժառիթների վրա: Հե-

տաքրքիր փաստերով են հագեցած Կնյազ Սիրգոևի «Գրական հորիզոններում» (Երևան, 1986), «Ազգային գրականությունները և գրական կապերը» (Երևան, 1985) աշխատությունները: Քուրդ բանաստեղծ-գրականագետ Չարկյազ Սմառյանն առանձին գրքույկով անդրադարձել է ժամանակակից հայ գրողների կողմից քրդական բանահյուսության մի քանի նմուշների մշակումներին: Սույն աշխատություններից քաղել ենք մեզ հետաքրքրող լրացուցիչ նյութեր:[19] Մեր թեմային առնչվող որոշ նյութեր կան նաև Հ. Զնդիի «Ծաղկեփունջ» (Երևան, 1963) գրքում, որում հեղինակն ի մի է բերում որոշ հայ գրողների գնահատականները քրդերի և հայ-քրդական բարեկամական կապերի մասին: Հայ-քրդական կենցաղային և ավանդական կապերի վերաբերյալ տեղեկություններ կան Ա. Ավդալի «Անդրկովկասի քրդերի կենցաղը» աշխատությունում (Երևան, 1958): Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Ղ. Կուրդոևի՝ Խ. Աբովյանի և Հ. Օրբելու մասին գրված հոդվածները, որոնց մենք անդրադարձել ենք աշխատության համապատասխան բաժիններում: Հայաստանում առաջին անգամ լույս տեսավ Ն. Մախմուդովի «Քուրդ ժողովուրդը» ուսումնասիրությունը (Երևան, 1959), որի վերջին գլխում հեղինակն անդրադարձել է Հայաստանի քրդերի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքին առնչվող մի քանի հարցերի: Սակայն, ինչպես սույն, այնպես էլ վերը նշված բոլոր աշխատություններում չեն բացահայտվում հայ մտավորականության գործունեության ու ավանդի նշանակությունը քրդական մշակութային կյանքում:

Քրդական մշակույթի ընդհանուր պատմության օրգանական մասն է կազմում երաժշտությունը, որին համախականի են անդրադարձել հայ մտավորականները, ինչպես, օրինակ, մեծանուն Կոմիտասը, և ապացուցել քուրդ ժողովրդի երաժշտական մտածողության բարձր ունակությունը: Դրանից ելնելով էլ, մենք աշխատել ենք վերհանել հայ երաժիշտների ներդրումը քրդական երաժշտության բնագավառում:

Հիշատակենք հատկապես հայ անվանի երաժշտագետ Ս. Գասպարյանի «Կոմիտաս» աշխատությունը:[20] Այստեղ, չնայած մասնակիորեն է ներկայացված հայ ազգային երաժշտության ռահվիրա Կոմիտասի գործունեությունը քրդական երաժշտության հետազոտման ասպարեզում, այնուամենայնիվ, մեզ հաջողվել է որոշակի նյութեր քաղել: Հետաքրքիր նյութեր է պարունակում նաև քուրդ շնորհալի երաժշտագետ Նուրա Ջաուարի «Քրդական ժողովրդական երգարվեստը» աշխատությունը:[21]

Քրդական մշակույթն իր վառ արտահայտությունն է գտել նաև բազմաթիվ հայ գրողների ու բանաստեղծների գործերում, որոնք իրենց ստեղծագործությունների նյութը վերցրել են քրդական բանահյուսությունից, այն մշակելով՝ մատուցել հայ և քուրդ ընթերցողներին: Այստեղ կարևորվում է նրանց դերը, քանզի նման անմիջական գործունեությամբ խթանել են քրդական մշակույթի, գրականության զարգացումը: Հայ և քուրդ գրողների անձնական մտերիմ հարաբերությունները ու գրական համագործակցությունն արդեն ավանդույթ են դարձել, և պատահական չէ, որ հայ բազմաթիվ գրողներ, քուրդ ժողովրդի ու նրա նվաճումների հանդեպ խորին համակրանքով տոգորված, նպաստել են քրդական մշա-

կույթի զարգացմանը:

Հայ գրողներից Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Սարիետա Շահինյանը, Ստեփան Զորյանը, Հրաչյա Քոչարը, Սողոմոն Տարոնցին, Սերո Խանզադյանը, Սարմենը, Հովհաննես Շիրազը, Հմայակ Սիրասը, Վահան Գրիգորյանը, Գևորգ Էմինը, Խաչիկ Դաշտենցը, Հրաչյա Հովհաննիսյանը, Սկրտիչ Սարգսյանը, Կարենցը, Արամայիս Սահակյանը, Վարդգես Պետրոսյանը և շատ ուրիշներ հայ և քուրդ ժողովուրդների մշակութային կապերի ամրապնդման, հատկապես քրդական մշակույթի բարգավաճման ջատագովներն են և իրենց գործերում գեղարվեստական ուժով անդրադարձել են քուրդ ժողովրդի մշակույթի բազմաբնույթ հարցերին, դրանով իսկ խթանելով նրա զարգացումը: Աշխատության էջերում անդրադարձել ենք վերը նշված հայ գրողների որոշ ստեղծագործություններին:

Հայաստանի կառավարության, հայ մտավորականության ներդրումները քրդական մշակույթի բնագավառում տարբեր առիթներով ոգեշնչել են ժամանակակից քուրդ գրողներին: Այդ մասին մասնակի անդրադարձներ կան սույն ուսումնասիրությունում:

Քուրդ ժողովրդի մշակութային խնդիրների լուծման մեջ իրենց ներդրումն են ունեցել նաև սիմուրքահայ գրողներ Վիլյամ Սարոյանը, Կարապետ Սիտալը, Լևոն Մեսրոպը և այլոք: Նրանց ստեղծագործություններում շոշափվել են քրդական մշակույթին առնչվող այնպիսի հարցեր, որոնք հրատապ են նաև այսօր:

Պետք է նշել, որ չնայած հայկական թատերական արվեստը, կինոն, նկարչությունը, հանճարեղ հայ մտավորականության ակտիվ գործունեության, իրենց ուրույն ազդեցությունն են ունեցել քրդական ողջ արվեստի, քուրդ ժողովրդի գեղագիտական աշխարհայացքի զարգացման վրա, սակայն առ այսօր ինչպես հայ, այնպես էլ քուրդ և օտարազգի պատմաբանները, արվեստագետները, մշակութային գործիչները չեն զբաղվել այդ հարցերի գիտական մանրակրկիտ վերլուծությամբ: Սույն ուսումնասիրության մեջ առանձին գլուխ է հատկացված այս կարևորագույն հարցին:

Ինչպես տեսնում ենք, փոքր չէ թիվն այն հեղինակների, ովքեր այս կամ այն չափով անդրադարձել են քրդական մշակութային կյանքին: Սակայն դա մասնակի բնույթ է կրել: Նրանք չեն խորացել խնդրո առարկա կապերի առաջացման ու զարգացման պատմական արմատների մեջ: Այլ խոսքով, առայսօր ոչ ոք գիտական համապարփակ հետազոտման առարկա չի դարձրել հատկապես 19-րդ դարի հայ մտավորականության ծավալուն աշխատանքը քուրդ ժողովրդի մշակույթի բնագավառում:

Բացի վերոհիշյալ գրականությունից և սկզբնաղբյուրներից, մեր առջև դրված հարցերը բազմակողմանիորեն լուսաբանելու համար օգտագործել ենք նաև Երևանի, Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի արխիվներում գտնվող համապատասխան փաստաթղթերը, ուսումնասիրել ենք ռուսական, հայկական և քրդական պարբերական մամուլը: Հայկական մամուլը իբրև քուրդ ժողովրդի մշակույթի ու պատմության սկզբնակներից մեկը դեռևս ուսումնասիրության չի ենթարկվել, մենք աշխատել ենք այնտեղից քաղել թեմային վերաբերող առավել

կարեւոր նյութերը: Հարուստ փաստական տվյալներ ենք քաղել «Մշակ», «Տարազ», «Նոր Դար», «Մուրճ», «Արեւելյան մամուլ», «Հովիտ», «Դրոշակ», «Հայրենիք» և հայկական այլ պարբերականներից, որոնք իսկական գանձարաններ են քրդական մշակութային հարցերով զբաղվողների համար: Միայն նշենք, որ «Մշակ» թերթն իր գոյության ողջ ընթացքում 300-ից ավելի հոդվածներով անդրադարձել է քրդական տարբեր հարցերի, իսկ դաշնակցական մամուլի էջերը ողողված են քուրդ ժողովրդի վերաբերյալ նյութերով: Այս հարցի ճախաճեռնությունը արդեն մենք վերցրել ենք եւ 1980 թվականին հայերեն ու ռուսերեն լեզուներով հրատարակել ենք «Հայկական պարբերական մամուլը քրդերի մասին 1850-1920 թթ.» մատենագիտությունը եւ այժմ մեր ձեռքի տակ պատրաստի ունենք «Սփյուռքահայ պարբերական մամուլը քրդերի մասին 1920-80 թթ.» մատենագիտությունը: Սակայն այս հարցը կարիք ունի խորագնին ուսումնասիրության: Մեր աշխատության համար լրացուցիչ աղբյուր են հանդիսացել նաև «Դիվան հայոց պատմության» բազմահատորը և «Армянский вестник»-ի տարբեր թվականների լույս տեսած համարները:

Եվ, վերջապես, քրդական մշակույթի ու պատմության ուսումնասիրման համար բացառիկ գիտական արժեք են ներկայացնում այն հայկական աղբյուրագիտական նյութերը, որոնք առ այսօր չեն օգտագործվել ինչպես հայ, այնպես էլ քուրդ և օտարազգի ուսումնասիրողների կողմից: Նաև չեն վերլուծվել քրդական մշակույթի հանդեպ Հայաստանի կառավարության կողմից դրսևորված պետական քաղաքականության շարժառիթները, որը դրական ներգործեց համայն քրդական մշակույթի զարգացման վրա՝ նոր բովանդակություն հաղորդելով նրան և հարստացնելով նրա գանձարանը:

Սույն ուսումնասիրությունը մինչ այդ հրատարակված մեր մի շարք աշխատությունների ու բազմաթիվ հոդվածների հանրագումարն ու ամփոփումն է՝ հագեցված նոր, բազմաբնույթ նյութերով:

Գիտական աշխարհին եւ լայն ընթերցողներին ներկայացվող այս աշխատանքը, բնականաբար, չէր կարող իր մեջ ընդգրկել քրդական մշակույթի ու պատմության հարցերի ուսումնասիրմանը նվիրված հայ մտավորականության թողած ողջ հարուստ ժառանգությունը: Սակայն հուսով ենք, որ այս բազմակողմանի հետազոտությունն արժանիորեն կգնահատվի անկողմնակալ քննադատների կողմից և իր ներդրումը կունենա քրդական մշակույթի բոլոր ոլորտներում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄՆ ՈՒ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Ա. ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ

Քրդերը Ասիայի հնագույն ժողովուրդներից են, ունեն հնամենի մշակույթ, հերոսական անցյալ: Սակայն, բռնակալների լծի տակ կեղեքվելով, նրանցից շատ-շատեր ստիպված են եղել լքել հայրենիքն ու բնակություն հաստատել այլ երկրներում, ապրել կախյալ վիճակում, ենթարկվել ազգային ու սոցիալական ճնշման կամ էլ՝ հերոսական, սակայն անհավասար պայքար մղել Թուրքիայի, Իրանի ու այլ երկրների ոտնձգությունների դեմ: Ներկայումս նույնպես քուրդ ժողովուրդն այս տերությունների ծանր լծի տակ է: Միայն վերջին տարիներին Թուրքիան ոչնչացրել, հողին է հավասարեցրել բազմաթիվ քրդական գյուղեր, բռնագաղթվել են հազարավոր քրդեր: Ինչպես Թուրքիայում այնպես էլ այլ երկրներում քուրդ ժողովուրդն ապրում է քաղաքական և սոցիալ-տնտեսական ծանրագույն պայմաններում, զրկված է ազգային մշակույթի զարգացման նվազագույն հնարավորություններից:

Պատմական տարեգրությունները վկայում են, որ միևնույն տարածքում ապրող հայ և քուրդ ժողովուրդների միջև հաստատված էին բարիդրացիական հարաբերություններ, նրանք հաճախ միասին էին պայքարում օտար նվաճողների դեմ՝ ֆիզիկական բնաջնջումից և կոտորածից փրկվելու համար: Նաև հաճախ միասին էին հանդիսություններ կազմակերպում, մասնակցում տոնական խնջույքների՝ այդպիսով ընդօրինակելով միմյանց ազգային սովորույթների ու ավանդույթների բազմաթիվ տարրեր: Քուրդ հոդագործ գյուղացին սիրով ու հարգանքով էր վերաբերվում հայ ընտանիքին և նույնպիսի վերաբերմունքի էր արժանանում նրա կողմից: Հայերի և քրդերի փոխհարաբերությունը նպաստել է նրանց ազգային հոգեբանության և սովորույթների ընդհանրական գծերի զարգացմանն ու խորացմանը, և այս ամենն արտացոլվել է երկու ժողովուրդների ազգային մշակույթներում:

Հայ մտավորականությունը, իր գործունեությունը ծավալելիս, երբեք չսահմանափակվեց ազգային նեղ շրջանակներով: Լինելով մարդասիրական վեհ գաղափարների կրող՝ հայ մտավորականներն անդրադառնում էին հարևան ժողովուրդների պատմությանն ու մշակույթին և ուշադրության ար-

ժանացնում այն ամենը, ինչը կարևոր էր: Բնականաբար, հայ մտավորականությունը հատկապես չէր կարող անտարբեր գտնվել իր հարևան ու բախտակից քուրդ ժողովրդի նկատմամբ, որին գործնական աջակցություն էր տրամադրում: Բացի այդ, մեծ էր նաև հայ մշակույթի բարերար ազդեցությունը:

Հայ մատենագրության մեջ քրդերի մասին հիշատակություններ կան դեռևս 6-8-րդ դարերում:[1] Քուրդ ժողովրդի էթնիկական ծագմանը, պատմությանը, սոցիալ-տնտեսական կյանքին, ազգագրությանը, բանավոր գրականությանն ու լեզվին ժամանակին անդրադարձել են հայ մատենագրության այնպիսի մեծություններ, ինչպիսիք են Մովսես Խորենացին, Ա. Դավրիժեցին, Գ. Մագիստրոսը, Երզնկացին և ուրիշներ: Հայկական բազմաթիվ աղբյուրների վկայությամբ՝ հետագայում ևս հայ լայնախոհ մտավորականության առանձին ներկայացուցիչներ փորձել են, խորամուխ լինելով քուրդ ժողովրդի պատմական անցյալում, առավել մոտիկից ուսումնասիրել պատմամշակութային հարցերը: Նշենք, որ քուրդ միջնադարյան հանրահայտ գրողներ Ալի Հաիրին, Մալլա Ջըզիրին, Մալլա Բատեն, Ֆաղիե Տայրան, Ահմադե Խանին և մյուսներն էլ իրենց հերթին անդրադարձել են հայ ժողովրդի պատմությանն ու նրա դարավոր մշակույթին: Հայ-քրդական մշակութային կապերի մասին ուշագրավ է Դերենիկ Դեմիրճյանի հավաստումը. «Կա հայ-քրդական երաժշտություն, հայ-քրդական ֆոլկլոր, հայ-քրդական կենցաղ»:[2] Երկու ժողովուրդների բարեկամության մասին հայ անվանի պատմաբան Լեոն գրել է. «Դարավոր մոտիկ հարաբերությունները, անշուշտ, փոխադարձ ուժեղ ազդեցություն են տարածել երկու ազգությունների միջև, նույնացնելով նրանց կուլտուրական կյանքի շատ երևույթներ... Այնուհետև վկայակոչելով Ստրաբոնին, նշում է. «Այնքան մեծ էր նրա տեսած այս երկու ժողովուրդների նմանությունը հագուստի, բարքերի, նույնիսկ և լեզվի կողմից: Սրա պես ուրիշ ցուցումներ էլ կան, բավարար ապացուցելու համար, որ դեռ հին ժամանակներից Հայաստանի արևելյան և հարավային մասերում ստեղծված էր մի կուլտուրական միջավայր, որ հայերն ու քրդերը փոխադարձ շփումներով ու ազդեցություններով հարում էին մի ընդհանուր համայնական աշխարհայացքի, մի ընդհանուր կարգի»:[3] Իր հերթին գրող և հրապարակախոս Արամյան Հմայակը (Շվոտ) գրում է. «Տաճկական Հայաստանի աշխարհագրական դիրքը և դարավոր հայրենակցությունը հայ և քուրդ տարրերի միջև ստեղծել են հարաբերական այնպիսի գծեր, որոնք այդ երկու տարրերին շատ բանով դարձրել են համանման, միատիպ»:[4] Հայկական մամուլն անդրադառնալով հայ-քրդական փոխհարաբերություններին, գրել է. «Ոչ մի ժողովուրդ իր ճակատագրով, իր պատմությամբ այնքան չէ շաղկապված հայերու հետ, որքան քուրդ ժողովուրդը: Դեռ առասպելական շրջաններին, երբ մարդիկ ժայռերու վրա սեպաձև տառերով իրենց փառքն ու տիրությունը կարձանագրեին, երկու ցեղակիցները իրարու կողքին ապրած են անբնդհատ: Բազմաթիվ ազգեր ու ժողովուրդներ, հին Հռոմը, Մակեդոնիան, պարսիկը, հարավին արաբը, հյուսիսեսեն

սկյութացիք, հեռավոր արևելքեն Չինգիզ կամ Լենկթեմուր խաները, իսկ արևմուտքեն Բյուզանդիան և Տաճիկը եկած են եածախ հայոց և քրդաց աշխարհը և տիրապետած անոնց, բայց բոլորն էլ անցած, գնացած են: Անոնք ձմռան ձյունի նման նստած էին երկրներու ու ժողովուրդներու կրծքին, ճնշած, չարչարած են զանոնք, բայց յետոյ շոգիացեր, անհետացեր են և նորեն ծլած են քուրդ ու հայ ժողովուրդները իրարու կողքի»:[5]

Հատատապես կարելի է նշել, որ հայ մտավորականության կողմից քրդական հարցերի հանդեպ հետաքրքրությունը հատկապես խորացավ 19-րդ դարի երկրորդ կեսին: Պատմական փաստերը վկայում են, որ հայ-քրդական բարեկամական հարաբերություններն առավել ամուր ու ջերմ են եղել Դերսիմի, Ջարսանջակի, Խարբերդի, Վանի, Սասունի, Շատախի, Բիթլիսի գավառներում: Այստեղ բնակվող հայերի ու քրդերի միջև գործում էին առևտրական, արհեստակցական ու զինակցական կապեր, որոնք նպաստում էին հայերի հետ անմիջական գործնական առնչությունների: Գրող և գրականագետ Թորոս Ազատյանը նշում է. «Ջարսանջակում զինագործությունը խիստ զարգացած էր, Դերսիմի բոլոր քրդաց սուրերն ու հրացանները հայերը կշինեին և իրենք հայերն ալ առհասարակ զենք ունեին: Բավական թվով պանդուխտներ կային, որ անոնց մերձակից գավառները կապրեին»:[6]

Իսկ հայ բանահավաք, ազգագրագետ շատախցի Շահեն Կուժիկյանը, անդրադառնալով հայերի և քրդերի փոխհարաբերություններին, նշել է, որ Շատախի շրջանի հայերը և քրդերը զբաղվում էին անասնապահությամբ, հողագործությամբ: «Այս երկու ժողովուրդները լավ, բարի հարևաններ եղած էին ընդմիշտ: Քուրդը առևտուր կաներ միայն հայի հետ, առանց վարանելու միշտ հայի պահանջներին ենթարկված է, տարել է այդպիսիք նեղողամիտ և ուրախ տրամադրությամբ: Քուրդերը քրիստոնյա ժողովուրդների ընտանիքների (հայերի - Կ. Ջ.) տներում պարապում էին կարպետ և գորգագործությամբ, չուվկիներ գործելով»:[7]

Իսկ «Արձագանք» թերթը, անդրադառնալով Վանի հայերի և քրդերի առևտրական հարաբերություններին, գրում է. «Վանի հայերը սկսած են առևտրական հարաբերություններ մշակել մոտակա գյուղերի քրդերի հետ: Հայերը կենսամթերքներ և զգեստներ կուտան քրդերին և անոնցմե կը ստանան մսացու կենդանիներ, որով ներկայիս Վանի մեջ կը ճարվի եղեր միս, յուղ և նման կենսամթերքներ և ազգաբնակչության դրությունը բարելավված է»:[8]

Բազմաթիվ հայ ընտանիքներ ապրում էին պարսկական Քուրդիստանի Ուրմիո ծովի հարավային ափերում եղած քրդական գյուղերում: Այստեղ չկար մի քրդական գյուղ, որտեղ բնակություն հաստատած չլիներ թեկուզ մեկ կամ մի քանի հայ ընտանիք: Հայեր էին ապրում նաև Սուլդուզի, Սոուջ Բուլաղի և Միանդոաբ գավառներում, որտեղ բնակիչների գերակշռող մասը քրդեր էին: Ծրված լինելով ինչպես այս, այնպես էլ մյուս գավառների քրդական գյուղերում, հայերը նույնպես տարիների ընթացքում ընդօրինակել էին քրդերի սովորությունները, նիստուկացը, ազգային տարազը, բանահ-

յուսութիւնը, երաժշտութիւնը: Դերսիմցի պատմաբան Գ. Հալաջյանը նշում է, որ Դերսիմում 19-րդ դարում ապրում էին 600 հազար հայ և քուրդ, իսկ թուրքերը բնակչութեան չնչին տոկոսն էին կազմում: Ընդ որում, Դերսիմի գավառի 10 քաղաքներում և 470 գյուղերում հայերն ու քրդերը միասին էին ապրում:[9]

Հայկական աղբյուրները վկայում են, որ հայ և քուրդ ժողովուրդների միջև զինակցական կապեր են եղել դեռևս հին դարերում: Այդ մասին հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում պատմաբան Հակոբ Շահրազյանը:[10]

Հայերը և քրդերը միասնական ուժերով հանդես են եկել նաև մոնղոլական հորդաների դեմ: 1387 թ., երբ Լենկթեմուրը արշավեց Հայաստանի վրա, երկրի հարավային շրջաններում բնակութիւն հաստատած քրդերը Սասունի գլխավոր Ամիրյան իշխանութեան հետ միասին պայքարեցին նրանց դեմ:[11]

Հայ-քրդական բարեկամական կապերն առավել ցայտուն են դրսևորվել այն բանից հետո, երբ 1639 թ. Իրանի և Թուրքիայի միջև կնքվեց Քասրե-Շիրինի հաշտութեան պայմանագիրը, որով Հայաստանը բաժանվեց և ընկավ այս երկու տերութիւնների բռունցքի տակ: Այս վերաբաժանումից հետո հայ և քուրդ ժողովուրդների համար սկսվում է շրջադարձային, բոլոր դեպքերում՝ ավելի դաժան շրջան: Թե՛ Թուրքիան, թե՛ Պարսկաստանը երկու բախտակից ժողովուրդներին գցում են ծայրաստիճան թշվառ վիճակի մեջ, աղքատութեան ու սովի մատնում: Շահերն ու սուլթանները ամեն կերպ խոչընդոտում էին հայ և քուրդ ժողովուրդների միասնականութեանը, նրանց մշակույթների զարգացմանը:

Տիրող սոցիալ-տնտեսական պայմանները, ծանր հարկերը, ֆիզիկական ճնշումներն անխուսափելի էին դարձնում ինչպես հայերի, այնպես էլ քրդերի մեջ խռովութիւնները ու միասնական զինված ելույթները: Թուրքական կառավարող շրջանները տեսնելով, որ այս երկու ժողովուրդների միջև փոխհարաբերութիւններն աստիճանաբար ամրապնդվում են, և հասկանալով, որ այդ հանգամանքը վաղ թե ուշ կարող է հանգեցնել իրենց համար վտանգավոր հետևանքների, 19-րդ դարի երկրորդ կեսին դիմեցին բաժանիր, որ տիրես քաղաքականութեանը: Քրդական մի շարք աշիրաթապետերի տվեցին լայն լիազորութիւններ, փայլուն ուսադիրներ ու մեծ գումարներ, կազմեցին համիդյան գնդեր և, այդ գնդերն ուղղելով հայերի դեմ, կազմակերպեցին հայերի ու քրդերի ջարդեր:

Պատմագրութիւնը հայտնի են փաստեր, երբ բազմաթիվ քուրդ աշիրաթներ չեն աջակցել համիդյան գնդերին և նույնիսկ զենքով պայքարել են նրանց դեմ: Այս կապակցութեամբ հայկական պարբերական մամուլը գրում է. «Երբ Հայաստանի մեկ քաղաքի կամ գավառի մեջ զարհուրելի ջարդեր տեղի կունենան մնացյալ մասերու մեջ քուրդը անշարժ կմնայ եւ մինչեւ իսկ պաշտպան կհանդիսանայ հայուն: Օրինակ, երբ Վանի մեջ աղետալի կոտորած կսկսի Մոկաց Պեկը (Մուրթուլաբեկ Կ.Ջ.), որ հոն կը գտնվի եղեր այն

ժամանակ կայծակի արագութեամբ իր հայերը պաշտպանել կուտայ»:[12] Մեկ այլ հայ մտավորական գրում է. «Մուստաֆա աղան, որին ենթարկվում էին Ջեզիրեից հյուսիս մինչև Առնու լեռան լանջն ընկած քրդական ցեղերը, կոտորածների ժամանակ, այդ շրջանի հայերին իր հետ տարավ Ջեզիրեի կողմերը՝ իր ձմեռանոցը, նրանց փրկելով ջարդերից»:[13]

Հայկական կոտորածներին չմասնակցեցին Հուսեյն փաշան՝ Ադիլջևազում, Հաջի խանը՝ Նորդուզում, Իբրահիմ փաշան՝ Շեհրիվերանում, ինչպես նաև Բոհթանի, Խիզանի, Ջեզիրեի, Մակուի հեյդարանլի քրդերը Միրզա աղայի ղեկավարութեամբ և այլ աշիրաթներ:[14]

Հայտնի է, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Բայազետի շրջանը մտնում էր Էրզրումի վիլայեթի մեջ, և երբ Թուրքիայում սկսվեց հայերի կոտորածը, Բայազետի քրդերը չենթարկվեցին թուրքական հրահանգին, չմասնակցեցին կոտորածներին, ավելին, զգուշացրին կառավարութեանը, որ եթե մտնեն Բայազետ և սկսեն կոտորածը, նրանք կկոտորեն թուրքերին: Թուրքական կառավարող շրջանները, տեսնելով այս իրավիճակը, սկսեցին էլ ավելի սիրաշահել քրդական վերնախավին: Հայ և քուրդ ժողովուրդների միասնութիւնը կազմալուծելու նպատակով Թուրքիան դիմեց կրոնական մոլեռանդութեան հրահրման մեթոդին՝ փորձելով թշնամութիւն սերմանել քրիստոնյաների եւ մահմեդականների միջև: Ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը գրում է.«Սուլթանական կառավարութիւնը դիմում էր պրովոկացիոն միջոցների, որպեսզի խափանի հայ-քրդական միութիւնը, ամեն կերպ հրահրում էր քրդերին հայերի դեմ, արհեստականորեն առաջ էր բերում թշնամանք հարևան ժողովուրդների միջև»:[15]

Սակայն ո՛չ թուրքական բիրտ ու ազգահալած քաղաքականութիւնը, ո՛չ քուրդ վերնախավին շլացնող ուսադիրներն ու ոսկիները չէին կարող հայ և քուրդ աշխատավոր ժողովուրդների միջև թշնամութիւն սերմանել: Թեև շատ քրդեր, խաբվելով շեյխերի ու ցեղապետների կողմից, մասնակցեցին երիտթուրքերի կազմակերպած հայկական կոտորածներին, սակայն բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ միայն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին քրդերը հազարավոր հայերի կյանք են փրկել, նրանց թաքցրել են իրենց գյուղերում, ապա ուղարկել թուրքերի դեմ գործող ռուսական բանակի հայկական գնդերը:

Միայն Սասունի շրջանում համաշխարհային պատերազմի օրերին մոտ 12 հազար հայեր ապաստան են գտել քրդերի մոտ: Իսկ այն քրդերը, որոնք ապրում էին Էրզրումի հարթավայրից հարավ-արևմուտք գտնվող Մամախաթուն, Արաբկիր և Խարբերդ քաղաքների միջև, ամենուր հովանավորում էին հայերին: Պատերազմի ժամանակ քրդական բոլոր գյուղերում ապաստան էին գտել հայ ընտանիքներ: Էրզրումի հարթավայրում քրդերն իրենց անմատչելի լեռներում թուրքերից թաքցրեցին հարյուրավոր հայ ընտանիքներին, որոնց միջագետք էին աքսորել:[16] Այդ նույն ժամանակ հարավ-արևելքում՝ Սինջարի լեռներում, եզդիները, հայերի հետ միասին զենք վերցնելով, պայքարել են թշնամու դեմ:[17] Իսկ Մոկաց իշխան Մուրթուլա բեկը թույլ

չավեց, որ թուրքերը դիպչեն թեկուզ մեկ հայի:

Քուրդ մտավորականությունը, որ այդ ժամանակաշրջանում իր զարթոնքն էր ապրում, ամենուր ջանում էր էլ ավելի ամրապնդել հայ-քրդական բարեկամությունը: Եվրոպայում գործող քուրդ մտավորականները ջերմորեն էին արձագանքում հայ-քրդական բարեկամության կոչերին, և ունեին հետևյալ ծրագիրը. «1. Թուրքերը մեր ցեղի մեծագույն շինամիներն են, 2. հայերը մեր բախտակից ու ամենաարժեքավոր բարեկամներն են, 3. մենք ամեն գնով պետք է միացյալ ճակատ կազմենք հայի հետ ընդդեմ երկու ցեղի ալ ընդհանուր ու երդվյալ շինամի թուրքերուն, 4. հաջողության համար քրդերը և հայերը իրենց ուժերը պետք է կենտրոնացնեն այդ գլխավոր ճակատին վրայ, ջանալով միաժամանակ շահել բարեկամությունը Մերձավոր Արևելքի բոլոր ժողովուրդներուն»:[18] «Հայրենիք» թերթը, անդրադառնալով 20-րդ դարի առաջին քառորդի քրդական շարժումներին, հայ-քրդական բարեկամական կապերին, գրում է. «Որևէ ատեն քուրդերը այնքան բարեկամական և նույնիսկ եղբայրական զգացումներ չեն ունեցած հայության հանդեպ, որքան այժմ... Քյուրդը ավելի մեծ խանդավառությամբ կը մղե իր գոյամարտը թուրքին դեմ, երբ կը տեսնէ ու կհամոզվի, որ իրեն հետ է ամբողջ հայ ժողովրդին համակրանքը»:[19] Հայ և քուրդ աշխատավոր ժողովուրդները հավատարիմ մնացին իրենց ուխտին, պայքարեցին՝ գործնական հողի վրա դնելու այդ դարավոր բարեկամությունը, որը նաև դրսևորվեց նրանց մշակույթներում:

Պատմական պարզ իրողություն է, որ հենց տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանները հիմք հանդիսացան վեր հանելու քրդական մշակույթի ու պատմության հարցերը, որոնց ուսումնասիրությամբ սկսեցին զբաղվել հայ մտավորականության լայնախոհ ներկայացուցիչները: Ելնելով երկու ժողովուրդների պատմական կապերից, նրանք ավելի մեծ ուշադրությամբ սկսեցին հետաքրքրվել քուրդ ժողովրդի կյանքի, պատմության, ազգագրության, երաժշտության, բանահյուսության, լեզվի և գրականության հարցերով: Վեր հանեցին, կորստից փրկեցին և բազմակողմանի ուսումնասիրության ենթարկեցին քուրդ ժողովրդի մշակույթի լավագույն նմուշները: Կոչ արեցին լուսավորություն տարածել քրդերի մեջ, էլ ավելի ամրապնդել հայ-քրդական բարեկամական ու դիմակցական կապերը, քուրդ եւ հայ աշխատավոր ժողովրդին պարզաբանել թուրքական ազգահալած քաղաքականությունը, այն, որ թուրքական յաթաղանից նրանց փրկությունը միասնական պայքարի և մշակութային կապերի ամրապնդման մեջ է:

Բ. ՀԱՑ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Մաշտոցի անվան մատենադարանում պահպանված մի շարք նյութեր վկայում են, որ հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչները դեռ շատ վաղուց զբաղվել են քուրդ ժողովրդի պատմության, բանահյուսության, ազգագրության, լեզվի հարցերի ուսումնասիրությամբ: Մեր դիտարկումների արդյունքում հայտնաբերեցինք, որ Մատենադարանում, 7117 համարի տակ գրանցված մի հետաքրքիր վավերագրում պահպանված են քրդական մի քանի ազոլքներ, որոնք գրված են հայատառ քրդերենով:[20] Գրառման տարեթիվը հայտնի չէ, սակայն կարելի է ենթադրել, որ այն վերաբերում է վաղ միջնադարին, և որ հեղինակը սերտորեն հարաբերվել է քրդական միջավայրի հետ, լավատեղյակ է եղել քրդերի կրոնական ձոներին ու բանահյուսությանը և, ինչը հատկապես կարևոր է, քաջ տիրապետել է քրդերենին, տվել է մի քանի բառերի ստուգաբանություն:

Ի՞նչն է անանուն հեղինակին դրդել գրի առնելու քրդական այս տեքստերը. պարզ հետաքրքրասիրությո՞ւնը, դրանք հայկականների հետ համեմատելու ցանկությո՞ւնը, թե՞ կորստից փրկելու ձգտումը: Կարելի է ենթադրել, որ հայ մտավորականը հավանաբար փորձել է հուշել, որ քրդական կրոնական ձոները նույնպես հեթանոսական ծագում ունեն, հոգեհարազատ են ինչպես քրդին, այնպես էլ հային և տարածված են եղել նաև հայկական միջավայրում:

Մեկ այլ՝ 737 համարով գրանցված ձեռագրում, որը բաղկացած է 248 էջից, հանդիպում ենք քրդական ժողովրդական բանահյուսության մի քանի նմուշների, որոնք նույնպես գրված են հայատառ քրդերենով, պաշտամունքային մի քանի բեյթերով, պարզ ու հստակ կուրմանջի բարբառով:[21] Ձեռագրի 150-152-րդ էջերում ընդգրկված են նաև խրատականներ ու ասացվածքներ: Ինչպես երևում է տեքստից, այս անհայտ հեղինակը նույնպես լավ է տիրապետել քրդերենին, հատկապես կուրմանջի բարբառին և ծանոթ է եղել քրդական բանահյուսությանը: Կարծում ենք՝ բերված բեյթերի, առածների ու ասացվածքների մի մասը պատկանում է միջնադարյան քուրդ նշանավոր բանաստեղծ Ֆակիե Տայրայի գրչին, որի ստեղծագործությունները առ այսօր լայն տարածում ունեն քրդերի շրջանում: Հավանական է, որ քուրդ բանաստեղծի բեյթերը ընդունելություն են գտել նաև հայկական շրջաններում և հոգեհարազատ են եղել այն հայերին, ովքեր տիրապետել են քրդերենին:

Մատենադարանի հետաքրքիր նյութերից են 17, 18 և 19-րդ դարերին վերաբերող այն ձեռագրերը, որոնցում նույնպես գրառված են հայատառ քրդերենով նմուշներ: Ձեռագրերում կան քրդական մի քանի մանկական եր-

գեր ու ասացվածքներ։ Տվյալ դեպքում կարևորն այն է, որ հայ հեղինակները հետաքրքրություն են դրսևորել իրենց հարևան քուրդ ժողովրդի և հատկապես նրա բանահյուսության նկատմամբ։

Ուշագրավ են N 8049 ձեռագրի 125-րդ էջում գրառված քրդական բանահյուսության մի քանի նմուշներ (18-րդ դար)։ Նման պատառիկներ կան նաև NN 5060, 771, 10036 և այլ ձեռագրերում։ Հատուկ ուշադրության է արժանի N 771 ձեռագիրը, որում ոչ միայն առկա է հայ հեղինակի հետաքրքրությունը քրդական մշակույթի նկատմամբ, այլև այն, որ նա նպատակ է ունեցել հայերին ծանոթացնելու այդ տեքստերին։ Խնդրո առարկա ձեռագիրը բաղկացած է 439 էջից, իսկ բառարանը տեղադրված է 428-րդ էջում։ Հեղինակը հիմնականում ընտրել է այնպիսի բառեր, որոնք ավելի հաճախ են տեղ գտել տեքստերում։[22] Այդ բառերի ստուգաբանությունից պարզ է դառնում, որ հեղինակը շատ լավ է տիրապետել քրդերենին, և նրա ուսումնասիրությունը հետապնդել է մեկ այլ նպատակ ևս. քրդական հարուստ բանահյուսությունն այդ բառարանի օգնությամբ մատչելի դարձնելով քրդախոս հայ ընթերցողներին՝ կործանումից փրկել այդ գեղեցիկ գոհարները։

Քրդական մշակույթի նկատմամբ հայ մտավորականության հետաքրքրությունն առավել ցայտուն դրսևորվեց 19-րդ դարի սկզբներին։ Հայ պատմաբանները, գրողները, ազգագրագետները, բանահավաքները, լեզվաբաններն ու գրականագետներն իրենց տարաբնույթ աշխատություններում անդրադառնում էին նաև հարևան քուրդ ժողովրդին հուզող հասարակական-տնտեսական ու քաղաքական հարցերին, որոնք որոշակիորեն արտացոլվում էին քրդական մշակույթի պատմության մեջ։ Պետք է նշել, որ հենց այդ ժամանակվանից էլ Հայաստանը դարձավ քրդագիտական ուսումնասիրությունների կենտրոն, հիմնադրվեց մի նոր ուղղություն՝ հայ քրդագիտությունը։

19-րդ դարի հայ մտավորականության փայլուն ներկայացուցիչներից աշխարհագրագետ, պատմաբան, բանասեր, Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Ինճիճյանը, շրջագայությունների ընթացքում նյութեր է հավաքել նաև քուրդ ժողովրդի ծագման, պատմական, աշխարհագրական հարցերի, հայ-քրդական հարաբերությունների, բանահյուսության ու ազգագրության մասին։ Առանձնապես հետաքրքիր են կորդուքների և կորդաց աշխարհի, մարերի ու Մարաստանի վերաբերյալ նրա ուսումնասիրությունները։ «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» աշխատությունում, անդրադառնալով քրդերի ծագմանը, հեղինակն այն կապում է կորդուքների և մարերի հետ։[23] Քուրդ ժողովրդի մասին ուշագրավ տեղեկություններ կան նաև նրա «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» աշխարհագրության երեք հատորների բազմաթիվ էջերում, որտեղ հանդիպում ենք հայ-քրդական հարաբերություններին նվիրված ակնարկների։[24]

Քուրդ ժողովրդի պատմությունն ու մշակույթն ուսումնասիրող ցանկացած ոք առանց տարակուսանքի կարող է պնդել, որ քրդասեր հայ մտավորականների երախտավորների շարքում բացառիկ տեղ ունի հայ նոր գրա-

կանության հիմնադիր, մեծ վիպասան, մանկավարժ և լուսավորիչ Խաչատուր Աբովյանը։ Նա գիտական առումով ուշագրավ մտքեր է հայտնել քուրդ ժողովրդի բանահյուսության ու ազգագրության, լեզվի ու գրականության վերաբերյալ, նկարագրել այդ ժողովրդի բնորոշ մտածելակերպը, ազգային հոգեբանությունը։

Ուսումնասիրելով իր ժամանակի պատմության սկզբնաղբյուրները, Աբովյանն իր «Քրդեր» և «Եզդիներ» աշխատություններում օգտվել է հայ և եվրոպական գրականությունից, փնտրել տվյալ ժամանակի հասարակական-քաղաքական դեպքերի աչքի ընկնող մասնակիցներին ու ականատեսներին և նրանց պատմածներից անհրաժեշտ տեղեկություններ քաղել։ Աբովյանը խորապես գիտակցել է մշակույթի դերը քուրդ ժողովրդի կյանքում, և պատահական չէ, որ բազմիցս անդրադարձել է այդ հարցին։

Տիրապետելով քրդերենին, Աբովյանը շրջել է քրդերի բնակավայրերում, օրերով հյուրընկալվել նրանց մոտ։ Նրան հետաքրքրել են քուրդ ժողովրդի պատմությունը, ազգագրությունը, բանահյուսությունը։ Բարձր գնահատելով այդ ժողովրդի մշակութային և հոգևոր արժեքները, նա ցանկանում էր, որ եվրոպական գիտնականները նույնպես ծանոթանային այդ ժողովրդի հետ։

Խ. Աբովյանը գերմանացի ճանապարհորդներ Ֆրիդրիխ Պարրոտի, Կարլ Կոխի, Ֆրիդրիխ Բոդենշտեդի, Մորից Վագների, Ավգուստ Ֆոն Հակստհաուզենի և մյուսների հետ որպես ուղեկցող և թարգմանիչ շրջագայել է Արարատյան դաշտավայրում ու նրանց ծանոթացրել ինչպես հայ, այնպես էլ քուրդ ժողովրդի կենցաղին։ Աբովյանի շնորհիվ է, որ նշված ճանապարհորդները, իրենց աշխատություններում գրելով Հայաստանի ու հայ ժողովրդի մասին, նաև անդրադարձել են քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը, բանահյուսությանը և այլ հարցերի։

Բազմաթիվ ուսումնասիրողների, հատկապես գրականագետների և լեզվաբանների շրջանում առ այսօր հարց է ծագում, թե արդյո՞ք Աբովյանը տիրապետել է քրդերենին, որ կարողացել է այդքան խորությամբ ուսումնասիրել քուրդ ժողովրդի պատմությունն ու հատկապես բանահյուսությունը։ Այդ հարցին կարելի է միանշանակ պատասխանել՝ այո, տիրապետել է։ Այս կապակցությամբ ռուս գրականագետ-արևելագետ Լ. Ի. Կլիմովիչը գրում է. «Հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը լավ է տիրապետել քրդերեն լեզվին»։[25]

Աբովյանը 1830թ. մի քանի անգամ եղել է Մասիսի ստորոտում ապրող քրդերի մոտ, ծանոթացել նրանց նիստուկացին, ընդ որում, նրան ոչ ոք չի ուղեկցել, նրա հետ թարգմանիչ չի եղել։ Ավելին, քրդերը նրան շատ են համակրել և արժանացրել ջերմ ու սիրալիր հյուրասիրության։ Մորից Վագները, որ Աբովյանին հանդիպել էր Անդրկովկասում, նրա լեզվիմացության վերաբերյալ գրել է. «Իմ բարեկամ Աբովյանը Արևելքի լավագույն հետազոտող ու գիտակ է և հիմնավորապես տիրապետում է սեմական շատ լեզուների»։[26]

Այն կարծիքը, որ Աբովյանը տիրապետել է քրդերենին, հաստատում է նաև հայ անվանի գրող Ակսել Բակունցն իր հայտնի ուսումնասիրության է-

ջերում, գրելով, որ Աբովյանը 1829 թ. պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի հետ Արարատի լեռը բարձրանալիս ճանապարհին հանդիպել է քրդերի, զրուցել նրանց հետ և իր զրույցը թարգմանել Պարրոտին:[27]

Եվ, վերջապես, հենց ինքը՝ Աբովյանը, անդրադառնալով քուրդ ժողովրդի լեզվին, մեկնաբանելով մի քանի հարցեր, դիտականորեն ապացուցում է, որ քրդերենը պատկանում է հնդեվրոպական լեզվախմբին, ինքնուրույն է, ավելի հնչեղ ու գեղեցիկ է, քան ասիական մի շարք լեզուներ. «Քրդերենը առավելություն ունի ասիական շատ լեզուների հանդեպ, որը ավելի քիչ, համարյա ոչ մի շչական հնչյուն չունի, բաղաձայները քիչ են, չունի այն վայրենի կոկորդային հնչյունները, ինչպես լեզգիները»:[28] Ուրեմն, նա ոչ միայն տիրապետել է քրդերենին, այլև բացահայտել է նրա յուրահատկությունները:

Աբովյանը հետագայում ամբողջ երկու ամիս ապրում է քրդերի մոտ և արժանանում բարեկամական ջերմ ընդունելության: Այդ մասին են վկայում նրա և քուրդ Իբրահիմ աղայի վերջին, ինչպես Աբովյանն է նշում՝ ամենաանմոռաց հանդիպումները 1845 թ. դեկտեմբերի 31-ին և 1846 թ. հունվարին: Իբրահիմ աղան Աբովյանին է նվիրում իր ձին, իսկ ձին քրդերի ամենաթանկ ու ամենահարգալից նվերն է: Սակայն Աբովյանն, ի նշան հարգանքի, հրաժարվում է ընդունից և իր հերթին Իբրահիմ աղային է նվիրում մի գեղեցիկ յափունջի: Հարկ է նշել, որ Աբովյանի և քրդերի բարեկամությունը, նրանց փոխադարձ հարգանքը գալիս է Աբովյանի ընտանիքից. նրանց օջախի դուռը մշտապես բաց է եղել քրդերի համար, իսկ քրդերինը՝ նրանց համար: Քրդերը, հատկապես քուրդ հովիվները, հաճախակի են այցելել Քանաքեռի բարձունքներ և միշտ էլ հյուրընկալվել Աբովյանենց տանը: Այդ այցելությունները շարունակվել են նաև հետագայում:

Այս ամենն, անշուշտ, մեծապես նպաստել են, որ Աբովյանը ձեռնամուխ լինի քրդերի մասին խոր ուսումնասիրությունն կատարելու գործին: «Քրդեր» և «Եզդիներ» արժեքավոր հետազոտությունը գերմաներեն լեզվով, ձեռագիր վիճակով Աբովյանն ուղարկում է Մյունխենն: Այն լույծ ուսումնասիրության է ենթարկվում գերմանացի ճանապարհորդ, երկրաբան, բնագետ, կենդանաբան Մորից Վագների կողմից, և 1852 թ. Լայպցիգում հրատարակվում է մի մենագրություն՝ «Ուղեգրություն Պարսկաստան և քրդերի երկիրը» խորագրով: Այդ մասին նա երախտագիտությամբ գրում է. «Պարոն Աբովյանի ձեռագրերը ... դրվեցին իմ տրամադրության տակ, ազատորեն օգտվելու պայմանով, և այն ընկած է սույն ակնարկի հիմքում»:[29]

Մեզ հայտնի է նաև, որ 1846 թվականին Աբովյանն իր այս արժեքավոր ուսումնասիրությունը հանձնել է Կովկասի փոխարքայության գրասենյակին: Այստեղ մի անխուսափելի հարց է ծագում. ինչու՞ է տվյալ ձեռագիրը հանձնվել Կովկասի փոխարքայի գրասենյակին, տպագրելո՞ւ նպատակով, թե՞ գրասենյակի կողմից հեղինակին պարզապես հանձնարարված է եղել մի ընդարձակ հոդված գրել քրդերի մասին: Ուսումնասիրությունները վկայում են, որ Կովկասում Աբովյանը վաղուց է ճանաչված եղել որպես

քուրդ ժողովրդի պատմության, ազգագրության ու բանահյուսության միակ. գիտակ, և քրդերի վերաբերյալ նրա ուսումնասիրություններին ու տեղեկություններին ծանոթ են եղել Կովկասի փոխարքայության գրասենյակում, որի հատուկ հանձնարարությամբ էլ գրվել է խնդրո առարկա հոդվածը: Սակայն երկու տարի անց, 1848 թվականին, այն տպագրվել է «Կավկազ» թերթի 46, 47, 49, 50 և 51-րդ համարներում: Ցավով պետք է նշել, որ թերթը կրճատումներով է տպագրել հոդվածը, դուրս թողնելով Աբովյանի գրառած քրդական երգերի այն տեքստերը, որոնք նա ժամանակին հանձնել էր փոխարքայի գրասենյակին:

Ավելացնենք, որ գերմաներեն բնօրինակին ծանոթ է եղել ռուս գրող և քաղաքական գործիչ Մուրավյովը, որը Աբովյանի հետ Հայաստանում շրջագայելիս՝ նրանից տեղեկացել է քրդերի մասին, կարդացել և դրական գնահատական տվել հիշյալ հոդվածին:[30]

Խնդրո առարկա հոդվածը հետագայում ամբողջությամբ թարգմանում է Ջամչյանը և տեղադրում «Ճանապարհորդություն ի Հայաստանի» խորագրով գրքում (Վիեննա, 1851): Ի դեպ, այդ տեքստն ավելի ընդարձակ է, և պահպանված են քրդական բանահյուսության մի քանի բնագրեր:

Խ. Աբովյանի «Քրդեր» և «Եզդիներ» ուսումնասիրությունը գիտական խոշոր ներդրում է քրդական մշակութային կյանքում: Դրանում լուսաբանված են աղբյուրագիտական մի շարք հարցեր, մատնանշված են դրանց արժեքները և լուծումները: Աբովյանը նաև արժեքավորել է քրդական ժողովրդական բանահյուսությունը և զբաղվել դրա ուսումնասիրությամբ, հավաքմամբ, ինչպես նաև մշակմամբ ու թարգմանությամբ: Այդ նյութերի մի մասը հրատարակվել է, իսկ մի մասն էլ պահվում է նրա արխիվում: Հարկ է ընդգծել, որ Աբովյանը նոր ուղի հարթեց քուրդ ժողովրդի մշակութային հարցերով զբաղվող հայ և քուրդ մտավորականության առջև: Անուրանալի է նրա դերը հայ քրդագիտության հիմնադրման գործում:

Լինելով իր ժամանակի հայ մտավորականության առավել առաջադեմ ներկայացուցիչներից մեկը, Աբովյանն անդուլ պայքար է մղել անդրկովկասյան ժողովուրդների՝ հայերի, վրացիների, ադրբեջանցիների, անպայման նաև քրդերի միջև բարեկամության ամրապնդման համար: Նա ոչ միայն «Քրդեր» և «Եզդիներ» ուսումնասիրությունում է անդրադարձել հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությանը, այլև իր մյուս ստեղծագործություններում: Դա առավել ցայտուն արտահայտված է նրա «Վերքում»: Աղասու խմբի մեջ կան մի խումբ քրդեր, որոնք երդվում են, որ հայերի հետ մինչև իրենց արյան վերջին կաթիլը կպայքարեն թուրքական և իրանական բռնակալների դեմ: Իր այս ստեղծագործությունում Աբովյանը նուրբ ու գեղեցիկ գրչով նկարագրում է քուրդ ժողովրդի հոգեկան հարուստ ներաշխարհը, նրա հավատարմությունը, պարզությունը, ազգային հոգեբանության առանձնահատկությունները: Աբովյանը միշտ էլ այն կարծիքին է եղել, որ հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը գալիս է դարերի խորքից, և որ նրանց միջև թշնամություն սերմանողը հիմնականում օսմանյան կայսրութ-

յունն է: Աբովյանը խստորեն քննադատել է թուրք-իրանական կառավարող շրջանների ազգահալած, նենգամիտ քաղաքականությունը, մատնանշել, որ այն միտված է հայ-քրդական գժտություններ հրահրելուն:

Հայ մեծ լուսավորիչը քուրդ-եզդիների կողմից հայ ժողովրդի հանդեպ տածած անկեղծ, անմիջական բարեկամության վկան էր ու այդ մասին հավաստողը: Նա գրել է. «Իրենց հարևան ազգերից ոչ մեկի հետ նրանք (քուրդ-եզդիներ - Կ. Ջ.) այնպես սերտ չեն կապված, այնպես համատեղ չեն գործում, ինչպես հայերի, որոնց նրանք անվանում էին եղբայրներ»: Մեկ այլ տեղ նշում է. «Ով հայից բան հափշտակի, բոլորովին կվտարվի իրենց համայնքից: Այդ պատճառով էլ նրանց համար սուրբ և անձեռնմխելի է այն ամենը, ինչ պատկանում է հայ ժողովրդին: Նրանք ավելի շուտ իրենց ունեցվածքը կտան հային, քան թե նրանցից մի բան կվերցնեն և նրանց ունեցվածքը կպահպանեն իրենց կյանքի գնով»: Մի այլ առիթով, անդրադառնալով հայ-քրդական զինակցական դաշինքին ու նրանց միասնական հերոսամարտերին, նա գրել է. «Ինչպես պատմում է ականատեսներից մեկը, դեռ նորերս արիության և քաջագործության հրաշքներ են ցույց տվել եզդի ցեղապետ Միրզա աղան և հայ Պողոս քահանան: 1828 թվականին Ռոդովանի բերդի մոտերքում, Մոսուլից ոչ հեռու, յուրաքանչյուրն իր համայնքով մոտենում է թուրքերից և քրդերից բաղկացած 30 հազարանոց բանակին և իրենց փոքրիկ զորամասով գրեթե ոչնչացնում ամբողջ բանակը, այդ մասին երգվում է քրդական մի երգում... Վերջապես 1833 թվականին հաջողվում է Ռաշիդ փաշային ինչպես նրանց, այնպես էլ քրդական շատ ցեղեր թուրքական իշխանությանը ենթարկել»:[31]

Պետք է նշել, որ Ռոդովանի իշխան շեյխ Միրզան մեծ հայասեր է եղել, նա ոչ միայն իր քաղաքում հնարավորություն էր տալիս հայ մտավորականությանը քրդերի մեջ լուսավորություն տարածելու, այլև, ինչպես Խ. Աբովյանն է վկայում, իր զավակներին խրախուսում էր հայերեն գրել ու կարդալ սովորել, և այդ նպատակով մի հայ աբեղայի հրավիրել էր Ռոդովան:

Քուրդ ժողովրդի խոսքի արվեստը, բանավոր ստեղծագործությունների ներգործուն դերն ու արժեքը մեծ տպավորություն են գործել Աբովյանի վրա: Նրա համոզմամբ, քուրդ ժողովուրդը օժտված է ստեղծագործական բարձր կարողություններով, վառ երևակայությամբ, ունի բանավոր ստեղծագործությունների այնպիսի ընտրանի, որը շատ ժողովուրդների հիացական գնահատականին է արժանանում: Աբովյանը գտնում է, որ քուրդ ժողովրդի բանահյուսական արվեստի առանձին նմուշներ կարող են ուսանելի լինել այլ ժողովուրդների համար: Անդրադառնալով քրդական ժողովրդական բանահյուսությանը, Աբովյանը կարողացավ վեր հանել քուրդ ժողովրդի ինքնատիպ մտածողության տաղանդը: Նա հայ լայնախոհ մտավորականներից առաջինն էր, որ հավաքեց և գրի առավ քրդական ժողովրդական բանահյուսության մի քանի նմուշներ, որոնք հետագայում հրատարակվեցին գերմաներեն, ապա Երվանդ Շահազիզի ու Արամ Ղանալանյանի ջանքերով լույս տեսան նաև հայերեն ու քրդերեն, այդպիսով փրկվելով ոչնչանալուց: Իր

բանահավաքչական գործունեության ընթացքում Աբովյանը հանգել է այն եզրակացության, որ քուրդ ժողովրդի հոգու պարզությունը, անկեղծությունն ու անմիջականությունը, նրա խոհերն ու զգացմունքներն արտացոլվել են ժողովրդական բանահյուսական արվեստի ինքնատիպ, գունագեղ ոճում:

Նա գրում է. «Քրդերի ժողովրդական պոեզիան ապշեցուցիչ ընթացք է ունեցել և հասել հնարավոր կատարելության: Ամեն մի քուրդ, մինչև իսկ քրդուհի, ի բնե հոգով բանաստեղծ է, նրանք ամենքն էլ իմպրովիզացիայի զարմանալի շնորհք ունեն»:[32] Նա նշում է, որ քրդերն ունեն ստեղծագործելու զարմանալի տաղանդ. երգում են բնությունը, իրենց հովիտները, լեռները, ջրվեժները, աղբյուրները, զենքը, նժույգը, զինվորական քաջագործությունը, պախարակում վախկոտին, դավաճանին: Եվ այս ամենը՝ շատ հեշտությամբ, հանպատրաստից: Վերջապես, ի մի բերելով իր մտքերը քրդական ժողովրդական բանահյուսության մասին, Աբովյանը գրում է, որ այն «ինքնատիպ է, յուրօրինակ է»:

Քրդերի ծագման, ազգային հատկանիշների, լեզվի, բարքերի, սովորույթների ու պաշտամունքի վերաբերյալ Աբովյանն իր մտքերը շարադրել է չափազանց մանրամասն և գիտական խորը վերլուծությամբ: Նա առավել մանրազնին անդրադարձել է քուրդ ժողովրդի հավատքին ու բացահայտել մինչ այդ չլուսաբանված որոշ հարցեր: Հետաքրքրիր է Աբովյանի այն դիտարկումը, որ հեթանոս այս ժողովրդի կրոնում (քուրդ-եզդիներ- Կ. Ջ.) առկա են քրիստոնեության բազմաթիվ տարրեր, որոնք փոխանցվել են հայերից:»:[33]

Մեկ այլ տեղ նա ընդգծում է. «Իմիջիայլոց նրանք (եզդիները - Կ. Ջ.) պահում են հայոց շաբաթական պասերից շատերը և տոնում են հայոց այն սրբերի հիշատակը, որոնց անունով սահմանված են այդ պասերը, մանավանդ մեծապես հարգված են նրանց մոտ Սուրբ Գևորգ և Սուրբ Սարգիսը: Վերջինիս անվանում են Խդր-Նաբի, պաշտում են և, հայերի նման, ճանապարհին պատահած վտանգի պահին, փոթորիկի և բուքի ժամանակ սրան են կանչում: Նրանք ոչխարներ են մատաղ անում, համբուրում են հայոց եկեղեցիների սեղանները և հայ հոգևորականների աջը...»:[34]

Խոսելով քուրդ ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակի մասին, Աբովյանը միանգամայն իրավացիորեն ժխտում է այն թյուր կարծիքը, որ բոլոր քրդերը քոչվորներ են: Նա բազմաթիվ օրինակներով հիշատակում է Վանի, Բայազետի և Կարսի նահանգներում նստակյաց կյանք վարող քրդերին: «Այդ նահանգներում ապրող քրդերը,- գրում է նա,- զբաղվում են հողագործությամբ, առևտրով և ամեն տեսակի արհեստներով»:[35]

Աբովյանը հիացմունքով է խոսում քուրդ ժողովրդի գեղեցիկ բարքերի, հատկապես հյուրասիրության մասին: Նա գրում է. «Այդ ժողովրդի հյուրասիրությունը ամբողջ արևելքում առասպել է դարձել: Մինչև իսկ նրանց դեմ այնպես թշնամաբար տրամադրված թուրքերն ու պարսիկները պետք է, ցավոք սրտի, խոստովանեն նրանց այդ առավելությունները»:[36] Իր անձնական փորձի հիման վրա, նշելով քրդերի ազնիվ վերաբերմունքն այլազգիների

նկատմամբ, Աբովյանն Իբրահիմ աղայի տան հյուրասիրության մասին գրում է. «Արդեն առաջուց գիտեին, որ ես նրանց պիտի այցելեմ: Հենց որ նրա դռան առջև երևացի, ինձ ընդառաջ եկավ մի պնդակազմ քուրդ, համարյա ձեռքերի վրա ինձ իջեցրեց ձիուց... իմ երևալը այնտեղ ամեն ինչ շարժման մեջ դրեց: Ես այնտեղ գտա բազմաթիվ մարդիկ: Բոլորը ոտքի ելան և վազեցին ինձ ընդառաջ, բացառություն չկազմեց նույնիսկ ինքը՝ Իբրահիմ աղան: Մեկը հանեց իմ կոշիկները, երկու հոգի էլ բռնեցին թևերս, այնպես որ ես չգիտեի՝ ինչպես վարվել: Բարի գալուստի մաղթանքները անցնում էին բերնից բերան, բայց այնպես սրտանց, որ հազիվ թե ես որևէ տեղ, երբևէ զգացած լինեմ»:[37] Այնուհետև նա անդրադառնում է քրդերի ճոխ հյուրասիրությանը, որն անցնում էր երգ-երաժշտության ուղեկցությամբ: Աբովյանը, հիացած այդ ամենով, գրում է. «Այստեղ (Իբրահիմենց տանը - Կ. Ջ.) էին զարգանում իմ ուսումնասիրությունների մեծ մասը քրդերի մասին, երգերի հավաքումը և այլն»: Հետևյալ խոսքերով է վերջացնում այդ հյուրասիրության նկարագրությունը. «Սքանչելի՛ ժողովուրդ, սքանչելի բարքե՛ր»:[38]

Ճիշտ է, եվրոպական գիտնականներ, քաղաքական ու ռազմական գործիչներ Ջեյմս Քլեյրը, Է. Բ. Սոնին, Ասլանո դե Բանիչին, Ֆրեդերիկ Միլինգենը, Մերելլա Գալետին և շատ ուրիշներ իրենց աշխատություններում, ճանապարհորդական նոթերում հաճախակի են անդրադարձել քուրդ կնոջ գեղեցկությանը, ռազմաշունչ ու խիզախ լինելուն, սակայն հայ մեծ լուսավորիչն առաջինն էր, որ վերլուծությամբ անդրադարձավ քուրդ կնոջ իրավական վիճակին, ավանդական ընտանիքում կնոջ և ամուսնու միջև եղած հարաբերություններին, քրդական հասարակության մեջ կնոջ ունեցած դերին: Նա բարձր է գնահատում քուրդ կնոջ բարոյական նկարագիրը, նրա գեղեցկությունը, շնորհքը, անհրաժեշտության պահին՝ մարտական կեցվածքը. «Նրանք գործում են գեղեցկագույն գորգեր,- գրում է նա,- թաղիքե ծածկոցներ և բրդե այլ հյուսվածքներ, որոնց ներկերը իրենք են պատրաստում, բայց և միաժամանակ աշխույժ են, ուրախ, բերկրալի, ազատ... Նրանք երգում են դաշտում, ջրի գնալիս կամ անասուններն արձակելիս: Նրանց բարքերի մաքրությունը վերին աստիճանի արժանի է ուշադրության և հիացմունքի: Հաճախ նրանք կռվի դաշտ են դուրս գալիս իրենց ամուսինների նման հագնված ու զինված և պակաս սխրագործություններ չեն կատարում, քան տղամարդիկ»:[39]

Անդրադառնալով հայ-քրդական և հայ-թուրքական հարաբերություններին, Աբովյանը փաստական հարուստ նյութերի հիման վրա ցույց է տալիս, որ քրդերն ատելությամբ են լցված եղել թուրքերի և պարսիկների նկատմամբ, ոչ մի բանում չեն վստահել նրանց: Այդ կապակցությամբ նա նշում է, որ նրանք (քրդեր Կ. Ջ.) ոչ մի վստահություն չունեն թուրքերի նկատմամբ. «Երբեք նրանք առևտուր չեն անում թուրքերի հետ, որոնց ատում են, այլ հայերի հետ, որոնց սրտանց սիրում են»:[40]

Ս. Աբովյանը, լինելով քրդական մշակույթի անխոնջ ջատագով, կարո-

ղացավ ոչ միայն ռուս ժողովրդին, այլև եվրոպական շատ ժողովուրդների բավականաչափ ծավալուն տեղեկություններ հաղորդել ճնշված քուրդ ժողովրդի կյանքից: Ամենակարևորն այն է, որ մեծ լուսավորիչն իր ուսումնասիրություններում հատակ ցույց է տվել ու հաստատել, որ հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունն ու մշակութային կապերը դարավոր պատմություն ունեն, որ այդ բարեկամությունը ձեռք է բերվել սոցիալական և ազգային պայքարի բովում, այն չունի շահադիտական որևէ նպատակ: Վերջապես, նա իր արժեքավոր ուսումնասիրության ընթացքում առավել ճշգրիտ երանգներով նկարագրեց քուրդ ժողովրդի սոցիալ-տնտեսական և իրավական դրությունը, կենցաղը, ազգային սովորույթները, առավել ընդգրկուն ներկայացրեց բանահյուսությունն ու լեզուն, ընդ որում, նրա դիտարկումներն առ այսօր առատ նյութ են մատակարարում պատմաբաններին, ազգագրագետներին, գրականագետներին ու լեզվաբաններին և դեռ խորազնին ուսումնասիրման շատ պահեր կան: Մեծ լուսավորչի ստեղծագործությունների և ուսումնասիրությունների պատմական արժեքը կայանում է նաև նրանում, որ պատմական դեպքերը շարադրելիս, նա ոչ թե պարզապես հանդես է գալիս որպես նկարագրող, այլ դրանք վերլուծում է հետազոտող-քրդագետի տեսանկյունից:

Քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանն ու բանահյուսությանը վերաբերող Աբովյանի գործերը քրդագիտության, հատկապես մշակութային ամենագեղեցիկ էջերից են և, անկախ այն հանգամանքից, նա քրդերի մասին այլ աշխատություն գրել է, թե ոչ, կարելի է ասել, որ Աբովյանը հայ քրդագիտության հիմնադիրն ու մշակութային կապերի դրշակակիրն է:

19-րդ դարի երկրորդ կեսին հայ մտավորականության առավել առաջադեմ ներկայացուցիչներն ամենուր հանդես էին գալիս ի պաշտպանություն քրդերի: Նրանք մտորում էին այնպիսի միջոցառումների մասին, որոնք կնպաստեին հայ և քուրդ ժողովուրդների էլ ավելի մերձեցմանը, քրդերի քաղաքակրթմանը, թուրքական նենգամիտ քաղաքականության էությունը աշխատավոր քրդերի գիտակցությանը հասցնելու գործին: Հայ առաջադեմ այս մտավորականներն առաջնորդվում էին քրդական մշակույթի պահպանման ու զարգացման պատմական գործին ծառայելու անկաշկանդ մղումով:

Այդ պայծառ դեմքերից մեկը՝ Տիգրանակերտի հայոց առաջնորդ Մկրտիչ Տիգրանյանը, ոչ միայն լուսավորչական լայն աշխատանք է ծավալել քրդերի շրջանում, կազմել առաջին հայատառ քրդերեն այբբենարանը, այլև զբաղվել քուրդ ժողովրդի պատմության, ազգագրության, բանահյուսության և լեզվի հարցերով, հայերենից քրդերեն թարգմանություններ է կատարել: Տիրապետելով քրդերենին, նա հավաքում էր քրդական ժողովրդական բանահյուսության նշխարները, գրում ազգային սովորությունների մասին: Նրա գլխավոր նպատակն էր հավաքած ողջ նյութերի հիման վրա կազմել քրդերենի հայատառ առաջին այբբենարանը և ուսուցանել հայ և քուրդ երեխաներին: Շրջելով քրդական և հայկական գյուղերում, նա ամենուր բնակչությանը քարոզում էր երեխաներին ուսման տալ և աղոթատեղիներին

կից դպրոցներ էր բացում: Իր գիտական-մանկավարժական, հասարակական գործունեությունը սկսելով 19-րդ դարի 40-ական թվականներից, Մկրտիչ Տիգրանյանը դարձավ քուրդ ժողովրդի ազգային զարթոնքի խոշորագույն գործիչներից մեկը:

1841 թվականին Տիգրանյանը կազմում է «Կանոնք բարեգործության Քյուրդիստանի և Հայաստանի վանորէից և ի վիճակաց նոցին» ծրագիրը:[41] Ինչպես վերնագրից է երևում, հեղինակը նպատակ է ունեցել Քուրդիստանում ևս բարեկործություններ կատարելու, քրդերի մշակույթով զբաղվելու և լուսավորություն տարածելու միջոցով նրանց փրկելու թուրքական սարդոստայնից: Տիգրանյանը երազել է Հայաստանը և Քուրդիստանը տեսնել որպես լուսավորյալ երկրներ: Նա գրել է. «Երանի այն ավուր, որ Քուրդիստան և Հայաստան կատարյալ ինքզինքը փառավոր գիտության և իմաստության լուսին մեջ տեսած ըլար» («Ասօգի ըրօյէ հան քի Քյուրդիստան ու Ֆըլստան թագմիլ ըրն պըրկն պը իլմաթե ըռոնի» (քրդերեն - Կ. Զ.):[42]

Ո՞րն էր Տիգրանյանի ծրագրի հիմնական նպատակը: Հեղինակն առաջին հերթին իր առջև խնդիր էր դրել հայ մյուս առաջադեմ մտավորականության օգնությամբ քրդական և հայկական հետամնաց շրջաններում լուսավորական աշխատանք ծավալել և դպրոցներ բացել: Այդ ծրագիրը հայ պահպանողականների դժգոհությանն արժանացավ և նրանց կողմից քննադատությունների տեղիք տվեց: Այս մասին «Պայքար» թերթը գրում է. «Հակառակորդներ ու հալածողներ շատ ունեցած է այն որին և Միհրդատեան ծածկանունով մեկը պարսավատեր մըն ալ հրատարակած է իր մասին և ի վերջոյ բերված է Պոլիս... Այդ եկեղեցականին կարողությունը, նկարագիրը և արժանիքը իր սկսած գործը եթե խափանողներ չըլլային ու շարունակվեր՝ կրնար ունենալ օգտակար հետևանքները»:[43] Տիգրանյանը լավ էր հասկանում, որ նման անբարյացակամ մոտեցումն ու վերաբերմունքը կարող էին իր անձի համար վատ հետևանքներ ունենալ, բայց, այնուամենայնիվ, չէր հրաժարվում իր պատավոր առաքելություններից և ինքը առաջինն է ձեռնամուխ լինում իր ծրագրի իրագործմանը: Պատմաբան Արշակ Ալպոյաջյանը, քննադատելով Տիգրանյանի հակառակորդ հայ մտավորականների հակազգային քաղաքականությունը, բարձր է գնահատում հայ լայնախոհ հոգևորականի գործունեությունը հայ-քրդական կապերի ամրապնդման ու նրանց մեջ լուսավորություն տարածելու առաքելության մեջ: Նա գրում է. «Տիգրանյանը հավատքի, տեսիլքի մարդ էր ... Տիգրանյանը ասկե 80-85 տարի առաջ զգացած էր քրդախոս հայերու լուսավորության պետքը: Ինքը, ինչպես հստակ կերպով կերևի իր գործնական ձեռնարկներեն, քրդախոս հայերին լուսավորությամբ կուզեր լուսավորել ամբողջ Քուրդիստանը... հայ և քուրդ ժողովուրդներու լուսավորությունը կրնար ոչ միայն ապահովել անոնց համար ներքին խաղաղությունը, այլ նաև կարելի էր մի գեղեցիկ օր քաղաքական ապահովության և անկախության մըն ալ երաշխավորելու անոնց»:[44]

Մկրտիչ Տիգրանյանը 1841 թվականին համարձակորեն լծվում է այդ գործին և մինչև 1848 թվականը Դիարբեքիրի քրդական և հայկական

շրջաններում լուսավորական լայն աշխատանք տանում ինչպես քրդախոս հայերի, այնպես էլ քրդերի մեջ: 1850-ական թվականներին նա մեկնում է Մուշի և Դիարբեքիրի քրդաբնակ շրջանները՝ նպատակ ունենալով ծանոթանալ քրդերի նիստուկացին, բանահյուսությանն ու հատկապես քրդերենի առոգանությանն ու հնչյունաբանությանը: Նա ամիսներով շրջում է քրդերի մեջ, մասնակցում նրանց ուրախություններին ու ծեսերին: Տիգրանյանը բարձր է գնահատում քրդական ժողովրդական հիասքանչ բանահյուսությունը, կարևորում հայ և քուրդ ժողովուրդների համագործակցության ամրապնդումը, առաջարկում խորազնին մոտենալ քուրդ ժողովրդի պատմությանը:[45]

Սակայն շուտով սկսվում է ռուս-թուրքական պատերազմը, և 1854 թվականին սկիզբ է առնում Եզդանշիրի քրդական ազատագրական պայքարը Թուրքիայի դեմ: Հասկանալի է, որ երկրի ներսում ստեղծված խառը իրավիճակը տվյալ պահին թույլ չի տալիս Տիգրանյանին իրագործել իր վաղեմի ծրագիրը, սակայն նա չի հրաժարվում այդ նախաձեռնությունից և հետագայում նորից լծվում է այն ի կատար ածելու գործին: Վերջապես 1860 թվականին նրա նպատակները կյանքի են կոչվում. քրդախոս հայ և քուրդ երեխաների համար հրատարակվում է «Այբբենարան քրդերեն և հայերեն» (Ալիֆպեճեզ Գուրմանջի ու Արմանի) դասագիրքը, որ կազմված էր հայկական տառերով և հարմարեցված էր քրդերենի հնչյունաբանությանը:[46]

Ո՞րն է այդ գրքի դերը քրդական մշակութային կյանքում. նախ, Տիգրանյանն առաջինն էր, որ հայկական տառերը հարմարեցնելով քրդերենի հնչյունաբանությանը, փաստորեն ստեղծեց քրդական առաջին այբուբենը և այդ նոր այբուբենի հիման վրա քրդերեն լեզվով կազմեց առաջին այբբենարանը: Այդ այբբենարանի դերը գնահատելի էր այն առումով, որ այն ոչ միայն երեխաներին տառաճանաչություն էր սովորեցնում, այլև դրանում հայ ժողովրդի պատմության ու գրականությանն առնչվող նյութերին զուգահեռ զետեղված էին նաև քրդերի մասին որոշ նյութեր: Հիշատակենք նաև այն իրողությունը, որ այս աշխատանքը ոչ միայն քրդագիտության, այլև արևելագիտության լավագույն էջերից մեկն է:

Տիգրանյանն ուներ հեռահար նպատակներ. նա հայ և քուրդ ժողովուրդների փրկությունը տեսնում էր նրանց համերաշխության, միասնական պայքարի և լուսավորության ուղիով համատեղ քայլքի մեջ: Սակայն հեղինակը լավ էր գիտակցում, որ մենակ դժվար է այդ ծրագիրն իրագործել, ուստի որոշում է համագործակցել առաջադեմ հայ մտավորականների հետ, բացատրել նրանց իր ծրագրերի ու նպատակների էությունը, նրանցից օգնություն խնդրել և միասնական ուժերով այդ ուղղությամբ աշխատել: Մեծ ջանքերի գնով նա հասնում է շոշափելի արդյունքների: 1860 թվականին Կ.Պոլսում «Մեղվի» խմբագիր Հարություն Սվաճյանի գործակցությամբ կազմակերպվում է «Բարեգործություն արևելյան» անունով ընկերությունը, որի նախագահն էր Ս. Մոմջյանը:[47] Պետք է նշել, որ հայ երևելի մի քանի մեծատուներ, ինչպիսիք էին Մկրտիչ Մուրադյանը, Վարդան Վարդանյանը, Հովհաննես Հակոբջանյանը, Գրիգոր Բագրատունյանը և մյուսները, ամենուր

օգնում ու դրամական նվիրատվություններ էին անում Մկրտիչ Տիգրանյանին, որպեսզի նա իրագործեր իր հեռահար ծրագիրը:[48]

Ընկերության անդամների անմիջական աջակցությամբ Տիգրանյանն ինչպես քրդախոս հայ, այնպես էլ քուրդ երեխաների համար հրատարակում է հայատառ հաջորդ «Չըրայե ըոօնի» («Լապտեր լուսատու») գրքույկը: Այս գրքի առաջին էջի վրա հայերեն գրված էր. «Լապտեր լուսատու օրհնյալ ի տեր Մկրտիչ վարդապետե Տիգրանյան, առաջնորդ Քուրդիստանի, լույս ընծայեցավ Կոստանդնուպոլիս 1866 թ.»: Երկրորդ էջի վրա հայատառ քրդերենով գրված է. «Չըրայե ըոօնի հատ չեգըրեն ժը Մկրտիչ Տիգրանե Մրթոան Մարախասե Քյուրդիստան, պասմա պու լը Ըստամբուլ, 1866»:

«Լապտեր լուսատու» աշխատությունը բաղկացած է երկու բաժիններից, յուրաքանչյուր բաժնում 12-ական գլուխ: Առաջին բաժնում հեղինակն անդրադառնում է մարդու ծագմանը, ազգերի առաջացմանը: Երկրորդ բաժինն ընդգրկում է հայ ժողովրդի ծագումից մինչև իր դարն ընկած ժամանակահատվածի իրադարձությունները: Գիրքը բաղկացած է 188 էջից, ունի նախահատվածի իրադարձությունները: Գիրքը բաղկացած է 188 էջից, ունի առաջաբան, մեկ էջի վրա կողք կողքի տեղադրված են հայերեն և հայատառ քրդերեն տեքստերը:

Հայ-քրդական մշակութային կապերի ամրապնդման գործում այս ձեռնարկի նշանակությունը մեծ էր հատկապես այն առումով, որ շոշափվում էին հայ-քրդական փոխհարաբերություններին, լեզվին ու բանահյուսությանն առնչվող խնդիրներ: Պակաս կարևոր չէր նաև քուրդ-հայերեն բառարանի առկայությունը, որը, չնայած իր փոքր ծավալին, այնուամենայնիվ, քրդախոս հայ երեխաներին ծանոթացնում էր ինչպես հայերենին, այնպես էլ քրդերենին, նաև օգնում հայ մտավորականին իր ճոխ բառապաշարով, գեղավեստական ճկուն մտքով հարստացնել քրդական գրական լեզուն: Այդ մասին են վկայում նրա կողմից հայերենից գեղեցիկ քրդերեն թարգմանված կրոնական գրքերը, որոնց կանդրադառնանք հաջորդ բաժնում:

Հարկ է նշել, որ Տիգրանյանը մեծ դժվարությամբ է տպագրել այս գիրքն ու տարածել, միաժամանակ քրդական շրջաններում դպրոցներ է բացել: «Պայքար» թերթը, բարձր գնահատելով Տիգրանյանի գործունեությունը, գրում է. «Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանյանը հայերեն տառերը եարմարացուցած էր քյուրդերեն լեզվին և պատրաստած էր այբուբեն ու ընթերցանության համար քյուրդերեն այբբենարան: Ան բացած էր Լճեի, Սիլվանի, Ֆաղինի, Խիանի և Սղերտի գյուղերուն մեջ նախնական վարժարաններ, ուր հայ և քուրդ մանուկները քով-քովի կուսանեին, յուրաքանչյուրը իր մայրենի լեզվով»:[49] Հայ մտավորականի այդ գործնական քայլերը հետագայում քուրդ ազգաբնակչության մեջ հետաքրքրություն առաջացրին ուսման, գիր ու գրականության հանդեպ: Հայ ազգաբնակչությունն էլ, իր հերթին, ամեն կերպ աջակցում, խրախուսում էր քուրդ հարևաններին՝ երեխաներին ուսման տալ: Պետք է արձանագրել, որ քուրդ հոգևորականությունը, դժբախտաբար, չէր աջակցում այդ գործին և նույնիսկ կրթական գործը մեղք էր

համարում:

Ուշագրավ է Մկրտիչ Տիգրանյանի մեկ այլ՝ 1864 թ. Կ. Պոլսում լույս տեսած «Հայելի գործոց և աշխատությանց Մկրտիչ վարդապետ Տիգրանյանի» աշխատությունը, որն ուղղված էր այն հայ մտավորականներին, ովքեր դեմ էին քրդերի շրջանում նրա ծավալած լուսավորական գործունեությանը: Գիրքը բաղկացած է 146 էջից՝ ցանկից, առաջաբանից և 18 գլուխներից: Հեղինակի հիմնական նպատակը իր նկատմամբ թշնամական դիրք գրաված հայ մտավորականությանն իր նպատակների ու գործունեության բարերար նշանակությունը բացատրելն էր: Միաժամանակ Տիգրանյանն այս գրքում տալիս է Տիգրանակերտի նահանգի աշխարհագրական դիրքի, հայ-քրդական հարաբերությունների և այս ժողովուրդների մեջ տարվող լուսավորական աշխատանքների մանրամասն նկարագրությունը: Նա գտնում էր, որ ինչպես հայ քրիստոնյաները, այնպես էլ քուրդ մահմեդականները պետք է իրավունք ունենային սովորելու գավառում բացված հայկական ճեմարաններում:

Մկրտիչ Տիգրանյանն հայ այն մեծ լուսավորիչներից էր, ովքեր քրդական մշակույթի պատմության մեջ անջնջելի հետք են թողել: Նա հնարավորինս իր ջանքերը ներդրեց հայ-քրդական համերաշխության ամրապնդման և երկու ժողովուրդների շրջանում լուսավորության տարածման կարևոր գործում, որի շոշափելի արդյունքները երևացին 19-րդ դարի երկրորդ կեսում:

19-րդ դարի հայ հասարակական մտքի ականավոր ներկայացուցիչներից էր «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին, որն իր թերթի էջերում հաճախ էր լուսաբանում քուրդ ժողովրդի պատմությունը, բանահյուսությանն ու ազգագրությանն առնչվող հարցեր, հանդես էր գալիս մի շարք հոդվածներով, նաև նրա հեղինակությամբ հրատարակվել էր առանձին գրքույկ: Այս բոլորը քրդական մշակութային պատմության մեջ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում և ջերմ արձագանք գտան հայ ընթերցողների շրջանում:[50]

Քրդական մշակույթի մասին գրած իր առաջին իսկ հոդվածում, որը վերնագրված է «Առաջին քայլերը», Գ. Արծրունին կոչ է անում հայ մտավորականությանը՝ ուսումնասիրել բարեկամ քուրդ ժողովրդի անցյալը և հնարավորինս աջակցել հայ-քրդական բարեկամական կապերն էլ ավելի ամրապնդելու գործին: Հետագայում իր մի շարք հոդվածներում նա նաև անդրադառնում է քուրդ ժողովրդի պատմությանը վերաբերող որոշ հարցերի: Հայ հրապարակախոսը նշում էր, որ երկու ժողովուրդների ճակատագիրը համանման է, որ հարկավոր է խորապես ուսումնասիրել քրդերի սոցիալ-տնտեսական վիճակը և ջանքեր գործադրել նրանց հետ համագործակցելու համար: Արծրունին ակտիվ գործունեություն էր ծավալում՝ հանուն իր նպատակների ու ձգտումների իրագործման, հանուն հայ-քրդական ամուր դաշինքի ստեղծման: Նա քրդերի մեջ լուսավորություն տարածելու, քուրդ ժողովրդի պատմությունը բազմակողմանիորեն լուսաբանելու կողմնակիցներից էր:

1902 թվականին, Արծրունու մահից հետո, «Մշակի» մի քանի համարներում լույս է տեսնում նրա «Գյուլիզար» խոշագրով պիեսը, որը հետագայում տպագրվել է նաև առանձին գրքույկով:[51] Սա քրդական դրամատուրգիայում առաջին քայլն էր: Սույն ստեղծագործությունը նաև վկայում է, որ հեղինակը քաջատեղյակ է քրդական բանահյուսությանը, հատկապես՝ ազգագրությանը: Նրան հաջողվել է վեր հանել նաև տվյալ ժամանակաշրջանի այն հակամարտությունները, որոնք թշնամու ձեռքով էին հրահրվում երկու ժողովուրդների միջև: Իր մյուս գործերում և հոդվածներում ևս Արծրունին շոշափել է իր ժամանակաշրջանի պատմական ու հասարակական խնդիրները, հանգել հետաքրքիր եզրակացությունների:

Ինչպես նշեցինք, Արծրունին իր թերթի միջոցով քրդերի մեջ լուսավորություն տարածելու հարցն էր բարձրացնում: Նա հաճախակի անդրադառնում էր Արևմտյան Հայաստանի քրդախոս հայերի և քրդերի ուսուցման խնդրին: Թերթի համարներից մեկում կարդում ենք, թե ինչպես Տարոնում, Սասունում, Շատախում, Դիարբեքիրում հայերը և քրդերը ապրում էին կողք կողքի՝ միևնույն սոցիալ-տնտեսական պայմաններում, սերտ բարեկամական հարաբերություններում: Բերված է մի ուշագրավ փաստ, թե ինչպես երեխաների համար առաջին անգամ 1878 թ. Խակի գյուղում (Բաղեշի և Սղերտի միջև) բացվում է դպրոց, ուր հաճախում էին 500 հայ և քուրդ երեխաներ: Բայց, դժբախտաբար, քուրդ վերնախավը չի աջակցում այդ գործին, ավելին, հոգևորականության ներկայացուցիչները՝ շեյխերը և փիրերը, դա մեղք են համարում և քուրդ ազգաբնակչությանը քարոզում երեխաներին հանել դպրոցից: Նման գործողությունները հովանավորվում էին թուրքական իշխանությունների կողմից:

Հայ-քրդական կապերի ուսումնասիրման տեսանկյունից ուսանելի է Գրիգոր Արծրունու «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը» աշխատությունը:[52] Հեղինակը, երկար տարիներ ուսումնասիրելով քրդերի պատմությունը, նրանց սոցիալ-տնտեսական վիճակը, ազգագրությունը, բանահյուսությունը, մի շարք հետաքրքիր եզրահանգումների է հանգում: Նա բարձր է գնահատել քրդուհու դերը ընտանիքում, կենցաղում: Արծրունին գրում է. «Քուրդ կինը մասամբ մասնակցում է մարդու պարապմունքների մեջ, նույնպես պարապում է մի քանի արհեստներով, ինչպես օրինակ գորգեր, շալեր և այլ կարպետներ գործելով»:[53]

Ինչպես Գրիգոր Արծրունու, այնպես էլ «Մշակի» մյուս խմբագիրների՝ Ս. Քալանթարյանի, Հ. Առաքելյանի և այլոց օրոք թերթում քրդերի մասին տպագրվել է ավելի քան երեք հարյուր հոդված ու նշումակություն, որոնք լուսաբանում էին քուրդ ժողովրդի մշակութային կյանքը, բացահայտում մութ ծալքերը: Այս մտավորականների գործունեությանը կանդրադառնանք հաջորդ բաժնում:

Հայ մտավորականության ներկայացուցիչներից բավականին ուշագրավ մշակութային հիշատակումներ է անում գրող հրապարակախոս Քաջբերունին: Նա երկար ժամանակ զբաղվել է քուրդ ժողովրդի պատմության և ազգագրության հարցերով, մի քանի անգամ ճանապարհորդելով ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում, ծանոթացել քուրդ ժողովրդի կենցաղին, ազգային սովորություններին և բարքերին: Դեռևս 1877 թվականին, լինելով Արաքսի ափերին և Արագածի փեշերին, ծանոթանում է այդտեղ ապրող քրդերի, հատկապես եզդիների նիստուկացին, ազգային սովորույթներին, հայ-քրդական հարաբերություններին: Այս ամենն իրենց արտացոլումն է գտել «Փորձ» ամսագրի 1877 թվականի N 3-ում տպագրված նրա «Ճանապարհորդական նկատողություն» հոդվածում, որը հետագայում առավել ամբողջական տեսքով հրատարակվել է «Արարատի» մի շարք համարներում:[54] Հեղինակը նաև հանդես է եկել քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը և բանահյուսությանը վերաբերող մի քանի այլ հոդվածներով, որոնք հետագայում տպագրվել են «Փորձ» և «Արարատ» պարբերականներում: Այդ հոդվածներում նա բազմիցս հայ մտավորականության առջև հարց է բարձրացրել՝ ուսումնասիրել հարևան քուրդ ժողովրդի մշակույթը: Քաջբերունին այս հարցի մասին մեզ գրավոր արժեքավոր տեղեկություններ է թողել: Նա քուրդ ժողովրդի պատմության, ազգագրության, էպոսի, առասպելների, երգերի ուսումնասիրման, քրդերի մեջ լուսավորություն տարածելու գործի նվիրյալներից է:

Հայ-քրդական բարեկամության, այդ թվում՝ հատկապես քրդական մշակույթի պատմության մեջ իր արժանի լուման ունի նաև հայ առաջադեմ մտավորական, մանկավարժ, ազգագրագետ, գրող, քրդական մշակույթի անխոջ գործիչ Լազոն (Հակոբ Ղազարյանը): Նրա բազմաճյուղ ու բազմաբովանդակ աշխատանքի հետաքրքրական մասն են կազմում 1890-1893 թթ. Թիֆլիսում լույս տեսած գեղարվեստական երեք ստեղծագործություններ՝ «Գյուլե», «Ֆերոն» և «Խունխուր», որոնցում նկարագրված է քուրդ ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, նրա հերոսական պայքարը ներքին և արտաքին թշնամիների դեմ, բարքերի ու կենցաղի բազմաթիվ գեղեցիկ դրվագներ: Սրանք ոչ միայն գեղարվեստական, այլև բարձրացված հարցերի գիտական վերլուծության առումով բարձրարժեք գործեր են:

«Գյուլե» վիպակը 1890 թ. տպագրվում է, նախ, «Տարազ» թերթի 6-8-րդ համարներում, ապա՝ նաև առանձին գրքով: Հեղինակն իրական փաստերի հիման վրա պատմում է թուրք բռնակալների դեմ քրդական սիպկի ցեղի պայքարի և ցեղի առաջնորդ Մահմուդ Բեգի հերոսության, իր աշիրաթին նրա աղնիվ ու անշահախնդիր նվիրվածության մասին: Ծանոթ լինելով այս ցեղին, նա համեմատություններ է անցկացնում այլ ցեղերի հետ և եզրակացություններ անում: Գիրքն ամբողջական պատկերացում է տալիս քուրդ ժողովրդի բնավորության, նիստուկացի, ճոխ բանահյուսության, ազատատենչ ոգու, քրդուհու գեղեցկության ու հերոսականության մասին: Այս ամենն ամփոփված է Գյուլեի կերպարում: Գյուլեն ստեղծությամբ է լցված այն քրդական ցեղերի նկատմամբ, որոնք վախկոտ են, ստորաքարշ ու ստրուկ, քանզի դա հատկանշական չէ քուրդ ժողովրդին:[55]

Հեղինակին հաջողվել է տալ քրդուհու ամբողջական նկարագիրը, ներ-

կայացնել ազգային հոգեբանությունը. «Թե՛ քաջությամբ, թե՛ գեղեցկությամբ և թե՛ աշխատասիրությամբ Գյուլեն հայտնի էր ամբողջ ցեղի աղջիկների մեջ: Ոչ մի աղջիկ չէր կարող նրա հետ մրցել ո՛չ ձիավարության և ո՛չ էլ զինավարժության մեջ»:[56]

Այս գեղարվեստական գործում կան նաև ազգագրական տարրերով հարուստ բազմաթիվ տեսարաններ, ինչպես, օրինակ, քրդական օբանների, վրանների, կահկարասիների, քրդուհիների ձեռքով գործված խալիների, կարպետների, ջեջիմների նկարագրությունները: Այս արժեքավոր նյութերը կարող են աղբյուրագիտական հիմք ծառայել քրդական ազգագրության ուսումնասիրությամբ զբաղվողների համար:

Հակոբ Ղազարյանի հաջորդ՝ «Ֆերո» խորագրով գեղարվեստական ստեղծագործությունը հրատարակվել է, նախ, «Աղբյուրի» և «Տարազի» 1892 թ. առանձին համարներում, ապա, նույն թվականին առանձին գրքով՝ Թիֆլիսում: Այստեղ հեղինակը, լազերի Մահմուդ Բեգի և քուրդ հասանցիների աղա Ռզգոյի փոխհարաբերությունների նկարագրության միջոցով ցույց է տալիս քուրդ մարդու անկեղծությունը, վեհանձնությունն ու բարությունը, բազմակողմանի ներկայացնում քրդերի ազգային բարքերն ու սովորույթները, անդրադառնում բանահյուսությանը:

Նրա գեղարվեստական երրորդ գիրքը՝ «Խունխուրը», միանգամայն տարբերվում է վերը նշված երկու գրքերից: Հեղինակն այստեղ, խոսելով հայ-քրդական հարաբերությունների մասին, ցույց է տալիս, որ Պարսկաստանի հայկական գավառներում որոշ քուրդ աշիրաթապետների ոտնձգությունները կատարվել են թուրքական և պարսկական կառավարող շրջաններին անմիջական հրահրմամբ:[57] Միևնույն ժամանակ նա մատնանշում է հայ-քրդական զինակցական կապերը, քուրդ աշխատավոր ժողովրդի ազնիվ ու անշահախնդիր վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ:[58] Խոսելով հայ-քրդական բարեկամական կապերի մասին, Ղազարյանը գրում է, որ քրդերը մեծ պատկառանքով են վերաբերվում հատկապես հայ հոգևորականությանը. նրանք ոչ միայն հարգում, այլև երկրպագում են այն հայ հոգևորականին, որը հետաքրքրվում է իրենցով, բարեկամություն է հաստատում իրենց հետ և, անհրաժեշտության դեպքում, փոխադարձաբար օգնում են միմյանց: Հ. Ղազարյանը մանրամասն անդրադառնում է քրդական մամկցիների ցեղի առաջնորդ Դավտիի և Ս. Հովհաննես վանքի վարդապետ Խաչատուրի բարեկամությանը, որը դրական ներգործություն է ունենում երկու ժողովուրդների փոխհարաբերությունների վրա:[59]

Այնուհետև «Ֆերո» գրքից տեղեկանում ենք, որ Հակոբ Ղազարյանը տպագրության էր պատրաստել Պարսկաստանի քրդերի կյանքին վերաբերող ևս երկու գիրք՝ «Խաղա խանը» և «Աբուզեթը», սակայն, վերջինների տպագրության մասին առ այսօր մեզ հայտնի չէ: Ամեն դեպքում Հ. Ղազարյանի գեղարվեստական երկերն արժեքավոր տեղեկություններ են պարունակում պատմաբանների, ազգագրագետների, գրականագետների ու բանահավաքների համար, և վաղուց ժամանակն է զբաղվելու դրանց ուսումնասիրությամբ:

Հայ լայնախոհ մտավորականն իր ողջ հոգով ու գործունեությամբ նվիրվել էր քրդական մշակույթին: Նա քաջատեղյակ էր քուրդ ժողովրդի պատմությանը, հատկապես բանահյուսությանը և, լավ տիրապետելով քրդերենին, մեծապես նպաստեց քրդական մշակույթի զարգացման գործին: Հ. Ղազարյանին միշտ մտահոգել է քուրդ ժողովրդի ճակատագիրը, պատմական անցյալը: Նա ձգտել է զարկ տալ կրթական գործին, սեր արթնացնել գիր ու գրականության նկատմամբ:

Արևմտյան Հայաստանից տեղափոխվելով Թիֆլիս, Լազոն լիովին անցնում է քրդական մշակութային հարցերի ուսումնասիրությանը: Նա այցելում է Հայաստանի ու Թիֆլիսի քրդերին, մասնակցում նրանց ուրախության ու սգո արարողություններին, հավաքում քրդական ժողովրդական բանահյուսության լավագույն նմուշները և շարադրում է իր «Եզդիների պատմությունը» արժեքավոր աշխատությունը, որը բազմաթիվ հետաքրքիր այլ նյութերի հետ այժմ պահպանվում է Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի պետական թանգարանի արխիվում:

Դեռևս 1909թ. Լազոն Թիֆլիսում հանդիպում էր ունեցել եզդիների կրոնապետ Միր Իսմայիլի հետ, որը Մուսուլից այցի էր եկել Անդրկովկասում ապրող իր կրոնակիցներին: Լազոն հայտնում է Միր Իսմայիլին եզդիների պատմությունը գրելու և քրդական այբուբեն պատրաստելու իր ծրագրերի մասին և մեծ հավանության արժանանում նրա կողմից: Ինչպես Լազոյին, այնպես էլ Միր Իսմայիլին հետաքրքրել են հայ-քրդական բարեկամական հարաբերությունները ծավալելու և քրդերի շրջանում լուսավորություն տարածելու հարցերը: Նա երախտագիտությամբ է գրում Միր Իսմայիլի մասին, որ Միր Իսմայիլի ջանքերով 14 հազար հայեր Մուսուլում ապաստան գտան եզդիների մոտ և փրկվեցին նրանց ձեռքով: «Թշվառ հայերի մնացորդները Մուսուլ հասնելով, մի անհայտ ձեռք նրանց օգնության էր հասնում և աշխատում ամոքել նրանց անհուն տառապանքները: Թեև չէր երևում այդ ձեռքը, սակայն նրա գոյությունն և գործունեությունն ակնհայտ էր: Կառավարությունը ամեն կերպ աշխատում էր գտնել այդ ձեռքը և արմունկներից կտրել: Սակայն գործն այնպես գեղեցիկ կերպով էր կազմակերպված, որ հնարավոր չէր լինում նրա հետքը գտնել: Հալածական հայերին անգոսնող, նահատակող բարբարոս թուրքերն իսկ, Մուսուլի շրջանը մտնելով, մոգական մի գավազանի շնորհիվ փոխվում էին, դառնում էին բարեհոգի, սիրալիր... կիսավայրենի արաբները դառնում էին հայերի պաշտպան, խնամակալ... Եվ Միր Իսմայիլի դեղին ոսկիների քսակները կարողանում էին այն անել, ինչ որ չկարողացան անել հայերին իրենց դաշնակից եայտարարող Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ամերիկայի դիվանագետներն ու վարչապետները: Եվ 14 հազար հայ տարագիր աքսորականներ ազատվում են անխուսափելի մահից ու կոտորածից շնորհիվ Միր Իսմայիլ Բաբայի միայն»:[60]

Այնուհետև Լազոն 1915 թ. Թիֆլիսում հանդիպել է քրդական ազա-

տագրական շարժման ու մշակույթի ականավոր գործիչներից մեկի՝ Աբդուլեզակի հետ: Նրանք զրուցել են քրդական մշակույթին վերաբերող մի քանի հարցերի շուրջ: Ինչպես ինքն է ասում, Աբդուլեզակը խնդրել է լատինական տառերի հիման վրա կազմել քրդական այբուբեն, ինքն էլ սիրով ընդառաջել է և երկար տարիներ աշխատել այդ ուղղությամբ, միևնույն ժամանակ ջանալով հայկական այբուբենը հարմարեցնել քրդերեն լեզվի հնչյունաբանությանը և կազմել է մի երկրորդ այբուբեն: Մի քանի տարի աշխատելուց հետո Լազոն ավարտուն տեսքի է բերում հայերեն տառերով կազմված քրդական այբուբենը: Սակայն ցարական կառավարության ազգահալած քաղաքականության ծանր պայմաններում նրան ոչ մի կերպ չի հաջողվում իր այբուբենը և մյուս ստեղծագործությունները ծառայեցնել քուրդ ժողովրդին:

Լազոյին մշտապես մտահոգել է Թիֆլիսի քուրդ ազգաբնակչության ծանր կյանքը: Նրան հատկապես հուզել է քուրդ որբ երեխաների ճակատագիրը: Լազոյի կարևոր նպատակներից մեկն էր որբերին հավաքագրելը, նրանց համար որբանոց բացելն ու մայրենի լեզվով դասավանդելը: Այդ կապակցությամբ նա 1920 թվականին դիմում է Հայաստանի և Վրաստանի իշխանությունների համապատասխան մարմիններին: Երկար պայքարից հետո Լազոյին հաջողվում է Նաֆթլուղում՝ Ռեյտերովկի փողոցի վրա, մի փոքրիկ շենքում բացել «Շամս» քրդական որբանոցը և այնտեղ հավաքել բազմաթիվ քուրդ երեխաների:[61]

Այս մասին նա գրում է. «Ինձ թեև Հայաստանում անհամեմատ ավելի բարձր պաշտոն է առաջադրած (դաշնակցական կառավարության կողմից - Կ. Ջ.), սակայն, որովհետև իմ փայփայած իղձս և համոզումս է, թե Հայաստանի այլ ազգերի որբուկներին ևս խնամելը հայերիս ոչ միայն պարտականությունն է, այլև խոհեմության, հեռատեսության թելադրանքը, ուստի որոշեցի կարճ ժամանակով հանձն առնել «Շամս» որբանոցի կառավարիչի պարտականությունը, մինչև նրան լուրջ հիմքերի վրա դնելը: Շուտով կսկսեմ դասախոսությունը մանուկներին մայրենի լեզվով (քրդերեն - Կ. Ջ.), որի համար ունեմ կազմված հատուկ դասագիրք, բնորոշ քրդական կյանքին. բոլոր հոդվածներն ու ոտանավորները ինքնուրույն են: Որչափ գեղեցիկ կլիներ, եթե հայկական կառավարությունը նույնպիսի որբանոցներ բաց աներ Հայաստանում քուրդ և թուրք մանուկների համար»:[62]

Կարճ ժամանակ անց այդ որբանոցում Լազոն սկսում է իր կազմած «Շամս» ձեռագիր այբբենարանով դասավանդել քուրդ երեխաներին: Այդ ձեռնարկը գրված էր հայերեն տառերով, բայց՝ քրդերեն լեզվով: Հեղինակն ընդգրկել էր քուրդ ժողովրդի պատմության ու բանահյուսության հետաքրքիր նմուշները: Սակայն հիմնականում օգտագործված էին Լազոյի կազմած ինքնուրույն քրդերեն տեքստերն ու նրա բանաստեղծությունները:

Լազոն ամեն գնով ցանկանում էր Վրաստանում կամ Հայաստանում հրատարակել այդ այբբենարանը, բացել քրդական դպրոցներ, սակայն այդ տարիներին դա նրան չի հաջողվում: Ճիշտ է, նրա ջանքերով 1920թ. սեպ-

տեմբերի 20-ին Ալեքսանդրապոլում հրավիրվում է եղիդիական համագումար, որտեղ նա բարձրացնում է քրդական այբբենարանի տպագրման և դպրոցներ բացելու հարցերը, սակայն, տեղական մարմինների կողմից ոչ մի աջակցություն չգտնելով, գործը տեղից չի շարժվում:[63]

Քուրդ ժողովրդի մշակութային առաջընթացին ծառայելու Լազոյի իղձերն իրականացան Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո միայն: Նա իրեն լրիվ նվիրեց քուրդ ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու, նրա գրականությունը առաջ մղելու գործին, որին մենք կանդրադառնանք աշխատության հաջորդ գլուխներում: Նա իրեն հատուկ ջանադրությամբ գիտական խոր վերլուծության է ենթարկել քրդական մշակութային հարցերը: Նա առաջիններից մեկն էր, որ մանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրեց Արևելյան Հայաստանի քրդերի և քուրդ-եզդիների կյանքը, ազգային սովորությունները, նիստուկացը, պաշտամունքը, լեզուն ու բանահյուսությունը:

Հայ քրդագիտության երախտավորներից է պրոֆեսոր Ս. Ա. Եղիազարովը: Նրա «Համառոտ ազգագրական ակնարկ Երևանի նահանգի քրդերի մասին» ուսերեն արժեքավոր աշխատությունը մի նոր ներդրում է քուրդ ժողովրդի մշակույթի պատմության մեջ: Հեղինակը, տասներկու տարի ուսումնասիրելով քրդերի պատմությունը, ազգագրությունն ու բանահյուսությունը, իր հետազոտություններում քննարկել է ոչ միայն քրդերի պատմության, բարքերին, կենցաղին ու հոգևոր մշակույթին վերաբերող հարցեր, այլև անդրադարձել է հասարակական կառուցվածքին: Նվիրվելով սույն առանցքային հարցերի ուսումնասիրմանը, նա փորձել է ամենայն ճշգրտությամբ վերլուծել դրանք:

Սույն աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի հավաքման և ուսումնասիրման գործում հեղինակին մեծապես աջակցել են Ռուսաստանի ականավոր գիտնականներ Լ. Պ. Զագորսկին, Կապլոնովսկայան, ակադեմիկ Շիֆները, իսկ տեքստերի հավաքման և թարգմանության հարցերում եղբայրը՝ Ներսես Եղիազարովը:

Աշխատությունը պատրաստ է եղել դեռևս 1878թ. և հանձնվել է «Ռուսական կայսերական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքին», սակայն երկար ժամանակ, մեզ անհայտ պատճառներով, այն չի տպագրվել: Միայն մի քանի տարի անց լույս է տեսել Թիֆլիսում, ընկերության ժողովածուի 13-րդ գրքում, որը խմբագրել է Լ. Պ. Զագորսկին: Ուշագրավ է այն փաստը, որ հայ մտավորականության առաջադեմ ներկայացուցիչներին ավելի վաղ է ծանոթ եղել այդ աշխատանքը, նրանք փորձել են այդ արժեքավոր գործը թարգմանել հայերեն և ներկայացնել հայ ընթերցողին: Սա ևս մեկ անգամ վկայում է քրդական մշակույթի հանդեպ հայ մտավորականության ջերմ վերաբերմունքի և բազմակողմանի ուսումնասիրությունների մասին: Ինչպես նշում է «Նոր-Դար» թերթը, Գ. Բարխուդարյանը դեռևս վաղուց նախաձեռնած է եղել հեղինակի ձեռագիրը թարգմանելու գործը և մտադրվել է 1884 թվականին այն տպագրել «Արձագանքի» մի

քանի համարներում: Հայտնի է նաև, որ հեղինակը ռուսերեն տեքստը հանձնել է նաև «Նոր-Դար» թերթի խմբագրությանը, որտեղ այն հատված առ հատված թարգմանվել և «Ազգագրական, իրավաբանական մի համառոտ նկարագիր Երևանի նահանգի քրդերի» եւ «Ազգագրական, իրավաբանական մի համառոտ նկարագիր Երեւանի նահանգի եզդիների» խորագրով տպագրվել է թերթի 1889 թվականի 104-131-րդ համարներում:

Եղիազարովի այս արժեքավոր ուսումնասիրությունը համարվում է քրդերի պատմությանն ու ազգագրությանը նվիրված առավել լուրջ գիտական ուսումնասիրություններից մեկը, որն ինչպես հայ մտավորականների, այնպես էլ ընթերցողների լայն շրջանի մեջ հետաքրքրություն առաջացրեց քուրդ ժողովրդի ու նրա մշակույթի հանդեպ: Այդ կապակցությամբ թարգմանիչն առաջաբանում գրում է. «Հարգելի գիտնականի այդ երկու գործն էլ վերին աստիճանի հետաքրքիր և գովասանքի արժանի են... Այդ նկարագրերը հետաքրքիր են նախ՝ ընդհանրապես բոլոր ազգերի՝ պատմագիտական տեսակետից որպես կորստյան ափին արդեն մոտեցած ազգերի լեզվի, կրոնի, սովորությունների, ազգային ավանդույթների, նրանց կենցաղավարության, աշխարհայեցողության ու հասարակական կազմակերպության մի ստույգ արձանագրություն և ապա, մասնավորապես, մեզ՝ հայերիս համար, որպես դարերից ի վեր դրացի ազգերի նկարագրություն: Իսկ թե որչափով անհրաժեշտ է մեզ համար ծանոթ լինել մեզ շրջապատող ազգերի կյանքին, այդ ինքնըստինքյան հասկանալի է և կարոտ չէ բացատրության»:[64]

Աշխատությունն առաջին անգամ ռուսերեն, առանձին գրքով տպագրվել է 1891 թվականին Թիֆլիսում: Գիրքն ունի առաջաբան և երեք բաժիններ.

1. Երևանի նահանգի քրդերի տերիտորիալ բաժանումը և թվաքանակը:
2. Կուրմանջի տեքստեր:
3. Ազգագրական-իրավաբանական համառոտ նկարագիր Երևանի նահանգի եզդիների: Բացի ներածական խոսքից, այս երեք բաժիններից յուրաքանչյուրն ունի ուրույն առաջաբան, որտեղ հեղինակը հանգամանորեն նկարագրում է նյութերի հայթայթման, գրառման, ուսումնասիրման մանրամասները, բազմաթիվ օրինակներով, մեջբերումներով ու վերլուծություններով հիմնավորում յուրաքանչյուր բաժնի նյութը: Հեղինակը ներածական խոսքում համառոտակի ներկայացնում է քրդերի ծագումը, նշում մի շարք եվրոպական գիտնականների կարծիքն այդ հարցի վերաբերյալ և, շրջանառության մեջ դնելով ձեռքի տակ եղած նյութերը, հանգում է այն եզրակացության, որ քրդերը կորդուենների շառավիղներն են և նրանց պատմական տարածքն էլ հենց Կորդուաց աշխարհն է:[65] Եղիազարովը, մանրամասն ուսումնասիրելով Երևանի նահանգի քրդերի բնակատեղին ու թվաքանակը, ըստ գավառների և նույնիսկ ըստ շրջանների, ցույց է տալիս նրանց սփռման տարածքը: Նա կանգ է առնում քրդական ցեղերի և ցեղախմբերի կառուցվածքի ու դրանց ղեկավարման սկզբունքների վրա, նշում քրդական օբաների, հողային համակարգի, հագուստի և վենքերի տեսակները, անդրադառնում նաև ընտանեկան հարաբերություններին, ժառանգության, ամուսնության հարցերին, հարսանիքների, սգո և ծիսական այլ արարողությունների նկարագրությանն ու բազմաթիվ այլ խնդիրների, որոնք նորահայտություններ են քրդական մշակութային պատմության մեջ:

Սողոմոն Եղիազարովը, ծնված լինելով Հայաստանի Դավալու գյուղում (այժմ՝ Արտաշատի շրջան), իր մանկությունն անց է կացրել հարևան քրդերի շրջանում: Տիրապետել է քրդերենին, հետագայում զբաղվել քրդական ժողովրդական բանահյուսության ուսումնասիրմամբ, հավաքել ու գրի է առել լավագույն նմուշները, որոնք և լայնորեն օգտագործել է իր վերոնշյալ արժեքավոր աշխատություններում: Իր գրքով նա նպատակ է ունեցել ռուս ընթերցողին ներկայացնելու ոչ միայն քուրդ ժողովրդի կյանքը, այլև նրա ազնվությունն ու իմաստնությունը, հարուստ ներաշխարհն ու հոգու պարզությունը: Նա գեռևս Հայաստանում եղած ժամանակ ճանաչված էր որպես քուրդ ժողովրդի մշակույթի ջատագով, հմուտ քրդագետ: Եղիազարովը սերտ հարաբերությունների մեջ էր ուկրաինացի նշանավոր բանաստեղծ Ալեքսանդր Նավրոսկու հետ, որը 14 տարի (1870-1884 թթ.) եղել է Երևանում, ծանոթացել ինչպես հայերի, այնպես էլ Հայաստանում բնակվող այլ ազգերի կենցաղին, սովորույթներին, բանահյուսությանը: Նավրոսկուն առավել հետաքրքրում էին քուրդ ժողովրդի նիստուկացը, կենցաղը, պաշտամունքը, հատկապես բանահյուսությունը, և այդ հարցերում նրան օգնում էր Ս. Եղիազարովը՝ վերջինիս տրամադրելով բազմաթիվ նյութեր: Այնուհետև Նավրոսկու խնդրանքով Եղիազարովը քրդական տասը երգ թարգմանում է ռուսերեն և հանձնում նրան:[66]

Նշենք, որ Եղիազարովը, վերոհիշյալ աշխատությունում զետեղելով քրդական ժողովրդական բանահյուսության մի շարք արժեքավոր գոհարներ, դրանք փրկել է կործանումից: Նա լատինատառ ներկայացրել է քրդական բանահյուսության որոշ տեքստեր և տվել դրանց ռուսերեն թարգմանությունը: Տեքստերը խմբագրել է Լ. Զագորսկին: Դրանցից են «Կար ու քուլուկը», «Որսորդ Մահմեդը», «Ունևոր Օսմանը», «Ռազմիկ Ասաղը», «Կինը», «Քավեն», «Մահմուդ բեգը» և այլ ժողովրդական ստեղծագործություններ: Նա եզդի հոգևորականներից գրի է առել մի շարք տեքստեր, որոնք հիմնականում աղոթքներ են և առաջին անգամ նրա կողմից են թղթին հանձնվել: Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ հեղինակն այս տեքստերի միջոցով անդրադառնում է քրդերենի կառուցվածքին, լեզվական առանձնահատկություններին ու հնչյունաբանությանը:

Այս գիրքը քրդագիտության մեջ առավել արժեքավոր աշխատություններից է: Իր ծանրակշիռ աշխատությամբ Եղիազարովն այն առաջին հայ հեղինակն էր, որն իր ուսումնասիրությամբ նոր էջ բացեց Երևանի նահանգի քուրդ-եզդիների պատմության, հատկապես կրոնի, ազգագրության լուսաբանման ու բացահայտման գործում:

Եղիազարովը կազմել է նաև ռուս-քրդերեն ու քուրդ-ռուսերեն բառարան: Հետագայում, երբ իր աշխատությունը վերահրատարակվեց «Ռուսա-

կան կայսերական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքի տեղեկագրերի» 13-րդ գրքում, բառարանները գետեղվեցին այնտեղ: Տպագրվեց նաև «Ակնարկ Թուրքիայի եզդիների մասին» ծավալուն ուսումնասիրությունը: Քուրդ-ռուսերեն բառարանը կազմել է Ս. Եղիազարովը՝ Լ. Զագորսկու աշխատակցությամբ, իսկ քրդերեն-կուրմանջի բարբառով ռուսկուրմանջի բառարանը կազմել է Լ. Զագորսկին՝ Ս. Եղիազարովի անմիջական մասնակցությամբ: Յուրաքանչյուր բառարան ընդգրկում է 8500-9000 բառ, գրված լատիներեն և ռուսերեն տառերով:

Ս. Եղիազարովը ցանկացել է կազմել քրդական այբուբեն: Այդ հարցով 80-ական թվականներին նրան դիմել է Արևելյան Հայաստանի եզդիների առաջնորդ Հասան աղան, որը ցանկանում էր հայ մտավորականության անմիջական օգնությամբ եզդիների համար դպրոցներ բացել: Այդ խնդրանքը Եղիազարովի կողմից ընդունվում է ջերմությամբ, և նա պատրաստակամություն է հայտնում ստեղծելու քրդական այբուբեն: Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ Եղիազարովն արդեն վաղուց էր կազմել ինչպես լատինատառ, այնպես էլ ռուսատառ քրդերեն այբուբեններ, որոնք ընդգրկվել էին հենց իր բառարաններում: Սա ևս քուրդ ժողովրդի մշակույթին հայ տաղանդավոր քրդագետի մատուցած մեծ ու շնորհակալ ծառայություններից էր:[67]

19-րդ դարի արևմտահայ հասարակական մտքի ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Մաթևոս Մամուրյանը, իր աշխատություններում, հատկապես «Հայկական նամականիում», «Սև լեռան մարդը» պատմավեպում, կանգ է առել հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի, հայկական հարցում թուրքական կառավարության և եվրոպական տերությունների դիրքորոշման և հարակից այլ հարցերի վրա: Հեղինակն իր երկերում բազմաթիվ էջեր է նվիրել նաև քուրդ աշխատավորության սոցիալ-տնտեսական ծանր վիճակին, քուրդ աշխարհիկ և հոգևոր վերնախավի չարագործություններին, հայ-քրդական հարաբերություններին: Նա միևնույն ժամանակ բացահայտել է թուրքական կառավարության նենգամիտ քաղաքականության դերը հայ-քրդական գժտությունների հարցում: Նա իր հոդվածներից մեկում իրավացիորեն գրում է. «Եթե աղքատ ես, պատճառը օսմանյան կառավարությունն է, եթե թշվառ ես, մոլի ես, պատճառը օսմանյան կառավարությունն է, եթե տնտեսական, կրթական ու վարչական բոլոր գործերդ հոռի դրության մեջ են՝ պատճառը օսմանյան կառավարությունն է ...»:[68]

Մամուրյանն իրավացիորեն արևմտահայության թշվառության պատճառներից մեկը համարում էր հայ վերնախավի որոշ ներկայացուցիչներին, այդ թվում՝ եկեղեցականներին, որոնք աչքերը փակում էին թուրք փաշաների ու քուրդ բեկերի գործողությունների առջև, անտեսում հայ և քուրդ աշխատավոր ժողովուրդների բարեկամությունը:[69] Ժողովուրդների բարեկամության քարոզիչը գտնում էր, որ վաղ թե ուշ բոլոր ճնշված ազգերը կազատագրվեն օտարի լծից, ձեռք կբերեն ինքնավարություն և նրանց միջև կստեղծվեն եղբայրական կապեր: Այս կապակցությամբ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը գրում է, որ Մամուրյանի ինտերնացիոնալիստական գաղափարներն առաջադեմ էին:[70]

Մամուրյանը չափազանց մանրակրկիտ դիտարկել է քուրդ ժողովրդի հարցը, նրա հարաբերությունները հայ ժողովրդի հետ և բացատրել, թե ընդհանրապես ինչպիսին է իր դիրքորոշումը քրդերի նկատմամբ: Նա մինչև վերջ այն կարծիքին էր, որ անհրաժեշտ է քրդերի հետ բարեկամական ամուր կապեր հաստատել: Նա միաժամանակ սուր քննադատության է ենթարկել այն հայ մտավորականներին, ովքեր գտնում էին, որ լուսավորության միջոցով հարկ է քրդերին ձուլման ենթարկել: Իր բազմաթիվ հոդվածներում, որոնք հիմնականում տպագրվել են «Արևելյան մամուլում», Մամուրյանը ուղղակի ծաղրել է այդ գաղափարի ջատագովներին. «Երբ տեսնեմ հազարավոր հայ երիտասարդներ, որ իրենց կանացի հագուստը մերկացած ու հատ կապա ու վարտիք հագած կշալակեն մեքենա ու գործիք և կվազեն Հայաստան, կմտնեն այն քրդերու մեջ, որ մեզի ազգակից են, և կջանան բարոյապես զանոնք նվաճել... այն իրենց ճգնաց մեջ զորություն մը կավելացնեն»:[71]

Իր հոդվածներում Մամուրյանը հայ մտավորականության առջև հարց է բարձրացրել՝ անկեղծորեն և ազնվաբար ներգրավվել քրդերի մեջ լուսավորություն տարածելու գործում, մերձենալ նրանց, ինչը կօգնի հայ և քուրդ ժողովուրդների իղձերի ու նպատակների իրագործմանը: Լուսավորության միջոցով նրանց պետք է դուրս բերել խավարից: Հենց այս ուղղությամբ էլ Մամուրյանը ծավալեց իր գործունեությունը, դրանով իսկ իր դրական լուման ներդնելով քրդական մշակույթում: Նրա անմիջական նախաձեռնությամբ Վասպուրականի և Դերսիմի մի շարք գավառներում բացվեցին հայկական դպրոցներ, որտեղ սովորում էին նաև քուրդ երեխաներ: Մամուրյանը հայ մտավորականությանը խորհուրդ էր տալիս օգնել քուրդ երեխաներին, որպեսզի նրանք հաճախեն դպրոց և ուսում ստանան:[72] Եվ պատահական չէր, որ անվանի գրողը մինչև իր կյանքի վերջը մնաց հայ-քրդական բարեկամության քարոզիչ:

Քրդերի մեջ լուսավորություն տարածելու, նրանց թուրքական սարդոստայնից փրկելու գաղափարի ջերմեռանդ ջատագովներից էր նաև 19-րդ դարի հայ պայծառ մտավորական Խրիմյան Հայրիկը: Գարեգին Սրվանձտյանցի հետ նա եռանդ չի խնայել՝ ամրապնդելու հայ-քրդական համագործակցությունը և մինչև իր կյանքի վերջն էլ հավատարիմ մնաց այդ սուրբ, մարդասիրական, արդարացի տեսակետին: Այս առթիվ հայկական մամուլը գրում է, որ Խրիմյանն իր ներշնչումը ստացել էր Բաղրեան բեկի օրերի հայ-քուրդ գործունեությունից: Այնուհետև հայ պարբերական մամուլն անդրադարձել է հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ուղղությամբ Խրիմյան Հայրիկի գործունեությանը: «Ալիք» թերթը նշում է, որ այս ներշնչումով էր, որ Խրիմյան Հայրիկը առանձին ջանքեր թափեց նոր հիմքերի վրա դնելու երկու արյունակից ժողովուրդների փոխհարաբերությունը: «Նա այդ ուղղությամբ սերունդ իսկ պատրաստեց, ափսոս, որ դեռ իր մեծ նպա-

տակը չիրագործված, ինքը աքսորվեց և իր գործակիցներից շատերը բանտ նետվեցին, ուր և շատախցի Սարգիսը, Պետրոսը և Թովմասը թունավորվելով, եղան հայ հեղափոխական անդրանիկ զոհերը»:[73]

Իր գործունեության հենց առաջին շրջանից, երբ ստանձնեց Կոստանդնուպոլսի պատրիարքի պաշտոնը, Հայրիկը բազմաթիվ փաստերով կառավարությանը ներկայացրեց ինչպես հայ, այնպես էլ քուրդ ռամիկ ժողովրդի ծանր վիճակը: Անդրադառնալով Թուրքիայի արևելյան նահանգներում տիրող իրադրությանը, Խրիմյան Հայրիկը Ալի փաշային ներկայացրեց մի զեկուցագիր, որով անդրադառնում էր ինչպես հայ, այնպես էլ քուրդ ժողովուրդների ծանր ու չարքաշ կյանքին, պահանջում էր բարենորոգումներ կատարել այդ նահանգներում, այդ երկու ժողովուրդներին հանել ծանր վիճակից, լուսավորություն տարածել նրանց մեջ:[74] Համակրանք տածելով դեպի քուրդ ժողովուրդը, նա հատուկ հանձնարարություն է տալիս Հայաստանի սովյալների հանձնաժողովի նախագահությանը՝ քրդերին ցորեն, հաց և դրամ բաշխել, որպեսզի քուրդ ժողովուրդը ևս սովից չկոտորվի: Հայրիկը բազմիցս այլ միջոցառումներ է ձեռնարկել՝ օգնելու քուրդ սովյալներին, նա նույնիսկ իրեն հասանելիք գումարը քանիցս հատկացրել է նրանց՝ փրկելով հարյուրավոր քուրդ սովյալների կյանքը:[75] Խրիմյան Հայրիկի նպատակներից մեկն էլ հայ այն մտավորականներին աջակցելն էր, ովքեր զբաղվում էին քուրդ ժողովրդի մշակութային հարցերով: Այդ ուղղությամբ նրա մտադրությունների մասին առավել ընդարձակ տեղեկություններ կան Գ. Նորատունկյանի և Գ. Սրվանձտյանցի միջև նամակագրության էջերում:[76] Նա միաժամանակ կապեր է հաստատել քուրդ աշիրաթապետերի ու մտավորականների հետ՝ ջանալով նրանց աջակցությամբ, հայ մտավորականության միջոցով լուսավորություն տարածել քրդերի շրջանում: Եվ պատահական չէր, որ քրդերը հատուկ հարգանք էին տածում հայ հոգևորականության, հատկապես Խրիմյան Հայրիկի նկատմամբ, որին իրավամբ անվանում էին մլիաքյատ (սուրբ մարդ):

Խրիմյան Հայրիկը հատկապես մեծ աշխատանք կատարեց Վասպուրականի և Դերսիմի քրդերի շրջանում՝ ամենուր ջանալով ամրապնդել հայ-քրդական դաշինքը: Նրա անմիջական ցուցումով հայ մտավորականության ներկայացուցիչներից Փիլիպոս Քեչեչյանը ուղարկվում է Դերսիմ և քրդաբնակ այլ շրջաններ, որտեղ լայն գործունեություն է ծավալում և էլ ավելի ամրապնդում հայ-քրդական համագործակցությունը:[77]

Խրիմյանը միշտ մեղադրում էր թուրքական կառավարությանը ազգամիջյան կռիվներ հրահրելու մեջ: 1895 թ. նա Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին գրում է, որ հայկական կոտորածներում քրդերը մեղավոր չեն, քանի որ դրանք կատարվում են թուրքական կառավարության կողմից. «Երբ թուրք փաշաներն ամեն ինչ իրենց գործողություններով վերջացրին, ձեռքերը լվացած չքմեղ էին ձևանում և թափած արյան մեղքը բարդում էին քրդերի վրա, ասելով, թե անհնար է քրդերի վայրենությունը նվաճել առանց մեծաթիվ զորքի և դրա համար գոնե պետք է հարյուր հազար զինվոր:

Այսպես է զեկուցում ներկայացրել Բ. Դոանը Շաքիր փաշան: Իսկ ես բնիկ վասպուրականցի եմ, մինչև 40 տարի ապրել եմ այնտեղ ու գիտեմ քուրդ ազգին, որ նա այդպիսին չի ...»:[78]

Հայրիկը բազմիցս փորձել է նպաստել քուրդ ժողովրդի դրության բարելավմանը: Նա իր «Ծրագիր բարենորոգմանց» գրքույկում քննադատում է քուրդ վերնախավին, հոգևորականությանը, որ նրանք պատճառ են դառնում ինչպես ազգամիջյան, այնպես էլ ներքրդական կռիվների: Նա առաջարկում է վերջ տալ այդ վիճակին, պայմաններ ստեղծել լուսավորություն տարածելու համար: Այս կապակցությամբ «Հովիտ» թերթը գրում է. «Խոսելով քրդերի մասին, ավելորդ թող չլինի մոտիկ անցյալից եղած իրականության վրա մի հարևանցի ակնարկ գցել: Երբ հանգուցյալ Հայրիկը նստավ Կ. Պոլիս պատրիարքական աթոռը, նրա բազմաթիվ հոգսերից մեկը եղավ Հայաստանի ճնշված, հարստահարվող ժողովրդի վիճակը ընդարձակ տեղեկությամբ ներկայացնել Սուլթան Ազիզին և ապահովություն խնդրել ոչ միայն քրիստոնեից, այլև ճնշված քրդերին և թուրքերին: Այս խնդրով Հայրիկը կանչվեց Բ. Դուռը, ժամանակի մեծ վեզիր Ալի փաշայի մոտ: Այդ մեծ դիպլոմատը ծերակուտին ներկայացրեց հարստահարության տեղեկագիր, երկար ու կարճ բանակցություններից հետո Ալի փաշան հարց տվեց հայոց պատրիարքին, թե քանի՞ հազար զորքով կարելի է ճնշել այդ ստահակներին (նկատի ուներ՝ քրդերին - Կ. Ջ.): Հայրիկը պատասխանում է, որ հարկ չկա պատերազմական միջոցների դիմել, արյուն թափել, փոխանակ զորքի և ռազմական մթերքի շարժվելուն, ծախսեցեք որքան կարելի է լիրաներ և դասական պիտույք, բացեք դպրոցներ, թող կրթվեն և քրդերը, և կառավարությունը այլևս չի զբաղվի դրանցով: Վեզիրի հարցը որքան ծիծաղելի էր և խորամանկ, այնքան ազնիվ և անկեղծ՝ խաղաղասեր պատրիարքի պատասխանը»:[79]

Պետք է նշել, որ քրդերը ոչ միայն խորին հարգանք էին տածում Խրիմյան Հայրիկի և ողջ հայ հոգևորականության նկատմամբ, այլև նրանց համար սրբություն էր հայ եկեղեցին: Այս կապակցությամբ Գ. Ա. Երևանյանը գրում է. «Դերսիմի քրդերը իրենց դավանանքով իսլամությունից այնքան հեռու էին, որքան քրիստոնեությունը: Նամազ, օրուձ չեն բռնի, չեն հանդուրժի երբեք, որ տաճիկը ոտք դնի հայկական սրբատեղեն ներս և որևիցե ոտնձգության դեմ իրենց արյունը զոհելու պատրաստ են»:[80] Որպես ապացույց արձանագրենք այն հետաքրքրական փաստը, որ երբ 1883-ին Խոզաթում գտնվող թուրքական կայազորը ցանկացավ մտնել Հավլորի սբ. Կարապետի վանքը՝ նրա հարստությունները կողոպտելու, ոտքի կանգնեց շրջակա տարածքի ողջ քրդությունը և,՛ շրջապատելով վանքը, այն զենքով պաշտպանեց թուրքերից և թույլ չտվեց, որ նրանք ոտք դնեն վանքի շեմին:[81]

Խրիմյան Հայրիկն իր գործունեությունը ծավալեց քաղաքական բարդ ու դժվարին մի ժամանակաշրջանում, երբ թուրքական կառավարությունը ամեն կերպ ջանում էր կազմալուծել հայ-քրդական միասնությունը: Նա ցա-

վով արձանագրում է պատմական բազում փաստեր, որոնց պատճառով հայ և քուրդ ժողովուրդները հայտնվում էին ծանր կացության մեջ: Իր խորհուրդներով և անձնական միջամտությամբ նա ամեն կերպ ջանում էր մեղմել քուրդ աղաների, բեկերի ու հոգևորականների շահարկումները, պահպանել հայ-քրդական միասնությունը: Իր գրեթե բոլոր աշխատություններում, թեկուզև սովորական հոդվածներում, նա որևէ կերպ անդրադարձել է նաև քուրդ ժողովրդի անցյալ ու ներկա կյանքին, պատվաբեր գործ կատարել քրդերի շրջանում լուսավորություն տարածելու ուղղությամբ: Հատկանշական է այն հանգամանքը, որ Խրիմյանի օրոք հայ հոգևորականությունն ու հատկապես մտավորականությունն առանձնահատուկ վերաբերմունք ունեին քուրդ ժողովրդի, նրա մշակույթի նկատմամբ:

Քրդական պատմամշակութային հարցերը հետաքրքրել են նաև հրապարակախոս, մանկավարժ Ա. Թոխմախյանին: Այդ մասին իր մտորումները նա արտահայտել է հոդվածներում, ակնարկներում, հուշագրություններում, Թիֆլիսի հայ հասարակության համար կարդացած դասախոսություններում: Այս ամենն ի մի բերելով, 1881 թվականին Թիֆլիսում հրատարակում է «Մասիսի լեռների հարավային ստորոտները» խորագրով ժողովածուն:[82]

Գրքում ընդգրկված են նրա ճանապարհորդական նոթերը, որոնք գրառել է 1880-ական թվականներին դեպի Մասիսի հարավային ստորոտներն իր ուղևորության ժամանակ: Հեղինակը տվել է քրդական մի շարք գյուղերի, նրանց ազգաբնակչության, ազգային սովորույթների, սոցիալ-տնտեսական վիճակի նկարագիրը, ցույց տվել թուրքական կառավարության վարած քաղաքականության ազգահալած բնույթը: Սակայն Թոխմախյանին հիմնականում հետաքրքրել են հայ-քրդական փոխհարաբերությունները, նա փորձել է ցույց տալ երկու ժողովուրդների միջև գժտությունների շարժառիթները, օբյեկտիվորեն բացահայտել դրդապատճառները, վեր հանել թուրքական կառավարության նենգամիտ քաղաքականությունը, քուրդ աղաների ու բեկերի չարագործությունները, նրանց միջցեղային կռիվները:

Խոսելով հայ-քրդական բարեկամության և համերաշխության մասին, Թոխմախյանը միանգամայն իրավացիորեն պնդում է, որ ոչ բոլոր քրդերն էին կուլ գնում թուրքական կառավարության քաղաքականությանը: Մի առիթով նա գրում է, որ Մակուի և Ավաջուղի խանության մեջ բոլորը գովեստով էին խոսում քուրդ Հուսեյին աղայի մասին, և հիշատակում է Տաթև տով էին խոսում քուրդ Հուսեյին աղայի մասին, և հիշատակում է Տաթևվանքի վանահոր խոսքերը. «Հուսեյին աղեն, - ասում էր վարդապետը,- եթե չլիներ, մենք մեծ հարվածների պիտի ենթարկվեինք»:[83]

Այնուհետև Թոխմախյանը նշում է, թե ինչպես է ինքը հյուրընկալվել Թայչափարի հովտին ու հարակից լեռներին տիրող քուրդ ցեղապետ Հուսեյին աղայի կողմից և թե ինչպիսի հարգալից ընդունելության է արժանացել: Նպատակահարմար ենք գտնում որոշ կրճատումներով մեջ բերել Հուսեյին աղայի և Թոխմախյանի միջև տեղի ունեցած զրույցը, որը ևս մեկ անգամ լույս է սփռում հայ-քրդական փոխհարաբերությունների պատմության վրա.

«Ձեր կարծիքով քրդերը համակրո՞ւմ են հայերին»-, Հուսեյին աղան պատասխանում է,- «Ձեր խնդիրը (Հայկական հարցը - Կ. Ջ.) երևան գալուց հետո թուրքերը մեծ բարեկամություն սկսեցին ցույց տալ մեզ և մեր ձեռքով կամենում էին կրակ բռնել, այդ աշխարհը սրբել հայերից: Դրա համար շատ մեծ գաղտնի աշխատանքներ են տարվել և տարվում են: Այս ամենով ես ցանկանում եմ ապացուցել այն, որ քրդերը չարագործ ձեռներում միմիայն գործիք են. կտրեցեք այդ ձեռները, և քրդերը կմնան հայերի մշտնջենավոր բարեկամները ...

Ով կփախչի քաղաքակրթվելուց, հարստությունից, բարեբեր կյանքից, բայց այդ ամենի համար մի միջնորդ է պետք, և այդ միջնորդը հայերը միայն կարող են լինել մեզ համար: Ես երախտագիտաբար եմ հիշում սովի տարին: Պետք է խոստովանել, որ հայերը առաջին քայլն արին դեպի մեզ, բայց դա բավական չէ: Հայերը յուրյանց հույսը պետք է դնեն գլխավորապես յուրյանց վրա, հետևաբար և քրդերի ու ասորիների վրա: Դա մի բնական դաշնակցություն է, որովհետև հայոց խնդիրը,- ասում էր Հուսեյին խանը,- միևնույն քրդերի և ասորիների խնդիրն է, որքան որ հայերը քրդերի և ասորիների զարգացման համար աշխատեն, այնքան էլ յուրյանց գործին կօգնեն»:[84]

Թոխմախյանն իրավացիորեն Հուսեյին աղայի օրինակով առաջադրում էր հայ-քրդական զինակցական կապերն ամրապնդելու, ներքին և արտաքին թշնամիների դեմ միասնական ճակատով հանդես գալու խնդիրը: Թոխմախյանը նշում է, որ Հուսեյին աղան միաժամանակ ուներ հեռահար ծրագիր՝ հայ մտավորականության միջոցով քաղաքակրթել, լուսավորել քուրդ ժողովրդին: Այդ նույն զրույցի ժամանակ ահա թե ինչ է ասում Հուսեյին աղայի մասին Թոխմախյանը. «Խանը յուր մտքերի մեջ առավել շատ առաջ գնաց որքան ես կարծում էի: Քրդերի և ասորիների մեջ ուսումնարաններ բաց անելը ուղղակի հայոց պարտականությունն է համարում նա»: Այնուհետև Թոխմախյանը, ամփոփելով իր միտքը, կոչ է անում հայ մտավորականությանը՝ «Ճշմարիտ էր ասում խանը, մեր պարտքն է բարոյապես կրթել մեզ հետ եղբիներին, գարագոյունցոց և այլն»:[85]

Այս գիրքը, բացի հայ-քրդական միասնության, քրդերի մեջ լուսավորության տարածելու, նրանց քաղաքակրթելու վերաբերյալ ծրագրային առաջարկներից, ամփոփում է նաև մի շարք այլ խնդիրներ, որոնք կարող են արժեքավոր լինել քուրդ ժողովրդի պատմությունն ու ազգագրությունն ուսումնասիրողների համար:

Հայ մեծատաղանդ վիպասան, պատմաբան, հրապարակախոս Րաֆֆու (Հակոբ Մելիք-Հակոբյան) ստեղծագործությունները բացառիկ արժեք են ներկայացնում ոչ միայն հայ, այլև քուրդ ժողովրդի համար և մի նոր էջ են բացում քրդական մշակույթի ու հայ քրդագիտության բնագավառում առ այսօր չլուծված խնդիրների բացահայտման գործում:

Մենք հատատապես ժխտում ենք որոշ պատմաբանների ու գրականագետների այն թյուր կարծիքը, թե Րաֆֆին նեղ ազգայնական է եղել: Ճիշտ

է, երբեմն նրա ստեղծագործություններում զգացվում է ազգային սահմանափակություն, որն արտացոլվել է քուրդ վերնախավի խժդժություններով: Սակայն մեր ուսումնասիրությունները մեկ անգամ ևս հաստատում են, որ Րաֆֆու բոլոր գործերում կան այլազգիների նկատմամբ գրողի բարեկամական վերաբերմունքն արտահայտող կերպարներ: Նա կոչ է արել լուսավորություն տարածել ճնշված ու հալածված ժողովուրդների, այդ թվում՝ քրդերի մեջ, մատնանշել, որ կրթությամբ է հնարավոր հասնել համերաշխության, բարեկամության, ազգային խտրականությունների վերացման: «Խենթում» Վարդանը, դիմելով քրդուհուն, ասում է. «Եթե դու կրթված լինեիր, կյանքի այդ պայմանների մեջ, քո այդ հարուստ ձիրքով կլինեիր մարդկության հրաշալիքը»: Իսկ իր «Կայծերում» անդրադառնալով քրդերի մեջ լուսավորություն տարածելու գործին, հանձին գյուղական ուսուցիչ Կարոյին արտացոլված է հայ մանկավարժի հոգատարությունը քուրդ երեխաներին ուսանելու. «Նա քրդերի ուսման մասին էլ էր հոգ տանում: Նրա դպրոցում մի քանի քուրդ երեխաներ կային եւ նրանց ավելի շատ էր սիրում, քան թե մեր երեխաներին: Մի անգամ այդ երեխաներից մեկը հիվանդացավ, նա կատարյալ գժվածի նման էր այդ միջոցում, ամբողջ գիշերը նստում էր նրա անկողնու մոտ, խորին տխրությամբ նայում էր նրա վրա, կարծես շնչառության ամեն մի վայրկյանը համբարելիս լիներ: Այնքան հոգ տարավ, մինչեւ առողջացրեց» (Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, Երեւան, 1963, էջ 347): Րաֆֆու ստեղծագործությունների և ուսումնասիրությունների պատմագիտական արժեքը կայանում է նրանում, որ նա դեպքերը շարադրելիս հանդես է գալիս որպես իրադարձությունների ականատես և դրանց էության մեջ խորացող հետազոտող:

Րաֆֆին իր ստեղծագործությունների նյութը վերցնելով Արևմտյան Հայաստանից, բնականաբար, չէր կարող անտարբեր լինել քուրդ աշխատավոր զանգվածների կյանքի հանդեպ: Անդրադառնալով ընդդեմ թուրքական ու պարսկական բռնակալությունների հայ ժողովրդի հերոսական պայքարին, նա միևնույն ժամանակ շոշափել է հայ-քրդական հարաբերությունները, կոչ անելով ամրապնդել հայերի և քրդերի բարեկամական կապերը: 19-րդ դարավերջի դրամատիկ իրադարձությունների կապակցությամբ Րաֆֆին ինչպես իր գեղարվեստական գործերում, այնպես էլ պատմագիտական արժեք ներկայացնող ուսումնասիրություններում ցավով նշել է հայ և քուրդ ժողովուրդների միջև տեղի ունեցած պատմական որոշ տհաճ միջադեպերի մասին, որոնք թուրքական փաշաները և քուրդ աղաներն ու բեկերն էին հրահրել: Սակայն, ելնելով պատմական օբյեկտիվությունից, պետք է արդարացիորեն նշել, որ Րաֆֆին բարեկամական զգացմունքներ է տածել քուրդ աշխատավոր ժողովրդի հանդեպ, վեր հանել քուրդ ժողովրդի պատմության, ազգագրության, բանահյուսության բազմաթիվ հարցեր, լուսաբանել հայ-քրդական բարեկամության լավագույն էջերը:

Տիրապետելով քրդերեն լեզվին, Րաֆֆին բազմիցս եղել է քրդերի մեջ և մանրակրկիտ ծանոթացել նրանց պատմությանը, հատկապես բանահյուսությանը: Նա ևս այն կարծիքին էր, որ պետք է խորապես ուսումնասիրել հարևան ժողովրդի ողջ անցյալն ու ներկան: Իր ճանապարհորդական հոդվածներից մեկում, որը գրառել է Պարսկաստան ուղևորվելիս, նա խոստովանել է, որ մտադիր է եղել ծանոթանալ քուրդ ժողովրդի պատմությանը, նիստուկացին, բանահյուսությանը:[86] Այդ հոդվածում գրողը քննադատական խոսք է ուղղում քուրդ աղաների հասցեին, վեր հանում նրանց չարագործությունները, սակայն միաժամանակ անդրադառնում է քուրդ ժողովրդի ազգային բնութագրի դրական կողմերին և նշում. «Արդարև, քուրդերը քաջ, հանդուգն և կրակոտ ազգ են: Քուրդը անկեղծ հյուրասիրությամբ պատրում է ամեն մարդու, որ ազգից և լիներ նա, երբ նա մտնում էր նրա չադրի (վրան – Կ. Ջ.) մեջ»:[87]

Րաֆֆու սրատես աչքից չեն վրիպել թուրք պաշտոնյաների կողմից քուրդ գյուղացու կրած հալածանքները: Նա հստակ նկարագրել է քուրդ աշխատավորների սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, որը թուրքական ռազմաֆեոդալական բռնապետության վարած քաղաքականության հետևանքն էր:

Իր «Տաճկահայքում», առավել հանգամանորեն անդրադառնալով հայ և քուրդ աշխատավոր գյուղացիների սոցիալական ծանր վիճակին, Րաֆֆին նշել է, որ Թուրքիայում հայ և քուրդ չքավոր գյուղացիները ճորտացվել էին թուրք բեկերի ու քուրդ աղաների կողմից, որ նրանք վճարում էին բազմապիսի ծանր հարկեր, որոնց ներքո քայքայվելով՝ թողնում էին արորն ու հայրենի երկիրը և գաղթում օտար երկրներ՝ բախտ որոնելու:[88] Երբեմն քուրդ գյուղացին պարզապես լքում էր իր տնտեսությունն ու մեկնում որևէ հայկական գյուղ, հովանավորություն գտնում հայ գյուղացու մոտ, որը նրան հող, անասուններ և այլ միջոցներ էր հատկացնում, որպեսզի վերականգնի իր քայքայված տնտեսությունը:[89]

Հայ-քրդական բարեկամական կապերին և հատկապես քուրդ ժողովրդի կենցաղին Րաֆֆին առանձնակի կարևորությամբ անդրադարձել է իր «Ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ադուլիս» հոդվածում: Օգտագործելով պատմական բազմաթիվ իրական փաստեր՝ նա ցույց է տվել հայ և քուրդ աշխատավորների ջերմ հարաբերությունները, որոնք ցայտուն կերպով արտացոլվել են նրանց քիրվայության մեջ (կնքահայր - Կ. Ջ.): Քիրվա կարող էին լինել այն մարդիկ, ովքեր մեկը մյուսի նկատմամբ հավատարիմ ու անկեղծ էին: Գրողի տեսադաշտում են մնացել նաև քուրդ ժողովրդի կենցաղը, բարքերն ու սովորույթները, պաշտամունքը, ազգագրությունը և բազմաթիվ այլ հարցեր: Նա հատուկ նշել է քրդերի հյուրասիրության մասին, որը և բարձր է գնահատել:[90]

Քրդական շարժումների մասին խոսելիս Րաֆֆին նշում է, որ քուրդ ցեղապետերը հաճախակի էին օգնության խնդրանքով դիմում հայ աշխարհիկ և հոգևոր առաջնորդներին, և վերջիններս էլ ընդառաջում էին նրանց ու միացյալ ուժերով պայքարում էին թուրքական կառավարության դեմ: Րաֆֆու վկայությամբ քրդերին հատկապես օժանդակում էին Աղբակի, Շատա-

խի, Բալուի, Մոկաց և Սասունի հայերը: Անդրադառնալով այս գավառների քրդերի կյանքին, Րաֆֆին գրում է, որ նրանք այնքան էին մտերմացել հայերի հետ, որ փոխառել էին նրանց որոշ արարողություններ. պահում էին սբ. Սարգսի և սբ. Գևորգի պասերը, զոհ էին մատուցում հայոց նշանավոր ուխտատեղերում:[91] Մատնանշելով նման իրողությունները, որոնք ավելի էին ջերմացնում հայ-քրդական կապերը, նա միևնույն ժամանակ իր գեղարվեստական ստեղծագործություններում, հատկապես «Ջալալեդդին» և «Կայծեր» վեպերում, շատ դիպուկ կերպով քննադատում է թուրքական կառավարությանը, որն այդ ժամանակ ազգամիջյան կռիվներ էր հրահրում և փորձում ամեն առիթով հայերին և քրդերին հանել իրար դեմ:[92]

«Ջալալեդդին» վեպում մանրամասն պատմվում է նույնանուն քուրդ շեյխի գործողությունների մասին: Հովանավորվելով թուրքական կառավարության կողմից, շեյխը ամենուր խժդժություններ էր ծավալում: Հեղինակը, սակայն, միևնույն ժամանակ փաստում է այն իրողությունը, որ ոչ բոլոր քրդերն էին խաբվում թուրքական սադրանքներից. նրանք ոտքի էին ելնում և հայերի հետ մեկտեղ պայքարում թուրքերի դեմ: Վեպում համոզիչ ցույց է տրված, որ քրդերից շատերն այնքան մոտ էին հայերին, որ դարձել էին միևնույն ընտանիքի անդամներ, ծանոթ էին միմյանց նիստուկացին, մասնակցում էին միմյանց ուրախությանն ու տխրությանը:[93]

Րաֆֆին քուրդ ժողովրդի ազնվությունն ու հերոսությունը մարմնավորել է նաև Օմար աղայի կերպարում: Քուրդ Օմար աղան չի մասնակցում Ջալալեդդինի արշավանքներին: Իմանալով, որ թուրքերն ու Ջալալեդդինի հրոսակները պետք է հարձակվեն Աղբակի վրա, նա շտապում է Բարդուղիմեոս առաքյալի վանքը և հայտնում վանահայր Եղիազար վարդապետին, թե մի քանի օրից ինչպիսի դառը վիճակ է սպասվում Աղբակի հայերին: Նա վանահորը խորհուրդ է տալիս օգուտ քաղել վանքի անմատչելի ամրոցներից և, այնտեղ հավաքելով շրջակա հայոց գյուղերի հարստությունները, պայքարել թշնամու դեմ:[94] Օմար աղան խոստանում է, որ ինքն էլ կմիանա վանահորը և «խոստումը կատարեց գործով, որովհետև նա էլ երկյուղ ուներ Ջալալեդդինից և նրա արշավանքներին չմասնակցելու համար վախենում էր ենթարկվեր շեյխի վրեժխնդրությանը ...»:[95] Եղիազար վարդապետը շնորհակալությամբ է ընդունում իր վաղեմի բարեկամ Օմար աղայի խորհուրդը, ապա ժողովրդի թելադրանքով գնում է Ջալալեդդինից խնդրելու՝ ձեռք չտալ վանքում պատսպարված ժողովրդին: Գնալուց առաջ վանահայրը Օմար աղայից խնդրում է թաքցնել վանքի հարստությունը, և քուրդը սրբությամբ կատարում է վանահոր խնդրանքը. սա մեծագույն վստահություն էր քուրդ ժողովրդի ներկայացուցչի նկատմամբ, բարեկամական ջերմագին զգացմունքների արտահայտություն:[96]

Ինչպես «Ջալալեդդին», այնպես էլ «Կայծեր» վեպերը գեղարվեստական, կասեինք նաև՝ գիտական վերլուծություններով գրված ամբողջական ուսումնասիրություններ են քուրդ ժողովրդի հերոսության, ազնվության, հյուրասիրության, հայ-քրդական հարաբերությունների մասին: Հեղինակը

ստեղծագործել է իրական փաստերի ու գործողությունների հիման վրա, հանգել այնպիսի ճշգրիտ եզրակացությունների, որոնք կարող են որպես սկզբնաղբյուր ծառայել քրդագետների համար:

Րաֆֆին իր «Կայծեր» վեպում, ըստ արժանվույնս գնահատելով քրդական մշակույթը, կանգ է առնում ժողովրդական բանահյուսության և ազգագրության մի քանի էական կողմերի վրա: Նա խորապես ուսումնասիրել է քրդական բանահյուսությունը և այն ճշմարտացիորեն օգտագործել իր ստեղծագործություններում, հատկապես «Կայծերում»: Նա առանձնապես բարձր էր գնահատում ժողովրդական հեքիաթները, զրույցները, ավանդույթները, հավատալիքները: Բանահյուսության մեջ նա տեսնում էր ժողովրդի կապը անցյալի հետ, ժողովրդական ոգու դրսևորումը:[97] Բարձր գնահատելով ժողովրդական բանահյուսությունը, Րաֆֆին այն համարում է գիտական ուսումնասիրության աղբյուր և, լայնորեն օգտագործելով այն իր ստեղծագործություններում, ցույց է տալիս նաև հայ-քրդական բանահյուսությունների փոխազդեցությունը: Գրողն առանձնակի ջերմությամբ է վերաբերվում հատկապես քրդական ժողովրդական երգ-երաժշտությանը: Այդ մասին նա գրում է. «Ժողովրդական անգիր բանահյուսությունը կենդանի է քրդի մեջ, նա ծագելով ամբոխի իսկական կյանքից, ուներ նույն բնավորությունը և ոգին, որով ապրում էր ինքը՝ ամբոխը: Հովվերգությունը և քաջագնական հանգերգությունը զլխավոր տեղն են բռնում նրանց բանաստեղծության մեջ, առաջինը որպես խաշնարած ցեղի կյանքի առնչության, երկրորդը որպես նրա պատերազմական ոգու արտահայտություն: Հովվական երգերը տխուր էին և մելամաղձոտ, նրանք խիստ մեղմ կերպով ներդաշնակում էին հովվի սրնգի խուլ և ձգական հնչյունների հետ: Իսկ պատերազմական երգերը կրակոտ ու վառվռուն և խրոխտ էին...»:[98] Այնուհետև նա շարունակում է. «Ինձ մինչև այսօր չի պատահել լսել մի երգ, որ այնքան հատկանշական լինի ազգային բնավորությանը, որ այնքան արտահայտող լինի ժողովրդական ոգին, որպիսինն է քրդերի երգը»:[99]

Մեկ այլ առիթով, վերստին անդրադառնալով քրդական երգին ու երաժշտությանը, Րաֆֆին կարողացել է ճիշտ բնորոշել ու բնութագրել այն: Հանդիպելով քուրդ աշուղին, նա գրում է. «Քուրդ աշուղի երգածները հատակ տողեր չէին, նա երգում էր մի ամբողջ վեպ, որ ժողովրդական պոեզը առել էր կենդանի անցքից»:[100] Գրողն այնուհետև շեշտում է. «Ոչ մի նշանավոր երևույթ չէր կորցնում իր հետքը քրդի կյանքի մեջ. ժողովրդական ոգին իր տողերով կամ փառաբանում էր մեկի քաջագործությունը, կամ պարսավում էր մյուսի թուլասրտությունը: Ծածկվեցավ մեկը թշնամուց կամ խույս տվեց նա կռվի դաշտից, մյուս օրը կանայք և աղջիկները հորինում էին նրա մասին զանազան կծու պարսավներ, և երգը արագ թռչում էր ամեն երեխայի, ամեն չափահասի բերանից»:[101]

Րաֆֆին ինչպես հայոց, այնպես էլ քուրդ ժողովրդի պատմության՝ քաղաքական ծանր ու սուր պայքարով հագեցած իրադարձությունների ոչ միայն գեղարվեստական, այլև պատմագիտական շարադրողն է: Նրա յուրա-

քանչյուր աշխատություն որպես սկզբնաղբյուր կարելի է օգտագործել քուրդ ժողովրդի պատմության, բանահյուսության, ազգագրության և մշակույթի այլ բնագավառների հարցերն քննարկելիս:

20-րդ դարի սկզբներին են վերաբերում հայ առաջադեմ գործիչ, պատմաբան Անդրանիկի ուսումնասիրություններն ու հոդվածները, որոնք բավականաչափ առնչվում են մշակույթի, հատկապես քրդագիտությանը հուզող հարցերին: Այս տեսակետից առավել արժեքավոր է 1900 թվականին Թիֆլիսում հրատարակված նրա «Դերսիմ. ճանապարհորդություն և տեղագրություն» աշխատությունը: Հեղինակն իր աշխատությունը շարադրելու համար, բացի որոշ ուսումնասիրություններից օգտվելուց, շրջագայել է ողջ Դերսիմով, ծանոթացել հայ և քուրդ պատմասացների ու սեյիդների (հոգևորական) հետ, գրի առել շրջանի պատմական անցքերը: Հեղինակն այդ կապակցությամբ նշել է. «Այս արյունահեղ ընդհարումների պատմությունը, որ ես գրեցի, լսած եմ ժողովրդական ժամանակակից և ոչ ժամանակակից զանազան պատմիչներե, ականատես և առաջին ու վերջին ընդհարումների մասնակից եղող սեյիդներե, որոնք ամենքն ալ միմյանցմե շատ քիչ տարբերությամբ պատմել են, մանավանդ 1877թ. ընդհարումների մասին լսած եմ բուն կռվին մասնակցող և առաջնորդ քրդերե և սեյիդներե, որոնց հետ երկար ամիսներ եմ ունեցել ապրելու»:[102]

Անդրանիկն իր այս ծավալուն ու արժեքավոր աշխատությունում կանգ է առել Դերսիմի կիսանկախ գավառի հայերի ու քրդերի սոցիալ-տնտեսական վիճակի, հայ-քրդական հարաբերությունների, քրդական աշիրաթների, քուրդ սեյիդների ու տեսեների (քրդական հոգևոր առաջնորդներ - Կ. Ջ.) գործունեության, իրավական հարցերի նկարագրության վրա: Նրան հատկապես հրապուրել են քրդական հերոսամարտերը, որոնց տևականորեն օգնության են հասել հայերը: Այս առթիվ Անդրանիկը գրում է. «Հայերն ու քրդերը եղբայրական օգնության ամենամեծ պարտականությունը կզգան օգնելու դրացի ցեղերուն, երբ անոնք արդեն թշնամու հետ կռվի բռնված ժամանակ օգնության կարիք կզգան: Միմյանց օգնելու համար ցեղերով պատերազմի դաշտ կիջնեն և կկռվին քաջաբար, նույնիսկ հարկ եղած դեպքում մինչև վերջին մարդը կկռվին»:[103]

Հեղինակը հայ-քրդական գժտությունների պատճառը տեսնում է թուրքական բիրտ քաղաքականության մեջ, «Հայերը և քրդերը դարերով եղել են հարևաններ և մոտ բարեկամներ, որոնք միշտ էլ լավ հարաբերության մեջ են եղել: Այդ երկու ժողովուրդների մեջև գժտություն ստեղծողը եղել է թուրքական կառավարությունը»:[104]

Հայ մտավորականը բարձր է գնահատում Դերսիմի քրդերի պարզությունը, ազնվությունը, հավատարմությունը, վեհանձնությունն ու հերոսությունը: Միաժամանակ նա մանրամասն նկարագրում է Դերսիմի քրդերի ազգագրական առանձնահատկությունները, ներկայացնում նրանց ծագումը, պաշտամունքը, ծեսերը, հարսանիքի ու ողբի տեսարանները: Խորազնին վերլուծելով Դերսիմի զազա քրդական ցեղախմբի ծագումը, ժամանակի ո-

րոշ գիտնականների կարծիքին հակառակ, հանգում է այն ճիշտ եզրակացությանը, որ վերջիններս նույն քրդերն են, որոնք խոսում են զազակի բարբառով: Հետաքրքրական տեղեկություններ կան ինքնավար Դերսիմի աշիրաթների ռազմական գործողությունների, զենքերի օգտագործման եղանակների մասին:

Աշխատությունը գրված է հավաստի փաստերի հիման վրա և, ըստ իս, արժեքավոր ու լուրջ ուսումնասիրություն է Դերսիմի քրդերի մասին: Այն արժանացել է տվյալ ժամանակի պատմաբանների, քաղաքական և ռազմական գործիչների ուշադրությանը: 1913 թվականին Վանի փոխհյուպատոս Ս. Օլֆերևը Դերսիմի մասին ցարական կառավարությանը գրած իր զեկույցներից մեկի նյութերը հիմնականում քաղել է այս աշխատությունից և բարձր է գնահատել այն. «Այս հետաքրքիր ու արժեքավոր գիրքը Դերսիմի քրդերի անցյալի ու ներկայի պատմությունն է, հայ-քրդական հարաբերությունների լուսաբանման մի վառ վկայություն: Ճիշտ է, այս գիրքը գիտական մոտեցման տեսանկյունից չի դիմանում խիստ քննադատության, բայց, այնուամենայնիվ, նա տալիս է նոր ու հարուստ տեղեկություններ այդ քիչ հայտնի գավառի մասին»:[105]

Մենք համամիտ չենք փոխհյուպատոս Օլֆերևի այն կարծիքին, որ գիտական տեսանկյունից սույն աշխատանքը «չի դիմանում խիստ քննադատության»: Հարկ է նշել, որ այն քուրդ ժողովրդի տվյալ ժամանակաշրջանի պատմագրության բազմահարուստ հարցերի մասին գիտական մեկնաբանություններով հագեցած արժեքավոր աշխատություն է և, կարելի է ասել՝ սկզբնաղբյուր:

Հայ մտավորականության անխոնջ ներկայացուցիչներից Երվանդ Լալայանը բազմիցս մտահոգվել է քրդական մշակույթի հարցերով: Նա բարձր է գնահատել քրդական ժողովրդական բանահյուսության դերը, զբաղվել քրդական հեքիաթների, երգերի, վիպերգերի հավաքագրմամբ: Լալայանը բազմիցս եղել է Արևմտյան Հայաստանի Մոքսի, Սասունի, Բիթլիսի, Վանի քրդաբնակ շրջաններում, մասնակցել ծիսակատարությունների, հարսանիքների և ինչպես քուրդ, այնպես էլ հայ բանահավաքներից գրի առել քրդական բանահյուսության և ազգագրության լավագույն նմուշները, որոնք հետագայում տպագրել է հայ պարբերական մամուլում:

Հայտնի է, որ ինչպես հայկական, այնպես էլ քրդական բանահյուսության բազմաթիվ նմուշներ հավասարապես հարազատ են եղել երկու ժողովուրդներին և երկու լեզվով էլ տարածված են եղել նրանց մեջ: Լալայանին, ըստ երևույթին, հետաքրքրել է այդ հարցը, և պատահական չէ, որ նա, շրջելով քրդերի մեջ, փնտրել է այդ նմուշները և գրի առել, որոշ դեպքերում թարգմանել, իսկ որոշ դեպքերում էլ հենց բանասացներից լսած ձևով տպագրել: Նա զանազան հանդեսներում հրատարակել է քրդական մշակույթին և հատկապես քրդագիտությանը վերաբերող արժեքավոր ուսումնասիրություններ: Լալայանը հայ-քրդական բանահյուսության, երգ-երաժշտության և այլ հարցերի վերաբերյալ որոշակի եզրակացությունների է հանգում,

նշում առանձնահատկությունները, հայ մտավորականությանն առաջարկում առավել խորությամբ ուսումնասիրել քրդական բանահյուսությունը, երաժշտությունը:

1882 թվականին նա քրդերից լսում է «Թմկաբերդի առումը» քրդական տաղերգը և գրի առնում: Նույն թվականին էլ այն տպագրում է իր «Ջավախքի բուրմունք» գրքում:[106] Պետք է նշել, որ մինչ Լալայանը այս տաղերգը գրի չէր առնվել: Սա անկրկնելի ու ինքնատիպ մի գործ է: Նա քրդերից նաև լսել ու գրի է առել նրանց մեջ շատ տարածված «Ռուստամ Զալի» պատմությունը: Դրա քրդական տարբերակը հետագայում տպագրել է իր «Վասպուրական» գրքում»:[107] Լալայանը վկայում է, որ Վանի, Սասունի, Բիթլիսի հայերը հոյակապ տիրապետում էին քրդերենին և նրանցից շատերն ինչպես քրդական, այնպես էլ հայկական բանահյուսության նմուշները պատմում էին հենց քրդերենով: Նա նաև նշում է, որ այդ երկու ժողովուրդները սերտ հարաբերությունների մեջ էին և մասնակցում էին միմյանց ծիսակատարություններին, ուրախության ու սգի արարողություններին:[108]

Իր «Վասպուրական» գրքում նա զետեղել է քրդական հեքիաթներ, որոնցից մեկը՝ «Դրմդրմի» հեքիաթը, ինչպես ինքն է նշում, գրի է առել 1911 թվականի օգոստոսի 20-ին Նարեկ գյուղում Պետրոս Ավոյանից, որը անգրագետ մի գյուղացի էր, բայց ինչպես քրդական, այնպես էլ հայկական ժողովրդական բանահյուսությունից հատվածներ էր պատմում քրդերենով, լինում էր քրդական գյուղերում և իր լսածները պատմում ժողովրդին:[109] Հեղինակն իր աշխատությունում ոչ միայն անդրադարձել է հայ-քրդական բանահյուսական փոխազդեցություններին, որն, անշուշտ, նպաստել է քրդական մշակույթի հարստացմանը, այլև՝ քրդական և ասորական բանահյուսությունների փոխազդեցություններին ու այդ ազգությունների փոխհարաբերություններին, այդպիսով փորձելով ցույց տալ քուրդ ժողովրդի բանավոր խոսքի ակունքները, քրդական բանահյուսության անզուգական գեղեցկությունը: Լալայանը կարողացել է քրդական մշակութային պատմագրության մեջ բացահայտել առ այսօր չլուծված բազմաթիվ հարցեր:[110]

Քրդական մշակույթի նկատմամբ Ե. Լալայանի հետաքրքրությունը ավելի ակնհայտորեն դրսևորվում է այն ժամանակ, երբ նա հիմնադրում է «Ազգագրական հանդես» պարբերականը (1896): Հանդեսի տարբեր համարներում տեղ են գտնում նաև քուրդ ժողովրդի պատմությանը, բանահյուսությանն ու ազգագրությանը վերաբերող նյութերը: Հայտնի է, որ քրդական ժողովրդական բանահյուսության բազմաթիվ նմուշներ, ինչպես քրդերեն, այնպես էլ հայերեն տարբերակներով, տարածված են եղել նաև հայ ժողովրդի մեջ: Մինչև 1916 թ. գոյատևած հանդեսը, որում տպագրվեցին քրդական մի շարք նորահայտ գործեր, դրական ազդեցություն է թողել քրդական մշակույթի զարգացման վրա:

Լալայանը նամակագրական կապեր է ունեցել այն հայ մտավորականների հետ, ովքեր զբաղվում էին ազգագրության, բանահյուսության, լեզվի և գրականության հարցերով, ոգեշնչել է նրանց, պատվիրել քուրդ ժողովրդի

մասին հոդվածներ գրել: Հատկապես ուշագրավ է նրա կապը Հովսեփ Օրբելու հետ:

Հայաստանի մատենադարանի Լալայանի արխիվային ֆոնդում պահպանվում են մի շարք նամակներ, որոնք նա ուղարկել է Էջմիածնի միաբանության անդամներին, նրանցից խնդրել է ժողովածուին ուղարկել հայ մշակույթին վերաբերող նյութեր: Նամակներին ծանոթանալուց հետո մեզ համար պարզ դարձավ, որ միաբանության անդամները, ոչ միայն հայ բանահյուսության, ազգագրության և այլ հարցերի վերաբերյալ են հոդվածներ ուղարկել Լալայանին, այլև անդրադարձել են քուրդ ժողովրդի մշակույթին՝ քրդական ազգագրության և բանահյուսության վերաբերյալ մի շարք հոդվածներ և նյութեր ուղարկելով «Ազգագրական հանդեսին»: Այս կապակցությամբ Երվանդ Լալայանն իր նամակներից մեկում, որը 1908 թվականի մայիսի 9-ին Նոր Բայազետից ուղարկել է հայագետ Գարեգին Հովսեփյանին, գրում է. «Արժանապատիվ հայր, Ձեր երկու նամակն էլ ստացել եմ, մինը՝ Բաշ Նորաշենում, շատ ուշ՝ սեպտեմբերի 2-ին, իսկ մյուսը՝ Թիֆլիսում, երբ կրկին պատրաստվում էի ճանապարհորդել: Առանց հոդվածը տեսնելու, այսինքն, առանց գիտենալու, թե ինչպիսի մանրամասնությամբ նկարագրված է քրդական հարսանիքը, հետևապես որքան մասնագիտական բնույթ է կրում, չեմ կարող ասել՝ կարող ենք տպագրել թե ոչ: Այս միայն կասեմ, որ եթե չափազանց մանրամասն լինի և նորություններ պարունակե, անշուշտ կարող ենք տպագրել, այն էլ ոչ այս գրքում, այլ հետևյալ: Այս գրքի համար շատ կլինդրեի, որ հաճեիք մի գրախոսական ուղարկել կամ դիվան հայոց պատմության վերջին գրքի և կամ մի այլ աշխատության մասին:

Ընդունեցեք, խնդրեմ, խորին հարգանքիս կատարյալ հավաստիքը:

Ձեր հանդեպ խ. հարգանքով Ե. Լալայան»:[111]

Ինչպես երևում է այս նամակից, հայ մտավորականության ներկայացուցիչներին հետաքրքրել է նաև հարևան ու բախտակից քուրդ ժողովրդի ազգագրությունը, և պետք է նշել, որ հենց Լալայանի անմիջական նախաձեռնությամբ Հովսեփյանի սույն հետաքրքիր հոդվածը տպագրվում է ազգագրական ժողովածուում: Հետագայում ևս «Ազգագրական հանդեսի» տարբեր համարներում տպագրվում են մի շարք այլ հոդվածներ, որոնք գրավոր արժեքավոր աղբյուրներ են քուրդ ժողովրդի մշակույթի ուսումնասիրման համար: Քանի որ այդ մասին արդեն նշել ենք մեր «Հայկական պարբերական մամուլը քրդերի մասին» բիբլիոգրաֆիայում, այժմ նպատակահարմար չենք գտնում անդրադառնալ «Ազգագրական հանդեսում» տպագրված այն հոդվածներին, որոնք բազմահարուստ նյութեր են մատակարարում քրդական մշակույթին և, անտարակույս, կարող են օգտագործվել որպես սկզբնաղբյուրներ:

Հայ մտավորականության նման անուրանալի գործունեությունը որոշակիորեն իր դրական ներգործությունն ունեցավ և ունենալու է քրդական մշակույթի վրա: Պետք է նշել, որ հայ մտավորականությունը 19-

դդ դարի երկրորդ կեսին, աշխուժացնելով իր մշակույթը, զուգահեռաբար բացահայտեց քրդական մշակույթում առկա բացթողումները, լրացրեց և հարստացրեց այն: Նրանց ստեղծագործությունների պատմական արժեքը նաև կայանում է նրանում, որ դրական ազդեցություն ունեցան ապագա հայ մտավորականության վրա, աշխուժացրին նաև նրանց գործունեությունը, որոնք ևս սկսեցին զբաղվել իրենց ղրկից քուրդ ժողովրդի մշակութային հարցերի խորազնին ուսումնասիրությամբ:

Գ. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՔՈՒՐԴ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՑԱՆՔՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Սույն ուսումնասիրության հիմնական խնդիրներից է թարգմանական գրականության դերի գնահատումը, որը սկզբնավորվեց հայ մտավորականների կողմից 19-րդ դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում: Ինչպես արդեն նշել ենք, հայ մտավորականներից շատերն են զբաղվել հայերենից քրդերեն և քրդերենից հայերեն թարգմանությամբ: Սակայն սկզբնական շրջանում հայերենից քրդերեն թարգմանությունները կատարվել են կրոնական գրականությունից՝ քրդախոս հայ ընթերցողին այդ գրականությանը ծանոթացնելու նպատակով: Պարզ է, որ հայ մտավորականներից շատերը միևնույն ժամանակ չանացել են նաև քրդերին ընտելացնել քրիստոնեական գաղափարախոսությանն ու նրանց հեռու պահել մուսուլմանական քարոզչությունից: Բոլոր դեպքերում, հայերենից քրդերեն թարգմանությունները առավելապես խթանել են քրդական մշակույթի և հատկապես քրդերեն գրական լեզվի զարգացումը:

Մեր պրպտումների ընթացքում քրդական մշակույթի պատմության մեջ առաջին անգամ ի հայտ եկան այնպիսի արժեքավոր գործեր, ինչպիսիք են կրոնական գրքերի քրդերեն թարգմանությունները: 19-րդ դարի կեսերին հայերենից քրդերեն է թարգմանվել Նոր Կտակարանը, որը 1857 թվականին հայերեն տառերով հրատարակվել է Կ. Պոլսում, Ա. Յ. Պոյաջյանի տպարանում: Գիրքը բաղկացած է 398 էջից: Երկրորդ անգամ Նոր Կտակարանը քրդերեն տպագրվել է 1872 թ. դարձյալ Կ. Պոլսում: Սակայն այդ երկու կտակարաններում էլ նշված չեն թարգմանիչների անունները: Գրականագետ Գ. Ստեփանյանի կենսագրական բառարանից տեղեկանում ենք, որ հայ մտավորականներ Պետրոս Ամիրխանյանը, Ազատյանն ու Տեր-Ղազարյանը 1870թ. Աստվածաշունչը թարգմանել են քրդերեն:[112] Պատմաբան Ա. Ալպոյաջյանը, իր հերթին, «Քրդական գիրն ու գրականությունը» հոդվածում նշում է, որ Աստվածաշնչի առաջին քրդերեն թարգմանությունը կատարել է Դիարբեքիրի վանահայր, հայատառ քրդերեն առաջին այբբենարանի հեղինակ Մկրտիչ Տիգրանյանը:[113] Սակայն հայտնի է նաև, որ տվյալ ժամանակաշրջանում կրոնական գրքերի, ինչպես նաև քրդերեն վերոհիշյալ թարգմանությունները կատարվում էին Պոլսում գործող «Աստվածաշնչի ընկերության» նախաձեռնությամբ: Հետևաբար, սույն ընկերության անդամը լինելով, կարծում ենք, Մկրտիչ Տիգրանյանն այդ շնորհաշատ գործն ինքն է հանձն առել և թարգմանել իր իսկ ստեղծած քրդերեն հայատառ այբուբենով:

Ինչպես նշեցինք, 1872 թվականին Ստամբուլում ամբողջությամբ հրատարակվեց Ավետարանի թարգմանությունը: Այն բաղկացած է 624 էջից և 28 գլուխներից: Առաջին էջի վրա գրված է. «Ինճիլ խօտէէ Մե իսա էլ Մեսիհե նվիստանդըն» («Նոր Կտակարան տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի): Այս երկրորդ թարգմանությունը, որն ավելի հաջող է, քան առաջինը, կատարված է քրդերենի կուրմանջի բարբառով, սակայն, հայկական որոշ տառեր, չհամապատասխանելով քրդերենի հնչյունաբանությանը, դժվարացնում են ընթերցումը: Ոչ մի տառ նշանակետերով չի հարմարեցվել քրդերենի հնչյունաբանությանը: Բոլոր դեպքերում, մեր համեմատությունից պարզվեց, որ թարգմանիչը լրիվ տիրապետել է կուրմանջիին և կատարել է բավականին դժվար, բայց հաջող թարգմանություն՝ պահպանելով ազգալեզվաբանական ու հոգելեզվաբանական հայեցակետերը: Եվ ամենակարևորն այն է, որ այս թարգմանությունում որոշակիորեն պահպանված են քերականական և ձևաբանական առանձնահատկությունները: Այդ առումով սա քրդերենին առաջին լուրջ մոտեցումն է հայ մտավորականության կողմից: Դրանով իսկ դրվեցին քրդերենի քերականության ուսումնասիրման հիմքերը:

Քրդերեն հրատարակված երրորդ կրոնական գիրքը Մատթեոսի ավետարանի առանձին թարգմանությունն է, որը բաղկացած է 148 էջից և լույս է տեսել 1891 թվականին Ստամբուլում՝ «Ինճիլա բապե մաի Յիսուս Քրիստոս քո Մաթեոս նվիսի» խորագրով:

Հայատառ քրդերեն չորրորդ կրոնական գիրքը «Գործք Առաքելոցն» է, որը հրատարակվել է 1911 թվականին Ստամբուլում, և որի թարգմանիչը նույնպես մեզ հայտնի չէ: Այն բաղկացած է 138 էջից: Այս գիրքը թարգմանված է էլ ավելի հաջող կուրմանջի բարբառով և առավել ընթեռնելի է: Ինչպես երևում է, թարգմանիչը արդեն ծանոթ է եղել մինչ այդ քրդերենով հրատարակված կրոնական գրքերին: Թարգմանությունում արդեն որոշ հայկական տառեր շեշտադրությամբ հարմարեցվել են քրդերենի հնչյունաբանությանը: Այստեղ արդեն քիչ են հանդիպում թուրքական և հայկական չթարգմանվող բառեր: Թարգմանիչը չանացել է օգտագործել պարզ կուրմանջի բարբառը, որով հիմնականում խոսում են Թուրքիայի քրդերն ու հայերը:

Իսկ 1934 թվականին Բեյրութում «11 երգ ու շարական է Պը գուրմանջի» խորագրով, հայատառ քրդերենով հրատարակվում է կրոնական երգերի թարգմանությունների մի ժողովածու, որը կազմել էր Ղ. Տեր-Ղազարյանը: Երգերը հիմնականում նվիրված են Քրիստոսին և նրա ծննդին:

Պետք է նշել, որ խնդրո առարկա թարգմանությունները խիստ արժեքավոր են և հարուստ նյութեր կարող են մատուցել ոչ միայն լեզվաբաններին, այլև գրականությամբ, պատմությամբ զբաղվողներին: Դրանք կարևոր են թե իրենց բառապարաշարով, թե լեզվամտածողությամբ և թե իբրև գրական քրդերենի ստեղծման աղբյուր:

Քրդական մշակույթի պատմության մեջ ուշագրավ ու արժեքավոր են հայ մատենագրականության նախաձեռնությամբ այլ լեզուներից կատարված թարգմանությունները, որոնք հիմնականում տպագրվել են հայկական պարբերական մամուլում: «Արարատի» 1899 թվականի 12-րդ համարում տպագրված «Թարխուլ Աքբաղ կամ Շարաֆ Նամե քրդերի պատմությունը կամ «Փառաց մատյան» ծավալուն հոդվածից տեղեկանում ենք մի հետաքրքիր թարգմանության մասին: Հոդվածի մանրակրկիտ ուսումնասիրությունից պարզվում է, որ դավրիժեցի հայոց վաճառականապետ Աղա Ջաքարիա Նազարբեկյանցը հայտնել է հոդվածի հեղինակին, որ իր եղբայրը՝ Արշակը, 1885-86 թթ. Սուջբուլաղում (Իրան), Մուքրի Մաջիդ խանի տանը, ռուսական հյուպատոսի խնդրանքով Շարաֆ Նամեի որոշ հատվածներ պարսկերենից թարգմանել է ռուսերեն, իսկ ինքը նպատակադրվել է դա թարգմանել հայերեն: Այս հոդվածում Շարաֆ Նամեից արված մեջբերումները վկայում են այն մասին, որ հայ մատենագիրները դեռևս 19-րդ դարի վերջերին ձեռնամուխ են եղել քուրդ ժողովրդի այդ արժեքավոր պատմության թարգմանությանը, այդպիսով ինչպես հայ, այնպես էլ ռուս ընթերցող հասարակությանը ծանոթացնելով այդ գործին:

Վերոնշյալ հոդվածի տպագրումից հետո ինչպես «Արարատում», այնպես էլ հայկական մյուս պարբերականներում առավել հաճախակի են սկսում տեղ գտնել քրդական մշակույթին ու պատմությանը վերաբերող հոդվածներն ու հաղորդումները, որոնց շարքում հատկապես աչքի են ընկնում օտար աղբյուրներից քրդական կյանքի վերաբերյալ քաղված թարգմանությունները:

Ինչպես հայտնի է, եվրոպական գիտնականներն ու ճանապարհորդներն անդրադարձել են ոչ միայն Հայաստանի և հայ ժողովրդի, այլև քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը, բանահյուսությանը և մշակույթային այլ հարցերի: Հայ մատենագիրներից շատերը, բարձր գնահատելով նման նյութերը, իրենք էլ ջանասիրաբար զբաղվել են դրանց թարգմանությամբ և տպագրել հայ պարբերական մամուլում: Իրոք, սույն նյութերը քուրդ ժողովրդի մշակույթի պատմության արժեքավոր նմուշ լինելուց բացի, միաժամանակ նպաստում են հայ ընթերցողին քուրդ ժողովրդի պատմությանն ու մշակույթին ծանոթացնելու ազնիվ գործին:

Պետք է նշել, որ նմանատիպ հոդվածների թարգմանության նախաձեռնողը «Մասյաց աղավնի» ամսագիրն էր, որը 1864 թ. նոյեմբեր ամսվա իր համարում տպագրել էր անգլիացի ճանապարհորդ Ջոն Մակդոնալդ Քինեյրի «Ճանապարհորդություն ի Հայս» հոդվածը: Հեղինակը, ճանապարհորդելով Կարինից մինչև Բաղեշ, մանրակրկիտ ցույց է տվել շրջանի քրդերի

կյանքն ու նրանց փոխհարաբերությունները հայերի հետ՝ բարձր գնահատելով նրանց ազգային սովորությունները, հատկապես հյուրասիրությունը:[114]

Այնուհետև իր 1876 թվականի 2-րդ համարում «Փորձ» ամսագիրը առաջին անգամ տպագրում է Ալբերդ Այնեյի «Montagne Kurde» («Քրդի լեռան») խորագրով քրդական կյանքի մասին պատմող վիպակը: Հայտնի չէ, թե այն ո՛վ է թարգմանել հայերեն, սակայն, բոլոր դեպքերում, խմբագրությունը նպատակ է ունեցել ընթերցողներին ծանոթացնելու քուրդ ժողովրդի կյանքին: Հանձինս վիպակի հերոս քուրդ Սելիմ աղայի, մատնանշվում են քուրդ ժողովրդի վեհանձնությունը, ազնվությունը, հումանիստական բարձր հատկությունները: Վիպակում նաև տեղ են գտել հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության, քուրդ ժողովրդի նիստուկացի, ոչ միայն արևելցու, այլև Սելիմի օջախում հյուրընկալված եվրոպացիների հոգին գերող անմնան բանահյուսության մասին պատմող գեղեցիկ նկարագրություններ. «Ընդ որում, քուրդ աշուղը երգում էր երեք լեզվով՝ քրդերեն, պարսկերեն և թուրքերեն, նվագում էր իր սազը, իսկ եվրոպացի հյուրերը կլանված լսում էին նրան»:[115]

«Փորձի» 1880 և 1881 թվականների մի շարք համարներում տպագրվում է Թեոդորոս Դեյոլի «Ճանապարհորդություն Լազիստանի և Հայաստանի մեջ» հոդվածի թարգմանությունը, որն արժեքավոր է զուտ քրդագիտության տեսանկյունից: Հեղինակն անդրադարձել է Քյուրդիստանի աշխարհագրական բաժանմանը, քրդերի սոցիալ-տնտեսական վիճակին, քուրդ կնոջ և տղամարդու պարզ ու անկեղծ փոխհարաբերություններին, քրդական տարազին, ժողովրդական բանահյուսությանը, քուրդ-եզդիների և հայերի բարեկամական կապերին:[116] Սույն հոդվածը հետագայում ամբողջությամբ, առանձին գրքով տպագրվում է հայերեն: «Փորձ» ամսագրում այնուհետև տպագրվում են մի քանի այլ հոդվածներ ևս, որոնք ժամանակին հետաքրքրել են հայ քրդագետներին և ընդհանրապես ընթերցողներին: Աղբյուրագիտական նյութերով հարուստ են Բ. Մանդրոյի «Կիլիկիա», Գ. Պաուլի «Վանից մինչև Տիգրիս» հոդվածների թարգմանությունները, որոնցում մանրամասն տեղեկություններ կան Կիլիկիայի, Վանի և Ղարսի քրդերի նիստուկացի, հայ քրդական հարաբերությունների մասին:

Հաջորդ արժեքավոր հոդվածը Ժան Տիեոլաֆուայի «Ուղևորություն ի Պարսկաստան» թարգմանությունն է, որը տպագրվել է «Բազմավեպի» 1894 թ. 4-6-րդ համարներում: Հեղինակը բազմաթիվ օրինակներով ցույց է տալիս Պարսկաստանի քրդերի սոցիալ-տնտեսական վիճակը, կենցաղը, պաշտամունքը: Քրդագիտության ուսումնասիրման առումով հետաքրքրական են նաև Շանտրի մի քանի հոդվածներ, որոնք տպագրվել են «Բազմավեպի» մի քանի համարներում:[117]

1881 թվականին «Մեղու Հայաստանի» թերթը նախաձեռնում է գնդապետ Ե. Լազարյանցի «Դարձյալ մի քանի խոսք տաճկահայերի վիճակի բարվոքման մասին և մի հայացք Հայաստանի քրդերի և նրանց ծագման վերաբերյալ» ռուսերեն հոդվածի թարգմանությունը, որը տպագրվել էր «Кав-

казъ» թերթի 1881թ. դեկտեմբերի 24-ի համարում: Այս հոդվածի թարգմանության հիմնական նպատակն ընթերցողներին Հայաստանում բնակվող քրդերի անցյալին ու ներկային, Օսմանյան Թուրքիայի կողմից վարվող քաղաքականությանը ծանոթացնելն էր:[118] Այս ծանրակշիռ և քրդագիտական հարցերով հարուստ հոդվածը լայն արձագանք գտավ հայ ընթերցողների ու մտավորականության շրջանում և 1882 թվականին ամբողջությամբ տպագրվեց «Մեղու Հայաստանի» բազմաթիվ համարներում:[119]

Աստիճանաբար ավելի մեծ թվով էին այդպիսի թարգմանություններ տպագրվում հայկական մամուլում, որոնք առավել հարստացնում էին քրդական մշակույթի գանձարանը: «Արձագանք» պարբերականում 1890 թվականին տպագրվում է ֆրանսիացի անվանի պատմաբան, աշխարհագրագետ Էլիզե Ռեկլուի «Եզդի քրդեր» հոդվածը,[120] որը մեծ հետաքրքրություն է առաջ բերում ինչպես հայ մտավորականության, այնպես էլ ընթերցողների շրջանում: Եվ պատահական չէր, որ «Արարատ» ամսագիրը իր 1892 թ. N 23-ում տպագրում է հաջորդ՝ «Լազիստան, Հայաստան ու Քուրդիստան» արժեքավոր հոդվածը Էլիզե Ռեկլուի առաջին հատորից, որը հետագայում, 1893 թ. Մայր Աթոռի միաբանության կողմից հրատարակվում է առանձին գրքով: Էլիզե Ռեկլուի յուրաքանչյուր թարգմանված գործը բարձր է գնահատվում հայ մտավորականության և ընթերցասեր հասարակության կողմից:

Քրդական մշակույթի հանդեպ հայ մտավորականության վերաբերմունքն արտահայտվում է քրդերենի լիարժեք տիրապետմամբ: Նրանց քրդերենից հայերեն թարգմանությունները բազմիցս տպագրվել են հայկական մամուլում: Նրանք շրջագայել են քրդական բնակավայրերում, ծանոթացել քուրդ ժողովրդի ճոխ բանահյուսությանը, հայատառ քրդերենով գրի առել նրա լավագույն նմուշները: Այս տեսակետից առավելապես աչքի է ընկնում հայ ականավոր ազգագրագետ Ս. Հայկունին, որի գործունեությանը կանդրադառնանք մեր ուսումնասիրության համապատասխան բաժնում:

19-րդ դարի վերջին այդ ուղղությամբ զգալի աշխատանք է կատարել Սաղաթել անունով մի հայ մտավորական: Նա քրդերենից թարգմանել է «Մամ ու Զինե» քրդական վիպերգը և տեղադրել «Լումայի» 1897թ. երկրորդ գրքում:[121] Հեղինակը, հավատարիմ մնալով բնագրին, կարողացել է բանաստեղծական նուրբ գրչով թարգմանել «Մամ ու Զինեի» բոլոր երգերը, ընդ որում, ոչ միայն «Մամ ու Զինեն», այլև քրդական բանահյուսության բազմաթիվ այլ նմուշներ համահավասարապես հարազատ են եղել և քրդին, և հային: Դրանց մի մասը կրկին գրի է առնվել նրա կողմից ու թարգմանվել հայերեն:

Քրդական բանահյուսության լավագույն նմուշները հավաքել և նրանց մի մասը հայերեն է թարգմանել բանահավաք Ա. Մկրտչյանը: Նա միևնույն ժամանակ զբաղվել է քրդական բանահյուսության ուսումնասիրությամբ, վեր հանել այդ բանավոր գրականության արժանիքները, հաճախակի մեջբերումներ անելով քրդերեն թարգմանություններից, բարձր է գնահատել

ինչպես քուրդ ժողովրդի արժանիքները, այնպես էլ քրդական ժողովրդական բանահյուսությունը: Քրդական մշակույթի պատմության մեջ իրենց ուրույն տեղն ունեն նրա մի քանի ուսումնասիրությունները, որոնցից հարկ ենք համարում կանգ առնել առաջին անգամ 1899 թվականին «Լումայում» տպագրված «Քրդական բանավոր գրականությունը» արժեքավոր հետազոտության վրա:[122]

Իր այս ընդարձակ հոդվածում հեղինակն անդրադառնալով քրդական բառ ու բանին, առանձին-առանձին կանգ է առնում քուրդ ժողովրդի բանաստեղծական խոսքի, հեքիաթների, ասացվածքների, առակների և այլ ժանրերի վրա, ցույց տալիս նրանց ակունքներն ու ստեղծման շարժառիթները: Անդրադառնալով քուրդ ժողովրդի ստեղծագործական տաղանդին, հեղինակն իր հոդվածի հենց սկզբում գրում է. «Քրդերը օժտված են բանաստեղծական ձիրքով...»: Նա այնուհետև նշում է, որ քրդերն առանց լեռների, առանց գեղեցիկ բնության կյանք չունեն, նրանց ներշնչանքի աղբյուրը շրջապատող բնությունն է, ներքին ու արտաքին թշնամիների դեմ հերոսամարտերը, նրանց ստեղծագործական ոգեշնչման աղբյուրը գեղեցիկ, սևաչյա քրդուհին է՝ իր հավատարմությամբ ու ազնիվ սիրով. «Պատերազմական խաղերի մեջ նա փառաբանում է քաջին, հաղթությունն պսակը տանողին, ծաղրուծանակի առարկա է դառնում վհատվողը, երկչոտը»:[123]

Անդրադառնալով հերոսական երգերին, Մկրտչյանը գեղեցիկ թարգմանություններ է կատարում և նույնիսկ մի քանի տեղ հայատառ քրդերեն տեքստեր է ներկայացնում և տալիս է դրանց հայերեն թարգմանությունները: Նա կանգ է առնում հովվերգական՝ հիմնականում սիրային և արկածային թեմաների վրա: Այս դեպքում ևս նա տալիս է տեքստերի հայերեն թարգմանությունը: Քրդական ժողովրդական հովվերգական երգերից ուշագրավ է «Մամեն ու Այշեի» վարպետորեն կատարված թարգմանությունը: Բարձր գնահատելով քրդական ժողովրդական առակները, Մկրտչյանը գրում է. «Առակների մեջ արտացոլվում է ժողովրդի աշխարհայացքը, իմացողությունը, փիլիսոփայությունը: Դրանք ժողովրդի դարավոր փորձառության արդյունքներն են, եզրակացությունները: Ժողովրդի իմաստությունը, մտավոր և հոգևոր կարողությունը բանահյուսության ոչ մի ճյուղի մեջ այնքան խորը կերպով արտահայտված չեն, ինչպես առակներում»:[124]

Այս հոդվածը նյութերի ընդգրկման մասշտաբով, նաև փաստերի օբյեկտիվությամբ հայ մտավորականության կողմից քրդական բանավոր գրականության առաջին լուրջ ուսումնասիրություններից մեկն է, և կարևոր ներդրում է քրդական մշակույթի պատմության մեջ:

Ա. Մկրտչյանը նաև զբաղվել է քրդական ազգագրության հարցերի և միջցեղային փոխհարաբերությունների ուսումնասիրմամբ: Այս տեսակետից արժեքավոր է նրա «Դլմիկներ» հոդվածը:[125] Ի հակադրություն մի շարք գիտնականների, նա ցույց է տալիս, որ դմլիկները քրդական զազա ցեղից են, և մանրամասն կանգ է առնում նրանց բնակավայրի, ծագման, լեզվի, կրոնի, ազգային սովորույթների նկարագրման և այլ հարցերի վրա:

Ինչպես նշեցինք, հայկական պարբերական մամուլը հաճախակի էր անդրադառնում քրդական ժողովրդական բանահյուսությանը, թարգմանաբար տպագրում նրա լավագույն նմուշները: Արժանվույնս պետք է գնահատել «Մուրճ» ամսագրի 1905 թվականի 5-րդ համարում լույս տեսած քրդական ժողովրդական «Ամարե կընդը» երգի թարգմանությունը: Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ այս երգը ստեղծվել է տպագրվելուց 30-40 տարի առաջ և «Ֆլիտե Ղոտո» անունով, մեծ տարածում գտել ոչ միայն քուրդ, այլև հայ ազգաբնակչության մեջ:[126] Պետք է նշենք, որ երգը առ այսօր էլ լայն ճանաչում ունի քուրդ և հայ ազգաբնակչության մեջ: Եվ ամենակարևորն այն է, որ թարգմանիչ Ա. Հովհաննիսյանը ոչ միայն այն թարգմանել է մեծ վարպետությամբ, այլև վերլուծել է և տվել երգի տվյալ ժամանակի պատմության, քրդական որոշ բառերի հայերեն բացատրություններ:[127]

Քրդական ժողովրդական բանահյուսությունից հաջող ու արժեքավոր թարգմանություն է կատարել հայ մտավորական Ս. Մովսիսյանը: Նա քրդերենից լսելով «Լեյլի և Մեջնուն» ժողովրդական վիպերգը, գրի է առել: Ապա այն թարգմանելով հայերեն՝ տպագրել է «Նոր դար» թերթի 1896 թվականի 141-142-րդ համարներում:[128] Մովսիսյանն այն գրի է առել հայ բանասացներից, որոնք լրիվ տիրապետել են քրդերենին և համարյա ժողովրդական բանահյուսության բոլոր նմուշները պատմել են քրդերեն: Ինչպես ինքն է նշում, «Լեյլի և Մեջնուն» վեպը երգեց Մշո Բալադ գավառի Կոփ գյուղացի տանգբեժ (երգասաց) Մանուկ Ավդալյանը քրդերեն լեզվով»:[129] Հաստատապես կարող ենք ասել, որ սույն ստեղծագործությունը նոր տարբերակ է և առաջին անգամ գրի է առնվել հայ մտավորականի կողմից:

Հարկ է փաստել, որ 19-րդ դարում հայ մտավորականության կողմից թարգմանական գործում հանդես բերած նախաձեռնությունը ոչ միայն ջերմացրեց հայ և քուրդ ժողովուրդների հարաբերությունները, այլև մեծապես նպաստեց քրդական մշակույթի և գրականության պատմության առավել խորությամբ ուսումնասիրմանը, նոր լույս սփռեց քրդական գրականության, հատկապես գրական լեզվի ուսումնասիրման գործում, էլ ավելի հարստացրեց քրդական մշակույթը, նոր ուղիներ հարթեց հայ քրդագիտության մեջ՝ հնարավորություններ ընձեռելով խորապես ուսումնասիրելու ոչ միայն քրդական մշակութային հարցերը, այլև քուրդ ժողովրդի պատմության հարցերը: Հայ ընթերցողը էլ ավելի մոտիկից ծանոթացավ քուրդ ժողովրդի մշակույթի ու պատմության հարցերին:

Դ. ՀԱՑԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՆԴԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հայ ազատագրական շարժումները նոր ուղիներ բացեցին նաև հայ հասարակական-քաղաքական մտքի առջև. ասպարեզ իջան քաղաքական ու հասարակական նոր կազմակերպություններ, որոնց շուրջ, համամարդկային արժեքների որոնման ճանապարհին, օրեցօր համախմբվում էին հայ մտավորականության ներկայացուցիչները: Նրանք ունեին նաև մեկ այլ հեռահար նպատակ՝ հայկական ազատագրական շարժումների մեջ ներգրավել թուրքական լուծը հավասարապես կրող բոլոր ժողովուրդներին, հատկապես զբաղվել ինչպես հայ, այնպես էլ դրկից քուրդ ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու գործով, նրանց մշակույթի ու պատմության հարցերով: Սակայն այսպիսի գործունեությունը հետապնդվում էր արյունախում Աբդուլ Համիդի և նրա գործը շարունակող երիտթուրքերի կողմից, որոնք նպատակադրվել էին Օսմանյան պետությունից վերացնել ոչ թուրք տարրերին և ամենուր վարում էին «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը, արյան մեջ խեղդում ամեն մի ազատագրական ոգորում:

Քաղաքական այս ծանր պայմաններում հայ մտավորականությունը և ազատագրական մի շարք գաղտնի կազմակերպություններ սկսեցին հետևողականորեն զբաղվել քուրդ ժողովրդի կյանքով, փորձելով լուսավորություն տարածել նրանց մեջ, բացատրել թուրքական կառավարության մարդակուլ քաղաքականության էությունը: Միաժամանակ հայկական պարբերական մամուլի և գրականության միջոցով փորձում էին ընթերցողին ծանոթացնել քուրդ ժողովրդի անցյալին, բանահյուսությանն ու ազգագրությանը, արծարծել հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությանը վերաբերող հարցեր, կործանումից փրկել քրդական մշակույթի լավագույն նմուշները: Եվ այսպես, այդ կազմակերպությունների գործունեության մեջ առավել ուշագրավը քրդերի մեջ լուսավորության տարածումն էր: Առաջնահերթ խնդիր էր դրված՝ այդ գործում ներգրավել քրդախոս հայ մտավորականությանը:

1880 թվականին Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում հայ գործիչների կողմից դպրոցներ են բացվում քրդախոս հայ և քուրդ երեխաների համար, հիմնադրվում են կրթական ընկերություններ:[130] 19-րդ դարի 80-ական թվականներին Դիարբեքիրի գավառում արդեն գործում էին «Դպրոցական Արևելյան», «Խիզանի ուսումնասիրաց» ու Կ.Պոլսում «Միացյալ ընկերությունները», որոնք իրենց ծրագրում նախատեսել էին հայկական և քրդական գյուղերում քրդախոս հայերի համար դպրոցներ բացել, զբաղվել քուրդ ժողովրդի պատմությամբ, բանահյուսությամբ և ազգագրությամբ: Այդ ընկերությունները ծրագրել էին բացված դպրոցներում հավասարապես կրթել ինչպես հայ, այնպես էլ քուրդ երեխաներին: Ուսուցումը լինելու էր հայերեն, միաժամանակ նախատեսված էին նաև քրդերենով

դասընթացներ: Նաև նախատեսված էր ուշադրություն դարձնել քրդական բանահյուսությանը, հայ մտավորականության օգնությամբ հնարավորություն յան սահմաններում գրի առնել լավագույն նմուշները, պատմությանն ու ազգագրությանը վերաբերող հարցերը: Ընկերությունները իրենց գործունեությունը սկսեցին Մուշի, Բիթլիսի, Ալաշկերտի շրջաններից:[131]

Հայ առաջադեմ գործիչներից Գ. Նորատունկյանը, «դպրոցական Արեւելյան» եւ «Խիզանի ուսումնասիրած» ընկերությունների ակտիվ մասնակիցներից էր, այն միտքն էր արտահայտում, որ պետք է ուղիներ փնտրել և մշակել հատուկ ծրագիր, որը կօգներ ուսումնասիրել քրդերի վիճակը, օգնություն տրամադրել, մերձենալ նրանց: Այս ամենը հիմնականում պետք է կատարվեր լուսավորություն տարածելու միջոցով: Նա միևնույն ժամանակ քննադատում էր հայ այն մտավորականներին, ովքեր հայ-քրդական գժտությունների պատճառը բարդում էին քրդերի վրա: 1880թ. սեպտեմբերի 1-ին նա Գարեգին Սրվանձտյանցին գրում է. «...Մասնավոր փափագ մը ունիմ մանավանդ ծանոթանալու Պարսկաստանի և Վանոյ շրջակայ քյուրդ ցեղերուն - Հայդարանլի, Մուկրրի, Թագորի, Մեզանի, Մերզիքի և այլն... Հայոց համար ամենակարևոր խնդիրը կնկատեմ քյուրդերու հետ ծանոթանալու և հարաբերություն հաստատելու միջոցները գտնելը և, մտերմաբար ձեր մասնավոր ուշադրությունը ենթարկելով այս գաղափարիս, կը հարցնեմ, թե արդյոք լավագույն ու օգտակար չըլլա՞ր, եթե Հայրիկը զձեզ յուր կողմե անոնց մեջ ղրկե մի անգամ առաքելության և Ձեր աշխատությամբ դուրս ելնեն վիճակագրության:

Մինչև ցարդ իմ տեսած քրդերը մասնավոր էին: Ալաշկերտի և Բայազետի կողմեն գնացած ատենն կսպասեմ հանդիպել Ձիմանդլի, Ջիլանի, Ադեմ

յի Թուրքիայի դեմ մղված հերոսամարտերի մասին հորինված հայ-քրդական հերոսական երգերը: 1852 թվականին տրապիզոնցի բանաստեր Պողոս Թովմասյանցը Մշո սուրբ Առաքելոց վանքում Սիմոն վարդապետից գրի է առնում հայ ժողովրդի կողմից հորինված այն երգերը, որոնք հայ Քեշիշ Պողոյի (քահանա Պողոսի) և քուրդ Շեյխ Միրզայի քաջագործությունների մասին էին, որոնք էլ Գ. Սրվանձտյանցը հետագայում ընդգրկում է իր «Հնոց ու նորոց» գրքում: Ջնայած այդ դեպքերից անցել է շուրջ մեկուկես դար, բայց այդ երկու քաջազունների մասին քուրդ ժողովուրդն այսօր էլ ջերմությամբ է երգում:[137]

Հետաքրքրական է 1874թ. նրա կողմից գրի առնված «Սարե Սիփանե կամ Սիաբանդո ու Խաչեզարե» վիպերգը, որը հետագայում տպագրվել է «Արևելյան մամուլի» 1883 թվականի մարտ ամսվա համարում: Հեղինակը նշում է, թե ինչպես է այն գրի առել քրդերեն և հետո թարգմանել հայերեն, տալիս է այդ պոեմի վերլուծությունը, ևս մեկ անգամ բարձր գնահատում քրդական ժողովրդական բանավոր խոսքը: Նա գրում է. «Քրդական դյուցազներգությունը և եղերգանին այս ոճն ունի, և եղանակողն ալեծածան բարձրացնելով և իջեցնելով ձայնը, իմաստներն ու բառերը ամբողջ կհնչե ըստ տեղվոյն հուժկու և դաժան, ըստ տեղվոյն աղու կամ ողորմակ, ոգևորելով կամ լացացնելով լսողին»:[138]

Իր «Գրոց ու բրոց» աշխատությունում, խոսելով Մուշի բնության և այնտեղ ապրող հայ և քուրդ ժողովուրդների մասին, Սրվանձտյանցը գրում է, որ նրանք բնական հերոսներ են, քաջ են ու անձնվեր, պատրաստ են իրենց կյանքը տալու հայրենի լեռնաշխարհին. «Այսպիսի երկիր մը որքան յուր բնակչաց նպաստավորիչ է, այնքան ալ յուր մերձավորաց և ծանոթից նախանձը կգրգռե, և այս պատճառով գրեթե շարունակ կուվի մեջ ծնած ու մեծացած ըլլալով, մահվանե չվախեցող մարդիկ էին մշեցիք... Մշո աշխարհը լի է եղել բանաստեղծներով, երգասացներով, բազմաթիվ աշուղներու տեղ է եղել այս երկիրը՝ և այս բնական հետևություն է այն քաջաց և քաջագործությանց, որոնց դյուցազնագործությունները կը դյուցազաբանեին, և անոնց թանկագին մահը պես-պես երգելով կեղերգին»:[139]

Հեղինակն իր այս աշխատությունում անդրադառնում է քրդական ազգագրության մի շարք տարրերի, դիցաբանությանը, բանահյուսությանը: Նա հետաքրքրությամբ է պատմում այն աղբյուրների մասին, որոնք հատկապես քրդերի համար դարձել էին ուխտատեղի, ինչպես ինքն է ասում՝ քրդերը դրանք անվանում էին «կանիե զարման, որը ըսել է աղբյուր բժշկության»:[140] Այնուհետև մեկ ուրիշ տեղ Սրվանձտյանցը գրում է, որ երբ աղբյուրներից մեկի վրա թասով ջուր խմելիս են եղել, «շեյխ մը երկու քյուրդ ընկերով եկավ մեր քով. կշտամբեց զմեզ, թասով այդ ջուրը խմելու համար. «Կանե բրհուշա, որ ըսել է աղբյուր երանության, - սուրբ է մի պղծեք ամանով»:[141]

Նյութեր կան նաև նրա «Մանանա» աշխատությունում, որը հրատարակվել է 1876 թվականին Կ. Պոլսում: Սա պատմաբանասիրական մի հետաքրքիր ուսումնասիրություն է, որում նա մանրամասն նկարագրել է

քուրդ ժողովրդի ազգային սովորույթներն ու բարքերը: Հեղինակը ցույց է տվել, թե ինչպես են քրդերը մանանա պատրաստում (որին քրդերն անվանում են գյազո - Կ. Ջ.): Մանանան քրդերը տարվա որոշ ամիսներին հավաքում են տերևների վրայից, մշակում և որպես քաղցրավենիք օգտագործում, սակայն հիմնականում հանում են վաճառքի, ըստ որում, մանանան արևելյան շուկայում բարձր է գնահատվում, նույնիսկ քրդական հանրաճանաչ խալիչաների, կարպետների հետ հասնում է եվրոպական շուկաներ: Գ. Սրվանձտյանցի այս կարևոր տեղեկությունից ևս մեկ անգամ համոզվում ենք, որ, իրոք, քրդերը 19-րդ դարի վերջին առևտրական կապերի մեջ են եղել ինչպես Արևելքի, այնպես էլ Եվրոպայի հետ: Գ. Սրվանձտյանցը «Մանանայի» մեջ անդրադառնում է մի քանի քրդական ցեղերի հայկական ծագմանը: Իհարկե, մենք համամիտ չենք այդ կարծիքին: Առհասարակ քուրդ ժողովրդի պատմության վերաբերյալ կան որոշ հակասական նյութեր, այնուամենայնիվ, սա քրդական մշակույթին վերաբերող կարևոր, փաստերով հարուստ աղբյուր է:[142]

Դերսիմի քրդերի մասին պատմական հետաքրքրական տեղեկություններ կան նաև նրա «Թորոս Ախպար» գրքում: Վանի փոխհյուպատոս Ս. Օլֆերևը իր զեկուցագրերից մեկում, որը 1913 թ. մայիսի 30-ին ուղարկել էր Թուրքիայում ցարական Ռուսաստանի դեսպանին, բարձր է գնահատում Գ. Սրավանձտյանցի «Թորոս Ախպար» գիրքը, այն համարելով քրդագիտության սկզբնաղբյուր և, հենվելով այս գրքի վրա, նա Դերսիմի քրդերի, ցեղերի ու ցեղախմբերի մասին բերում է բազմաթիվ օրինակներ:[143] Աշխատությունում հիշատակվում են քուրդ ժողովրդի պատմությանը, հայ-քրդական հարաբերություններին վերաբերող մի շարք կարևոր իրադարձություններ:

Արձանագրենք, որ Գ. Սրվանձտյանցը մի նոր էջ բացեց քրդական մշակույթի պատմության մեջ: Ինչպես նրա, այնպես էլ Նորատունկյանի անմիջական գործունեությամբ հայկական պարբերական մամուլում լայնորեն սկսեցին քննարկվել քուրդ ժողովրդի մեջ լուսավորության տարածման և քրդական բանահյուսության ուսումնասիրման հարցերը, որոնք այսօր քրդական մշակույթում մեծ արժեք են ներկայացնում:

1880 թվականին Կարի քաղաքում կազմակերպվում է «Ազգանվեր հայուհյաց» ընկերությունը, որի հիմնական նպատակն էր շրջակա գավառների հայուհիների մեջ կրթություն տարածելը, նրանց հայ ժողովրդի պատմությանն ու գրականությանը ծանոթացնելը: Ընկերությունը, սակայն, չբավարարվեց դրանով: Նա ծրագրել էր հարևան քուրդ ազգաբնակչության մեջ ևս տանել լայն լուսավորչական աշխատանք, ըստ որում, նախատեսված էր Քղիում աղջիկների համար կազմակերպված նոր դպրոցում ընդունել նաև քրդուհիներին, նրանց կրթել, ծանոթացնել ինչպես հայ, այնպես էլ քուրդ ժողովուրդների պատմությանը, բանավոր գրականությանը, որը նոր հիմքեր կստեղծեր և կամրապնդեր այդ երկու ժողովուրդների բարեկամությունը: Այս առթիվ «Մշակ» թերթը գրում է. «Գոհունակությամբ կլսենք, որ ազ-

գանուեր հայուհյաց ընկերութիւնը Քղիի համանուն քաղաքի մեջ կառուցված նորաշէն դպրոցն ընդունելու համար հարյուր է ավելի քրդուհիներ խնդիր մատուցել են ընկերության պատվիրակ Մեծ Վասիլյան էֆենդիին, որ հրահանգ խնդրեր է և կարծեմք պատասխան պիտի տրվի եղեր իրեն, թե Քղիի մեջ բացված օրիորդական վարժարանեն մեր քուրդ հայրենակիցք ալ օգուտ կրնան քաղել»:[144] Այնուհետև նույն հոդվածում «Մշակը» ուղղակի քարոզում է, որ միմիայն լուսավորության միջոցով կարելի է հարևան քրդերի հետ ստեղծել բարեկամություն: Սակայն լուսավորությունը միմիայն տառաճանաչությամբ ու գրագիտությամբ չի սահմանափակվում, այլ, ինչպես «Մշակն» է նշում, լուսավորել քուրդ ժողովրդին՝ նշանակում է նրան քաղաքակրթել, ծանոթացնել ինչպես իր ժողովրդի, այնպես էլ հայ ժողովրդի մշակույթին, նրանց փոխադրեցությունններին: Մեկ այլ տեղ «Մշակը» գրում է. «Բայց Քղիի դեպքն ուշադրության արժանի է գաղափարաց որիշ կարգով մը ևս. քրդաց հետ ներկային և ապագային մեջ մեր ունենալիք եարաբերութեանց մասին այս տողերին ստորագրողին գաղափարներն հանրածանոթ են արդեն: Ուստի, մասնավորապես ուրախ եմք, տեսնելով իրողություն մը, որ գործնական հաստատություն տալ կը թվի մեր գաղափարաց: Մենք քրդաց հետ բարեկամություն կը ջատագովենք և կարծեմք բարեկամության առաջին գործն է մեր քուրդ հայրենակիցները մասնակից ընել այն լուսոյ սննդյան, զոր կը ջամբեմք մեր Հայաստանից զավակաց: Կը փափագիմք, որ քրդաց հետ հաշտարար և խաղաղասեր ընթացք մը բռնենք և կարծեմք հաշտության կամ խաղաղության ոգին ամենեն եառաջ դպրոցական եարկեն կսկսի»:[145]

Այս ընկերությունն իր գործունեությամբ դրական մեծ դեր խաղաց քուրդ երիտասարդությանը կրթելու գործում և, ընդհանրապես, քուրդ ժողովրդի պատմության մեջ բացառիկ երևույթ էր այն հանգամանքը, որ քրդուհին, այն էլ բախտորոշ իրադարձություններով հագեցած այդպիսի բարդ ժամանակահատվածում, հայ մտավորականության անմիջական աջակցությամբ ընդգրկվեց կրթական գործընթացի մեջ:

1881 թվականին Կոստանդնուպոլսում կազմակերպվում է հայկական մեկ այլ ընկերություն, որը կոչվում էր «Տնտեսական միություն հայոց»: Դրա նպատակն էր գյուղատնտեսության գծով հայ մասնագետներ պատրաստել, ինչն անշուշտ կարող էր լայն հնարավորություններ ընձեռել հայկական շրջաններում գյուղատնտեսության ու առևտրի զարգացման համար: Ընկերությունը միաժամանակ հատուկ ուշադրություն էր դարձնում քրդերին մասնագիտական ուսուցում տալու գործին և, նկատի ունենալով, որ հայերն ու քրդերն ավելի մոտ են անասնապահությանն ու լավատեղյակ են մթերքների մշակման եղանակներին, գտնում էր, որ պետք է այդ երկու ազգերից ընտրել լավագույն երիտասարդներին: Պետք է արձանագրել, որ այդ ծրագիրը տվեց իր դրական արդյունքները: Բազմաթիվ հայ և քուրդ երիտասարդներ ընդգրկվեցին այդ ընկերության դասընթացներում: Դժբախտաբար, այն կարճ կյանք ունեցավ:

Հայ մտավորականության կողմից հիմնադրված «Կարմիր խաչը» և «Միացյալ ընկերությունը» 20-րդ դարի սկզբներին լայն գործունեություն ծավալեցին ինչպես հայ, այնպես էլ քուրդ բնակչության մեջ՝ կոչ անելով իրենց երեխաներին ուսման տալ նոր բացված դպրոցներում, որտեղ ուսուցումն ընթանում էր հայերեն և քրդերեն լեզուներով: Ընկերության հիմնական նպատակն էր քրդախոս հայերին հայերեն սովորեցնել, սակայն, ինչպես ծրագրում էր նախատեսված, լուսավորական լայն աշխատանք պետք է տարվեր նաև ողջ նահանգի մեջ: Պատահական չէր, որ ընկերության անդամներն իրենց գործունեությունը սկսեցին Սիլվանի, Զրգանի, Պշերիկի, Պարահամուքի շրջաններում, որտեղ բացվեցին մի քանի վարժարաններ:[146]

Այդ տեսակետից հետաքրքրական է Խնգր գյուղում բացված վարժարանը, որտեղ կային 30 տուն հայ և 70 տուն քուրդ: Ա. Ալպոյաճյանի արխիվում պահպանված փաստաթղթերը վկայում են, որ «Այս վարժարանում համահավասար սովորում էին ինչպես հայերը, այնպես էլ քրդերը, առանց ազգային բռնության: Հայ մտավորականությունը հարց էր բարձրացնում՝ ամենուր օգնել իրենց քուրդ բարեկամներին, լուսավորություն տարածել նրանց մեջ»:[147]

Ընկերության անդամներից Գ. Մուրադյանը, խոսելով հայ-քրդական կապերի ամրապնդման մասին, առաջարկում էր հայ այն մտավորականներին, ովքեր տիրապետում էին քրդերենին, լավ գիտեին քուրդ ժողովրդի պատմությունը, ազգագրությունն ու բանահյուսությունը, մեկնել քրդական գյուղերը՝ լուսավորություն տարածելու իրենց բարեկամ քրդերի մեջ: Նա օրինակ էր բերում Հազգո գյուղից հայ Մուրադե Եղոյին, որը հայտնի քուրդ երգիչ (դանգբեժ) էր, հոյակապ քրդերեն գիտեր, լավատեղյակ էր քուրդ ժողովրդի բանահյուսությանը և հայ-քրդական բարեկամության իսկական երգիչ էր, նա մեկնում էր քրդական գյուղեր, իր երգերով քարոզում համերաշխություն:[148]

Արշակ Ալպոյաճյանն իր հոդվածներից մեկում անդրադառնալով «Միացյալ ընկերության» գործունեությանը, ուղղակի առաջ էր քաշում քրդերի մեջ լայն լուսավորչական աշխատանք ծավալելու անհրաժեշտության հարցը, գտնում, որ պետք է ամրապնդել հայ-քրդական բարեկամությունը: Նա գրում է. «Նկատի առնելով այս դրացի ժողովուրդների ավելի ուսման և զարգացման կարոտ վիճակը, հայ և քուրդ համերաշխ բարձրացումին անհամեմատ առավելությունները իր ծրագրի մեջ պետք է ընդունի հայ և քուրդ խառն վարժարաններուն դրությունը, որ կրկնապես կրնայ բարձրացնել «Միացյալ ընկերության նշանակությունը»: Այնուհետև նա գրում է. «Կը յուսանք, որ «Միացյալ ընկերությունը» անմիջապես դրամական միջոցներ պիտի ունենայ, պիտի խորհի հայ-քրդերու վիճակին և անոնց համար պիտի ըլլայ յառաջիկայ հիմնելին իր առաջին դպրոցական շենքը»:[149] Եվ, ինչպես վկայում են մեր կողմից ուսումնասիրված նյութերը, սույն ընկերությունը քրդերի մեջ լուսավորչական աշխատանք տանելու, հայ-քրդական կապերն ամրապնդելու հարցում գործնական քայլեր է անում:

Այդ ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել Դերսիմում 1868թ. հոկտեմբերին կազմակերպված «Հայ և քուրդ ազգային ազատագրական կոմիտեն»,[150] 1881թ. մայիսին Կարինում ստեղծված «Պաշտպան Հայրենյաց» ազատագրական-հեղափոխական գաղտնի կազմակերպությունը:[151] Այնուհետև՝ 1888թ. հիմնադրված «Հայ հեղափոխական» և Պոլսում ծնունդ առած «Դպրոցական» ընկերությունները:[152] Սույն կազմակերպություններն ունեին հեռահար ծրագիր՝ համերաշխություն հաստատել քրդերի մեջ, ամրապնդել նրանց բարեկամությունը հայերի հետ, բացատրել նրանց Թուրքիայի նենգամիտ քաղաքականությունը և լուսավորություն տարածել նրանց շրջանում: Չնայած հայ մտավորականությունն այս ուղղությամբ լայն աշխատանք էր տանում, սակայն, հետապնդվելով թուրքական կառավարության կողմից, ծրագրերը հաճախակի չէր կարողանում ավարտին հասցնել: Այնուամենայնիվ, այդ ընկերությունները իրենց դրական ներդրումն ունեցան քրդական մշակույթի պատմության մեջ:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին քուրդ մտավորականությունը կարծես որոշ զարթոնք ապրեց, որը հատկապես ցայտուն կերպով արտահայտվեց երիտթուրքերի օրոք: Նրանք հայ մտավորականության հետ ջանում էին թույլ չտալ անցյալի սխալները, էլ ավելի ամրապնդել հայ-քրդական դաշինքը: Ճիշտ է, սկզբնական շրջանում հավատացին երիտթուրքերի խոստումներին, սակայն շատ շուտով զգացին, որ այդ խոստումները կեղծ են: Նրանք սկսեցին լայն լուսավորչական աշխատանք տանել Կ.Պոլսում գտնվող քուրդ երիտասարդության մեջ և 1900 թ. հունվարի 21-ին Հոջա-փաշա փողոցում բացեցին «Սահմանադրական» անունով քրդական մի վարժարան, որը սկսեց հավաքագրել քուրդ երիտասարդներին:[153] Հետաքրքիր է, որ այս նախաձեռնությունն իսկույն ողջունեց հայ մտավորականությունը և կոչ արեց դուրս գալ Կ.Պոլսից, մեկնել գյուղերը, լուսավորություն տարածել քրդերի մեջ, քարոզել հայ-քրդական միասնություն: «Դա լավ նախաձեռնություն է,- գրում էր «Ազատամարտը»: Այնուհետեւ շարունակելով գրում է. «Այս սկսած գործը քուրդ մտավորականության կողմից կմտնե քուրդ ժողովրդի պատմության անմոռանալի էջերի մեջ»:

Այս ուղղությամբ հետաքրքիր է նաեւ «Ազատամարտում» տպագրված «Քրդական գրականություն մը պետքը» հոդվածը, որում արտացոլված է քրդախոս հայերի եւ քրդերի ուսուցման հարցը:[154]

Պետք է նշենք, որ այս ուղղությամբ լայն գործունեություն ծավալեցին Պոլսում գործող «Քուրդ կրթասիրած միություն», «Քուրդ կրթասիրած եւ հրատարակչական ընկերությունը», Եգիպտոսում «Քուրդ անկախության կոմիտեն» եւ մյուսները (Տես. «Հայրենիք», 1928, 19 օգոստոսի):

Տվյալ ժամանակաշրջանում հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը և նրա ներկայացուցիչներից շատերը զբաղվում էին քուրդ ժողովրդի հարցերով: Հայ անվանի մտավորական Ռուբեն Տեր-Մինասյանը 20-րդ դարի սկզբներին սկսեց բավականին լուրջ զբաղվել քուրդ ժողովրդի պատմության, հատկապես հայ-քրդական հարաբերությունների հարցերով,

հոդվածներով հանդես էր գալիս հայկական մամուլում, որոնք հետագայում ի մի բերեց 1952 թ. Լոս Անջելոսում լույս տեսած իր յոթհատորյա «Հայ հեղափոխականի մը հիշատակները» աշխատությունում: Իր այս աշխատությունում պատմական հարուստ փաստերի հիշատակմամբ նա անդրադառնում է հայ-քրդական միասնությանն ու այդ բարեկամության հետագա ամրապնդմանը: Դրվագներից մեկում նա հիշատակում է քուրդ ժողովրդի ազգային հերոսներից խորեմկցիների առաջնորդ Զեյնալի և հայերի բարեկամական կապերը: Զեյնալի մասին Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է. «Զեյնալը բոլորովին անկիրթ չէր, գիտեր թուրքերեն, հայերեն էր սովորել Խարբերդի մեկ դպրոցին մեջ»:[155] Մանրակրկիտ ներկայացնելով Զեյնալի ակտիվ գործունեությունը թուրքերի դեմ, նա նշում է, որ քուրդ առաջնորդը 1907 թվականի վերջին Մուշում հանդիպում է ունեցել հայ մտավորականության ներկայացուցիչների հետ և մշակել թուրքական ոտնձգությունների դեմ միասնական հանդես գալու, քրդական մշակույթը զարգացնելու ծրագիր:[156] Զեյնալը միշտ էլ պայքարել է թուրքական բոլոր ոտնձգությունների դեմ: Ընդլելով հայկական ու քրդական գավառներում, նա կոչ էր անում ստեղծել հայ-քրդական դաշինք: Նա գտնում էր, որ երկու ժողովուրդների ազատությունը նրանց միասնական պայքարի մեջ է: Նա իր այս նպատակների համար միշտ էլ հետապնդվել է թուրքական կառավարության կողմից, ինչպես սուլթան Աբդուլ Համիդի իշխանության ժամանակ, այնպես էլ երիտթուրքերի տիրապետության օրոք: Նա մերթ լինում էր Վանում կամ Դիարբեքիրում, մերթ Մուշում ու Էրզրումում, մերթ Զարսանջակում կամ Դերսիմում, կամ էլ Քուրդիստանի լեռներում կազմակերպում էր հայ-քրդական հերոսական խմբեր: Այս կապակցությամբ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Համբարյանը գրում է. «1908 թ. հեղափոխությունը հանգիստ չբերեց նրան (Զեյնալին - Կ. Ջ.), քանզի այժմ էլ խույս էր տալիս երիտթուրքերի հետապնդումներից, որոնք հարուցելով նրա դեմ քրեական անհիմն մեղադրանք՝ գնահատել էին գլուխը»:[157]

Ռուբեն Տեր-Մինասյանը Զեյնալի մասին գրում է. «Բինգյոլի, Քղիի, Ճապաղջուրի մինչև Դերսիմի շրջաններու անպաշտոն արքան էր ան, լեռներու սարսափը, ոստիկաններու պատիժը»:[158]

Թուրքական կառավարությունը, հետապնդելով Զեյնալին, մի զորաբանակով 1907թ. Բինգյոլում շրջապատում է նրա բնակարանը: Ծանր վիրավորվում է կինը, և քանի որ մահամերձ վիճակում հնարավոր չէր փախչել, ամուսնուց խնդրում է իրեն սպանել, որպեսզի չընկնի թշնամու ձեռքը: Զեյնալը կատարում է կնոջ խնդրանքը, վերցնում ծծկեր երեխային և, ձին հեծած, փախչում իր հայ բարեկամների մոտ: Երեխային հանձնում է նրանց: Վերջիններս երկար ժամանակ խնամում էին նրա զավակին:[159]

Զեյնալը միշտ հայ ֆիդայիների հետ էր, նրանց հետ միասին պայքարում էր թուրքական ոտնձգությունների դեմ հանուն հայ-քրդական զինակցական դաշինքի ամրապնդման: Նա դեռևս սահմանադրությունից առաջ բազմիցս ըմբոստացել էր համիդյան գործողությունների դեմ: Ատելությամբ

էր լցված այն քուրդ աղաների ու բեկերի դեմ, որոնք կուլ գնալով թուրքական կեղծ խոստումներին, ընդգրկվել էին համիդյան գնդերի մեջ։ Հետապնդվելով երիտթուրքերի կողմից, նա շրջեց ողջ քուրդ ժողովրդի մեջ՝ կոչ անելով ամենուր պայքարել թուրքական կառավարության դեմ, չխաբվել նրա կեղծ խոստումներով։[160]

Խոսելով հայ-քրդական միասնական պայքարի մասին, Ռուբեն Տեր-Մինասյանը մեկ այլ տեղ գրում է. «Քուրդ եզդիների աշիրաթները Ջհանգիր աղայի առաջնորդությամբ միշտ էլ մեզ կօգնեին, անոնք իրենց բախտը վճռականապես կապել էին հայերի հետ»։[161] Այնուհետև նա գրում է. «Հայ-քրդական հարաբերություններ էին ստեղծված ճիպրանցի և բոդկանցի քրդերի մեջ, դրա հեղինակն էր Գևորգ Չաուշը»։[162]

Ռուբենն անդրադառնում է հայ եկեղեցու և հայ հոգևորականության նկատմամբ քրդերի տածած մեծ հարգանքին։ Նա գրում է. «Հատուկ հարգանք ունեին դեպի հայ հոգևորականությունը (քրդերը - Կ. Ջ.)։ Տարնո միաբանության մեծն էր Հովհաննես Վարդապետը, նա այնքան հարգանք էր տածում ոչ միայն դեպի հայ ժողովուրդը, այլ նաև քուրդ։ Եվ եթե քուրդ ժողովրդին հարցնես ո՞վ է Հովհաննես Վարդապետը, անոնք անվարան կպատասխանեն՝ «Առաքյալ սուրբ»։ Հին կեսարները սուրբ էին դառնում իրենց հզորության պատճառով, իսկ այս՝ իր հարգանքի համար»։[163]

Հեղինակը սույն աշխատությունում անդրադառնում է հայ-քրդական հարաբերությունների մի շարք այլ ուշագրավ դրվագների, գիտական փաստարկումներով վեր է հանում երկու հարևան ժողովուրդների փոխհարաբերությունները, որոնք արժանի են բազմակողմանի ուսումնասիրության։

Ռուբեն Տեր-Մինասյանը զբաղվել է նաև քրդական բանահյուսության հավաքագրմամբ։ Ինչպես նշել է իր հուշերում, 1905-1906 թվականներին բազմաթիվ քրդերից և հայերից, որոնք իր հետ բանտարկված էին, լսել և գրի է առել քրդական ավանդույթներ, երգեր, հեքիաթներ։ Այս առիթով նա գրում է. «Թեև քրդերենին անծանոթ էի, բայց այդ լեզվով երգածներն ալ գրի առի հայերեն տառերով՝ հասկանալով մոտավորապես նրանց իմաստը։ Դրանց մեջ էին «Մըկ ծառ մի կեր մըչ», «Ծովան իսկենդներ թագավորի» պյուցագրնավեպը, «Խանա դըմ-դրմ ճանկզեուին», «Վոյ Ամարե Խթաբի» և այլ երկեր։[164] Նա նշում է, որ իր հավաքածը կազմում է 21 տետրակ, 100 էջ, և մեծ դժվարությամբ պահպանում է այդ հավաքածները։ Հետագայում ռուս հետազոտող Զավարևին հաջողվում է դրանք ձեռք բերել և այդ տետրակներից 8-ը ուղարկել Պետերբուրգ, սակայն ինչպիսի՞ն է եղել այդ տետրակների ճակատագիրը, հեղինակը ոչինչ չի նշում։ Այնուհետև մեկ այլ տեղ նա արձանագրել է, որ բանահյուսության երկու հատորները, այսինքն, ծավալուն տետրակները, թողել է պրոֆեսոր Աստվածատուր Խաչատրյանի մոտ, որպեսզի քրդագետն ուսումնասիրի, իսկ մնացած հատորները իր հետ տարել է Մուշ, որպեսզի արտագրի և ուղարկի Վենետիկ կամ Վիեննա, բայց թե ի՞նչ ճակատագիր են ունեցել այդ գործերը, հեղինակը կրկին ոչինչ չի նշում։ Մեր պրպտումները վկայում են, որ ինչպես Զավարևի, այնպես էլ

Խաչատրյանի ուսումնասիրություններում իրոք տեղ են գտել Ռուբեն Տեր-Մինասյանի կողմից գրի առնված քրդական բանահյուսության նմուշները։[165]

Խոսելով քրդերի մեծահոգության, ազնվության և պարզության մասին, նա գրում է, որ նրանք անկեղծ էին վերաբերվում հայ ֆիդայիներին, երգում նրանց հերոսության մասին. «Հարյուրավոր քրդական երգեր կան, որ ոչ մեկ առելություն կա դեպի հայ ֆիդային և որ վերջինս դավադիր թուրքի թշնամին է, քաջ է, ազնիվ է, տղամարդ է, վրիժառու է և այլն»։[166] Իսկ «Սալախի կռիվը եւ Գեւորգ Չաուշի մահը» հոդվածում գրում է, որ Խնուս Կարսի մոտերքում Թուրքիայի դեմ կռվելու ժամանակ Չաուշը 80 ձիավորներով հասնում է Մշո դաշտ, Քարաճորի մոտ հանձնարարում է իր մարտիկներից մի քանիսին գնալ իր բարեկամ Ալանցիների քուրդ բեկ Ֆայրուլի մոտ, որը բազմաթիվ ձիեր ունի, թող իրենց ձիերով օգնի։ Չաուշի մարտիկները Մանուկի ղեկավարությամբ 10 հոգով մտնում են գյուղ, Ֆայրու բեկի հյուրասիրությունից հետո 40 ձիեր են տալիս նրանց։ Այնուհետեւ բոլորը Չաուշի ղեկավարությամբ գալիս են գյուղ, որոնք մեծ ընդունելություն են գտնում եւ հյուրասիրվում։ Գեւորգ Չաուշը դիմելով Ֆայրու բեկին ասում է. «Ապահով եղեք ձիերու համար, մոտ 10 օրեն ձեզ կվերադարձնենք, անվնաս, ձիերու վարձը նախօրոք կուտամ», այնուհետեւ հանում է 30 ոսկի, տալիս է բեկին, սակայն բեկը չի վերցնում ոսկիները ու ասում. «Դուք որ ձեր կյանքը կդնեք, մենք էլ պետք է ձեզ օգնական լինենք»։ Գյուղացիները խանդավառությամբ են ընդունում հայ ֆիդայիներին, բերում ուտելիք, ֆիդայական երգ ու նվագով ճամփու դնում։ (Տես «Ալիք», 1953, 10 դեկտեմբերի)։

Ինչպես նշեցինք, հեղինակն իր աշխատությունում անդրադարձել է նաև քուրդ ժողովրդի ազգագրության բազմաթիվ հարցերի և մեկնաբանել դրանք, նկարագրել է քրդական օբանները, դրանց կառուցվածքը։ Շրջագայել է Բինգյոլի քրդերի մեջ, եղել է իր բարեկամ Ջեյնալենց տանը, հիացել լեռնական ազնիվ ու պարզ ժողովրդի կյանքով։

Անտարակույս կարելի է ասել, որ Ռուբեն Տեր-Մինասյանի յոթ հատորանոց սույն մոնումենտալ աշխատանքը մի հանրագիտարան է քուրդ ժողովրդի պատմության, ազգագրության, բանահյուսության, պաշտամունքի և մշակութային այլ հարցերի մասին, դրա յուրաքանչյուր էջում կարելի է գտնել պատմական արժեք ներկայացնող բազում նյութեր, որոնք կլրացնեն քրդական մշակույթի գանձարանը։

Հիշատակության արժանի ուսումնասիրություն է դաշնակցական կուսակցության ղեկավարներից մեկի՝ Կարո Սասունու «Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները» արժեքավոր ուսումնասիրությունը, որը լույս է տեսել 1969 թվականին Բեյրութում։ Այն նվիրված է հայ-քրդական փոխհարաբերություններին, նրանց զինակցական գործունեությանը, քուրդ ժողովրդի բանահյուսությանը, ազգագրությանը, պաշտամունքի և մշակութային այլ հարցերի։

Աշխատության նյութերի հիմնական մասը դեռևս 1929-1931 թթ. տպագրվել է «Հայրենիք» ամսագրի տարբեր համարներում։ Դրանք կազ-

մում են 18 ծավալուն հոդվածներ: Հետագայում հեղինակը, ի մի բերելով դրանք և համադրելով ձեռքի տակ եղած նոր նյութերի հետ, կազմել է իր սույն աշխատությունը և 1938 թվականին ներկայացրել տպագրության: Սակայն, մեզ անհայտ պատճառներով, այդ ժամանակ այն չի տպագրվել: Հեղինակը հայ-քրդական հարաբերությունների ամրապնդման իրատեսական նպատակներ ուներ և ամենուր պայքարում էր հանուն այդ նպատակների իրագործման:

Աշխատության առաջաբանում այդ հարցի կապակցությամբ նա գրում է. «Հայ-քրդական բարեկամությունը Փոքր Ասիայի քաղաքական խոշոր երևույթներից մեկն է. որի վրա իրավացիորեն կկենտրոնանա մեր ուշադրությունը: Ներկայի բարեկամական փոխհարաբերությունները են այն ամուր հիմքը, որուն վրա կարելի է կառուցել երկու ազգերու ազատագրության շենքը - յուրաքանչյուրի ազգային պետությունը: Այսքան ճակատագրական նշանակություն ունեցող հայ-քրդական համագործակցության մը կարևորությունը իր ամբողջությամբ, անցյալին մեջ չէ ըմբռնված ու հիմա ալ կարող է իր նպատակին շեղիլ, երբ այս երկու բախտակից և հայրենակից ազգերը դասեր չառնեն պատմությունեն ու չկենանան ամուր՝ իրենց ազատագրության ճանապարհին վրա, ընդդեմ Թուրքիո, միշտ մնալով բարեկամ ու գործակից»: Նա նաև կոչ է անում նորաստեղծ քուրդ մտավորականությանը այս հարցում աշալուրջ լինել, հաճախակի հանդիպումներ է ունենում նրանց հետ»:

Այդ կապակցությամբ նա գրում է, որ 19-րդ դարի վերջերին Եվրոպայում հանդես եկող քրդական մտավորականությունը գործակցում էր հայ մտավորականության հետ, իսկ վերջինս ամեն կերպ ցանկանում էր օգտագործել քուրդ մտավորականության այդ մտադրությունները և ստեղծել հայ-քրդական ազգային ազատագրական միություն: «Դրոշակի» բազմաթիվ համարներում հանդես էին գալիս քուրդ ժողովրդին ուղղված կոչերով, որոնց բովանդակությունն էր՝ հայերի հետ համերաշխություն հաստատել, թուրքերի դեմ միասնական ճակատ ստեղծել:

Այս մասին հետաքրքիր և, կասեինք՝ արժեքավոր նյութեր են պահպանվում նախկին ԽՍՀՄ կենտրոնական ռազմական արխիվում, որտեղ Բայազետի՝ Ռուսաստանի փոխհյուպատոսը գրում է, որ քուրդ Մամեդ բեկը մի քանի անգամներ մեղադրվել է հայկական կոմիտեների հետ կապեր հաստատելու համար (տես ֆ. 450, Գ. 127, էջ 41-45):

Ինչպես նշեցինք, Կարո Սասունն հետաքրքրել են նաև քրդական մշակույթի հարցերը, նրա անմիջական նախաձեռնությամբ դաշնակցությունը հատուկ ուշադրություն էր ցուցաբերում քրդական բանահյուսության հավաքագրմանն ու տպագրմանը, քրդերի մեջ լուսավորություն տարածելու խնդիրներին: Սասունին անձամբ բարձր էր գնահատում քրդական բանավոր խոսքը, դասական գրականությունը: Խոսելով քուրդ նշանավոր գրող Ահմադե Խանու մասին, նա գրում է. «17-րդ դարի քրդական քաղաքական ապրումները, անկախ ազգային պետություն դառնալու ձգտումը արտահայտված են քուրդ բանաստեղծ Ահմադե Խանու հռչակավոր «Մամ ու Զինե» վիպերգում»:

Նա խորապես ուումնասիրել է Ահմադե Խանու հռչակավոր պոեմը, և ինչպես ինքն է վկայում «Յառաջ» թերթի 1928 թ. օգոստոսի 5-ի համարում, նա իր ձեռքի տակ ունեցել է այդ պոեմի արաբատառ բնագիրը: Այս առթիվ նա գրում է. «Հիմա բարեբախտաբար իմ տրամադրության տակ ունիմ «Մամ ու Զինի» մեկ ձեռագիրը քրդերեն լեզվով, արաբերեն տառերով: Ինձ կը թվա, որ այս ձեռագիրն է ամենեն հինը եւ թերևս միակը, որ այսօր գոյություն ունի: «Մամ ու Զինի» հեղինակն է Ահմադե Խանին, որը հեղինակած է իր երկը 1645-ին, իր գիրքը ընդօրինակված է 104 տարի յետոյ, այսինքն 1749-ին: Գրչագիրն է Ազիզ Շերբայը»:

Հայ դաշնակցական մտավորականության վերը նշված գործունեության մեջ հետաքրքիր է լուսավորության հարցերին վերաբերող հանգամանքը: Կուսակցության անմիջական նախաձեռնությամբ կուրմանջի քրդերենով, բայց հայերեն տառերով 1909թ. Կարինում հրատարակվում է Այբբենարան:[167] Այս առթիվ «Ազատամարտը» գրում է. «Քրդերը ունեցել են դարավոր գիր ու գրականություն թուրքատառերով: Թուրքական տառերը, սեմական ծագում ունենալով իրենց սիստեմը կը բխի սեմական լեզուներու (եբրացիներեն, ասորերեն, արաբերեն) կազմությունեն: Այս լեզուներն իրենց եռատառ արմատով, առանց ձայնավորի գրելով գանազան ձայնավորները կգրվեն եւ այսպես տարբեր բառեր կկարդացվին: Այսպես չեն հնդեվրոպական լեզուները, որոնք առանց ձայնավորի արմատ չեն ճանչնար եւ յուրաքանչյուր վանկ ունի իր ձայնավորը: Հնդեվրոպական լեզուի մը ուսումը անհամեմատ ավելի կդժվարանայ, երբ սեմական տառերով կգրվին, իսկ քրդերենը հնդեվրոպական լեզում է»:[168] Այս այբբենարանի հրատարակումից հետո քրդերի մեջ լուսավորություն տարածելու ուղղությամբ լայն աշխատանք է տարվում և հետաքրքրականն այն է, որ կրկին կուսակցության նախաձեռնությամբ քրդերեն լեզվով 1910 թվականին հրատարակվում է ևս մի ընթերցարան:[169] Այդ թվականներին դաշնակցականների ջանքերով լայն լուսավորչական աշխատանք տանելու արդյունքն այն եղավ, որ քրդերի համար բացվեցին դպրոցներ, ինչպես, օրինակ, Բանաշենում, Փշենքում, Գզեխում և այլ տեղերում:[170] Վասպուրականում հայ անվանի ֆիդայիներ Վարդգեսը, Արամը, Կոմսը, Իշխանը, իսկ Բիթլիսի և Կարինի նահանգներում և Խարբերդում՝ Ռոստոմը, Փիլոսը, Արմենակը, Հրայրը, Գևորգ Չաուշը և ուրիշներ, գործնական քայլերի էին դիմում քուրդ ժողովրդին լուսավորելու, հայ-քրդական ուժերը համախմբելու:[171]

Մրն էր դաշնակցության հիմնական խնդիրը քրդական մշակույթի բնագավառում. առաջին հերթին նրանք այդ հարցին մոտենում էին քաղաքական տեսանկյունից, ձգտում այդ կերպ հասնել զինակցական միասնության, համախմբել բոլոր ուժերը թուրքական կառավարության դեմ: Դաշնակցությունը հայ-քրդական մերձեցման հիմնական միջոցը համարում էր ժողովրդին լուսավորելը, երկու ժողովուրդների մշակութային կապերն ամրապնդելը:

Ըստ նախատեսված ծրագրի պետք է լայնորեն ուսուցում տարվեր քրդերի մեջ, հայատառ քրդերենով պետք է հրատարակվեին քուրդ ժողովրդի պատմության, բանահյուսության, ազգագրության, անցյալում հայ-քրդական բարեկամական կապերին վերաբերող գրքեր ու թռուցիկներ և, ամենակարևորը, պետք է վեր հանվեին Թուրքիայում աշխատավոր քրդերի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի պատճառները: Հարկ է նշել, որ այս ամենը հատկապես արտացոլված է ինչպես դաշնակցական կուսակցության, այնպես էլ 1927 թվականին հիմնադրված քրդական ազգային «Հոյբուն» կուսակցության ծրագրում: Պատահական չէր, որ թուրքական «Սոն-Պոստ» թերթը գրում էր, որ Հոյբունը քուրդ և հայ կոմիտե մը նէ (տե՛ս «Հայրենիք», 1930, 7-ը հոկտեմբերի):

Ելնելով պատմական իրողություններից, պետք է նշենք, որ դաշնակցությունն իր ողջ գործունեության ընթացքում ամենուր պայքարում էր՝ ամրապնդելու հայ-քրդական համագործակցությունը, իր քննադատական խոսքն ուղղում էր այն հայ մտավորականներին, ովքեր սխալ էին մեկնաբանում այդ համագործակցության նշանակությունը: Բազում անգամներ նրա ներկայացուցիչները հանդես են եկել միջազգային կազմակերպություններում ի պաշտպանություն քրդական հարցի արդարացի լուծման: Սա մեկ այլ կարեւոր հարց է եւ ուսումնասիրման խոր կարիք ունի:

Քրդերի հետ համագործակցելու քրդական մշակութային հարցերի լուսաբանման ուղղությամբ լայն գործունեություն էին ծավալել «Արարատ»-ը, «Հայրենիք»-ը, «Յառաջ»-ն ու մյուս թերթերը: «Հայրենիք» թերթը գրում է. «Ամեն հայ պարտավոր է ըմբռնելու, թե հայ-քրդական գործակցությունը ըլլալու է մեր ազգային քաղաքականության հիմնաքարը: Եվ ամեն հայ պետք է հասկանա թե հայ-քրդական բարեկամությունը մեր քաղաքական պայքարի մեծագույն զենքերեն մեկն է»:[172] Իսկ «Ազատամարտը» հայերեն ու քրդերեն լեզուներով տպագրում էր քառյակներ, որոնց մեջ արտացոլված են քուրդ ժողովրդի բանահյուսության լավագույն ղրվագները և ֆիդայական երգերը:[173]

«Յառաջ» թերթը 1930 թ. հունվարի 5-ի համարում առաջին անգամ իր ընթերցողին է ներկայացնում Վ. Իրանյանի «Բանաստեղծ քրդուհին» արժեքավոր ծավալուն հոդվածը: Անդրադառնալով 19-րդ դարի նշանավոր քուրդ բանաստեղծուհի Մախ Շարաֆ-խանում Քուրդիստանի անմանն պոեզիային ու կյանքի ուղուն, նշում է մի շարք նշանավոր բանաստեղծների, որոնք ստեղծագործել են պարսկերեն ու արաբերեն, սակայն նրանց կողքին մեծությունն է համարում քուրդ բանաստեղծուհուն. «Այդ բոլորի մեջ առավել քան հետաքրքիր է ծանոթանալ քրդուհի բանաստեղծ Մաստուրեի հետ, որը ծնվել է պարսկական Քրդիստանում, մոտ 130 տարի առաջ և մահացել 44 գարուններ բոլորելուց հետո հիջրեթի 1264-ին, ուրեմն հարյուր տարի առաջ, երբ խավարն էր տիրապետում այս երկրում, երբ միլիոնավոր տղամարդիկ մինչև իսկ գրել, կարդալ չգիտեին, Մաստուրե գրական անվան տակ թաքնված Մախ Շարաֆ-Խանամ քրդուհին, որի մայրենի լեզուն

քրդերենն էր, ոչ միայն սովորում էր պարսկերեն, այլև տիրապետում, խորանում էր նրբությունների մեջ և խորապես ազդված մեծերից, ի ծնե պարսիկ բանաստեղծների շարքում նախանձելի տեղ է գրավում իր բեյթերով»:

Սակայն պետք է նշել, ինչպես հայ և քուրդ, այնպես էլ օտարազգի պատմաբանների ու գրականագետների, այդ թվում վերջին տարիներին բանասիրական գիտությունների դոկտոր, քրդագետ, Մոսկվայի արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Ե. Ի. Վասիլևայի ուսումնասիրություններում տեղ չեն գտել հայկական մամուլի նման կարևորագույն հաղորդումները Մաստուրեի մասին, որը մեկ անգամ ևս վկայում է այդ ուսումնասիրողների հայկական աղբյուրներին անտեղյակ լինելը (տե՛ս Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XIII, քրդագիտություն, Երևան, 1985: Мах Шараф-Ханум Курдистани. Хроника дома Ардалан. Перевод с персидского, введение и примечания Е. И. Васильевой. М. 1990):

Հայ մտավորականի նման լուրջ ուսումնասիրությունը մի նոր ներդրում է քրդական մշակույթում, ուր բացահայտված են մի շարք կարևոր տեղեկություններ բանաստեղծուհու և Իրանում քրդական գրականության հանդես գալու մասին:

Սխալված չենք լինի ևս մեկ անգամ նշելով այն հանգամանքը, որ դաշնակցությունն իր ողջ գործունեության ընթացքում ծավալուն աշխատանք է տարել՝ ամրապնդելու հայ-քրդական բարեկամական ու զինակցական կապերը, լուսավորություն տարածելու քրդերի մեջ, առաջ մղելու նրանց մշակույթը: Այս ամենը դրական ներգործություն է ունեցել քրդական մշակույթի վրա: Հայ-քրդական հարաբերությունների ոլորտում դաշնակցության գործունեության լուսաբանումն առանձին կարևորություն ունի և այդ ուղղությամբ կարելի է գիտական ուսումնասիրություններ կատարել:

Հայ-քրդական կապերի ամրապնդմանը, նրանց մեջ լուսավորություն տարածելու հարցում 19-րդ դարի վերջին իր գործունեությունն ակտիվացրեց նաև հնչակյան կուսակցությունը: Նրա բազմաթիվ ներկայացուցիչներ գործնական քայլեր էին ձեռնարկում՝ ամրապնդելու հայ-քրդական բարեկամական կապերը, հայկական պարբերական մամուլում հանդես էին գալիս հոդվածներով, միասնական զինակցական պայքարի էին կոչում: Հնչակյան կուսակցության ծրագրում ուղղակիորեն նախատեսված էր անդրադառնալ քուրդ ժողովրդի պատմության, բանահյուսության, լեզվի ու գրականության հարցերին, պայքարել էլ ավելի ամրապնդելու դաշինքը ինչպես քրդերի, այնպես էլ ասորիների և այլ ազգերի հետ:[174]

Հնչակյան կուսակցության ակտիվ գործիչներից Փիլիպոս Քեչեչյանը և Փարամազը ամենուր ջանում ու պայքարում էին՝ ստեղծելու հայ-քրդական ամուր զինակցական դաշինք, քաղաքակրթելու քրդերին, լուսավորություն տարածելու նրանց մեջ: Քեչեչյանը կուսակցության ներսում քննադատության էր ենթարկում այն անձանց, ովքեր դեմ էին այս հեռատես ու խորհրդատու գաղափարին: 1900թ. հնչակյան կուսակցության գաղտնի ժողովնե-

րից մեկում նա ելույթ է ունենում և առաջ քաշում հայ-քրդական փոխհարաբերությունների հարցը, իր գործունեությունից բերում բազմաթիվ օրինակներ, ցույց տալիս, թե ինչպես ինքը բազմիցս հանդիպել է քուրդ ցեղապետերի հետ, որոնք ամենուր հայերի հետ համագործակցելու, հայ-քրդական գինակցական ու մշակութային կապեր ստեղծելու պատրաստակամություն են հայտնել: Նա գրում է, որ 1890 թ. մարտին եղել է Դերսիմում, հանդիպում է ունեցել 36 քուրդ առաջնորդների հետ, որոնք իրենց համաձայնությունն են տվել հայերի հետ միասնական ճակատով Թուրքիայի դեմ պայքարելու համար:[175]

Քեչեչյանի վկայությամբ այդ թվականին ինչպես Դերսիմում, այնպես էլ նրա շրջակայքում՝ Խարբերդում, Ագտե Տաղում, Չարսանջակում և այլ վայրերում գնալով ամրապնդվում էին հայ-քրդական բարեկամական և հատկապես գինակցական կապերը: Քրդերը լավ էին հասկանում Թուրքերի վարած «բաժանիր, որ տիրես» քաղաքականության նենգ էությունը: Քեչեչյանը, հնչակյան կուսակցության ժողովներից մեկում ելույթ ունենալով, հիշատակում է Ագտե Տաղի քուրդ իշխաններից մեկի խոսքերը. «Ողջույններս տարեք հայերին և ըսեք, թե Ագտե Տաղը կը փափագի տեսնել այսօրեն եռք հայ ու քուրդ մերձեցումը»:[176]

Քեչեչյանը, ինչպես այս ժողովում, այնպես էլ իր հետագա գործունեության ընթացքում ամեն կերպ ջանում էր հնչակյաններին համոզել, որ թե՛ եվրոպական տերությունների և թե՛ թուրքական կառավարության կեղծ ու անհիմն խոստումները հայերին չեն կարող ազատություն բերել, որ ինչպես հայերի, այնպես էլ քրդերի ազատության միակ գրավականը նրանց միասնության, նրանց պայքարի ու ամուր դաշինքի մեջ է: Բայց, դժբախտաբար, Քեչեչյանի և նրա նման շատերի ջանքերը ապարդյուն էին անցնում, հնչակյան կուսակցության անդամների մեջ միասնական կարծիք չկար, և չնայած որոշ հաջողություններին, այնուհանդերձ, նրանց գործունեությունն այդ ուղղությամբ ոչ բոլոր դեպքերում էր հաջող լուծում ստանում:

Սակայն Քեչեչյանը չէր վհատվում և իր մի շարք գործընկերների հետ պայքարում էր հայ-քրդական դաշինքի ամրապնդման համար: Այս ուղղությամբ նրանց ակտիվ աջակցություն ցույց տվեցին հնչակյան կուսակցության անդամներ Դամադյանը և Ռուբեն Շիշմանյանը, Հակոբ Ղազարյանը (Լազոն): Նրանք, այցելելով քրդական շրջաններ, ամենուր հանդիպում էին քուրդ աշիրաթապետերին, քարոզում հայ-քրդական դաշինքի գաղափարը, հավաքում քրդական բանահյուսության լավագույն նմուշները: Հակոբ Ղազարյանը Կահիրեում արդեն հիմնադրել էր հայ-քրդական մշակութային միությունը, որը լուսավորության տարածելու ուղղությամբ լայն գործունեություն էր ծավալում քրդական շրջաններում:

Վերը նշված հայկական կազմակերպությունների ակտիվ գործունեությունից հետո հայ մտավորականությունն ավելի գործնական քայլերի է դիմում: Հայ մտավորականության այսպիսի գործունեությամբ և հատկապես երկրում տիրող դժվարին իրավիճակով պայմանավորված, քուրդ մտավորա-

կանության շրջանում սկսեց աշխուժություն նկատվել: Թուրքիայի ազգահալած ռեժիմի ծանր պայմաններում քուրդ աքսորյալ մտավորականները նորից սկսեցին քայլեր ձեռնարկել, փորձեցին կապեր ստեղծել հայ մտավորականության հետ, ամրապնդել հայ-քրդական միասնական դաշինքն ընդդեմ թուրքական կառավարության: Նրանք մեծ հույսեր էին կապում ճանաչում վայելող դաշնակցության և հնչակյան կուսակցության հետ, որոնց ներկայացուցիչները զգալի դեր խաղացին այդ դաշինքի ամրապնդման և քրդերի մեջ լուսավորություն տարածելու գործում: Քուրդ մտավորականությունը սկսեց սերտ համագործակցել հայ մտավորականության հետ, իսկ հայ մտավորականությունն ամեն կերպ աջակցում էր նրանց բարեկամական քայլերին:

Քուրդ առաջադեմ մտավորականները, քննադատելով քուրդ ազաների, բեկերի ու շեյխերի հակաժողովրդական արարքները, հայերի հետ համերաշխության կոչ էին անում: «Դրոշակի» համարներից մեկում քուրդ մտավորականներից մեկն իր քրդերեն լեզվով գրած հոդվածով դիմում է քրդերին (այդ կոչը նաև թարգմանվել է հայերեն - Կ. Ջ.). «... Սուլթան Համիդը ոչ խալիֆա է, ոչ էլ փաղիշահ, այլ մարդասպան... Ձեզ ձեր հայրենակից հայերուն դեմ կգրգռե, դուք ինչու չեք ըսեր, որ անոնք մեր թափրագ-գառդաշները (հորեղբայրներն) են, մեր դրացիներն են, եւ միեւնույն երկրի զավակներն ենք... Այսօր կրոնը ազգությունն զատելու ատենն չէ, մարդկության դարն է այսօր: Դուք ըսեք հայերուն «Եկեք մենք էլ ձեզ հետ ենք»: Եթե երկուքնիք մեկ ըլաք կառավարությունը ձեր դեմ չի կրնա ելնել, այն կլլախտվի ու դուք հանգիստ կլինեք... Միացեք ձեր միակ փրկությունը զենքի ուժով միայն պիտի ըլայ, այսինքն ապստամբություն»:[177]

Հայ-քրդական բարեկամական կապերի ջատագովներից է եղել «Քուրդիստան» թերթի խմբագիր Աբդուլռահման Բադրխանը: Թերթը հիմնադրվել է 1898 թ. Կահիրեում: Խմբագիրն ու հրատարակիչը Միհրդատ Բադրխանն էր: Հետագայում, երբ թերթը հրատարակվում է Ժնևում, այն խմբագրում է Միհրդատի եղբայրը՝ Աբդուլռահման Բադրխանը: Նա ինչպես իր թերթի էջերում, այնպես էլ հայկական պարբերական մամուլում հաճախակի էր հանդես գալիս հոդվածներով, կոչ անում քուրդ ժողովրդին հայերի հետ ամրապնդել համերաշխությունը, մերկացնում էր Թուրքական կառավարության ազգահալած քաղաքականությունը: «Դրոշակի» համարներից մեկում նրա ստորագրությամբ մի կոչ է տպագրվում, որը նա խմբագրությանն ուղարկել էր քրդերեն և թուրքերեն լեզուներով: Խմբագրությունն այն թարգմանելով հայերեն, տպագրեց «Դրոշակի» 1901 թվականի հինգերորդ համարում: Հեղինակը կոչ էր անում քուրդ ժողովրդին չխաբվել Թուրքական կառավարության խոստումներով ու սիրաշահումներով. «Ամրապնդեցեք համերաշխությունը հայերի հետ, ձեր ազատությունը ձեր միասնության մեջ է»: Վերջում նա գրում է. «Ձեր տեսած բոնավոր հարստահարություններին վերջ մը դնելու համար հայերը ձեզի ամեն կերպ աջակցելու կազմ ու պատրաստ են: Համերաշխության և համաձայնության մեջ մի թերանաք: Այսպի-

սի վիճակի մեջ աստծու հաջողությունը հետևերդ»:

Աբդուլահմանը լայն գործունեություն էր ծավալում, որպեսզի ամրապնդի հայ-քրդական դաշինքը: Նա նշում էր, որ նրա թերթի նպատակներից մեկն էլ հայ-քրդական բարեկամական ու զինակցական կապերի ամրապնդումն է. «Գիտեմ, թե քյուրդերուն և հայերուն շահը միևնույն է, և ասոր համար է, որ ես միշտ ուզած եմ լրագրիս միջոցով չնչել այն ատելությունը, որ գոյացած է այս երկու ժողովուրդներու միջև... «Քյուրդիստանի» մեջ քրդերեն լեզվով հրատարակած հոդվածները ատոր վկան են: Ամեն տեսակ զոհողություն պիտի ընեմ չնչելու համար այն ատելությունը, որ Աբդուլ Համիդ այս երկու ժողովուրդներու միջև դրած է...»:[178]

«Քուրդիստան» թերթի նման հեռատես գործունեությունը աշխուժություն մտցրեց ինչպես հայ, այնպես էլ քուրդ մտավորականների շրջանում՝ ամենուր կոչ անելով ամրապնդել հայ-քրդական դաշինքը: Այս ուղղությամբ հատկապես լայն գործունեություն ծավալվեց Աբդուլահմանի և Ամին Բադրխանի կողմից 1908 թ. Ստամբուլում կազմակերպված «Քուրդ թավբուն վա տարակի ջամիաթին» («Քրդական միասնության և առաջադիմության ընկերությունը):[179] Հենց առաջին օրից այս կազմակերպությունը ողջունեցին ինչպես հայ առաջադիմական կազմակերպությունները, այնպես էլ հայ ազգային բուրժուազիան, և պատահական չէր, որ հայ-քրդական կապերի ամրապնդման կոչով Ստամբուլում տեղի էին ունենում միտինգներ, կազմակերպվում հայ-քրդական երեկոներ: Այդ երեկոներում երգում էին հայերեն և քրդերեն երգեր, առաջ քաշում հայ-քրդական դաշինքի հետ կապված հարցեր:

Հայ-քրդական զինակցության և ընդհանրապես բարեկամական կապերի ընդլայնման մեջ ուրույն դեր է ունեցել քրդական շարժման աչքի ընկնող ղեկավարներից Աբդուլռեզակ Բադրխանը: Նա ուներ ռուսական և հայկական կողմնորոշում, հետևաբար աշխատում էր սերտ կապ ստեղծել ռուս և հայ մտավորականության հետ: Աբդուլռեզակի գործունեությունը հատկապես աշխուժացավ երիտթուրքերի օրոք: Նա ինչպես Թուրքիայում, այնպես էլ Պարսկաստանում քրդերին կոչ էր անում պայքարել Թուրքիայի դեմ, ծավալել ազգային ազատագրական շարժում: Սակայն նա հետապնդվում է երկու կառավարությունների կողմից և 1911 թ. անցնում է Արևելյան Հայաստան ու առժամանակ մնում Երևանում: Երևանում նա բանակցություններ է վարում ռուս և հայ քաղաքական ու ռազմական գործիչների հետ:[180] Վերադառնալով Թուրքիա, նա ծավալուն աշխատանք է տանում քուրդ ազգաբնակչության մեջ: 1912 թ. փետրվարի կեսերին հրավիրում է քրդական շարժման ղեկավարների ժողով և առաջ քաշում հայերի, ասորիների հետ համագործակցելու գաղափարը: Ներկաները հավանություն են տալիս այդ գաղափարին:[181] Սակայն, կրկին հետապնդվելով թուրքական կառավարության կողմից, նույն թվականի գարնանն անցնում է Ռուսաստան, բանակցություններ վարում մի շարք ռուս ռազմական գործիչների հետ, իսկ 1913 թ. վերջերին դիմում Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, որպեսզի

Ռուսաստանը աջակցի քրդերին Իրանական Քուրդիստանը դարձնելու համաքրդական շարժման և մշակույթի կենտրոն:[182] Կապ պահպանելով թե՛ արևմտահայ և թե՛ ռուսահպատակ հայ մտավորականության հետ, նա ցանկանում էր նաև նրանց միջոցով լուսավորություն տարածել քրդերի մեջ, հատկապես նա սերտ կապերի մեջ է եղել Լոնդոնի հայկական կազմակերպությունների հետ: Պետերբուրգում նա հանդիպում է Լեոյի ու Հ. Օրբելու հետ, որոնք հավանություն են տալիս նրա ծրագրին և աջակցում դրա իրագործմանը: Նրանց համատեղ գործունեությանը կանդրադառնանք համապատասխան բաժնում:

Իրավամբ պետք է նշել, որ այս ժամանակահատվածում հայ և քուրդ մտավորականության բարեկամական գործնական քայլերը նպաստեցին քուրդ ժողովրդի ազգային ինքնագիտակցության վերելքին, նաև խթանեցին քրդական մշակույթի զարգացումը:

Անդրադառնալով հայկական մամուլին, պետք է նշենք, որ այն ոչ միայն իր էջերում արտացոլում էր քրդական մշակութային հարցերը, այլ նաև իր քննադատական խոսքն էր ուղղում թուրքական կառավարությանը քրդական զարհուրելի կոտորածների վերաբերյալ: Չշեղվելով ուսումնասիրության բուն թեմայից, ցանկանում ենք մի հատված մեջբերել «Յառաջ» թերթի 1926 թ. օգոստոսի 8-ի համարում զետեղված «Քրդական կոտորածները» հոդվածից. «Թուրքիան զարհուրելի խժդժություններ է անում քրդերի նկատմամբ. 1. գերիներու աչքերը հանեց, լեզուն կտրեր և խանջարներով մարմինները խոշտանգելեն չետոյ սպաներ են. 2. կացիններով կտրել են քյուրդերու թևերը ու ոտքերը և փշրել են գլուխները. 3. շիկացած երկաթներով այրեր են և սպաներ են: 4. Քարյուղ լցնելով վրաները այրեր են: Կոփի սբ. Դանիել վանքի մեջ տաճկաց զորքի հրամանատարը կատարած է հետևյալ խժդժությունը: Գերի ընկած 11 քուրդերը բերած են վանքի բակ, մերկացրեր են և ձեռքերը կապած պահեր են: Եկած է հրամանատարը, որը գերիներուն ըսած էր այս խոսքերը. «Տասը տարի առաջ այս վանքի մեջ ես խաչեր տվի բազմաթիվ հայեր, որոնք ձեզ նման թշնամիներ էին մեր պետության: Այժմ կարգը ձերն է, դուք ևս դավաճանեցիք մեր պետությանը և հայրենիքի շահերուն: Այժմ էլ կուզեք անկախ Քուրդիստան ունենաք և հայերու նման ցեց դառնաք մեր գլխին: Դուք դարեր շարունակ վայելեցիք Օսմանական կառավարության պաշտպանությունը, բայց կրոնապես փոխանակ իսլամը գավանելու, ավելի կը հավատայիք հայոց կրոնին, ուխտի կերթայիք հայոց վանքերը, իսկ այժմ կափսոսաք, որ հայեր չկան այս երկրի մեջ: Արդ, ահա, ձեզ բերած ենք ձեր պաշտած հայոց սրբավայրերը, որոնց պատերի վրա խաչենք ձեզ: Դիմեցեք այս վանքի սուրբերուն, որ ձեզ ազատեն թուրք ազգի արդար վրեժխնդրություններն...»:

Այս ճառեն չետոյ զինվորները 11 քուրդ գերիները սանդուղքներով կը բարձրացնեն սբ. Դանիել վանքի պատերուն վրայ և գլխիվայր կը խաչեն, սվիններ խոթելով ձեռքերուն և ոտքերուն մեջ, խաչվածները երեք ժամվայ

ընթացքին կը մեռնին, ապա մարմինները պատերեն վար կը բերեն, կը ձգեն շուներուն առջև, որոնք բզիկ-բզիկ կընեն խաչյալները:

Թուրքական նման վայրագությունները չկարողացան կոտրել քուրդ ժողովրդի բարեկամական ոգին, էլ ավելի ջերմ կապեր հաստատեցին հայ ժողովրդի ու նրա հոգևոր աշխարհի հետ: Հայկական քաղաքական ու հասարակական կազմակերպությունները, մամուլը նորանոր ծրագրերով խթանեցին հայ-քրդական կապերի ամրապնդումը, ուղիներ հարթեցին քրդական մշակույթի զարգացման համար: Աստիճանաբար հայ մտավորականությունն էլ ավելի խորազնին սկսեց զբաղվել քուրդ ժողովրդի պատմության, գրականության, բանահյուսության, լեզվի, ազգագրության և մշակութային հարցերով:

Ե. ՀԱՑ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԱՄՈՒԼԻ ՆՈՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ մտավորականության կողմից քրդական պատմամշակութային հարցերի առավել գիտական ուսումնասիրման մի նոր, բեղմնավոր ժամանակաշրջան է սկսվում: Այս երկրորդ փուլում հայ քրդագիտությունն արդեն որոշակիորեն ձևավորվել էր և որպես գիտություն ճանաչում գտել ոչ միայն ողջ Հայաստանում, այլև՝ Եվրոպայում: Հայ պատմաբանները, գրականագետները, բանահավաքները, ազգագրագետները և ընդհանրապես մամուլը քրդերին վերաբերող գործնական քայլեր էին ձեռնարկում, կատարում լուրջ ուսումնասիրություններ, ներկայացնում ստեղծագործություններ, հուշեր, ճամփորդական նոթեր: Իրապես, այս փուլի սկզբնական շրջանում հայ մտավորականության ակտիվ գործունեության շնորհիվ նոր թափ հաղորդվեց քրդական մշակույթի զարգացմանը: Այս հանգամանքը նաև հիմք դարձավ քուրդ ժողովրդի պատմության, բանահյուսության, ազգագրության և լեզվի հարցերի հետագա ուսումնասիրությունների համար: Այս փուլում քրդական մշակույթի լուսաբանման գործում ակտիվ էր գործում հայ մամուլը: «Մշակ» թերթը, դիմելով գործնական քայլերի, կոչ էր անում հայ մտավորականությանը խորապես զբաղվել քրդական մշակույթով, հատկապես բանահյուսությամբ. «Գիր ու գրականության փոխարեն քրդերն ունեն ճոխ ժողովրդական դյուցազներգություն, առասպելներ և ավանդություններ: Այնքան մեծ է քուրդ բանավոր գրականությունը, այնքան հարուստ և հետաքրքրական է, որ արժեր նրանով իսկապես զբաղվել և լույս աշխարհ սփռել»:[183]

«Մշակի» մեկ այլ թղթակից, անդրադառնալով քուրդ եզդիներին, առաջ էր քաշում նրանց մեջ լուսավորություն տարածելու, խավարից դուրս բերելու հարցը: Նա գրում էր. «Հայերի վերաբերմամբ միանգամայն բարեկամական և մտերմական զգացմունք են տածում... Երբ հանգուցյալ Խրիմյան կաթողիկոսի օրոք եզդիների կրոնապետը (Միր Իսմայիլ - Կ.Ջ.) Թուրքիայից կովկասյան հոտին այցելության եկավ, նա խնդրեց Խրիմյանին, որպեսզի իր հոտի կրթական հոգաստարությունը հայ հոգևորականությունն իր վրա վերցնի... Մեր պարտականությունն է հնարավոր եղածին չափ նպաստել եզդիների կրթական գործին, նրանց պատանի սերունդը մեր դպրոցները ընդունել, որովհետև արդեն մոտենում է ուսումնական տարին, ուստի ցանկալի է, որ մեր ծխական դպրոցի դռները եզդի երեխաների առաջ բաց լինեն, որով մենք ցույց կուտանք, որ արդարև արժանի ենք այդ համակրանքին, որ տածում են դեպի մեզ եզդի քրդերը»:[184]

Իսկ լրագրող Ա. Գուրջյանը իր «եզդի քրդերը» ծավալուն հոդվածում արժեքավոր տեղեկություններ է հաղորդում եզդի քրդերի ծագման ու կենցաղի վերաբերյալ, իհարկե հոդվածում կան իրարամերժ կարծիքներ, սակայն քրդագիտության տեսակետից բազմաբովանդակ է. (Տես. «Լոմայ», 1904, N1, էջ 74-93):

Պետք է նշել, որ հայ եկեղեցին այս շրջանում ամենուր աջակցում էր հայ մտավորականությանը քուրդ ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու, քրդական գյուղերում դպրոցներ բացելու, քուրդ երեխաներին ուսման տալու գործում: Եկեղեցին հատկապես քաջալերում էր մտավորականությանը՝ մեկնել գյուղ և քրդերի մեջ լայն լուսավորչական աշխատանք տանել, նրանց երեխաներին հավաքագրել՝ ուսում տարածելու նրանց մեջ: Հայ մտավորականությունն, իր հերթին, խանդավառությամբ էր ընդունում քրդերի մեջ լուսավորություն տարածելու՝ հոգևորականության մարդասիրական գաղափարը: Ահա, թե ինչ էր գրում «Մշակ» թերթը. «Մի ուրախալի երևույթ ևս. առաջին անգամ դպրոցի հիմքը (Արևելյան Հայաստանում, այն էլ ռուսերեն և քրդերեն լեզվով - Կ. Ջ.) դրվեց մեր դրացի եզդիների Ջոր գյուղում... 80-ական թվականներին էր, որ եզդիներից պաշտված (այժմ հանգուցյալ) ցեղապետ Հասան աղան ցանկանում էր դպրոցներ բանալ եզդիների մեջ հայոց նախկին դպրոցների նման: Նա այդ առթիվ դիմել է քրդերենի հմուտ պրոֆեսոր Ս. Եղիազարյանին՝ որ արդյոք կարելի է քրդական նշանագրեր կազմել: Եղիազարյանը դրական պատասխան էր տուել»:[185]

Հետագայում այս դպրոցի ուսուցիչներից է եղել հայ անվանի մտավորական, քուրդ ժողովրդի բարեկամ Բագրատ Ղարիբջանյանը, որը տիրապետելով քրդերենին, ոչ միայն Ջորի դպրոցում, որը բացվել էր 1902 թվականին, այլև ընդհանրապես քուրդ ժողովրդի մեջ տարել է լայն քաղաքական ու լուսավորչական աշխատանք և մեծ հարգանք վայելել քրդերի մեջ:[186]

20-րդ դարի սկզբին քրդական մշակույթի ջատագովներից է եղել «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարը, որը բազմակողմանիորեն հետաքրքրվել է քրդերի կյանքով և այն լայնորեն արտացոլել թերթի էջերում: Նրա մասին հիացմունքով էր խոսում եզդիների կրոնապետ Միր Շեյխ Իսմայիլը: Երբ նա Թիֆլիսում 1909 թ. փետրվարի 20-ին այցի էր գնացել Մեսրոպ Արքեպիսկոպոս Մելիքյանին, Քալանթարը, որը բարեկամական

ջերմ վերաբերմունք է դրսևորել Միր Իսմայիլի նկատմամբ, նրա հետ մտերիմ զրույցի ընթացքում անդրադարձել է քրդական մշակույթին, հատկապես քրդերի մեջ լուսավորություն տարածելու հարցին: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ երբ եզդիների կրոնապետը գալիս է Թիֆլիս, նրան ջերմորեն է ընդունում հայ մտավորականությունը և աջակցում քրդերի մեջ լուսավորություն տարածելու ծրագիրն իրականացնելու գործում:

1909 թ. փետրվարի 19-ին Շեյխ Իսմայիլը ներկայանում է Կովկասի փոխարքային: Ընդունելությանը ներկա էին հայ մտավորականության լայնախոհ ներկայացուցիչներ Գարեգին արքեպիսկոպոս Սաֆոնցյանը, Եփրեմ Վարդապետ Սուքիասյանը, գնդապետ Ա. Լազարյանը, լրագրող Ա. Քալանթարը, որոնք աջակցելով Միր Իսմայիլին, փոխարքայից խնդրում են քուրդ երեխաների համար դպրոցներ բացել:[187]

Միր Շեյխ Իսմայիլը ամենուր սերտ կապեր է պահպանել հայերի հետ և խորին համակրանք տածել հայ ժողովրդի հանդեպ: Այս կապակցությամբ 1940-ին լույս տեսած «Հայ հանրագիտակի» 5-րդ հատորում (էջ 957) գրված է. «Այնքան կսիրեր հայերը, որ յուր զավակները անգամ Պաղտատի հայոց Ս. Թարգմանչաց վարժարանը կը ղրկե դաստիարակության համար»:

Ա. Քալանթարը 1909 թ. սեպտեմբերին Թիֆլիսում հանդիպում է մեկ ուրիշ քուրդ առաջադեմ մտավորականի՝ Շեյխ Իբադուլայի որդի Բադրխանի հետ, քննարկում հայ-քրդական հարաբերությունները, քրդերի մեջ լուսավորություն տարածելու հարցը: Քալանթարը ջերմորեն է անդրադառնում քրդական մշակույթի հարցերին, հատկապես դրանց պրոպագանդմանը, որը հիմնականում պետք է կատարվեր մամուլի միջոցով: Նա խորին հարգանքով է խոսում Բադրխանի հայասիրության մասին:[188]

Քուրդ մտավորականների հետ Ա. Քալանթարի այս հանդիպումներն էլ ավելի են աշխուժացնում նրա գործունեությունը, և նրա թերթի էջերում առավել հաճախակի են արծարծվում քուրդ ժողովրդի մշակույթին, պատմությանը, ազգագրությանն ու բանահյուսությանն առնչվող հարցերը: Հետաքրքրական էին քրդական շարժումների մասին հոդվածները, որոնք պարզապես ինֆորմացիոն հաղորդումներ չէին, այլ, ըստ բարձրացված հարցերի ու բովանդակության, լուրջ ուսումնասիրություններ, որոնք քաղաքական նպատակներ էին հետապնդում: Նա իր հոդվածներով հաճախակի բանավեճի մեջ էր մտնում հայկական մյուս թերթերի հետ, իր կարծիքը հայտնում Թուրքիայի և Իրանի դեմ տեղի ունեցած քրդական շարժումների մասին, անդրադառնում հայ-քրդական հարաբերություններին: Ճիշտ է, նրա հոդվածներում կան նաև հակասական կարծիքներ, սակայն դրանք չեն կարող ստվեր գցել նրա բազմաբովանդակ ու, ըստ իս, գիտական արժեք ներկայացնող հոդվածների վրա, որոնք քրդական մշակութային կյանքում, հատկապես քրդագիտության ոլորտում լավագույն ներդրումներից են:

Հետաքրքիր է հատկապես Քալանթարի «Քրդական շարժումներ» խորագիր կրող հոդվածը, որտեղ հեղինակը կանգ է առնում քրդական քաղաքական հոսանքների ու շարժումների բնույթի և ընթացքի վրա:[189] Այս հոդ-

վածը մի խորը և հետաքրքիր ուսումնասիրություն է, որտեղ ներկայացված են նրա լայնախոհ հայացքներն ու ծրագրերը: Նրան միշտ մտահոգում էին հայ-քրդական, այդ թվում՝ մշակութային փոխհարաբերությունները, և պատահական չէր, որ թերթի էջերում հաճախակի պարզաբանում էր երկու հարևան ժողովուրդների դարավոր հարաբերությունները և ցույց տալիս թուրքական կառավարության նենգամիտ քաղաքականությունը դրանք խափանելու ուղղությամբ: Ինչպես նշեցինք, նա առիթը բաց չէր թողնում՝ հանդիպելու քուրդ մտավորականների հետ: Այդ հանդիպումներից առավել հետաքրքրականներից էր 1913 թ. քուրդ առաջադեմ գործիչ, Պոլսից Թիֆլիսի վրայով Սղերտ ուղևորվող Խայրեդին Բերազի հետ հանդիպումը, որի մասին «Տեսակցություն քուրդ ազդեցիկի հետ» խորագրով «Մշակում» տպագրել է ծանրակշիռ ու բազմաբովանդակ մի հոդված: Նորահայտ փաստերով հարուստ սույն հոդվածը ևս մեկ անգամ վկայում է, որ Ա. Քալանթարը ոչ միայն խոշոր քրդագետ էր, այլև քրդական մշակույթի ջատագով: Պետք է պարզորոշ նշել, որ նա հայ-քրդական հարաբերություններում տեղ գտած որոշ պահեր գիտական և օբյեկտիվ վերլուծության է ենթարկել: Իր այս հոդվածում քուրդ նշանավոր մտավորականի մասին նա գրում է. «Խայրեդին Բերազին պատկանում է քրդական Բերազի մեծ տոհմին, որը շատ ազդեցիկ է Բիթլիսի և, մասամբ, էրզրումի վիլայեթներում, ունենալով ճյուղավորություններ նաև Խարբերդի, Վանի և Դիարբեքիրի վիլայեթներում... Նա ասում էր. «Մենք՝ քուրդերս, անկախ Քյուրդիստան չենք ցանկանում այլ, բարեկարգված, տեղական ինքնավարական կյանք: Եվ մենք համարում ենք հայերին բարեկամ եղբայրակից ազգ, որի հետ ուզում ենք միասին գործել և առաջ գնալ»:[190]

Պետք է նշել, որ Խայրեդին Բերազին իր գործունեության ընթացքում միշտ էլ պայքարել է հայ-քրդական դաշինք ստեղծելու համար: Ունենալով ռուսական կողմորոշում, նա բազմիցս հանդիպումներ է ունեցել Թուրքիայում գտնվող ռուսական հյուպատոսության ներկայացուցիչների հետ, ջանացել նրանց միջոցով հարթել հայ-քրդական գժտությունները, երկու դարավոր հարևան ու բարեկամ ժողովուրդների միջև գինակցական դաշինք ստեղծել:[191]

Քրդերի մասին հետաքրքրական նյութեր է պարունակում նաև Ա. Քալանթարի «Սասուն» գրքույկը, որը հրատարակվել է 1895թ. Թիֆլիսում: Այս աշխատության «Քրդերը և նրանց հարաբերությունը հայերի հետ» բաժնում հեղինակը կանգ է առնում հայ-քրդական հարաբերությունների, մշակութային մի քանի հարցերի վրա, վեր հանում ու գիտական հողի վրա դնում այդ երկու դարավոր բարեկամ ժողովուրդների միասնության հարցը:

Հայտնի է, որ Ա. Քալանթարը ցանկանում էր հայկական մամուլում քրդերի վերաբերյալ տպված իր բոլոր հոդվածները ի մի բերել և առանձին գրքով տպագրել, սակայն դա նրան չի հաջողվում: Այնուհանդերձ, նրա հոդվածները ինչպես հայագիտության, այնպես էլ քրդագիտության համար մեծ արժեք են ներկայացնում: Լինելով «Մշակի» խմբագիրը, նա իր թղթակից-

ներին քուրդ ժողովրդի պատմության, բանահյուսության և ազգագրության մասին հոդվածներով ու հաղորդումներով հանդես գալու լայն հնարավորություններ էր տրամադրում: Եվ պատահական չէր, որ ինչպես նրա, այնպես էլ Գրիգոր Արծրունու և մյուս խմբագիրների օրոք քրդերի մասին թերթերում տպագրվել է 323 հոդված ու թղթակցություն (տե՛ս Գ. Ջ. «Հայկական պարբերական մամուլը քրդերի մասին» բիբլիոգրաֆիան), որոնք քրդական մշակութային պատմության գանձարանը հարստացրել են նորանոր նյութերով:

Ա. Քալանթարի գաղափարակիցներից է եղել «Մշակ» թերթի հրատարակիչ, հրապարակախոս Հ. Առաքելյանը, որը զբաղվել է ոչ միայն հայ-քրդական հարաբերությունների, այլև քուրդ ժողովրդի ազգագրության ու բանահյուսության հարցերով: Զգտելով ծանոթանալ ոչ միայն քուրդ ժողովրդի անցյալին, այլև՝ ներկային, հատկապես շեյխ Իբադուլայի շարժման պատմությանը, նա դեռևս 1880-1881թթ. հայ նշանավոր մտավորական Ա. Զալալյանի անմիջական օգնությամբ մեկնում է Աւորպատական, ուսումնասիրում քրդերի կյանքը, ազգագրությունը, բանահյուսությունը և «Գոլոսում» տպագրում բազմաթովանդակ մի հոդված: Հետագայում, նպատակ ունենալով մի ամփոփ աշխատանք գրել քրդերի մասին, նա չի բավարարվում իր ճանապարհորդական նոթերով, նաև ուսումնասիրում է Մ. Վագների ու Խ. Աբովյանի աշխատությունները և նոր միայն շարադրում «Քրդերը իրենց տանը» արժեքավոր ծավալուն հոդվածը, որն առաջին անգամ տպագրվում է «Ազգագրական հանդեսի» 1898 թվականի 2-րդ համարում:

Քրդագիտության համար արժեքավոր են նրա մի շարք այլ հոդվածներ ևս, որոնք վերաբերում են Պարսկաստանի քրդերի սոցիալ-տնտեսական վիճակին, քրդական շարժումներին, քուրդ-պարսկական հարաբերություններին: Այդ հոդվածներում Հ. Առաքելյանը նաև վեր է հանում թուրքական և պարսկական կառավարությունների ազգահալած քաղաքականությունը քրդերի նկատմամբ, կանգ առնում հայ-քրդական հարաբերությունների վրա:[192]

Պետք է նշել, որ «Մշակ» թերթում տպագրված նրա հոդվածների պատմամշակութային արժեքը հիմնականում կայանում էր նրանում, որ դրանք մեկ ընդհանուր ուղղություն ունեին՝ մերձեցնել երկու եղբայրակից ժողովուրդներին, վեր հանել հայ-քրդական գժտությունների հիմնական պատճառը, որը, ըստ նրա, թուրքական կառավարության նենգամիտ քաղաքականության և քուրդ վերնախավի՝ աղաների, բեկերի ու հոգևորականների գործունեությունն էր:

Հ. Առաքելյանը միևնույն ժամանակ առաջ էր քաշում քրդերի մեջ լուսավորություն տարածելու հարցը: Նա այն կարծիքին էր, որ կրթության գործը պետք է ընթանա ազգային լեզվով, որ քրդերի համար պետք է բացել առանձին դպրոցներ, որպեսզի քուրդ երեխան ծանոթանա սեփական պատմությանն ու մշակույթին: Նա խիստ քննադատում էր այն հայ մտավորականներին, ովքեր գտնում էին, որ քուրդ երեխաներին պետք է ընդունել

հայկական դպրոց և նրանց ուսուցումը տանել հայոց լեզվով: Նա «Վանեցեք շովինստական մտքերը» խորագրով հոդվածում ընդդիմախոսում էր Ե-գիպտոսում հրատարկվող «Արև» թերթում տպագրված հայկական կազմակերպություններից «Միացյալ ընկերության» այն առաջարկությանը, որ քուրդ երեխաներին հայկական դպրոցներում ընդունեն և ուսուցումը միայն հայերեն լեզվով տանեն:[193] Ճիշտ է, ընկերության ծրագրում զգացվում էր ազգային կողմը, սակայն պետք է նշել, որ նա ջանացել է լուսավորություն տարածել քրդերի մեջ, նրանց հեռու պահել թուրքական ուծացման քաղաքականությունից:

Առաքելյանը լավատեղյակ էր ոչ միայն Թուրքիայի և Անդրկովկասի քրդերի պատմությանն ու կյանքին, այլև՝ Պարսկաստանի քրդերի վիճակին: Դրա վկայությունն են հայկական պարբերական մամուլում հրատարակված նրա մի շարք հոդվածները. «Պարսկաստանը ալեկոծված», «Կոմեդիան վերսկսվում է», «Քրդական ապստամբության շարժառիթը եւ նպատակը», «Քյուրդիստանի գաղափարը» և այլն:[194]

Լինելով շնորհալի քրդագետ, նա 1900 թվականին Փարիզում կայացած Արևելագետների միջազգային կոնգրեսում հանդես է եկել Պարսկաստանի քրդերի, իսկ 1902 թվականին Համբուրգում, դարձյալ Արևելագետների միջազգային կոնֆերանսում, քուրդ ժողովրդի ազգագրության մասին զեկուցումներով, որոնք արժանացել են Եվրոպայի խոշոր արևելագետների ուշադրությանը: Այդ զեկուցումները հետագայում «Քյուրդերը Պարսկաստանի մեջ» ընդհանուր խորագրով տպագրվել են «Կոչնակում»:[195] Հեղինակը գիտական արժեքավոր այդ հոդվածներում անդրադարձել է Պարսկաստանի քրդերի պատմական անցյալին, կենցաղին, նիստուկացին և միևնույն ժամանակ բարձր է գնահատել քրդական ժողովրդական բանահյուսությունը: Հ. Առաքելյանը քրդերին անդրադարձել է նաև իր «Ջեյհուն» աշխատության մեջ, որը լույս է տեսել Թիֆլիսում 1896 թվականին: Ելնելով Կիլիկիայի ազգաբնակչության մասին, նա նկարագրում է հայերի ու քրդերի սոցիալ-տնտեսական վիճակը Կիլիկիայում և նրանց փոխհարաբերությունները: Անդրադառնալով ազգաբնակչությանը, նա իրավացիորեն նշում է. «Կիլիկիայի այժմյան ազգաբնակչությունը բաղկացած է երկու գլխավոր տարրից, բնիկներից և եկվորներից: Բնիկ տարրը կազմում են հայերը, հույները, քրդերը, իսկ եկվոր տարրը կազմում են թուրքմենները, ավշարները, թուրքերը կամ օսմանլիները, անսարի կամ նուսայիրի արաբները, չերքեզները, նասրանիները (աղանդավոր ասորիներ) և ղզլբաշները»: Հեղինակը միևնույն ժամանակ ժխտում է այն միտքը, որ Կիլիկիայի քրդերը քոչվորներ են: Նա նշում է, որ դեռևս 9-րդ դարում նրանց անունը նշվում է որպես երկրի բնակիչներ, որ նրանք կենտրոնացված են Սև լեռներում, որը համարվում է նրանց բնակության կենտրոնավայրը»:[196] Պետք է նշել, որ այս աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է քուրդ ժողովրդի պատմության, հատկապես ազգագրության հարցերը ուսումնասիրողների համար և ունի պատմական ու գիտական մեծ արժեք և աղբյուրագիտական առումով ամենա-

կարևորն է:

Համբարձում Առաքելյանի ֆոնդում, որը գտնվում է հանրապետության Գրականության և արվեստի թանգարանի արխիվում, պահպանվում են քրդերի, այդ թվում՝ քուրդ եզդիների պատմության, ցեղերի ու ցեղախմբերի, դավանանքների, հարսանիքների, եզդիների պաշտամունքի վերաբերյալ մի շարք անտիպ նյութեր ու վավերագրեր: Հատկապես հետաքրքրական են այն նյութերը, որոնք վերաբերում են քուրդ եզդիների պաշտամունքի առարկաներից մեկին՝ Մալակե Տաուսին (որը սիրամարգի տեսք ունի – Կ. Ջ.): Նա միևնույն ժամանակ մեծ ուշադրություն է դարձրել քրդական ժողովրդական բանահյուսությանը, ըստ արժանավույն գնահատել այն, հավաքել լավագույն նմուշները, որոնք նույնպես պահպանվում նրա արխիվում: Առաքելյանը մի հետաքրքրական տեղեկություն է հաղորդում այն մասին, թե ինչպես հայ մտավորականության ներկայացուցիչներից Գ. Վարդանյանը 1915 թ. դեկտեմբերի 25-ին հինգ ժամ զրույց է ունեցել եզդիների հոգևորականության ներկայացուցիչ փիր Նամո Օսմանի հետ, որը մանրամասն պատմել է եզդիական պաշտամունքի և քուրդ-եզդիների ծագման մասին: Վարդանյանը այդ բոլորը գրի է առել և հանձնել իրեն: Իր հուշերում Հ. Առաքելյանը գրում է, որ ինքն իրեն հանձնված նյութերը հետագայում թարգմանել է ռուսերեն և 1916 թվականի հունվարի 25-ին հանձնել Թիֆլիսի Ռուսական աշխարհագրական ընկերությանը, սակայն չի նշում, թե հետագայում ինչպիսի բախտ են ունեցել այդ ձեռագրերը:[197] Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ Թիֆլիսի Ռուսական աշխարհագրական ընկերությունը հետագայում քրդերին վերաբերող Հ. Առաքելյանի նյութերի մի մասն օգտագործել է իր հրատարակած ժողովածուներում, առանց հեղինակի անունը նշելու:

Ուշագրավ է այն, որ Առաքելյանը, մեծ հետաքրքրություն դրսևորելով քուրդ ժողովրդի պատմության նկատմամբ, մանրակրկիտ ուսումնասիրել է Շարաֆ խանի «Քուրդ ժողովրդի պատմությունը» և նույնիսկ մի քանի հատված թարգմանել է հայերեն, բարձր գնահատելով քուրդ ժողովրդի պատմությանը վերաբերող այդ հոյակապ աշխատությունը:[198]

«Մշակ»-ում տպագրված արժեքավոր ստեղծագործություններից է «Շյխ Խաթուն» եւ «Այշե Խաթուն» վիպակները, որոնցում վեր է հանված հայ քրդական հարաբերությունների մի շարք դրվագներ: (Տես. «Մշակ», 1915, N79-81):

Ամփոփելով քրդական մշակույթի ասպարեզում Հ. Առաքելյանի ողջ գործունեությունը և գնահատելով նրան որպես հայ քրդագետ, պետք է իրավամբ նշել, որ նա մեծ ներդրում ունի այդ ոլորտում: Առաքելյանն իր ուսումնասիրություններով, իր բեղմնավոր պրպտումներով գիտական լուծում է տվել քրդագիտության մի շարք հարցերի, բացահայտել ու վերհանել քրդական մշակույթի լավագույն նմուշները:

Քուրդ ժողովրդի մշակութային կյանքում լայն գործունեություն է ծավալել բանահավաք և ազգագրագետ Սարգիս Հայկունին: Քրդական ժո-

ղովրդական բանահյուսությունից նրա կողմից քաղված մի քանի լավագույն նմուշներ տպագրվել են «Էմինյան ազգագրական ժողովածուի» Ե և Զ հատորներում:[199] Իսկ ազգագրությանը վերաբերող նրա մի շարք ծավալուն հոդվածներ լույս են տեսել հայկական պարբերական մամուլում: Նրա կողմից հավաքված բանահյուսական, ազգագրական նյութերի մի մասն էլ պահպանվում է հանրապետության Գրականության և արվեստի թանգարանի արխիվում: Հետաքրքրական են նրա կողմից Վասպուրականի հայ ժողովրդի բարբառով գրառված քրդական բանահյուսության նմուշները, որոնք, ինչպես ինքն է նշում, տարածված էին ողջ գավառում:[200]

Ս. Հայկունին ջերմորեն է վերաբերվել քրդական ժողովրդական բանահյուսությանը և, հավաքագրելով այդ նմուշները, դրանց մի մասը մշակել է: Ձեռքի տակ ունենալով բանահյուսության, ազգագրության բազմաթիվ նյութեր, նա ամեն կերպ փորձել է դրանք տպագրել: 1900-ական թվականներին Հայկունին կապ է հաստատել «Էմինյան ազգագրական ժողովածուի» խմբագիր Գրիգոր Խալաթյանի հետ և խնդրել հնարավորության սահմաններում քրդական ժողովրդական բանահյուսության նմուշները տպագրել «Էմինյան ազգագրական ժողովածուի համարներից մեկում: Մեր կարծիքով Ս. Հայկունու հավաքած արժեքավոր նյութերը հետաքրքրել են Գ. Խալաթյանին, այդ իսկ պատճառով նա ժողովածուի երկու համար հատկացրել է քուրդ ժողովրդի բանահյուսությանն ու ազգագրությանը: Այդ է հաստատում Գ. Խալաթյանի՝ 1904 թ. փետրվարի 20-ին Ս. Հայկունուն ուղարկած նամակը, ուր նա գրում է. «Ձեր անմիջական օգնությամբ քրդական բանահյուսության տեքստերը «Էմինյան ազգագրական ժողովածուի» առանձին համարում լույս են տեսնելու»:[201]

Այդ թվականներին Գ. Խալաթյանն արդեն Ս. Հայկունուց քուրդ ժողովրդի բանահյուսության վերաբերյալ ստացել էր բազմաթիվ նյութեր և նախատեսել էր դրանք աստիճանաբար տպագրել: Այս առիթով Խալաթյանը նրան գրում է. «Հայ-քրդական վեպի առաջաբանը համարյա արդեն պատրաստ է, լույս տեսնելուց հետո կուղարկեմ Ձեզ 450 օրինակ:[202]

Այս նամակից ևս մեկ անգամ հանգում ենք այն եզրակացության, որ «Էմինյան ազգագրական ժողովածուի» այդ երկու համարների մի մասը կազմվել է Ս. Հայկունու անմիջական օժանդակությամբ, Էջմիածնում կամ Երևանում: Բոլոր դեպքերում նա, տրամադրելով իր հավաքած քրդական արժեքավոր նյութերը, անմիջական մասնակցություն է ունեցել «Էմինյան ազգագրական ժողովածուի» այդ երկու հատորների հրատարակմանը:

Հետաքրքրական են նաև նրա արխիվում պահպանված քրդերեն և հայերեն լեզուներով գրված քրդական վիպերգերը, հեքիաթները, պատմվածքները, որոնք սպասում են իրենց ուսումնասիրողներին: Դրանցից հատկապես արժեքավոր են «Դրմ-դրմ», «Ջմշիթի Սուլթան», «Մամե Ալան» քրդերեն և հայերեն գրված քրդական ժողովրդական վիպերգերը:[203]

Ազգագրության համար արժեքավոր են նրա կողմից քրդերեն գրի առնված մի շարք ծաղիկների ու բույսերի անունները: Նա 1897 թվականի ապ-

բրի 7-ին մեկնում է Ղրխբուլաղ և այնտեղի քրդերից իմանում մի շարք ծաղիկների և բույսերի քրդերեն անունները: Իր գրի առած տեքստերում միևնույն ժամանակ բացատրում է, թե այդ ծաղիկները ինչպիսի տեսք ու գույն ունեն, որտեղ են աճում և բուժական ինչ հատկություններ ունեն:[204] Պետք է նշել, որ նման հարցերի բացահայտումը մի նոր երևույթ էր քրդական ազգագրության մեջ:

Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ 1901 թվականին հրատարակված «Ժողովրդական վեպեր և հեքիաթներ» խորագիրը կրող «Էմինյան ազգագրական ժողովածուի» հատորի նյութերը լրիվ հավաքել է Ս. Հայկունին: Այս ժողովածուի «Ժողովրդական վեպեր» բաժնում տեղադրված են քրդական երկու ստեղծագործություններ՝ «Ապուզեթի», որը գրված է Բուլանղի բարբառով (էջ 63-72) և «Շերին Շահ և Բահար», որը գրված է կուլապի բարբառով (էջ 88-104):

Այս երկու ստեղծագործությունները տարածված են եղել հայերի շրջանում և նույնիսկ ներառել են հայկական ավանդապատումների տարրեր: Ինչպես հեղինակն է նշում, ինքը «Աբուզեթը» գրի է առել Բուլանղի Համազաեխ գյուղի նաղըլ ասող Ցնգոյից, որը գիտի շատ հեքիաթներ, ժողովրդական երգեր, մանավանդ քրդական վեպեր ասելու մեջ հռչակավոր է:[205]

Ժողովածուի այս համարում տպագրվել են նաև Ս. Հայկունու կողմից գրի առնված քրդական ժողովրդական մի շարք վիպերգեր, որոնք, ինչպես հեղինակն է նշում, հավաքագրել ու գրի է առել տարբեր ժամանակներում: Դրանցից են «Ռոստամ Զալ», «Բեջան», «Սամ», «Ղանդիլ», «Սիափուշ», «Հոզիբեկ», «Լեյլի Մեջլում», «Ջամբալի», «Դելու Համզա», «Հասան ագա», «Հայդարցի Ալի աղայի և եզդի Քոք աղայի պատերազմը», «Ջամբար բեկ», «Միրզա աղան Թելի Այշան», «Քուլլքը ու Կառո», «Այամանթ», «Սիյաբանտո ու Խաճէ Զեռին», «Ռոշք», «Մամ ու Զին», «Եզդի Դեվրիշ Ավդի», «Սևհաջե», «Համե Մուսե», «Նաչար օղլի», «Ցուսեփ ու Զալիխա», «Մոլլա Մուսա Սայրոն» և այլն: Իրավամբ պետք է նշել, որ այս վիպերգերը առաջին անգամ գրի են առնվել Հայկունու կողմից և մշակութային մեծ արժեք են ներկայացնում:

Հեղինակը, քաջ տիրապետելով քրդերենին, մի շարք ստեղծագործություններ, ինչպիսիք են «Լեյլի ու Մեջլում», «Հայդարանցի Ալի աղայի և եզդի Քոք աղայի պատերազմը», «Քուլլքը ու կեառո», «Մամ ու Զին», «Սևահաջե», «Համուտե Շանկե», «Համե Մուսե» վիպերգերը, գրի է առել քրդերեն և հետագայում թարգմանել հայերեն, իսկ մնացած ստեղծագործությունները հեղինակը գրի է առել հայ բանասացներից հենց հայերեն, Մոկաց, Արճեշի, Խլղաթի, Վանի և այլ բարբառներով ու տպագրել վերը նշված հատորում: Այս ամենը հեղինակը կատարել է գիտնականի բարեխղճությամբ, որոշ քրդական բառերի մեկնաբանություններով ու բացատրություններով, ըստ որում, տրված են այն բանասացների անունները, որոնցից նա գրի է առել: Սույն հատորը ոչ միայն գիտական մեծ արժեք է ներկայացնում,այլև մեծ ներդրում է քրդական մշակութային կյանքում և արժանի է հատուկ ու-

սումնասիրության: Ինչպես Գ. Խալաթյանն է նշում գրքի առաջաբանում, «Քրդական վեպերը՝ պետք է ասել, որ դոցա բովանդակությունը առած է իրական կյանքից, շատերը նոցանից ճշտությամբ կատարած իրողություններ են, ուստի և արժանի են առանձին ուշադրության՝ ինչպիսի ճշգրիտ պատկերներ քրդերի նիստուկացի, սովորությունների և հավատալիքների»:

Իսկ «Էմինեան ազգագրական ժողովածուի» Զ հատորում, որը լույս է տեսել 1906 թվականին Մոսկվա-Վաղարշապատում, զետեղված են Ս. Հայկունու կողմից հավաքած քրդական երգեր, առածներ, ասացվածքներ, հանելուկներ, երդումներ, օրհնանքներ, անեծքներ և այլն: Հեղինակն իր այս նյութերը հավաքել է Հայաստանի գավառներից, գրի է առել այն բարբառներով, որով տվյալ գավառի ժողովուրդն է խոսել: Հետաքրքրական է այն, որ Ս. Հայկունին, ինչպես հայկական, այնպես էլ քրդական ժողովրդական բանահյուսության և ազգագրության նյութերը հավաքելիս, միշտ հղում է արել, թե որոնք են տեղեկատվության աղբյուրները, այսինքն, անուններով, բնակատեղերով նշել է այն անձանց, ումից լսել, գրի է առել այս կամ այն երգը, հեքիաթը, ասացվածքը կամ ազգագրական այս կամ այն նյութը: Նա միևնույն ժամանակ օգտագործել է իր ձեռքի տակ եղած գրավոր աղբյուրները, որով ևս մեկ անգամ ապացուցվում է այդ նյութերի իրական արժեքը:

Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում հայ-քրդական բանահյուսությունը, ազգային սովորությունները, սերնդեսերունդ փոխանցվելով, երկու ժողովուրդներին էլ հավասարապես հարազատ են դարձել: Նրանք երգում և պատմում են թե՛ քրդերեն, թե՛ հայերեն: Հայկունին, անդրադառնալով հայ-քրդական բանահյուսական փոխազդեցություններին, տարբեր գավառներից օրինակներ է բերում, թե ինչպես երկու ժողովուրդները նույն երգը հավասարապես երգել են ինչպես հայերեն, այնպես էլ քրդերեն: Այս առթիվ Հայկունին, Ալաշկերտի գավառից բերելով մի օրինակ, գրում է. «Ալաշկերտում հարսնացուի ծամերը քսան և չորսի են բաժանվում և ամեն մի ծամ հյուսելիս մի երգ է ասում հավաքված աղջիկներից ամեն մեկը. առաջին երգը ասում է աղջիկների ազապլաշին (պարագլուխը) հայերեն, երկրորդ ծամի հյուսը երգում են քրդերեն և այսպես փոխեփոխ՝ հայերեն և քրդերեն: Երբ ավարտում են ծամերը հյուսելը, սկսում են պարել»:[206]

Այսպիսով, հեղինակը ցույց է տալիս երկու ժողովուրդների մշակույթների կապերը, որոնց հիմքում սոցիալ-տնտեսական խոր արմատներ կային: «Զ» ժողովածուի մեջ զետեղված են նաև հեղինակի կողմից քրդերենով գրի առնված (Ալաշկերտի հայդարանցիների բարբառով) և հայերեն թարգմանված քրդական 240 առած, 62 անեծք, 21 օրհնանք, 53 երդում, 4 շուտասելուկ և քուրդ-եզդիների 6 երդում:

Հայկունին, խոսելով հայ-քրդական առածների մասին, գրում է. «Ինչպես երգն, այնպես էլ բարոյական առածները բազմաթիվ են և կպարունակեն ընտիր մտքեր: Եթե բաղդատություն դնենք հայ առածները քրդերեն առածներու հետ, քիչ տարբերություն կգտնենք, իսկ թուրքերենը պարսկերե-

նու հետ չի կարելի համեմատել, նոցա առածները բոլորովին անբարոյական խոսքերով կասեն, քիչ բացառությամբ»:[207]

Մեկ այլ տեղ, խոսելով քուրդ-եզդիներից գրի առածների մասին, նա գրում է. «Գայլատվո արևմտյան կողմի լեռներու մեջ 15-20 գյուղ եզդի ժողովուրգներ կան, սոքա ունին, որպես քրդեր, անհաշիվ իմաստալից առածներ, որոնցմե գրի առած եմ 1892 թ. ներկա առածները, հոգ տարած եմ բառ առ բառ թարգմանել, որպեսզի բնագրին հավատարիմ մնամ: Առածները ժողովրդական կյանքի նկարագրություն են, ինչպես պիտի տեսնենք ընդարձակ մտքեր պարունակող բարոյական առածներ»:[208] Այնուհետև, խոսելով քուրդ ժողովրդի ստեղծագործական մտքի մասին, նա գրում է. «Անմիջապես մի առած կամ երգ ստեղծելը բնական դարձած է նոցա մեջ»:[209]

Վերը նշված ժողովածուում զետեղված են Հայկունու կողմից քրդերեն լեզվով գրի առնված մոտ 400 առածներ և եզդիական մի քանի դավիթ, երդումներ՝ իրենց հայերեն թարգմանություններ: Նա նաև կատարել է հայերենից քրդերեն թարգմանություններ: Պետք է նշել, որ հանրահռչակ բանահավաքը, ազգագրագետն ընտրել է, նախ, քրդական լավագույն առածները և կատարել ընտիր թարգմանություններ, որոնցում երևում է հեղինակի ինչպես հայերենի, այնպես էլ քրդերենի բացարձակ իմացությունը:[210] Սույն թարգմանություններն իրենց նպաստն են բերել նաև քրդերեն գրական լեզվի ստեղծման գործում: Իսկ եզդիների դավիթների և երդումների կարևորությունը կայանում է նրանում, որ Ս. Հայկունին ազգագրական հարուստ նյութերի հիման վրա մեկնաբանել է յուրաքանչյուրի իմաստը և մանրակրկիտ բացատրել, թե տվյալ երդումը և դավը ինչպե՞ս է առաջ եկել և ինչպե՞ս է իմաստավորվել քուրդ-եզդիների կողմից: Օրինակ, ինչո՞ւ է Մալակե Թաուսն ընդունվել որպես քուրդ-եզդիների պաշտամունքի բարձրագույն առարկա:[211]

Քրդական մշակութային հարցերի գնահատման տեսակետից հետաքրքրական է նաև Ս. Հայկունու «Բագրևանդ ջրաբաշխ գավառ» աշխատությունը:[212] Այս 384 էջանոց երկը բաղկացած է ճանապարհորդական նոթերից: Այն ուսումնասիրվող ժամանակաշրջանի մասին մի կարևոր աղբյուր է: Գրված է առկա բազմաթիվ աղբյուրների հիման վրա: Այստեղ մանրակրկիտ քննարկված են քրդական մշակույթին վերաբերող բազմաբնույթ հարցեր: Անդրադառնալով գավառի աշխարհագրական դիրքին, լեռներին, ջրերին, բնաշխարհին, հեղինակը նաև նկարագրում է գյուղերը, տալիս ազգաբնակչության սովորությունների բնութագիրը, ներկայացնում սոցիալ-տնտեսական վիճակը, մարդկանց զբաղմունքներն ու պաշտամունքը: Հիմնականում ներկայացված են գավառի հայերի, քրդերի և քուրդ-եզդիների փոխհարաբերությունները, սովորությունները: Աշխատության յուրաքանչյուր էջում տեղեկություններ կան քրդական ազգային սովորույթների, քրդական ցեղերի ու ցեղախմբերի, միջցեղային կռիվների մասին: Հետաքրքրական է, օրինակ, Միր Ջոպանի մասին հատվածը, թե ինչպես էր նա Ապաղայի ընդարձակ դաշտում տիրում քուրդ եզդիների 366 գյուղերի: Այնուհետև նկարագրված են նրա և մեկ այլ քրդական ցեղի, որը ղեկավարում էր Ալի փա-

շան, ընդհարումները և նրա գաղթը Արևելյան Հայաստան, ուր հաստատվում են Միրաք գյուղում (այժմ Արագածոտնի շրջանի գյուղերից է - Կ. Ջ.): Հետաքրքրական տեղեկություններ կան քրդերի զբաղմունքի և հայերի հետ նրանց առևտրական կապերի մասին:

Հեղինակն իր աշխատության երկու գլուխը նվիրել է քրդերին: Առաջինը կրում է «Ծաչլուայ Քավիշանի մեջ քուրդ գյուղերը» խորագիրը, իսկ երկրորդը վերնագրված է «Մասնավոր տեղեկություններ Անդաբ գոնվող քուրդ ցեղերու վրայ»: Վերջին գլխում խոսվում է քրդական սիպկցի, հայդարանցի, հասանցի, զիլանցի և այլ ցեղերի, նրանց ծագման մասին, համեմատություններ են անցկացված հայկական հին իշխանական տների հետ:

Ինչպես նշեցինք, մեծ է Հայկունու դերը քուրդ ժողովրդի ազգագրական հարցերի ուսումնասիրման բնագավառում: Շրջելով քրդերի մեջ, մասնակցելով նրանց ուրախության, սգի արարողություններին և տարբեր ծիսակատարություններին, նա խորապես ուսումնասիրել է դրանք, գրի առել և իր հնարավորության սահմաններում տպագրել հայկական պարբերական մամուլում: Քրդական խայտաբղետ, իր գեղեցկության մեջ անկրկնելի հարսանեկան արարողությունը նկարագրելիս՝ երևում է նրա ջերմ վերաբերմունքն այդ յուրատեսակ արարողության նկատմամբ, որն սկսվում և ավարտվում է երգ-երաժշտությամբ: Նա ազգագրագետին բնորոշ խորաթափանցությամբ անդրադարձել է պարեղանակներին ու երաժշտությանը, դրանք համեմատել հայկականների հետ:[213]

Նա իր մեկ այլ, առավել հետաքրքիր հոդվածում կանգ է առնում հայ և քուրդ ժողովուրդների պատմական անցյալի, նրանց ազգային սովորույթների ու փոխազդեցությունների վրա:[214] Ս. Հայկունին քուրդ ժողովրդի պատմությանն ու ազգագրությանը վերաբերող տեղեկություններով հարուստ նյութեր է մատուցում իր «Ուղեգնացական ակնարկներ» ծավալուն հոդվածում, որն իր բարձրացրած հարցերի բազմազանությամբ, քանակով ու մեկնաբանությունների բնույթով քրդագիտությանը վերաբերող լուրջ և ծանրակշիռ աշխատանք է:[215]

Հայկունին լավատեղյակ էր քրդական երաժշտությանը, որը հոգեհարազատ էր նրան և, ինչպես ինքն է վկայում, ազատ երգում էր քրդերեն: Նա քրդական երաժշտությունը համարում էր ինքնատիպ, բազմաբովանդակ, այնպիսի մի երաժշտություն, որում արտահայտված են քուրդ ժողովրդի հնագույն պատմությունը, հերոսական անցյալն ու սխրանքները: Այդ տեսակետից հետաքրքիր են նրա «Երաժշտական» և «Վանա սալ» հոդվածները, որոնք տպագրվել են 1885 թվականին «Մեղու Հայաստանի» 25 և 26 համարներում:

Հայկունին հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում նաև Դերսիմի քրդերի ազգագրության ու բանահյուսության, սոցիալ-տնտեսական վիճակի մասին, վերհանում հայ-քրդական հարաբերությունները, հերոսական համատեղ պայքարը թուրքերի դեմ: «Դերսիմ» ծավալուն ու արժեքավոր հոդվածն իր բնույթով պատմական, ազգագրական, գրականագիտական

խոր ուսումնասիրություն է Դերսիմի քրդերի մասին:[216] Հայկունին Դերսիմի մասին ոչ միայն նկարագրական տեղեկություններ է հաղորդում, այլև պատմագիտական փաստերը հակադրում է իրար, գիտական վերլուծության ենթարկում, նոր միայն ներկայացնում իր եզրահանգումները: Ճիշտ է, Դերսիմի քրդերի ծագման և հայ-քրդական հարաբերությունների շուրջ երբեմն նրա մոտեցումներն այնքան էլ ընդունելի չեն, սակայն, ինչպես այս հոդվածը, այնպես էլ նրա մյուս հոդվածներն արժեքավոր են քուրդ ժողովրդի պատմության, հատկապես մշակութային պատմության հարցերն ուսումնասիրելիս;

Ս. Հայկունին իր «Թագավոր Լուսիկ և Լմետեի Հովիկ» վիպակում կրկին նկարագրում է Դերսիմի դիրքը, բնաշխարհը, քրդերի միջցեղային կռիվները, հարսանիքները, ծիսակատարությունները:[217] Իսկ Մոքսի գավառի քրդերին նա անդրադարձել է իր «Մոքսի ժողովրդական վեպ» գրքույկում:[218] Այս աշխատությունից պարզվում է, որ հեղինակը երկար տարիներ զբաղվելով քրդական բանահյուսությամբ և ազգագրությամբ, գրի է առել մի շարք արժեքավոր գործեր, որոնց մի մասը չի տպագրվել, պահպանվում է նրա արխիվում:[219]

Ամփոփելով հայ մեծ բանահավաքի ու ազգագրագետի գործունեությունը պետք է նշել, որ նա անգնահատելի աշխատանք է կատարել քրդական մշակույթի, հատկապես բանահյուսության ու ազգագրության հարցերի լուսաբանման գործում: Համոզված ենք, որ նրա կողմից քննարկված հարցերը նորություն էին քրդագիտության մեջ: Նա հայ այն մտավորականներից էր, ովքեր հայ-քրդական բարեկամության մեջ առավել մեծ տեղ էին հատկացնում մշակութային կապերին, այդ երկու ժողովուրդների բարեկամության արմատները փնտրում նրանց մշակույթների պատմության մեջ՝ հավատացած լինելով, որ հատկապես մշակութային հարաբերություններն են այն դրական գործոնը, որը մշտապես նպաստել է և հետագայում էլ կնպաստի բարեկամության ամրապնդմանը: Հայկունու ցանկացած աշխատություն իսկապես կարելի է համարել քրդական մշակույթի հանրագիտարան:

Ս. Հայկունու գրառած բոլոր նյութերը ոչ միայն գիտական տեսանկյունից են արժեքավոր, այլև հիմնված են իրական դեպքերի և օբյեկտիվ իրադարձությունների վրա: Նա եղել է ականատես ու դեպքերի մասնակից: Նրա մի շարք հոդվածներ կարող են ծառայել որպես քուրդ ժողովրդի պատմության, բանահյուսության ու ազգագրության պատմական սկզբնաղբյուրներ: Քրդերենով նրա կողմից գրի առնված ժողովրդական բանահյուսության նմուշներն ու դրանց հայերեն գեղեցիկ թարգմանությունները կարելի է համարել քրդերեն գրավոր առաջին գործերը: Նա խորությամբ ընկալել և բարձր է գնահատել քուրդ ժողովրդի հարուստ մշակույթը, հատկապես բանահյուսությունը: Հանրաճանաչ քրդագետ պրոֆեսոր Հաջիե Ջնդին այս առթիվ գրում է. «Բանահավաքի այս շնորհակալ աշխատանքը պետք է կապել այդ ստեղծագործությունների առաջավոր գաղափարների ու գեղարվեստական բարձր արժեքների ճանաչողության ու գնահատման հետ»:[220]

Հայկունին իր ողջ հոգով ու էությամբ կապված է եղել քուրդ ժողովրդի հետ, եղել է նրա ազնիվ բարեկամը: Հոր մարդասիրական, գեղեցիկ ավանդույթներին, բնականաբար, հավատարիմ մնաց նրա որդին՝ գրականության ավագ սերնդի ակնառու ներկայացուցիչ Գուրգեն Հայկունին: Մանկությունն անցկացնելով Թոփրակ Կալեում, որտեղ հայերն ու քրդերը ապրում էին կողք կողքի, նա կատարելապես տիրապետել է քրդերենին, տոգորված է եղել հայ-քրդական բարեկամության գաղափարներով և, վերջապես, ծանոթ լինելով հոր ծավալուն գործունեությանը, հետագայում իր ստեղծագործություններում կարողացել է գեղարվեստական նուրբ ոճով մատուցել հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, արտահայտել իր ջերմ վերաբերմունքը քրդական մշակույթի նկատմամբ: Այդ գործերի թվում առանձնապես աչքի են ընկնում նրա «Ցասում և սեր» վիպակն ու «Մշեցի Հովհաննեսը» պատմվածքը:[221]

«Ցասում և սեր» վիպակն ամբողջովին նվիրված է քուրդ ժողովրդի անցյալին, նրա հերոսամարտերին: Վիպակն ունի ռեալիստական բովանդակություն, որի հիման վրա հեղինակին հաջողվել է ներկայացնել քուրդ ազատամարտիկների հերոսական պայքարը թուրքական բռնապետության դեմ և հայ մտավորականների աջակցությունն այդ ազատագրական պայքարին:

Գուրգեն Հայկունու յուրաքանչյուր տողում երևում են ականատես գրողի խորը ապրումները, քուրդ ժողովրդի կյանքից ու կենցաղից քաջատեղյակ լինելը: Վիպակն ունի ճանաչողական նշանակություն: Այստեղ, բացի հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության գաղափարից, որը կարմիր թելի պես անցնում է ողջ ստեղծագործությունով, նա ամենայն ճշգրտությամբ ու մանրակրկիտ նկարագրել է քուրդ ժողովրդի ազգագրությանը վերաբերող որոշ մանրամասներ, ինչպես օրինակ՝ ազգային տարազը: Իսկ քրդական բառուբանի գործածումը յուրահատուկ համուհոտ է հաղորդում վիպակին: Անդրադառնալով հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությանը, Հայկունին գրում է. «Թուրքիայում մահվան դատապարտված հայ թշվառ ժողովուրդը, իր հայրենական օջախներից հրով ու սրով վտարված և փախստական դարձած, կյանքի ու մահու կռիվով եկել հասել էր մինչև Գոզալ-Բաբասարը, այնտեղից էլ իջել էր Գոզալ հայ գյուղը՝ քուրդ Բաբայի հովանավորությունը ապավինելու»:[222] Այնուհետև հեղինակը պատմում է, թե ինչպես են հայերը ապաստան գտնում քրդերի մոտ, և վերջիններս ամեն ինչ անում են, որպեսզի փրկեն հայերի կյանքը, իսկ քուրդ Բաբան, ինչպես հեղինակն է նշում, «պատրաստ էր իր կյանքը զոհել հայերի համար»: Բայց, դժբախտաբար, թուրքական կառավարությունը շուտով իմանում է հայ-քրդական այս փոխհարաբերությունների մասին և նպատակադրվում զինված ջոկատներ ուղարկել Գոզալ: Այդ մասին տեղեկանալով՝ Բաբան հրավիրում է հայ և քուրդ ղեկավարներին, հայտնում նրանց թուրքական կառավարության մտադրությունը և որոշում Գոզալում կենտրոնացված հայ փախստականությանը մաս-մաս գաղտնի ուղարկել Արևելյան Հայաստան, ուր գտնվում էր ռուսական բանակը: «Եվ անխոնջ, հոգատար Բաբան իր ուղեցույց-բա-

լադների հետ խումբ-խումբ ճամփա դրեց հայերի բազմությունը դեպի Ալաշկերտ՝ Սվրկ, Խանըկ, Դերեկ գյուղերը»:[223]

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը գեղեցիկ կերպով արտացոլված է նաև նրա «Մշեցի Օվանեսը» պատմվածքում: Այստեղ իրական փաստերի հիման վրա ներկայացված են երկու բախտակից ժողովուրդների համատեղ կյանքի, հավատարմության ու փոխօգնության բազմաթիվ դրվագներ:

Հոր՝ Սարգիս Հայկունու երազանքը՝ տեսնել քուրդ ժողովրդի ազատությունը, մշակութային առաջընթացը, իրականացավ Գուրգեն Հայկունու օրոք: Նա տեսավ Հայաստանում քուրդ ժողովրդի մի փոքր հատվածի առաջընթացը և, մարդասիրական գաղափարներով ներշնչված, գրեց հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության մասին իր այդ երկու ստեղծագործությունները, որոնցից այսօր կարող են նյութեր քաղել ոչ միայն մեր պատմաբանները, այլև բանահավաքներն ու ազգագրագետները:

Հայ մտավորականության ականավոր ներկայացուցիչների շարքերը համալրում է լրագրող Եր. Ֆրանգյանը, որը բացի հայ ժողովրդի պատմության հարցերով զբաղվելուց, թղթակցում էր «Մուրճ» ամսագրին: Ֆրանգյանը հետաքրքրվել էր նաև հարևան ժողովրդի կյանքով, նրա պատմությանը վերաբերող բազմաթիվ հարցերով, հատկապես Պարսկաստանում ապրող քրդերով: Նա Պարսկաստանում տեղի ունեցող քրդական շարժումների մասին «Մուրճ» ամսագրում հաճախակի է հանդես եկել բազմաբովանդակ հոդվածներով, բացատրել դրանց պատճառները, ցույց տվել քրդերի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, ներկայացրել հայ-քրդական հարաբերությունները: Այս տեսանկյունից հետաքրքրական է նրա «Պարսկաստանի քրդերը» ծավալուն հոդվածը:[224] Սույն հոդվածում մանրամասնորեն կանգ է առել Սալմաստի քրդերի սոցիալ-տնտեսական վիճակի, Ջաֆար աղայի և նրա համախոհների գործունեության ու հայ քրդական հարաբերությունների վրա: Իսկ «Խոյի գավառի ներկա վիճակը» հոդվածում նա բարձրացրել է հայ-քրդական բարեկամական հարաբերություններն ամրապնդելու հարցը: Մանրամասն ցույց տալով քրդախոս հայերի նիստուկացն ու նրանց փոխհարաբերությունները քրդերի հետ, նա արծարծել է ինչպես քրդախոս հայերի, այնպես էլ քրդերի շրջանում լուսավորություն տարածելու անհրաժեշտությունը, տվել կենցաղային հարցերի նկարագիրը:[225]

Եր. Ֆրանգյանն իր ուսումնասիրություններում բազմիցս անդրադարձել է քրդական մշակույթին, հատկապես քրդական երաժշտական բանահյուսությանը: Նա ուսումնասիրել ու մեկնաբանել է քրդերի պաշտամունքին և ծիսակատարություններին վերաբերող մի շարք հարցեր: Իր «Ատրպատականի կյանքից» հոդվածում նա գրում է. «Քրդերն ունեն խորը զգացված ժողովրդական երգեր: Երգն է քրդերի միակ գրականությունը, ամբողջ վեպեր, դրամաներ է երգում քուրդ ժողովուրդը»:[226] Այս ծավալուն հոդվածը, իր բազմաբովանդակ բնույթով, քրդագիտական ոլորտում լուրջ ուսումնասիրություն է: Հեղինակը մանրամասն կանգ է առել քրդերի պատմական տա-

բածքի, սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակի, հայ-քրդական հարաբերությունների նկարագրության վրա: Այս հարցերի վերաբերյալ հետաքրքիր նյութեր են պարունակում նաև «Պատիժները Պարսկաստանում» և «Պարսկաստանի ասորիները» հոդվածները, որոնք արժեքավոր են քրդագիտությանը վերաբերող բազմաբնույթ նյութերի առատության առումով և արժանի են ուսումնասիրման:

Ֆրանգյանը հետագայում, ի մի բերելով Պարսկաստանում ապրող հայերի և քրդերի մասին իր ուսումնասիրությունները, գրել է «Ատրպատականն» արժեքավոր աշխատությունը:[227] Հեղինակը բավականին նյութեր է հավաքել անասնապահական կյանքով ապրող քրդերի սոցիալ-տնտեսական վիճակի, հայկական տարածքներ նրանց գաղթելու ժամանակի և հանգամանքների, բազմաթիվ այլ մանրամասների վերաբերյալ: Տպավորիչ են հայերի կողմից քրդերին ցուցաբերած օգնության մասին բերված փաստերը: Հեղինակը մասնակիորեն անդրադարձել է նաև քուրդ ժողովրդի ազգագրությանն ու բանահյուսությանը, տվել իր պարզաբանումներն ու գնահատականը:

Խոսելով քրդական հասարակական-քաղաքական հոսանքների մասին, որոնք, ըստ նրա, սկսել են հանդես գալ 20-րդ դարի սկզբին, հեղինակը հիմնականում կանգ է առել հայ մտավորականության, «Քուրդիստան» թերթի և «Քուրդ երիտասարդների միության» համագործակցության վրա, որը նոր խթան է հանդիսացել քրդական մշակույթի զարգացման, հայ-քրդական փոխհարաբերությունների ամրապնդման գործում: Գրքում հետաքրքրական տեղեկություններ կան հատկապես Պարսկաստանի քրդերի սոցիալ-տնտեսական վիճակի, քրդական ցեղերի ու ցեղախմբերի մասին: Խոսելով Սոուջբուլաղի և Սոմայի գավառի քրդերի մասին, նա ուղղակի նշել է, որ այդ երկու գավառներում կան մոտ 700 քրդական գյուղեր, որ այդտեղի քուրդ բնակիչները զորեղ են, գրեթե՝ ինքնավար [228]: Հեղինակը պատկերել է նաև այս գավառներում հայ-քրդական հարաբերությունները, պարզաբանել պարսկական ու թուրքական կառավարությունների քաղաքականության էությունը, որի նպատակն էր երկու ժողովուրդներին միմյանց դեմ հրահրել: Խոսելով Սոուջբուլաղի և Սոմայի հայերի մասին, նա գրում է. «Չկա մի քրդական գյուղ, ուր չլինի մեկ կամ երկու հայկական տուն... հետզհետե տարիների ընթացքում ազդվել են նրանցից, ընդօրինակել, ընդունել են նրանց սովորությունը, միանգամայն կերպարանափոխվել, նույնիսկ արտաքինը...»:[229] Այնուհետև նա կանգ է առել երկու հարևան ժողովուրդների երգ-երաժշտության վրա, ցույց տվել նմանությունները, փոխազդեցությունները: Ֆրանգյանի կողմից այս և նման այլ հարցերի լուսաբանումը նպաստում է ինչպես հայ-քրդական կապերի ընդլայնմանը, այնպես էլ քրդական մշակույթի լավագույն էջերի ներկայացմանը, որոնցում առայսօր ուսումնասիրման ենթակա բազում նյութեր կան:

Փոխառելով հայ մշակույթի գեղեցիկ ավանդույթները և խորապես գիտակցելով հայ և քուրդ ժողովուրդների դարավոր բարեկամական կապերի

օգտավետությունը, պատմաբան, ազգագրագետ և մանկավարժ Հմայակ Ա-բրամյանցը (Մ. Տ. Շվոտ) իր բազմաթիվ հոդվածներում ու գրքերում համակողմանի անդրադարձել է քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը, բանահյուսությանը և հատկապես հայ-քրդական հարաբերությունների հարցերին, վեր հանել հայերի և քրդերի նկատմամբ Թուրքիայի վարած նենգամիտ քաղաքականության էությունը: Սույն հարցերը պարզորոշ ներկայացված են նրա «Թուրքիոյ ընդդիմադիր տարրը» գրքույկում, որը լույս է տեսել 1908թ.: Քննադատելով երիտթուրքերի կառավարության քաղաքականությունը, նա կոչ է անում Թուրքիայում ապրող ժողովուրդներին՝ հայերին, քրդերին, ասորիներին, չհավատալ այդ կառավարության թղթային անհիմն խոստումներին, լինել միասնական:

Սակայն ուսումնասիրությունում բարձրացված հարցերի տեսանկյունից առավել ուշագրավ է նրա «Քրդերը Տաճկաց Հայաստանում» աշխատությունը, որը հրատարակվել է 1905թ. Պետերբուրգում: Գիրքը զուտ ազգագրական բնույթի արժեքավոր աշխատություն է: Պետք է նշել, որ 20-րդ դարի սկզբին ոչ մի հայ մտավորական այնքան մանրամասն չի անդրադարձել Թուրքիայի քրդերի ազգագրության հարցերին, որքան Հ. Արամյանցն իր այս աշխատությունում: Գիրքը բաղկացած է 218 էջից, ունի առաջաբան և բաժանված է տասը գլուխների, իսկ յուրաքանչյուր գլխում կան քրդական հարցին վերաբերող բազմաթիվ ենթագլուխներ: Հեղինակը հիմնականում անդրադառնում է քրդերի պատմական անցյալին, կենցաղին, հատկապես տարածքին ու ծագմանը: Բարձրացված հարցերը վկայում են, որ հեղինակը լավատեղյակ է քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանն ու բանահյուսությանը: Նա երկար ժամանակ եղել է քրդերի մեջ, մանրակրկիտ ուսումնասիրել նրանց նիստուկացը, բանահյուսությունը: Ուսումնասիրված նյութերը ցույց են տալիս, որ նա քրդագիտական մի շարք աշխատությունների և հայկական պարբերական մամուլում տպագրված հոդվածներին ծանոթանալուց հետո է միայն այդ ամենը ամփոփել և շարադրել իր այս արժեքավոր աշխատությունը: Ճիշտ է, քրդերի ծագման և հայ-քրդական հարաբերությունների վերաբերյալ կան որոշ իրարամերժ և ոչ համոզիչ կարծիքներ, այնուհանդերձ, «Քրդերը Տաճկաց Հայաստանում» աշխատությունը քուրդ ժողովրդի ազգագրությունն ընդհանրացնող, փաստերով ու նորահայտ աղբյուրներով հարուստ մի ուսումնասիրություն է: Նա առանց վերապահումների, անկեղծորեն անդրադարձել է քրդերի կյանքին. «Ծնված լինելով Տաճկական Հայաստանի քրդաշատ մի նահանգում (Բալու-Դերսիմ) և 16 անմոռանալի թվանկագին տարիներ ապրած լինելով քրդերի մեջ, թե՛ գյուղերում, թե՛ Բալու քաղաքում, թե՛ ամառանոց-յայլաներում, թե՛ սարերի վրա, թե՛ պատերազմական վայրերում, անչնչելիորեն մեխված, դրոշմված են հիշողությանս մեջ իմ սիրելի հայրենակից քրդերի կյանքեն բավական բաներ, որոնք գրի առնելս ու առանձին գրքույկով հրատարակելս ոչ միայն անօգուտ չեմ գտներ, այլև դեռ կվստահեմ ասել, որ ներկա և հետագա աշխատություններս իրենց վերին աստիճանի հավատարմությամբ ու

ճշգրտությամբ ծառայելու են որպես պատվական ատաղձներ քրդական կյանքը գիտականորեն ուսումնասիրողների համար»:[230]

Այնուհետև, անդրադառնալով հայ-քրդական կապերին և նրանց կենցաղի փոխազդեցություններին, հեղինակը գրում է. «Տաճկահայաստանի աշխարհագրական դիրքը և դարավոր հայրենակցությունը հայ և քուրդ տարրերի միջև ստեղծել են հարաբերական այնպիսի գծեր, որոնք այդ երկու տարրերին շատ բանով դարձրել են համանման, միատիպ: Կենցաղավարական պայմանները, փոխհարաբերությունները այնպիսի ազդեցություն են գործել հիշյալ ժողովուրդների հոգուն ու մարմնի վրա, որ այսօր Տաճկահայ ազգագրության մասին խոսելիս ես կդժվարանամ նույնիսկ հավատալ, թե այդ կարող է կատարյալ լինել առանց քրդական ազգագրության»:[231]

Խոսելով քրդերի պաշտամունքի մասին, հեղինակը նշում է, որ նրանք մահմեդականներ են, հետևաբար կարող էին ավելի մոտ հարաբերության մեջ լինել թուրքերի հետ, սակայն իրականում հակառակն է. «Չնայած տաճիկների ու քրդերի մեծամասնության դավանակցության, նրանց առօրյա կյանքը, նիստուկացը, ավանդական սովորությունները բոլորովին տարբեր են, հաճախ այդ իսկ զանազանությունները տեղիք կուտան երկսի մեջ սուր արյունահեղ ընդհարումների»:[232]

Հայ-քրդական հարաբերությունների մասին խոսելիս, հեղինակը աչքաթող չի արել այն հանգամանքը, որ թուրքական կառավարությունը ճգնում էր սրել դրանք և ամեն կերպ աշխատում էր իր կողմը գրավել քրդերին, սակայն, վերջինիս ջանքերը քրդերի շրջանում հակառակ արդյունքի էին հանգեցնում: «Դա այնպիսի լուրջ հանգամանք է, որ ընդհակառակը փառավորապես բացեց քրդու աչքը և այդպիսով գցեց կարմիր փադիշահի և դրա հետ էլ տաճիկ ազգի վարքը քրդուն մոտ»:[233] Մյուս կողմից, պատկերելով քուրդ ժողովրդի դառը ճակատագիրը և մատնանշելով մեծ ու փոքր տերությունների քաղաքականությունը քրդերի նկատմամբ, հեղինակը գրում է. «Ինչ անե քուրդը, ո՛մ ապավինի, ո՛մ դիմե, որի՞ն իր ցավը- դարավոր ցավը պատմե և դեղ խնդրե ... Քուրդին կմնա կամ իր կուրծքով պաշտպանություն գտնել և կամ, եթե անհնար է այդ, համակերպվել ճակատագրի հետ, մինչև որ ժամանակը մի հեղաշրջում առաջ բերե»:[234]

Անդրադառնալով քրդերի զբաղմունքի խնդրին, նա հակադրվում է մի շարք այլ հեղինակների, միանգամայն ճիշտ բնութագրում նրանց, բաժանում նստակյացների և կիսաքոչվորների: Վերջիններիս համարում է ոչ թե քոչվորներ, այլ՝ խաշնարածներ: Այս առթիվ գրում է. «Միանգամայն սխալ է շատերի այն կարծիքը, թե քրդերը հաստատ բնակություն չունեն: Ես կասեմ ընդհակառակը, որ քրդերը իսկական թափառաշրջիկներ չունեն, ինչպես բոշաներն են, գնչուները: Նստակյաց քրդերը կպարապին գլխավորապես հողագործությամբ, անասնապահությամբ և կամենատեսությամբ: Երկրորդ ճյուղին կպատկանին խաշնարածները, որոնք իրենց զբաղմունքի, պահանջների համաձայն ստիպված են տարվա եղանակների հետ փոխել և իրենց բնակավայրերը, ու այդ իսկ պատճառով էլ կոչվեցին նրանք կիսա-

թափառաշրջիկներ»:[235]

Հ. Աբամյանցը, բազմակողմանի ուսումնասիրած լինելով քրդական բանահյուսությունը, այդ մասին, ինչպես նաև քրդական ժողովրդական երաժշտության մասին խոսելիս, բարձր գնահատական է տալիս դրանց. «Քուրդը բոլորովին անձնատուր կլինի զավալի (հոգևորականության պատվիրակ - Կ. Ջ.) մելամաղձոտ եղանակներին, երբ նա այդ թեև պարզ, բայց իսկապես հրաշալի գործիքով կդիպչացնե:[236] Այնուհետև նա գրում է. «Քուրդը կդյութե ունկնդրին իրա՝ խոսակցության արվեստականությունե ազատ և բնականեն գեղեցիկ դարձվածքներով, համեմված առասպելախառն, հրաշազարդ և անհեթեթ կատորներով, որոնցով նա իր հերոսներին կբարձրացնե մինչև յոթներորդ երկինքը և եթե հակակրելի, բացասական տիպ է պատմվածքի հերոսը, - մինչև դժոխքի անտակ անդունդը կգցե»:[237]

Ազգագրության համար հետաքրքրական է այն բաժինը, որում հեղինակը անդրադառնում քրդական գյուղերի և տների կառուցվածքին, մանրակրկիտ նշում նրանց կառուցման ձևերն ու եղանակները, նույնիսկ առանձին քրդերեն բառերի բացատրությամբ միանգամայն ճիշտ նկարագրում քրդական բնակարանում եղած կահկարասին: Նկարագրելով քուրդ խաշնարածների հյուղերն («զեմլյանկա» - Կ. Ջ.) ու վրանները, դրանց կառուցման, պատրաստման ու տեղադրման եղանակները, հեղինակը թվարկում է նաև այն տան կամ վրանի մեջ գտնվող բոլոր առարկաները, կահկարասին:

Խոսելով երկրագործության և երկրագործական գործիքների մասին, հեղինակը նշում է, որ քրդերի մեջ պարզ, հասարակ գործիքներով կիրառվում էր ձեռքի աշխատանքը: «Քրդերը կցանեն գարի, կորեկ, կկիչլ, ցորեն, եղիպատացորեն, ոսպ, սիսեռ, լոբի, քնջութ, կտավատ, սեխ, ձմերուկ, վարունգ, դդում, պղպեղ և այլն, իսկ քրդերի այգիներում ու պարտեզներում դուք կհանդիպեք հետևյալ ծառերը. տանձենի, խնձորենի, ծիրանի, թզենի, նշենի, սերկևիլենի, դեղձենի և այլն:[238] Սույն մեջբերումը ևս մեկ անգամ հաստատում է հեղինակի այն հավաստումը, որ քրդերը նաև լավ հողագործներ ու այգեգործներ են եղել, նաև զբաղվել են որսորդությամբ ու ձկորսությամբ: Որսորդության կապակցությամբ շեշտված է, որ քրդերի մոտ տարածված է եղել հատկապես ձկորսությունը, ընդ որում «Քրդերը ձկորսության վրա կնայեն լոկ որպես զվարճության միջոց»:[239]

Հեղինակը մանրակրկիտ անդրադառնում է քրդի և քրդուհու գեղեցիկ տարազին, զենքին ու նրա օգտագործման եղանակներին: Նա նշում է, որ ձին ու զենքը քրդերի անբաժան ընկերներն են և նրանց համար շատ թանկ են: Իր արժեքավոր գրքի վերջում հեղինակը, զուտ ազգագրական նկատառումներով, մեջբերում է քրդական մի քանի ասացվածքներ, որոնք էլ ավելի գունեղ են դարձնում պատկերը: Ըստ էության, հայ քրդագիտության մեջ Աբովյանի ուսումնասիրություններից հետո Համայակ Արամյանցի այս աշխատությունը քուրդ ժողովրդի ազգագրության ու բանահյուսության ուսումնասիրման համար ճշգրտված և գիտական արժեքավոր փաստերով հարուստ առավել հավաստի աղբյուր է և արդյունք է նրա խորը ու բազմակողմանի

պրպտումների, տաղանդի ու քաղաքացիական պարտքի վեհ զգացողության:

Համայակ Արամյանցն իր հաջորդ՝ «Արամը» գրքույկում (Պետերբուրգ, 1905թ.) անդրադարձել է հայ-քրդական հարաբերություններին, առավել մանրամասն կանգ առնելով Բալուի գավառի հայերի և քրդերի առնչությունների վրա: Հանձինս Նաջարյան գյուղի մելիք Միսակի, հեղինակը գեղարվեստական նուրբ գեղումներով ցույց է տվել հայ ժողովրդի բարյացակամ վերաբերմունքն ու օգնությունը քրդերին, հատկապես նրանց հողի հետ կապելու համար գործադրված միջոցները: Նաև ներկայացված են հայերի ու քրդերի միջև տեղի ունեցող հակամարտություններն ու դրանց պատճառները:

Արամյանցի գեղարվեստական գործերից է 1903 թ. Փարիզում հրատարակված «Քուրդ բեկը», որը ամբողջապես նվիրված է հայ-քրդական հարաբերություններին: Այստեղ ներկայացված է քուրդ ժողովրդի կենցաղը, առօրյան: Որպես քրդագետ Արամյանցի մեծությունը երևում է «Քրդերը Տաճկահայաստանում» աշխատության առաջաբանում արված նրա այն պարզաբանումից, որ ինքն ատիճանաբար գրել է և արդեն պատրաստ են «Քուրդ բեկի» ութ հատորները: Թերևս նա նկատի է ունեցել քրդերի կյանքին վերաբերող իր աշխատանքները, սակայն, մեր բոլոր պրպտումներից հետո էլ նրա չորս գրքերից բացի մյուսների ճակատագիրն անհայտ է մնացել: Համենայնդեպս, առկա գրքերը հայագիտության, առավելևս քրդագիտության համար մեծապես արժեքավոր են և արժանի մանրազնին ուշադրության: Հավելենք, որ լայնախոհ հայ մտավորականն իր մոնումենտալ գործերով հարստացրել է քրդական մշակույթը, բացահայտել առայսօր հետաքրքրություն ներկայացնող շատ հարցեր:

Քրդական մշակույթի պատմության մեջ իր ուրույն տեղն է գրավում մեկ այլ հայ նշանավոր մտավորականի՝ Սիմոն Վարդապետ Տեր-Մանվելյանի «Եզդի կուրմանջ» աշխատությունը, որը հրատարակվել է Ախալցխայում 1910 թվականին: Աշխատությունն ունի ինը ենթագլուխ և վերջաբան: Լինելով հոգևորականության ներկայացուցիչ, նա հետաքրքրվել է եզդիական կրոնով, դրա առանձնահատկություններով: Այստեղ հեղինակն անդրադառնում է քուրդ եզդիների ծագմանը, նրանց դավանանքին, ծեսերին, նախապաշարմունքներին, ազգային սովորույթներին, ավանդույթներին, նահապետական կենցաղին, բանահյուսությանը, մշակույթի տարբեր ճյուղերի, արժեքավոր տեղեկություններ տալիս քրդական դիցաբանության ու Քյուրդիստանի վերաբերյալ: Հիմք ընդունելով Խորենացու տեղեկությունները, միաժամանակ անդրադառնում է մարերի պատմությանն ու հայերի հետ նրանց փոխհարաբերություններին: Նա գտնում է, որ մարերը եզդի-կուրմանջիների նախնիներն են:[240]

Անդրադառնալով եզդիական կրոնին, Տեր-Մանվելյանը հաստատում է, որ առ այսօր այդ կրոնում պահպանվում են հեթանոսության նախնական տարրեր: Նրանց համար ընդունելի է միաստվածությունը: Նա գրում է. «Ու-

շագրավ է, որ միաժամանակ սորա (այսինքն՝ իրենց պաշտամունքի - Կ. Զ.) նման մարդավայել բարի զգացմունքներով տոգորված են հանձին անաղարտ պահպանության իրենց բոլոր ավանդական սովորույթների և նախնական կարգերի»:[241] Տարբերություն չդնելով քրդերի և եզդիների միջև, նա բարձր է գնահատում նրանց նահապետական պարզ կենցաղն ու բնավորությունը. «Կուրմանջին (կուրմանջին քրդական ամենատարածված բարբառներից է, որով խոսում են ինչպես մուսուլման քրդերը, այնպես էլ եզդի քրդերի գերակշռող մասը – Կ. Զ.) ի զարմանս անհողորդ կացել-մնացել է ընտանեկան սրբության ամենամեծ հիմքի վրա: Նա մի կին է առնում, որի հետ և սերտ կապվում է ցմահ՝ ամուսնական փոխադարձ գիտակցական սուրբ կապով, որոնք երդվում են, ուխտում են ապրելու իրենց վիճակված տան հարկի տակ՝ որպես այն տան հաստատության սյուներն և բեռնակիր զույգ ամրոններն»:[242] Այնուհետև, շարունակելով այդ միտքը, նա գրում է. «Եզդու համար անտանելի խորթ երևույթ է լսել անգամ կնոջ անբարոյականության, անհնազանդության համար հարուցված ապահարզանի խնդիրը, նա չի կարող երևակայել, թե կինը կարող է երբևիցե դավաճանել ամուսնուն անկողնու սրբությունը և իր մայրական սուրբ պատիվը, որովհետև միանգամայն համակված է ամուսնության վեհ խորհրդավորությամբ՝ ընդունում և հավատում է երկու անձի միջև ամփոփված մի հոգու գաղափարը»:[243]

Բարձր գնահատելով եզդուհու հոգևոր աշխարհը, նրա գեղեցկությունը, աշխատասիրությունն ու հերոսական բնավորությունը, նա գրում է. «Կուրմաջուհին միաժամանակ յուր ամուսնու գործակից անբաժան ընկերն է, թե՛ խաշնարածական և թե՛ դաշտային բոլոր մեծ և փոքր գործերում, բացի որսորդությունից, որ հատուկ է տղամարդոց: Կինն է յուր տան ներքին գործի տնօրենը, տերը, մայրը, դաստիարակիչը և ամենայն ինչ կարգադրողը և կատարողը»:[244]

Հայ մտավորականը գովաբանում է քրդական երաժշտությունը և բանահյուսությունը, որոնց մասին հանգամանորեն խոսելուց հետո ընդգծում է. «Նրանք (քրդերը - Կ. Զ.) սիրահար են բնության հրաշալիքին և առհասարակ գեղարվեստին, սիրում են շատ բլուրը (սրինգ) գործածությունը, պարը, երգը ... քրդական երգերը մեծամասամբ մելամաղձոտ են և տխուր»:

Հեղինակը նաև նշում է քուրդ ժողովրդի լավագույն ավանդույթներից մեկի՝ ժողովրդական բժշկության մասին, որը կարևորվում է ազգագրական հարցերի ուսումնասիրման մեջ. «Եզդին քաջ հմուտ է վիրաբուժության՝ նամանավանդ անդամահատության արվեստին, անծանոթ չեն նորան և ներքին հիվանդությունները՝ իրենց առաջացման պատճառներով հանդերձ, նրանց շատ լավ ծանոթ են բժշկական արմատները, բույսերը, ծաղիկներն իրենց բոլոր մանրամասն առանձնահատկություններով, անուններով, պատրաստության և գործածության եղանակով, հարկավ ըստ վաղեմի նահապետական սովորության»:[245]

Ինչպես նշեցինք, Տեր-Մանվելյանն իր աշխատությունում մեծ տեղ է հատկացրել հայ-քրդական հարաբերությունների նկարագրությանը, հատ-

կապես հայերի հանդեպ եզդիների ջերմ վերաբերմունքին. «Եզդիներն ամենուրեք ընդունում են և համարում են հայերին իրենց ցավերի կարեկցող ընկերը և բարեկամը, սիրով հաճախում են հայ եկեղեցին և ուխտատեղերը, մատաղներով, խնկերով, մոմերով մատաղում, ուխտում են ամենայն ջերմեռանդ հավատով և աղոթքներով»:[246]

Ամփոփելով այս պատմական-ազգագրական թեկուզ փոքրածավալ, բայց չափազանց ծանրակշիռ աշխատությունը, Տեր-Մանվելյանն իր քննադատական խոսքն է ուղղում այն ժողովուրդներին, որոնք եզդի-կուրմանջիներին համարում են «վայրենի», «հետամնաց» ու «տգետ»: Ահա, թե այս առթիվ նա ինչ է գրում. «Սակայն ցավալի է, որ ըստ մեծի մասին հիմնված են եղել թյուրիմաց պատահականությունների վրա»:[247] Եվ, վերջապես, հեղինակն իր եզրակացությունը ավարտում է հետևյալ տողերով. «Եվ այս ամենից հետո դեռ քաղաքակրթված ավետարանական համարված քրիստոնյան համարձակվում է եզդուն անգութ, անհավատ ... անվանել, իսկ ինքը գործնական հավատ ունի՞ արդյոք»:[248]

Սույն աշխատությունը, քուրդ-եզդիների ծագման և հատկապես նրանց ազգային սովորույթների վերաբերյալ բարձրարժեք սկզբնաղբյուրներով հարուստ ուսումնասիրություն է: Հեղինակը լիովին գիտակցելով հայ-քրդական միասնական դաշինքի և երկու ժողովուրդների բարեկամական փոխհարաբերությունների առկայությունն ու անհրաժեշտությունը, կոչ է անում հայ մտավորականությանը հնարավոր բոլոր պայմանները ստեղծել քրդական մշակույթը խթանելու համար՝ հակահարված տալով այն մտավորականներին, ովքեր խեղաթյուրում են քուրդ ժողովրդի անցյալ ու ներկա պատմությունը: Տեր-Մանվելյանի թողած ժառանգությունն իր ուրույն տեղն է զբաղեցնում քուրդ ժողովրդի պատմության մեջ, բացահայտում մշակութային բազում դրվագներ:

Հայ քրդագետ Հակոբ Շահբազյանը տարիներ շարունակ զբաղվել է քուրդ ժողովրդի պատմության, նրա սոցիալ-տնտեսական վիճակի, քաղաքական կացության, ազգագրության, հայ և քուրդ ժողովուրդների հարաբերություններին վերաբերող հարցերի ուսումնասիրմամբ: Ընդ որում, Շահբազյանն իր բոլոր դիտարկումները ներկայացնում է գիտականորեն հիմնավորված, վեր հանում քրդական մշակույթում չլուսաբանված բազմաթիվ հարցեր, առաջընթացի համար ուղիներ հարթում: Այս բնագավառում հետաքրքիր է նրա «Եզդիներ» հոդվածը, որում հեղինակը խորազնին անդրադառնում է եզդիական կրոնին, նիստուկացին:[249] Նրան հատկապես հետաքրքրել են քրդերի կողմից հայ ֆիդայիների մասին հորինված հերոսական երգերը: Գնահատելի այդ նյութերը նա դնում է պատմական շրջանառության մեջ:[250] Չնայած 1898 թվականին աշխատանքը հաջողությամբ ավարտում է, սակայն ստեղծված դժվարին իրավիճակում հնարավոր չի լինում այն տպագրել, միայն առանձին հատվածներով տպագրում է «Ազատամարտ» և հայկական այլ պարբերականներում:[251] Այս արժեքավոր աշխատությունը, «Քիւրդօ-հայ պատմութիւն» խորագրով, հաջողվում է տպագրել

միայն 1911 թվականին Կ. Պոլսում: Այստեղ Շահբազյանը պատմական բազմաթիվ փաստերի հիշատակմամբ ու վերլուծություններով ներկայացնում է քուրդ ժողովրդի անցյալը, օբյեկտիվ շարադրում հայ-քրդական հարաբերությունները, բարեկամական կապերը, հերոսական համատեղ պայքարը թուրքական մղձավանջային տիրապետության դեմ: Հեղինակը կոչ է անում հայ մտավորականությանը նվիրվել քրդերի մեջ լուսավորության տարածելու, նրանց քաղաքակրթելու, պատմական անցյալը լուսաբանելու, հարուստ բանահյուսությունն ուսումնասիրելու շնորհակալ գործին:

Շահբազյանն ուշի-ուշով քննության է առել իր ապրած ժամանակը, քննադատաբար օգտվել այն աշխատությունների տրամադրած տեղեկություններից, որոնք վերաբերում էին հայ-քրդական հարաբերություններին, քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը և բանահյուսությանը: Աշխատության առաջաբանում այս կապակցությամբ նա գրում է. «Պատմականորեն ճակատագրությունն ունենալով ապրելու ցեղի մը հետ, որ քյուրդեր են, որոնց քաղաքակրթական աստիճանը չափազանց ծայրագույն տարբերությամբ հեռու է մերմեն, ինչ էլ որ լինի մեր երկուքիս բաժին ընկնող իշխանության ու կառավարության ձևն ու կամքը, ոչ մեկ կերպով կարելի չպիտի լինի բառնալ այն ամեն անախորժ, տհաճ ու շարունակական բնավորություն ստացած դեպքերն ու արգելքները, որոնք կուգան սպառնալու մեր քաղաքակրթության, մեր կենցաղին ու հառաջադիմության: Իմ կարծիքով պետք է դնել քաղաքակրթության հիմը քյուրդերու համար, ու դնել այնպես, որ համապատասխանե անոնց ցեղի զարգացման, առանց սակայն վնասելու իրենց իսկական շահերը: Այսպիսով, հայերն ու քրդերը պիտի ապրին իրենց քաղաքակրթության աստիճանական չափերու հետևանքով, կազմելու պետության առանձին մասերը անոր ամբողջականության մեջ: Բացի այդ, հայ նոր սերունդը նախապաշարված չլծողնելու համար քյուրդերու նկատմամբ, արժե որ պատմական այս համառոտությունը իբրև հայրենագիտության մաս մուտք գործեր նաև մեր դպրոցները: Այս հաջողությունը հույս պիտի ներշնչեր ինձ նոր ճանապարհորդությամբ և ավելի ընդարձակ ուսումնասիրությամբ տալ երկրորդ տեղեկությունը, ու թարգմանել քրդերենի, որպեսզի լայն ծավալով ծառայեր երկու ժողովուրդների մերձեցման բարեկամության և ինքնագիտակցության»:[252]

Անդրադառնալով քրդագիտության բնագավառում Հակոբ Շահբազյանի ջերմեռանդ գործունեությանը, հայ անվանի գրականագետ Հ. Սիրունին գրում է. «Այս մարդը հիվանդության մը ուներ, կուզեր քուրդերը ուսումնասիրել և ուսումնասիրեց ալ «Քրդօ հայ պատմության» տիտղոս կրող հատորով մը լույս ընծայելով իր պրպտումը ... հիմա երբ տարիներ անցան Շահբազյանը արժեք կառնէ իմ աչքիս: Ափսոս որ իր գիրքը չունիմ հիմա մոտս, ինչպես պիտի լափեի ես զայն»:[253]

Արժեքավոր այս ուսումնասիրությունը, որում հեղինակն առաջին անգամ համառոտակի անդրադառնում է քուրդ ժողովրդի պատմությանը, բաղկացած է երկու մասից և ունի 54 ենթավերնագիր: Առաջին մասում հեղի-

նակը ներկայացնում է քուրդ ժողովրդի հին ու նոր պատմության, քրդերի կրոնի, լեզվի, արվեստի, ժառանգության, քրդական դերեբեյությունների, օսմանյան իշխանության քաղաքականության, թուրք-քուրդ-հայ հարաբերությունների և բազում այլ խնդիրների կապակցությամբ իր դիտարկումները: Երկրորդ մասում ընդգրկված են Քյուրդիստանի տարածքի, քրդերի տեղաբաշխման ու բնակչության քանակի, Հայաստանում քրդական ցեղերի ստորաբաժանումների մասին տեղեկություններ: Մանրազնին քննության առնելով քուրդ ժողովրդի պատմության, հատկապես հայ-քրդական հարաբերությունների հետ կապված հարցերը և գիտական շրջանառության մեջ դնելով իր ձեռքի տակ եղած նյութերը, նա պարզաբանում է մինչ այդ չլուսաբանված մի շարք պահեր: Եվ թեպետ որոշ հարցերում ցույց է տալիս սուբյեկտիվ մոտեցում, այնուամենայնիվ, աշխատությունն ամբողջությամբ վերցրած հայտնություն էր տվյալ ժամանակաշրջանի ինչպես հայագիտության, այնպես էլ քրդագիտության մեջ:

Աշխատության հիմքը կազմող հայ-քրդական հարաբերությունների մասին Շահբազյանը փաստական հարուստ տվյալներ է բերում և ցույց տալիս, որ հայ-քրդական բարեկամական կապերը նոր չեն ստեղծվել, այլ գալիս են դարերի խորքից: Շահբազյանը բարձր է գնահատում քրդական գրականության ու ժողովրդական բանահյուսությունը, բերում մի շարք օրինակներ և համեմատություններ անցկացնում հայկական բանահյուսության հետ: Հեղինակը հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում քուրդ գրողներ Ալի Հայիրի (11-րդ դ.), Մալա Ճզիրեի (11-րդ դ.), Ֆակե Տայրայի (14-րդ դ.), Մալա Բաւեի (15-րդ դ.), Ահմադե Խանիյի (16-րդ դ.), Իսմայիլ Բայազիտիյի (17-րդ դ.), և մյուսների մասին:

Իր աշխատության լույսընծայումից հետո Հակոբ Շահբազյանն ավելի է խորանում քրդագիտության, հատկապես քուրդ ժողովրդի մշակույթի ուսումնասիրման ոլորտում, նրա հետազոտություններն աստիճանաբար գիտական բնույթ են ստանում և իրենց ազդեցությունն են թողնում հայ մտավորականության վրա՝ քուրդ ժողովրդի մշակույթով զբաղվելու գործին էլ ավելի նվիրվելու հարցում:

1912 թ. «Ազատամարտում» լույս են տեսնում Շահբազյանի «Քրդական նոր լիգա» և «Տեղեկություն մի քանի քուրդ աշիրաթապետերի վրա» հոդվածները,[254] որոնցում մանրամասը խոսելով Մոքսի և Շատախի քրդական աշիրաթների մասին, բարձր է գնահատում Մոքսի իշխան Մուրթլա բեկի բարեկամական կապերը հայերի հետ: Նա նշում է, որ հայ և քուրդ ժողովուրդների զինակցության իսկական ջատագովն է եղել Մուրթլա բեկը, որի օրոք Մոքսի գավառում հայերը և քրդերը միշտ էլ հանդես են եկել որպես բարեկամներ: Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին նրա շնորհիվ է, որ Մոքսի ողջ հայությունը զերծ է մնացել կոտորածներից:

Մեր պրպտումների արդյունքում եկանք այն եզրահանգման, որ Շահբազյանը մտադիր է եղել գրելու ևս մի աշխատություն հայ քրդական հարաբերությունների մասին և, քաջ տիրապետելով քրդերենին, նույնիսկ ցանկա-

ցել է իր այդ աշխատությունը թարգմանել քրդերեն ու հայատառ հրատարակել: Բայց թե որքանո՞վ է նրան հաջողվել իրականացնել իր ծրագրերը, մեզ հայտնի չէ: Պարզ է մի բան. քրդական պատմա-մշակութային հարցերի ուսումնասիրման ասպարեզում նրա քրտնաջան աշխատանքը երախտիքի արժանի գործ է: Շահբազյանը նոր ուղիներ է հարթել հայ և քուրդ պատմագրության առջև և այսօր էլ իր արժանի տեղն ունի քրդական մշակույթի պատմության ու քրդագիտության մեջ:

Հայ մտավորականության առաջադեմ ներկայացուցիչ, Փարիզի «Անահիտ» ամսագրի խմբագիր Արշակ Չոպանյանը հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության չատագովներից է եղել և քուրդ ժողովրդի մշակութային պատմության մեջ անջնջելի հետք է թողել: «Անահիտում», ինչպես նաև հայկական այլ պարբերականներում լույս տեսած նրա բազմաթիվ հոդվածները պարզորոշ վկայում են, որ Չոպանյանը լավատեղյակ է եղել քուրդ ժողովրդի պատմությանը, հատկապես այն իրավիճակին, որը տիրում էր Արևմտյան Հայաստանում: Չոպանյանը տալիս է քուրդ ժողովրդի առավել բյուրեղացած ազգային նկարագիրը, նյութերը մատուցում այնպիսի նրբերանգներով, որոնք չէին կարող հայ ընթերցողին, առավելևս մտավորականին չհուզել: Նա տևապես հայ մտավորականությանը կոչ էր անում զբաղվել քուրդ ժողովրդի լուսավորության, նրանց քաղաքակրթելու, մշակույթի զարգացմանը նպաստելու գործով: Պատահական չէր, որ Ա. Չոպանյանի անմիջական նախաձեռնությամբ և աջակցությամբ «Անահիտի» համարներում քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանն ու բանահյուսությանը վերաբերող բազմաթիվ չլուծված հարցեր բացահայտող հոդվածների մի ամբողջ շարք է տպագրվել (տե՛ս Կ: Ջաչանի, Հայ պարբերական մամուլը քրդերի մասին, էջ 140):

Անձամբ Չոպանյանի գրչին են պատկանում հայ և քուրդ ժողովուրդների հարաբերություններին նվիրված մի շարք հոդվածներ: Նա իր ծանրակշիռ ու ճշմարտասեր գրչով մերկացրել է թուրքական նենգամիտ քաղաքականությունը, հայ-քրդական որոշ գժտությունների պատճառը տեսել թուրքական չարամիտ քաղաքականության մեջ: «Քյուրդերը ուրիշ բան եղած չեն, - գրում էր Ա. Չոպանյանը, - բայց եթե գործիք թուրք կառավարության ձեռքին, որ միակ հանցավորն է»:[255] Նա գտնում էր, որ հայ-քրդական բարեկամական փոխհարաբերությունների պահպանման միակ ճիշտ ուղին նրանց միասնության մեջ է, որ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ծավալուն աշխատանք տանել քրդերի շրջանում, բարձրացնել նրանց ազգային ինքնագիտակցությունը, լուսավորել նրանց, ցույց տալ, որ երկու ժողովուրդների թշնամին Թուրքիան է: Այս հարցերը պարզորոշ արտացոլված են նրա «Նպատակ» և «Գործենք» հոդվածներում:[256] «Նպատակ» հոդվածում նա բացահայտորեն քննադատել է այն հեղինակներին, ովքեր, մի քանի աշիրաթապետերի գործունեության վրա հիմնվելով, հապճեպ եզրակացություն են արել և ընդհանրական կարծիք հայտնել քուրդ ժողովրդի մասին, այն դեպքում, երբ. «Աշիրաթապետը դա քուրդ ժողովուրդ չէ, քրդերի մեծամասնությունը հայերի հետ բարեկամության են արել, հակում ունեն

դեպի հայերը»: Մի այլ տեղ նա իրավացիորեն շեշտել է. «Քուրդը չէ հայուն թշնամին: Հայուն թշնամին թուրք բռնապետական ռեժիմն է, որուն հավասարապես գերի են քյուրդը և հայը»:[257]

Չոպանյանը միևնույն ժամանակ քննադատել է եվրոպական այն գիտնականներին, ովքեր հայ-քրդական հարաբերությունների հարցում սխալ տեսակետներ են ունեցել և ոչ ճիշտ, սուբյեկտիվ բացատրություն են տվել երկու բախտակից ժողովուրդների փոխհարաբերությունների մասին՝ անտեղյակ լինելով նրանց դարավոր բարեկամությունից և միասնական պայքարից: Այդ հեղինակներից է գերմանացի պատմաբան Վոլդմար Պելեքը, որը մի քանի անգամ ճանապարհորդել է Հայաստանում և Քյուրդիստանում: 1892 թ. իր առաջին ուղևորությունից հետո նա «National Zeitung» ամսագրում (1892 թ. N 477) տպագրել է իր «Ճանապարհորդություն Հայաստանում և Քյուրդիստանում» ծավալուն հոդվածը: Այստեղ նա գիտական հիմնավորումներով խոսել է քրդերի ծագման, նրանց զբաղեցրած տարածքի, պատմական անցյալի, ազգային սովորությունների և հայ-քրդական փոխհարաբերությունների մասին:

Սակայն 1899 թ. իր երկրորդ ճանապարհորդության ժամանակ, մի քանի ամիս հայերի և քրդերի մեջ մնալուց հետո հայրենիք վերադառնալով, նա «Frankfurt Zaeittung»-ի 1900 թվականի N 5-8-ում լույս է ընծայել մի հոդված՝ այս անգամ սխալ մեկնաբանություններով, բացատրություններով, թուրքամետ դիրքորոշմամբ, որով չանում էր ապացուցել, որ Արևմտյան Հայաստանում կատարվող ավերը, թալանն ու սպանությունները քրդերի գործն են, և որ թուրքերը ոչ մի բանում մեղավոր չեն: Ծանոթանալով այդ հոդվածին, Չոպանյանը որոշում է իր քննադատական խոսքն ուղղել Պելեքին և պարզաբանել օբյեկտիվ իրողությունը: 1900 թվականին «Անահիտի» երրորդ համարում տպագրելով Պելեքի հոդվածի հայերեն թարգմանությունը, նա հենց հաջորդ համարում հանդես է գալիս պատասխան հոդվածով, որտեղ խիստ քննադատության է ենթարկում հեղինակին այն բանի համար, որ նա տեղյակ չէ Թուրքիայում տիրող իրավիճակից, չի խորացել պատմական անցուդարձերի մեջ, որ հայկական կոտորածների հարցում մեղավորը ոչ թե քուրդ ժողովուրդն է, այլ՝ թուրքական կառավարությունը, նրա վարած հայահալած քաղաքականությունը: Չոպանյանը շեշտում է, որ հայերն ու քրդերը միշտ էլ եղել են բարեկամներ, որ իրավիճակի սրման պատճառները պետք է փնտրել ոչ թե հայ-քրդական հարաբերությունների, այլ հենց Թուրքիայի քաղաքականության մեջ:[258]

Արժեքավոր այդ հոդվածում, մի շարք օրինակներ բերելով հայ-քրդական բարեկամական կապերից, Չոպանյանը չանում է ընթերցողին համոզել, որ անհրաժեշտ է է՛լ ավելի ամրապնդել երկու ժողովուրդների սրտակցությունը: Չոպանյանին առանձնապես ոգևորում է հայ-քրդական միասնական պայքարի ուղու վրա կանգնած քուրդ մտավորականության հանդես գալը, քուրդ ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացումը: Նա իր ամսագրի միջոցով ողջունում է Կահիրեում «Քուրդիստան» թերթի հրատարակումը, որն իր հերթին ճիշտ է բնութագրում հայ-քրդական հարաբերություն-

ները: Նա այդ թերթից արտատպում է մի հոդված, որի հեղինակը քրդերին կոչ է անում էլ ավելի ամրապնդել հայ-քրդական կապերը, միասնական հանդես գալ թուրքական ոտնձգությունների դեմ:[259] Ավելացնենք, որ Զոպանյանն իր «Հայաստանը թուրք լծի տակ» գրքույկում (1918) և «Հայ ազգը մեղավոր չէ» աշխատությունում (1926) քննադատել է թուրքական ազգամետ քաղաքականությունը:

Քուրդ ժողովրդին վերաբերող նման ծանրակշիռ այլ հոդվածներ, որոնք Զոպանյանի անմիջական նախաձեռնությամբ տպագրվել են «Անահիտում», կարող են հարուստ նյութեր տրամադրել քրդական մշակույթի պատմությանը և ընդհանրապես քրդագիտությանը: Ճշգրիտ բացատրություններով և հիմնավորումներով այդ հոդվածներն արժեքավոր են թե՛ գիտական և թե՛ պատմական տեսանկյունից: Զոպանյանն իր ակտիվ գործունեությամբ, ինչպես նաև ամսագրի օգնությամբ անգնահատելի ու մնայուն ավանդ է ներդրել քուրդ ժողովրդի պատմամշակութային հարցերի վերհանման և հայ-քրդական բարեկամական կապերի ամրակայման գործում:

Զոպանյանի ժամանակակիցն էր Արշակ Ալպոյաջյանը, մի հայ մտավորական, որը մեծագույն նվիրումով զբաղվել է քուրդ ժողովրդի պատմամշակութային հարցերով: Արևմտյան Հայաստանում երկար շրջագայելով քրդերի միջավայրում և քաջ տիրապետելով քրդերենին, նա մոտիկից է ծանոթացել քուրդ ժողովրդի կյանքին: Նրա ուսումնասիրությունների գիտական արժեքը կրկնապատկվում է շնորհիվ այն փաստի, որ նա ծանոթ էր քրդերի վերաբերյալ օտարալեզու գրականությանը: Ալպոյաջյանն իր քննադատական խոսքն ուղղել է այն ուսումնասիրողներին, ովքեր կարծիք են կազմել և եզրահանգումներ արել՝ խեղաթյուրելով քուրդ ժողովրդի պատմության, հատկապես հայ-քրդական հարաբերությունների հարցերը:

Ալպոյաջյանը քրդագիտական հարցերով սկսել է զբաղվել դեռ 20-րդ դարի սկզբներից և հայկական պարբերական մամուլի էջերում աստիճանաբար հրատարակել է իր ուսումնասիրությունները, որոնք լայն արձագանք են գտել ինչպես ժամանակի հայ մտավորականության, այնպես էլ ընթերցողների շրջանում: Շարունակելով Աբովյանի, Մկրտիչ Տիգրանյանի, Խրիմյան Հայրիկի, Գրիգոր Արծրունու, Զոպանյանի ավանդները, Արշակ Ալպոյաջյանը տևապես պայքարում էր հայ-քրդական բարեկամական կապերի ամրապնդման համար, մեծ տեղ էր տալիս քուրդ ժողովրդի պատմության, ազգագրության ու բանահյուսության հարցերի ուսումնասիրմանը, քրդերի մեջ լուսավորություն տարածելու գաղափարի ջատագովներից էր: Պոլսում կազմակերպված «Հայոց միացյալ ընկերությանը» նա առաջարկում էր լայն հնարավորություններ տալ քրդերին, որպեսզի նրանք հայոց դպրոցներում սովորեն: Նա հայ-քրդական խառը վարժարաններ կազմակերպելու հարցն էր բարձրացնում, որը միմիայն կբարձրացներ ընկերության հեղինակությունը և ավելի կամրապնդեր հայ-քրդական դաշինքը:[260] Նա բարձր էր գնահատում 80-85 տարի առաջ Մկրտիչ Տիգրանյանի՝ լուսավորության ասպարեզում ծավալած գործունեությունը՝ նրան համարելով «հրաշագործ Տիգրանյան»: Հայ-քրդական հարաբերություններին, քուրդ ժողովրդի մշակույթին և քրդերի մեջ լուսավորություն

տարածելու գաղափարին է նվիրված Ալպոյաջյանի մեկ այլ կարևոր ուսումնասիրություն ևս՝ «Հրաշագործ Տիգրանյան եպիսկոպոսը», որտեղ հեղինակը հայ մտավորականությանը կոչ է անում դասեր քաղել անցյալից, այսուհետ էլ ավելի ամրապնդել երկու ժողովուրդների բարեկամությունը և «Տիգրանյանի պես դառնալ լուսավորիչ քուրդ ժողովրդի մեջ»: Այս հոդվածում նա մանրակրկիտ վերլուծում է Տիգրանյանի «Լապտեր լուսատու» և «Ալիֆպենջիզ վա արմանի ու կուրմանջի» գրքերը, տալիս նրանց գնահատականը տվյալ ժամանակի համար: Նա իր «Քուրդ ցեղը» ծավալուն հոդվածում, որը պահպանվում է Մաշտոցի անվան մատենադարանում, գրել է. «Մեզ համար քուրդերու հետ համերաշխությունն ու միասնությունն այնքան կենսական են և այնքան բնական, որքան բնական է և փափագելի համերաշխությունը մեր հայ-կաթոլիկ և հայ-բողոքականներու հետ»:[261]

Հայ շնորհաշատ մտավորականն իր «Հայ և քուրդ ցեղագրական հարաբերությունները» հոդվածում, կանգ առնելով հայ-քրդական առնչությունների վրա, միաժամանակ իր քննադատական խոսքն է ուղղում պատմաբան Մելվան Զադե Ռիֆաթին, որն ուղղակի նենգափոխել էր հայ-քրդական հարաբերություններին վերաբերող հարցերը: Այս հոդվածը, որ խիստ արժեքավոր փաստագրական նյութ է, նույնպես պահպանվում է Մատենադարանի Ալպոյաջյանի ֆոնդում:[262] Խոսելով քրդական գրականության մասին, նա հիշատակում է նաև այն հանգամանքը, որ «Տիգրանակերտի հայ եպիսկոպոսը» (Մ. Տիգրանյանը - Կ. Ջ.) քրդախոս հայերի համար հրատարակել է հայատառ քրդերեն ավետարաններ, ինչը մեկ անգամ ևս գալիս է հաստատելու մեր այն կարծիքը, որ քրդերեն լեզվով հրատարակված ավետարանները հիմնականում թարգմանել է Մկրտիչ Տիգրանյանը:

Պատմական արժեք են ներկայացնում նաև Ալպոյաջյանի «Հայ քրդական հարաբերությունները», «Քրդական գիրն ու գրականությունը», «Քրդական ազգագրությունը», «Դերսիմի քրդերը» հոդվածները, որոնք բազմաթիվ այլ վավերագրերի հետ պահպանվում են Մ. Մաշտոցի անվան մատենադարանի Ա. Ալպոյաջյանի ֆոնդում: Առավել հետաքրքրական է նրա «Քրդական գիրն ու գրականությունը» հոդվածը, որտեղ ներկայացված են քուրդ պատմաբանների ու գրողների ստեղծագործությունները: Քրդագիտական հարցերի բարձրացման տեսակետից ուշագրավ է նաև «Պատմական Հայաստանի սահմանները» աշխատությունը, որում հեղինակն անդրադառնում է պատմական Քյուրդիստանի տարածքին, ազգաբնակչությանը, սոցիալ-տնտեսական վիճակին, հայ-քրդական հարաբերություններին, Բաղեշի, Հաքիարի, Ջուլամերիկի, Խոշապի, Վանի, Արճեշի, Ջեզիրեի, Դերսիմի, Խարբերդի, Բալուի և այլ քրդական ֆեոդալական իշխանություններին: Մանրամասն ցույց է տալիս վերջիններիս անցյալ և ներկա իրավիճակը, միջցեղային և միջիշխանական կռիվները, քրդական ինքնավար շրջանների սոցիալ-քաղաքական վիճակը, թուրքական կառավարության վարած քաղաքականությունն այդ շրջաններում:[263]

Քրդական դերեբեյությունների, հայ-քրդական հարաբերությունների և հատկապես երկու ժողովուրդների առևտրական կապերի մասին հետաքրքրա-

կան տեղեկություններ կան Արշակ Ալպոյաջյանի «Պատմություն Եվդոկիո հայոց» և «Պատմություն Մալաթիո հայոց» աշխատություններում:[264] Ինչպես այս երկու, այնպես էլ վերը նշված նրա մյուս աշխատություններն ու հոդվածները լուրջ ներդրումներ են հայ քրդագիտության մեջ, ինչպես նաև նոր էջ են բացում քրդական մշակույթի պատմության մեջ:

20-րդ դարի սկզբի հայ մտավորականության լայնախոհ ներկայացուցիչներից է նաև քրդական մշակույթի պատմության մեջ իր մեծագույն ավանդը ներդրած Արշակ Սաֆրաստյանը: Լինելով Բիթլիսի Անգլիայի փոխհյուպատոսը, լավատեղյակ էր 20-րդ դարի սկզբների քրդական անցուդարձից:

Ինչպես նշում է իր «Քրդեր և Քուրդիստան» գրքի առաջաբանում, երկար տարիներ շրջագայել է քրդերի մեջ, լավ է իմացել նրանց պատմությունը, ազգագրությունը, բանահյուսությունը, նիստուկացը: Ինչպես հայկական պարբերական մամուլում, այնպես էլ առանձին գրքով նա հանդես է եկել քրդագիտական ուսումնասիրություններով:

Սաֆրաստյանը մշտապես զբաղվել է հայ-քրդական հարաբերությունների խնդիրներով: Նա հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ջատագովներից էր և իր ուսումնասիրություններում փաստական հարուստ նյութերի հիման վրա խորը վերլուծության է ենթարկել այդ հարցը, պարզաբանել հայ-քրդական համագործակցության կարևորությունը, ուշադրության կենտրոնում պահելով քուրդ ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակը: Այդ տեսակետից հետաքրքրական է նրա «Հայ-քրդական հարաբերությունները» ծավալուն հոդվածը, որը տպագրվել է «Արեւի» մի քանի համարներում: Նա այդ հոդվածներում վեր է հանում թուրքական կառավարության ներքին քաղաքականության էությունը, ցույց տալիս, թե ինչպիսի բիրտ միջոցներով էր նա լուծում հայկական ու քրդական հարցերը:[265] Քննադատելով հայ մտավորականներին, որոնք չեն զբաղվում հայ-քրդական միասնության ամրապնդման գործով, նա գրում է. «Պատահաբար վերհիշելով մեր անցյալի սխալները անոնցմե բարոյական կենդանի մը մնա մտածել սերունդի համար: Ժամանակի անիվի դեպքերուն դասավորումը կարող է որևէ րոպեի վերածնիլ նմանօրինակ հանգամանքներու հանգիստությունը. ի նախատեսություն այդպիսի պատահականության քյուրդ տարրին նշանակությանը պետք է գրավե իր արժանավոր տեղը մեր հավաքական մտածողության մեջ»:[266]

Հեղինակն այնուհետև մանրակրկիտ կանգ է առնում Շամդինանի շեյխ Ի-բադուլլայի շարժման վրա և ցույց տալիս հայ-քրդական բարեկամական կապերն այդ շրջանում: Նա, ճիշտ մոտեցում ցուցաբերելով այդ շարժման ընթացքին և հայ-քրդական հարաբերությունների հարցին, գրում է. «Շեյխ Ի-բադուլլան իր ամբողջ գործունեության ընթացքին, ինչպես նաև իր հաջորդներն ու գաղափարակից քուրդ բեյերը միշտ մնացին հավատարիմ քյուրդ հայ-նեստորական համագործակցության»:[267]

Խոսելով թուրքական քաղաքականության մասին, Սաֆրաստյանը գրում է, որ թուրքերին հաջողվում էր կեղծ խոստումներով որոշ քուրդ աղաների սիրաշահել ու դուրս բերել իրենց դրացիների դեմ, սակայն ոչ բոլորն էին, որ ենթարկվում էին թուրքական կառավարության այդ նենգ քաղաքականությա-

նը: Նրանցից շատերն էին ասում. «Մենք միևնույն հողին վրա ծնված եղբայրներ ենք»:[268]

Մատենադարանում Ալպոյաջյանի արխիվում մեր ձեռքն ընկավ Ա. Սաֆրաստյանի ստորագրությամբ մի վավերագիր՝ «Ներկա քրդական ապստամբությունը» խորագրով: Դրանում հեղինակը մանրակրկիտ կանգ է առել 20-րդ դարի սկզբին ծավալված քրդական շարժումների վրա, մատնանշել է դրանց պատճառները, ընթացքն ու հետևանքները: Խոսվում է նաև հայ-քրդական հարաբերությունների մասին: Նույն ֆոնդում պահվում է Ա. Սաֆրաստյանի մեկ այլ հոդված, որը պատմագիտական հարցերի վերլուծությամբ հետաքրքիր մի վավերագիր է հայ-քրդական հարաբերությունների, կենցաղի, սովորույթների վերաբերյալ: Պատահական չէ, որ այն վերնագրված է «Մենք և քրդերը»:[269]

Սաֆրաստյանը հետագայում պատմագիտական մի շարք հոդվածներով հանդես է եկել հայկական մամուլում և ապա իր մտորումներն ամփոփել 1947թ. Լոնդոնում հրատարակված «Kurds and Kurdistan» (Քրդերը և Քյուրդիստանը) գրքում: Աշխատության էջերում նորահայտ փաստերով հեղինակն ամենայն մանրամասնությամբ շարադրել է քուրդ ժողովրդի պատմության բազմաթիվ հարցեր՝ սկսած 10-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը: Նա միևնույն ժամանակ անդրադարձել է քրդերի ազգային սովորություններին, բանահյուսությանը, պաշտամունքին: Գրքի առանցքը, սակայն, կազմում են քրդական շարժումները, հայ-քրդական հարաբերություններն ու թուրքական կառավարության քաղաքականությունը:[270]

Իրավամբ լինելով մեծ քրդագետ, նա չանք չի խնայել՝ գիտական հիմնավորում տալու քրդագիտությանը վերաբերող զրեթե բոլոր հարցերին: 1929 թվականի հունվարի սկզբներին Օքսֆորդի համալսարանում կայացած արևելագետների 15-րդ կոնգրեսում Ա. Սաֆրաստյանը հանդես եկավ «Քրդերի ծագումը և ցեղական կազմությունը» զեկուցումով, որը ևս մեկ անգամ վկայում է քուրդ ժողովրդին և նրա մշակույթին հայ աննկուն մտավորականի նվիրվածության մասին: Սաֆրաստյանը, լինելով խոշոր քրդագետ, Եվրոպայի գիտական աշխարհին հիմնավոր վերլուծություններով ներկայացրեց քուրդ ժողովրդի պատմության և մշակույթի որոշ չմեկնաբանված պահեր:

Քրդագիտության ստեղծման, քրդական մշակույթի մի շարք հարցերի ուսումնասիրման գործում մեծ է ակադեմիկոս Հովսեփ Օրբելու դերը քուրդ ժողովրդի պատմության, գրականության և լեզվի ուսումնասիրման բնագավառում: Օրբելին, սկսած 1900 թվականից մինչև իր կյանքի վերջը, այս ուղղությամբ մեծ և անուրանալի աշխատանք է կատարել: Նրա ջանքերով Լենինգրադում հիմնադրվել է քրդագիտության կենտրոն: ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում իր շուրջ համախմբելով մի շարք պատմաբանների, գրականագետների, ազգագրագետների ու լեզվաբանների, նա նոր ուղիներ է հարթել քրդական մշակույթի զարգացման համար: Իրավամբ պետք է նշել, որ 1959 թվականին Լենինգրադում բացված քրդագիտական կենտրոնը աշխարհում միակն էր:

Բազմաթիվ քուրդ մտավորականներ դեռևս 1900-ական թթ. բարձր գնա-

հատելով նրա ջանադիր աշխատանքը քրդական մշակույթի բնագավառում, դիմել են նրան քրդական այբուբեն, քրդերեն դասագիրք և ռուս-քրդերեն բառարաններ կազմելու խնդրանքով, սակայն, որոշ հանգամանքների բերումով, դա նրան չի հաջողվել: Ավելի ուշ՝ 1911-1913 թթ., երբ Մոքսի գավառի հայկական ազգագրությունն ու բանահյուսությունը ուսումնասիրելու նպատակով ռուսական ակադեմիայի կողմից գործուղվում է Արևմտյան Հայաստան, Ն. Մառի խորհրդով նաև ձեռնարկում է Մոքսի քրդերի լեզվի և ազգագրության հետազոտումը:

Հ. Օրբելին կնոջ հետ մեկ տարի անցկացնում է Վանում, հատկապես Մոքսի շրջանում, երեք ամիս մնում է գավառի նշանավոր քուրդ Մուրթուլա բեկի տանը և, ինչպես նշում է Վանի փոխհյուպատոս Ս. Օլֆերևը, այնտեղ հյուրընկալվում է ամենայն ջերմությամբ, նրա համար ապահովում են հնարավորինս բարվոք պայմաններ, որպեսզի կարողանա զբաղվել իր հետազոտությամբ: Խոսելով Մուրթուլա բեկի հայասիրության մասին, Ս. Օլֆերևը ուղղակի նշում է. «Մուրթուլա բեկը մի առանձնահատուկ մարդ է, կիրթ, բարի, խելոքության տիպար: Նա խոսում է լավ հայերենով և բարեկամական, անշահադիտական կրքով է մոտենում հայերին... Նա բավականին կրթված, շատ կարդացած անձնավորություն է և հետաքրքրվում է բոլոր հարցերով: Նա հազիվ 50 տարեկան կլինի: Նայելով նրան, ես ավելի եմ համոզվում, որ քրդերի ներքին աշխարհը շատ հարուստ է, և եթե կառավարության կողմից լինի մի փոքր հոգատարություն, նա շատ արագ կընթանա առաջ և առանց տարակուսանքի կանցնի թուրք-ֆանատիկից»:[271]

Ինչպես Օրբելին, այնպես էլ ազգագրագետ Լալայանն իրենց գիտական գործուղումների ժամանակ մեծ օգնություն են ստացել Մուրթուլա բեկից: Նրանց միջև ստեղծվել են ջերմ բարեկամական կապեր: Ընդհանրապես քուրդ ժողովրդի լեզվին, ազգագրությանը և բանահյուսությանը վերաբերող հարցերում երկու քրդագետներին մեծ աջակցություն են ցույց տվել Մուրթուլա բեկն ու նրա եղբորորդի Ալի բեկը: Անդրադառնալով հայ-քրդական հարաբերություններին ու Մուրթուլա բեկի գործունեությանը, Օրբելին իր ծնողներին գրել է. «Ապրում եմ քրդական բեկերից մեկի տանը, այն մարդու տանը, որ հայկական կոտորածների ժամանակ եղել է հայերի պաշտպանը, նա ունի ռուսական օրիենտացիա: Ես շատ հազվադեպ եմ հանդիպել մի այդպիսի հաճելի սիրուն ծերուկի: Գլխավորն այն է, որ նա շատ սիրալիր է իմ նկատմամբ»:[272] Նման ջերմ բարեկամական վերաբերմունքն էլ ավելի է ոգևորում Օրբելուն և նա իրեն ամբողջովին նվիրում է քրդագիտությանը, լուսաբանելով մինչ այդ չլուծված բազմաբնույթ հարցեր:

Ինչպես նշեցինք, Օրբելու հիմնական նպատակն էր ուսումնասիրել Մոքսի հայերի ազգագրությունն ու բանահյուսությունը, սակայն քանի որ քրդերին վերաբերող նյութերը բավականին շատ էին, նա ձեռնամուխ եղավ այդ գավառի քրդերի բարբառի խորագնին ուսումնասիրման և ռուս-քրդերեն, քուրդ-ռուսերեն բառարանի կազմման գործին, սկսեց խորությամբ ուսումնասիրել քերականական կանոնները: Նա ամենայն լրջությամբ զբաղվում է այդ հարցերով, սակայն, ժամանակի սղության պատճառով, աշխատանքը դեռևս

չավարտած՝ մեկնում է Վան: Այս անգամ Մուրթալա բեկն իր եղբորը՝ Ալի աղային ուղարկում է Վան, որպեսզի տեղում օգնի Օրբելուն՝ ավարտելու քրդագիտական աշխատանքները: Ազատ տիրապետելով հայերենին և ծանոթ լինելով քրդական ժողովրդական բանահյուսությանը, Ալի աղան ամեն կերպ աջակցում է Օրբելուն, և երբ վերջինս իր կնոջ հետ արձակուրդ է մեկնում, նրանց ուղեկցում է Թիֆլիս, մնում Օրբելու տանը և շարունակում օգնել նրան:[273] Այս կապակցությամբ Օրբելին գրում է. «Ես Մոքսում մի քանի մարդկանց անմիջական օգնությամբ զբաղվեցի քրդերեն լեզվի ուսումնասիրության հարցով, հատկապես ինձ օգնել են Ալի աղան, Յուսուֆ աղան: Ալի աղան բացարձակ տիրապետում էր տեղի հայկական բարբառին»:[274]

Ի դեպ, Վանի փոխհյուպատոս Ս. Օլֆերևը հաստատել է, որ Մուրթուլա բեկը առելությամբ էր լցված թուրքական կառավարության հանդեպ, մեծապես հակված էր դեպի Ռուսաստանը, համակրում էր ռուս և հայ ժողովուրդներին: Նրա ձեռքով են կոտորածից փրկվել Մոքսի տասնյակ հազարավոր հայեր: Նա թուրքական պետությանը համարում էր ծախված ու փտած տերություն և միշտ երազում էր փախչել այդ մեծամած աշխարհից, անցնել Ռուսաստան: «Ես որոշել եմ,- ասում էր Մուրթալա բեկը, - մաքրել հաշիվներս Մոքսի հետ, գնալ Թիֆլիս, եթե ոչ հիմնական, բայց բոլոր դեպքերում գոնե մեկ տարով: Ես կարծում եմ, որ սկզբում միառժամանակ կմնամ իմ բարեկամներ Օրբելու կամ Լալայանի մոտ, են այդպես էլ ասել եմ, որ սրտանց ցանկանում եմ հետևել ռուսական քաղաքականությանը, այլ ոչ թե հետևել մոդային խոսքերին»:[275]

Իսկ Փարիզում հրատարակվող «Ապագայ» թերթը, անդրադառնալով Մուրթուլա բեկի գործունեությանը, գրում է. «Այն սովորած էր ոչ միայն միջավայրին համար հնարավոր եղածը, այլև հայերեն գրել և կարդալ ...Անոր ուժը ճնշվածներու բազմության համակրանքի մեջ էր: Ու այս ուժով, որուն ան կը միացներ բնատուր տաղանդ մը, Մուրթուլա բեկը դարձած էր Մոկաց աշխարհի ամենեն ազդեցիկ քուրդը... Նա կը փրկե Մոքսի 10.000 հայերը...»:[276]

Մոքսում աշխատելիս, Օրբելին գրի է առնում քրդերեն տեքստեր, հավաքում նյութեր քուրդ ժողովրդի ազգագրության, բանահյուսության, լեզվի և այլ հարցերի վերաբերյալ: Նա այդ տեքստերը և ընդհանրապես բոլոր նյութերը հիմնականում գրի է առել հայատառ քրդերենով: Նա կազմել է 434 էջանոց քուրդ-ռուսերեն մի բառարան, որը բաղկացած է երեք մասից: Իր ուսումնասիրության ընթացքում Օրբելին օգտվել է քրդագիտական մի շարք աշխատություններից և այդ կապակցությամբ նշել. «Այս բառարանը կազմելիս օգտվել եմ Ժաբայի, Յուստի, Եղիազարովի աշխատություններից, որոնք ինձ բավականին օգնեցին աշխատանքս ավարտելու»:[277] Բառարանը քրդագիտական լուրջ աշխատություն է: Հայտնի է, որ Մառի նախաձեռնությամբ 1914-1915 թթ. երկու անգամ որոշվում է տպագրել այդ բառարանը, սակայն այդ հարցը մնում է անհետևանք: Այդ արժեքավոր բառարանը հրատարակվում է միայն 2002 թ. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի, նույն ինստիտուտի կովկասագիտության բաժնի վարիչ պրոֆեսոր Պ. Մուրադյանի նախաձեռնությամբ: Քուրդ ժողովրդի բարե-

կամ պրոֆեսոր Պարույր Մուրադյանն իրավացիորեն գնահատելով Օրբելու ներդրումն ինչպես հայագիտության, այնպես էլ քրդագիտության մեջ, սույն բառարանի առաջաբանում գրում է, որ բառարանի հրատարակումը մեծ ներդրում է ոչ միայն Հ. Ա. Օրբելու գիտական ժառանգության, այլև հայրենական քրդագիտության մեջ, որի հիմնադիրներից մեկն էլ հենց ակադեմիկոս Հովսեփ Օրբելին է: Մեծարժեք ներդրում է Հովսեփ Օրբելու ընտիր երկերի 2-րդ հատորը, որը կրկին լույս է տեսել 2001 թ. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի կողմից: Այն խմբագրել է պրոֆեսոր Պ. Մ. Մուրադյանը: Սույն հատորում հիմնականում արտացոլված է Մոքսի հայերի ազգագրությունը, բանահյուսությունը, բարբառը, արվեստը և այլն: Քրդագիտական հարցերը շոշափված են մասնակիորեն:

Իսկ 1982 թվականին Ռուսաստանի ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի և ՀՀ ԳԱԱ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի մի խումբ աշխատակիցների նախաձեռնությամբ ու Կ. Յուզբաշյանի խմբագրությամբ ռուսերեն Մոսկվայում լույս տեսավ Հ. Օրբելու «Մոքսի բանահյուսությունը և կենցաղը» արժեքավոր աշխատությունը:[278]

Հովսեփ Օրբելու արխիվում պահպանվում են քրդական ժողովրդական բանահյուսության ամենավառ նմուշներից «Մամ ու Զինի» երկու տարբերակները, որոնցից մեկը նա գրի է առել Մոքսում, իսկ մյուսը՝ 1927թ. Ավագյազում, որտեղ գրի է առել նաև «Լեյլի ու Մեջնուն» պոեմը: Խորությամբ ուսումնասիրելով «Մամ ու Զին» պոեմը, նա բարձր է գնահատել քրդական ժողովրդական բանահյուսությունը:[279] Իսկ 17-րդ դարի քրդական գրականությունն ու հատկապես քուրդ նշանավոր բանաստեղծ Ահմադե Խանուն, որի անմահ գրչով է առաջին անգամ մշակվել ու գրվել «Մամ ու Զին» պոեմը, Օրբելին դասում է Ֆիրդուսու և Ռուսթավելու կողքին. «Ահմադե Խանին այս գեղեցիկ պատմվածքը վերածեց բանաստեղծության բարձր աստիճանի, որպեսզի մարդիկ չասեն, որ քրդերը զրկված են իրենց արմատական մշակույթից, իրենց բնատուր լինելուց, որպեսզի մարդիկ չասեն, որ քրդերը չեն հոգում ողջ կյանքի գեղեցկության համար»:[280]

Այնուհետև, անդրադառնալով քրդական բանահյուսությանը և գնահատելով այն, իր «Ֆիրդուսի» աշխատությունում գրում է, որ Ֆիրդուսու հռչակավոր «Շահնամե» պոեմի գեղարվեստական կերպարները լայն տարածում ունեն քրդական բանահյուսությունում (տե՛ս И. А. Орбели, Фирдуси, 1936, М., ст. 2):

Հովսեփ Օրբելու ներդրումը քրդական մշակույթում բազմապատկվում է նաև նրա կողմից հայերեն և ռուսերեն, հետագայում լատիներեն տառերով քրդերեն այբուբենի կազմմամբ: Այդ մասին է վկայում քուրդ մտավորականության առաջադեմ ներկայացուցիչներից Արդուլռեզակ Բադրխանի գործունեությունը, որը դեռևս 1913 թ., երբ Իրանի Խոյ քաղաքում, քրդերի մեջ լուսավորություն տարածելու, քրդական թերթ ու տպարան հիմնելու և դպրոցներ բացելու նպատակով, կազմակերպում է քրդական «Գիահնդրն» (կրթական) ընկերությունը, օգնության խնդրանքով դիմում է Խոյի ռուսական փոխհյուպատոս Չիրկովին: Վերջինիս անմիջական նախաձեռնությամբ Աբ-

դուլռազակը նամակ է ուղարկում ռուսական կառավարությանը՝ խնդրելով օժանդակել Թուրքիայի և Իրանի քրդերի շրջանում լուսավորություն տարածելու գործին: Այդ նամակում ուղղակի նշվում էր, որ խիստ ցանկալի է Հովսեփ Օրբելու գործուղումը Քուրդիստան՝ տեղում քրդական քերականության ձեռնարկ և բառարան կազմելու, նաև ռուս դասականներից քրդերեն և քուրդ դասականներից ռուսերեն թարգմանություններ կատարելու համար:[281]

Այդ թվականին Աբդուլռեզակի ջանքերով Խոյում բացվում է քրդական դպրոց: Չնայած այն կարճ կյանք ունեցավ, սակայն իր ազդեցությունը թողեց ինչպես թուրքական, այնպես էլ ռուսական ու գերմանական փոխհյուպատոսությունների վրա, որ խորհեն այդ ուղղությամբ: Չիրկովն առաջարկում էր իր կառավարությանը, որ հարկավոր է Երևանում անդրկովկասյան քրդերից մանկավարժներ պատրաստել դպրոցներում դասավանդելու համար:

Հետագայում Աբդուլռազակը մեկնում է Լենինգրադ, անձամբ հանդիպում Մառին և Օրբելուն և խնդրում զբաղվել քրդական մշակույթի հարցերով, Լենինգրադում բացել քրդագիտական կենտրոն և ռուսական տառերով կազմել քրդական այբուբեն:[282] Այդ գործին Մառն անմիջապես ներգրավում է Օրբելուն: Աբդուլռեզակը նախ առանձին հանդիպումներ է ունենում Օրբելու հետ, կրկին քննարկվում են քրդական մշակույթին վերաբերող բազմաթիվ հարցեր:[283] Աբդուլռեզակի այս այցելությունից հետո է Օրբելին, Մառի անմիջական ցուցումով, կազմում է քրդական այբուբեն, նախ՝ հայկական տառերով, ապա՝ ռուսական: Սակայն, ինչպես երևում է, դա չի օգտագործվել, այլ օգտագործվել է լատինականը:[284] 1914 թ. Մառի և Օրբելու միացյալ ջանքերով Պետերբուրգի համալսարանի Արևելագիտության ֆակուլտետում անց են կացվում քրդերենի դասընթացներ, և հենց այդ ժամանակ էլ Օրբելին կազմում է լատինատառ քրդերեն քրեստոմատիա:[285]

Քրդերեն լեզվաշինարարության հարցերի ուսումնասիրմանն ու վերլուծությանը մենք չենք ցանկանում անդրադառնալ, քանզի դրանք սույն ուսումնասիրության մեջ քննարկվող հարցերի շրջանակից դուրս են: Իրավամբ պետք է նշել, որ Օրբելու քրդագիտական գործունեությամբ են զբաղվել անվանի հայ արևելագետներ Պ. Մուրադյանը, Է. Մուսաելյանը, Կ. Յուզբաշյանը, վեր հանելով ու բացահայտելով քուրդ ժողովրդի բանահյուսությանը, գրականությանը վերաբերող բազում ուսանելի էջեր:

Մեծ է Օրբելու դերը նաև քրդագիտական կադրեր պատրաստելու գործում: Նրա անմիջական նախաձեռնությամբ էր, որ 1959 թ. մարտի 1-ին Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի մասնաճյուղում կազմակերպվեց քրդագիտության կաբինետ, որը նա մինչև իր կյանքի վերջը մեծ ջանասիրությամբ ղեկավարեց, հրատարակեց քրդագիտությանը վերաբերող բազմաթիվ աշխատություններ, որոնք լայն ճանաչում գտան ողջ աշխարհում: Նրա անմիջական ղեկավարությամբ են աճել անվանի քրդագետներ Ղանատ Կարդոևը, Զարկյազե Բաքոն, Սեդա Ռուդենկոն, Տատյանա Արիստովան և շատ ուրիշներ, որոնք նույնպես մեծ ներդրումներ ունեն իրենց ուսուցչի կողմից քրդագիտական հարցերի բացահայտման գործում:

Օրբելու ներդրումը քրդական մշակույթում բարձր է գնահատված նաև

նրանով, որ նա իր քննադատական խոսքն է ուղղել այն գիտնականներին, ովքեր անտեսել են քրդական ինքնատիպ մշակույթը և քուրդ ժողովրդին համարել հետամնաց, մշակույթ չունեցող ժողովուրդ: Նա քուրդ ժողովրդի մշակույթը դասել է ամենահին ժողովուրդների մշակույթների շարքին և քրդական բանահյուսության լավագույն նմուշները ներկայացրել ռուս և եվրոպական ընթերցասեր հասարակայնությանը, վերհանել քուրդ-ռուսական, քուրդ-եվրոպական գրականմշակութային առ այսօր չուսումնասիրված կապերը:[286]

Հայազգի մեկ այլ խորագետ մտավորական՝ պատմաբան, մանկավարժ Ստեփան Կանանյանը (1860-1937 թթ.), երկար ժամանակ ապրելով քրդերի մեջ, լավատեղյակ է եղել քուրդ ժողովրդի ազգագրությանն ու հատկապես բանահյուսությանը: Լիարժեք տիրապետելով քրդերենին, նա բազմիցս եղել է քրդական գյուղերում, լսել ու գրի առել քրդական բանահյուսության լավագույն նմուշները:

ՀՀ Գրականության և արվեստի թանգարանի արխիվում պահպանվում են նրա ձեռագիր ուսումնասիրությունները, որոնցից արժեքավոր է հատկապես 1901թ. նրա հեղինակած «Քրդական ազդեցությունը հայոց վեպի վրա» աշխատությունը:[287] Այս մեծարժեք ուսումնասիրության էջերում հեղինակը մանրամասն անդրադարձել է հայ-քրդական բանահյուսական փոխազդեցություններին, նաև քրդական մի շարք վիպերգերի: Նա կանգ է առել նաև «Բաղդ» և «Ռոստամ Զալ» հայկական ու քրդական պատումների վրա ու անդրադարձել դրանց փոխազդեցություններին: Հետաքրքրական է Ս. Կանանյանի «Քյոր-Օղլու» քրդական պատումը, որտեղ նա նշում է, որ խնդրո առարկա հեքիաթի մեջ գործող անձինք քրդեր են, նրանց նախաատիպը Զալալի ցեղի երկու եղբայրներն են՝ Զաֆարն ու Ասլանը: Լուրջ մեկնաբանություններով և փաստական նյութերով նա փորձել է ապացուցել, որ հեքիաթն իրապես քրդական է և որ հայկական պատումներում առկա է հենց քրդական այդ տարբերակի ազդեցությունը:[288]

Ս. Կանանյանի արխիվում պահպանվում են մի շարք վավերագրեր, բավականին արժեքավոր է նրա ինքնագիր մատյանը, որտեղ գրի են առնված քրդական բազմաթիվ հեքիաթներ, նաև ուսումնասիրություններ քրդական տարբեր բարբառների մասին, ազգագրությանը վերաբերող և այլ բազմաթիվ արժեքավոր փաստագրական նյութեր:[289] Իր լուրջ ուսումնասիրությունների հիման վրա Կանանյանը հանգել է այն եզրակացության, որ կուրմանջի բարբառը, որով գլխավորապես խոսում են Բալուի քրդերը, ամենահիմնականն ու ամենատարածվածն է, և հենց այդ բարբառով էլ նա գրի է առել մի շարք քրդական երգեր: Կանանյանը որոշ ուսումնասիրություններ է կատարել քուրդ ժողովրդի պատմության բնագավառում, հատկապես անդրադառնալով հայ-քրդական հարաբերություններին: Այս հարցում հետաքրքիր են նրա մի շարք հոդվածները, որոնք տպագրվել են հայկական պարբերական մամուլում: Նրա «Գոտաց աշխարհը» և «Մարաց գավառը» հոդվածները արժեքավոր ուսումնասիրություններ են հայ-քրդական հարաբերությունների պարզաբանման համար:[290] Երկու հոդվածներում էլ հեղինակը կանգ է առնում քուրդ ժողովրդի էթնիկական ծագման, նրա տարածքի, հերոսական անցյալի, թուրքական ու

պարսկական քաղաքականությունների և հատկապես հայ-քրդական հարաբերությունների վրա: Նա բացատրում է համիդյան գնդերի կազմակերպման հիմնական պատճառներն ու պարզաբանում նրանց գործունեությունը Արևմտյան Հայաստանում, մատնանշելով, որ կազմակերպվելով թուրքական կառավարության կողմից, դրանք ուղղված էին ոչ միայն հայերի, այլև քրդերի դեմ, ունենալով մեկ նպատակ՝ ոչնչացնել իր երկու թշնամիներին: Քրդագիտության առումով հետաքրքրական է Կանանյանի «Անհայտ գավառներ հին Հայաստանի» աշխատությունը, որը հրատարակվել է 1914թ. Էջմիածնում: Աշխատության յոթ գլուխներից յուրաքանչյուրում կարելի է հանդիպել կորդուքների ու Կորդուաց աշխարհի, մարերի և Մարաստանի, քրդերի և քուրդ-եզդիների տարածքին, նրանց ծագմանը, հայ-քրդական հարաբերությունների վերաբերող տեղեկությունների: Հեղինակն անդրադառնում է նաև հայկական այն գավառներին, որոնք քրդաբնակ են, այդ գավառների հայերի և քրդերի լեզվական փոխազդեցություններին, նաև՝ կենցաղային կյանքում փոխազդեցություններին:[291]

Խոսելով քրդական մշակույթում հայ մտավորականության ունեցած դերի մասին, չենք կարող չնշել հայ պատմագրության երախտավորներից Լեոյին, քանզի նա քուրդ ժողովրդի պատմության ուսումնասիրման ու լուսաբանման գործում իր անհերքելի ներդրումն ունի: Դեռևս 1870-ական թվականներին Լեոն նպատակադրված է եղել իր ուսումնասիրությունների հիման վրա քրդերի մասին մի ծավալուն հոդված գրել: Այդ հարցում նրան աջակցել է Գ. Սրվանձտյանցը, որի անմիջական նախաձեռնությամբ «Մշակի» 1897 թ. համարներում տպագրվել է Լեոյի «Քրդերը» խորագիրը կրող հոդվածը: Այն հետագայում վերամշակվել և կրկին լույս տեսել «Մշակի» 1898 թ. համարներում: Հեղինակը կանգ է առել քուրդ ժողովրդի պատմական անցյալի և հայ-քրդական հարաբերությունների վրա: 1911 թ. «Հորիզոնի» 168-րդ համարում տպագրված մեկ այլ՝ «Իրանի կյանքից» հոդվածում Լեոն անդրադարձել է Իրանում ապրող քրդերի պատմական անցյալին, նրանց զրաղեցրած տարածքին և ազգային սովորույթներին: Այստեղ, վերլուծելով լուրերի ծագման վերաբերյալ կարծիքները, Լեոն իրավամբ հանգել է այն ճիշտ եզրակացության, որ լուրերն ունեն քրդական ծագում: Այնուհետև նա կանգ է առել լուրերի տերիտորիայի, թվաքանակի, պաշտամունքի և ազգային սովորույթների վրա:

Լեոյին խիստ սրտամոտ է քուրդ ժողովրդի և հայ-քրդական հարաբերությունների պատմությունը: Այդ թեմաներով նա մի քանի անգամ Թիֆլիսում հայ հասարակության համար դասախոսություններ է կարդացել:[292] Այդ տեսակետից էլ հետաքրքրական է «Հայ-քրդական համաձայնությունը» հոդվածը, որտեղ հեղինակը ցույց է տվել երկու ժողովուրդների անցյալում ունեցած բարեկամական կապերը և հայ մտավորականներին կոչ է արել էլ ավելի ամրապնդել դրանք, հատուկ ուշադրություն դարձնել քրդական մշակույթին, լուսավորական աշխատանք տանել քրդերի մեջ: Այդ ուղղությամբ նա օրինակ է բերում Գրիգոր Արծրունուն և Րաֆֆուն, որոնք դեռևս 19-րդ դարում լայն աշխատանք էին տանում քրդերի մեջ լուսավորություն տարածելու և նրանց

քաղաքակրթելու ուղղությամբ: Անդրադառնալով հայ-քրդական մերձեցման հարցին, նա գրում է. «Այո, մերձեցումը միանգամային հնարավոր է, քանի որ քրդության շահերը թուրքական շահերի հետ միաձուլված չեն, այլ բոլորովին ներհակ են...»:[293]

Քուրդ ժողովրդի պատմության, սոցիալ-տնտեսական վիճակի, հայ-քրդական հարաբերությունների վերաբերյալ բավականին նյութեր են ընդգրկված Լեոյի «Անցյալից» և «Հայոց պատմության» աշխատություններում: Դրանցում առավել հետաքրքրական են այն հարուստ փաստական վկայությունները, որոնք վերաբերում են Հովսեփ Էմինին, Մուշի սբ. Կարապետի վանահայր Հովհան արքեպիսկոպոսին ու քրդերի միացյալ գործունեությանը:[294]

Լեոն բարձր էր գնահատում քրդերի հերոսությունն ու աղնվությունը, մանրամասն պատմում նրանց սովորությունների մասին: Նա այն հայ գիտնականներից էր, ովքեր իրենց արժեքավոր ուսումնասիրություններով պատասխան են տվել քրդագիտությանը հետաքրքրող մի շարք հարցերի, դրանով իսկ կարևոր լումա ներդնելով քրդական մշակույթի զարգացման գործում:

Այսպես, ուրեմն, առանց հոգևոր հանգույցի չէր կարող լինել երկու բախտակից ժողովուրդների՝ հայերի և քրդերի բարեկամությունը: Եվ հենց այդ էր հիմնական պատճառներից մեկը, որ հայ մտավորականությունն ամենայն ջանասիրությամբ, փաստական հարուստ նյութեր հայթայթելով, լծվել էր քուրդ ժողովրդի պատմության, գրականության, բանահյուսության, ազգագրության և լեզվի բազմակողմանի և գիտականորեն ուսումնասիրման, քրդերի մեջ լուսավորություն տարածելու գործին: Բնականաբար, դարավոր ավանդույթներ ունեցող հայ հարուստ գրականությունն ու հայ մշակույթի առաջադեմ գործիչներն իրենց բարերար ազդեցությունն են թողել քրդական մշակույթի բոլոր բնագավառներում, կործանումից փրկել նրա լավագույն նշխարները:

Պետք է իրավամբ նշել, որ 19-րդ դարի, երկրորդ կեսերին հայ մտավորականության ուսումնասիրությունները քրդական մշակույթում իրենց բարերար ազդեցությունը ունեցան հետագա տարիներին, առավել ևս 20-րդ դարի հայ մտավորականության վրա, որոնք խորազնին անդրադարձան քրդական մշակույթի բոլոր ոլորտներին, իրենց ներդրումներով նորանոր ուղիներ հարթեցին ողջ քրդական մշակույթի առաջընթացի համար: Հայ քրդագիտությունն իր մեջ ամփոփեց ու վեր հանեց գիտականորեն առ այսօր չլուծված բազում հարցեր ու խնդիրներ:

Հայ մտավորականության ակտիվ գործունեության շնորհիվ հնարավոր եղավ նաև քուրդ ժողովրդին ու նրա վերնախավի մի մասին հեռու պահել թուրքական «բաժանիր, որ տիրես» նենգամիտ քաղաքականությունից, էլ ավելի ամրապնդել հայ և քուրդ ժողովուրդների զինակցական դաշինքը և սերմանել այն գաղափարը, որ միայն միասնական պայքարի միջոցով է հնարավոր իրենց բաղձալի նպատակների իրականացումը: Պետք է երախտագիտությամբ նշել, որ աշխարհի ոչ մի քաղաքակրթե ժողովուրդ այնքան ներգրում չի ունեցել որևէ այլ ժողովրդի մշակութային կյանքում, որքան հայերն ու հայոց դարավոր մշակույթը քուրդ ժողովրդի պատմամշակութային կյանքում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ա. ՔՐԴԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ելնելով ուսումնասիրության հիմնական նպատակներից, փորձենք համառոտակի անդրադառնալ պատմական այս իրողությանը: Մի կողմից տնտեսական ծանր պայմանները, մյուս կողմից՝ ֆիզիկական բնաջնջման սպառնալիքը պատճառ հանդիսացան, որ քուրդ ժողովրդի մի հատվածը թողնի իր հայրենի երկիրը և բռնի պանդխտության ճամփան: Նրանք շարժվեցին դեպի Ռուսաստան և բնակություն հաստատեցին Արևելյան Հայաստանում, իրենց բարեկամ հայ ժողովրդի մոտ: Այս կապակցությամբ «Նոր դար» թերթը գրել է, որ բազմաթիվ հայերի հետ քրդերը, մազապուրծ լինելով թուրքական յաթաղանից, գաղթեցին Կովկաս:[1]

Քրդերը սկսել են գաղթել Արևելյան Հայաստան հիմնականում 19-րդ դարի սկզբից: Քրդական բազմաթիվ ցեղեր հաստատվեցին Հայաստանում և Ադրբեջանում 1806-1812 թվականների ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների ժամանակ: Այնուհետև այդ գործընթացը ժամանակ առ ժամանակ շարունակվեց: Պետք է նշել, որ այդ պատերազմների ժամանակ քրդերը միշտ էլ ձգտել են մեկնել Ռուսաստան և հաճախ են Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու խնդրանքով դիմել ռուսական փոխհյուպատոսությանը, հրամանատարությանը: Այսպես, դեռևս 1807թ. Պարսկաստանից քուրդ Մահմեդ Սեֆի Սուլեյմանը, որն իր տրամադրության տակ ուներ 500-600 քրդական ընտանիքներ, թուրք-պարսկական սահմանում գտնվող ռուսական բանակի հրամանատար Կոտլյարևսկուն խնդրում է թույլ տալ, որ ինքն իր մարդկանցով անցնի ռուսական տիրապետության տակ:[2] Այդ նույն ժամանակ քրդական Ջելեբիների ցեղապետը, որն իր տրամադրության տակ ուներ 1000 ընտանիք, դիմում է ռուսական հրամանատարությանը, խնդրելով իրենց ռուսական հպատակության տակ առնել: Այդ խնդրանքն ընդունվում է սիրալիրությամբ:[3] Եվ այսպես, աստիճանաբար սկսվում է քրդերի ներգաղթը Արևելյան Հայաստան:

Թուրքիայից ու Պարսկաստանից Ռուսաստան քրդերի գաղթը լայն թափ է ստանում Գյուլիստանի պայմանագրի ստորագրումից հետո: Բազմաթիվ քրդական ընտանիքներ Արևելյան Հայաստան գաղթեցին 1828-29 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո:[4] 1829 թվականին Պարսկաս-

տանից Երևանի մարզ են գաղթում քրդական 30 ընտանիքներ և բնակություն հաստատում Դավլու գյուղում:[5] Այդ թվականներին քրդական բազմաթիվ զինված ջոկատներ անցնում էին ռուսական բանակ, դիմում կոմս Պասկևիչին, որպեսզի միացյալ ուժերով հանդես գան Թուրքիայի դեմ:[6]

Ռուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինը վկայում է, որ քրդերը հակում ունեին ռուսների հանդեպ: Ռուսական ճամբարում կար եզդի-քրդերի հեծյալ մի ջոկատ: Այնուհետև նա նշում է, որ մոտ 300 քուրդ ընտանիքներ ընդունելով թագավորի տիրապետությունը, բնակվում էին Արարատյան սարում:[7] Պուշկինը մեծ հետաքրքրություն հանդես բերելով դեպի քուրդ ժողովուրդը, ցանկանում էր ավելի մոտիկից ծանոթանալ այդ ժողովրդի նիստուկացին, պաշտամունքին: Հայտնի է, որ նա այդ նպատակով ժամանակին թարգմանելու է տվել իտալացի գիտնական Մորիս Գարձոնի հեղինակած քրդերեն լեզվի քերականության ձեռնարկում եղած հետաքրքիր տեղեկությունները:[8]

Քրդերի ռուսական կողմնորոշմանն է անդրադարձել նաև Ա. Գրիբոյեդովը: Երբ 1827 թվականի հուլիսին, նա այցելում է պարսկական բանակի զորակենտրոն և զրույց ունենում քուրդ ցեղապետ Աբբաս Միրզայի հետ, վերջինս դիմում է Գրիբոյեդովին, որ նա միջնորդի ռուսական հրամանատարության առջև և խնդրի իրենց ընդունել որպես ռուսահպատակներ:[9] Այնուհետև նա իր «Ճանապարհորդական նոթեր» գրքում կրկին անդրադառնում է այս հարցին և նշում, որ «Սադակցի», «Միլլի», «Շարուցի» քրդական ցեղերը մեծ հակում են ունեցել ռուսների հանդեպ և ցանկություն են հայտնել հպատակվել նրանց:

Ռուս մեծ հումանիստ գրող Լ. Ն. Տոլստոյը նույնպես հետաքրքրվել է քրդերի կյանքով, իր քննադատական խոսքն ուղղել այն ազգայնականներին, ովքեր արհամարհական վերաբերմունք են դրսևորել քուրդ ժողովրդի նկատմամբ, նրանց ոչնչացնելու հարց բարձրացրել: Նա քրդերին քաղաքակրթելու, նրանց մեջ լուսավորություն տարածելու գաղափարի կողմնակիցն էր:[10]

Քրդերի համակրանքը ռուս ժողովրդի հանդեպ և Արևելյան Հայաստան գաղթելու նրանց ձգտումը առավել ցայտուն արտահայտվեցին 1853-56 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Նրանք ռուսների հաղթանակի հետ էին կապում իրենց ազատությունը: Հենց պատերազմի առաջին օրվանից Թուրքիայից Ջալալի քրդական ցեղերից բազմաթիվ ընտանիքներ գաղթեցին Երևանի նահանգ:[11] Իսկ պատերազմի ընթացքում քրդերն ամեն կերպ օգնում էին ռուսական բանակին: Այս կապակցությամբ քրդագետ Մինորսկին գրում է. «Ռուսները, երբ կռվում էին թուրքերի դեմ, քրդերը միշտ էլ օգնում էին ռուսներին, հատկապես, երբ այդ գործին միջնորդում էր Լորիս Մելիքովը»:[12] Այնուհետև կառավարությանն ուղարկված Մուրավյովի զեկուցագրերից մեկից տեղեկանում ենք, որ 1855 թ. 1200 քրդական ընտանիքներ Թուրքիայից գաղթել են Ռուսաստան:[13]

Պատմական բազմաթիվ տեղեկություններից հանգում ենք այն եզրա-

կացության, որ միայն 1853-56 թթ. պատերազմի ժամանակ 3000 քրդական ընտանիքներ Թուրքիայից գաղթել են Ռուսաստան, և նրանց հիմնական մասը բնակություն է հաստատել Արևելյան Հայաստանում: Թուրքական կառավարությունը, տեսնելով, որ Ռուսաստանի հանդեպ քրդերի համակրանքն աստիճանաբար աճում է, 1853-56 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո էլ ավելի ուժեղացրեց իր հսկողությունն ու հալածանքները քրդերի նկատմամբ: Թուրքական կառավարությունը կրկին դիմեց իր նախկին քաղաքականությանը՝ կազմակերպեց ազգամիջյան կռիվներ, քրդերի զանգվածային կոտորած, իրար դեմ հրահրեց քրդական ցեղերին: Թուրքական կառավարությունը լավ էր հասկանում, որ եթե նորից պատերազմ սկսվի ռուսների դեմ, քրդերը կպաշտպանեն ռուսներին ու հայերին և իրենց շարժումներով կաջակցեն նրանց: Այս անգամ նա դիմեց այլ կեղծիքի: 1877 թվականի պատերազմի նախօրեին նա սկսեց սիրաշահել քրդական բեգերին ու աղաներին, նրանց զինվորական աստիճաններ ու պարգևներ շնորհել: Այդպիսով քրդական վերնախավի որոշ մասին իր կողմը գրավեց, սահմանամերձ շրջանները դատարկեց քրդերից: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ պատերազմի առաջին իսկ օրվանից քրդերը չմասնակցեցին թուրքական զորահավաքին: Այս անգամ թուրքական կառավարությունը բռնի ուժով կարողացավ ամբողջ պատերազմի ընթացքում օգտագործել միայն 10-ական զինվորից բաղկացած մի քանի քրդական հեծյալ ջոկատ, որոնք շատ շուտ խուճապի մատնվեցին և անցան ռուսական բանակի կողմը:[14]

Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ այս պատերազմի ընթացքում քրդերը հավատարիմ են մնացել ռուսներին, ամեն առիթով Թուրքիայից գաղթել են Ռուսաստան, Արևելյան Հայաստան: Հայտնի է նաև, որ այդ ժամանակ Ալեքսանդրապոլի ռուսական հեծյալ գնդի մեջ կար 400 հոգուց բաղկացած քրդական հեծյալ ջոկատ:[15] Բացի այդ, կային 400 մարդուց բաղկացած քրդական առանձին երկու գումարտակներ: Իսկ 1877 թ. վերջին Էրզրումում քրդական հեծյալ ջոկատը, որը թուրքական բանակի մի մասն էր կազմում, միացավ ռուսական բանակին:[16]

Քրդերի ռուսամետ պահվածքի մասին վկայող փայլուն էջերից են նաև դիլանցիների առաջնորդներից ռուսական գեներալ Ալիաշրաֆ բեկի և նրա հոր՝ Գուլի Ջաֆար աղայի, որը նույնպես ռուսական գեներալի կոչում ուներ, բարեկամական հարաբերությունները ռուսների ու հայերի հետ:

Հայկական մեկ այլ աղբյուր վկայում է, որ ինչպես պատերազմի ժամանակ, այնպես էլ պատերազմից հետո Բայազետից և Ալաշկերտից Արևելյան Հայաստան գաղթեցին 300 հայ, 200 քուրդ ընտանիքներ և բնակություն հաստատեցին Երևանի նահանգում:[17] Իսկ երբ 1878 թ. ստեղծվեց Կարսի մարզը և որպես առանձին վարչական միավոր անցավ Ռուսաստանին, թուրքական ծայրամասերում ապրող քրդերը, որոնք ֆիզիկական բնաջնջման ու հալածանքի էին ենթարկվում թուրքական կառավարության կողմից, սկսեցին գաղթել դեպի Կարս և ընդունել ռուսահպատակություն:[18]

Դեպի Ռուսաստան քրդերի գաղթն առավել մեծ թափ ստացավ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո: Այդ թվականներին մի շարք քրդական ցեղեր զինված պայքարում էին թուրքերի դեմ և իրենց բախտը կապում Ռուսաստանի հետ: Այս առթիվ հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը գրում է. «Համաշխարհային պատերազմի ժամանակ քրդերը օգնում էին ռուսական բանակին թե՛ ռազմապես, թե՛ տնտեսապես, ռուսական բանակում կային քրդական զինված ջոկատներ:[19]

Հայկական մեկ այլ աղբյուր, անդրադառնալով քրդական գաղթին, գրում է, որ Համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ հայերը թուրքական յաթաղանից ազատվելու համար սկսեցին գաղթել դեպի Ռուսաստան, քրդերը հետևեցին իրենց հայ բարեկամներին՝ ամբողջ ճանապարհին վայելելով համազյուղացի հայերի հովանավորությունը:[20]

Եվ այսպես հայ և քուրդ ժողովուրդների բեկորները, Թուրքիայից և Պարսկաստանից գաղթելով դեպի Ռուսաստան և հաստատվելով Արևելյան Հայաստանում, ազատվեցին թուրք-պարսկական ռազմաֆեոդալական տիրապետության զարհուրելի լծից ու կոտորածից: Սակայն ցարական կառավարությունն էլ էր ազգահալած քաղաքականություն վարում: Շուտով Հայաստանում ապրող քրդերի մասին կազմվեցին ու մշակվեցին մի շարք նախագծեր, որոնք բխում էին ցարական կառավարության ներքին տնտեսական շահերից: 1869 թ. կառավարությունը հատուկ օրենք հրապարակեց, որով քրդերը վերցվում էին վարչական նոր կառավարման տակ և ղեկավարվում ռուսական պրիստավների ու կառավարիչների կողմից: Վերջիններս ինքնիշխան էին քուրդ ազգաբնակչության նկատմամբ, կամայական հիմունքներով էին լուծում նրանց հարկային հարցերը, վեճերը, դատն ու դատաստանը:

Քուրդ գյուղացին, հալածվելով ռուսական աստիճանավորների, տեղական աղաների ու բեկերի կողմից, հաճախ թողնում էր իր օջախը, տունուտեղը և մեկնում քաղաք՝ համալրելով բանվորների շարքերը: Հիմնականում գնում էին Թիֆլիս, ծառայության մտնում գործարանում, ֆաբրիկայում, զբաղվում բեռնակրությամբ: Գյուղացիության այս հոսքը դեպի քաղաք նպաստեց Արևելյան Հայաստանում քուրդ ազգաբնակչության թվի պակասեցմանը:

Քուրդ գյուղացին Արևելյան Հայաստանում զրկված էր իր մշակույթից, ցարական կառավարությունն այդ ուղղությամբ ոչինչ չէր ձեռնարկում, ամբողջ Արևելյան Հայաստանում քրդերի համար միայն մեկ դպրոց կար, որը բացվել էր 1902 թվականին Ջոր գյուղում և ուր հաճախում էին քուրդ հարուստների երեխաները:

Արևելյան Հայաստանում քուրդ գյուղացուն հովանավորում էր միայն հայ գյուղացին: Այս առթիվ հայ մեծանուն գրող Րաֆֆին գրում է. «Քրդական բազմաթիվ ցեղեր հավասար օժանդակություն էին ստանում հայոց մասնաժողովներից»:[21] Իսկ «Նոր- դար» թերթը գրում է. «Ամեն մի հայ տուն, աղքատ թե հարուստ, ընդունում էր գրկաբաց իրենց մոտ ապրելու մի

քուրդի, հանդերձ նրա ընտանիքով: Իսկ նրանք էլ իրենց հերթին օգնում էին տեղացիներին (հայերին - Կ. Ջ.):[22]

Եվ այսպես, քրդերը գաղթելով Արևելյան Հայաստան, հովանավորություն գտան հայ ժողովրդի և հայ մտավորականության կողմից: Հետագայում, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, մի նոր դարաշրջան բացվեց քրդական համայնքի համար, թե՛ սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և թե՛ մշակութային կյանքի զարգացման առումով:

Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՅԱՆՔՈՒՄ (1920 – 1990 ԹԹ.)

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ էլ ավելի ամրապնդվեց հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, օրեցօր բարելավվում էր քուրդ ժողովրդի վիճակը: Հայաստանի նորաստեղծ կառավարությունն առաջին հերթին միջոցներ ձեռք առավ քուրդ ժողովրդի տնտեսական վիճակն ապահովելու և նրան հողի հետ կապելու ուղղությամբ: Միաժամանակ անհրաժեշտ քայլեր ձեռնարկվեցին քրդերի մեջ կուլտուրլուսավորական աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու համար: Այդ ուղղությամբ Հայաստանի կառավարությունը, ձևավորման առաջին իսկ օրվանից մինչև 1990 թվականը, ընդունել է հարյուրից ավելի որոշումներ ու հրամանագրեր, որոնք բարենպաստ են եղել քուրդ համայնքի համար: «Պրավդան», անդրադառնալով Հայաստանի քրդական համայնքի կյանքին, արդարացիորեն փաստում էր. «Երբ 1920 թվականի նոյեմբերին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, մի նոր դարաշրջան սկսվեց քուրդ ազգաբնակչության համար»:[23]

Եվ պատահական չէր, որ Հայաստանի կառավարության հոգատարության, բարյացկամ վերաբերմունքի և տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների շնորհիվ քրդերի թիվն աստիճանաբար աճում էր: Եթե 1922 թվականին Հայաստանում ապրող քուրդ բնակչության թիվը կազմում էր 8650 մարդ, ապա 1931 թվականին արդեն հասել էր 19208-ի, որից Ապարանի շրջանում 7221, Թալինում 4843, Վեդիում 788, Ղամարլուում 421, Վաղարշապատում 1706, Աշտարակում 1064, Հոկտեմբերյանում 1804, Բասարգեչարում 346, Կոտայքում 286, Լենինականում 146 և այլն: Իսկ 1979 թվականի մարդահամարի տվյալներով Հայաստանում քրդերի թիվը կազմում է շուրջ 70 հազար:

Հայաստանի կառավարությունը առաջին իսկ տարիներին 15 գյուղ, 6109 դեսյատին ընդհանուր հողատարածությամբ, հատկացրեց քրդերին: Այդ գյուղերից էին Լենինականի գավառի 7-րդ և 6-րդ գավառամասի Դյուզաքանդ, Ջուրբա (Սորիկ), Սաբունջի, Քյալաշրեկ, Գյալթո, Հակկո,

Ղբխթափա, Թլլըք, Էջմիածնի գավառի Ղամուշլու, Ղարխուն, Ղուրու- Աբազ, Անգրսակ, Աշխարհապատ և Այարլու գյուղերը:[24] 1924 թվականին միայն Ալեքսանդրապոլի գավառում արդեն կար 13 քրդական գյուղ, Երևանի գավառում 6, Նոր Բայազետի գավառում 5, իսկ քրդական հարյուրավոր ընտանիքներ էլ բնակություն էին հաստատել հայկական գյուղերում ու կապվել հողի հետ: Էջմիածնի գավառում և Դավալուում չկար մի հայկական գյուղ, որտեղ բնակություն հաստատած չլիներին քրդական ընտանիքներ:[25]

1924 թվականի օգոստոսի 21-ին ՀԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեն որոշեց մի խումբ հողազուրկ քրդերի տեղավորել Թալինի գյուղերում, նրանց ապահովել հողով և միջոցներ հատկացնել բնակարաններ կառուցելու համար:[26]

Եվ այսպես, Հայաստանի քրդերի մեծամասնությունը մինչև 1924 թվականի վերջը բավարարվեց հողով: Այս մասին է վկայում 1924 թվականի դեկտեմբերին տեղի ունեցած ՀԽՍՀ հողաշինարարների առաջին համագումարը, որի որոշման մեջ պարզորոշ կերպով հանրագումարի է բերված քրդերի շրջանում տարվող հողաշինարարական աշխատանքը: Հայաստանի կառավարության նման բարյացակամ վերաբերմունքը տեսնելով, բնական էր, որ այլ վայրերում բնակվող շատ քրդեր գալիս էին Հայաստան, իրենց բախտը կապում հայ ժողովրդի հետ: Այսպես, օրինակ, 1928թ. ապրիլի 13-ին մի խումբ քուրդ ընտանիքներ, որոնք Առաջին համաշխարհային պատերազմից հետո ռուսական բանակի հետ եկել էին Կովկաս և քոչվորական կյանք էին վարում, աստիճանաբար տեղափոխվեցին Հայաստան և բնակություն հաստատեցին Լենինականի գյուղերում:[27] Նույն թվականին մի խումբ քուրդ ընտանիքներ ևս դիմեցին Անդրկովկասի Կենտրոնական գործադիր կոմիտեին՝ Հայաստանում բնակություն հաստատելու խնդրանքով. «Խնդրում ենք մեզ թույլ տալ բնակություն հաստատել Խորհրդային Հայաստանի Այարլու գյուղերում, հայերի մոտ, որոնց հետ մենք կլինենք եղբայրներ և կզբաղվենք հողագործությամբ»:[28] Հայաստան եկող քրդերին անմիջապես հող էին հատկացնում, տրվում էին անհրաժեշտ միջոցներ բնակարաններ կառուցելու և իրենց տնտեսությունները վերականգնելու համար: Կարճ ժամանակամիջոցում գետնափոր տնակները վերածվում էին տուֆակերտ լուսավոր շենքերի:

Հայաստանում քուրդ ժողովրդի շրջանում տարվող լուսավորչական աշխատանքը կուլտուրական շինարարության բաղկացուցիչ մասն էր կազմում: Այն հիմնականում ընթանում էր հայ մշակույթի բարերար ազդեցության պայմաններում, հայ մտավորականների անմիջական օժանդակությամբ ու ներգրումներով: Եվ այսպես, քրդերի շրջանում տարվող կուլտուրական շինարարությունը կարելի է բաժանել երեք շրջանների՝ 1920-1930, 1930-1946 և 1946-1990 թթ.:

Առաջին շրջանը գլխավորապես բնութագրվում էր ժողովրդական կրթության համակարգի ստեղծմամբ, այլ խոսքով, դա անգրագիտության դեմ լայն ճակատով պայքարի շրջանն էր: Այս ժամանակահատվածում հիմնվեցին քրդական դպրոցներ, ուր հիմնականում դասավանդում էին քրդերեն տիրապետող հայ մտավորականներ: Կազմվեցին քրդական դասագրքեր, վերջ տրվեց անգրագիտությանը, ստեղծվեցին ազգային կադրեր: Հայ մտավորականների գործուն աջակցությամբ ձևավորվեց քրդական գեղարվեստական և քաղաքական գրականությունը: Այս ժամանակահատվածում նաև համընդհանուր պայքար ծավալվեց նահապետական կենցաղի ու սովորույթների դեմ:

Երկրորդ շրջանը համընկնում է ամբողջ երկրում կուլտուրական հեղափոխության ծավալման ժամանակահատվածին, երբ լայն հնարավորություններ ստեղծվեցին նաև քուրդ ժողովրդի մշակույթի զարգացման համար: Ստեղծվեցին մշակութային օջախներ, ակումբներ, գրադարաններ, կազմվեց քրդական նոր այբուբեն, լայն թափ հաղորդվեց գեղարվեստական ու քաղաքական գրականությանը, սկսեց հրատարակվել քրդական «Ռյա թազա» թերթը, Երևանում բացվեց Անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումը, Հայաստանի մշակույթի պատմության ինստիտուտում կազմակերպվեց քրդական բաժին, հիմնվեցին քրդական շրջիկ պետական թատրոնը և քուրդ գրողների մասնաճյուղը:

Երրորդը քրդական մշակույթի ծաղկման ու բարդավաճման շրջանն է: Այս ժամանակահատվածում քրդական մշակույթը հայկական մշակույթի բարերար ազդեցությամբ դուրս եկավ ազգային նեղ շրջանակներից և ճանապարհ գտավ ողջ երկրում: Այս շրջանում Հայաստանի Գ.Ա.Ա Արևելագիտության ինստիտուտում ստեղծվում է քրդագիտական բաժինը, վերահրատարակվում է «Ռյա թազա» թերթը, Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում բացվում է քրդագիտական բաժինը, Երևանից օրական մեկուկես ժամ տրվում են քրդական ռադիոհաղորդումներ, լայն հնարավորություններ են ստեղծվում քրդական գրականության, երաժշտության, արվեստի, այլ ճյուղերի զարգացման համար:

Պետք է նշել, որ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ շրջանում բավականաչափ ծանր է ընթացել քրդերի մեջ անցյալից ժառանգված հետադիմական մնացուկների հաղթահարման գործընթացը, որն ամբողջությամբ իրենց ուսերին են վերցրել հայ մտավորականները՝ նորաստեղծ քուրդ մտավորականության աջակցությամբ: Հավատարիմ մնալով իրականությանը և չմեղանչելով խղճի առջև, երախտագիտությամբ նշենք, որ այդ ժամանակահատվածում Հայաստանի կառավարության ընդունած գործնական որոշումները պատմական հեղաշրջումների նշանակություն ունեցան քուրդ ժողովրդի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի վերափոխման գործում: Այդ իսկ պատճառով Հայաստանի քրդական համայնքի համար ստեղծված բարենպաստ պայմանները պետք է գիտականորեն վերլուծել և ընդգծել դրանց այժմեական կարևորությունը: Անդրադառնալով ձեռնարկված գործնական միջոցառումներից մի քանիսին, նշենք, որ 1924 թ. հուլիսի 5-ին Աբագած լեռան վրա կայացած քուրդ համայնքի համագումարը շրջադարձային էր համայնքի կյանքում: Հատկապես ուշագրավ էր այն հանգամանքը,

որ առաջին անգամ քուրդ մտավորական Արաբ Շամիլովը, նշանակվելով Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի հրահանգիչ, մասնակցում էր համագումարին և քրդերեն սահուն զեկույցով անդրադարձավ Հայաստանում ազգային հարցի լուծմանը՝ մատնանշելով դրա պատմական նշանակությունը: Այդ համագումարում հիմնականում քննարկվեցին հետևյալ հարցերը. «Կուսակցության անելիքները գյուղում», «Կուլտուր-կրթական աշխատանքները քրդերի մեջ», «Կենցաղային հարցեր՝ ղալան, քրդերի շրջանում բազմակնության վերացում» և այլն: Այս հարցերի վերաբերյալ ընդունվեցին համապատասխան որոշումներ, որոնց իրականացմանն առաջին հերթին ձեռնամուխ եղան հայ մտավորականները:

Քրդական գյուղերում կուլտուր-լուսավորչական աշխատանքների ծավալման գործում իր մեծ ներգործությունն ունեցավ նաև Լենինականի յոթերորդ գավառամասի Անդրկովկասյան քրդերի համագումարը, որը կայացավ 1925 թ. հունվարին: Համագումարին ներկա էին 76 պատգամավորներ, այդ թվում՝ մեկ կին: Քննարկվեցին հետևյալ հարցերը. «Խորհրդային իշխանությունը», «Կուլտուր-լուսավորչական զանգվածային աշխատանքները քրդերի մեջ», «Կոպերացիան և ներքին առևտուրը», «Պայքար հին կենցաղի մնացուկների դեմ»:

Ձեռնարկված միջոցառումներից էր Հայաստանի քուրդ ազգաբնակչության ակտիվի առաջին խորհրդակցությունը, որը տեղի ունեցավ 1926 թվականի ապրիլի 19-20: Խորհրդակցությանը ներկա էին Լենինականի ու Էջմիածնի գավառի պատգամավորները: Խորհրդակացությունը, բազմաթիվ այլ հարցերի թվում քննարկեց նաև «Քաղլուսավորության և դպրոցական շինարարության» հարցը:[29] Խորհրդակցությանը մասնակցում էր ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ա. Հովհաննիսյանը, որը հատատեց հանրապետությունում ամենուր քուրդ ժողովրդին աշակցելու, նրա մշակույթի զարգացման համար ուղի հարթելու, լայն լուսավորչական աշխատանքներ ծավալելու և նրան տնտեսական հետամնաց վիճակից հանելու, միաժամանակ ամենուր հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու՝ կոմունիստների վճռականությունը: Նա նշեց, որ քուրդ ժողովրդի առաջընթացն ունի ոչ միայն տեղական, այլև՝ միջազգային նշանակություն:[30]

Հայտնի է, որ այդ ժամանակ քրդական գյուղերում ինչպես տնտեսության, այնպես էլ մշակույթի բնագավառում ազգային կադրեր համարյա չկային: Այդ իսկ պատճառով տարին մի քանի անգամ Երևանում տարբեր մասնագիտությունների գծով քրդերի համար կազմակերպվում էին մեկամսյա և եռամսյա դասընթացներ:

Վերոշարադրյալից դժվար չէ կռահել, որ քուրդ ժողովրդի մշակույթը զարգանում էր հայկական մշակույթին զուգահեռ: Առաջընթացը բազմաբովանդակ էր առաջին հերթին, ժողովրդական կրթության, գիտության, գրականության, արվեստի ոլորտներում: Քուրդ աշխատավորները սկսեցին ակտիվ կերպով մասնակցել հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին:

Ճիշտ է, հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը դարերի պատմություն ունի և նրանց մշակույթները պատմականորեն միշտ փոխկապակցված են եղել, սակայն ոչ մի ժամանակահատվածում այս բախտակից ժողովուրդների ստեղծագործական, մշակութային առնչությունները այնքան սերտ չեն եղել, որքան Խորհրդային Հայաստանի ժամանակ: Նշենք, որ Հայաստանի կառավարության գործնական միջոցառումներին զուգընթաց, վճռորոշ նշանակություն ունեցավ նաև հայ մշակույթի գործիչների ներգրումը քուրդ ժողովրդի մշակույթի զարգացման հարցում:

Գ. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն վերը նշվեց, առաջին շրջանում մեծամասշտաբ աշխատանք ծավալվեց՝ Հայաստանի քուրդ ազգաբնակչության շրջանում վերջնականապես վերացնելու անգրագիտությունը: Հիմնականում քրդախոս հայ մտավորականության ուժերով բացվում էին ազգային դպրոցներ: Հայաստանի կառավարության հոգատար վերաբերմունքի, կարելի է ասել առաջին և ամենավառ դրսևորումներից մեկը 1920 թվականին բազմաթիվ որբ քրդերի Աշտարակի որբանոցում տեղավորելն էր: Այնտեղ նրանց ուսուցանում էին նաև քրդերեն: Որբանոցում քրդերենի ուսուցման գործում մեծ ու անգնահատելի աշխատանք է կատարել 1921 թ. հայատառ քրդերեն «Շամս» այբբենարանի հեղինակ, քուրդ ժողովրդի մշակույթի գիտակ Լազոն (Հակոբ Ղազարյան), որի գործունեությանը արդեն մասամբ անդրադարձել ենք և կանդրադառնանք հաջորդ բաժնում:

Հայ մտավորականների անմիջական օգնությամբ ու ջանքերով տարբեր որբանոցների սաները՝ Հաջիե Ջնդին, Ամինե Ավդալը, Ջասիմե Ջալիլը, Ջարկյազ Բակոևը, Ջարդոյե Գենջոն, Բրոյե Մամոն, Ուսուվե Ալին, Բոնդոյե Իվոն, քրդուհիներ՝ Ջայնավա Իբոն, Հզրատա Միրզան, Խանըմա Ռզգոն և մյուսները հետագայում դարձան գիտության գործիչներ, գրողներ, լրագրողներ, մանկավարժներ և այլն:

Անգրագիտության վերացման մասին Հայաստանի ժողկոմխորհի 1921թ. սեպտեմբերի 21-ի դեկրետը մեծապես նպաստեց Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների, հատկապես քրդերի շրջանում լուսավորչական աշխատանք ծավալելուն և անգրագիտությունը վերացնելուն: 1921 թվականին Հայաստանի Լուսժողկոմատին կից կազմակերպվեց ազգային փոքրամասնությունների բյուրո, որը զբաղվում էր ադրբեջանցիների, ռուս-մալականների, քրդերի և ասորիների կուլտուր-լուսավորական աշխատանքներով: Մանկավարժական կադրեր պատրաստելու և քրդական գյուղերում դպրոց բաց անելու նպատակով, սեպտեմբերին Աշտարակի շրջանում հայ մտավորականների անմիջական ղեկավարությամբ սկսեցին անցկացվել դասընթացներ:[31] Այդ դասընթացները ղեկավարում էր Լազոն: Ընդգրկված մանկավարժների մեծ մասը քրդերենին տիրապետող հայեր

էին, և ուսուցումը տարվում էր քրդերեն: Նոյեմբերին դասընթացն ավարտած Արամ Մուրադյանը, Նշան և Թագուհի Ոշտունյանները, Սողոմոն Սարգսյանը, Սոկրատ Մկրտչյանը, Երեմ Այվազյանը և ուրիշներ մանկավարժական աշխատանքի են գործուղվում Ապարանի, Աշտարակի, Թալինի, Հոկտեմբերյանի և այլ շրջանների քրդական գյուղեր: Այս մասին շրջանավարտներից Սոկրատ Մկրտչյանը նշում է. «Հայաստանի կառավարությունն ամեն ինչ արեց քուրդ ազգաբնակչության մեջ վերացնելու անգրագիտությունը: Ես էլ որպես քուրդ ուսուցիչ գործուղվեցի Սարդարապատի շրջան (այժմ՝ Արմավիր), որտեղ տեղական իշխանությունների օգնությամբ կարճ ժամանակամիջոցում բացեցինք քրդական դպրոցներ»:[32]

Առաջին քրդական դպրոցները 1921 թվականին բացվեցին Ապարանի շրջանի (այժմ՝ Արագածոտնի մարզ) Ջարջարիս, Ղոնդաղազ, Ջորանմազ, Մեծ Ջամուշլի գյուղերում: Հետագայում աստիճանաբար մեծանում էին քուրդ ազգաբնակչության շրջանում լուսավորության գործն ընդլայնելու, քրդական գյուղերում ամենուր ազգային դպրոցներ բացելու, ազգային կադրերի պատրաստմանն ուղղված միջոցառումների մշակման հնարավորությունները:

1924 թվականի նոյեմբերի 15-17-ը Լուսժողկոմատի անմիջական նախաձեռնությամբ Վաղարշապատում անց է կացվում քուրդ ուսուցիչների համագումար, որին մասնակցում էին ՀԿԿ Կենտկոմի հրահանգիչ Արաբ Շամիլովը, հայ մանկավարժներից Մխիթարյանը, Ոշտունին, Ջալիլյանը և Մուրադյանը: Այստեղ քննարկվեց քուրդ մտավորականներ պատրաստելու և երիտասարդ կադրերին Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, հատկապես Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտում սովորելու ուղարկելու հարցը: Ա. Շամիլովը, ելույթ ունենալով քրդական դպրոցների վիճակի մասին, արծարծեց քրդական նոր այբուբեն կազմելու և ազգային դպրոցներին ու գրականությանն առավել մեծ ուշադրությամբ վերաբերվելու խնդիրը: Քրդական նոր այբուբեն կազմելու առաջարկը բացատրվում էր նրանով, որ հայկական տառերով կազմված այբուբենը չէր համապատասխանում քրդերենի հնչյունաբանությանը:[33]

Հայաստանի Լուսժողկոմատի ազգային փոքրամասնությունների խորհուրդն իր 1924թ. դեկտեմբերի 16-ի նիստում քննարկեց ազգային փոքրամասնությունների խորհրդին կից ազգային փոքրամասնությունների առանձին սեկցիաներ կազմակերպելու հարցը: Կոլեգիան որոշեց կազմել երեք սեկցիաներ. 1) թուրքական, 2) ռուսական և 3) ասորական ու քրդական:[34] Այս սեկցիաները հետագայում ծավալուն աշխատանք տարան կուլտուր-լուսավորական աշխատանքների բարելավման ուղղությամբ: Այդ տարիներին քրդական սեկցիան իր անդամների մասնակցությամբ Թալինի, Ապարանի, Վաղարշապատի և այլ քրդաբնակ շրջաններում ու քրդական գյուղերում կուլտուր-լուսավորական օջախների կազմակերպման ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկեց: Գյուղերում հիմնականում բացվեցին դպրոցներ, նաև՝ խրճիթ-ակումբներ, գրադարաններ, բժշկական տեղամասեր:

Հայաստանի կառավարության կողմից ձեռնարկված կարևորագույն գործնական քայլերից էր 1924թ. դեկտեմբերի 25-ին Երևանում բացված ուսուցիչների առաջին համագումարը, որը նաև անդրադարձավ ազգային փոքրամասնությունների մեջ լուսավորական աշխատանքների ծավալման խնդրին: Քննարկվեցին ինչպես թուրքական, այնպես էլ քրդական գյուղերն ազգային կադրերով ապահովելու և բոլոր գյուղերում ազգային դպրոցներ հիմնելու խնդիրները: Հայաստանի լուսժողկոմ Ա. Մռավյանն իր զեկուցման մեջ հատկապես շեշտեց քրդական դպրոցներն ազգային կադրերով ապահովելու և քուրդ երեխաների կրթության ու դաստիարակության համար լայն հնարավորություններ ստեղծելու անհրաժեշտությունը: Համագումարից հետո քրդական գյուղերում լուսավորական աշխատանքին նոր թափ հաղորդվեց, նաև գործնական միջոցներ ձեռնարկվեցին անգրագիտության վերացման ուղղությամբ: Այս կապակցությամբ մեկ անգամ ևս մոբիլիզացվեցին այն հայ մտավորականները, ովքեր քրդերեն գիտեին: Նրանք գործուղվեցին քրդական գյուղեր, որոնցում բացվեցին դպրոցներ և լիկկայաններ: Մինչև 1928 թվականը Լենինականի գավառի 7-րդ գավառամասի քրդական դպրոցների բոլոր ուսուցիչները, բացառությամբ մեկից, հայեր էին:

1925 թ. նոյեմբերի 20-ին Ստեփանավանի գավառամասում տեղի ունեցավ քուրդ անկուսակցականների կոնֆերանս, որտեղ հիմնականում ուշադրություն հրավիրվեց քուրդ ազգաբնակչության մեջ կուլտուր-լուսավորչական զանգվածային աշխատանք ծավալելու և ամեն կերպ անգրագիտության դեմ պայքարելու հարցերին:[35]

Նման միջոցառումների շնորհիվ տարեցտարի Հայաստանում աճում էր քրդական դպրոցների թիվը: Ընդհանուր պատկերը հետևյալն էր.[36]

Հայաստանում քրդական դպրոցների թվի աճը 1922-1930 թթ. ընթացքում

Ուսումնական տարին	Դպրոցների թիվը	Աշակերտների թիվը
1922 / 23	5	267
1923 / 24	7	122
1924 / 25	10	385
1925 / 26	10	316
1926 / 27	11	346
1927 / 28	12	366
1928 / 29	10	409
1929 / 30	14	567

1928 թվականի հոկտեմբերի 17-ին Երևանում տեղի ունեցավ ազգային փոքրամասնությունների ակտիվի հանրապետական խորհրդակցություն, որում որոշում կայացվեց առավել ընդլայնել քրդերի շրջանում կուլտուր-լուս-

սավորչական աշխատանքները։ Այդ որոշման կետերից մեկում նշված էր. «Արագացնել քրդական այբուբեն կազմելու գործը, ստեղծել քրդական դպրոցներ ու դասերն անցկացնել քրդերեն մայրենի խոսակցական լեզվով»։[37]

1929 թ. մարտի 7-ին Հայաստանի Լուսժողկոմատի կոլեգիան իր նիստում քննարկեց «Քրդական լատինատառ նոր այբուբենի կիրառման նախագիծը»։ Առաջարկվեց կարճ ժամանակամիջոցում կիրառել այդ այբուբենը քրդական դպրոցներում, մոբիլիզացնել հայ և քուրդ մտավորականության ուժերն այդ այբուբենով դասագրքեր պատրաստելու ուղղությամբ, մայրենի լեզվով հրատարակել ընթերցանության և թվաբանության դասագրքեր, 1929-30 ուս. տարուց քրդական առաջին աստիճանի դպրոցներում բոլոր առարկաները դասավանդել քրդերեն, նոր՝ լատինատառ այբուբենով։[38]

Այս խորհրդակցությունից հետո, հայ մտավորականների անմիջական օգնությամբ, քուրդ նորաստեղծ մտավորականությունը մեծածավալ աշխատանք կատարեց քրդական լատինատառ նոր այբուբենի պատրաստման ուղղությամբ։ 1929թ. մարտի 25-ին, երբ նոր այբուբենը պատրաստ էր և պետք է կիրառվեր, Հայաստանի Լուսժողկոմատի շենքում հրավիրվեց Արագածի ստորոտում գտնվող քրդական գյուղերի ակտիվի խորհրդակցություն, որին մասնակցում էին ուսուցիչներ, գյուղխորհրդի աշխատողներ, ինչպես նաև Լենինականի գավառի և Երևանում սովորող քուրդ երիտասարդներ, որոնք պետք է ներգրավվեին քրդական այբուբենը գործածության մեջ դնելու աշխատանքներում։[39] Ներկաները, ողջունելով Արաբ Շամիլովի և Մարգուլովի կողմից կազմված նոր այբուբենի ընդունումը, առաջարկեցին հնարավորինս արագ այն ծառայեցնել իր նպատակին։

Փաստորեն, 1929 թվականից մինչև 1944 թվականը գործածության մեջ էր լատինատառ այդ այբուբենը։ 1944 թվականից քրդական դպրոցներում և գրականության մեջ սկսեց գործածվել կիրիլյանը (ռուսական տառատեսակներով կազմված քրդական այբուբենը)։

Երեսնական թվականներին ազգային փոքրամասնությունների շրջանում սոցիալ-մշակութային աշխատանքներ ծավալելու ուղղությամբ անցկացվեցին մի շարք այլ միջոցառումներ։ Հայաստանի կառավարության բազմաթիվ որոշումներից մեկում, որը վերաբերում է քուրդ ժողովրդի մշակույթին, հատկապես դպրոցական շինարարությանը, գրված է. «Առաջարկել Լուսժողկոմատին ամեն կերպ աջակցել 1931 թվականի ընթացքում միջնակարգ դպրոցների, տեխնիկումների ու 7-ամյակների ցանցը քաղաքում և գյուղում ընդարձակելու գործին, անհրաժեշտ պայմաններ ստեղծել ազգային փոքրամասնություններից տնտեսական, տեխնիկական և կուլտուրական կադրեր պատրաստելու համար։ Առաջարկել Լուսժողկոմատին և Պետհրատին առավել մեծ տեղ հատկացնել թուրքերեն և քրդերեն գյուղատնտեսական և ագրոտեխնիկական գրականության, ինչպես նաև անհրաժեշտ դասագրքերի զանգվածային հրատարակությանը»։[40]

1932 թվականի դեկտեմբերի 13-ին Հայաստանի Կենտգործկոմն իր

նախագահության նիստում որոշում կայացրեց ընդլայնել քրդերի շրջանում կուլտուր-լուսավորչական աշխատանքները, քրդական գյուղերում մեծացնել դպրոցների ցանցը և ստեղծել բոլոր հնարավորությունները անգրագիտության վերացման համար։[41] Նման որոշումները և միջոցառումները նոր թափ հաղորդեցին քրդական մշակույթի, հատկապես կրթական գործի առաջընթացին։

Պետք է նշել, որ 1932 թվականին քրդական համարյա բոլոր գյուղերում բացվեցին դպրոցներ, աշակերտների թիվը տարեցտարի ավելանում էր, դպրոցական ցանցում հետզհետե ընդգրկվում էին նաև քրդուհիները։ Անդրադառնալով քրդական դպրոցների հետագա աճին, անհրաժեշտ ենք համարում մի քանի օրինակներով ցույց տալ այդ առաջընթացը։[42]

Թալինի շրջանում քուրդ սովորողների թիվը 1932-1933 ուս. տարվա ընթացքում.

Գյուղեր	Խմբակների թիվը	Սովորողների թիվը	Տղաներ	Աղջիկներ
1. Թլիկ	3	56	34	22
2. Գյալթո	1	42	34	8
3. Հակո	2	48	26	22
4. Քյալաշբեգ	1	16	8	8
5. Ջուրբա	1	16	8	8
6. Սաբունչի	2	52	34	18
7. Դուզքյանդ	2	39	27	12
8. Ղըղթափա	2	37	25	12
9. Ղարաբորնու	1	18	13	5
10. Խանարղաչ	1	25	16	9
11. Սիչանլու	1	24	14	10
12. Բայազ	2	46	24	22
13. Դիյան	1	28	10	18
14. Ղժլա Սայրանա	1	20	15	5
15. Շամիրամ	3	102	74	28
16. Քյալաքուտ	1	25	14	11

1931-32 ուս. տարում Լենինականի 7-րդ գավառամասի քրդական դպրոցներում սովորում էին. Ջարչարիսի դպրոցում՝ 250 աշակերտ,[43] որից 49-ը՝ աղջիկ, Մեծ Միրաքում՝ 94(26), Ջորանմազում՝ 71, (32), Մեծ Ջամուշլիում՝ 85 (23), Սանգյառում՝ 50 (20), Քրդի Փամփում՝ 95 (40), Քյարվանսարայում 50 (10):[43] Իսկ լիկկայաններում սովորողների թիվը հետևյալն էր. Ջարչարիսում՝ 101, որից 48-ը՝ աղջիկ, Մեծ Միրաքում՝ 77 (34), Ջորանմազում՝ 63, Մեծ Ջամուշլայում՝ 78, Սանգյառում՝ 35, Քրդի Փամ-

փում՝ 47, Քյարվանսարայում՝ 50 (18)։ Ջարջարիս պյուղի լիկկայանը ղեկավարում էր հայ մտավորական Արամ Մուրադյանը։[44]

1930-31 ուս. տարում հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում ըստ շրջանների քուրդ սովորողների թիվը հետևյալն էր. Ապարանում՝ 891, Աշտարակում՝ 70, Թալինում՝ 524, Կոտայքում՝ 51, Ղամարլուում՝ 43, Վաղարշապատում՝ 317, Վեդիում՝ 27։ Ընդամենը՝ 1223 մարդ։[45]

Հանրապետության մասշտաբով քրդերի շրջանում անգրագիտության վերացումն ուներ հետևյալ պատկերը. 1931-32 ուս. տարում անգրագիտության դեմ պայքարող դպրոցներում և դասընթացներում ընդգրկված էին 6379 մարդ, 1933-34 ուս. տարում՝ 5,638 մարդ։[46] Այլ խոսքով, ամենուր գործնական աշխատանք էր տարվում քրդական պյուղերում լուսավորության ցանցի ընդլայնման և անգրագիտության վերացման ուղղությամբ։ Այդ թվականներին ամենուր դրվում էր քրդական դպրոցները քրդերեն դասագրքերով ապահովելու հարցը։ Միայն երեք տարում (1929-1932) տպագրվել է 11 քրդերեն դասագիրք՝ 31 հազար տպաքանակով, 20 կտոր զանգվածային ընթերցանության գիրք՝ 51 հազար տպաքանակով։[47]

Նման միջոցառումների շնորհիվ, գլխավորապես հայ մտավորականության անմիջական մասնակցությամբ, անխափեր բոլոր քրդական պյուղերում մեծ թափ էր հաղորդվել կրթական աշխատանքների ծավալմանը։ Հայ քրդախոս մտավորականության անմիջական օգնությամբ քրդերեն լեզվով կազմվեցին և թարգմանվեցին ոչ միայն քրդերեն լեզվի և գրականության, այլև ֆիզիկայի, քիմիայի, թվաբանության, երկրաչափության, բնագիտության, աշխարհագրության դասագրքեր և մասնագիտական այլ գրքեր։[48]

1932 թվականին Կ. Երիցյանի նախաձեռնությամբ թարգմանվեց Ս. Սարիբեկյանի և Հ. Խաչատրյանի մաթեմատիկայի դասագիրքը 5-րդ դասարանի համար։ Առաջին անգամ էր, որ քրդերեն լեզվով լույս էր տեսնում մաթեմատիկայի դասագիրք, այն էլ՝ հայ մտավորականի նախաձեռնությամբ։ Սա աննախադեպ էր քրդերի մշակութային կյանքում և ընդհանրապես քրդական պատմամշակութային պատմության մեջ։ Թարգմանական աշխատանքը թեև չափազանց դժվար էր, բայց կատարվում էր որակով և մեծագույն ոգևորությամբ։ Այդ կապակցությամբ գրքի թարգմանիչ Կ. Երիցյանն առաջաբանում գրել է. «Ինչպես հայտնի է, քրդերեն լեզվով մաթեմատիկայի դասագիրք գոյություն չունի։ Այդ իսկ պատճառով Հայաստանի հրատարակչության հանձնարարությամբ նախաձեռնեցինք սույն դասագիրքը պատրաստել։ Այս գրքի հրատարակումը շատ դժվար էր, որովհետև քրդերեն գրական լեզուն նոր էր ձևավորվում, չկային բառարաններ, չկային գիտական տերմիններ։ Մենք հուսով ենք, որ հրատարակությունից հետո կլինեն ինչպես առաջարկներ, այնպես էլ՝ քննադատական խոսքեր գրքի բացասական կողմերի մասին, որպեսզի հաջորդ հրատարակությունում դրանք վերացնենք»։[49]

Այս գրքի հրատարակումից հետո նկատելիորեն մեծացավ դասագրքերի լույսընծայման ծավալը, կրթական աշխատանքներն առավել հաջողությամբ էին իրագործվում։ Եվ այս ամենի հիմնական նախաձեռնողները կրկին հայ մտավորականության ներկայացուցիչներն էին։ 1932 թվականին Վ. Պետոյանի թարգմանությամբ հրատարակվեց Գր. Ֆալիևի «Ֆիզիկական աշխատանք» գիրքը յոթամյա դպրոցների համար։ Գրքի առաջաբանում թարգմանիչը կրկին խոսում էր թարգմանական դժվարությունների մասին և միևնույն ժամանակ հայտնում հետագայում ևս դասագրքերի հրատարակման գործին աջակցելու իր ջերմ ցանկությունը։[50]

Բնագիտության և աշխարհագրության դասագրքեր են թարգմանել Նուրին (Հովակիմ Մարգարյան) և հայ մտավորականության այլ ներկայացուցիչներ։ Դպրոցական այդ ձեռնարկների թարգմանությունը հայ մտավորականների կողմից ոչ միայն խթանեց կրթական գործը, այլև նպաստեց ազգային կադրերի՝ քուրդ թարգմանիչների հանդես գալուն, գրական քրդերենի զարգացմանը։

Մանկավարժական աշխատանքների հաջող կազմակերպմանը նաև մեծապես օգնում էին քուրդ ուսուցիչների կոնֆերանսները, վերապատրաստման դասընթացները, որոնք ժամանակ առ ժամանակ կազմակերպվում էին Հայաստանի լուսժողկոմատի անմիջական նախաձեռնությամբ։ Քանիցս այդպիսի կոնֆերանսներ կազմակերպվեցին Ապարանի և Աշտարակի շրջաններում։ Հայաստանի Լուսժողկոմը նույնիսկ կոլեգիայի նիստեր էր անցկացնում քրդական պյուղերում, նպատակ ունենալով քուրդ ազգաբնակչության մեջ աշխուժացնել լուսավորության գործը։[51] 1929-1930 ուսումնական տարում առաջին անգամ Երևանում ուսուցիչների վերապատրաստման ինստիտուտում բացվեցին քուրդ ուսուցիչների վերապատրաստման մեկամսյա դասընթացներ, որոնց մասնակցեց 40 մարդ։[52]

Ինչպես նշեցինք, հանրապետությունում աստիճանաբար ավելանում էր քրդական դպրոցների ու դասագրքերի թիվը, նկատելի միջոցներ էին հատկացվում քրդական պյուղերում ուսումնական շենքերի կառուցմանը։ Այսպես. 1934 թվականին Թալինի շրջանի քրդական բոլոր պյուղերում կային դպրոցներ, իսկ Հակկո պյուղի դպրոցում գործում էր նաև անգրագիտության վերացման խումբ։ 1936 թվականին Ապարանի շրջանում, որտեղ գոյություն ունեին քրդական 12 պյուղեր, բացվեցին 31 դպրոցներ և անգրագիտության վերացման խմբակներ։ 1937 թվականին հանրապետությունում արդեն գործում էին 48 տարրական և յոթամյա քրդական դպրոցներ, 1937 թվականի հունվարի 1-ի դրությամբ Ալագյազի և Թալինի քրդական պյուղերում 3960 մարդ ընդգրկված էր անգրագիտության վերացման խմբակում։[53]

1938 թվականին, երբ ստեղծվեց Ալագյազի շրջանը, որի մեջ մտնում էին 11 քրդական պյուղեր, նոր թափ հաղորդվեց կուլտուր-կրթական աշխատանքներին։ 1939 թ. շրջանում արդեն գործում էին 12 թերի, յոթամյա և միջնակարգ դպրոցներ, որոնցում սովորում էին 4440 աշակերտներ։ Միայն 1940 թվականին կառավարությունը կրթության գործի զարգացման համար Ալագյազի շրջանին հատկացրեց երկու միլիոն երեք հարյուր հազար ռուբ-

լի:[54] 1938-39 ուս. տարում Թալինի շրջանում կային 19 քրդական դպրոցներ և անգրագիտության վերացման խմբակներ, որոնցում սովորում էր 1507 աշակերտ: Նույնիսկ Հայրենական պատերազմի ծանր օրերին և հետագա տարիներին հայ մտավորականները Հայաստանի նորաստեղծ քուրդ մտավորականների հետ չանսահմանաբար նվիրվել էին քրդական դպրոցներում մատաղ սերնդի դաստիարակման գործին: Այդ տարիներին Հայաստանում արտոնյալ պայմաններ էին ստեղծված քրդական բոլոր գյուղերը միջնակարգ դպրոցներով ապահովելու համար, և այդ շնորհակալ գործն իսկապես հաջողությամբ էր ընթանում: Քրդական բոլոր գյուղերի դպրոցներն ապահովված էին բարձրագույն կրթություն ստացած ազգային կադրերով: Այսպես. 1959-60 ուս. տարում հանրապետությունում աշխատում էին 186 քուրդ ուսուցիչներ, որոնցից բարձրագույն և թերի բարձրագույն կրթություն ունեին 70-ը, միջնակարգ կրթություն՝ 116-ը, քրդուհիներ էին 5-ը, իսկ աշակերտների թիվը 8000 էր: 1969-70 ուս. տարում ուսուցիչները 225-ն էին, որոնցից բարձրագույն և թերի բարձրագույն կրթություն ունեին 105-ը, միջնակարգ՝ 120-ը, քրդուհի էին 19-ը, իսկ աշակերտների թիվը 10 000 էր: 1979-80 ուս. տարում բարձրագույն և թերի բարձրագույն ու միջնակարգ կրթությամբ ուսուցիչների թիվն արդեն 352 էր, իսկ աշակերտներինը՝ 13 000:[55]

Այդ տարիներին Հայաստանի կառավարությունը բարձր գնահատեց քուրդ մանկավարժների գործունեությունը: Գերագույն խորհրդի պատվոգրերով պարգևատրվեցին մի շարք քուրդ մանկավարժներ, իսկ Ալագյազի շրջանի Քյարվանսարա և Քրդի Փամփ գյուղերի ուսուցիչներ Մամեդով Սահիդը և Ջավոյի Մամոն արժանացան Հայաստանի վաստակավոր մանկավարժի բարձր կոչման, որը և աշխուժացրեց քուրդ մանկավարժների գործունեությունը:

Դպրոցական աշխատանքին զուգահեռ քրդական գյուղերում հոգատար վերաբերմունք էր դրսևորվում նաև նախադպրոցական տարիքի երեխաների նկատմամբ: Առաջին մանկապարտեզը բացվեց Ապարանի շրջանի Ջորանմազ գյուղում, այն ղեկավարում էր Վարդուշ Օհանյանը:[56] 1934 թվականին Թալինի շրջանի քրդական գյուղերում մանկապարտեզներ հիմնելու կապակցությամբ Հակկո գյուղում բացվեց քուրդ կանանց վերապատրաստման տասնօրյա դասընթաց, որը ղեկավարում էր Վերգինե Աբրահամյանը:[57] Նույն թվականի հունիս ամսին Ապարանի շրջանի Մեծ Ջամուշլի (այժմ Ալագյազ) գյուղում Լենինգրադի լեզվի ինստիտուտի դասախոս, քրդերենի հմուտ գիտակ Յուլյա Ավելյանի ղեկավարությամբ բացվեց քուրդ կանանց մեկամսյա նախադպրոցական դասընթաց, որում ընդգրկված էին 12 հոգի: Վերջիններիս մի մասը քրդական գյուղերում բացված մանկապարտեզներում աշխատեցին որպես դաստիարակչուհիներ, իսկ գերազանցիկներին՝ Կազո Խուդոյանին, Թամազ Ագիտեին, Ռաշե Խամոյանին, գործուղեցին Անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումում սովորելու:[58] Նշենք դոկտոր, պրոֆեսոր Յ. Ավելյանը, որը հետագայում դասախոսում էր

Սամարղանդի համալսարանում, մշտապես կապված է եղել քրդական մշակույթին և հեղինակել է քրդերենի ուսումնասիրությանը վերաբերող մի շարք արժեքավոր աշխատություններ:

Այս շրջանում հայ մտավորականությունն ամեն կերպ աշխատում էր օգնել քրդական մշակույթի զարգացմանը, կարծես մի անկեղծ, մարդասիրական մրցություն էր ծավալվել հայ այն մտավորականների միջև, ովքեր առնչվում էին քուրդ ժողովրդի կյանքին: Կարծես յուրաքանչյուրը փորձում էր առավելագույնը անել բարեկամ ժողովրդի համար: Այդ յուրօրինակ «մրցությանը» հաճախակի երախտագիտությամբ անդրադառնում էր «Ռյա թազա» թերթը, որը մի առիթով գրել է. «Մրցման մեջ էին մտել հայ մտավորականներ Նշան Ռշտունին, Համբարձում Ավետիսյանը և Քերոբե Կարապետյանը: Ի դեպ, վերը նշված մտավորականները 1921-22 թվականներին եղել են քրդական գյուղերի դպրոցների կազմակերպիչները, լայն պայքար տարել անգրագիտության վերացման համար»:[59] Այնուհետև «Ռյա թազան», իր հոդվածներից մեկում անդրադառնալով Նշան Ռշտունուն, գրում է. «Ընկեր Ն. Ռշտունին 1931 թվականից իրեն նվիրել է քրդական մշակույթի առաջընթացին: 10 տարուց ավելի քրդական գյուղերում եղել է ուսուցիչ, նա քրդական Մեծ Ջամուշլի և Ջորանմազ գյուղերում հավաքագրեց երեխաներին և դպրոց բացեց: Սա մեծ ներդրում է քրդական մշակույթի ասպարեզում ընկ. Նշան Ռշտունու կողմից: Նա եղել է գյուղխորհրդի անդամ, իսկ այժմ մեծ եռանդով աշխատում է «Ռյա թազա» քրդական թերթում»:[60] Հայ մեկ այլ մտավորականի մասին թերթը գրել է. «Իսրայել Միանասյանը 1924 թվականից իրեն նվիրեց քրդերի մեջ լուսավորություն տարածելու գործին. մի հայ մտավորական, որն իր ամբողջ էությամբ կապված է եղել քրդական մշակույթին: Դեռևս 1887-88 թվականներին դիվանագիտական աշխատանքի մեջ է եղել Թուրքիայի քրդերի միջավայրում, 1906 թվականից թղթակցել է «Մուրճ» պարբերականին, որտեղ մի շարք հոդվածներ ու քրդական ժողովրդական բանահյուսությունից նյութեր է տպագրել, որոնցից առավել հետաքրքրական են հայերեն տառերով քրդերեն լեզվով տպագրված «Ճվիկա վիտ-վիտանի» (Ծլվլացող ճնճղուկը) և «Կյառոն ու Քուլուկը»: Նրա մոտ կան քրդական բանահյուսության լավագույն նմուշներ, ինչպես օրինակ «Ջամբիլֆրոշը», «Ֆլիտե Ղոտոն», «Խաչեզարեն», «Մամեն» և այլն»:[61] Նա չհանացել է կազմել քրդական այբուբեն, բայց այն տպագրել նրան չի հաջողվել: Նրա մի շարք ստեղծագործությունները տպագրվել են ինչպես «Ռյա թազա» թերթում, այնպես էլ քրդական դպրոցական ու գեղարվեստական գրքերում: Իսկ կյանքի վերջին տարիներին, խորանալով քրդագիտական հարցերի մեջ, իրեն լրիվ նվիրել է քրդական մշակույթին:

Այդ տարիներին հայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ մեկնում էին քրդական գյուղեր, կարդում դասախոսություններ, ծանոթանում քրդերի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքին: Իր հուշերում մանկավարժ, գրող Նուրին (Հովակիմ Մարգարյան) գրել է. «Ես հաճախակի էի գնում քրդական գյուղեր, քրդական նորաստեղծ մշակույթի մասին

կարդում դասախոսություններ, որն ընդունվում էր մեծ խանդավառությամբ»։[62] Պետք է երախտագիտությամբ նշել, որ այդ տարիներին քրդական գյուղեր էին մեկնում և քրդերի մեջ գործնական աշխատանք կատարում հայ մտավորականներ Հ. Քոչարը, Վ. Պետոյանը, Պ. Ոսկերչյանը, Սարմենը, Ս. Գասպարյանը, Ս. Մկրտչյանը, Կարենցը, Ն. Տեր-Կարապետյանը և շատ ուրիշներ։

Հայ մտավորականության հետ միասին քրդական մշակույթին էր նվիրվել նաև վերինդվինցի, ազգությամբ ասորի Իսահակ Ֆարհադի Մարագուլովը։ Նա երեսուն տարուց ավելի աշխատեց քրդական մշակույթի ասպարեզում։ Նա եղել է այն առաջին ուսուցիչներից, ովքեր դասավանդել են քրդական մանկավարժական տեխնիկումում։ Նա այնտեղ դասավանդել է քրդերեն և ռուսերեն, հինգ քրդական գրքերի հեղինակ էր, քրդական լատինատառ այբուբենը կազմողներից մեկը։ «Ռյա թազա» թերթի խմբագիր, գրող Ջարդոե Գենջոն, անդրադառնալով Մարագուլովի գործունեությանը, գրել է. «Նա հոգով ու գործով նվիրված է քրդական մշակույթին»։[63]

Հայաստանի կառավարության, հայ մտավորականության բարյացկամ վերաբերմունքի շնորհիվ օրեցօր նոր թափ էր հաղորդվում քրդերի մեջ լուսավորություն տարածելու գործին։ Քրդական գյուղերում մշակութային օջախների ստեղծումը էլ ավելի նպաստեց այս կարևորագույն ձեռնարկման հաջողությանը։

Դ. ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՋԱԽՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Այդ տարիներին խրճիթ ընթերցարանները մեծ աշխատանք էին տանում քուրդ ազգաբնակչության հոգևոր աշխարհի հարստացման, նրանց գաղափարական մակարդակն ու գեղարվեստական ճաշակը բարձրացնելու ուղղությամբ։ Խրճիթ-ընթերցարանները և դպրոցները շաղկապված էին միմյանց, ուսուցիչները աշակերտների հետ միասին մասնակցում էին մշակութային բոլոր միջոցառումներին։ Այստեղ նույնպես ակտիվ էին հայ մտավորականները, քանզի քրդական գյուղերում դեռևս ազգային կադրերի պակաս էր զգացվում։ Հայ մտավորականության անմիջական օգնությամբ ու ծավալուն աշխատանքի շնորհիվ աստիճանաբար նահապետական կենցաղն իր տեղը զիջեց ժամանակակից բարքերին ու սովորույթներին։ Բարձրացավ մշակութային արժեքների գնահատման ճաշակը, կենցաղային կուլտուրան։

Եթե մինչև 1932 թվականը քրդական գյուղերում գոյություն ունեին ընդամենը երկու խրճիթ-ընթերցարաններ և երկու ակումբ, 1932 թվականին արդեն գործում էին 6 խրճիթ-ընթերցարան, 7 գրադարան և 2 ակումբ։[64] Այդ թվականներին կուլտուր-կրթական աշխատանքների բնագավառում լայն գործունեություն ծավալվեց Լենինականի 7-րդ գավառամասի քրդական գյուղերում, նույնիսկ 1928 թվականին հրավիրվեց 7-րդ գավառամասի խրճիթավարների խորհրդակցություն, որտեղ հարց բարձրացվեց բոլոր խրճիթ-ընթերցարաններն ապահովել համապատասխան գրականությամբ, նրանց կից կազմակերպել ինքնագործ խմբակներ, քուրդ ազգաբնակչության շրջանում աշխուժացնել քաղուսավորչական աշխատանքները։[65]

Կադրերի որակավորման բարձրացման կապակցությամբ 1928 թվականի հունիսին Երևանում բացվեց խրճիթավարաների մեկամսյա դասընթաց, որին մասնակցում էին նաև բազմաթիվ քուրդ խրճիթավարներ։[66] Հայ մտավորականների անմիջական ղեկավարությամբ հաճախակի այդպիսի դասընթացներ էին կազմակերպվում ինչպես Երևանում, այնպես էլ Լենինականում, և այդ հանգամանքը, անշուշտ, դրական նշանակություն ունեցավ գյուղական աշխատավորության շրջանում կուլտուր-լուսավորչական աշխատանքները ճիշտ կազմակերպելու գործում։ Գյուղերում կուլտուր-լուսավորչական աշխատանքներին լայն թափ հաղորդելու նպատակով 1934 թվականից խրճիթ-ընթերցարանները վերածվեցին ակումբների, որոնց համար տարեկան բաց էր թողնվում մոտ 7 հազար ռուբլի։[67]

1937 թվականի դեկտեմբերի 31-ին Հայաստանի Կենտգործկոմի նախագահության որոշմամբ հանրապետության շրջաններից անջատվեցին և կազմվեցին 11 նոր շրջաններ. Աղինի, Ալագյազի, Ղուկասյանի, Դուզքենդի, Զանգիբասարի, Ղարաբաղլարի, Կալինինոյի, Կրասնոսելսկի, Նոյեմբերյանի, Սևանի և Սպիտակի։ Ապարանի շրջանից անջատվեցին քրդական բոլոր գյուղերն ու հայկական գյուղերի հետ կազմեցին Ալագյազի շրջանը։ Պետք է նշել, որ այդ հանգամանքը նոր թափ հաղորդեց խնդրո առարկա շրջանների բնակչության տնտեսական ու մշակութային կյանքին։ Քրդական բոլոր գյուղերն ապահովվեցին մշակութային նոր օջախներով։

1939 թվականին Ալագյազի շրջանի 11 քրդական գյուղերից 9-ում կազմակերպվեցին ակումբներ, որոնք կրկնակի գործառույթ ունեին, քանի որ ակումբավարները կատարում էին նաև գրադարանավարի պարտականություններ։ Տնտեսական կյանքի աշխուժացմանը զուգընթաց գյուղում առավել հաճախակի էին կազմակերպվում նաև ակումբա-գրադարանային միջոցառումներ, լայն թափ էր հաղորդվում կուլտուր-լուսավորչական աշխատանքներին։ Ակումբները և գրադարաններն աստիճանաբար վեր էին ածվում մշակութային օջախների, բնակչության հանգստի կազմակերպման կենտրոնների։

Բացի ակումբներից ու գրադարաններից, քրդական գյուղերում բացվեցին նաև մշակույթի տներ։ Առաջին մշակույթի տունը ստեղծվեց Արագածի շրջանի Ալագյազ գյուղում, որը հանրապետությունում մեծ համբավ ձեռք բերեց։ Նույն գյուղում բազմաթիվ ինքնագործ խմբակների հետ մեկտեղ սկսեց գործել նաև Խորհրդային Միությունում առաջին քրդական ժողովրդական համալսարանը, որը բացվեց 1965 թվականի հունվարի սկզբներին։ Բացումը վերածվեց հայ և քուրդ ժողովուրդների բաեկամության մի մեծ տոնախմբության։[68] Իսկ 1965 թվականի ապրիլին Թալինի շրջանի Հակո

գյուղում բացվեց քրդական երկրորդ ժողովրդական համալսարանը:[69] «Պրավդա» թերթը 1965 թ. նոյեմբերի 22-ի իր համարում կարևորելով Հայաստանում քրդական համալսարանի բացումը, այն համարում է քրդական մշակույթի ամենակարևոր օջախներից մեկը: Այս համալսարանում դասախոսություններով հանդես էին գալիս ոչ միայն հանրապետության քուրդ գիտնականները, այլև հայ մտավորականության ներկայացուցիչներ՝ պատմաբաններ Ա. Մնացականյանը, Վ. Պարսամյանը, Հ. Կարապետյանը, գրողներ Հ. Քոչարը, Սարմենը, Կարենցը և շատ ուրիշներ:[70]

Քուրդ ժողովրդի շրջանում կուլտուր-լուսավորչական աշխատանքների ծավալմանը և քուրդ մտավորականության շարքերի ընդլայնմանը նպաստեց Քրդական անդրկովկասյան մանկավարժական տեխնիկումի հիմնադրումը: Սույն գործի նախաձեռնողները կրկին Հայաստանի կառավարությունն ու հայ մտավորականներն էին: 1930 թվականի հունիսի 25-ին Հայաստանի Լուսժողկոմը Ժողկոմխորհին ներկայացրեց Քրդական անդրկովկասյան մանկավարժական տեխնիկում բացելու նախագիծը: Ի դեպ, հիմնավոր պատճառաբանություններով մատնանշվում էր տեխնիկումի անհրաժեշտությունը:

Հայաստանի Ժողկոմխորհը 1930 թվականի սեպտեմբերի 8-ին, հավանության տալով նախագծին, անդրկովկասյան Ժողկոմխորհի առջև հարց բարձրացրեց՝ Երևանում բացել Անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկում: Դեկտեմբերի 1-ին անդրկովկասյան Ժողկոմխորհը որոշեց 1931 թվականի հունվարի 1-ից Երևանում բացել Անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկում: Տեխնիկումի դիրեկտոր նշանակվեց Արաբ Շամիլովը, որի ստորագրությամբ հայերեն, ռուսերեն և քրդերեն գրություններ ուղարկվեցին Հայաստանի կուլտուր-լուսավորական տարբեր հիմնարկների, առ այն, որ 1931թ. հունվարի 11-ին Երևանի Ուսուցիչների տանը տեղի է ունենալու քրդական տեխնիկումի բացմանը նվիրված երեկո:[71] Ինչպես գրեց «Խորհրդային Հայաստան» թերթը. «Տեխնիկումի բացումը վերածվեց հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության մի իսկական տոնախմբության»:[72]

Քրդական մանկավարժական տեխնիկումում առաջին ուս. տարում սովորելու էին 70 ուսանողներ, որոնք բաժանվելու էին 3 խմբի: Անգրագիտության վերացման նպատակով մեծահասակների համար լինելու էր միամյա մանկավարժական կուրս: Տեխնիկումի դասընթացները չորսամյա էին: Ուսանողները ստանալու էին կրթաթոշակ և անվճար հագուստ: Հիմնադրման օրվանից Հայաստանի կառավարությունը պարբերաբար հետաքրքրվում էր նորաստեղծ քրդական օջախով և լրացուցիչ գումար տրամադրում:

1931 թվականին, անդրադառնալով քրդական մանկավարժական տեխնիկումի աշխատանքներին, Հայաստանի լուսժողկոմ Դրաստամատ Սիմոնյանը գրում է. «Լուսավորության ասպարեզի աշխատողները և լուսավորության նախարարությունը քրդական մանկավարժական կադրերի բացակայության հետևանքով հանդիպեցին բավականին դժվարությունների: Այդ

նույն դժվարությունների առջև կանգնեցին նաև Ադրբեջանի ու Վրաստանի քրդերը: Քրդական մանկավարժական տեխնիկումը կլուծի այդ բացը, կպատրաստի ինչպես մանկավարժներ, այնպես էլ մտավորականներ: Քրդական մանկավարժական տեխնիկումի նոր շենքը պատրաստելու համար Անդրֆեդերացիան հատկացրել է 60 հազ. ռուբլի, Հայաստանի կառավարությունն էլ իր կողմից՝ 60 հազ. ռուբլի, հարկավոր է այդ աշխատանքը արագացնել»:[73] Երախտագիտությամբ պետք է նշել, որ Հայաստանի ԿԿ Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Ա. Խանջյանը այդ տարիներին երկու անգամ եղել է քրդական տեխնիկումում, անձամբ ծանոթացել նրա աշխատանքներին, հետաքրքրվել ուսանողների կյանքով, միջոցառումներ ձեռնարկել տեխնիկումի աշխատանքները բարելավելու համար: Տեխնիկումի շրջանավարտները նաև մեկնում էին հարևան հանրապետություններ և այնտեղ դասավանդում քրդերեն, այդպիսով գործնականում օգնելով իրենց հայրենակիցներին: Հայաստանի կառավարության և հայ մտավորականության ջերմ վերաբերմունքի շնորհիվ Հայաստան էին գալիս այլ հանրապետություններից բազմաթիվ քուրդ երիտասարդներ, որոնք մեծ արտոնություններով ընդունվում էին քրդական մանկավարժական տեխնիկում:

Այս տեխնիկումում մեծ թիվ էին կազմում Վրաստանից, Ադրբեջանից, միջինասիական հանրապետություններից եկած քուրդ երիտասարդները: 1936 թ. տեխնիկումի շրջանավարտներից 32-ը մեկնեցին Ադրբեջան, 20-ը՝ Վրաստան, 84-ը՝ Հայաստանի քրդաբնակ շրջաններ:

Քրդական կադրերի պատրաստման գործում անկասկած իր մեծ ներդրումն ունի հայ մտավորականությունը, որի ներկայացուցիչներից շատերը, տիրապետելով քրդերենին, դասավանդում էին տեխնիկումում: Տեխնիկումի լավագույն դասախոսներից էին վաստակավոր մանկավարժ Վ. Պետրոսյանը, որը երկար տարիներ նաև ղեկավարում էր տեխնիկումի աշխատանքները, արվեստի վաստակավոր գործիչ Ս. Գասպարյանը, դոկտոր, պրոֆեսոր Պ. Ոսկերչյանը, հմուտ մանկարվարժներ Հ. Մկրտչյանը, Գ. Գասպարյանը, Հ. Մարգարյանը, Ի. Գալոյանը և շատ ուրիշներ: Առաջին տարիներին տեխնիկումում հիմնականում աշխատում էին հայ մանկավարժներ, իսկ հետագայում նրանց շարքերն աստիճանաբար համալրեցին քուրդ երիտասարդ մանկավարժները: 1931-32 ուս. տարում տեխնիկումում դասավանդում էին 2 քուրդ և 10 հայ, 1932-33 ուս. տարում՝ 4 քուրդ և 8 հայ, 1934-35 ուս. տարում՝ 7 քուրդ և 7 հայ, 1935-36 ուս. տարում՝ 8 քուրդ և 6 հայ մանկավարժներ:[74]

1930-31 ուս. տարում ուսանողների թիվն ընդամենը 69 էր, 1932-1933 ուս. տարում հասավ 105-ի, իսկ 1933-34 ուս. տարում տեխնիկումում սովորում էր 191 քուրդ ուսանող:[75]

Տեխնիկումին կից գոյություն ունեին վեցամսյա և միամսյա դասընթացներ, սակայն առավել նշանակալից իրողություն էր քրդուհիների համար վեցամսյա դասընթացների կազմակերպումը, իսկ հետագայում՝ 1937 թվականի սեպտեմբերին, բացվեց նաև երկամյա դասընթաց, որում ընդգրկված

էին 37 քրդուհիներ:[76] Այս հանգամանքը շրջադարձային նշանակություն ունեցավ քուրդ ժողովրդի, հատկապես քրդուհիների համար:

Քրդական մանկավարժական տեխնիկումը 1934 թվականին տվեց իր առաջին շրջանավարտները: Այդ թվականներին Հայաստանի կառավարությունը լայն արտոնություններ էր տրամադրել տեխնիկումի շրջանավարտներին: Օրինակ, նրանք կարող էին մրցույթից դուրս ընդունվել Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններ: Մանկավարժական տեխնիկումի շեֆությունը հիմնականում ստանձնել էր Երևանի բժշկական ինստիտուտը, որը հաճախակի կազմակերպում էր դասախոսություններ, ուսանողների հետ հանդիպումներ, տարբեր ցերեկույթներ և երեկույթներ, վերջապես, ամենակարևորը՝ քուրդ շրջանավարտներին, նաև երկամյա կուրսերն ավարտած քրդուհիներին ընդունում էր մրցույթից դուրս:[77]

Հայաստանի Լուսժողկոմը մեծ ուշադրություն էր դարձնում քրդական տեխնիկումին ինչպես դասագրքեր, այնպես էլ գեղարվեստական ու մասնագիտական գրականություն տրամադրելու հարցին: Պատահական չէր, որ ուսման երկրորդ տարում արդեն տեխնիկումի գրադարանում կար 4500 կտոր քրդերեն, հայերեն և ռուսերեն գրականություն: Գրադարանին կից գործում էր գրական խմբակ, կազմակերպվում էին հանդիպումներ հայ գրողների և մտավորականության այլ ներկայացուցիչների հետ, անց էին կացվում գրական երեկոներ:[78] Ավելացնենք, որ ազգային կադրերի ստեղծմանը հետագայում մեծապես նպաստեց հայ և քուրդ մանկավարժների անմիջական ջանքերով 1955 թվականի սեպտեմբերի 1-ին հայկական մանկավարժական ուսումնարանին կից քրդական բաժնի բացումը, որի շրջանավարտները մեկնում էին քրդական գյուղեր՝ մանկավարժական աշխատանքի, իսկ մի մասն էլ ուսումը շարունակում էր Երևանի բուհերում: Ելնելով պատմական իրողություններից, փաստենք, որ մանկավարժական տեխնիկումը դարձավ քուրդ ժողովրդի մշակութային դարբնոցը: Այն հեղաշրջում մտցրեց քրդերի կենցաղում, մշակութային կյանքում:

Պատմական մեծ իրադարձություն էր 1930 թվականին Երևանում քրդական «Ռյա թազա» թերթի հիմնադրումը, որը հրատարակվում է առ այսօր: Սա շրջադարձային պահ էր ողջ քուրդ ժողովրդի, առավելևս՝ Հայաստանում բնակվող քուրդ ազգաբնակչության քաղաքական և մշակութային կյանքում: Այս թերթը մեծ դեր է խաղացել և այժմ էլ խաղում է քրդական գրականության, լեզվի և ընդհանրապես մշակույթի զարգացման ու մասսայականացման գործում:

Նորաստեղծ թերթի կազմակերպման աշխատանքներին լծվեցին ոչ միայն քուրդ մտավորականության ներկայացուցիչները, այլև հայ մտավորականները, որոնք, լավ տիրապետելով քրդերենին, գործնական օգնություն ցույց տվեցին: Չէ՞ որ քուրդ մտավորականությունը չուներ հրապարակախոսական փորձ, դեռևս ավարտուն կերպարանք չէին ստացել քրդերեն գրական լեզուն և ուղղագրությունը: Այդ ծանր պայմաններում կրկին հայ մտավորականության ներկայացուցիչները ջանք չխնայեցին մասնակցելու իրենց

քուրդ բարեկամների աշխատանքներին: Թերթի առաջին խմբագիրներն են եղել հայ անվանի գրողներ Հարություն Մկրտչյանը և Հրաչյա Քոչարը, երկար տարիներ աշխատակցել են Ռուբեն Դրամփյանը (թարգմանիչ), Բենո Մուրադյանը (պատասխանատու քարտուղար), Նուրի - Հովակիմ Մարգարյանը, Վահան Մարտիրոսյանը, Օֆելյա Ավետիսյանը, Գայանե Հովհաննիսյանը և ուրիշներ:

«Ռյա թազա» թերթի առաջին համարի լույսընծայումը համընկավ քրդական լատինատառ այբուբենի կազմման մեկամյակին և, ըստ երևույթին, այդ առիթով էլ թերթի ողջ համարը նվիրվեց քրդական մշակութային կյանքի այդ մեծ իրադարձությանը: Թերթի առաջին էջում մեծ վերտառությամբ գրված էր. «Նոր այբուբենը Արևելքում մեծ հեղափոխություն է»: Առաջնորդող հոդվածը նույնպես նվիրված էր քրդական այբուբենին: Հայաստանի կառավարությունը, ողջ հայ մտավորականությունը, մամուլը մեծ խանդավառությամբ նշեցին քրդական մշակութային կյանքի այդ երկու կարևոր իրադարձությունները:

Մենք չենք ցանկանում անդրադառնալ «Ռյա թազա» թերթի ողջ գործունեությանը: Դա ուսումնասիրման առանձին թեմա է, սակայն պետք է նշել, որ հայ մտավորականության կողմից հիմնադրված այդ թերթն իր նշանակալի ավանդն ունեցավ քրդական մշակութային կյանքում: Այն իր գործունեության ընթացքում մեծ ճանաչում ձեռք բերեց ոչ միայն Խորհրդային Միությունում, այլև դրա սահմաններից դուրս՝ բացառիկ գրական ներգործություն ունենալով ողջ քրդական մշակույթի զարգացման վրա:

Համառոտ ամփոփելով թերթի գործունեությունը պետք է նշել, որ «Ռյա թազա» թերթի հիմնադրմամբ Հայաստանում նշանավորվեց քրդական ժուռնալիստիկայի ծնունդը: Հայաստանի Ժուռնալիստների միությանը կից ստեղծվեց քուրդ լրագրողների սեկցիա, որը ղեկավարում էր «Ռյա թազա» թերթի խմբագրի տեղակալ, անվանի գրող Խաչիկ Մուրադովը: Այս երևույթը էլ ավելի ոգեշնչեց քուրդ լրագրողներին: Կառավարությունը, բարձր գնահատելով նրանց աշխատանքը, ամենուր խրախուսում էր նրանց, հնարավորություն ընձեռում հմտանալու լրագրողական աշխատանքում: Այդ թվականներին լրագրողներ Ագիտե Խադոն, Ամարիկո Սարդարը, Տիտալ Մուրադովը, Մամե Գուլոյանն արժանացան Հայաստանի պատվավոր ժուռնալիստի կոչման, իսկ խմբագիր Միրոե Ասադի Մստոյանը՝ Հայաստանի կուլտուրայի վաստակավոր գործչի կոչման: Նա ընտրվեց Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ, պարգևատրվեց «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով:

Քրդական մշակութային կյանքում դրական նշանակություն են ունեցել նաև Հայաստանում անցկացվող մշակութային միջոցառումները: Առավել նշանակալից էին հետևյալ տոնակատարությունները. 1962 թվականի մայիսին Հայաստանի քրդերը հայ ժողովրդի հետ միասին բարեկամական ջերմ մթնոլորտում տոնեցին հայ ժողովրդի հանճարեղ զավակ, հայկական դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի 1600-ամյակը: Բազմաթիվ քուրդ

գրողներ ու բանաստեղծներ, գիտնականներ, գրականագետներ պարբերական մամուլում հանդես եկան հոդվածներով և գրական ստեղծագործություններով՝ նշելով մեսրոպյան տառերի դերը քուրդ ժողովրդի մշակույթի ճանաչման ու զարգացման գործում: Քուրդ ականավոր գրող Արաբ Շամիլովը «Ռյա թազա» թերթում գրեց. «Իրոք, մեսրոպյան տառերը մեծ օգնություն ցույց տվեցին քուրդ ժողովրդի կուլտուրայի ձևավորմանը և նրա առաջընթացին»:[79] Մաշտոցյան դպրությունը մոտ է ամեն մի քրդի սրտին, և պատահական չէ, որ նա երգում ու փառաբանում է նրան: Քուրդ նշանավոր գրող Միքայելե Ռաշիդն իր «Մեսրոպ Մաշտոցին» բանաստեղծությունում գրում է.

Քո տառերով եմ առաջին անգամ
Դասերս սերտել, անունս գրել,
Գրել անունս, որ ապրում եմ, կամ,
Որ հայ դպրության հետքերն եմ կրել:

1963 թվականի հոկտեմբերին Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության և եղբայրության իսկական տոնի վերածվեց Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը: Անմահ երգիչը հարազատ ու սիրելի էր նաև քուրդ ժողովրդին, և մեծ բանաստեղծի հոբելյանը վերածվեց իսկական քրդական տոնախմբության:[80] Ինչպես «Ռյա թազա» թերթում, այնպես էլ քրդական ռադիոհաղորդումներում ջերմ խոսքերով հանդես եկան քուրդ գրողներն ու մտավորականության մյուս ներկայացուցիչները, քուրդն իր մայրենի լեզվով երգեց մեծ բանաստեղծին: Հայաստանի մշակույթի նախարարության կողմից անցկացված երկու մրցանակաբաշխություններին մասնակցեցին նաև քուրդ ժողովրդի ներկայացուցիչները: Սայաթ-Նովայի երգերի լավագույն կատարման մրցանակաբաշխությունում քուրդ երգչուհի Սուսիկա Սմոն քրդերեն լեզվով կատարեց Սայաթ-Նովայի երգերը և արժանացավ Հայաստանի մշակույթի նախարարության մրցանակին:[81] Հոբելյանի օրերին «Հայպետհրատը» քրդերեն լեզվով հրատարակեց մեծ երգչի բանաստեղծությունների ժողովածուն:[82]

ՀԽՍՀ 50-ամյակի տոնախմբության օրերին «Ռյա թազա» թերթը մի ամբողջ համար նվիրեց այդ մեծ իրադարձությանը: Իրենց հոդվածներով ու բանաստեղծություններով հանդես եկան գրող, Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ Արաբ Շամիլովը, Խորհրդային Միության հերոս, Երևանի պատվավոր քաղաքացի Սամանդ Սիաբանդովը, պրոֆեսոր Հաջիե Ջնդին, բանաստեղծ Սմոե Շամոն և ուրիշներ, որոնք սրտառուչ խոսքերով շնորհավորեցին ՀԽՍՀ 50-ամյակը, որը ինչպես հայ, այնպես էլ քուրդ ժողովրդի համար դարձել էր ազատության, երջանկության, եղբայրության, մշակույթի ծաղկուն մի օջախ:[83] Բանաստեղծ Սմոե Շամոն, իր երախտագիտության խոսքը հղելով Հայաստանին, գրեց.

Ի՞նչ վարդերից փնջեր բերեմ,
Գուցե հազար բուրավետ վարդերից,
Բերեմ ու տամ Հայաստանին,
Որպես նվեր իմ սրտից:

Փոխադարձ նույնպիսի ջերմությամբ էին ընդունվում նաև քուրդ ժողովրդի մշակութային բոլոր նվաճումները հայ ժողովրդի և հայ մտավորականության կողմից: «Ռյա թազա» թերթի 40-ամյակը Հայաստանում նշվեց մեծ շուքով: Թերթի կոլեկտիվին ողջունեցին հայ բազմաթիվ մտավորականներ, Խորհրդային Միության մարշալ Հ. Բաղրամյանը: Պետք է երախտագիտությամբ նշել, որ մարշալը միշտ էլ ջերմ խոսքեր է հղել քուրդ ժողովրդի կյանքի յուրաքանչյուր հիշարժան դրվագի կապակցությամբ: Նա բազմիցս հեռագրերով և նույնիսկ իր անձնական մասնակցությամբ ի սրտե շնորհավորել է քուրդ ժողովրդի մշակութային կյանքի աչքի ընկնող իրադարձությունները: Նա իր ողջույնի հեռագիրը, որը հղել էր «Ռյա թազա» թերթին, այսպիսի ջերմ բարեկամական խոսքերով է ավարտում. «Ռյա թազա» թերթի այս նշանավոր հոբելյանի առիթով թերթի ողջ կոլեկտիվին և նրա բազմաթիվ ընթերցողներին ի սրտե ողջունում եմ և նրանց անձնական ու աշխատանքային կյանքում ցանկանում նորանոր հաջողություններ: Կեցցեն Խորհրդային Հայաստանում ապրող մեր հարազատ քուրդ բարեկամները»:[84] Անշուշտ հայ մեծանուն ցանկացած գործչի այսպիսի ջերմ վերաբերմունքը նոր լիցք էր հաղորդում և նորանոր ոգեկոչումների մղում հայաստանաբնակ քրդերին ու նրանց մշակույթին:

Հայ-քրդական մշակութային սերտ կապերը վառ կերպով դրսևորվեցին «Ռյա թազա» թերթի 50-ամյակի օրերին, որոնք վերածվեցին մշակութային տոնախմբության: Թերթի 1980թ. 27-րդ համարը ամբողջովին նվիրված էր Հայաստանում քրդական մշակույթի բարգավաճմանը, հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությանը: Մշակութային այդ մեծ տոնի առիթով շնորհավորելով քուրդ մտավորականներին, հայ մեծատաղանդ բանաստեղծ Գևորգ Էմինը գրել է. «Ի սրտե շնորհավորում եմ քուրդ ժողովրդին, իմ քուրդ բարեկամներին, գրողներին, գրականագետներին, լրագրողներին և մեր քուրդ գրչակիցներին քրդական «Ռյա թազա» թերթի 50-ամյակի առթիվ... Թուրքիայի և այլ երկրների ծանր պայմաններից փախած և փոքրիկ Հայաստանում ապաստան գտած քրդերը այստեղ ոչ միայն գտել են իրենց հյուրընկալ օթևանը, այլև Հայաստանի կառավարության և հայ ժողովրդի օգնությամբ 20-ական թվականներից սկսած ստեղծել են իրենց նոր այբուբենը, դպրոցները, թատրոնը, գրականությունն ու գիտությունը: Քուրդ շատ գրողներ, գիտնականներ ու հասարակական գործիչներ դարձել են նշանավոր մարդիկ, և նրանց հռչակը տարածվել է ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Խորհրդային Միությունում...

Թող ավելի ու ավելի ամրապնդվի մեր եղբայրությունը և «Ռյա թազա» թերթի էջերից աշխարհը միշտ լսի խաղաղության և եղբայրության բարի ու

ազնիվ խոսքը, չէ՞ որ ինչպես քրդական իմաստուն առածն է ասում՝ «Լավ խոսքը սրտի գարուն է»:[85]

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ջատագովներից էր Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, որը բազմիցս աջակցել է քուրդ ժողովրդին, նրա մտավորականներին՝ Հայաստանում սեփական ժողովրդի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքն առավել բարգավաճ դարձնելու գործում: «Ռյա թազա» թերթի 1989 թվականի հունվարի 28-ի համարում մեծարգո կաթողիկոսը քուրդ ժողովրդին ուղղված իր ողջույնի խոսքում մասնավորապես ասում է. «Ես երջանիկ եմ, որ այս հարցաղրույցի առթիվ պատիվ ունիմ, իմ ողջույնը ու օրհնութիւնը ուղարկելու ձեր թերթի միջոցով եղբայրական քուրդ ժողովրդին, որ Հայաստանում ապրում և աշխատում են այնքան համերաշխ հայ եղբայրների ու քույրերի կողքին՝ ձեռք ձեռքի տված: Թող Աստված օրհնի հայ և քուրդ ազգութիւնների եղբայրութիւնը և նրանց գործատուութեան հետագա շինարար իրագործումները»:

Անդրադառնալով քրդական մշակութային մեկ այլ ոլորտի՝ քրդական ռադիոհաղորդումներին, պետք է նշել, որ 1955 թվականից Երևանից եթեր հեռարձակվող այդ մեկուկեսժամյա հաղորդումների ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում հայ-քրդական մշակութային կապերին: Ակնարկներով, բանաստեղծություններով, ռեպորտաժներով, քրդական գրականությանը, պատմությանը, լեզվին ու բանահյուսությանը վերաբերող հոդվածներով հաղորդումներին հաճախ են մասնակցում հայ մտավորականները՝ իրենց անկեղծ ու ջերմ խոսքով սատար լինում քրդական մշակույթին, քուրդ ժողովրդի սոցիալ-տնտեսական առաջընթացին:

Քրդական հաղորդումները ջերմ արձագանք են գտել նաև արտասահմանյան հայ և քուրդ աշխատավորների շրջանում: Նրանք խմբագրությանն ուղարկած իրենց նամակներում բովանդակալից և հետաքրքիր հաղորդումների կազմակերպման համար շնորհակալություն են հայտնում խմբագրությանը, նաև իրենց երախտագիտական խոսքը հղում Հայաստանի կառավարությանը, խնդրում են պատասխանել իրենց հուզող հարցերին, հանդես գալիս ցանկություններով և առաջարկություններով: Պետք է ասել, որ Թուրքիայում, Իրանում, Իրաքում, Սիրիայում և Լիբանանում ապրող քուրդ և հայ աշխատավորների բարեկամական ջերմ կապերն էլ ավելի են ամրապնդվել հենց Հայաստանից տրվող քրդական հաղորդումների շնորհիվ: Հայաստանի քրդական ռադիոհաղորդումների խմբագրությանն ուղարկած իր նամակում Իրաքի Երբիլ քաղաքի բնակիչ Սիհան Հուսեյինը գրում է. «Հայկական Հանրապետության Երևանի ռադիոյի իմ սիրելի եղբայրներին: Իմ սիրելի եղբայրներին ջերմ ողջույններ ու մաղթանքներ նվիրելուց հետո ուզում եմ հայտնել քրդերեն հաղորդումների համար իմ բարևները հայ եղբայրներիս քրդերեն հաղորդումների համար:[86]

Իրաքի Հավլեր քաղաքի բնակիչ քուրդ Ա. Ա. Դաշնի իր հերթին գրում է. «Երևանի ռադիոկայանի վարչությանը: Մենք՝ ռադիոլսողներս, ամեն կի-

րակի Երևանից լսում ենք քրդերեն հաղորդումներ... Մենք ռադիոլսողներս, հղում ենք ձեզ՝ հայ ժողովրդին և Հայաստանում ապրող քուրդ բարեկամներին մեր բոցավառ, ջերմ ողջույնը: Մենք մեր անսահման սերն ու բարեկամական ջերմ համակրանքն ենք հայտնում Հայաստանի կառավարությանը քրդերեն հաղորդումների համար»:[87] Մասնավորապես կանգ չառնելով քրդական ռադիոհաղորդումների լոսաբանման վրա, նշենք, որ խմբագրություններին հասցեագրված նամակները բազմաթիվ են և պահվում են Երևանի ռադիոյի արխիվում: Դրանք ևս մեկ անգամ հաստատում են, որ քրդական մշակույթին ընդունվում և գնահատվում է ողջ քրդության կողմից:

Քուրդ ժողովրդի մշակութային կյանքում աննախադեպ իրադարձություն էր 1934 թվականի հուլիսի 8-ին Երևանում բացված քրդագիտական համամիութենական առաջին կոնֆերանսը: Դեռևս կոնֆերանսի նախօրեին հայ գիտնականները հանրապետության մամուլի էջերում հանդես եկան քրդագիտությանը վերաբերող տարբեր հոդվածներով: Ծանոթանալով կոնֆերանսի թեզիսներին, հայ գիտնականները քննարկվող հարցերի շուրջ հանդես եկան կոնկրետ առաջարկություններով: Նրանք հիմնականում անդրադառնում էին քրդերեն գրական լեզվի, ուղղագրության, տերմինաբանության, բանահյուսության հարցերին:

Պրոֆեսոր, քրդագետ Ա. Խաչատրյանը «Համամիութենական քրդագիտական կոնֆերանսը» խորագրով հոդվածում նշում էր Հայաստանում քուրդ ժողովրդի մշակույթի առաջընթացի մասին, որը իրավամբ թույլ է տալիս ասելու, որ միայն Հայաստանում կարող էր նման գիտաժողով հրավիրվել, քանզի միայն Հայաստանում է, որ ստեղծված են բոլոր հնարավոր պայմանները քուրդ ժողովրդի մշակույթի, հատկապես քրդագիտության զարգացման համար:[88]

«Հավաքել քրդական բանահյուսությունը» բազմաբովանդակ հոդվածով հանդես եկավ նաև մշակույթի պատմության ինստիտուտի գիտաքարտուղար, պրոֆեսոր Մելիք-Օհանջանյանը: Նա նշում է, որ կոնֆերանսը պետք է իր ուշադրությունը բևեռի քրդական բանահյուսության հարցերի վրա: «Քրդական բանահյուսությունը,- գրում է նա,- հարուստ ու բազմաբովանդակ է, եթե քուրդ գրողները ցանկանում են էլ ավելի հարստացնել իրենց լեզուն, պետք է լավ ծանոթ լինեն քրդական բանահյուսությանը, նրա հեքիաթին, բեյթերին, երգերին, քրդական բանահյուսության շտեմարանը լի է դրանցով: Եվ ոչ միայն քուրդ գյուղացուց պետք է հավաքել քրդական բանահյուսությունը, այլ նաև Թուրքիայից գաղթած հայ փախստականներից, որոնք հոյակապ տիրապետում են քրդական բանահյուսությանը և նույնիսկ թարգմանել են հայերեն: Հարկավոր է նաև ուշադրություն դարձնել գրական տերմիններին»:[89]

«Ռյա թազա» թերթի մեկ այլ համարում տպագրվել է կրկին պրոֆեսոր Ա. Խաչատրյանի «Քրդերեն բարբառները և քրդերեն գրական լեզվի ստեղծման մի քանի հարցեր» խորագրով հոդվածը: Հեղինակը կոնֆերանսի առջև խնդիր էր դնում խորապես անդրադառնալ քրդերեն լեզվաշինութ-

յան հարցերին:[90]

Կոնֆերանսի բացման առաջին օրը Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Ա. Խանջյանը Հայաստանի Կենտրոնական կոմիտեի անունից ողջույնի հեռագիր հղեց:[91] «Ոյա թազա» թերթն այդ պատմական իրադարձությանն էր նվիրել իր առաջնորդող հոդվածը: Այստեղ տպագրվեց մշակույթի պատմության ինստիտուտի դիրեկտոր Հ. Զորյանի «Համամիութենական քրդագիտական կոնֆերանսը և նրա խնդիրները» խորագրով հոդվածը: Արարատ Ղարիբյանը, «Ոյա թազա» թերթում հանդես գալով «Քրդագիտական կոնֆերանսը» ծավալուն հոդվածով, նշում էր, որ հարկավոր է կոնֆերանսում որոշում կայացնել քրդերեն գրական լեզվի ստեղծմանն ուղղված գործնական միջոցառումների կազմակերպման մասին, և որ այդ հարցում հայ գիտնականներն իրենց բարեկամական օգնությունը պետք է տրամադրեն նորաստեղծ քրդական մշակույթին, սատար լինեն թե՛ լեզվին, թե՛ գրականությանը և թե՛ պատմությանը վերաբերող հարցերում:[92]

«Քրդական գրական լեզվի մի քանի առանձնահատկությունների մասին» իր հոդվածում պրոֆեսոր Գուրգեն Սևակը, անդրադառնալով լեզվաշինության մի քանի հարցերի, առաջնությունը տալիս է կուրմանջի բարբառին և նշում նրա առանձնահատկությունները, որոնց հիման վրա էլ, ըստ նրա, պետք է զարգանա քրդական գրականությունը:

Կոնֆերանսի բացումը վերածվեց հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության տոնախմբության, որին մասնակցում էին ոչ միայն հայ և քուրդ մտավորականության ներկայացուցիչները, այլև գիտնականներ Լենինգրադից, Վրաստանից, Ադրբեջանից և միջինասիական հանրապետություններից: «Ոյա թազա» թերթը հուլիսի 8-ին Երևանի կուլտուրայի տանը տեղի ունեցած հանդիսության մասին նշել է. «Մի մեծ տոնախմբություն էր այդ օրը, դահլիճում հնչում էր հայկական և քրդական երաժշտության հուզիչ մեղեդին: Դահլիճի միջանցքներում բացվել էին քրդական մշակույթին նվիրված ցուցափեղկեր: Իրոք, այդ օրը քրդական մշակույթի ի մի բերման, տոնակատարման օրն էր»:[93]

Կոնֆերանսի բացման խոսքում Հայաստանի Կենտգործկոմի նախագահ Ս. Մարտիկյանը նշեց. «Ես ի սրտե ողջունում եմ քրդագիտական կոնֆերանսը... Քուրդ ժողովուրդը հպարտանում է հենց իր լեզվով, իր գիր ու գրականությամբ, իր համար նոր կուլտուրա է ստեղծում: Նա դպրոցներ է բացում, հրատարակում է թերթ, իր գրական լեզուն է ստեղծում ու առաջ մղում... Ես հույս եմ հայտնում, որ կոնֆերանսը կպարզաբանի օրակարգի ամեն մի հարց և նոր թափ կհաղորդի քրդական մշակույթի առաջընթացին, հատկապես քրդագիտությանը վերաբերող հարցերին, իսկ Հայաստանի կառավարությունը կաջակցի ամեն մի հարց իրագործելուն»:[94]

Այնուհետև կոնֆերանսը լսեց հետևյալ զեկուցումները.

1. «Կուլտուրայի պատմության ինստիտուտի քրդագիտական աշխատանքները (զեկ.՝ Հ. Ջնդի)

2. «Ֆեոդալական ֆորմացիան քրդերի մեջ» (զեկ.՝ Ա. Շամիլով)
3. «Ընդհանուր գրական լեզվի պրոբլեմները» (զեկ.՝ Ա. Խաչատրյան)
4. «Քրդերի միասնական ուղղագրությունը՝ կապված քուրդ-լատինական այբուբենի բարեփոխության հետ» (զեկ.՝ Ամինե Ավդալ)
5. «Քրդերեն քերականության հիմունքները» (զեկ.՝ Ղ. Կուրդոև և Յուկերման)
6. «Քրդերեն տերմինաբանական շինարարության աշխատանքները» (զեկ.՝ Վ. Պետոյան)[95]

Կոնֆերանսի բացման օրը հանրապետական թերթերը հանդես եկան հայ մտավորականների ողջույններով ու հոդվածներով: «Խորհրդային Հայաստան» թերթը հուլիսի 8-ի իր 155-րդ համարը ամբողջովին նվիրել էր կոնֆերանսին: Կոնֆերանսի բոլոր նիստերին մասնակցում էին հայ գիտնականները և հանդես գալիս գիտական զեկուցումներով ու ելույթներով: Բազմաբովանդակ էր հատկապես կոնֆերանսի 6-րդ նիստը, որտեղ ելույթ ունեցան հայ անվանի գիտնականներ Հ. Աճառյանը և Գ. Ղափանցյանը, որոնք հիմնականում անդրադարձան քրդական միասնական գրական լեզվին: Հանդես եկավ նաև Համամիութենական ԳԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատող Վ.Իլիչևակին, որն ինչպես ողջ ինստիտուտի կոլեկտիվը, այնպես էլ ակադեմիկոս Ն. Մառի անունից ողջունեց կենֆերանսի աշխատանքները:

Նաև ելույթ ունեցավ Ադրբեջանից պատգամավոր պրոֆեսոր Զոբան Զադին: Նա իր ողջույնի խոսքից հետո նշեց. «Մանոթանալով կոնֆերանսի աշխատանքներին, ես ինձ իրավունք եմ վերապահում Ադրբեջանի անունից ասելու, որ կոնֆերանսի նման ծավալուն աշխատանքը ունի համաշխարհային նշանակություն... Ադրբեջանի հասարակական, գիտական, մանկավարժական կազմակերպությունները մեծ հույսեր են կապում այս կոնֆերանսի հետ, նաև հույս հայտնում, որ այն թերություններ, որոնք գոյություն ունեն մեր հանրապետությունում (Ադրբեջանում – Կ. Զ.), այս կոնֆերանսի որոշումների հիման վրա կվերանան: Ես անձամբ հիացած եմ Խորհրդային Հայաստանի քրդերի ձեռք բերած արդյունքներով և այն բանով, որ նման հոգատար վերաբերմունք է ցուցաբերվում քրդական հարցին»:[96]

Կոնֆերանսն իր աշխատանքներն ավարտեց հուլիսի 15-ին: Այն հիմնականում քննարկեց քրդական գրական միասնական լեզվի խնդիրը, քրդերեն լեզվի ուղղագրության, նոր մշակված քերականություն ստեղծելու և տարածելու հարցերը: Անդրադարձավ քրդերենի տերմինաբանության ու բառակազմության, քուրդ ժողովրդի պատմության, ազգագրության, բանահյուսության խնդիրներին: Կոնֆերանսում որոշվեց քրդական միասնական լեզուն ճանաչել ներկայումս Հայաստանում ապրող քրդերի կուրմանջի բարբառը, որով խոսում է քուրդ ժողովրդի մեծամասնությունը: Միևնույն ժամանակ որոշվեց համամիութենական քրդագիտական երկրորդ կոնֆերանսը հրավիրել 1935 թվականին Ադրբեջանում և Հայաստանի պետական համալսարանում հիմնել քրդագիտական ամբիոն:[97] Պետք է նշել, որ Ադրբեջանում հաջորդ կոնֆերանսը տեղի չունեցավ տեղական իշխանություննե-

րի չկամության պատճառով և, մինչ այդ այնտեղ առկա ուծացման քաղաքականությունը, կարելի է ասել, էլ ավելի գլուխ բարձրացրեց:

Յանկանում ենք կանգ առնել մի պատմական պարզ ու կարևոր իրողության վրա: Եթե Հայաստանում, ըստ անցկացված մարդահամարների տվյալների, 1921 թ. 8.455 քուրդ էր բնակվում, ապա 1979 թ.՝ 70.000, որոնց համար, ըստ էության, ստեղծված էր մշակութային ավտոնոմիա:

Իսկ, ահա, թե ինչ էր կատարվում նույնպես կոմունիստական Ադրբեջանում: 1926 թ. այնտեղ քրդերի թիվը կազմում էր 41.000, ըստ երևույթին, սա պայմանական թիվ է: Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ Ադրբեջանում բնակվել են 200.000 քրդեր, գոյություն են ունեցել մի քանի մշակութային օջախներ: 1939 թ. մարդահամարով Ադրբեջանում արդեն քրդերի թիվն աստիճանաբար պակասում է, և նշված է ընդամենը 6.000, վերանում են քրդական բոլոր օջախները, այդ թվում՝ Լաչինի քրդական մարզը: Իսկ արդեն 1959 թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանի Հանրապետությունում քրդեր չկային:[98]

Եվ այսպես, կոնֆերանսն ընտրեց հատուկ պատասխանատվությամբ մի խումբ, որի մեջ ընդգրկված էին պրոֆեսոր Ա. Խաչատրյանը, Ա. Շամիլովը, Հ. Ջնդին, Ղ. Կուրդոևը, Վիլչևսկին, Յուկերմանը, Փեհլիևը: Այս խումբը պետք է կազմեր քրդերեն լեզվի գիտական ու դպրոցական քերականությունը:

Հետագայում պրոֆեսոր Ա. Խաչատրյանի և Հ. Ջնդու նախաձեռնությամբ կազմվեց այդ քերականությունը: Այնուհետև որոշվեց մոտ 50 մամուլ ծավալով հրատարակել քրդական բանահյուսություն, հայ-քրդերեն բառարան, որոնք կարճ ժամանակամիջոցում լույս տեսան: Որոշ ուշացումով, 60-ական թվականներին Երևանի պետական համալսարանում բացվեց քրդագիտության բաժին:

Նշենք, որ կոնֆերանսը քուրդ ժողովրդի մշակութային կյանքում մի անախադեպ իրադարձություն էր, որն ի մի բերեց այն բոլոր խոշորագույն հաղթանակները, որոնք քուրդ աշխատավորությունը վերջին տարիների ընթացքում ձեռք էր բերել Հայաստանի կառավարության ու հայ մտավորականության անմիջական օժանդակությամբ: Այդ աջակցությունը բարձր գնահատական արժանացավ արտերկրի բազմաթիվ գիտնականների կողմից: Պետք է փաստել, որ այս գիտաժողովը քուրդ ժողովրդի կյանքում նշանակալից էր նաև քաղաքական տեսանկյունից: Այս առթիվ Հայաստանի Գործադիր կոմիտեին կից նոր այբուբենի նախագահ Ռ. Դաշտոյանը Խորհրդային Միության Ազգությունների խորհրդի 1934 թվականի հուլիսին ուղարկված զեկուցագրում նշում է, որ ամփոփելով քրդագիտական համամիութենական կոնֆերանսի արդյունքները, համարձակորեն պետք է նշել, որ կոնֆերանսի աշխատանքներն անցան քաղաքական և գիտական բարձր մակարդակով: Եվս մեկ անգամ վերհանվեցին քրդական մշակույթին և հատկապես քրդագիտությանը վերաբերող բազմաբնույթ հարցեր:

Կոնֆերանսը, հիմնվելով բազմաբնույթ հարցերի մանրազնին քննար-

կումների ու մեկնաբանությունների արդյունքների վրա, կայացրեց համապատասխան գործնական որոշումներ և ընդունեց բանաձևեր: Այն ողջույնի հեռագիր հղեց անձամբ ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Ա. Խանջյանին, որի մեջ կոնֆերանսի մասնակիցները ողջ քուրդ ժողովրդի անունից իրենց երախտագիտության խոսքն էին հղում հայ ժողովրդին այն վիթխարի աշխատանքի համար, որ կատարել է Հայաստանը քրդերի տնտեսական ու մշակութային շինարարության ասպարեզում («Ռյա թազա», 1934, N32):

Կոնֆերանսից հետո նոր թափ հաղորդվեց քրդական ազգային մշակույթի, հատկապես քրդագիտության զարգացմանը: Անվիճելի է, որ քրդական մշակութային պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն է զբաղեցնում հայ մտավորականության անմիջական նախաձեռնությամբ հայ քրդագիտության հիմնադրումը և ընդհանրապես քրդագիտության զարգացումը Հայաստանում: Ինչպես արդեն նշեցինք, բազմաթիվ հայ մտավորականներ՝ պատմաբաններ, գրականագետներ, լեզվաբաններ, ազգագրագետներ, երաժշտագետներ իրենց աշխատություններում, ստեղծագործություններում, գիտական, գեղարվեստական ու հրապարախոսական հոդվածներում անդրադարձել են քրդագիտությանը վերաբերող բազմաթիվ հարցերի, խթանելով քրդական մշակույթի զարգացումը: Նրանք բացահայտել ու գիտական հողի վրա են դրել քուրդ ժողովրդի պատմությանը, գրականությանը, լեզվին և այլ ոլորտներին վերաբերող բազմաթիվ հարցեր: Սակայն այս ուղղությամբ նպատակասլաց գիտական մեծ աշխատանք կատարվեց այն ժամանակ, երբ Երևանում 1932 թվականին Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտում հիմնվեց քրդագիտական սեկցիան, որը ղեկավարում էր պրոֆեսոր Ա. Խաչատրյանը, հետագայում՝ Հաջիե Ջնդին: Այս սեկցիան հայ մտավորականների անմիջական օգնությամբ հատկապես խորանում էր քրդերենի լեզվակազմության ու բանահյուսությանը վերաբերող հարցերում: Այս առթիվ կուլտուրայի պատմության ինստիտուտի դիրեկտոր Հ. Զորյանը նշում է. «Քրդական ժողովրդական բանահյուսության հավաքագրման համար 1931, 1932, 1933 թվականներին պարբերաբար կազմակերպել ենք էքսպեդիցիաներ դեպի քրդական գյուղերը, որոնց ջանքերով հավաքվել են քրդական բանահյուսության լավագույն նմուշները: Արաբերենից թարգմանվել է քրդերեն 12-րդ դարի քուրդ գրող Շեյխ Ահմադե Մալայե Ջզիրու դիվանը, 16-րդ դարի գրող Ահմադե Խանու «Մամ ու Ջինը»: 3000 քրդական տերմիններ ստեղծված են մեր ինստիտուտում, պատրաստվել են «Ռոստամ Ջալի» քրդական պատումները»:[99]

1934 թ. կուլտուրայի ինստիտուտի պլանային աշխատանքում նախատեսված էր պրոֆեսոր Ա. Խաչատրյանի ղեկավարությամբ պատրաստել և հրատարակել «Քրդական բանահյուսության» հատորյակը, «Քրդերեն լեզվի քերականությունը», «Տերմինաբանական բառարանը», «Քուրդ-հայերեն բառարանը», «Քուրդ-գերմաներեն բառարանը», նյութեր հավաքել քուրդ ժողովրդի պատմությունը գրելու համար, քրդական բանահյուսական նյու-

թեր հավաքելու համար արշավախումբ կազմակերպել Հայաստանի Կոտայքի, Վեդու և Ղամարլուի շրջաններ, Ադրբեջանի Նախիջևանի շրջան, Քուրդիստանի օկրուգ (Լաչին - Կ. Ջ.), Վրաստանի Ախլցխայի, Ախալքալակի շրջաններ և Ալջարստան: Քրդագիտական հարցերի պարզաբանման և գիտական վերլուծության ուղղությամբ էլ ավելի ամրապնդել կապերը Կովկասում գործող գիտական օջախների հետ, քրդական գյուղերում կազմակերպել բանահյուսության և ազգագրության նյութերի հավաքագրման խմբակներ, քրդագետներ պատրաստելու նպատակով քուրդ շնորհալի երիտասարդներ ուղարկել Լենինգրադ և Մոսկվա՝ ուսանելու, քրդագիտական աշխատանքներում ընդգրկել քրդական մշակույթին հարող հայ մտավորականներին: Նման միջոցառումները գործնական բնույթ էին կրում: Այդ նպատակների համար քրդական սեկցիան միայն 1934 թ. ծախսել է 50 հազարից ավելի գումար:[100]

Այս աշխատանքներին լծվել էին ոչ միայն քուրդ նորաստեղծ մտավորականության հատուկենտ ներկայացուցիչները, այլև հայ անվանի գիտնականներ Հ. Աճառյանը, Գ. Սևակը, Ա. Խաչատրյանը, Ա. Ղարիբյանը, Կ. Օհանջանյանը, Ա. Ղանալանյանը, Շ. Կուժիկյանը և շատ ուրիշներ:

Մեծ է ակադեմիկոս Հ. Աճառյանի ներդրումը քրդական մշակույթի, հատկապես քրդագիտության մեջ: Նա դեռևս Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ զբաղվել է քրդերենի հարցերով: 1906-1904 թվականներին, երբ Նոր Բայազետում մանկավարժական աշխատանք էր տանում, զբաղվում էր նաև քրդերենի ուսումնասիրությամբ: Այդ ժամանակ Նոր Բայազետում կար 50 քրդական ընտանիք և մեծանուն գիտնականը, այլ լեզուների ուսումնասիրմանը զուգընթաց, հետաքրքրվում էր նաև ղրացի քրդերի բարբառով, նրանց նիստուկացով: Նոր Բայազետի 50 տուն քրդերը, փրկվելով թուրքական յաթաղանից, բնակություն էին հաստատել Հայաստանում և պահպանել էին իրենց յուրահատուկ բարբառը: Հայ տաղանդաշատ մտավորականի այս ուսումնասիրությունն արժեքավոր է այն տեսակետից, որ նա գրավոր մեզ է հասցրել աղբյուրագիտական և գիտական առումով մեծ արժեք ներկայացնող այդ բարբառը:[101]

Բարբառը ներկայացնող ժողովածուն ընդգրկում է մոտ 1000 քրդական բառ, միևնույն ժամանակ տրված է այդ բառերի ֆրանսերեն թարգմանությունը և ստուգաբանությունը: Այս արժեքավոր ուսումնասիրությունը 1911 թվականին տպագրվել է Փարիզում հրատարակվող «Լեզվաբանության ընկերության տեղեկագիր» (Մեմուար դը լա սոսիեթե դը լենգիստիկ) գիտական ամսագրի 16-րդ համարում: Մենք չենք ցանկանում մանրամասն անդրադառնալ Հ. Աճառյանի այն մեծ ներդրմանը, որ նա կատարել է քրդերենի ստուգաբանության և հայկաբանության դրսևորումները քրդերենում մատնանշելու գործում, քանի որ Մարիա Այվազյանը դրանց անդրադարձել է իր «Հ. Աճառյանը և իրանագիտությունը» ատենախոսության սեղմագրում:

Աճառյանը, մեծ կարևորություն տալով հայ և քուրդ ժողովուրդների լեզվական կապերի պատմությանը, գտնում էր, որ դրանով պետք է զբաղվեն ազգային կադրերը, և նա Երևանի պետհամալսարանի իր ուսանողներից քուրդ անվանի գրող Շկոե Հասանին խորհուրդ է տվել զբաղվել այդ հարցերի ուսումնասիրությամբ, որն էլ նրա անմիջական ղեկավարությամբ շարադրել է «Հայկական բառերը քրերի լեզվի մեջ» դիպլոմային աշխատանքը: Այն արժանացել է քննական հանձնաժողովի բարձր գնահատականին:[102]

Աճառյանն իր մի շարք աշխատություններում, ինչպես «Հայ լեզվաբանության պատմությունը», «Հայ նոր լեզվի քերականությունը» և այլն, անդրադարձել է քրդերենին: Մեծ է հայ անվանի լեզվաբանի ներդրումը քրդական մշակույթի պատմության մեջ նաև այն իմաստով, որ նրա անմիջական ղեկավարությամբ են աճել քուրդ գիտնականներ Հաջիե Ջնդին, Ամինե Ավդալը, Վազիրե Նադրին: Նա երկու անգամ եղել է քրդական այբուբենի ստեղծման հանձնաժողովի կազմում:

Մեծ է նաև հայ անվանի գիտնական, ակադեմիկոս Աբրահամ Ղարիբյանի ներդրումը քրդական մշակութային կյանքում: Նա եղել է քուրդ նշանավոր գիտնականներ Հաջիե Ջնդու և Ղանատե Քուրդոյի ընդդիմախոսը: Եղել է պրոֆեսոր Ա. Խաչատրյանի և Հաջիե Ջնդու «Քրդերեն լեզվի քերականությունը», Ամինե Ավդալի «Քրդերեն լեզվի մեթոդիկան», Վազիրե Նադիրի «Քրդերեն լեզուն» դրքերի խորհրդատուն և խմբագիրը: Իր բազմաբովանդակ ելույթներով ու խորհուրդներով նա բազմիցս է հանդես եկել Հայաստանի ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի քրդագիտական բաժնի նիստերում, օգնել քուրդ երիտասարդ գիտնականներին: Աբրահամ Ղարիբյանը դեռևս 1934 թվականին իր «Քրդական այբուբենի ուղղագրական մի քանի հարցերի մասին» հոդվածում մանրամասն կանգ է առնում ինչպես այբուբենի, այնպես էլ ուղղագրությանը վերաբերող մի քանի կարևոր հարցերի վրա, գիտականորեն վերլուծում թերությունները, որոնք տեղ են գտել ուղղագրության և այբուբենի մեջ: Պետք է նշել, որ այս հոդվածից հետո (որը տպագրվեց «Կուլտուրական ֆրոնտ» թերթի 1934 թվականի 2-րդ համարում) լայն թափ հաղորդվեց քրդերենի լեզվաշինության հարցերին:

Քրդական մշակույթի կյանքում իր արժանի ներդրումն ունի նաև ազգագրագետ, բանահավաք Շահեն Կուժիկյանը: Լինելով բնիկ շատախցի, նա խորապես հետաքրքրվել է Շատախի, Վանի և Մոքսի քրդերի կյանքով, անդրադարձել նրանց ազգագրությանը, բանահյուսությանը, քրդական ցեղերի ու ցեղախմբերի պատմությանը, սակայն նրա ուշադրության կենտրոնում առավելապես եղել են այս գավառների հայերի և քրդերի կենցաղային փոխհարաբերությունները: Շահեն Կուժիկյանը հատկապես մեծ ներդրում ունի հայ-քրդական կապերին վերաբերող հարցերի լուսաբանման գործում և պատահական չէ, որ սույն թեման օբյեկտիվորեն վերարտադրված է նրա ձեռագրերում: Անդրադառնալով 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբներին Շատախի, Մոքսի և Վանի հայերի ու քրդերի փոխհարաբերությանը, նա գրում է. «Այս շրջանի հայերը և քրդերը նստակյաց էին, շատ լավ բարի հարևաններ եղած էին ընդմիշտ (բացառությամբ շատ քիչ տարիների

ընթացքում ծագած երբեմնի չնչին խնդիրների)»:[103] Մեկ այլ տեղ նա ընդգծում է. «Քրդերի առևտուրը հայերի հետ էր, հայերի միջոցով էր, մանավանդ ծանոթ մոտիկ հայը քրդի տան ունեցվածքը տալ-առնել, փոխանակել, ծախսել, տան տնտեսությունը կարգավորելու տերն էր ... Քուրդը այնքան հավատացած էր հային, որ իր տանը եղած գաղտնիքը ինչ որ գիտեր, հայն էլ գիտեր. պատահում էր քուրդն հայից էր իմանում իր տան գաղտնիքը ... Քրդերը ընտանեկան հավատքով վերին աստիճանի հային հավատացած էին: Հայերն էլ ծայր աստիճան հավատարիմ և անկեղծ էին տրամադրված, ընտանեկան մաքրությամբ կատարյալ անկեղծ եղած են: Քուրդն էլ պատահելիս հայ ընտանիքի նույնպես և ավելի մաքուր սրտով, ինչպես իրանց հարազատին, հայ ընտանիքի պատիվը սրբությամբ կպահեր»:[104] Այս և նման այլ բազմաթիվ փաստերի հիման վրա Կուժիկյանը ևս մեկ անգամ ջանում է ապացուցել, որ Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում ստեղծված էր հայ-քրդական մի միասնական ընտանիք, որ այդ բարեկամությունն ունի սոցիալ-տնտեսական կենցաղային խոր արմատներ:

Մեծ է Կուժիկյանի ներդրումը նաև քրդական ժողովրդական բանահյուսության հավաքագրման բնագավառում: Նրա արխիվում հայերեն և քրդերեն պահպանվում են այդ բանահյուսության նմուշներ. 380 քրդական ասացվածքներ, մի շարք երգեր, պատմվածքներ, որոնցից առավել աչքի են ընկնում «Խալիլ Բեկը», «Գենջ Խալիլ», «Զայնամո», «Ռոստամի տղան», «Կուռ մալե» և այլ քրդերեն (լատինատառ) պատմվածքներն ու երգերը: Բանահյուսական այդ նմուշները, ինչպես ինքն է վկայում, դեռ Շատախում լսել էր քրդերից և հայերից, այլ խոսքով դրանք հավասարապես տարածված են եղել թե՛ քրդերի և թե՛ հայերի մեջ և պատմվել են երկու լեզուներով:[105]

Շահեն Կուժիկյանը մտերիմ հարաբերությունների մեջ էր պրոֆեսոր քրդագետ Ա. Խաչատրյանի, քուրդ գիտնականներ Հաջիե Զնդու և Ամինե Ավդալի հետ, ընդգրկված էր քրդական բանահյուսության հավաքագրման արշավախմբերում: Նա վերահրատարակման կապակցությամբ վերանայել է 1933 թ. Երևանում հրատարկված «Հայ-քրդերեն բառարանը», որը հավելել է շուրջ 5 հազար նոր բառերով:[106]

Ճիշտ է, Կուժիկյանն այս ամենի մասին առանձին մենագրությունով հանդես չի եկել, բայց նրա թողած ձեռագիր ժառանգությունը, որը պահպանվում է մեր հանրապետության Գրականության և արվեստի պետական թանգարանի արխիվում, որպես սկզբնաղբյուր արժեքավոր է թե՛ պատմաբանների և թե՛ ազգագրագետների ու բանահավաքների համար:

Սակայն Հայաստանում քրդագիտական հարցերն էլ ավելի կայուն հիմքերի վրա դրվեցին, երբ Հայաստանի ԳԱԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանի անմիջական նախաձեռնությամբ Արևելագիտության սեկտորում 1959 թվականի հոկտեմբերի 1-ից կազմվեց հայ և քուրդ գիտնականների մի խումբ, որը հետագայում վերածվեց քրդագիտության բաժնի: Ինստիտուտի տնօրեններ ակադեմիկոս Մ. Ներսիսյանի և Գ. Սարգսյանի, պրոֆեսորներ Հ. Ինճիկյանի, Ն. Հովհաննիսյանի գործնական քայլերի շնորհիվ գիտական

շրջանառության մեջ դրվեցին քուրդ ժողովրդի պատմությանը, գրականությանը, լեզվին, ազգագրությանը, բանահյուսությանը վերաբերող բազմաթիվ հարցեր:

Չնայած Լենինգրադում, Մոսկվայում ու եվրոպական գիտական կենտրոններում նույնպես զբաղվում են քրդագիտության հարցերով, սակայն հայ քրդագիտությունն ներառում է քրդագիտությանը վերաբերող բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծման շնորհիվ գիտական աշխարհում այն դարձել է մի նոր ուղղություն և հանգեցրել գործնականում բեղմավոր արդյունքների:

Քրդագիտական կադրերի պատրաստման գործում զգալի ներդրում ուներ 1972 թվականի Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում բացված քրդագիտական բաժինը: Այսօր այդ ուսումնական հաստատությունում, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գ. Ասատրյանի նախաձեռնությամբ, քրդագետ Ռզգանե Ջանգոն դասավանդվում է քրդերեն:

Քրդագիտության զարգացման գործում իրենց մեծ ներդրումն ունեն հայ անվանի պատմաբան ակադեմիկոսներ Մ. Ներսիսյանը, Գ. Ղաբիբջանյանը, Ծ. Աղայանը, Մ. Զուլալյանը, դոկտոր-պրոֆեսորներ Վ. Բայբուրդյանը, Վ. Պարսամյանը, Մ. Հասրաթյանը, Հ. Փափազյանը, Կ. Խուդավերդյանը, Գ. Ակոպովը, Գ. Ասատրյանը, Ա. Փոլադյանը և մյուսները: Իրավամբ պետք է նշել, որ ակադեմիկոս Մանվել Զուլալյանի «Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը օսմանյան կայսրության մեջ», պատմական գիտությունների դոկտոր Արշակ Փոլադյանի «Քրդերը VII-X դարերում ըստ արաբական աղբյուրների», «Քրդերը Աբասյան խալիֆաթության ժամանակաշրջանում» աշխատությունները նորահայտություններ են քրդագիտության մեջ:

Հատկապես պետք է երախտագիտությամբ նշել հայ անվանի պատմաբան պրոֆեսոր Վահան Բայբուրդյանի ներդրումը քրդագիտության զարգացման բնագավառում: Ինչպես արդեն նշել ենք, նա իր բազում աշխատություններում անդրադարձել է հայ-քրդական հարաբերություններին ու մշակութային հարցերին: Տևապես աշխատելով ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, նա լուսաբանել է քրդագիտության բազմաթիվ հարցեր: Այսօր էլ, ղեկավարելով Արևելագիտության ինստիտուտի իրանական բաժինը, կրկին զբաղվում է քրդագիտության հարցերով: Հր. Աճառյանի համալսարանում կարդում է «Հայ-քրդական հարաբերությունները պատմության քառուղիներում» դասախոսությունը: Ինչպես ինքն է նշում, այդ հարցում մեծ աջակցություն է ցուցաբերել Հր .Աճառյանի համալսարանի ռեկտոր պրոֆեսոր Ավագ Խաչատրյանը: Անդրադառնալով քրդագիտության բազմակողմանի ուսումնասիրությանը, Բայբուրդյանը նշում է. «Որպես արևելագետ գիտնական ես մշտապես հայ-քրդական հարաբերությունների հարցը դիտել եմ ոչ այնքան որպես զուտ գիտական հետազոտության առարկա հանդիսացող հարց, այլ, առաջին հերթին, որպես առաջնակարգ հրատապություն ունեցող քաղաքական խնդիր» («Բարեկամություն» ամսագիր, Երևան, 1999, N6, էջ 24):

Քրդական մշակույթի բնագավառում, հատկապես քրդագիտության կադրերի պատրաստման գործում իր ներդրումն ունի Հր. Աճառյանի անվան համալսարանը: Հայ-քրդական բարեկամական կապերի ամրապնդման, քրդագիտության զարգացման գործում նշանակալից դեր ունեն Հայաստանում հիմնադրված «Քուրդ մտավորականների խորհուրդը», «Հայ-քրդական բարեկամության ընկերությունը», «Քուրդիստան կոմիտեն», «Ակտա Քուրդիկա» հանդեսը:

Հայաստանի քրդական համայնքը, բարձր գնահատելով համաշխարհային ճանաչում վայելող մանրաքանդակագործ Էդուարդ Ղազարյանի անկեղծ, անշահախնդիր բարեկամական վերաբերմունքը քուրդ ժողովրդի նկատմամբ, նրան ընտրեց «Հայ-քրդական բարեկամության ընկերության» պատվավոր նախագահ: Այսօր նա իր տիկնոջ, սույն ընկերության նախագահ Ռոզա Կիրակոսյանի հետ մեծ ավանդ է ներդնում հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ամրապնդման սուրբ գործում: Իսկ ընկերության կողմից հայերեն հրատարակվող «Բարեկամություն» ամսագիրը իր էջերում լայնորեն լուսաբանում է հայ-քրդական հարաբերություններին, մշակույթին նվիրված բազում հարցեր:

Անդրադառնալով հայ մտավորականության գործնական ներդրումներին, չենք կարող չնշել, որ Մատենադարանի տնօրեններ, ակադեմիկոսներ Ն.Աչիկյանի, Սեն Արևշատյանի անմիջական նախաձեռնությամբ Մատենադարանի արխիվներում քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը, բանահյուսությանը, լեզվին ու գրականությանը վերաբերող բազմաթիվ նյութեր են կուտակվել, որոնք ինչպես միջին դարերի, այնպես էլ նորագույն շրջանի քրդական մշակույթի պատմության նոր էջեր են բացահայտում: Արևշատյանը միշտ էլ կարևոր տեղ է հատկացրել քուրդ ժողովրդի մշակույթին, կոչ արել ամրապնդել հայ-քրդական բարեկամությունը: Քրդական տոհմական նախատարությունների մեկի՝ Նավրուզի ժամանակ իր ողջույնի խոսքում նա գրել է. «Սրտանց շնորհավորում եմ իմ եղբայրներին ու քույրերին գարնանային տոնի՝ Նավրուզի առիթով: Իմ բարի մաղթանքները հղելով ձեզ բոլորիդ, ցանկանում եմ երջանկություն, ուրախություն և տոկունություն: Թող այս տարվա ընթացքում իրականանան քուրդ ժողովրդի լուսավոր իղձերը, երազանքները, հաղթանակներով պսակվի ազգային-ազատագրական պայքարը, և էլ ավելի ամրապնդվի հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը» («Բարեկամություն» ամսագիր, Երևան, 1998, N2):

Հայ մտավորականության հոգատարության ու անմիջական նախաձեռնության շնորհիվ Հայաստանում աճեց քրդագետների թիվը, որոնցից Շաքրո Մհոյանն արժանացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի բարձր կոչման, իսկ Օրդիխան և Ջալիլ Ջալիլով եղբայրները՝ դոկտոր, պրոֆեսորի կոչման: Նրանց բազում գիտական աշխատանքները նույնպես հարստացնում են հայ քրդագիտության շտեմարանը, նոր երանգ տալիս քրդական մշակույթին:

Քրդական մշակութային օջախների ստեղծումը կրկին անգամ նպաստեց քրդական մտավորականության ձևավորմանը: Պետք է նշել այս ուղղությամբ Հայաստանի կառավարության կողմից ձեռնարկվող գործնական քայլերի դրական նշանակությունը: 1928 թվականին Հայաստանի Լուսժողկոմի որոշմամբ տասնյակ երիտասարդներ ուղարկվեցին Լենինգրադի Արևելյան ինստիտուտին կից Արևելքի ազգային փոքրամասնությունների բանֆակներում սովորելու:[107] Այնուհետև, 1930-31 և 1933- 34 ուս. տարիներին ևս, մի շարք քուրդ երիտասարդներ ուղարկվեցին Լենինգրադ, որտեղ տարբեր մասնագիտությունների գծով սովորում էին 45 քուրդ ուսանողներ:[108] Եվ այսպես, ամեն տարի Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի բարձրագույն ուսումնական հաստատություններն էին գործուղվում տասնյակ քուրդ երիտասարդներ: 30-ական թվականներին քուրդ երիտասարդներն իրավունք ստացան մրցույթից դուրս ընդունվելու Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններ: Օրեցօր Հայաստանում ստվարանում էին քուրդ մտավորականության շարքերը: Նրանք, մասնագիտանալով տարբեր ոլորտներում, իրենց լման էին ներդնում հանրապետության տնտեսական և մշակութային կյանքում:

Հայաստանի քրդերի հասարակական կյանքում պատմականորեն նոր երևույթ էր քրդուհու հանդես գալը: Երեսնական թվականներին Հայաստանի Լուսժողկոմը մի շարք որոշումներ է կայացրել քրդուհիների մեջ անգրագիտությունը վերացնելու համար: Քրդուհիների կյանքում նշանակալից իրադարձություն էր 1931 թվականի նոյեմբերին Երևանում բացված ազգային փոքրամասնությունների աշխատավոր կանանց առաջին համագումարը, որտեղ գործնական որոշումներ ընդունվեցին մի շարք հարցերի, այդ թվում՝ քուրդ կանանց մեջ մեծածավալ լուսավորչական աշխատանք տանելու մասին:[109]

Այս համագումարներից հետո առավել հետևողականորեն սկսեցին իրագործվել կանանց հարցերին, նրանց ուսմանն առնչվող նախաձեռնությունները. հաճախակի դասընթացներ էին կազմակերպվում, քրդական մանկավարժական տեխնիկումի տնօրինությունը տեղերում լայն գործունեություն էր ծավալում, որպեսզի ավելի շատ քրդուհիներ ընդգրկվեն ինչպես կազմակերպվող, այնպես էլ տեխնիկումի դասընթացներում: Այս առիթով «Ռյա թազա» թերթի 1933 թվականի մարտի 31-ի հայտարարություններից մեկում նշված է. «Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատը 1933 թվականի մարտի 10-ից Երևանում կազմակերպել է քուրդ կանանց դասընթացներ, որոնց մեջ պետք է ընդգրկվեն այն 60 քուրդ կանայք, որոնք որոշ չափով տառաճանաչ են»:[110]

Հայաստանում բարձրագույն կրթություն ստացած առաջին քրդուհի Նուրե Պոլատովան հայուհի մտավորականների հետ հաճախ էին մեկնում քրդական գյուղեր, քուրդ կանանց համար կարդում դասախոսություններ, լուսավորական լայն գործունեություն ծավալում:

Այս և այլ գործնական քայլերի շնորհիվ Հայաստանի քրդական գյուղերի դպրոցներում աճեց աղջիկների թիվը և հասավ 30 տոկոսի: Այսպես, օրինակ, 1933 թվականին Ապարանի շրջանի Ջարջարիս գյուղի յոթամյա

դպրոցի 127 աշակերտների 35 տոկոսը քրդուհիներ էին, նույն շրջանի Փոքր Ջամշոլի գյուղի 50 աշակերտներից 20-ն էին քրդուհիներ:[111]

1937 թվականին Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեն որոշում ընդունեց քրդուհիներին բժշկական կրթություն տալու և քրդական բոլոր գյուղերում բուժկետեր բացելու վերաբերյալ: Այս որոշումից հետո ինչպես Ապարանի, այնպես էլ Թալինի շրջանի քրդական գյուղերում հիմնվեցին բուժկետեր, որտեղ հիմնականում քրդուհիներ էին աշխատում:[112]

Հայաստանի պետական կառույցներում նույնպես քրդուհիներ ընդգրկվեցին: 1938 թվականին Ալագյազի շրջանի Ջարշարիս գյուղի առաջավոր կովկիթի քրդուհի Սպոյա Նադոն ընտրվեց Հայաստանի Գերագույն խորհրդի դեպուտատ, որից հետո բոլոր ընտրությունների ժամանակ Գերագույն խորհրդում քրդուհիներ էին ընդգրկվում: Իսկ Սիսե Ջնդոյանը ընտրվեց Ծաղկահովտի կոմունիստական կուսակցության շրջանային կոմիտեի քարտուղար: Այս հանգամանքը շրջադարձային պահ էր քուրդ ժողովրդի պատմության մեջ: Հետագայում նաև կուսակցական ու խորհրդային մարմիններում քրդուհիներ ընդգրկվեցին: Նրանց մի մասը պարգևատրվեց կառավարական շքանշաններով և մեդալներով: Իսկ 60-ական թվականներին Երևանում ստեղծվեց «Քուրդ կանանց խորհուրդը», որը գործնական ծավալուն աշխատանք տարավ հանրապետության քրդուհիների շրջանում:

Հայաստանում բնակվող քուրդ ժողովրդի այս փոքր հատվածի տնտեսական ու մշակութային կյանքի վերելքը բազմիցս գրավել է ինչպես սփյուռքի հայ և քուրդ, այնպես էլ օտարերկրյա քաղաքական ու հասարակական գործիչների ուշադրությունը: Բարձր է գնահատվել Հայաստանի կառավարության, հայ մտավորականության դերը քուրդ ժողովրդի տնտեսական ու մշակութային կյանքում:

Չեխոսլովակիայում հրատարակվող «Rude pravo»-ն իր 1983 թվականի 154-րդ համարի մի էջը նվիրել է Հայաստանի քուրդ ազգաբնակչության մշակույթի առաջընթացին: Թերթը, անդրադառնալով այդ հարցին, գրում է. «Հայաստանը դարձել է քուրդ ժողովրդի մշակույթի զարգացման կենտրոն, բոլոր հնարավոր պայմանները ստեղծված են քրդերի տնտեսական ու մշակութային կյանքի առաջընթացի համար»:

Քուրդ ժողովրդի մշակույթի առաջընթացի մասին, նույնիսկ Թուրքիայի Հանրապետության Երևանի հյուպատոս Իսալիլ Բեյը դեռևս 1932 թվականի հունվարի 25-ին Երևանում տեղի ունեցած մշակույթի բնագավառի քուրդ աշխատավորների առաջին կոնֆերանսում այսպես է արտահայտվել. «Հարգելի հանդիսականներ, հարգելով Լուսժողկոմատի ինձ հղած հրավերը և ներկա գտնվելով հարևան և բարեկամ Հայաստանի Խորհրդային Հանրապետության լուսավորության և կուլտուրայի ֆրոնտում կատարած աշխատանքների կենդանի ապացույցը հանդիսացող Երևանի քրդական մանկավարժական տեխնիկումի և «Ռյա թազա» թերթի տարեդարձներին, շնորհավորում եմ քուրդ ազգային փոքրամասնությանը լուսավորության ասպարեզում իր ձեռք բերած այս երջանիկ օրվա առթիվ»:[113]

Հայ անվանի գրող, գրականագետ Արշակ Չոպանյանը, ինչպես նշեցինք, Փարիզում հրատարակվող իր «Անահիտ» ամսագրում հաճախակի է անդրադարձել քուրդ ժողովրդի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքին: Նա քանիցս եղել է խորհրդային Հայաստանում և բարձր գնահատել հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, Հայաստանում քուրդ ժողովրդի մի փոքր հատվածի մշակութային վերածնունդը: Այդ կապակցությամբ դեռևս 30-ական թվականներին նա գրում է. «Քուրդերը առաջին անգամ Հայաստանի մեջ է, որ՝ խրախուսանքով ու օգնությամբ Հայաստանի կառավարության և մտավոր ղեկավարներուն կը սկսին իրենց լեզվով ու լատին այբուբենով գրավոր մատենագրություն մը ստեղծել, արտադրել գրական գործեր, իրենց լեզուին ու պատմության վրայ գիտական ուսումնասիրություններ կատարել»:[114]

Մեկ այլ՝ «Մեր նշանաբանն է հառաջ» հայ առաջադիմական թերթն իր «Հայկական մշակույթը քրդերի համար հանդիսացավ հիմնական կամուրջը» խորագրով հոդվածում իրավացիորեն ցույց է տալիս հայ մշակույթի ու գրականության ակնհայտ դրական ներգործությունը քուրդ ժողովրդի մշակույթի ու գրականության վրա, որը այսօր Հայաստանում չտեսնված քայլերով առաջ է ընթանում:[115] Լիբանանում հրատարակող հայկական առաջադիմական «Արարատ» թերթը նույնպես, անդրադառնալով «Հայաստանի քրդերի մշակութային կյանքին, գրում է, որ բոլոր հնարավորությունները ստեղծված են Հայաստանի քրդերի տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման համար:[116]

Քրդական մշակույթի և գրականության մասին մտորումների շրջանակներում Նյու Յորքում հրատարվող սփյուռքահայության առաջադիմական «Լրաբեր» թերթը գրում է. «Խորհրդային Հայաստանում հիմքը դրվեց քրդական գրականության, հաստատվեցին դպրոցներ և մշակութային այլ հիմնարկություններ՝ սինեմա, ակումբ, թատրոն: Կազմվեցավ քուրդ մտավորականություն՝ ուսուցիչներ, դերասաններ, գրողներ, գիտնականներ, նկարիչներ ... Քրդական արվեստը և գեղեցիկ գրականությունը անխափան կը զարգանան Հայաստանի մեջ»:[117]

Արտասահմանում հրատարակվող մի շարք քրդական թերթեր ու ամսագրեր նույնպես երախտագիտությամբ են խոսում Հայաստանի քրդական մշակույթի առաջընթացի մասին, իրենց էջերում տպագրում Հայաստանի քուրդ գրողների ու մշակութային ներկայացուցիչների ստեղծագործությունները՝ բանաստեղծություններ, ակնարկներ, պատմվածքներ և այլ ժանրի գործեր:

Սիրիայում և Լիբանանում հրատարակվող «Հավար» (Hawar, 1932), «Ռոժա նոհ» (Roja nou, 1943), «Ստեր» (Stere, 1943), «Ռոնայի» (Ronahi 1941), Իրաքում հրատարակվող «Դանգե գիտի թազա» (Denge Geiti taza, 1943), «Գելավեժ» (Galanesh, 1939) պարբերականները բարձր են գնահատում հայ-քրդական մշակութային կապերը, Հայաստանը համարում են քրդական մշակույթի կենտրոն, ընդգծում, որ այստեղ բոլոր հնարավոր պայ-

մանները ստեղծված են քրդական մշակույթի զարգացման համար:

Դեռևս 1944 թվականին Բաղդադում հրատարակվող «Գելավեժ» քրդական ամսագիրը տպագրել է Իրաքի քուրդ նշանավոր գրող, գիտնական Հուզնի Մուկրանի «Ռուսաստանի քրդերը» հոդվածը, որտեղ հեղինակը հիմնականում անդրադարձել է Հայաստանի քրդերի մշակութային կյանքին: Նա գրում է. «Խորհրդային երկիրը խաղաղ կյանք բացեց քրդերի համար ... Հայաստանում նրանց համար ուսումնական ձեռնարկություններ բացեց: Քրդերեն լեզվով լույս ընծայվեցին թերթեր և ամսագրեր: Այժմ բոլոր հնարավորություններն են ստեղծված նրանց մասնագիտության, գիտության ու արվեստի զարգացման համար: Այս հանրապետությունում ամեն տարի հրատարակվում են քրդերեն լեզվով գրքեր: Քրդերը իրենց հայ եղբայրների հետ միասին գործում են հանուն գիտության ու մշակույթի առաջընթացի, հանուն իրենց երկրի ծաղկման»:[118]

Հայաստանում քրդական մշակույթին է անդրադարձել նաև Իրաքում հրատարակվող «Kurwan» ամսագիրը՝ իր 1983 թվականի 8-րդ համարում բարձր գնահատելով Հայաստանի քրդերի մշակույթի առաջընթացը:

Հետադարձ հայացք գցելով մեր կողմից ուսումնասիրվող հարցերին, առանց տարակուսելու ևս մեկ անգամ պետք է փաստել, որ ոչ մի ժողովուրդ այնքան չերմեռանդորեն չի նվիրվել քուրդ ժողովրդի մշակութային կյանքի զարգացման գործին, ինչպես հայ ժողովուրդը և, առաջին հերթին, հայ առաջադեմ մտավորականությունը: Բնականաբար, այդ հարցում իր որոշիչ և ներգործուն դերն է ունեցել նաև Հայաստանի կառավարությունը: Այս շնորհակալ գործունեության արդյունքում քրդական մշակույթի գանձարանը հարստացավ նոր արժեքներով:

Ամենակարևորն այն է, որ քուրդ ժողովրդի ողջ պատմության մեջ առաջին անգամ նրա հանդեպ դրսևորվեց պետական մոտեցում: Հայաստանի կառավարությունն իր հարյուրավոր որոշումներով նպաստեց քրդական մշակույթի նորանոր բարձունքների նվաճմանը, հայ մտավորականության հետ ձեռք ձեռքի գիտական հողի վրա դրվեցին և լուծում ստացան բազմաթիվ հարցեր, կործանումից փրկվեցին քուրդ ժողովրդի մշակույթի աննման գոհարների պատառիկները:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՔՐԴԱԿԱՆ ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920-1990ԹԹ.)

Ա. ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ՈՐՊԵՍ ՔՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

Անդրադառնալով գրականության և ընդհանրապես մշակույթի նշանակությանը ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում, Իսահակյանը գրում է. «Բացի քաղաքական ու տնտեսական ֆակտորներից, որոնք միացնում են ժողովուրդներին, գոյություն ունի նաև մի անխուսափելի ֆակտոր. դա արվեստն է ընդհանրապես և գրականությունը մասնավորապես»:[1]

Հարկ է սլարզորոշ նշել, որ գրական մշակույթի կապերի և փոխազդեցությունների բնականոն գործընթացն ուղեկցվել է քրդական գրականության վրա առավելապես հայկական բազմաժանր գրականության մեծ ազդեցությամբ: Անհերքելի փաստ է, որ Հայաստանում քուրդ ընթերցողն առաջին անգամ հայերենի միջոցով է ծանոթացել ոչ միայն հայկական, այլև ռուսական և համաշխարհային գրականությանը: Այսպիսով հիմք դրվեց նաև քրդական ժամանակակից գրականության զարգացմանը:

Հայ և քուրդ շատ գրականագետների, պատմաբանների ու գրողների կարծիքով Հայաստանում քրդական նոր գրականությունը սկիզբնավորվել է 1930 թվականին, երբ ասպարեզ իջան քուրդ գրողներ Արաբ Շամիլովը, Հաջիե Ջնդին, Ամինե Ավդալը, Ջասիմե Ջալիլը, Վազիրե Նադրին, Ջարդոե Գենջոն, Ղաչաղե Մրադը և մյուսները: Պատահական չէ, որ հայ նշանավոր գրող Նաիրի Զարյանը քուրդ գրողների այդ խմբին համարել է «քրդական գրականության առաջին ճնծաղիկներ - ճնծաղիկներ, որոնք նոր-նոր սկսում են իրենց գլխիկները բարձրացնել դարավոր գրաղրկության և հետամնացության թանձր սառույցի տակից»:[2]

Պատմական իրողությունն այն է, որ քրդական գրականությունը հիմնականում սկսեց զարգանալ հենց այդ ժամանակաշրջանում, սակայն մեր ուսումնասիրությունների շնորհիվ հայտնաբերված բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ հայ մտավորականության անմիջական նախաձեռնությամբ ու աջակցությամբ քրդական նոր գրականության հիմքերը դրվել են դեռևս 1921 թվականից, հենց այն ժամանակ, երբ Հայաստանում կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և կառավարությունը, բնակա-

նաբար, նաև հայ մտավորականները առաջնային կարևորության խնդիր դարձրին քրդական մշակույթի զարգացման անհրաժեշտությունը: Անդրադառնալով այդ գործում հայ մտավորականության դերին ու գործունեությանը, առաջնեկների թվում իրավամբ պետք է նշել Լազոյին (Հակոբ Ղազարյան): Իհարկե, աշխատության մեջ քննարկվող հարցերի շրջանակներում արդեն խոսվել է 19-րդ դարում Լազոյի ծավալած մշակութային ընդգրկուն գործունեության մասին, սակայն այդ թռուցիկ անդրադարձը դեռևս բավարար չէ քրդական գրականությանն առնչվող կարևորագույն հարցերի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար: Լազոն լիարժեք տիրապետելով քրդերենին և իր ձեռքի տակ ունենալով քրդերի մասին բազմաթիվ ուսումնասիրություններ, արձագանքեց քրդական մշակույթի զարգացմանը սատար լինելու՝ Խորհրդային Հայաստանի կառավարության կոչին և 1920 թվականին տեղափոխվեց Հայաստան: Նա Հայաստանի Կենտգործկոմին և Լուսժողկոմատին անմիջապես իր պատրաստակամությունը հայտնեց՝ օգնելու քրդական մշակույթին և խնդրեց գործածության մեջ դնել իր կազմած հայատառ քրդերեն այբբենարանը:

Նա միաժամանակ առաջ քաշեց քրդական գյուղերում դպրոցներ բացելու և այդ այբբենարանով դասավանդելու խնդիրը: Հայաստանի Լուսժողկոմատին ուղղված իր նամակներից մեկում նա գրում է, որ տասնյակ տարիներ եղել է Վանի, Բիթլիսի, Մոքսի քրդերի մեջ, գիտի նրանց լեզուն, ուսումնասիրել է նրանց կենցաղը, մի շարք աշխատություններ հրատարակել նրանց կյանքի մասին (այդ աշխատություններին համապատասխան բաժնում արդեն անդրադարձել ենք - Կ. Ջ.), կազմել է երկու դասագիրք, որոնք էլ ներկայացնում էր Լուսժողկոմատին:[3] Լուսժողկոմը, հաշվի առնելով այդ ամենը, հանձնարարում է Էջմիածնի ժողկրթբաժնի վարիչ Սերիկ Դավթյանին հանգամանորեն անդրադառնալ այդ հարցին: Վերջինս էլ անմիջապես գործնական քայլեր է ձեռնարկում: Պետք է նշել, որ Ս. Դավթյանը հայ այն մտավորականներից էր, որոնք ջանք չէին խնայում քրդական մշակույթի զարգացման համար: Իր հուշերում նա պատմում է, որ բազմիցս եղել է Էջմիածնի շրջանի քրդական գյուղերում, Լազոյի հետ բարձրացել քրդական յայլաները, հաշվառման ենթարկել դպրոցից դուրս մնացած երեխաներին, այնուհետև առաջ քաշել քրդական դպրոցներ բացելու հարցը: Հետագայում, նշանակվելով Երևան քաղաքի ժողկրթբաժնի վարիչ, նա էլ ավելի է ամրապնդում իր կապերը քուրդ մտավորականների հետ: Սերիկ Դավթյանը նաև Անդրկովկասյան մանկավարժական տեխնիկումի հիմնադիրներից էր: Քուրդ մտավորականության հետ հանդիպումներից մեկի ժամանակ նա ջերմությամբ նշել է. «Ես ունեմ շատ քուրդ բարեկամներ, ինչպիսիք են Արաբ Շամիլովը, Հաջիե Ջնդին, Ամինե Ավդալը, Վազիրե Նադրին, իսկ բոլորից շատ ես մոտ ու հարազատ էի Նուրե Պոլատովային, որն այն ժամանակ բարձրագույն կրթություն ստացած միակ քրդուհին էր: Նրա հետ մենք մի շարք անգամներ եղել ենք քրդուհիների մոտ, նրանց համար կարդացել դասախոսություն. ինձ դուր էր գալիս քրդուհու ազատ ու լայնախոհ մտածելա-

կերպը, ես հիացած էի նրանց գեղեցկությամբ, նրանց ազգային շորերով»: Սերիկ Դավթյանը ցանկացած առիթի դեպքում հարգալից ու ջերմությամբ էր արտահայտվում քուրդ ժողովրդի և քրդական մշակույթի մասին: 1972 թ. մայիսի 18-ին Հայաստանի հեղափոխության թանգարանում հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության երեկոյի ժամանակ նա անդրադարձավ 20-30-ական թթ. Հայաստանում բարգավաճող քրդական մշակութային և հայ-քրդական բարեկամական կապերին. «Ես շատ ազգեր եմ սիրում, բայց, ինչպես ասում են, ամեն մի մայր ամեն ուի իր սիրած զավակը, այնպես էլ ես եմ քրդերի և հատկապես քրդուհիների նկատմամբ»:[4] Սերիկ Դավթյանի անմիջական ջանքերով 1921թ. հոկտեմբեր ամսին Էջմիածնում լույս է տեսնում Լազոյի «Շամս» խորագրով այբբենարանը, որը կազմված էր հայերեն տառերով և հարմարեցված էր քրդերենի հնչյունաբանությանը:[5]

Անդրադառնալով քրդական մշակույթում Լազոյի ներդրմանը, պետք է նշել, որ հատկապես քրդական ժողովրդական բանահյուսության նմուշների հավաքման գործում անուրանալի է նրա ավանդը: Նա այդ նպատակով քսանական թվականներին եղել է ոչ միայն Հայաստանի քրդական գյուղերում, այլև շրջել է Անդրկովկասի քրդերի մեջ, ինչպես ինքն է նշում «Եղել եմ էթնոգրաֆիական էքսպեդիցիայի վարիչ, գործուղվել եմ Թելավի, Մծխեթի, Բաթումի՝ ժողվելու քուրդ-եզդիական դյուցազներգություններ, առակներ և այլն»:[6]

Լազոյի «Շամս» այբբենարանը ոչ միայն առաջին հայատառ դասագիրքն էր Խորհրդային Հայաստանում, այլև քրդական մանկական գեղարվեստական գրականության, հատկապես պոեզիայի հիմնաքարը. չէ՞ որ այդ այբբենարանում են տեղ գտել ազգությամբ հայ մտավորականի հայատառ քրդերենով առաջին ինքնուրույն բանաստեղծությունները: Այո, նա բախտ լայն իմաստով մեծատաղանդ մտավորական էր, քանզի պատմական այդ ծանր պայմաններում քրդերեն լեզվով այբբենարան պատրաստել և հրատարակել կարող էր միայն լայնախոհ, իմաստնությամբ օժտված անհատը: Հեղինակը իր գրքի առաջաբանում միանգամայն իրավացիորեն նշում է. «Այն, ինչ անցած դարի 60-ական թվականներին զբաղեցրել է կուլտուրական աշխարհը՝ հորինել քրդերեն այբբենարան, այսօր իրականանում է Հայաստանի կառավարության միջոցով միայն: Հայաստանի Լուսժողկոմատը, հանձնարարելով ինձ այս գործը, կանգ չի առել ոչ մի դժվարության առաջ, միայն թե շուտափույթ իրականանա այն, ինչ տասնյակ տարիների ընթացքում բանակոխվների նյութ է ծառայել և մնացել լոկ խոսք: Մի քանի տարիներ ի վեր զբաղված լինելով քրդերեն լեզվի, պատմության և ազգագրության ուսումնասիրություններով, այնուամենայնիվ, դասագիրքը հորինելու ընթացքում մեր առաջ ծառացան մի շարք դժվարին հարցեր, որոնք լուծելու համար պետք է ունենալ գիտական-լեզվաբանական ավելի լուրջ պատրաստություն, քան մեր համեստ ուժերն էին: Բայց գործի սերը և տասնյակ տարիների աշխատանքը թելադրեցին մեզ անել այս հանդուգն քայլը»:[7]

Լազոն հաղթահարեց բոլոր տեսակի դժվարությունները, գործի դրեց իր

հարուստ գիտելիքներն ու մանակավարժական փորձը և քուրդ մանուկներին պարգևեց իրոք վերնագրին համապատասխան մի արև՝ «Շամս» դասագիրքը, որը կարելի է համարել գրական մի փոքրիկ հանրագիտարան: Հեղինակը, լավատեղյակ լինելով քուրդ ժողովրդի հարուստ բանահյուսությանն ու ազգագրությանը, կարողացել է քրդերեն անպաճույճ լեզվով մանուկների համար հորինել այնպիսի գողտրիկ ոտանավորներ, որոնք ասես արտացոլում են քուրդ մանկան ներաշխարհը և չափազանց հոգեհարազատ են նրան: Նա նաև գրել է գեղեցիկ պատմվածքներ, որոնցում արտահայտված են ժամանակի շունչն ու ոգին և ուրեմն, անկասկած, դրական ներգործություն են ունեցել քուրդ երեխաների դաստիարակման և աշխարհայացքի ձևավորման գործում: Անվարան կարելի է ասել, որ խորհրդային իշխանության օրոք հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ Լազոյի ստեղծագործությունները նպաստեցին քրդական գեղարվեստական գրականության կայացմանն ու զարգացմանը:

Գրքում տպագրված Լազոյի մի շարք բանաստեղծություններն ու գողտրիկ ակնարկները մեծ սիրով են ընդունվել ոչ միայն փոքրիկների, այլև ընդհանրապես քուրդ ընթերցողների կողմից: Նրա «Խրդըրե աշիր» («Աշիր խրդըրը«), «Մաշղ» («Մաղշ»), «Շրվանո» («Հովիվ») բանաստեղծությունները գրված են բանաստեղծական մեծ կուլտուրայով և գեղարվեստական բարձր մակարդակով, ունեն տվյալ ժամանակի իրադարձություններին համապատասխանող բովանդակություն:[8]

Լազոն հետագայում հեղինակել և տպագրության է պատրաստել նաև մի շարք այլ գործեր: «Շամս» գրքի վերջում նա հավաստել է, որ պատրաստ են հրատարակության «Սոր ըստերք, քթեբա սավա մազընա» («Կարմիր աստղ՝ գիրք մեծերի համար»), «Ղավլե եզդիան» («Եզդիական զավեր»), «Խաբար նամա ժր կուրմանջի բը արմանիա» («Բառարան քրդերենից հայերեն») աշխատությունները, սակայն մեզ անհայտ պատճառներով դրանք չեն տպագրվել: Ավելացնենք, որ այդ ձեռագրերի մի մասը, որոնցում կան արժեքավոր նյութեր, այժմ պահպանվում է հանրապետության Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում:

Հայ և քուրդ ընթերցողների բարձր գնահատականին են արժանացել քսանական թվականներին գրված Լազոյի «Ջասմ ու թոսուն» և «Քուրդ Ջասիմի պատմությունը» պատմվածքները: Վերջինը 1923թ. հայերեն հրատարակվել է Թիֆլիսում, իսկ հետագայում, Հ. Ջնդու և Ա. Ավդալի թարգմանությամբ, լույս է տեսել նաև քրդերեն:[9] Հեղինակն իր պատմվածքում անդրադարձել է անցյալում քուրդ ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր վիճակին: Քուրդ Ջասիմն իր փրկությունը գտնում է Խորհրդային Հայաստանում, ուր չկային աղաներ, բեգեր, հալածանքներ և ֆիզիկական բնաջնջում:[10]

Լազոյի երկու փոքրիկ ստեղծագործությունները և «Շամս» դասագիրքը Հայաստանում իրավամբ եղան քրդական գեղարվեստական և դպրոցական գրականության հիմնաքարերը, որոնցից հետո կարծես նոր ճանապարհ բացվեց քրդական դպրության զարգացման համար: Եվ պատահական չէր,

որ այդ թվականներին հայ մտավորականների անմիջական աջակցությամբ հանդես եկան ու աճեցին քուրդ երիտասարդ մտավորականներ, որոնք անձնվիրաբար ծառայեցին քրդական մշակույթի զարգացմանը, աստիճանաբար հրապարակ իջան քուրդ գրողներ ու բանաստեղծներ, որոնք Լազոյին իրավամբ համարում էին «ապո»՝ քրդական մշակույթի «հայր»:

1920-ական թվականներին քրդական գրականության զարգացման համար խոշոր նշանակություն ունեցավ Արաբ Շամիլովի և Մարագուլովի կողմից պատրաստված «Ինքնուսույց քրդերեն լեզվի» դասագիրքը, որը հրատարակվեց 1929 թ.:[11] Հեղինակները կարողացել են մանկավարժական հմտությամբ, մատչելի մատուցել քրդերենի ուսուցման ձևերն ու մեթոդները: Դասագիրքն արժեքավոր է նաև այնտեղ զետեղված մի շարք նոր պատմվածքներով ու բանաստեղծություններով: Ծանոթ լինելով երկու հեղինակների ոճին, կարծում ենք, որ պատմվածքների մեծ մասը գրել է Արաբ Շամիլովը, իսկ բանաստեղծությունները՝ Լազոն ու Մարագուլովը: Ճիշտ է, Արաբ Շամիլովն իր գրական առաջին քայլերն անելիս դիմել է պոեզիային, սակայն այս գրքում տպագրված բանաստեղծությունները հաստատապես չեն պատկանում նրա գրչին, քանի որ ամենևին նրա ոճին չեն համապատասխանում:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ լատինատառ քրդերենով այս առաջին դասագիրքը, որի կազմման համար ուղենիշ են հանդիսացել հայկական դասագրքերը, ունի երեք լեզուներով՝ ռուսերեն, հայերեն և քրդերեն գրված առաջաբան: Առաջաբանում հեղինակները երախտագիտությամբ նշում են. «Ընդառաջելով քրդերի հոգևոր պահանջներին, Հայաստանի Լուսժողկոմատը մի շարք միջոցներ է մշակել քրդերի կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար... Այսպիսով, այս ձեռնարկը հնարավորություն կտա առաջիկա մանկավարժական դասընթացների համար ունենալ մայրենի լեզվից գրագետ քրդերի որոշ կադրեր, որոնք դասընթացներում սիստեմատիկ պատրաստություն կստանան, որպես ռահվիրա-գործիչներ, քրդական նոր այբուբենը տարածելու և քրդական դպրոցներում մայրենի լեզու մտցնելու համար»:[12]

Ջափազանցված չէր հեղինակների հավակնությունը, քանզի դասագիրքը, իրոք, ոչ միայն մեծ նշանակություն ունեցավ քրդական նոր մտավորականությանը քրդերենի ուսուցմանը ծանոթացնելու և քրդական դպրոցներ հիմնելու գործընթացը խթանելու տեսակետից, այլև մեծապես նպաստեց նորաստեղծ քրդական ինքնուրույն գրականության զարգացմանը: Գիրքը լայն տարածում էր գտել քրդական գյուղերում: Այն գործնականում ծառայում էր որպես մատչելի ձեռնարկ, ինչպես մանուկների, այնպես էլ մեծահասակների համար:

1929 թ. ազգությամբ ասորի Մարագուլովն ու քրդական գրականության և լեզվի լավագույն գիտակ Ռ. Դրամփյանը հրատարակում են քրդերեն մեկ այլ դասագիրք՝ «Լույս» (քրդերեն լեզվի երկրորդ տարի) խորագրով:[13] Եթե առաջին գիրքը հրատարակվեց 1000 տպաքանակով, ապա երկրորդը՝

3000 տպաքանակով, ինչը վկայում է գրքի մեծ պահանջարկի մասին:

Գիրքը կազմված է հայկական այբբենարանի օրինակով լատինատառ և ուսուցման մեթոդիկայով, սակայն, տարբերվում է իր թեմատիկ առումով. այն հարմարեցված է քուրդ ժողովրդի վերափոխված կյանքին, նույնիսկ պատկերազարդումներն ազգային բնույթ ունեն: Բացի հեղինակային պատմվածքներից, ոտանավորներից, այստեղ զետեղված են նաև հայ գրողներից թարգմանություններ, օգտագործված են քրդական ժողովրդական բանահյուսության լավագույն, դաստիարակչական նշանակություն ունեցող նմուշները: Դասագրքում հեղինակներն առաջին անգամ օգտագործել են նաև քուրդ ստեղծագործողների բանաստեղծությունները, օրինակ, Միրազու «Ալագյազ» և «Գառնարած» խորագրով քերթվածքները:

Ինչպես արդեն նշել ենք, տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի Լուսժողկոմատը հատուկ ուշադրություն էր դարձնում քրդական գյուղերում մեծահասակների մեջ անգրագիտությունը վերացնելու գործին և այդ նպատակով բացվել էին լիկկայաններ: Հասկանալի է, որ կար նոր դասագրքի պահանջ, որը կհամապատասխաներ մեծահասակների ուսուցման ծրագրին: Այդ դժվարին ու պատասխանատու գործը կրկին ստանձնեցին Ռուբեն Դրամփյանը և Իսահակ Մարագուլովը, որոնք կարճ ժամանակամիջոցում կազմեցին պահանջվող դասագիրքը: Այն հավանություն գտնելով Լուսժողկոմատին կից ազգային փոքրամասնությունների խորհրդի կողմից, 1930 թ. «Կարմիր Ռանչպար» խորագրով քրդերեն հրատարակվեց Երևանում, 3500 տպաքանակով:[14]

Այս գրքի միջոցով առաջին անգամ ծանոթանում ենք շնորհաշատ հայ մտավորական Ռ. Դրամփյանի գեղարվեստական առումով արժեքավոր ստեղծագործություններին: «Նոր գյուղը» բանաստեղծությունը գրված է պարզ ու հստակ քրդերեն լեզվով: Նրանում հեղինակը պատկերում է քրդական նոր գյուղը, նրա վերափոխված կյանքը Հայաստանում:[15]

Ինչպես նշեցինք, հեղինակներն այս գրքում արդեն ընդգրկել են նորնոր ասպարեզ իջնող քուրդ գրողների ստեղծագործությունները: Հետաքրքիր են Արաբ Շամիլովի «Կարմիր բանակը» և «Պիոներ» բանաստեղծությունները, «Ազգային քաղաքականությունը», «Հավատարիմ ընկերը» և «Պիոները գյուղում» ակնարկները, Հաջիե Ջնդու «Աշուն» բանաստեղծությունը և «Կերակուր» ակնարկը, Միրազովի «Ինչու՞ այդպես» բանաստեղծությունը:[16]

Ռուբեն Դրամփյանը միաժամանակ հեղինակ է բազմաթիվ պատմվածքների, որոնց հիմնական թեման քուրդ ժողովրդի դառն ու չարքաշ անցյալն ու Հայաստանում ներկա առաջընթացն է:[17] Հետաքրքրական է նաև նրա «Գոհարա Հաջո» ակնարկը, որտեղ հեղինակը ներկայացնում է Հայաստանում ուսուցչուհի դարձած քրդուհու վերափոխված կյանքը:[18]

Նուրին (Հովակիմ Մարգարյան) այն հայ մտավորականներից էր, որոնք Հայաստանում իրենց նվիրեցին քրդական մշակույթի ստեղծմանն ու զարգացմանը: Նա վերը նշված «Կարմիր ռանչպար» դասագրքի կազմմ

մանակցեց քրդերեն գրված իր ստեղծագործություններով: Հետաքրքրական է նրա «Նուրիի ձայնը» բանաստեղծությունը, որում իր ձայնը միացնում է ազատագրված քուրդ ժողովրդի ձայնին, նկարագրում է երկու եղբայրական ժողովուրդների ստեղծագործ աշխատանքը Հայաստանում:[19] Գրքում զետեղված է նաև նրա «Կոլեկտիվ» բանաստեղծությունը, որում ներկայացված է հայերի ու քրդերի համատեղ շինարարական աշխատանքը Հայաստանում և նրանց միասնական ձեռքբերումները մշակույթի զարգացման գործում:[20]

Հայ մտավորականի նախաձեռնությամբ և հայ գրողների մասնակցությամբ «Կարմիր ռանչպար» գրքի կազմումն ու հրատարակումը ևս մեկ անգամ վկայում են հայ մտավորականների արգասաբեր գործունեության և քրդական նորաստեղծ գրականությանը նրանց անշահախնդիր օգնության մասին: Պետք է նշել, որ այս գիրքը ևս քուրդ ստեղծագործողների առջև ուղի հարթելու հերթական քայլերից մեկն էր:

Քրդական մշակույթի, հատկապես գրականության զարգացման վառ վկայություններից էր նաև Ռ. Դրամփյանի «Դեպի նոր կյանք» խորագրով քրդերեն դասագիրքը,[21] որը լույս տեսավ 1931թ.: Սա մի գեղեցիկ ձեռնարկ էր մեծահասակների համար: Հեղինակը փորձել է առավել հանգամանալից, պարզ ու հստակ քրդերեն կուրմանջի բարբառով, փոքրիկ ոտանավորներով, քրդական բառուբանով երեխաներին և մեծահասակներին ծանոթացնել քրդերենին, քրդական գիր ու գրականությանը: Առաջինից մինչև իննսունչորսերորդ էջերում զետեղված են գիրքը կազմողի ստեղծագործությունները: Ինչպես իր մյուս գրքերում, այնպես էլ այս դասագրքում Ռ. Դրամփյանը իր գեղարվեստական գրչով բազմաթիվ էջեր է նվիրել Հայաստանում բնակվող քուրդ ժողովրդի տվյալ ժամանակահատվածի կյանքին, նրա վերածնված մշակույթին: Այս գրքի ստեղծմանը ևս ակտիվ մասնակցություն է ունեցել Նուրին (Հովակիմ Մարգարյանը), որի քրդերեն պատմվածքներն ու ոտանավորները էլ ավելի բովանդակալից են դարձրել այն:

Գրքում հանդիպում ենք քրդական մշակույթի զարգացմանն առաջին իսկ օրից անձնուրացորեն նվիրված մեկ այլ հայ մտավորականի՝ Վարդան Պետոյանի ստեղծագործություններին: Քրդերենին կատարելապես տիրապետող անվանի մանկավարժը, որը, ինչպես արդեն նշել էինք, երկար ժամանակ դասախոսել էր Անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումում, զբաղեցրել տնօրենի պաշտոնը, մի շարք հոդվածներով ու ստեղծագործություններով, որոնք հիմնականում տպագրվել են «Ռյա թազա» թերթում, զգալի մասնակցություն է ունեցել քրդական մշակույթի ու գրականության զարգացման գործին:[22] Վ. Պետոյանը մեծապես աջակցել է նաև քրդագիտական համամիութենական կոնֆերանսի անցկացման աշխատանքներին, հանդես եկել զեկուցումով, առաջ քաշել կուրմանջի բարբառով գրված գեղարվեստական գրականության զարգացման հարցը:[23]

Քաջատեղյակ լինելով քրդական ժողովրդական բանահյուսությանն ու ազգագրությանը, նա հաճախակի է անդրադարձել այդ ոլորտների հարցե-

րին: 1977 թ. լույս տեսած նրա «Բասենի ազգագրությունը» աշխատությունը դրա վառ ապացույցն է: Այստեղ նա հանգամանորեն պատմում է Արևմտյան Հայաստանի Բասեն գավառի հայերի ու քրդերի ազգագրության և հայ-քրդական բարեկամական կապերի մասին:[24] Հմուտ մանկավարժը նաև հայերենից քրդերեն է թարգմանել դպրոցական մի շարք դասագրքեր:[25] Նա քրդական մշակույթի երախտավորներից մեկի՝ Գարեգին Հակոբյանի հետ կազմել է նաև հայ-քրդական բառարան, իսկ 1936 թվականին մասնակցել քրդերեն տերմինաբանական բառարանի կազմման աշխատանքներին:[26]

Անդրադառնալով Դրամփյանի գործունեությանը, պետք է նշենք, որ նրա ջանասիրության, քրդական գրականության նկատմամբ ունեցած սիրո և հոգատարության արդյունքը եղան մեկը մյուսի հետևից լույս տեսնող նրա կողմից կազմված և թարգմանված մասնագիտական դասագրքերը: 1932 թ. նրա անմիջական ջանքերով հրատարակվեց «Հարվածային կոլխոզնիկ» խորագրով քրդերենի հաջորդ դասագիրքը՝ երրորդ խմբի համար, որի խմբագիրներն էին մանկավարժ, գրող Հարությունն Մկրտչյանը և քուրդ գրող Ջաահմեն Ջալիլը: Հարկ է նշել, որ այս գիրքն առավել մշակված է, նկատելիորեն հղկված է լեզուն:[27]

Հայ մտավորականի ներդրումը քրդական մշակույթում այս գրքով առավել է մեծանում, այն իմաստով, որ նա աշակերտներին ծանոթացնում է քրդերենի քերականության որոշ հարցերի, ինչը նորություն էր քրդական դպրոցական կյանքում: Գրքում զետեղված քրդական գեղարվեստական գրականության լավագույն նմուշների հեղինակները, օգտագործելով քրդական ժողովրդական բանահյուսությունը, նոր շունչ են հաղորդել գրական ստեղծագործություններին: Այս դասագիրքը առավել բովանդակալից է նաև թեմաների բազմազանության առումով. ընդգրկված են շուրջ հարյուր գեղարվեստական, քաղաքական և մասնագիտական բովանդակությամբ տեքստեր: Նա թարգմանել է ինչպես հայ, այնպես էլ ռուս գրողների բազմաթիվ գործեր, իսկ Թումանյանի և Տոլստոյի ստեղծագործությունները նրա գրչով են մուտք գործել քրդական գրականություն:[28]

Անդրադառնալով Ռ. Դրամփյանի թարգմանական գործունեությանը, պետք նշել, որ նրան իրոք կարելի է համարել խորհրդային քրդական թարգմանական գրականության հիմնադիրը: Նրա գրչին են պատկանում քրդերեն մի շարք թարգմանությունները, որոնց մենք կանդրադառնանք թարգմանական բաժնում:[29]

Լինելով «Ռյա թազա» թերթի թարգմանիչը, հրատարակման առաջին իսկ օրից սկսեցին լույս տեսնել Ռ. Դրամփյանի պատմվածքները, բանաստեղծությունները, քրդական գրականության ու լեզվին վերաբերող գիտամանկավարժական հոդվածները:[30] Նա իր յուրաքանչյուր հոդվածը, նույնիսկ գեղարվեստական ստեղծագործությունը գրում էր պարզ գրական կուրմանջի բարբառով, այդպիսով օրինակ ծառայելով մյուսներին: Այս կապակցությամբ բնութագրական է նրա «Քրդերեն լեզվի մասին» հոդվածը,[31] որում ոչ

միայն բանավիճում էր լեզվաբանների հետ, այլև ընթերցողների առջև հարց էր բարձրացնում իրենց կարծիքը հայտնել քրդերեն գրական լեզվի մասին, այն հոդվածների մասին, որոնք տպագրվել են «Ռյա թազա» թերթում: Նա իրավացիորեն գտնում էր, որ ժամանակն է ստեղծելու քրդերեն մաքուր գրական լեզու, հրաժարվել գավառական և ցեղային բարբառներից, դպրոցներում դասավանդումը տանել քրդերեն գրական լեզվով: «Իմ կարծիքով այստեղ առաջին հարցերից մեկը, - գրում էր նա,- դա գրական լեզվի մաքրազարդումն է. դրանով մենք կկարողանանք այժմյան մեր խնդիրները պարզ ու հստակ լեզվով հասցնել քուրդ դպրոցականին, աշխատավոր քրդին: Իսկ դրա հիմնական միջոցը քուրդ ժողովրդի բազմահարուստ բանահյուսության օգտագործումն է»:[32] Իր «Քրդերեն լեզվի մասին» հոդվածում նա մանրակրկիտ անդրադառնում էր նաև քրդերենի ուղղագրությանը, որը նոր երևույթ էր քրդական մշակութային կյանքում: «Հատկապես մատաղ սերնդի ուսուցման համար, - գրում էր նա, - հարկավոր է ստեղծել մեկ ընդհանուր ուղղագրություն և այդ ընդհանուր ուղղագրությամբ պետք է մենք գրենք և՛ մեր հոդվածները, և՛ մեր դասագրքերը»:[33] Հետաքրքրական է նաև նրա մեկ այլ «Քրդերեն լեզվի կառուցման հարցը»[34] խորագրով հոդվածը, որում անդրադառնում է լեզվաշինության հարցերին և ինչպես հայ, այնպես էլ քուրդ մտավորականներին կոչ անում լծվել այդ պատվաբեր գործին:

Ինչպես Ռ. Դրամփյանի կազմած դասագրքերը, այնպես էլ «Ռյա թազա» թերթի էջերում հրապարակված թե՛ հեղինակային և թե՛ թարգմանական գործերը գեղարվեստական մեծ արժեք են ներկայացնում: Նրա «Մայիսի մեկը», «15-ամյակին», «Մեր հայրենիքը» և այլ փոխադրություններ թարգմանական իրենց բարձր մակարդակով հայտնություններ էին քրդական գրականության մեջ:[35] 1934 թ. Դրամփյանի ստեղծագործություններն արդեն տպագրվում են «Քուրդ գրողների երկրորդ ստեղծագործությունը» ժողովածուում և լայն ճանաչում բերում իրենց հեղինակին:[36]

Քրդերենի լավագույն տիրապետման մասին են վկայում նաև նրա մտահղացմամբ ստեղծված, ներմուծված և լեզուն նորովի հարստացրած բազմաթիվ տերմինները: Հայ մեծանուն երախտավոր Դրամփյանն իր գիտելիքներն ու ստեղծագործական շնորհը մնայուն ձևով նվիրեց քուրդ ժողովրդին ու նրա մշակույթին, հատկապես քրդերի մեջ լուսավորություն տարածելու գործին, նոր էջ բացեց քրդական մշակույթի պատմության մեջ և ուղի հարթեց երկու ժողովուրդների մշակութային և գրական կապերի ամրապնդման առջև:

Ինչպես նշեցինք, հայ քրդագետ մանկավարժ Նուրին (Հովակիմ Մարգարյան) հիշարժան ու շնորհակալ գործունեություն է ծավալել քրդական մշակութային կյանքում, հատկապես գրականության ասպարեզում: Դեռ 20-ական թթ. նա մասնակցել է Թիֆլիսում բացված քրդական ակումբի աշխատանքներին, դասավանդել քրդական դպրոցում և, ինչպես ինքն է խոստովանել, ջերմ հարաբերությունների մեջ է եղել գրողներ Լազոյի, Ամինե Ավ-

դալի և Ահմադև Միրազու հետ: Նրանք համատեղ ջանքերով նոր թափ են հաղորդել Թիֆլիսում սկիզբ առած քրդական մշակութային կյանքին:

Հովակիմ Մարգարյանը հիրավի համարվում է քուրդ բանաստեղծ: Նա իր առաջին ստեղծագործությունները գրել է քրդերեն պարզ, անպաճույճ լեզվով: Դրանք, ինչպես արդեն նշել ենք, տպագրվել են դասագրքերում: Քրդերենի գերազանց իմացությունը, ինչպես ինքն է պատմում իր հուշերում, պայմանավորված էր այն հանգամանքով, որ նա մեծացել էր Մոքսի գավառում, քրդերի միջավայրում, դաստիարակվել քրդական ոգով, քանի որ իր տոհմը սիրված ու հարգված է եղել քրդերի կողմից: Քաջատեղյակ լինելով քրդական ժողովրդական բանահյուսությանը և հետագայում ստանալով հայկական կրթություն, նա փորձել է գրել նաև հայատառ քրդերեն լեզվով, ինչը նրան լիովին հաջողվել է: Նա իր բանաստեղծություններն ընթերցել և հավանության ու քաջալերանքի է արժանացել քրդերի շրջանում: Ավելի ուշ նա փորձել է դրանք տպագրել Թիֆլիսի հայկական մամուլում, բայց դա նրան չի հաջողվել, և նրա խոհերը իրականացել են միայն Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո:

Երևանում «Ռյա թազայի» հրատարակման առաջին իսկ օրվանից նա ընդգրկվում է թերթին, դառնում դրա հիմնական ու ակտիվ աշխատակիցը: Մեկը մյուսի հետևից լույս են տեսնում քրդերեն լեզվով գրված նրա բանաստեղծությունները: Նրա առաջին «Նոր Քուրդիստան» քերթվածքը լույս է տեսել 1930 թ.[37] և ջերմ ընդունելության գտել «Ռյա թազայի» ընթերցողների կողմից: Այս գողտրիկ ստեղծագործությունում հեղինակը երազում է ազատ ու անկախ Քուրդիստանի մասին, այն համարում իր երկրորդ հայրենիքը, ըստ որում, նա հավատում է, որ Քուրդիստանը ևս ձեռք կբերի այնպիսի ազատություն, ինչպիսին ունի Հայաստանը:

Թերթի երրորդ համարում հրատարակվել է նրա երկրորդ բանաստեղծությունը՝ «Կարմիր հոկտեմբեր» խորագրով: Այս բանաստեղծության մեջ նա երգում է քուրդ ժողովրդի մի հատվածի ազատությունը Հայաստանում: Քնարական ջերմ զեղումներով են գրված ազատագրված քրդուհուն նվիրված «Նարե», «Սոսե», «Արշալույս» և մի քանի այլ բանաստեղծություններ:[38]

Նա, ինչպես Հայաստանի, այնպես էր խորհրդային Վրաստանի քրդերի շրջանում բազմիցս հանդես է եկել քուրդ ժողովրդի մշակութային վերափոխված կյանքին նվիրված զեկուցումներով ու զրույցներով: Նա փորձել է պարզաբանել քրդական ուղղագրության հետ կապված մի շարք հարցեր և «Ռյա թազա» թերթում հանդես եկել մի շարք հոդվածներով. այս տեսակետից առավել արժեքավոր է նրա «Գլխատառերի ուղղագրությունը քրդերենում» հոդվածը:[39]

Քրդական մանկավարժական տեխնիկումում դասավանդելով աշխարհագրություն և բնագիտություն, Հ. Մարգարյանը միևնույն ժամանակ թարգմանել է «Աշխարհագրություն. գիրք առաջին աստիճանի դպրոցների 3-րդ և 4-րդ խմբերի համար», «Բնագիտություն 2 խմբերի համար» դասագրքերը:[40] Մարգարյանի ստեղծագործությունները հրատարակվել են նաև

«Խորհրդային քուրդ գրողների» ժողովածուում:[41] 1934 թվականին քրդերեն հրատարակվում է նրա պատմվածքների «Լուսաբաց» ժողովածուն:

Մերօրյա քրդական գրականության մեջ նոր երևույթ էր հատկապես Հովակիմ Մարգարյանի «Քրդական մշակույթը» հոդվածը, որը նվիրված էր քրդական դասական գրականությանը: Հեղինակն անդրադառնում է քուրդ ժողովրդի ինչպես 11-րդ դարի, այնպես էլ հետագա ժամանակաշրջանների դասական գրականությանը:[42]

Հետագայում նա էլ ավելի է խորանում քրդական գրականության մեջ: Հիսնական թվականներին գրված նրա մի շարք բանաստեղծություններ համարվում են քրդական գրականության լավագույն նմուշներից: Այսպես, օրինակ, «Քոչվոր աղջիկը» բանաստեղծության մեջ նա անդրադարձել է քրդուհու դառն անցյալին և երանելի ներկային, նկարագրում է, թե ինչպես է նա Հայաստանում գրագիտություն ձեռք բերում, այնուհետև կրթությունը շարունակում Լենինգրադում, ավարտելուց հետո կրկին վերադառնում Հայաստան և իրեն նվիրում մատաղ սերնդի դաստիարակմանը:[43] Իսկ «Հրազդանին» նվիրված բանաստեղծությունում Ալիի և Արմենի կերպարների միջոցով Նուրին ներկայացնում է հայ և քուրդ ժողովուրդների դարավոր բարեկամությունը, որը նոր բովանդակություն է ստացել Հայաստանում:[44]

1962 թ. քրդերեն լեզվով Երևանում լույս տեսավ Նուրիի «Սեր և աշխատանք» բանաստեղծությունների ժողովածուն:[45] Այստեղ առանցքային թեման հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունն է, նրանց համատեղ պայքարն օտարերկրացիների դեմ, ինչն առավել ցայտուն դրսևորված է «Մոքսի իշխանը» պոեմում: Ինչպես այդ գեղեցիկ պոեմը, այնպես էլ հայ մտավորականության գրչով դասագրքերում գրված ստեղծագործությունները թարմ շունչ հաղորդեցին նորաստեղծ քրդական գրականությանը, հարստացրեցին այն գեղարվեստական նոր նրբերանգներով: Եվ ամենաէականն այն է, որ նման ծավալուն գործունեության մատնանշումն անշուշտ մեր ուսումնասիրությունում առաջ քաշված կարևորագույն բացահայտումներից մեկն է, որով հաստատվում է քսանական թվականներին հայ լայնախոհ մտավորականության կողմից խորհրդային քրդական գրականության հիմնադրման փաստը:

Բ. ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

Քրդական դպրոցների բացումը, «Ռյա թազա» թերթի հրատարակումը, Երևանի քրդական Անդրկովկասյան մանկավարժական տեխնիկումի գործունեությունը, լույս տեսնող քրդական դասագրքերի, գեղարվեստական և մասնագիտական գրքերի հետզհետե ընդլայնվող ցանկն անհրաժեշտ էին դարձնում քրդերենի քերականական կանոնների ճշգրտումն ու ուղղագրության ստեղծումը: Գիտական հողի վրա դրվեց մշակութային կարևորագույն

ճյուղերից մեկի՝ քրդական բանահյուսության ուսումնասիրման և գրական լեզվի ձևավորման գործում նրա դերի որոշման խնդիրը: Եթե 20-ական թվականներին հրատապ էր քրդերենի այբբենարան կազմելու հարցը, և պահանջարկը բավարարվում էր մի քանի դպրոցական գրքերի հրատարակմամբ, որոնք նաև կարելի էր գեղարվեստական համարել, ապա տվյալ պահին, այս երկրորդ հանգրվանում հրատապ էր դարձել քերականական նմանությունների մշակումը, հղկված քրդերենով գրականության մատուցումը: Այս գործին, որի նախաձեռնողներից մեկն էր պրոֆեսոր Ա. Խաչատրյանը, կրկին լծվեցին հայ մտավորականության գիտակ ներկայացուցիչները:

Ա. Խաչատրյանը դեռևս 19-րդ դարի վերջերին լիովին նվիրվել էր քրդական մշակույթի զարգացման գործին: Ինչպես Թիֆլիսում, այնպես էլ Երևանում նա հանդիպումներ էր ունեցել քուրդ մտավորականների հետ, հայտնել քրդերենի հարցերով զբաղվելու իր ցանկությունը: Սակայն նրա նպատակներն իրականության դարձան միայն Խորհրդային Հայաստանում:

1931թ. Հայաստանի Լուսժողկոմատը Ա. Խաչատրյանին հանձնարարեց կազմել քրդերեն լեզվի քերականության ձեռնարկ: Նա եռանդով լծվեց այդ դժվարին, բայց պատվաբեր գործին, և գիրքը հրատարակվեց 1932 թ.:[46]

Այդ ձեռնարկում հեղինակն ընդգրկել է եվրոպական գիտնականների գրքերից իր իսկ կողմից փոխառված բազմաթիվ քրդական տեքստեր, քրդական ժողովրդական բանահյուսության լավագույն նմուշներ, այսպիսով առաջնորդվել դարձնելով քրդական տերմինների և քերականական կանոնների ընկալումը: Աշխատությունը լայն արձագանք գտավ քուրդ հասարակության շրջանում և քրդական մշակույթի նորասեղծ օջախներում: Թե՛ քրդական անդրկովկասյան մանկավարժական տեխնիկումում, թե՛ հանրապետության և թե՛ դրսի դպրոցներում: Քերականության այդ ձեռնարկը լայն կիրառություն գտավ և դրանով քրդերենի քերականական կանոնների ստեղծման հիմքը դրվեց, ուղի հարթվեց գրական քրդերենի համար:

Ինչպես արդեն նշել ենք, պրոֆեսոր Ա. Խաչատրյանը 30-ական թվականներին մշտապես հանդես էր գալիս քրդական մշակույթի այս կամ այն հարցի վերաբերյալ զեկուցումներով, հոդվածներով, օգնում և ուղղորդություն տալիս քրդական նորաստեղծ մշակույթի ներկայացուցիչներին: Ինչպես «Ռյա թազա», այնպես էլ մյուս թերթերում և ամսագրերում հաճախ էին տպագրվում քրդերեն լեզվի ու գրականության վերաբերյալ նրա գիտական լույրջ հոդվածները: Նա առաջադրում էր քրդերեն մաքուր գրական լեզվի անհրաժեշտության հարցը, ասում, որ ժամանակն է վերջ տալու բարբառային լեզվով գրականության տարածմանը, որը և տվեց իր շոշափելի արդյունքները:

Այդ տեսակետից առավել հետաքրքիր էր նրա «Քրդական բարբառները և քրդերեն նոր գրական լեզվի ստեղծումը» հոդվածը:[47] Լավ գիտենալով քրդերենի բարբառները, հեղինակը դեռևս 30-ական թվականներին առանձին-առանձին քննարկելով դրանք, ի վերջո, իրավացիորեն հանգում է այն

եզրակացության, որ քրդերեն գրական լեզվի համար որպես հիմք ամենաընդունելին կուրմանջի բարբառն է: Նա քրդագիտության վերաբերյալ ցանկացած հարց մանրազնին գիտական վերլուծության էր ենթարկում: 1934 թ. իր հոդվածներից մեկում գրել է. «Ես ղեկավարում եմ կուլտուրայի պատմության ինստիտուտի քրդագիտական մասը: Իմ երկրորդ աշխատանքը քրդագիտական գործն է»:[48] Եվ, իրոք, պրոֆեսորը բացի հայ ժողովրդի գրականության և պատմության հարցերից անմնացորդ նվիրումով զբաղվում էր նաև քրդական մշակույթի ուսումնասիրությամբ: Քրդական բանահյուսությանը նվիրված իր աշխատանքների մասին նա հաստատել է. «Արդեն պատրաստել եմ հրատարակության համար քրդական ժողովրդական բանահյուսության հավաքածու: Քրդական լեզուն բավականին հարուստ է իր բարբառներով: Քրդական լեզվի հարուստ լինելը ապացուցվում է նաև քրդական գրականության այն նմուշներով, որոնք հասել են մեզ՝ օրինակ 12-րդ դարից քուրդ հեղինակ Շեյխ Ահմադ Մալայե Ջզրիի «Դիվանները» երկերը: Այս երկերը գրված են արաբական տառերով, մենք վերածել ենք լատինականի: 16-րդ դարից մնացել է Ահմեդ Խանի «Մամ ու Ջին» գործը նույնպես արաբական տառերով գրված, որն էլի վերածել ենք լատինականի: Կան և ուրիշ հեղինակների երկեր, որոնք մենք հավաքել ենք, այդ ստեղծագործությունները նույնպես զերծ չեն գեղարվեստական արժեքներից: Իմ ասիստենտ Հաջիե Ջնդիի հետ արդեն երեք ամիս է ինչ ավարտել ենք քրդական լեզվի քերականության գիրքը: Հավաքելով քուրդ ժողովրդի բերանից ֆոլկլորը, մենք կարող ենք հիմնվել «կուրմանջիի» բարբառախոսների վրա, և տալ քուրդ ժողովրդին կուլտուրական այնպիսի լեզու, որը հասկանալի լինի բոլոր տեղերում բնակվող քրդերին»:[49] Շուտով պահանջ զգացվեց կազմելու ավելի գործնական մի քերականություն, և ահա 1935 թ. Երևանում հրատարակվեց պրոֆ. Ա. Խաչատրյանի և երիտասարդ գիտնական Հաջիե Ջնդու «Քրդերեն լեզվի քերականությունը միջնակարգ դպրոցների համար»:[50] Իրավամբ հայ մեծանուն մտավորականի ներդրումը քրդական գրական մշակութային կյանքում նորահայտություն էր:

Այդ նույն թվականին նաև լույս տեսավ հայ մտավորականության անխոնջ ներկայացուցիչներից մեկի՝ Սահակ Մովսիսյանի «Քրդերեն լեզվի քերականությունը տարրական դպրոցների համար»[51] (կոնսուլտանտ՝ ակադեմիկոս Ա. Ղարիբյան, խմբագիրներ՝ Ա. Ավդալ և Ջ. Ջալիլ): Ս. Մովսիսյանի քերականությունը հիմնականում վերաբերում էր ուղղագրությանը, կազմված էր քրդերեն ուղղագրական նոր կանոնների համաձայն: Հեղինակը ներկայացնում է պարզ և մատչելի քրդերեն տեքստեր և բացատրում դրանց ուղղագրությունը: Քերականության այս ձեռնարկը լայն կիրառություն գտավ քրդական դպրոցներում, իր հերթին խթանեց քրդերենի զարգացումը:

Քուրդ ժողովրդի մշակույթը բարձր գնահատող մտավորականներից էր Սահակ Մովսիսյանը, որը հիմնականում զբաղվում էր քրդական ժողովրդական բանահյուսության նմուշների հավաքմամբ ու մշակմամբ: Դեռևս 1896

թվականին Թիֆլիսում հրատարակվող «Նոր Դար» թերթում Մովսիսյանը Նար-Դոսի օգնությամբ տպագրել է քրդական ժողովրդական բանահյուսությունից «Լայլե և Մեջնունի» մի նոր տարբերակ:[52] Նա գրի է առել «Մամ ու Զինե», «Զամբիլֆրոշ» , «Ավդալե Զայնկե» երգերը, թարգմանել «Դրմդրմ» պատմավեպը և քրդական ժողովրդական մի քանի այլ ստեղծագործություններ: Իսկ 1916 թվականին «Համբարձաբերում» տպագրվում է նրա «Տուրուբերանի քրդերը» արժեքավոր հոդվածը: Նա առաջիններից էր, որ ուշադրություն հրավիրեց այդ նահանգի քրդերի սոցիալ-տնտեսական վիճակին և մշակույթին վերաբերող մի շարք հարցերի վրա:

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ջատագովներից էր նաև հայ տաղանդավոր գրող Հրաչյա Քոչարը, որին հոգեհարազատ էին քուրդ ժողովուրդն ու նրա մշակույթը: Նա մեկն էր նրանցից, որոնք սերտորեն կապված էին քուրդ ժողովրդի մշակույթին: Նա մշտապես աջակցում էր Հայաստանում ստեղծված քրդական մշակույթի ու գրականության բարգավաճմանը: Տիրապետելով քրդերենին, նա մշտապես մասնակցում էր քուրդ ժողովրդի մշակութային կյանքին վերաբերող բոլոր իրադարձություններին, ուրախանում քուրդ ժողովրդի հաջողություններով: 1934 թ. օգոստոսի 9-ից (36-րդ համարից) նա խմբագրել է «Ռյա թազա» թերթը, հանդես եկել քրդերեն հոդվածներով ու թարգմանություններով: Անվանի գրողը միաժամանակ խմբագրել է քրդական մի շարք գեղարվեստական ու դպրոցական գրքեր: Քաջածանոթ լինելով քրդական բազմահարուստ բանահյուսությանը, նա մշակել և իր ստեղծագործություններում օգտագործել է դրա նմուշները: Գրել է բազմաթիվ գործեր Հայաստանում ապրող քրդերի կյանքի մասին: Իր «Խաջե» պատմվածքում (1931), որը 1935 թվականին Հաջիե Ջնդին թարգմանել է քրդերեն ու հրատարակել առանձին գրքով, Հ. Քոչարը պատկերել է քուրդ ժողովրդի մի հատվածի, մասնավորապես՝ քրդուհու վերափոխված կյանքը: Այդ մասին նա գրել է. «Այո՛, մենք՝ հայերս ու քրդերս, միասին եկել ենք դարերի խորքից: Եվ դառն անցյալի փորձից սթափված, զգաստացած ու իմաստուն կզնանք դեպի գալիք դարերի խորքերը, դեպի ապագայի գեղեցիկ խորքերը, հայ և քուրդ ժողովուրդները գալիս են հազարամյակների խորքից, միևնույն բնության զավակներն են, նույն լեռների ու դաշտերի բնակիչները: Քայլել ենք համերաշխ երթով, բաժանելով միևնույն ճակատագրի դառնությունը, կուրծք դեմ տալով միևնույն դաժան հողմերին... »:[53]

Մեծատաղանդ գրողի մանկությունն անցել է Ալաշկերտի նահանգի Ղումլի Բուճախ գյուղում, որտեղ, ինչպես ինքն է պատմում, մեկ ընտանիքի նման էին ապրում հայերը և քրդերը, մասնակից լինում միմյանց ուրախությանն ու տխրությանը: Գրողի հայրը հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ջերմ ջատագովներից էր: Այդ մասին քուրդ գրող Ահմադե Միրազին իր հուշերում նշել է. «Երբ թշնամին իրենց Թութակ գյուղը շրջապատեց և ցանկանում էր արյան մեջ խեղդել այդ գյուղի բնակիչներին, գյուղի հարգված մեծերից մեկը (Հրաչյա Քոչարի հայրը - Կ. Ջ.), որին քրդերը սիրուց

ասում էին Քոչո, մի խումբ հայերի հետ եկավ թութակցիներին օգնելու: Թշնամին փախավ, բարեկամությունն ու եղբայրությունը հաղթանակեցին»:[54]

Հ. Քոչարն իր «Եփրատի կամուրջը» և «Կարոտ» վիպակներում «Հայաստանի քրդերը», «Բաղդադի ողբերգությունը», «Խաջեն» և մի շարք այլ պատմվածքներում ու հոդվածներում անդրադարձել է քուրդ ժողովրդի դառը անցյալին և Հայաստանում նրա վերածննդին:[55] Նա հոգատար վերաբերմունք ուներ քրդական գրականության նկատմամբ, ցանկանում էր, որ այն հարստանա նորանոր ստեղծագործություններով, ստեղծվեն մշակութային նոր օջախներ, համալրվեն ազգային մտավորականների շարքերը: Նրա գեղեցիկ ստեղծագործություններն իրենց խոր ազդեցությունն ունեցան քրդական գրականության վրա, մանավանդ որ քրդերին վերաբերող նրա բոլոր գործերը թարգմանվել են քրդերեն և մնայուն տեղ գրավել քրդալեզու գրականության լավագույն նմուշների շարքում:

Հիշատակության է արժանի 1957 թվականի Ամանորի առթիվ բախտակից քուրդ ժողովրդին ուղղված հայ անվանի գրողի ջերմ խոսքը, որով նա արտահայտում էր ողջ հայ ժողովրդի սրտից բխող մաղթանքը. «Ամեն անգամ, երբ գրիչս վերցնում եմ ձեռքս, որպեսզի քուրդ ժողովրդի մասին մի խոսք գրեմ, ժապավենի նման իմ ողջ մանկությունն է անցնում աչքիս առջևով: Թեկուզ դա լինի մի ուրախություն կամ մի հարսանիք: Ես մտաբերում եմ, թե ինչպես մեր քուրդ ու հայ գյուղացիները ազգային շորերը հագին գյուղանդ են բռնել, պարում էին այն պարերը, որ նրանց պապերը, ով գիտե հազար, երկու հազար տարի առաջ Տավրոսի լեռներում, Սասունի ու Զիլանի ձորերում, Դիարբեքիրի կողմերում պարել են: Հայ և քուրդ ժողովուրդները դեռ վաղ ժամանակներից միևնույն բնության, միևնույն լեռների ու դաշտերի բնակիչներն են եղել, և այսպես ես գրիչ վերցրեցի և ակամայից հիշեցի իմ մանկությունը ... Այդ օրվանից անցել են 35-40 տարիներ, բայց այն, ինչ որ իմ աչքով եմ տեսել, ինձ համար անմոռանալի է և այդ մեր ընդհանուր սրտառուչ երգերի մեղեդիները իմ ականջից դուրս չեն գալիս...

Իմ հույզերս ինձ կրկին մի փոքր շեղեցին: Ես գրիչս վերցրել էի շնորհավորելու քուրդ եղբայր ժողովրդի նոր տարին, ես ի սրտե շնորհավորում եմ նրանց ... Այսօր նրանք ունեն իրենց գիրն ու գրականությունը, դպրոցները, դասագրքերը, «Ռյա թազա» թերթը: Սակայն սա քուրդ ժողովրդի մի փոքր հատվածի առաջադիմությունն է միայն: Քուրդ ժողովրդի հիմնական մասը դեռևս օտարերկրյա զավթիչների ձեռքի տակ է: Որպես մի հայ ես գիտակցում եմ, թե ինչքան դժվար է, երբ մարդը ազատ չէ ... »:[56]

Մեծ հումանիստ գրողը բազմիցս է անդրադարձել քրդական երգին ու երաժշտությանը, լեզվի հնչեղությանը, ապրել ու հուզվել է քրդական ժողովրդական բառուբանով: Նա հաճախակի է նստել քուրդ հովիվների մոտ, լսել նրանց երգը, բլուրի հոգեզմայլիչ մեղեդիները. «Ամեն ինչ խաղաղ ու հանգիստ է, բայց սիրահար հովիվների սրտերը տրոփում են անվրդով հանդարտությամբ:

Երեկո է, հաճելի երեկո է...
Բայց իմ սիրտը փոթորկված է...»:

Թարգմանությունը թուլացնում է ազգային խոսքի ուժը: Պետք է քրդերեն գիտենալ՝ զգալու համար այդ երկու տողի անհուն հմայքը: Ով է ասում, թե քրդերենը աշխարհի գեղեցիկ լեզուներից մեկը չէ: Ասողը կամ տգետ է, կամ այն գոռոզներից մեկը, որոնք չեն ճանաչում ու չեն հարգում քուրդ ժողովրդին»:[57]

Անդրադառնալով քրդական հարսանիքներին, նա գրում է. «Ինչքան կյանք ու ինչքան բանաստեղծություն կա քրդական հարսանիքներում: Դարեր շարունակ կողմնակի աչքից ծածկված էր քուրդ աղջկա ու քուրդ կնոջ գեղեցկությունը: Այդ հարսանիքներում նա բացվում է, շողում ինքնավառել հմայքով: Սակայն ազատ լինելով, քուրդ կինը չի շփոթվում, նա մնում է ավանդապահ, նա օրինակելի մայր է, իր ընտանիքի պատվին նախանձախնդիր, իր զավակների բախտով երջանիկ:*[58]

Այս տողերը ևս մեկ անգամ վկայում են քուրդ ժողովրդի, նրա մշակութային ժառանգության, երգ-երաժշտության հանդեպ մեծ գրողի տածած հարգանքի ու գնահատման մասին: Քոչարի գեղեցիկ գրչի միջոցով հայ ընթերցողը ծանոթացավ քրդական հարուստ բանահյուսությանը, կենցաղին, իսկ հայ քրդագիտությունը հարստացավ նորահայտ նյութերով: Պրոֆեսոր Հաջիե Ջնդին «Իմ եղբայր Քոչարը» խորագրով իր հոդվածում, անդրադառնալով հումանիստ գրողին, նշում է. «Հրաչյա Քոչարը, ինչպես հայ մեծ գրող Աբովյանը, քուրդ ժողովրդի ֆոլկլորիստն ու ֆիլոլոգն էր, նրա բազմահարուստ բանահյուսության մեծ գնահատողը, սիրել է նրա բեյթերը, պատմվածքները, նրա նազուկ երգերը, նրա խորհրդատ առակներն ու ասացվածքները... Մեծ է անվանի գրողի ներդրումը քրդական գրականության և մշակույթի առաջընթացի գործում»:*[59] *Քոչարի պես մտավորականի նվիրումը քրդական մշակութային կյանքին ևս մեկ անգամ հավաստում է քուրդ ժողովրդի, նրա գրականության, աննման բանահյուսության հանդեպ հայ մտավորականության ջերմ ու անշահախնդիր վերաբերմունքի մասին: Նա ոչ միայն գեղարվեստական պատկերներով է ներկայացրել քուրդ ժողովրդի կյանքը, այլև գիտական վերլուծության է ենթարկել քրդական գրականության առանձին դրվագներ, որն իր դրական ազդեցությունն է ունեցել ողջ քուրդ ժողովրդի մշակույթի վրա:*

Հայ մեծատաղանդ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի մարդասիրական, համամարդկային արվեստը, մեծ սիրտը, նուրբ ու գեղեցիկ գրիչը, հոգեհարազատ էին բոլոր ժողովուրդներին, ինչպես ռուսին, ուկրաինացուն, այնպես էլ վրացուն, քրդին, ուզբեկին, այլ ազգերի ու ժողովուրդների: Իսահակյանը ժողովուրդների փոխադարձ կապի մասին գրում է. «Բոլոր ազգերի մարդկության երջանկությունը միայն փոխադարձ կապի, դաշինքի մեջ է կայանում իրար հարգել, իրար օգնել աշխատանքով և խելքով»:[60]

Վարպետը մոտիկից ծանոթ լինելով քուրդ ժողովրդին, ինչպես արտասահմանում, այնպես էլ հարազատ հայրենիքում միշտ հետաքրքրվել է նրա

կյանքով ու մշակույթով: Նա հոգուց բխող ջերմ խոսքերով է գովերգել Հայաստանի քուրդ ժողովրդի նվաճումները, արտանց ուրախացել նրա յուրաքանչյուր ձեռքբերումով: Քաջածանոթ լինելով քրդական հարուստ բանահյուսությանը, բարձր է գնահատել այն, փորձել այն գեղեցիկ ձևով վերարտադրել իր մի շարք ստեղծագործություններում, ընթերցողին ցույց տալ քուրդ ժողովրդի անմիջական, պարզ հոգին: Եվ սա պատահական չէր. վարպետը մանուկ հասակից շփվել է քրդերի հետ, ծանոթացել նրանց չարքաշ կյանքին, կենցաղին: Այս կապակցությամբ պրոֆեսոր Հաջիե Ջնդին գրել է. «Նա սիրով էր նստում քրդերի կողքին, լսում նրանց երգն ու երաժշտությունը, նա քրդերի սիրելի հայրն էր»:*[61] *Իրավամբ, նա հիացել է այդ ժողովրդով, նրա բարքերի պարզությամբ ու անմիջականությամբ, նրա նուրբ և գեղեցիկ բանահյուսությամբ:*

Իսահակյանն իր «Քուրդ Ամոն», «Սիրահար Նադոն», «Հասան աղան», «Քուրդն ու ճնճղուկը» և այլ ստեղծագործություններում անդրադարձել է քուրդ ժողովրդի կյանքին, հայ-քրդական բարեկամական կապերին: Նա հուզմնալից տողերով է գրել իր «Սիրահար Նադոն» բալլադը, զգացել է քրդական ժողովրդական բառուբանի համնուհոտը և այն ամբողջովին պահպանել իր այս հրաշալի ստեղծագործությունում, որի մասին գրել է. «Դա իմ լավ ստեղծագործություններից մեկն է, Մարիետա Շահինյանին շատ է դուր եկել»:*[62] *1934 թ. հորինված և այնուհետև մշակված այս պոեմի մասին Հ. Քոչարը գրել է. «Ավետիք Իսահակյանը սիրով էր հիշատակում քուրդ ժողովրդի կյանքը, քրդերը և հայերը դարավոր հարևաններ են եղել, երկուսն էլ հալածվել են, միևնույն պայմաններում են եղել, այդ պատճառով էլ հայ գրողները սիրով են քուրդ ժողովրդի մասին գրել: Ավետիք Իսահակյանը հարյուրավոր բանաստեղծություններ, պոեմներ, հեքիաթներ, զրույցներ, պատմվածքներ ունի, այդ ամենի մեջ իր ուրույն տեղն ունի «Սիրահար Նադոն» պոեմը»:*[63]

Ա. Իսահակյանը և Հ. Քոչարը բազմիցս են զրուցել քուրդ ժողովրդի կյանքից. նրանց հետաքրքրել է քրդական մշակույթին առնչվող ցանկացած հարց: Վարպետին միշտ հետաքրքրել է այդ ժողովրդի բանահյուսությունը և պատահական չէ, որ Հ. Քոչարն իր ինքնագրով 1941 թ. փետրվարի 21-ին նրան է նվիրել 1936 թ. հրատարակված «Քրդական ֆոլկլորը», որը եղել է վարպետի գրասեղանի զարդը և մինչ օրս էլ նրա տուն-թանգարանում դրված է գրասեղանին: Իսահակյանն առանձնապես մեծ հետաքրքրություն է ունեցել քրդական առակների և ասացվածքների նկատմամբ: Նա դեռևս արտասահմանում եղած ժամանակ մշակում է քրդական առակներից մեկը և վերնագրում «Գյուղացին ու ճնճղուկը»,*[64] *իսկ հետագայում այն վերամշակելով, վերանվանում է «Քուրդն ու ճնճղուկը»: Այստեղ երևում է քուրդ գյուղացու պարզությունը, միամտությունը, անկեղծությունը: Իսահակյանը քրդական ժողովրդական բանահյուսության հիման վրա գրել է նաև իր «Լեյլին ու Մեջնունը» լեգենդը: Իր այս ստեղծագործությունում ամենայն նրբությամբ նա պահպանել է քրդական ժողովրդական բանահյուսության*

ոգին:

Վարպետն արտասահմանից հայրենիք վերադառնալուց հետո հետաքրքրվել է Հայաստանում բնակվող քուրդ ժողովրդի կյանքով, նրա մշակույթով: Այդ մասին Հ. Զնդին իր հուշերում արձանագրել է. «1937 թ. Հայաստանի գրողների միության վարչության նիստում ես հանդես եկա զեկուցումով «Խորհրդային քրդական գրականության զարգացման մասին»: Ավետիք Իսահակյանը մի քանի ամիս առաջ էր հայրենիք վերադարձել, իմ հարցի վերաբերյալ վարպետն էլ ելույթ ունեցավ և մեծ գնահատական տվեց քրդական գրականությանը, խոսեց նրա նշանակության մասին Հայաստանում: Նա հատկապես նշեց քրդական ժողովրդական բանահյուսության դերն ու նշանակությունը քրդական գրականության զարգացման ասպարեզում և ասաց. «Քրդական ժողովրդական բանահյուսությունը շատ հարուստ է, քուրդ գրողները պետք է ամենուր իրենց բանահյուսությունը օգտագործեն, իրենց նոր գրականությունը դրա հիման վրա ստեղծեն»: Այնուհետև նա նշեց, թե ինչպիսի մեծ նշանակություն ունի քրդական նորաստեղծ գրականությունը արտասահմանյան միլիոնավոր քրդերի համար: Այս առիթով վարպետը մի հետաքրքիր դեպք մեջբերեց, որը հուզմունք պատճառեց ներկաներիս. «Երբ ես Փարիզում էի, այլ գրքերի հետ մեկտեղ ստանում էի նաև քրդական դասագրքեր, որոնք Երևանում էին տպագրվում: Իմ ծանոթ քուրդ մտավորականներից մեկը, երբ այդ գիրքը տեսավ, դրեց կրծքին և կարոտից սկսեց լաց լինել, այնուհետև իր երախտագիտական խոսքը ուղղեց խորհրդային իշխանությանը, հայ ժողովրդին՝ քրդական գրքերի հրատարակման և դպրոցների բացման համար»:[65]

Վարպետը, լինելով Հայաստանի գրողների միության նախագահ, իր դռները բացել էր յուրաքանչյուր քուրդ ստեղծագործողի առջև, մեծ հարգանքով էր վերաբերվում քուրդ գրողներին, միշտ օգնում էր նրանց: Դրա վառ վկայությունն է քուրդ գրող Վազիրե Նադիրի և վարպետի ջերմ բարեկամությունը: Վարպետի հարսը՝ գրականագետ Բելլա Իսահակյանը, մեր հանդիպումներից մեկի ժամանակ ասաց. «Նա սիրում էր բոլոր քուրդ գրողներին, նրանք հաճախ էին լինում մեր տանը, վարպետը նստում էր նրանց կողքին, հետաքրքրվում նրանց գրականությամբ, իր բարի խորհուրդներով օգնում նրանց: Մեր ընտանիքին առավել մոտ հարաբերության մեջ էր Վազիրե Նադիրի ընտանիքը, տիկին Սոֆիկը և Վազիրի կինը, որին մենք ասում էինք Նուրե խանում, կարծես թե քույրեր լինեին: Ամռան ամիսներից մեկն էր, մենք հանգստանում էին Աևանի գրողների հանգստյան տանը: Եվ ահա մեկ օր Վազիրե Նադիրին եկավ և մեզ հրավիրեց բարձրանալու սար, քրդական յայլաները: Առավոտյան մենք շարժվեցինք Աղմաղանի սարը, որտեղ քրդական յայլաներն էին: Երբ քրդերը իմացան, որ Իսահակյանն է եկել, կարծես թե մի հարսանիք լիներ. մեզ հրավիրեցին վրանները, իսկույն ոչխար մորթեցին, և ես տեսա, թե ինչպիսի կարճ ժամանակամիջոցում պատրաստեցին չորան խորովածը, մեր սեղանը լցվեց այդ խորովածով, համեղ մածունով և սարի իսկական սեր ու մեղրով, իսկ վարպետին հետաքրքրում էր քրդական ժողովրդական երգն ու երաժշտությունը: Մոտ երեսուն տարեկան սև բեղերով մի մարդ շվի էր նվագում, վարպետի աչքերը լցված էին արցունքով, մի պահ նա մտաբերում էր իր մանկությունը, իր քուրդ ընկերներին, նրանց մելամաղձոտ ու մարտական երգերը: Մինչև երեկո մենք մնացինք այնտեղ, և վարպետը հիացած էր, նա մեծ հաճույքով էր միշտ հիշում այդ օրը, պատմում էր ընկերներին ու բարեկամներին» (Ասյն հուշերը 1983թ. հաղորդվել են քրդական ռադիոյով, և պահվում են ռադիոյի արխիվում - Կ. Ջ.):

Վարպետի հումանիզմը, նրա բարի ու անկեղծ վերաբերմունքը դեպի քուրդ ժողովուրդը, դեպի նրա մշակույթն ու առաջընթացը երևում է նաև այն նամակից, որ նա ուղարկել էր ուկրաինական տաղանդավոր գրող Պաբլո Տիչինային:[66]

Հայաստանի կուլտուրայի վաստակավոր գործիչ, Պետհրատի նախկին տնօրեն Խնկանոս Դանիելյանը վկայել է, որ Ա. Իսահակյանը և Դ. Դեմիրճյանը հաճախ էին հետաքրքրվում քրդական գրականության հրատարակման հարցերով ու նրանց միջնորդությամբ մի անգամ չէ, որ ավելացել են քուրդ գրողներին տրամադրվող մամուլները: Իսահակյանը Դանիելյանին մի առիթով ասել է. «Պետք է օգնել քրդերին, նրանք լավ ժողովուրդ են»:[67]

Քուրդ ժողովրդի և նրա մշակույթի նկատմամբ Իսահակյանի ջերմ ու հարգալից վերաբերմունքի մասին ևս մեկ անգամ վկայում է այն հարցազրույցը, որը տեղի է ունեցել Մոսկվայի «Մոսկվա» հյուրանոցում վարպետի և հայ անվանի բանահավաք ու գրականագետ Ա. Արշարունու միջև: Խոսելով արևելյան ժողովուրդների, նրանց գրականության ու բանահյուսության մասին, վարպետը հարցրել է.

«Դու մեր հարևան արևելյան ժողովուրդների լեզուն գիտե՞ս:

- Օրինակ ո՞րը, վարպետ:

- Մուսուլմանական աշխարհը քեզ ծանոթ է և մոտ է քո աշխատանքին, այդ ինձ հայտնի է: Ես նկատեցի, որ դու մասնակցել ես Ռուսթավելու հոբելյանին: Այն էլ ինձ հայտնի է, որ քո բարեկամությունը մեծ է նաև միջինասիական ժողովուրդների և լահուտցիների հետ, ծանոթ ես պարսկական մշակույթին: Միայն մի ժողովուրդ է մնում քրդերը:

- Դրանց մասին, վարպետ, ես այնքան գիտեմ, ինչքան գրականության էջերում է արտահայտված:

- Ափսոս ... մեկ կյանքն էլ քիչ է, որ նրանց ծովի չափ, նուրբ ու գեղեցիկ բանահյուսությունը խորապես ուսումնասիրես ... Ես և Հայաստանի քրդերը բարեկամներ ենք: Նրանք շատ բան են ինձ հաղորդում»:[68]

Մեկ այլ հանդիպման ժամանակ, որը տեղի է ունեցել նրա մահից մի քանի օր առաջ, երբ նա գամված է եղել անկողնուն, իմացել է, որ իրեն այցի է եկել «Ռյա թազա» թերթի պատասխանատու քարտուղար Շաքրո Խուդոն, նրան ներս է հրավիրել և ջերմ զրույց սկսել: Ինչպես իր հուշերում վկայել է այժմ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Շաքրո Մհոյանը, վարպետն իսկույն նրանից հարցրել է. «Ինչպե՞ս է Ձեր ժողովրդի կյանքը, ի՞նչ վիճակում է Ձեր

մշակույթը, Ձեր բանահյուսությունը, երաժշտությունը ... Ես խնդրում եմ, ասացեք, ո՞ր ժամերին են Ձեր քրդական ռադիոհաղորդումները. ես շատ եմ սիրում քրդական երգն ու երաժշտությունը»:[69]

Իսահակյանը, միշտ բարձր գնահատելով հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, անդրադարձել է նրանց միասնական պայքարին, փոխօգնությանը: Անդրադառնալով Մոքսի գավառի քուրդ Մուրթալա բեկին, նա ասել է. «Ես Մոքսի բնակիչներից տեղեկացել եմ, որ Մուրթալա բեկը սիրել է հայերին: Երբ սուլթանական Թուրքիան և երիտթուրքերը սկսեցին հայկական կոտորածը, Մուրթալա բեկը օգնեց հայերին, նրանց փրկեց կոտորածից, թույլ չտվեց իր գավառում կեղտոտ մարդկանց ձեռքը հային դիպչի: Նա իր մոտ է պահել Բիթլիսի ու Մուշի բազմաթիվ հայերի»:[70]

Արձանագրենք, որ քուրդ ժողովրդի ու նրա մշակույթի ամենամեծ գնահատականը Իսահակյանը տվել է այն շնորհավորական նամակում, որը 1955 թ. հունվարին ուղարկել է «Ռյա թազա» թերթին, նրա վերահրատարակության առթիվ:

«Մանուկ հասակից ես շատ քուրդ բարեկամներ եմ ունեցել և շատ եմ եղել նրանց մոտ և հյուրասիրվել թե Ալագյազի շրջանի և թե Շիրակի, Նախիջևանի, Տիկորի շրջաններում: Ես միշտ հետաքրքրվել եմ քրդերի վիճակով: Մեր գյուղի հովիվները՝ Մախսոն և Հջոն, Սուրմալուի, Դարալագյազի և Փալամուտի գյուղերից էին: Նրանք գարնան սկզբներից մինչև աշուն հովվում էին մեր գյուղի ոչխարների հոտերը, աշնանը գնում իրենց ձմեռանոցները, հաջորդ գարնանը նորից գալու համար: Մախսոն բլուր նվագող էր, Հջոն՝ երգող (դանգրեժ): Նրանք երգում էին իրենց ժողովրդի սրտահույզ երգերը: Ես սրտով լսում էի նրանց երգն ու նվագը, լսում էի նրանց քրդական հեքիաթներն ու էպիկական ստեղծագործությունները՝ քրդական ֆոլկլորը, որը սիրել եմ իմ մանկությունից մինչև մեր օրերը: Հոկտեմբերյան հեղափոխությունը քուրդ ժողովրդի համար զարթոնքի նոր ուղի բացեց, քրդերը ունեցան իրենց դպրոցները, իրենց նոր գրականությունը: Ինձ շատ ուրախացնում է քրդերի ամեն մի կուլտուրական և տնտեսական նվաճումը և առաջադիմությունը: Ես շատ կցանկանայի, որ քրդերն իրենց լեզվով կարդային ռուսական և ամբողջ աշխարհի գեղեցիկ գրականությունը: Ես մաղթում եմ իմ գրչակից քուրդ ընկերներին, որ նրանք լայնորեն օգտագործեն իրենց հարուստ ֆոլկլորը և նրա վրա հիմնեն իրենց նոր գրականությունը՝ առգրկված թե ազգային ձևով-կոլորիտով և թե համամարդկային սոցիալիստական բովանդակությամբ: «Ռյա թազայի» հրատարակման առթիվ մաղթում եմ Ձեզ տոկունություն և հաջողություն, մեր եղբայրական քուրդ ժողովրդին մաղթում եմ բարեկեցություն և բախտավորություն»:

Ջերմ բարևներով՝ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Վարպետի թողած բանաստեղծական ու քրդական ժողովրդական բանահյուսության մշակումը, գրական ողջ ժառանգությունը հոգեհարազատ է ամեն մի քուրդ գրողի, խթան է հանդիսացել ժամանակակից քրդական մշակույթի զարգացման համար: Նա իրավացիորեն բարձր է գնահատել քրդական մշակույթը, իր գործնական ներդրումներով ուղիներ հարթել այդ մշակույթի բարգավաճման համար: Մեծ վարպետի մահը ծանր վիշտ է պատճառել նաև մշակույթի քուրդ գործիչներին: Քուրդ բանաստեղծները միշտ էլ ջերմությամբ են ընդունել վարպետին, իրենց սրտի խոսքն ուղղել նրան: Ջաշիմե Ջալիլը «Մաղիկներ Ալագյազից», Ֆերիկե Ուսուբը «Ավետիք Իսահակյանին», Կարլենե Ջաչանին «Ավետիք Իսահակյանին», Սահիդե Իբոն «Ավետիք Իսահակյանին» բանաստեղծություններում իրենց երախտագիտական խոսքն են հղել նրան:[71]

Իսկ որքա՜ն հոդվածներ ու ջերմ խոսքեր են գրվել նրա մասին: Նրա ստեղծագործությունների թարգմանությունները հարստացրել ու նոր շունչ են հաղորդել քրդական գրականությանը: Այդ ամենին դեռևս կանդրադառնանք:

Քրդական գրականության ջատագովներից է եղել նաև հանճարեղ Եղիշե Չարենցը: Ծնվելով և մեծանալով Կարսում, նա իր մորից՝ Թեկղեմից բազում անգամներ է լսել պարսկական ու քրդական բանահյուսության լավագույն նմուշները, որոնք այս կամ այն չափով օգտագործել է իր ստեղծագործություններում: Լինելով մեծ հումանիստ-ինտերնացիոնալիստ, նա միշտ էլ հոգ է տարել Հայաստանի քրդական մշակույթի առաջընթացի մասին: Հետաքրքրական է, որ 1930 թ., երբ նախատեսվում էր իր և անվանի գրող Ակսել Բակունցի խմբագրմամբ հրատարակել հայկական մշակույթին նվիրված մի ժողովածու, նա չի մոռացել նաև բարեկամ քուրդ ժողովրդի այն փոքր հատվածի մշակույթի մասին, որը հիմնվել է Հայաստանում: Չարենցի անմիջական նախաձեռնությամբ գրող Հաջիե Ջնդուն հանձնարարվել է գրել քրդական մշակույթի մասին հոդված, որը 1932 թ. տպագրվել է «Հոկտեմբեր, նոյեմբեր» գրքում:

Այս հոդվածի կապակցությամբ Չարենցն իր մոտ է հրավիրում այն ժամանակ դեռևս Երևանի պետական համալսարանի ուսանող Հաջիե Ջնդուն: Բարեկամական ջերմ զրույցից հետո մեծանուն բանաստեղծը դիմում է Հաջուն. «Այո, գրի ... որպեսզի աշխարհն իմանա ազատագրված քուրդ ժողովրդի ծաղկող մշակույթի մասին, այն քրդերի մշակույթի մասին, որոնք Հայաստանում ինչպես եղբայրներ մեր ժողովրդի հետ նոր կյանք են կերտում»:[72]

Չարենցն ամեն պատեհ առիթով օգնել է քրդական գրականությանը. այդ կապակցությամբ գրող Ջասիմե Ջալիլը «Չարենցի օգնությամբ» հոդվածում վկայել է, որ 1935 թ., երբ ինքը Պետհրատում քրդական գրականության խմբագիրն էր, գեղարվեստական գրականության բաժինը ղեկավարող Չարենցը միշտ ուրախացել է քրդական գրականության առաջընթացով, ամեն կերպ օգնել, որպեսզի քուրդ գրողների երկերը ժամանակին տպագր-

վեն: Նրա անմիջական աջակցությամբ է հրատարակվել Հ. Ջնդու և Ա. Ավդալի կազմած «Քրդական բանահյուսություն»: Այդ առիթով Չարենցը Պետհրատի այն ժամանակվա դիրեկտոր Էդուարդ Զոփուրյանին դիմել է հետևյալ խնդրանքով. «Իմ բաժնից տասը մամուլ լրացուցիչ տալիս եմ քրդական բաժնին»:[73] Մի այլ առիթով Ջասիմն Ջալիլի հետ զրուցելիս, Չարենցն ասել է, որ Ղարսում եղած ժամանակ ինքը շատ է լսել քրդական ժողովրդական երգեր և դրանք իրեն դուր են եկել:[74]

Մեծանուն բանաստեղծի անմիջական օգնությամբ է գրող Արաբ Շամիլովը կատարել իր գրական նախաքայլերը և սկսել զբաղվել քրդական գրականության հարցերով: Այս կապակցությամբ Շամիլովը վկայել է. «Իմ գրական հետաքրքրությունների ձևավորման գործում մեծ ազդեցություն է ունեցել հայ հանճարեղ բանաստեղծ Եղիշե Չարենցը: Նրա անմիջական օգնությամբ սկսեցին մեկը մյուսի ետևից լույս տեսնել իմ գեղարվեստական ստեղծագործությունները»:[75] Նրա յուրաքանչյուր ստեղծագործություն ջերմորեն է ընդունվել քուրդ ընթերցողի և մտավորականության կողմից: Դրանք իրենց բարերար ազդեցությունն են թողել քրդական գրականության վրա: Իսկ Չարենցի ստեղծագործությունների թարգմանությունները, որոնց կանդրադառնանք, զարդարել են քրդական գրականությունը, այն հարստացրել չարենցյան ոգով:

Քուրդ մտավորականության և քրդական գրականության հանդեպ մեծագույն հոգատարություն է դրսևորել և իր մեծ ավանդը ներդրել հայ գրականության դասականներից Դերենիկ Դեմիրճյանը: Նա միշտ բարձր է գնահատել ոչ միայն քրդական մշակույթը, այլև հայ և քուրդ ժողովուրդների դարավոր բարեկամությունը: Նա գրել է. «Հայերս ու քրդերս եղբայր ժողովուրդներ ենք: Մենք միասին ենք ապրել ոչ միայն հարյուր, երկու հարյուր տարի, ապրել ենք հազարավոր տարիներ: Ճիշտ է, հայերիս ու քրդերիս մեջ տեղը թշնամին է եղել նատած, որ դառնացրել է մեր երկուսի կյանքը, բայց հայ և քուրդ ժողովուրդների սրտի մեջ թշնամություն չի եղել: Մեր մեջ ամեն մի վատ բան թշնամու ձեռքով է եղել, իսկ բարեկամությունը և եղբայրությունը՝ մեր երկուսի ձեռքով: Կա հայ-քրդական երաժշտություն, հայ-քրդական ֆոլկլոր, հայ-քրդական կենցաղ: Այսօրվա օրը քուրդ ժողովուրդը հայ պետության մեջ հարազատի նման է ապրում: Քուրդը հայերեն է խոսում, հայ համալսարան է գնում ոչ թե ճնշման հետևանքով, այլ բոլորովին բնական, ինքնակամ կերպով: Մենք՝ հայերս, ուրախ ենք, որ քրդական առաջին դասագիրքը Հայաստանում է գրվել ու տպվել, քրդական առաջին թատրոնը, առաջին դպրոցը, լրագիրը Հայաստանում են հիմնադրվել: Մի բան կա հայ ու քրդի մեջ ընդհանուր՝ իրար շատ նման բնավորությունը: Հայն էլ է պարզասիրտ եղել, քուրդն էլ: Եվ երկուսն էլ դրա համար շատ են տուժել խորամանկ ու չար այլ կառավարությունների ձեռքի տակ: Ես անձամբ քրդերին համարում եմ ֆիզիկապես առողջ, հոգով ազնիվ և լավ ժողովուրդ...

Ինձ միշտ ուրախացրել է քրդական կյանքի ամեն մի հաջողությունը: Այդ

պատճառով էլ միշտ բարյացակամ պատրաստ եմ եղել քուրդ ընկերների ամեն մի դիմումին, որը նրանք արել են ինձ եղբայրաբար: Ես միշտ ինձ զգացել եմ եղբոր վիճակում: Սա հին տարիների միաոնական կյանքի և փորձի հետևանք է: Հայերը և քրդերը ճշմարիտ եղբայր ժողովուրդներ են»:[76]

Կուլտուրայի վաստակավոր գործիչ Խնկանոս Դանիելյանն իր «քուրդ ժողովրդի բարեկամը» հոդվածում անդրադառնալով Դեմիրճյանի գործունեությանը, արձանագրել է, որ նա ջանք չէր խնայում օգնություն ցույց տալու քրդական մշակույթին ու քուրդ մտավորականներին:[77] Հ. Ջնդին իր հերթին վկայել է. «Դերենիկ Դեմիրճյանը միշտ հետաքրքրվում էր քուրդ ժողովրդի մշակույթով, հատկապես նրա բանահյուսությամբ: Հիշում եմ, մեկ առիթով մենք հանդիպեցինք իրար, նա կրկին հարց ու փորձ արեց մեր ժողովրդի կյանքից, այնուհետև ասաց. «Ափսոս են ձեր ժողովրդական բանահյուսության նմուշները, հավաքեցեք, այն ոչ միայն ձեր ժողովրդին է պետք գալու, այլ նաև մեր ժողովրդին: Չէ՞ որ գոյություն ունի հայ-քրդական ազգագրություն, հայ-քրդական երգ և այլ բազմաթիվ բարեկամական կապեր»:[78]

Գրողի մի շարք ստեղծագործություններ թարգմանվել են քրդերեն: Նրա «Քաջ Նազարը» թարգմանվել է Հ. Ջնդու կողմից, բեմադրվել Ալագյազի քրդական պետական թատրոնում: Քրդերեն են թարգմանվել նրա «Աբդուլ» և «Քարհատներ» պատմվածքները, որոնք իրենց բարերար ազդեցությունն են թողել քրդական գրականության վրա:

Իսկ հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը նորահայտ փաստերով իր արտացոլումն է գտել նրա «Արարատյան դաշտը» արժեքավոր ակնարկում, որը առաջին անգամ տպագրվել է 1979 թ. նրա երկերի ժողովածուում և մեծ ընդունելություն գտել գրական աշխարհում:

Խոսելով քրդական մշակույթում հայ մտավորականության ունեցած ավանդի մասին, պետք է հիշատակել հայ անվանի գրող Մարիետա Շահինյանի գեղարվեստական և գիտական մեծ արժեք ունեցող ստեղծագործական ժառանգությունը: Շահինյանն իր պատմվածքներում և ակնարակներում միշտ էլ անկեղծ սիրով է անդրադարձել մեր երկրի բազմազգ ժողովուրդներին, այդ թվում՝ քրդերի անցյալին, ներկային ու ապագային: Դեռևս 20-ական թվականների սկզբներին նա քրդերի մասին գրել է այնպիսի գողտրիկ ակնարկներ, որոնցում արտացոլված են հալածված ու ճնշված քուրդ ժողովրդի անցյալը, կենցաղը, մշակույթը: Հետաքրքրական են նրա «Քրդեր-եզդիներ», «Հայուհին և հոկտեմբերը», «Ալապազ բարձրանալը» ակնարկները, որոնցում նա գիտական վերլուծություններով է անդրադառնում քուրդ ժողովրդին վերաբերող հուշապատումներին: Իր «Քրդեր-եզդիներ» ակնարկում, նկարագրելով դեռևս տոհմական կյանքով ապրող քրդերի կենցաղի որոշ մանրամասնություններ, վերլուծում է նրանց տնտեսական առօրյայի մի շարք բնորոշ կողմերը: Միևնույն ժամանակ նա ցույց է տալիս, թե ինչպես է այդ հինը մահանում, և նրան փոխարինելու է գալիս նորը: Անվանի գրողը միևնույն ժամանակ քննադատել է այն թյուր կարծիքը, թե քրդերը «քոչ-

վորներ» են, և նրանց նստակյաց կյանքի մասին վկայող բազմաթիվ ապացույցներ բերել, նկարագրել, թե ինչպես են նրանք բարեկամ հայ ժողովրդի հետ գյուղում և քաղաքում պայքարում տնտեսական ու մշակութային հաջողությունների հասնելու համար:[79]

Մ. Շահինյանն իր պատմվածքներում առանձին հոգատարությամբ է շեշտել այն իրողությունը, որ Հայաստանի քրդերը ապրում են նոր, վերափոխված կյանքով: Արևելյան կնոջ դառը ճակատագիրը կիսող քրդուհին այժմ կյանքի ու հասարակական գործունեության լայն ասպարեզ է մտել: Նա քրդուհու կյանքին է անդրադարձել նաև իր «Հայուհին և հոկտեմբերը» ակնարկում:[80] Ականավոր գրողի ուշադրությունից չեն վրիպել նաև քուրդ ժողովրդի ստեղծած բազմադարյան հոգևոր արժեքները, նրա հարուստ բանահյուսությունը, պարզ ու արտահայտիչ արվեստը: Նա իր «Քրդեր և եզդիներ» ակնարկում մեծ գովեստով է խոսել Արագածի շրջանի Ղոնդաղազ գյուղում (այժմ՝ Ռյա թազա) գերեզմանատանը պահպանված քրդական հուշարձանների մասին, նշելով, որ դրանք ուսումնասիրման առումով կարող են հետաքրքրական լինել ազգագրագետների և այլ հետազոտողների համար:[81]

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության գաղափարը և հայատանյան հողում այդ բարեկամության գործնական դրսևորման իրողությունն առկա է Մ. Շահինյանի «Ալագյազ բարձրանալը» և «Ճանապարհորդություն Խորհրդային Հայաստանում» ստեղծագործություններում: Ալագյազի փեշերին լինելով քրդական վրանում, հեղինակը հաստատել և ընդգծել է քուրդ ժողովրդի ասպնջականությունն ու հատկապես քուրդ կնոջ հոգատարությունն ու ծառայասիրությունը: Ավելին, անդրադառնալով հայ-քրդական կենցաղային ընդհանրություններին, նա շեշտել է, որ նրանց կենցաղի մեջ տարբերություններ գրեթե չկան:[82]

Ի դեպ, քուրդ ժողովրդի հանդեպ Շահինյանի բարյացակամ վերաբերմունքն անփոփոխ և խորն էր: Քառորդ դար անց, կրկին այցելելով քրդաբնակ գյուղերը և ավելի մոտիկից ծանոթանալով քրդական մշակույթին ու նրա առաջընթացին, նա այդ ամենը գեղարվեստական նուրբ գրչով արտացոլել է իր ստեղծագործություններում: Նա գրել է. «Քառորդ դարի ընթացքում ամեն ինչ կերպարանափոխվել է այստեղ: Աճել են և նրանց սեփական ինտելիգենցիան, և բանասիրությունը, և կուլտուրական հարստությունները, մամուլը ... քրդերը կազմել են իրենց կլասիկ գրականությունը, իրենց էպոսը... Երևանում ամեն տարի ընդունվում են ուսանելու տասնյակ ապագա քուրդ ուսուցիչներ: Խորը անցյալի գիրկն են ընկնում հին սովորություններ՝ բազմակնությունը, զալանը:[83]

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Մ. Շահինյանն առանձին ջերմություն է դրսևորել Հայաստանում ապրող քրդերի վերածնված կյանքի ու մշակույթի նկատմամբ: Նա Հայաստանն իրավամբ համարում էր քրդական մշակույթի զարգացման կենտրոն, իսկ քուրդ ժողովրդին՝ հայ ժողովրդի անկեղծ բարեկամը: Հայաստան իր վերջին այցի ժամանակ, 1978թ. աշնանը, նա տողերիս հեղինակին, որպես քուրդ գրողների մասնաճյուղի նախագահ,

խնդրեց պատմել վերջին տարիներին քուրդ ժողովրդի կյանքում տեղի ունեցող փոփոխությունների մասին: Այդ մասին մամուլում տպվեց իմ հոդվածը, որից այժմ կներկայացնեմ մի փոքրիկ հատված: «Մարիետա Շահինյանը մեծ սիրով ինձ ընդունեց և ասաց. «Նստիր, երիտասարդ, դու գիտե՞ս, որ ես բազմիցս հանդիպել եմ քրդերի հետ: Ես ձեր ժողովրդին լավ եմ ճանաչում. հերոս ժողովուրդ է, հյուրասեր է ... իսկ ձեր կանայք ինչքան գեղեցիկ են, նրանց հագուստները կարծես ծիածան լինեն»: Այնուհետև ես նրան ասացի, որ մեծ հետաքրքրությամբ ընթերցել եմ քրդերին վերաբերող նրա բոլոր ստեղծագործությունները և իմ խորին շնորհակալությունը հայտնեցի, որ նա հոգատարություն է դրսևորել, անդրադարձել նրանց կյանքին: Նա իմ կույն միջամտեց և ասաց. «Որդիս, հայերը և քրդերը դեռ դարեր առաջ բարեկամներ են եղել, տեսել են միմյանց վատ ու լավ օրերը, պապենական հարևաններ են եղել, և եթե մենք այդ մասին չգրենք, էլ ո՞վ պետք է գրի...»: Այնուհետև, մի պահ լռելուց հետո կրկին ինձ հարցրեց. «Ես գիտեմ, որ դուք Հայաստանում լավ եք ապրում, և ձեզ համար բոլոր հնարավորությունները ստեղծված են, բայց ինձ պատմիր՝ ինչպե՞ս է ձեր կյանքը այժմ, ինչպիսի՞ն են ձեր ձեռքբերումները մշակութային կյանքում, հատկապես գրականության մեջ»: Ես նրան մանրամասն բացատրեցի, իսկ նրա դեմքը պայծառանում էր: Մենք հրաժեշտ տվեցինք միմյանց և դռան շեմին նա ինձ ասաց. «Ես ձեր ժողովրդին սիրում եմ և երբեք նրան չեմ մոռանա»: Ես նրա չհոգնող ու աշխատասեր ձեռքերը համբուրեցի, ինչպես մայր ու որդի նայեցինք իրար ... մեր երկուսի աչքերը թրջված էին, կարծես թե գիտենալով, որ այլևս իրար չենք հանդիպելու ... »[84]:

Այսպիսով, ուսումնասիրության մեջ քննարկվող հիմնական հարցի շուրջ մեր ուսումնասիրությունների շրջանակը մեծանալուն զուգընթաց առավել ակնառու է դառնում քրդական մշակույթում հայ մտավորականության խաղացած դերի նշանակությունը: Այդ պայծառ մտավորականներից էր Նաիրի Զարյանը, որը նույնպես իր ակտիվ աջակցությունն է ցուցաբերել քրդական մշակույթի զարգացման գործին, և պատահական չէր, որ նրա 80-ամյակի կապակցությամբ Հ. Ջնդին «Գրական թերթում» գրեց. «Հայ ականավոր բանաստեղծ Նաիրի Զարյանը Հայաստանում սկզբնավորվող քրդական նոր գրականության և քուրդ գրողների առաջին անկեղծ բարեկամներից մեկն էր: Նա անձամբ ծանոթ էր մեր բոլոր այն հեղինակներին, որոնք նոր-նոր էին գրական ասպարեզ իջնում: Մի առանձին ջերմ սիրով կապված էր քրդական «Ռյա թազա» թերթի խմբագիր Ջարդոե Գեննջոյի հետ, նա մեզ բոլորիս ոգևորում, խրախուսում, աջակցում էր՝ զարգացնելու մեր ժողովրդի ժամանակակից գրականությունը: Բանաստեղծը սերտորեն կապված էր Հայաստանի գրողների միության քրդական մասնաճյուղի հետ, երբեմն մասնակցում էր նիստերին ու արժեքավոր խորհուրդներով օգնում մասնաճյուղի տակավին երիտասարդ անդամներին»:[85]

Քուրդ ժողովրդի նկատմամբ Ն. Զարյանի անկեղծ բարեկամական զգացմունքներն արտահայտված են 1956 թ. նրա կողմից քուրդ ժողովր-

դին հղված Ամանորյա շնորհավորական նամակում. «Ես կցանկանայի Նոր տարվա կապակցությամբ «Ռյա թազա» թերթի միջոցով իմ ջերմ ու սրտառուչ խոսքը հղել եղբայրակից քուրդ ժողովրդին: Քուրդ ժողովուրդը հնագույն տաղանդավոր ժողովուրդներից է: Հայ և քուրդ ժողովուրդները դեռ շատ վաղուց հարևաններ են եղել և դա նրանց շատ է մոտեցրել իրար... Քուրդ ժողովրդի տաղանդը առաջին հերթին շողշողում է նրա բանահյուսության և մելամաղձոտ երգերի մեջ: Ես մանկուց շատ եմ սիրել «Մամե ու Զինե», «Զամբիլ ֆրոշ», «Սամանդ ու Խաջեզարե» հեքիաթները: Հետագայում ես իմացա, որ դրանք հեքիաթներ չեն, այլ քրդական ժողովրդական բանահյուսության լավագույն պոեմներն են: Ես շատ ուրախ եմ, որ քրդերը իրենց մայրենի լեզվով ընթերցում են «Ռյա թազա» թերթը: «Ռյա թազան» մեծ աշխատանք է կատարում քուրդ ժողովրդի կյանքում: Թույլ տվեք, սիրելի բարեկամներ, շնորհավորել քուրդ բարեկամ ժողովրդի Նոր տարին, նրա երիտասարդ ինտելիգենցիային. ցանկանում եմ նորանոր հաջողություններ քրդական մշակույթի զարգացման գործում»:[86]

Դեռ մանուկ հասակից շփվելով քրդերի հետ, Ն. Ջարյանը իրոք էլ տևապես հետաքրքրվել է քրդական ժողովրդական բանահյուսությամբ և ըստ արժանավույն գնահատել այն. «Քրդական էպոսն իր բովանդակության հարստությամբ, իր զգացմունքների խորությամբ ու արևելյան վառ երանգավորումներով կարող է մրցել արևելյան լավագույն էպոսների հետ»:[87] Նրա գրչին են պատկանում քրդական ժողովրդական բանահյուսության մի քանի նմուշների մշակումներ՝ «Մամե և Զինե», «Սիամանթո ու Խաջեզարե», «Զամբիլ Ֆրոշ», «Մամեն ու Այշեն» և այլն: Նա հետագայում կրկին անդրադառնում է «Մամե և Զինե» վիպերգին, որոշ վերլուծություններ անում և տպագրում: Իր ձեռքի տակ ունենալով Հ. Ջնդու և Ա. Ավդալի կողմից գրի առնված «Զամբիլ Ֆրոշի» տարբերակները, նա դրանք մշակել է և 1936 թվականին տպագրել «Խորհրդային քուրդ գրողներ» հայերեն առաջին ժողովածուում: Քրդական ժողովրդական բանահյուսության նմուշների նրա մշակումը, այնուհետև քրդական գրական կյանքին նրա գործնական մասնակցությունը, հատկապես նրա ջերմ զգացմունքներն ու անկեղծ սերը քուրդ ժողովրդի հանդեպ իրենց յուրատեսակ նպաստն են բերել քրդական մշակույթի զարգացմանը:

Իսկ բանաստեղծ Սողոմոն Տարոնցին, ոգեշնչված Հայաստանի քուրդ համայնքի մշակութային նվաճումներով, մեծ խանդավառությամբ կոչ է արել հայ մտավորականությանը օգնել քուրդ ժողովրդի մշակույթի զարգացմանը: Նա իր մանկությունն անց է կացրել Կողբ գյուղում, քրդերի միջավայրում, սովորել է քրդերեն, ծանոթացել քրդական ժողովրդական բանահյուսությանը: Նրա վրա մեծ ազդեցություն են թողել հոր՝ Բենսեի (Սահակ Մովսիսյան) սերտ հարաբերությունները քրդերի հետ: Նա քաջածանոթ լինելով Բուլանըղի քրդերի նիստուկացին, նրանցից հավաքել էր քրդական բանահյուսության լավագույն նմուշները և հրատարակել, այդպիսով դրանք փրկելով ոչնչանալուց:[88]

Տարոնցին 1923 թ. գրել և 1934 թ. հրատարակել է «Սիամանթո ու Խաջեզարե» պոեմը, որը վերամշակել ու վերահրատարակել է 1965 թ.:[89] 1932 թ. «Գրական դիրքերում» ամսագրում հրատարակվում է նրա «Զուլեյխա» պոեմը, որն ամբողջովին վերցված է քրդական կյանքից, այն հարուստ է ազգագրական նյութերով: Հատկապես գեղեցիկ է քրդուհու կերպարի, նրա աննման գեղեցկության և խիզախության նկարագրությունը: Նա մի շարք գրականագիտական հոդվածներ է նվիրել քրդական գրականության զարգացման հարցերին: «Հայրենիքի ձայն» թերթը, գնահատելով Տարոնցու ավանդը քրդական գրականության մեջ, արձանագրել է. «Տարոնցու գրական վառ էջերից են նաև քրդական գրականությանը նվիրված նրա գործերը»:[90] Ավելացնենք, որ Տարոնցուն այնքան հոգեհարազատ է եղել քրդական գրականությունը, որ նա մշտապես զբաղվել է քուրդ գրողների ստեղծագործությունների թարգմանությամբ:

Անդրադառնալով հայ մտավորականության ներդրումներին, պետք է բարեխտագիտությամբ նշել հայ անվանի բանաստեղծ Սարմենի (Արմենակ Սարգսյան) գործունեությունը քրդական մշակույթում: Նա ևս իր մանկությունն անց է կացրել քրդերի մեջ, օրերով նստել օբաներում, լսել քրդական ժողովրդական բանահյուսության գոհարները, հիացել դրանցով և հետագայում վկայել. «Ես միշտ էլ տարված եմ եղել այդ բանահյուսությամբ»: Մագապուրծ լինելով թուրքական յաթաղանից և հանգրվանելով Հայաստանում, հենց այստեղ էլ նա իրեն նվիրել է քրդական մշակույթի զարգացմանը: Տիրապետելով քրդերենին, նա անփոխարինելի աշակցություն է ցույց տվել նորաստեղծ քուրդ գրականությանն ու մտավորականներին: Դեռ Լենինականի մանկատանը և ապա՝ մանկավարժական տեխնիկումում սովորելիս, նա նվիրվել է քերթողական արվեստին և հենց նույն ժամանակ էլ սկսել է ստեղծագործել նաև քրդերեն: Այս կապակցությամբ մանկավարժական տեխնիկումում նրա դասընկեր Հաջիե Ջնդին «Իմ եղբայր Սարմենը» հոդվածում գրել է. «Վերջին կուրսում էր, մեկ օր տեսանք, որ Սարմենը բեմի վրա բանաստեղծություններ է կարդում: Նա նաև մի քանի քառյակներ կարդաց քրդերեն ... դահլիճը մեծ խանդավառությամբ ընդունեց, իսկ ես առավել ևս ուրախացա, հուզմունքից քիչ էր մնում լաց լինեի. չէ՞ որ ես առաջին անգամ քրդերեն լեզվով բանաստեղծություններ էի լսում ... Այդ ժամանակվանից մինչև այսօր, մինչև նրա 80-ամյակը, մենք ընկերություն էինք անում ինչպես եղբայրներ»:[91] Հ. Ջնդին հավաստում է, որ իր գրական աշխարհայացքի ձևավորման վրա մեծապես ազդել են Սարմենը, նրա ստեղծագործությունները:

Անվանի բանաստեղծը հաճախ էր մեկնում Հայաստանի քրդական գյուղերը, քրդերեն լեզվով հանդես գալիս զեկուցումներով, անցկացնում զրույցներ, մասնակցում քրդական մշակույթին նվիրված բոլոր միջոցառումներին, հավաքում քրդական բանահյուսության լավագույն նմուշները: Քուրդ ժողովրդի նկատմամբ ջերմ սեր տածելով, նա իր ստեղծագործություններում բազմիցս է անդրադարձել Հայաստանի քրդերի նոր կյանքին, գովերգել հայ

և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, որը հատկապես իր գեղեցիկ արտացոլումն է գտել «Լաթիվի» պոեմում:[92] Նա գեղարվեստական նուրբ ոճով պատկերել է խավարից և հետամնացությունից ազատագրված քրդուհու կյանքը, որը խորհրդային Հայաստանում դարձել է ճարտարապետ և իր հայ բարեկամների հետ նախագծում է քրդական նոր գյուղը: Բանաստեղծը հետևյալ տողերով է ավարտում իր պոեմը.

Ուր են քրդական վրանաքնակ
Հովիվները խեղճ ու վաչկատուն,
Էլ չեն երևում, էլ չկան նրանք
Մեր այս լեռների ստորոտներում:[93]

Ինչպես նշեցինք, երկար տարիներ Արևմտյան Հայաստանում ապրելով քրդերի մեջ, Սարմենը քաջածանոթ էր քրդական բանահյուսությանը, լեգենդներին ու ավանդույթներին: Նա քրդական ժողովրդական «Մամե ու Այշե» վիպերգի հիման վրա է գրել իր «Սպանված սերը» պոեմը, որի մեջ վարպետորեն ցույց է տրված թուրքական տիրապետության տակ գտնվող քուրդ ժողովրդի չարքաշ կյանքը: Հետագայում վերամշակելով, բանաստեղծն այն ընդգրկել է իր երկերի երկրորդ հատորում:[94] Այդ, ինչպես և «Լատիֆա», «Մամեն ու Այշեն» ու «Ռաջիե Ջնդին» պոեմները գրված են հայ-քրդական բարեկամության ջերմ պաթոսով: Քուրդ գրականագետ Ազիտե Խուդոն իրավացիորեն գրում է. «Սարմենը տևապես խորհել է այն մասին, որ քուրդ ժողովուրդը ձեռք բերի իր ազատությունը, նրա զավակներն էլ կրթություն ստանան, դառնան ճարտարապետ, քիմիկոս, ինժեներ ու գիտնական: Եվ նա հավատացած էր, որ կգա այդ ազատության օրը»:[95]

Իսկ ինքը՝ Սարմենը, մեծ հետաքրքրություն ունենալով քրդական գրականության հանդեպ, հաճախակի էր անդրադառնում դրան, մեծ նշանակություն տալիս հայ-քրդական գրական կապերին, հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությանը. «Իմ գրվածքները քուրդ ժողովրդի մասին, բառ առ բառ են ստեղծվել, չէ՞ որ մեր գյուղում իմ մանկական ընկերները, մեր բարեկամ աշխատավորները քրդեր էին: Մենք պապենական քիրվաներ էինք, մասնակցում էինք միմյանց ուրախությանն ու տխրությանը, ինչպես եղբայրներ ... մենք նրանց էինք օգնում, նրանք էլ մեզ էին օգնում, հոգատար էինք մեկս մյուսի նկատմամբ ... Մեր գյուղից մի փոքր այն կողմ հենց մի այգի-սինեմա կար, Մոքսի Մուրթլա բեկ անունով, որը ոչ միայն բեկ էր, այլև միևնույն ժամանակ գավառապետ: 1895-1896 թթ., հետագայում՝ 1914-1915 թթ., երբ թուրքական բանակը ամենուր կոտորում էր հայերին, երբ մեր ժողովրդի արյունը ինչպես գարնան գետ ամենուր հոսում էր, նա ոչ միայն չմասնակցեց այդ արյունալի դեպքերին, այլ մեր Մոքսի նահանգը նրա շրջակա հայության համար դարձավ պողպատե դուռ, իր խելացի, հեռատես մարդասիրությամբ թույլ չտվեց, որ թուրքական բանակը մեզ ձեռք տա, նրա շնորհիվ նույնիսկ մի ուլի քիթն էլ չարյունոտվեց: Այդ իսկ պատ-

ճառով Մոքսի և նրա շրջակայքի ողջ ժողովուրդն առ այսօր նրա գլխով է երդվում, նրան չի մոռանում: Այժմ ես ինչպե՞ս այդ նեղ օրվա մարդուն և ձեր ժողովրդին չսիրեմ, ձեր ժողովրդի մասին անկեղծ սրտով չգրեմ...»:[96]

Սարմենի ստեղծագործություններն այսօր էլ լայն ճանաչում ունեն քուրդ ընթերցողների շրջանում: Նրա քերթվածքներից շատերն են թարգմանվել քրդերեն: Քուրդ մտավորականները բարձր են գնահատել նրա ծառայությունը քրդական մշակույթին և ինչպես «Ռյա թազա» թերթի էջերում, այնպես էլ քրդական ռադիո-հաղորդումներով հաճախակի են անդրադարձել նրա կյանքին ու գործունեությանը: Գրող Ջասիմե Ջալիլը, անդրադառնալով Սարմենի գրական գործունեությանը, իրավացիորեն գրել է. «Հայ ժողովրդի զավակ Սարմենը իր հոգով, իր անցած կյանքի ուղիով, իր գործունեությամբ այն կամրջի քարերից մեկն էր, որը երկու հնագույն բարեկամ ժողովուրդներին կապում էր իրար հետ: Սարմենը ոչ մի ջանք չխնայեց քուրդ ժողովրդի գրականության զարգացման ու ծաղկման համար... Դեռևս երեսնական թվականներին, երբ Հայաստանի Հանրապետությունում այդ գրականության հիմքերն էին դրվում, Սարմենն իր ընկերների՝ Հ. Քոչարի, Ս. Տարոնցու, Վեսպերի, Հ. Մկրտչյանի և մյուսների հետ եղբայրական օգնության ձեռք մեկնեց մեզ և դարձավ խորհրդային քրդական գրականության պաշտպանը»:[97]

Հոգով և գործով ինտերնացիոնալիստ, գրող Գարեգին Սևունցը բարձր էր գնահատում ժողովուրդների բարեկամությունը և իր յուրաքանչյուր ստեղծագործությունում արտացոլում այն: 1944 թ., գտնվելով Իրանում, նա ծանոթանում է ինչպես պարսիկ, այնպես էլ քուրդ ժողովրդի նիստուկացին, ազգային սովորություններին, անցյալին ու ներկային: Գրողին հատկապես հրապուրել է բախտակից քուրդ ժողովրդի կյանքն Իրանում: Նա հանդիպել է առաջնորդներին, զրուցել նրանց հետ: Այդ կապակցությամբ նա գրում է. «Նրանք (քրդերը Կ. Ջ.) հաճախակի էին գալիս մեզ մոտ, բոլորը զինված էին, հաղթանդամ, հպարտ ու գեղեցիկ էին: Հաճախակի ես էլ գնում էի նրանց մոտ, ծանոթանում նրանց նիստ ու կացին, ազգային սովորություններին ... Այդ հնագույն ժողովուրդը պարզ ու սրտաբաց է, ջինջ ու հումանիստ»:[98]

Հետագայում, պատերազմի ավարտից հետո, նա վերադառնում է Հայրենիք և գրում իր «Թեհրան» վեպը, որում գեղարվեստական պատումով ներկայացրել է հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, նրանց համատեղ պայքարը ներքին և արտաքին ճշնամիների դեմ, անդրադարձել Իրանի քրդերի կենցաղին, ծիսակատարություններին:[99]

Գարեգին Սևունցը մշտապես օգնում էր իր բարեկամ քրդերին, նրանց դասում իր մտերմագույնների շարքում և աջակցում քրդական մշակույթի զարգացմանը: Քուրդ գրող Նադո Մախմուդովը իր հուշերում գրել է. «Մեր բարեկամությունը Գարեգին Սևունցի հետ ձևական բարեկամություն չէր, նա միշտ օգնել է մեր մշակույթին, մենք գործել էինք եղբայրներ: Մեր բնավորության մեջ շատ բան իրար նման էր, մենք երկուսով էլ լեռնային մար-

դիկ էնք»:[100]

Սևունցի «Թեհրան» վեպը լայն արձագանք գտավ Մերձավոր Արևելքում և թարգմանվեց մի շարք լեզուներով, այդ թվում, թեկուզ և հատվածաբար, քրդերեն:

Քրդական գրականության, մշակույթի մեջ իր մեծ ներդրումն ունի նաև Վահան Գրիգորյանը: Հաջիե Ջնդին նրա մասին գրում է. «Հայաստան հրատարակչության բաժնի վարիչ Վահան Գրիգորյանը մեծ աշխատանք է կատարել քրդական գեղարվեստական գրականության զարգացման համար: Սիրում է այդ գրականությունը և ամեն կերպ օգնում է երիտասարդ քուրդ գրողներին»:[101] Նրա գրչին են պատկանում Աբաք Շամիլովի «Բախտի ճանապարհի» երկու հատորների, «Դրմ-դրմ» վեպի, Ամինե Ավդալի «Թոսունը» պոեմի և մի շարք այլ ստեղծագործությունների թարգմանությունները: Մանկուց ապրելով քրդերի մեջ, գրողին հոգեհարազատ են դարձել քուրդ ժողովրդի նիստուկացը, սովորույթները: Նա սիրել է քրդական ժողովրդական բանահյուսությունը, որը վերարտադրել է իր ստեղծագործություններում: Ինչպես ինքն է ասում. «Երբ ես քրդական երգեր եմ լսում, իմ մանկությունն եմ հիշում, մտովի գնում մեր Մաթուլա գյուղը, որը սահմանի այն կողմն է: Հիշում եմ մեր գյուղացի Մահմուդին ... ինչքան քաղցր էր երգում»:[102] Նա մտերիմ կապեր ուներ քուրդ գրողների, հատկապես Աբաք Շամիլովի և Հաջիե Ջնդու հետ: Այդ բարեկամությունը նույնպես նպաստում էր քրդական գրականության էլ ավելի հարստացմանը: Քրդական ժողովրդական բանահյուսության հիման վրա գրելով իր «Բոզե - Քամալա» պոեմը, նա նշել է. «Պոեմի նյութը համառոտ և արձակ վիճակում մեզ տրամադրել է քուրդ գրող, բանահավաք, բանասիրական գիտությունների դոկտոր Հաջիե Ջնդին»:[103] Պոեմում հեղինակը կարողացել է պարզ ու հատակ ցույց տալ Թուրքիայում քուրդ ժողովրդի սոցիալական ծանր վիճակը, նրա կենցաղը, աղնիվ ու վեհ զգացումները, ազատատենչ իղձերը: Այն քրդական բանահյուսության մշակումների լավագույն նմուշներից է: Լինելով հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ջատագով, գրողն այն գեղեցիկ կերպով վերարտադրել է նաև իր «Փրկություն» վեպում: Եվ բնավ էլ պատահական չէ, որ քուրդ գրողները թարգմանել են նրա մի շարք ստեղծագործություններ: Նշենք, որ քուրդ ընթերցողների շրջանում առավել մեծ ընդունելություն է գտել «Ալմա-Աթայում» բանաստեղծությունը՝ Հ. Ջնդու թարգմանությամբ:[104] Այս բանաստեղծության յուրաքանչյուր տողում արտացոլվում է հեղինակի մեծ հումանիզմը: Վահան Գրիգորյանն իր ստեղծագործությամբ հատկապես նպաստեց հայ-քրդական գրական կապերի և բարեկամության ամրապնդմանը, քրդական գրական մշակույթի հարստացմանը:

Քուրդ ժողովրդի կյանքին և հայ-քրդական կապերին անդրադարձել է նաև գրող Խաչիկ Դաշտենցը, առանձնապես իր «Խոդեդան» և «Ռանչպարների կանչը» վեպերում: Հ. Սիրասի «Մամեն ու Աշեն» արձակ պոեմը, որ բազմիցս մշակվել է նրա կողմից, ինչպես հայ, այնպես էլ քրդական գրականության գոհարներից է: Բանաստեղծուհի և արձակագիր Աղավնին,

իր հերթին, քրդական ժողովրդական բանահյուսության հիման վրա մանուկների համար գրել է իր «Աբուզեթե» չափածո ստեղծագործությունը»: Այս կամ այն առիթով քրդական մշակույթի և քուրդ ժողովրդի մասին հանդես են եկել ու քրդական մշակույթում իրենց ավանդը ներդրել նաև գրողներ Ս. Խանզադյանը, Հ. Շիրազը, Պ. Սևակը, Գ. Էմինը, Հ. Սիրասը, Վ. Պետրոսյանը, Մ. Սարգսյանը, Զ. Դարյանը, Հ. Ղուկասյանը, Վ. Կարենցը, Ա. Սահակյանը և շատ ուրիշներ: Խոսելով քրդական մշակույթում հայ անվանի մտավորականների ներդրած ավանդի մասին, անհնար է արժանիորեն չգնահատել Պարույր Սևակի գործունեությունը, որը միշտ օգնության ձեռք էր մեկնում: Նա մի առիթով, դիմելով քուրդ ժողովրդին, գրել է. «Իմ սիրելի քուրդ ընթերցողներ, ես մանկությունից սկսած գիտեմ ձեր ժողովրդի աքսանչելի առաքինությունները և ցանկանում եմ, որ դրանք նոր որակ ստանան նոր պայմաններում: Միշտ ձեր ժողովրդի բարեկամ՝ Պ.Սևակ»:[105] Քուրդ բանաստեղծ Ջասիմե Ջալիլը գրում է. «Պարույր Սևակը Հայաստանի քուրդ գրողների մեծ բարեկամն էր, նա մեծ ինտերնացիոնալիստ ու քաղաքացի էր, սրատուչ ընկեր և բարեկամ: Մենք՝ քուրդ բանաստեղծներս, խոր կսկիծ ենք ապրում, որ նա շատ շուտ մեզանից հեռացավ և այլևս մեզ հետ չէ»:[106]

Քրդական գրական մշակույթը, հատկապես խորհրդային ժամանակաշրջանում քուրդ ժողովրդի մշակույթի առաջընթացը, սփյուռքահայ մտավորականների ուշադրության կենտրոնում էին: Նրանք իրենց ստեղծագործություններում բացահայտել են այդ շրջանի թե՛ դրական և թե՛ սևերոտ էջերը, փորձել օգնել՝ վերացնելու թերությունները, վեր հանելու լավագույն նմուշները, գիտական ու գեղարվեստական բարձր մակարդակով հասցնելու ընթերցողին: Ավելացնենք, որ քրդական ժողովրդական բանահյուսության բազմերանգ նմուշները նրանց համար միշտ էլ եղել են ստեղծագործական ոգեշնչման աղբյուր: Նրանք արժանավույնս են գնահատել նաև քրդական ժողովրդական երգն ու երաժշտությունը, քուրդ ժողովրդի հերոսական անցյալը, ազգային գեղեցիկ ավանդույթները: Սփյուռքահայ անվանի գրող Վիլյամ Սարոյանը, անդրադառնալով քրդական բանահյուսությանը, ասել է. «Քանի մը տարի առաջ մեր երկիր գացի Բիթլիս: Քուրդ աշուղ մը կար հոն, վրաս երգ կապեց, երգեց ... Անոնց երգի մեջ ալ մելամաղձություն կա ... Մելամաղձությունը այդ «Լո-լո -լո»-ին մեջ է ... Բոլոր ժողովուրդներն էլ բարի են, չարիքը ուրիշ տեղեն կուգա...»:[107] Նա իր ստեղծագործություններում հաճախակի է անդրադառնում քուրդ ժողովրդի կյանքին, նրա կենցաղին:

Ամերիկահայ գրող Կարապետ Սիտալը իր մանկությունն անց է կացրել քրդերի մեջ, լսել նրանց բառուբանը, զգացել նրանց բարեկամության ջերմությունը: Նա, սերտորեն կապված լինելով քուրդ ժողովրդի հետ, զբաղվել է նրա բանահյուսության նմուշների հավաքմամբ ու մշակմամբ, բարձր է գնահատել հայ և քուրդ ժողովուրդների բանահյուսական կապերը և կոչ արել էլ ավելի ամրապնդել մշակութային կապերը, պեղել բանահյուսության դեռևս չուսումնասիրված էջերը:

1954 թվականին ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում Սիտալը տպագրում է իր «Հովիվ Ազոն» հովվերգական ծավալուն պոեմը, որի նյութը վերցված է քրդական ժողովրդական բանահյուսությունից: Նրանում նկարագրված են քուրդ գյուղացու սոցիալական ծանր վիճակը, նրա պայքարը ներքին ու արտաքին կեղեքիչների դեմ:

Բարձր գնահատելով քրդական ժողովրդական բանահյուսությունը, պոեմի նախերգանքում նա գրել է. «Հովիվ Ազոն առանձին մի տեղ է գրավում իմ գրական երկերի շարքում, թե իր հղացման և թե կառուցվածքի տեսակետից: Ժողովրդական մի սիրուն ստեղծագործություն էր, որ ինձ թեւաթափեց այս երգիս կմախքը: Բովանդակությունը ես կառուցի իմ մանկության վառ հույզերից, անջնջելի տպավորություններից և ապա կյանքի հորդող իրականությունից: Ժողովրդական արվեստի այն չքնաղ գանձը, որը որպես կմախք ծառայեցրի կառուցելու համար իմ հովիվ Ազոն, քուրդ ժողովրդի մի հուզիչ խաղն է (երգախառն պատմվածք), որը ծանոթ է «Ների Բալո» անունով»:[108]

«Հովիվ Ազոն» և նրա մյուս ստեղծագործությունները՝ «Կաշտի քաջեր», «Գյուղն իմ հեռավոր», արժեքավոր են ոչ միայն իրենց գեղարվեստական բարձր կառուցվածքով, այլև քաղաքական ենթատեքստով: «Հովիվ Ազոյի» նախաբանում նա նշում է. «Գրեցի նրանց համար, որոնք դեռ տորդվում և արյունաքամ են լինում օտար և բնիկ տերերի յաթաղանի ներքո, առաջին հերթին բաժան-բաժան եղած և գիշակեր բռնակալների երկաթե գարշապարի տակին տնքացող քաջ ու ազնիվ քուրդ ժողովրդի համար: Հովիվ Ազոն գրեցի այն հաստատ ու պայծառ հավատքով, որ բոլոր կեղեքվողները, բոլոր տանջված ժողովուրդները, որոնք անզիջում պայքարի են ելած, կբախտավորվեն այն բանով, որ բաժին է եղել իմ ազատ երջանկացող և հաղթական ժողովրդին»:[109]

Քրդական էպիկական սիրավեպը՝ «Մամեն ու Զինեն», ինչպես արդեն անդրադարձել ենք ուսումնասիրությունում, եվրոպական և հայ բազմաթիվ հեղինակների կողմից արժանացել է մեծ գնահատականի, դարձել նրանց ստեղծագործության աղբյուրներից մեկը: Պատահական չէր, որ 1951 թ. ամերիկահայ ժամանակակից հրատարակությամբ լույս տեսավ Կ. Սիտալի մշակած «Մամ ու Զին» սիրավեպը, որը 1957 թ. Երևանում հեղինակի «Դյուցազնական» ծավալուն ժողովածուում վերահրատարակվեց մշակված ձևով:[110] Ֆրանսահայ գրող, գրականագետ Լևոն Մեսրոպը, գնահատելով Սիտալի կողմից վիպերգի մշակումը, նշել է, որ այն տարածված է եղել հայերի մեջ, որ նրանք երգել են քրդերեն և հայերեն. «Սիտալը ներշնչված է նաև «Մամ ու Զինի» հայկական փոփոխակներեն, որոնք Շատախի և Ռշտունիքի մեջ կերգեին քրդական եղանակով և հայկական լեզվով ու եղանակով և ատոնց մեջ շեշտված է երկու ժողովուրդներու ջերմ բարեկամությունը և խաս եղբայրությունը»:[111] Սիտալն իր հերթին խիստ ու քննադատական խոսք է ուղղել այն անձանց, ովքեր խեղաթյուրելով քրդական ժողովրդական բանահյուսության այս լավագույն գոհարի ծագման մասին ճշմարտությունը, այն համարել են հայկական: Նա իր խոսքն անմիջականորեն ուղղել է 1953 թ. փետրվարի 3-4-ին «Պայքարում» Վանտո ստորագրությամբ լույս տեսած հոդվածի հեղինակին, որը գրել է. «Մամ ու Զինը» անծանոթ հայ վիպերգակի անգիր, բայց փառավոր մտքի արժեքավոր ստեղծագործությունն է»:[112] Այնուհետև, շարունակելով իր միտքը, նա մեղադրել է Սիտալին այն բանի համար, որ իբր «Նա երեք անգամ միևնույն նյութը չարչարելեն հետո կը գլխատե զայն և կնվիրե օտարներուն (նկատի ունի քրդերին - Կ. Ջ.)»:[113] Սիտալը, քաջատեղյակ լինելով քրդական դարավոր բանահյուսությանը, «Մամ ու Զինի» պատմությանը և հատկապես Ահմադե Խանու «Մամեն ու Զինե» պոեմին, հակադարձել է Վանտոյին, գրելով. «Իմ վաղ մանկության օրերից ի վեր ես լսել եմ և հմայվել եմ «Մամ ու Զինեով»: Ավելի խելահաս պատանեկության օրերիս դարձյալ լսել եմ այդ պատմվածքի մի շարք տարբերակները Աղբակի, Գավաշի, Վերին Հայոց Ձորի, Մոկսի ու Շատախի շրջաններից: Պատմվածքը հայ ասողներից եմ լսել և բնականաբար հայերենով, սակայն, խաղերը (երգերը) միշտ էլ միայն քրդերենով: Եվ ոչ մի տեղ և ժամանակ «Մամ ու Զինեի» բազմաթիվ խաղերը ես չեմ լսել հայերենով երգված: Այժմ այստեղ տամ Մամ ու Զինի ասող և երգողների անունները. Մարկոս Դավթյան, Զաքար Զաքարյան, Հովհ. Ավետիքյան: «Մամ ու Զինի» քրդական ստեղծագործություն լինելը բոլոր ասողների և երգողների կողմից բնական, անառարկելի մի եղելություն է համարվել: Այդ մասին ամենափոքր տարակույս անգամ ես չեմ լսել:[114]

Սիտալը չի բավարարվել երկու ավանդավեպերի մշակմամբ: Նա իր մյուս ստեղծագործություններում նորից ու նորից գեղեցիկ կերպով օգտագործել է քրդական բանահյուսությունը, ներքին և արտաքին թշնամիների դեմ համատեղ պայքարի դրվագները: Դա հատկապես լավ է արտացոլված նրա «Կաշտի քաջեր» և «Գյուղն իմ հեռավոր» պոեմներում:[115] Գովերգելով հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, նա կոչ է անում հայ ժողովրդին թուրքական փաշաների դեմ պայքարելիս հանդես գալ իր բարեկամ քուրդ ժողովրդի հետ:[116]

Սիտալը քանիցս եղել է Հայաստանում և ականատես եղել քրդերի առաջընթացին: Նրա վրա մեծ տպավորություն են թողել ինչպես քրդական մշակույթի ընդհանրապես, այնպես էլ քուրդ գրողներ Հաջիե Ջնդին ու Վաֆիրե Նադիրին, որոնց միջոցով նա հաղորդակից է դարձել «Մամ ու Զինի» ստեղծման ողջ ակունքին ու մշակման պատմությանը:[117]

Հայ և քուրդ ժողովուրդների հարաբերությունների ու նրանց մշակութային կապերին չափազանց ջերմ է անդրադարձել ֆրանսահայ գրող ու գրականագետ Լևոն Մեսրոպը: Նա իր «Քուրդիստանը և քրդերը» գրքում հանգամանորեն կանգ է առել քուրդ ժողովրդի անցյալի ու ներկայի և հայ-քրդական համատեղ հերոսամարտերի վրա:[118] Հեղինակը մի քանի անգամ եղել է Հայաստանում և նրան հոգեհարազատ է դարձել քրդական մշակույթը: Նա բարձր է գնահատել Հայաստանի կառավարության, հայ մտավորականության բարերար դերը քուրդ ժողովրդի հայաստանյան հատվածի

տնտեսական ու մշակութային կյանքում։[119] Այս առթիվ նա գրել է. «Վերջին երեսուն տարվա ընթացքում Հայաստանի քրդերը, շնորհիվ խորհրդային կարգ ու սարքին, պետական լայն աջակցության և իրենց բնածին ընդունակության, հիմքը դրին ընկերային-մշակութային նոր կյանքի մը»։ Այնուհետև, ճիշտ գնահատելով Հայաստանում քրդական մշակույթի աննախընթաց վերելքը, նա հետևյալ տողերով է ավարտել իր արժեքավոր աշխատությունը. «Խորհրդային Հայաստանի քուրդ ժողովուրդը իր ունեցած դրություններով և իր աննախընթաց վերելքով կը վայելե առաջնակարգ դիրք համայն քրդության մեջ։ Խորհրդային Հայաստանը դարձել է փարոս մը քյուրդերու ցիր ու ցան հատվածներուն համար, մանավանդ այս միջոցին, երբ քուրդ ժողովուրդը, Թուրքիա կամ այլուր, իր դարավոր գոյության ամենեն մոյալ շրջանը կապրի, ենթակա ցեղային ատելության, հալածանքի և բռնի ձուլման»։[120]

Եվ այսպես, հայ մտավորականության կողմից քրդական մշակույթի հանդեպ դրսևորած բարյացակամ ու գործնական վերաբերմունքի շնորհիվ Հայաստանում աստիճանաբար, նեղ ազգային շրջանակներից ազատագրվելով, քրդական գրականությունը վերելք ապրեց։ Հայ մտավորականության նման ներդրումներն առավելևս նոր ուղիներ հարթեցին գրական-մշակութային հարցերի գիտական բազմակողմանի ուսումնասիրման համար և լայն արձագանք գտան համայն քրդական մշակույթում։

Գ. ՔՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏՔԻ ՎԵՐԵԼՔԸ ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ

Քրդական մշակույթն առանց քրդական գրականության չէր կարող ամբողջական լինել, մանավանդ, որ քրդական գրականությունը հիմնվեց և առաջընթաց ապրեց հայ մշակույթի, հայ գրողների ջերմեռանդ աջակցությամբ։

Պրոֆեսոր Հաջիե Ջնդին այս կապակցությամբ գրել է. «Քրդական խորհրդային գրականությունը զարգանալով Երևանում, սերտորեն շփման մեջ մտավ հայ դարավոր ու հարուստ գրականության հետ։ Վերջինս քուրդ գրողների համար նույնպես ստեղծագործական խիզախումների անսպառ աղբյուր հանդիսացավ։ Ավելին, քուրդ երիտասարդ գրողը հայ անվանի գրողների անմիջական օժանդակությամբ կարողացավ գրական ստեղծագործական վարպետություն ձեռք բերել»։[121]

Պետք է հաստատապես և երախտապարտությամբ նշել, որ Հայաստանում, հայ գրականության և հայ գրողների աջակցությամբ, յոթ տասնամյակների ընթացքում քուրդ ժողովրդի մշակույթը, հատկապես գրականությունը, այնպիսի զարգացում ապրեցին, ինչպիսին չէին ունեցել հազարամյակների ընթացքում։

Խորհրդային քրդական գրականությունը, որը հիմնվեց հայ գրողների կողմից, Հայաստանում սկսեց բարգավաճել 1930 թվականից։ Եվ հենց այդ ժամանակից աննախընթաց վերելք ապրեցին հայ և քուրդ ժողովուրդների մշակութային գրական կապերը։ Նրանց համագործակցության թեման իր հաստատուն տեղը գրավեց ինչպես հայ, այնպես էլ քուրդ գրողների ստեղծագործություններում։ Երեսնական թվականներին հայ գրողների և գրականության բարերար ազդեցությամբ գրական ասպարեզ են իջնում քուրդ գրողներ Արաբ Շամիլովը, Հաջիե Ջնդին, Ամինե Ավդալը, Ջասմե Ջալիլը, Ջարդոյե Գինջոն, Վազիրե Նադրին, Արամե Ջաչանը, Աթարե Շարոն, Միրազին, Ղաչաղե Մրադը և մյուսները։

Քուրդ անվանի գրող, Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ Արաբ Շամիլովն այն քուրդ մտավորականներից էր, ովքեր իրենց ողջ կյանքը նվիրաբերեցին քրդական մշակույթին ու գրականությանը, երախտապարտորեն նվիրվեցին հանրապետության սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքին։ Նրա վրա մեծ է եղել հայ գրողների ազդեցությունը, մանավանդ որ նրանցից շատերը, հաստատելով քուրդ մտավորականի ստեղծագործական տաղանդը, մշտապես աջակցել են նրան, օգնել գրական աշխարհայացքի ձևավորմանը։ Նա սերտ հարաբերությունների մեջ է եղել հայ անվանի գրողների Չարենցի, Իսահակյանի, Զարյանի, Դեմիրճյանի, Քոչարի հետ։ Եվ պատահական չէ, որ Չարենցին նվիրված իր հուշերում Շամիլովը խոստովանել է. «Անհետաքրքիր չի լինի, որ ես, այն ժամանակ նոր գրել սկսած միակ քուրդ հեղինակս, որ Չարենցի օգնությամբ սկզբնավորել եմ խորհրդային քուրդ գրականությունը, իմ հուշերը հանձնեմ ընթերցողին, հայ մեծ բանաստեղծի մասին ...»։[122] Այնուհետև նա հաղորդում է, որ մի քանի անգամ հանդիպել է Չարենցին, նրանից բարի խորհուրդներ լսել. «Գրի Արաբ, մի վախենա, ես քո լրագրային հոդվածներից ու ակնարկներից վստահ եմ, որ կարող ես գրել... »։ «Իսկ երբ 1931 թվականին Մոսկվայի «Մոլոդայա գվարդիա» հրատարակչությունը լույս ընծայեց իմ առաջին «Քուրդ հովիվը» գիրքը, Չարենցը ինձնից ավելի ուրախացավ ... »։[123]

Սույն պատմվածքը մայրենի լեզվով լույս է տեսնում Երևանում 1935թ. և հետագայում թարգմանվում ֆրանսերեն, արաբերեն, անգլերեն, գերմաներեն, հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով։

1930-31 թթ. հաջորդաբար լույս են տեսնում Շամիլովի «Սուտ գուշակողը» դրաման, «Ալագյազի քրդերը» և «Փոքրիկ հովիվը» պատմվածքների ժողովածուները։ Ցավով պետք է նշենք, որ ստալինյան ռեակցիայի տարիներին նա բազմաթիվ գրողների ու քաղաքական գործիչների հետ անհիմն աքսորվում է Սիբիր։ Միայն քսան երկարաձիգ տարիներից հետո վերադառնում է Հայաստան և հայ մտավորականության անմիջական օգնությամբ բուռն կերպով լծվում է ստեղծագործական աշխատանքի։

1959թ. Շամիլովն արդեն իր գեղարվեստական կտակն է հանձնում ընթերցողներին. «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայում նրա

«Երջանիկ կյանքը» վեպը: Ինչպես նրա մյուս ստեղծագործությունները, այնպես էլ այս վեպը նվիրված է Թուրքիայի լծի տակ հեծող քուրդ ժողովրդի կյանքին: Այս գրքում առանձնահատուկ տեղ է գրավում հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության թեման: Ինչպես հեղինակն է նշում, հակառակ թուրքական դաժան միջամտություններին, այդ բարեկամությունն աստիճանաբար ամրապնդվում էր:

1961 թ. այս վեպը Վահան Գրիգորյանի թարգմանությամբ լույս է տեսնում հայերեն, «Բախտի ճանապարհ» խորագրով, իսկ 1964 թ. նույն թարգմանչի նախաձեռնությամբ արդեն հրատարակվում է վեպի երկրորդ հատորը: Թարգմանիչը նշում է. «Վեպում ժողովուրդների բարեկամության հարցը, հատկապես հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության հարցը, դրված է առաջին պլանի վրա»:[124]

Հայ մտավորականների հոգատար վերաբերմունքի շնորհիվ, նրանց հովանու ներքո աստիճանաբար ձևավորվում է քուրդ գրողի աշխարհայացքը: Երբ իրաքյան Քյուրդիստանում բուռն վերելք էր ապրում քրդական ազգային շարժումը, «Հայաստան» հրատարակչությունը լույսընծայեց նրա «Դրմդրմ» հերոսական պատմավեպը, որը իրավամբ համարվում է առաջին պատմավեպը քրդական գրականության մեջ: Վեպում արտացոլված է քուրդ ժողովրդի հերոսական պայքարը Շահ Աբբասի դեմ:[125]

Հայաստանում լույս են տեսել նաև Շամիլովի գիտաքաղաքական թեմաներով գրված մի շարք աշխատությունները՝ «Ֆեոդալական հարաբերությունները Անդրկովկասյան քրդերի մեջ», «Հոկտեմբերյան հեղափոխությունը և քրդերը» և այլն:

Քաջածանոթ լինելով քուրդ ժողովրդի բառուբանին, նա այն լայնորեն օգտագործել է իր գեղարվեստական ստեղծագործություններում, ինչն, անշուշտ, դրական ազդեցություն է ունեցել քրդերեն գրական լեզվի զարգացման գործում:

Արաբ Շամիլովն իր ստեղծագործություններում և հոդվածներում մշտապես իր երախտագիտությունն է հայտնել հայ ժողովրդին, իսկ Հայաստանը համարել է իր երկրորդ հայրենիքը: Իր հոդվածներից մեկում, որը նվիրված էր Հայաստանի խորհրդայնացման տարեդարձին, նա գրել է. «Եվ այսօր հեռատարած հայացք ձգելով քուրդ ժողովրդի ծանր, իրավազուրկ անցյալի վրա և ի տես նրա երջանիկ ներկայի, ես ամբողջ սրտով կրկնում եմ. - Խոնարհվում եմ քո առջև, մեր հայրենիք՝ Խորհրդային Հայաստան»:[126]

Ինչպես արդեն վերը նշվեց, Շամիլովի ստեղծագործություններում արծարծվող հիմնական թեման հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունն է, որը մատուցվում է գեղարվեստական նուրբ ոճով: Այդ կապակցությամբ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը, որը շատ էր առնչվում քուրդ ժողովրդի մշակույթին, հաստատել է. «Արաբ Շամիլովը հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության երգիչ է եղել. բարեկամություն, որի արմատները գալիս են հայկական հինավուրց հողից»:[127]

Հայաստանում է ստեղծագործել քուրդ անվանի գրող, պրոֆեսոր Հաջիե Ջնդին: Թուրքական յաթաղանից մազապուրծ, ծնողներից զրկված փոքրիկ Հաջին ապաստան է գտնում Խորհրդային Հայաստանում: Նա մեծանում և կրթություն է ստանում մանկատանը, հայկական ջերմ միջավայրում: Այնուհետև 1929 թ. մանկավարժական տեխնիկումն ավարտելուց հետո մեկնում է քրդական գյուղեր, աշխատում որպես մանկավարժ: 1933 թվականին ավարտում է մանկավարժական ինստիտուտը և ընդունվում ասպիրանտուրա: Հայաստանում նա հնարավորություն է ստանում զբաղվելու քրդական ազգային մշակույթի ուսումնասիրությամբ: Երիտասարդ գիտնականն անմնացորդ նվիրումով տրվում է այդ պատվաբեր գործին: Նա «Ռյա թազա» թերթի պատասխանատու քարտուղարն էր, Հայաստանի գրողների միության քուրդ գրողների մասնաճյուղի նախագահը, դասավանդում էր քրդական Անդրկովկասյան մանկավարժական տեխնիկումում: Չնայած արդեն գոյություն ունեցող քրդական երկու այբբենարաններին, Հայաստանի Լուսժողկոմատից առաջադրանք է տրվում քրդական նորաստեղծ դպրոցների համար կազմել նոր այբբենարան և դասագրքեր: Եվ, ահա, 1933 թվականին լույս է տեսնում Հաջիե Ջնդու «Կարմիր դրոշ» խորագրով դասագիրքը առաջին խմբի համար:[128] Դրան հաջորդում է «Հարվածային կոլխոզնիկ-քրդերեն լեզվի այբբենարան մեծահասակների համար» դասագիրքը:[129] 1934 թ. Հ. Ջնդին կազմում է «Քրդերեն լեզվի դասագիրք երկրորդ տարվա համար» ձեռնարկը, որում արդեն զետեղվել էին ոչ միայն իր, Ամինե Ավդալի, Աֆաբե Շաոյի և մյուս քուրդ գրողների ստեղծագործությունները, այլև հայ գրողներ Ա. Վշտունու և Վ. Նորենցի քերթվածքներից թարգմանություններ, Ռուբեն Դրամիյանի, Սամսոն Գասպարյանի և Միրաքյանի քրդերեն գրված գործերը: Հայ գրողների ստեղծագործությունների տպագրումն իր դրական ազդեցությունն ունեցավ քրդական գրականության զարգացման վրա, նոր ուղիներ հարթեց հայ-քրդական գրական բազմակողմանի կապերի զարգացման համար և նպաստեց քուրդ երիտասարդ գրողների ստեղծագործական տաղանդի առավել ակտիվ դրսևորմանը: Բազմադարյան ավանդույթներ ունեցող հայ գրականությունը չէր կարող իր ազդեցությունը չթողնել նորաստեղծ քրդական գրականության վրա: Քուրդ գրողները քրդական բոլոր հրատարակվող գրքերում հնարավորինս փորձում էին առիթը բաց չթողնել և թարգմանաբար տեղադրել հայ գրողների ստեղծագործությունները: Գրքերի կազմման ու խմբագրման հարցում նրանց աջակցում էին անվանի հայ գրողներ, մանկավարժներ և գիտնականներ: Հ. Ջնդու կողմից կազմված հաջորդ «Քրդերեն լեզվի դասագիրք երրորդ դասարանի համար»[130] ձեռնարկում զետեղված են հայ նշանավոր գրողներ Հովհ. Թումանյանի, Ե. Չարենցի, Ս. Զորյանի լավագույն ստեղծագործությունները, ռուս դասականներ Գորկուց և Կռիլովից մի քանի գործեր: Նշենք, որ ռուս դասականներից թարգմանությունը նոր երևույթ էր քրդական գրականության մեջ և դա նույնպես իր բարերար ազդեցությունն ունեցավ քրդական

գրականության հետագա ձևավորման ու զարգացման վրա: Պատահական չէր, որ 1937 թվականին դասագիրքը վերահրատարակելիս հեղինակն ընդգրկել է մի շարք ռուս և հայ գրողների նոր ստեղծագործություններ, որոնք մի նոր բովանդակություն էին տալիս ձեռնարկին:[131]

1935 թ. քուրդ գրողներ Հ. Ջնդին, Ջ. Ջալիլը և Ջ. Գենջոն կազմում են «Քրդերեն լեզվի դասագիրք 6-րդ դասարանի համար»,[132] որում, պահպանելով հայ գրականության լավագույն ավանդույթները, նկարներով ու կենսագրականներով ներկայացված են քուրդ գրողներ Արաբ Շամիլովի, Հաջիե Ջնդու և Ամինե Ավդալի ստեղծագործությունները: Միաժամանակ այստեղ արդեն ընդգրկված են ավելի մեծ թվով ռուս և հայ գրողների ստեղծագործություններ (Հ. Թումանյան, Սիրաս, Վ. Թոլմովենց, Ն. Զարյան, Ս. Զորյան, Գ. Սարյան, Հ. Շիրազ, Խ. Աբովյան, Պ. Պռոշյան, Պուշկին, Գորկի, Լերմոնտով, Կոլցով):

Այդ թվականներին առավել մեծացել էր հայ-քրդերեն բառարանի պահանջարկը, որը կօգներ թարգմանական գրականության ծավալների մեծացմանը: Հայաստանի Լուսժողկոմատը հանձնարարեց հայ և քուրդ մտավորականներին զբաղվել այդ հարցով: 1933 թ. Հաջիե Ջնդին, Վ. Պետյանը, Ամինե Ավդալը և Ջարդոյե Գենջոն կազմում են «Հայ-քրդերեն բառարանը», որն ընդգրկում է 10 հազար բառ:[133] Բառարանը խմբագրել են հայերեն ու քրդերեն լեզուների հմուտ գիտակներ, քուրդ մշակույթի ջատագովներ՝ ակադեմիկոս Գ. Ղափանցյանը և պրոֆեսոր Ա. Խաչատրյանը: Պետք է երախտագիտությամբ նշել, որ սույն բառարանի նախաձեռնողները եղել են հենց այս երկու հայ լայնախոհ գիտնականները:

Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ քրդական մշակութային կյանքում դրական լուրջ քայլ էր հայ-քրդական բառարանների հրատարակումը: «Հայ-քրդերեն» բառարանը ստեղծվեց այն ժամանակ, երբ օրեցօր զարգացող քրդական գրականությանն անհրաժեշտ էին քրդերենի հարուստ բառապաշարին համահունչ օժանդակ ձեռնարկներ: Այդ տեսակետից առաջընթաց քայլ էր նաև 1957թ. Սովետական Միության հերոս, գրող Սամադ Սիաբանդովի և բանահավաք, գրող Արամե Ջաչանիի կողմից հայերեն-քրդերեն երկրորդ բառարանի կազմումը, որն ընդգրում էր շուրջ 25 հազար բառ:[134]

Հայաստանում քրդական գրականության զարգացման մասին է վկայում նաև 1953 թ. Հ. Ջնդու «Խորհրդային Հայաստանի քրդական գրականությունը» գրքույկի հրատարակումը,[135] որը ևս մի փորձ էր՝ գոնե համառոտակի պատկերելու Խորհրդային Հայաստանում ծնունդ առած քրդական նոր գրականության պատմությունը: Մեծ է եղել Հ. Ջնդու սերը հայ մեծանուն գրող Ավետիք Իսահակյանի նկատմամբ: Նա մտերիմ հարաբերությունների մեջ է եղել Վարպետի հետ: Նրանք հաճախակի են հանդիպել ու զրուցել երկու ժողովուրդների անցյալից ու ներկայից, լուսանկարվել են ի հիշատակ հայ և քուրդ ժողովուրդների հավերժ բարեկամության: Այդ նկարը պահվում

է Վարպետի թանգարանում: Եվ բնավ էլ պատահական չէ, որ Հ. Ջնդին Վարպետի այն ստեղծագործություններ, որոնցում արտացոլված են քուրդ ժողովրդի նիստուկացը, հատկապես հերոսական անցյալը, թարգմանել և, ի հավերժացումն մեծ բարեկամության, 1955թ. «Քուրդ Ամոն» խորագրով հրատարակել է առանձին գրքույկով: Քուրդ ժողովուրդն առաջին անգամ իր մայրենի լեզվով հաղորդակցվում էր մեծ Վարպետի աննման ժառանգությանը, ծանոթանում նրա տաղանդավոր գրչին: Ի դեպ, հարկ է նշել, որ հայերենի կատարյալ իմացությունը և ստեղծագործական հմտությունը թարգմանչին օգնել են հնարավորինս հարազատ մնալ բնագրին:

Հ. Ջնդին բազմաթիվ թարգմանություններ է արել նաև հայ և այլազգի նշանավոր գրողներից ու բանաստեղծներից: Ավելին, նա բազմաթիվ ստեղծագործություններ է նվիրել հայ ժողովրդին ու Հայաստանին, ժողովուրդների բարեկամությանը, որոնց կանդրադառնանք հաջորդ բաժնում: Նա ջանասիրաբար զբաղվել է նաև քրդական ժողովրդական բանահյուսության նմուշների հավաքմամբ: Տակավին 1936 թ. նրա և քուրդ գրող Ամինե Ավդալի նախաձեռնությամբ հավաքվում են քրդական բանահյուսության լավագույն նմուշները, և 40 մամուլ ծավալով հրատարակվում է «Քրդական ժողովրդական ֆոլկլորը» քրդերեն ժողովածուն: Այնուհետև Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը մեկը մյուսի հետևից հրատարակում է նրա կողմից հավաքված քրդական ժողովրդական բանահյուսության հինգ հատորները: Հ. Ջնդու կողմից կորստից փրկված քրդական ժողովրդական բանահյուսության պատառիկները մի քանի անգամ հրատարակվել են նաև հայերեն: Առավել հետաքրքրական է «Քրդական ժողովրդական վիպերգերը» ստվարածավալ աշխատությունը:[136] Նրա գրչին են պատկանում «Նոր առավոտ», «Քրդական ժողովրդական հեքիաթներ», «Քյոռո-Օղլին քրդական էպոսում» գրքերը, գրական մշակման է ենթարկել «Մամ ու Ջին» սիրային հերոսական վիպերգը:

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ու գրական ամրապնդվող կապերի վառ վկայություններից է 1963 թ. Հ. Ջնդու կողմից կազմված քրդերեն «Ծաղկեփունջ» խորագրով ժողովածուն,[137] որում զետեղված են հայ գրողներ Աբովյանի, Րաֆֆու, Թումանյանի, Իսահակյանի, Դեմիրճյանի, Զորյանի, Սիտալի, Սիրասի, Տարոնցու, Սարմենի, Շիրազի և այլ գրողների ստեղծագործություններն ու ասույթները, որոնք առնչվում են քրդերին: Անգնահատելիորեն շնորհակալ գործ է կատարել Հ. Ջնդին, ի մի բերելով, թարգմանելով և քուրդ ընթերցողներին հանձնելով այդ ստեղծագործությունները:

Ինչպես նշեցինք, երկար տարիներ զբաղվելով քրդական ժողովրդական բանահյուսության հավաքմամբ ու մշակմամբ, Հ. Ջնդին միևնույն ժամանակ ժողովրդական ստեղծագործության հարուստ գանձարանի պատառիկներն ուսումնասիրում, վերլուծում է գիտական տեսանկյունից: Հետաքրքրական է հատկապես 1963 թ. Հ. Ջնդու «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամութ-

յան արտացոլումը բանահյուսության մեջ» արժեքավոր աշխատությունը:[138] Անդրադառնալով երկու ժողովուրդների բանահյուսություններին, հեղինակը գրում է. «Տարբեր լեզվով խոսող և տարբեր դավանանքների պատկանող հայ և քուրդ ժողովուրդների բանահյուսական կապերն ու փոխհարաբերությունները գալիս են խորը հնությունից և շարունակվում են նաև մեր օրերում: Այդ երևույթն, անշուշտ, ունի իր արմատական պատճառները»:[139] Եվ այսպես, պատահական չէր, որ հայ մտավորականությունն ամեն կերպ ձգտում էր, որ քրդական բանահյուսությունը տպագրվի, այդպիսով այն փրկելով ոչնչանալուց:

Անվանի բանահավաք, ակադեմիկոս Արամ Ղանալանյանը, բարձր գնահատելով Հ. Ջնդու գործունեությունը բանահյուսության բնագավառում, հաստատել է. «Հաջիե Ջնդիի հետ ժողովրդական բանահյուսության նյութեր գրի առնելու նպատակով մենք շրջել ենք Հայաստանի հայաբնակ և քրդական մի շարք գյուղերում ... Ես առանձնապես բարձր եմ գնահատում Հաջիե Ջնդիի «Քրդական բանահյուսությունը», «Քրդական վիպերգերը» և «Քրդական ժողովրդական հեքիաթները» խորագրերով երեք ծավալուն գործերը, որոնցից առաջինը լույս է տեսել քրդերեն, երկրորդը ռուսերեն, երրորդը հայերեն: Վերոհիշյալ երեք գրքերն էլ քուրդ ժողովրդի հարուստ ու գունագեղ բանավոր ստեղծագործության տպագիր մնայուն առաջնեկներն են մեզանում, որոնք հիշեցնում են հայ բանահյուսության ռահվիրա և մեծ երախտավոր Գարեգին Սրվանձտյանցի «Գրոց և բրոցը», «Մանանան» և «Համով-հոտովը»:[140] Իսկ գրականագետ, պրոֆեսոր Հրանտ Թամրազյանը, գնահատելով Հ. Ջնդու գործունեությունը հայ-քրդական մշակութային կապերի ամրապնդման ասպարեզում, նշել է. «Անվանի գիտնական, գրող ու ֆոլկլորիստ Հաջիե Ջնդին իր ժողովրդի մշակութային պատմության մեջ հանրահռչակ է ... նա մեծ ինտերնացիոնալիստ է: Նա ի սրտե ոչ միայն իր ժողովրդի անգին գոհարներն է սիրել, այլ նաև իր եղբայր հայ ժողովրդին էլ է սիրել: Նա անկեղծ եղբայրական սիրով է մոտենում իր գործակից հայ գիտնականներին, մշակույթի մյուս ներկայացուցիչներին»:[141]

Անդրադառնալով նորաստեղծ քրդական գրականության ներկայացուցիչներին ու նրանց մշակութային գործունեությանը Հայաստանում, չենք կարող չնշել քուրդ գրող, ազգագրագետ, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ Ամինե Ավդալին: Տասնյակ հազարավոր քրդերի նման մազապուրծ լինելով թուրքական յաթաղանից, նա իր փրկությունը գտել է Հայաստանում: Միաժամանակ ապրելով Թբիլիսիում, նա իր հայ ուսուցիչ ու բարեկամ Լազոյի (Հակոբ Ղազարյան) հետ լծվում է քուրդ երեխաների դաստիարակության գործին: Հետագայում վերադառնում է Հայաստան, և հայ ժողովրդի ջերմ ընտանիքում նրա առջև գրական ու գիտական գործունեության լայն հնարավորություններ են բացվում:

Հայաստանում նա նվիրվում է քրդական նոր մշակույթի ստեղծմանն ու զարգացմանը: Լինելով մանկավարժ, նա հայ մտավորականության հետ

մեկնում է քրդական գյուղեր, զբաղվում մատաղ սերնդի դաստիարակությամբ, իսկ 30-ական թթ., հայ գրողների ու գիտնականների անմիջական օգնությամբ, սկսում է զբաղվել քուրդ ժողովրդի ազգագրությամբ ու գրականությամբ: Նա բազմաթիվ գիտական աշխատությունների, բանաստեղծությունների ժողովածուների, դասագրքերի հեղինակ է: Նրա վրա մեծ ազդեցություն են ունեցել հայ գրողների ու գիտնականների ստեղծագործությունները, ինչպես ինքն է ասում. «Ինձ ամենուր ոգեշնչում էին հայ մտավորականները»: Լինելով հմուտ մանկավարժ, նա կազմել է մի շարք դասագրքեր, որոնցից առավել ուշագրավը «Քրդերեն լեզվի դասագիրք չորրորդ խմբի համար» ձեռնարկն է:[142]

Դասագիրքն սկսվում է «Ինտերնացիոնալով», որը թարգմանել է Ամինե Ավդալը: Իհարկե, պետք է նշել, որ «Ինտերնացիոնալն» առաջին անգամ 1924 թ. քրդերեն է թարգմանել հայ մտավորական Վ. Մարտիրոսյանը:[143] Եվ դա պատահական չէր: Ձեռնարկը կազմված է ինտերնացիոնալիզմի սկզբունքով, հեղինակը ցանկացել է աշակերտների մեջ առաջին հերթին սերմանել բարեկամության ու ինտերնացիոնալիզմի, նաև՝ ժողովուրդների բարեկամության գաղափարները: Հենց այդ նպատակով էլ նա թարգմանել է մի շարք ռուս և հայ գրողների՝ Գորկու, Տուրգենևի, Թումանյանի, Զարենցի, Վ. Փափազյանի, Վշտունու և այլոց ստեղծագործությունները: Դասագրքում նաև զետեղված են քուրդ գրողներ Ա. Շամիլովի «Փոքրիկ հովիվը» և Հ. Ջնդու «Յայլան» պատմվածքները:

1934 թ. հրատարակվում է Ավդալի կազմած հաջորդ դասագիրքը՝ «Քրդերեն լեզվի դասագիրք 5-րդ խմբի համար»:[144] Այն սկսվում է Հակոբյանի «Մայիսի մեկի երգը» բանաստեղծությամբ: Հեղինակը նպատակադրվել է քուրդ աշակերտին ծանոթացնել հայ դասական ու ժամանակակից գրականությանը, ինչը նրան հաջողվել էր և, անշուշտ, իր դրական ազդեցությունն ունեցավ երեխաների գրական ճաշակի ձևավորման վրա: Քուրդ աշակերտն այս գրքով ծանոթանում է հայ նշանավոր գրողներ Թումանյանի, Զարենցի, Դարոնյանի, Զարյանի, Արազու և այլոց ստեղծագործություններին: Ամինե Ավդալի հեղինակությամբ նույն ձեռնարկի 1937 թ. վերահրատարակումից հետո առաջին անգամ Հայաստանում լույս է տեսնում նաև «Քրդերեն լեզվի մեթոդիկան»:[145]

Ավդալի գրչին են պատկանում «Մահմուդ բեկը և Մուսան», «Գյուլիզար», «Մամեն ու Զինեն», «Քուրդ կինը նահապետական ընտանիքում», «Անդրկովկասի քրդերի կենցաղը», «Քրդերեն ուղղագրական բառարան» և այլ գեղարվեստական ու գիտական գործեր: Իսկ նրա հայերեն լեզվով հրատարակված «Առաջին գարուն» բանաստեղծությունների ժողովածուն հայ-քրդական գրական կապերի նոր ու հետաքրքիր դրսևորումներից մեկն է:

Ամինե Ավդալը, ոգեշնչվելով հայ ազգագրության ավանդույթներով, դառնում է իր ժողովրդի լավագույն ազգագրագետներից մեկը: Նրա գրչին են պատկանում մի շարք գիտական լուրջ ուսումնասիրություններ, որոնց

մեջ իր ուրույն տեղն ունի «Անդրկովկասի քրդերի կենցաղը» աշխատությունը: Ամենե Ավդալի յուրաքանչյուր գործ ծնունդ է առել հայ մտավորականության, հայ մշակույթի գործիչների անշահախնդիր աջակցությամբ: Նրա ազգագրական բոլոր աշխատանքները խմբագրել են հայ գիտնականները, հատկապես պրոֆեսոր Դերենիկ Վարդումյանը, որը քրդական ազգագրության լավագույն գիտակներից է:

30-ական թվականներին գրական ասպարեզ է իջնում քուրդ գրող Ջասըմեն Ջալիլը: Նա ևս, փրկվելով թուրքական կոտորածից, իր հայ ընկերների հետ գաղթում է Հայաստան, սկզբում ապաստան գտնում Ալեքսանդրապոլի որբանոցում, իսկ հետագայում՝ Ջալալօղլիում: Հենց այստեղ էլ նա խորանում է հայոց լեզվի ուսումնասիրման մեջ, հետագայում Երևանում ստանում բարձրագույն կրթություն, աշխատում որպես Անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումի տնօրեն, քրդական ռադիոհաղորդումների ավագ խմբագիր, Հայպետհրատի քրդական գրականության բաժնի վարիչ:

Ասպարեզ իջնելու առաջին իսկ օրից Ջ. Ջալիլը մեծ աջակցություն է գտնում հայ գրողների կողմից: Իր իսկ՝ քուրդ գրողի խոստովանությամբ, իր գրական աշխարհայացքի ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել Ջարենցը, որն իր բարի ու անկեղծ խորհուրդներով օգնել և ուղղություն է տվել երիտասարդ քուրդ բանաստեղծին: Իսկ վերջինիս յուրաքանչյուր ստեղծագործությունում արտահայտված են նրա ջերմ զգացմունքները և անկեղծ սերը դեպի հայ ժողովուրդը: Դեռևս 30-ական թվականներին իր մի շարք հոդվածներում, որոնք տպագրվել են «Ռյա թազա» թերթում, նա անդրադարձել է քրդական մշակույթին, ցույց տվել հայ մշակույթի բարերար ազդեցությունը քրդականի վրա: Իր «Քրդական մանկավարժական տեխնիկումը աշխարհում միակն է» խորագրով հոդվածում նա այդ տեխնիկումը համարում է քրդական կադրերի դարբնոց, որը հայ մտավորականների օգնությամբ նոր ուղիներ է հարթում քրդական մշակույթի առջև:[146] Մի այլ հոդվածում նա անդրադառնում է հայ-քրդական մշակութային կապերի ամրապնդման ասպարեզում «Ռյա թազա» թերթի կատարած մեծ ու շնորհակալ աշխատանքին և իր երախտագիտական խոսքն ուղղում հայ ժողովրդին՝ քուրդ ժողովրդի առաջընթացի և մեծ նվաճումների համար:[147]

Ջ. Ջալիլը բազմաթիվ ժողովածուների հեղինակ է: Քրդական գրականության մեջ իրենց ուրույն տեղն ունեն նրա «Ալագյազ», «Իմ օրեր», «Քրդական սիրավեպեր» և այլ ժողովածուները: Նա կազմել է «Սովետական քուրդ գրողներ» խորագրով մի քանի ժողովածուներ, խմբագրել բազմաթիվ գեղարվեստական, քաղաքական ու մանկավարժական գրքեր, դառնալով քրդական նոր մշակույթի ամենանվիրյալ հիմնադիրներից մեկը:

Դեռ 30-ական թվականներին ուշագրավ են նաև Ջ. Ջալիլի կողմից կատարված թարգմանությունները: Նա քուրդ ընթերցողներին ծանոթացրեց Պուշկինի, Գորկու, Լերմոնտովի, Թումանյանի, Ջարենցի, Իսահակյանի և

այլ գրողների հրաշալի ստեղծագործություններին, որոնք անշուշտ դրական ներգործություն ունեցան նորաստեղծ քրդական գրականության հետագա զարգացման վրա: Դրանց նույնպես մենք կանդրադառնանք հաջորդ բաժնում:

Քուրդ բանաստեղծը խոր երախտագիտությամբ է հիշում մեծ լուսավորիչ, քուրդ ժողովրդի բարեկամ Խաչատուր Աբովյանին: Հեղինակը բանաստեղծական նուրբ խոսքով իր բարձր գնահատականն է տալիս քրդական մշակույթի ասպարեզում Աբովյանի կատարած քրտնաջան աշխատանքին, ևս մեկ անգամ հավաստելով քուրդ ժողովրդին ու նրա մշակույթին հայ մտավորականության անխոնջ զավակների նվիրվածության մասին:[148]

Սակայն հայ ժողովրդի հանդեպ բանաստեղծի անկեղծ սերն արտահայտված է «Իմ օջախը» բանաստեղծությունում, որում ընդգծված է այն միտքը, որ հայ ժողովրդի բարեկամական վերաբերմունքը զգալու համար անհրաժեշտ է ապրել նրա հայրենիքում, ապրել այն մեծ հոգու տեր ժողովրդի հետ, որը զգացել է բազմաթիվ չարաղանների հարվածը և այսօր, երջանկանալով բարեկամների շրջապատում, ինքն էլ քո ամենամեծ բարեկամն է: Պետք է շնչել հայոց հողի բուրմունքը, զգալ շրջապատի ջերմությունը, ամեն քայլափոխին քեզ ուղեկցող բարեկամությունը, և անխուսափելի է այն զգացողությունը, որ այդ հողը, այդ երկիրը դարձել է քո հայրենիքը: Այս բանաստեղծությունը լայն արձագանք է գտել ոչ միայն Հայաստանում, այլև սիյուռքահայության շրջանում և տպագրվել Նյու Յորքի հայկական առաջադիմական «Լրաբեր» թերթում:[149]

Ջ. Ջալիլի գրչին են պատկանում մի շարք քրդական դասագրքեր, հատկապես հիշատակության արժանի է «Գրական ընթերցանության դասագիրք 5-6-րդ դասարանների համար» ձեռնարկը, որը հրատարակվել է Երևանում 1955 թվականին և որում տեղ են գտել ոչ միայն քուրդ, այլև ռուս, հայ և եվրոպական գրողների ստեղծագործություններ: Ջասմե Ջալիլը գրել է նաև բազմաթիվ գրական ու հրապարակախոսական հոդվածներ, որոնցում կարևորված են ժողովուրդների բարեկամությունը և քրդական մշակույթի վերելքը Հայաստանում:

Հայաստանում գրական ասպարեզ իջավ ևս մի շնորհաշատ քուրդ գրող՝ Ջարդոե Գենջոն: Հարյուրավոր հայ ծնողակորույս մանուկների հետ գաղթելով Թուրքիայից, նա ընկնում է Աշտարակի որբանոցը, որտեղ էլ հայերեն լեզվով ուսում է ստանում: Նրա վրա մեծ ազդեցություն է ունենում հայ գրականությունը: Հետագայում, բանֆակում սովորելիս, արդեն ձևավորվում է նրա գրական աշխարհայացքը: Նա ծանոթանում է ոչ միայն հայ, այլև ռուս և եվրոպացի գրողների գործերին, սակայն նրան հարազատ են մնում հայոց լեզուն ու հայ մշակույթը: Նշենք, որ Հ. Քոչարը, երբ խմբագրում էր «Ռյա թազա» քրդական թերթը, տեսնելով Ջ. Գենջոյի գրական ունակությունները, տևապես քաջալերում էր նրան, օգնում և ուղղություն տալիս: Հե-

տագայում Քոչարի երաշխավորությամբ նա խմբագրում է «Ոյա թազան», որտեղ և ձևավորվում է Ջ. Գենջոյի գրական տաղանդը: Նա ոչ միայն կատարելապես տիրապետում էր հայերենին, այլև խորացել էր իր մայրենի լեզվի իմացության մեջ, դարձել գրական քրդերենի մշակման գործի հիմնադիրներից, որի պատմվածքներն ու ակնարկներն աչքի են ընկնում լեզվի ճկունությամբ և ճոխությամբ: Նա խմբագրել է բազմաթիվ գեղարվեստական ու դպրոցական դասագրքեր: Հետաքրքիր է 1935 թ. նրա, Հաջիե Ջնդու և Ջաբմե Ջալիլի կողմից 6-րդ դասարանի համար կազմված դասագիրքը, որը հայ և քուրդ գրողների ստեղծագործությունների մի յուրօրինակ ժողովածու է: Այստեղ երեք հեղինակների թարգմանությամբ զետեղված են Սիրասի «Մամեն ու Աշեն», Ն. Զարյանի «Տրակտոր», Վ. Թոլոյենցի «Բաքուն», Ս. Զորյանի «Զրհորի մոտ», Հ. Թումանյանի «Մարո», Գ. Սարյանի «Հաղթանակի երգը», Հովհ. Շիրազի «Սիաբանդ և Խաչե», Խ. Աբովյանի «Քեղխուրան» և այլ արձակ ու չափածո ստեղծագործություններ: Ժողովածուն ևս մեկ անգամ համոզիչ կերպով վկայում է հայ գրականության նկատմամբ քուրդ գրողների ցուցաբերած ջերմ զգացմունքները, նրա դերն ու նշանակությունը քրդական գրականության զարգացման գործում:[150]

Ջ. Գենջոն իր մի շարք պատմվածքներում ու ակնարկներում անդրադառնում է քուրդ ժողովրդի անցյալին ու Խորհրդային Հայաստանում նրա մի հատվածի վերածնմանը: Հետաքրքրական է «Նոր գյուղը» պատմվածքը, որտեղ հեղինակը նուրբ ու գեղեցիկ քրդերենով տալիս է Հայաստանում քրդական նոր գյուղի նկարագիրը, թե ինչպես քուրդն իր հայ բարեկամների հետ նոր գյուղի հիմքերն է դնում:

Ջ. Գենջոն զբաղվել է նաև թարգմանությամբ, թարգմանել ինչպես հայ, այնպես էլ ռուս և եվրոպական գրողների գործերից: Հետագայում, լինելով քրդական պետական թատրոնի դիրեկտոր, նա գրել է «Արնեղբայրներ», «Գիծության քույրը» պիեսները: Նա հայ երաժշտագետների ու բանահավաքների հետ մասնակցել է մի քանի արշավախմբերի, հավաքել քրդական ժողովրդական բանահյուսության պատառիկներ, հայ բանահավաքների ու երաժշտագետների համար թարգմանել լավագույն նմուշները:[151]

Քրդական մշակույթի երախտավորներից է Վազիրե Նադիրին: Նա ևս, մազապուրծ լինելով թուրքական յաթաղանից, իր երջանկությունը գտավ Խորհրդային Հայաստանում և անջնջելի հետք թողեց քրդական գրականության ու քրդական մշակույթի պատմության մեջ: Ավարտեց Երևանի հայկական և ռուսական մանկավարժական ինստիտուտները, այնուհետև դասավանդեց Երևանի պետական համալսարանում և քրդական մանկավարժական տեխնիկումում: Այդ թվականներին մեկը մյուսի հետևից ինչպես «Ոյա թազա» թերթում, այնպես էլ հանրապետության հայալեզու պարբերական մամուլում տպագրվում էին նրա բանաստեղծությունները, ակնարկները, հրապարակախոսական հոդվածները: 1935 թ. նա գրեց «Կնոջ առևանգու-

մը» պիեսը, որտեղ արտացոլված է հնի և նորի պայքարը, քուրդ ժողովրդի վերափոխված կյանքը Հայաստանում: Նույն թվականին Երևանում հրատարակվեց նաև նրա բանաստեղծությունների ժողովածուն «Նուբար» խորագրով, իսկ 1961 թվականին «Հայրենիք և սեր» ժողովածուն, որի մեջ զետեղված է հայրենական մեծ պատերազմին նվիրված «Նադո և Գյուլիզար» պոեմը:

Վ. Նադիրին ոչ միայն տաղանդավոր գրող էր, այլև շնորհալի գիտնական, տիրապետում էր մի քանի լեզուների, հատկապես պարսկերենին եւ թուրքերենին: Ինչպես գրականության մեջ, այնպես էլ գիտական գործունեության ընթացքում նա մեծ աշակցություն էր ստանում հայ մտավորականության կողմից: Ընդունվելով Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան, նա ակադեմիկոս Հ. Աճառյանի անմիջական ղեկավարությամբ աշխատում է «12-րդ դարի քուրդ բանաստեղծ Ահմադե Ջզիրու դիվանը» ատենախոսության թեմայի վրա: Նրա գրական աշխարհայացքի ձևավորման գործում մեծ ներդրում ունեցան Ա. Իսահակյանը, Մ. Շահինյանը, Հ. Քոչարը, Ս. Տարոնցին: Իսկ նրա և Իսահակյանի բարեկամական կապերին արդեն անդրադարձել ենք, որոնք նույնպես իրենց դրական ներգործությունն են ունեցել քուրդ գրողի հայացքների ձևավորման վրա:

Միքայելե Ռաշիդը այն քուրդ գրողներից էր, որոնք իրենց ստեղծագործական ուղին սկսել են հայոց տառերով ու հայոց լեզվով, որն էլ բախտորոշ նշանակություն է ունեցել նրանց գրական աշխարհայացքի ձևավորման համար: Քուրդ բանաստեղծ, գրականագետ ու թարգմանիչ Մ. Ռաշիդն իր «Հայերեն լեզվով» բանաստեղծության մեջ երախտագիտության խոսք է ուղղել հայ ժողովրդին ու հայոց լեզվին:

Եվ ոչ միայն Մ. Ռաշիդը, այլև բոլոր մյուս քուրդ գրողները, ջերմ ընդունելություն գտնելով Հայաստանում, իրենց մի շարք ստեղծագործություններում այն համարել են իրենց երկրորդ հայրենիքը: Հայ ժողովրդի կողմից ջերմ վերաբերմունքի ու հոգատարության զրսևորումը բարեկամության սիրով է տոգորել բանաստեղծին և նա գրել է.

Աչքում գիշերներ, կախուռ սիրածիս,
Աչցնում եմ մենակ, քնած պարտեզով,
Եվ սիրո մի երգ հալված շուրթերիս
Դողդողում է հին հայերեն լեզվով:

Թեպետ օրոցքից մայրս կիսաբթում
Օրոր չի երգել հայերեն լեզվով,
Բայց երբ ինքնուրույն քայլեցի քանում,
Ինձ կանչում էին հայերեն լեզվով:

Թեպետ ուրիշ է մայրենի լեզուս՝
Լացի պես հուզող, շաքթի պես կիզուն,
Բայց հարազատ է քրդական հոգուս,
Արևամման, բորք հայոց լեզուն:

Կյանքի համայքը հիմա իմ սրտում,
Ու գերված վաղվա անգուսպ երազով,
Ես ռուսաց լեզվի օվկիանն եմ մտնում,
Իմ քաղցրաբարբառ հայերեն լեզվով:[152]

Գրող Հ. Քոչարը, անդրադառնալով Մ. Ռաշիդի այս բանաստեղծությանը, հաստատել է. «Երբ կարդում ես այս տողերը, հաստատապես հավատում ես, որ այսպիսի մարդը չի մոլորվի դեպի ապազան տանող ճանապարհների վրա: Եվ մտածում ես միևնույն ժամանակ, այո՝ այս ժողովուրդը, որն ունի այսպիսի պայծառ մտքի և գիտակցության տեր զավակներ, որոնց մեջ հայրենասիրությունն ու եղբայրության զգացմունքներն այսպես ոսկեձույլ են, չի կորչի երբեք և անպայման կգտնի ինքն իրեն ... Ապրող, աճող ու բազմացող ժողովուրդ է քուրդ ժողովուրդը: Նրա ասպետական հատկությունները բազմապատկվում և առավել գեղեցկանում են ժողովուրդների զարթոնքի մեր պատմական ժամանակներում»:[153]

Մ. Ռաշիդը հեղինակ է բանաստեղծությունների մի քանի ժողովածուների, որոնցից առաջինը հայերեն լեզվով, «Հայրենի ճամփաներով» խորագրով տպագրվել է 1958թ. Երևանում: Այս ժողովածուում հեղինակը բազմաթիվ բանաստեղծություններ է նվիրել Հայաստանին, հայ ժողովրդին, Երևանին և հայկական հողում քուրդ ժողովրդի վերածննդին: Հատորը, որն արժանացավ հայ գրաքննադատների ու ընթերցողների բարձր գնահատականին, 1960թ. «Հայրենի ճամփաների վրա» խորագրով հրատարակվեց նաև ռուսերեն Մոսկվայում: Բանաստեղծը պարզ ու անպաճույճ քրդերենով հեղինակել է նաև մի շարք այլ ժողովածուներ:

Քուրդ երիտասարդ շնորհալի բանաստեղծ Ալիխանե Մամեն նույնպես իր ստեղծագործական առաջին քայլերն արել է հայերեն լեզվով: Նրա բանաստեղծությունները, ակնարկները, նովելները հաճախակի են տպագրվում հանրապետության մամուլի էջերում: Նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն «Կենաց ծով» խորագրով տպագրվել է հայերեն Երևանում 1983 թ.: Նա նույնպես իր սրտի խոսքն է ուղղել հայ ժողովրդին, հայոց լեզվին, որն իր համար երջանկության ուղի է բացել: Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությանը նվիրված իր մի բանաստեղծությունում, նա գրել է.

Ես ծնվել եմ Հայաստանում,
Խռիսհաբռուստ այս ռատանում,
Վիպերգական լեռների մեջ,
Ուր վառվում են աստղերն աննշեջ:

Ինձ օրոր է մայրս ասել,
Արագածի զմրուխտ լանջին,
Ու այնտեղ եմ աչքս բացել,
Հյուսել երգս իմ առաջին:

Լույսի շեմից կյանք եմ մտել
Մտքի ջահը իմ վառելով,
Ու իմ բախտի ճամփան գտել
Հայոց լեզվով ու տառերով:

Մի զանգակ եմ ես քրդերեն,
Բայց հայերեն լեզվակ ունեմ,
Պիտ դողանջեմ հավերժորեն,
Սիրտս բացած Մասիսի դեմ:

Քուրդ արձակագիր Նադո Մախմուդովը, որը երկար տարիներ աշխատել է Հայաստանի կուսակցական ու խորհրդային մարմիններում, եղել շրջանային կուսկոմիտեի առաջին քարտուղար, նախարար, բազմիցս ընտրվել ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների պատգամավոր, իրեն նվիրել է հայ-քրդական մշակութային կապերի ամրապնդմանը: Խորհրդային Հայաստանում նա էր, որ առաջին անգամ հայերեն լեզվով գրեց քուրդ ժողովրդի պատմությունը:[154]

Հանրապետության մամուլի էջերում տեղ են գտել Ն. Մախմուդովի գողտրիկ պատմվածքները, որոնց հիմնական թեման հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունն է: 1964 թ. լույս ընծայված նրա պատմվածքների ժողովածուն, այնուհետև՝ «Փոքրիկ Դուաժոն» հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության գեղարվեստական դրսևորման վառ օրինակներ են: Ժողովածուում զետեղված «Սպիտակ ձիավորը», «Փոքրիկ Դուաժոն», «Զանգերը ղողանջում են» և «Իմ բարի վարժուհին» պատմվածքներում պատմվում է հեղինակի ծանր ու դառը անցյալի, հայ ժողովրդի կողքին փրկություն գտնելու մասին: Իսկ «Փոքրիկ Դուաժոն» Մոսկվայում հրատարակվեց նաև ռուսերեն:[155] Նադո Մախմուդովը Հայաստանում զորավար Անդրանիկի մասին գրող առաջին մտավորականներից մեկն էր: Անդրանիկին նվիրված «Սպիտակ ձիավորը» պատմվածքում երևում է զորավարի անկեղծ ու ջերմ վերաբերմունքը քուրդ ժողովրդի հանդեպ:

1971 թ. «Հայաստանի գրող» հրատարակչությունը հայերեն լույս ըն-

ծայեց Ն. Մախմուդովի «Մարած օջախները ծխացին» գրքույկը, որը նույնպես հայ և քուրդ աշխատավորների բարեկամության վառ ապացույցներից է: Գրող Վ. Գրիգորյանը, անդրադառնալով այս գրքին, այն անվանել է «Գիրք ժողովուրդների բարեկամության»:[156]

Խորհրդային քրդական գրականության մեջ աննախադեպ երևույթ էր քրդուհի գրողի հանդես գալը: Սիմա Սամանդը, ավարտելով Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, նվիրվեց քրդական մշակույթին. աշխատեց ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում, զբաղվեց քրդագիտության հարցերով: Այնուհետև 40 տարուց ավելի աշխատեց քրդական ռադիոհաղորդումների խմբագրությունում: Նրա գրչին են պատկանում պատմվածքների երեք ժողովածուներ, բազմաթիվ գրականագիտական հոդվածներ: Նրա «Խազալ» խորագրով պատմվածքների ժողովածուն վերահրատարակվել է նաև Շվեդիայում: Նա ԽՍՀՄ գրողների և ժուռնալիստների միության, ինչպես նաև «Pen Club»-ի անդամ է: Քրդերեն գրված նրա ստեղծագործությունները թարգմանվել են հայերեն, ռուսերեն, արաբերեն:

Քրդական նորաստեղծ գրականության զարգացմանը մեծապես նպաստեց 1932 թ. Հայաստանի պետական հրատարակչությունում ստեղծված քրդական գրականության հրատարակման բաժինը, որը տարեկան հրատարակում էր հազարավոր տպաքանակով 30-ից ավելի անուն գրականություն: Միայն 1934 թվականին Հայաստանի Կենտգործկոմի որոշմամբ հրատարակվել է 40 անուն քրդական գրականություն: Եթե 1924 թվականին տպագրվել էր ընդամենը 2 անուն քրդերեն գիրք, ապա 1936 թվականին արդեն՝ 150 անուն գեղարվեստական, մասնագիտական, մանկավարժական, քաղաքական և այլ տիպի գրականություն: Քրդական գրականության բաժնին աջակցում էին հայ գրողներ Ե. Չարենցը, Հր. Քոչարը, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը և ուրիշներ: Հրաչյա Քոչարն այս առթիվ «Ռյա թազա» թերթի 1934 թ. N58-ում նշում է. «Մենք այսուհետև պետք է լայն հնարավորություններ ստեղծենք քրդական գրականության հրատարակման համար, իսկ քուրդ գրողները, գիտնականները պետք է հանդես գան բարձրարժեք գործերով»:

1932 թվականին Երևանում Հայաստանի գործադիր կոմիտեին կից հիմնադրվեց քրդական տերմինաբանական հանձնաժողով, որում ընդգրկված էին վեց քուրդ մտավորականներ հայ գիտնականներ: Նրանց ջանքերով ամեն տարի ստեղծվում էին նոր տերմիններ, որոնք հրատարակվում էին ինչպես առանձին գրքույկով, այնպես էլ «Ռյա թազա» թերթում: Հատուկ ուշադրություն էր դարձվում քրդական հնարավորինս մաքուր գրական լեզվի ձևավորմանը:

Թուրքիայի քուրդ առաջադեմ գրող Օմար Պոլատը, որը մի շարք վեպերի ու վիպակների հեղինակ է, քաջատեղյակ է ոչ միայն քուրդ ժողովրդի, այլև հայ ժողովրդի պատմությանը: Նա խորապես ուսումնասիրել է երկու ժողովուրդների փոխհարաբերությունները, նրանց բարեկամական կապերը,

բանահյուսությունն ու կենցաղը: «Mahmude ile Harel» և «Saraqul» վեպերում նա ցույց է տվել, որ հայ- քրդական բարեկամությունը գալիս է դարերի խորքից: Տիրապետելով հայերենին, գրողն իր «Saraqul» վեպում օգտագործել է հայկական բանահյուսության այն նմուշները, որոնք ինչպես հայերի, այնպես էլ քրդերի մեջ հավասարապես երգվել են երկու լեզուներով:[157] Եվ քանի որ վեպը գրված է թուրքերեն, հեղինակը տվել է նաև այդ նմուշների թուրքերեն թարգմանությունը:[158] Վեպը մի նոր և յուրատեսակ ներդրում է հայ-քրդական մշակութային կապերի պատմության մեջ: Այդ վեպն արժեքավոր է նաև այն առումով, որ գրվել է թուրքական բռնատիրության աներևակայելի ծանր ժամանակներում:

Իրանի քուրդ լեզվաբան-փիլիսոփա դոկտոր Մուքրիին մշտապես հետաքրքրել են հայ-քրդական մշակութային կապերը, հատկապես գրականությանն առնչվող հարցերը: Նա տիրապետել է ինչպես աշխարհաբարին, այնպես էլ գրաբարին: «Փյունիկ» թերթի թղթակիցը վկայում է, որ երբ Մուքրին լսել է իր ազգանվան վերջին՝ «յան» վերջածանցը, մի գրություն է տվել նրան, որում գեղեցիկ հայերենով գրված էր՝ «Հայ ես», այնուհետև նրանց միջև ջերմ զրույցը շարունակվել է:[159] Քսանհինգ տարի ապրելով վտարանդության մեջ, քուրդ մտավորականը գիտական հետազոտություններ է արել, հատկապես զբաղվել հայոց լեզվի ուսումնասիրությամբ: Որպես Սորբոնի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի դասախոս, նա առավել խորությամբ է զբաղվել հայ-քրդական մշակութային կապերի ուսումնասիրությամբ:[160] Քաջատեղյակ լինելով հայ ժողովրդի ազատագրական պայքարի դրվագներին, կատարել է թարգմանություններ հայ անվանի բանաստեղծ Եղիշե Չարենցի ստեղծագործություններից: Նրա աշխատությունների շարքում առավել արժեքավորը «Հայաստանը քրդական ժողովրդական բանահյուսության մեջ» երկն է: «Փյունիկի» թղթակից Լազարյանը նշում է Մուքրիի մեծ հայասեր լինելու մասին, վկայում, որ նա խորին հարգանքով էր խոսում Հայաստանի և հայ մտավորականության մասին:[161]

Ինչպես ընդհանրապես քրդական գրականության առաջընթացին, այնպես էլ հատկապես հայ-քրդական գրական կապերի զարգացմանը մեծապես նպաստեց 1930 թվականի մայիսին Հայաստանի պրոլետ գրողների ասոցիացիային կից կազմակերպված քուրդ գրողների մասնաճյուղը, որի նախագահ ընտրվեց և շուրջ երեք տասնամյակ ղեկավարեց Հ. Ջնդին: Իսկ այժմ, արդեն չորս տասնամյակից ավելի, այն ղեկավարում է տողերիս հեղինակը, որն իր ողջ գիտական և գրական գործունեությունը նվիրել է հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությանը, մշակութային կապերին, քրդական գրականության զարգացմանը: Մասնաճյուղը քրդերեն հրատարակել է հարյուրավոր գեղարվեստական, մասնագիտական, մանկավարժական և այլ գրքեր: Տողերիս հեղինակի նախաձեռնությամբ ինը հատորով տպագրվել է քուրդ գրողների ալմանախը, որը հենց ինքն է կազմել և խմբագրել:

Հայ գրողները բազմիցս են հանդես եկել քուրդ աշխատավորների հա-

վաքներում, հատկապես մասնակցել քուրդ գրողների մասնաճյուղի նիստերին, ընթերցել իրենց ստեղծագործությունները, ներկայացրել գրականության վերաբերյալ իրենց խոհերը, օգնել քուրդ երիտասարդ գրողներին, ուրախացել նրանց հաջողություններով։ Նրանք հատկապես կարևորել են երկու ժողովուրդների ազգային մշակույթների մերձեցումը, միմյանց ավելի մոտիկից ճանաչելը, գրական գործերին ծանոթանալը։

Քուրդ գրողների մասնաճյուղի ցանկալի հյուրերն են եղել Ավ. Իսահակյանը, Ստ. Զորյանը, Դ. Դեմիրճյանը, Հր. Քոչարը, Ս. Խանզադյանը, Սարմենը, Վ. Պետրոսյանը, Մ. Սարգսյանը, Պ. Ջեյհունցյանը, Կարենցը և ուրիշներ։ Բնականաբար, այդ հանգամանքը նպաստել է հայ և քուրդ ժողովուրդների մշակութային, հատկապես, գրական կապերի ամրապնդմանը։

Հայաստանում քրդական գրականության նման առաջընթացը դուրս եկավ ազգային նեղ շրջանակներից, լայն ճանաչում ստացավ և իր դրական ազդեցությունն ունեցավ համայն քրդական գրական-մշակութային զարգացումների վրա։

Դ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՀԱՐՍՏԱՑՆՈՒՄ Է ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրության մեջ քննարկվող հարցերի շրջանակում արդեն անդրադարձել ենք, որ քրդական թարգմանական գրականության հիմքերը դրվել են Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին։ Մենք փաստական հարուստ աղբյուրների հիման վրա անդրադարձել ենք այդ ժամանակահատվածում հայ մտավորականության ներդրած մեծ ավանդի մասին։ Սակայն խորհրդային տարիներին արդեն հայ մտավորականության կողմից կատարված գեղարվեստական բարձրարժեք թարգմանությունները որակական մի նոր մակարդակի հասցրին քրդական մշակութային գրականությունը։ Պատահական չէ, որ Շիրվանզադեն թարգմանությունը համարում է հասարակական զարգացման զորեղ տարրերից մեկը։[162] Հայտնի իրողություն է, որ թարգմանական մշակույթի բաղադրիչ մասն է կազմում լեզվի բացահայտ իմացությունը, ազգային առանձնահատկությունների ընկալումը, որը օգնում է պահպանել բնագրի թե՛ գաղափարական, բովանդակային կողմը և թե՛ գեղարվեստական արժանիքները։ Պետք է նշել, որ թարգմանությունը մշակութային հաղորդակցության կարևոր ձևերից մեկն է։ Իհարկե, թարգմանության գործում մեծ դեր են խաղում նաև մանկության տարիներին լսած ժողովրդական պատումները։ Շատ կարևոր է նաև քերականական կանոնների իմացությունը, որոնց միջոցով ապահովվում է ճշգրիտ թարգմանությունը։

Հայ մտավորականներից շատերը, գերազանց տիրապետելով լեզվին, օժտված լինելով լեզվական, ազգային առանձնահատկությունների ընկալ-

ման ունակությամբ, ջանք չէին խնայում քրդական գրականության լավագույն գոհարները բնագրին համարժեք թարգմանելու գործում։ Ինչպես արդեն նշել ենք, Հր. Քոչարը, երկար տարիներ ապրելով քրդերի մեջ, գերազանց տիրապետել է քրդերենին, որը և հիմք է հանդիսացել նրա բարձրորակ թարգմանությունների համար։ Առաջին անգամ 1931 թ. Քոչարի թարգմանությամբ թերթում տպագրվում է Հովհ. Թումանյանի «Գութանի երգը», այն թարգմանված է պարզ ու անպաճույճ քրդերենով, հայ մեծ դասականի շնչին ու ոգուն հարազատ։ Այս թարգմանությունը մի նոր ստեղծագործական ճանապարհ բացեց ինչպես հայ, այնպես էլ քուրդ գրողների առջև։ Հարկ է փաստել, որ հայերենից քրդերեն թարգմանությունների նախաձեռնողները կրկին քրդախոս հայ մտավորականներն էին։ Իսկ 30-ական թվականներին «Ռյա թազա» թերթը դարձավ թարգմանական գործի նախաձեռնողներից առաջինը։ Նրա էջերում էին նաև տպագրվում հայ և քուրդ գրողների լավագույն ստեղծագործությունները։

1932 թ. պրոֆեսոր Հ. Հարությունյանի թարգմանությամբ «Ռյա թազայում» լույս տեսավ Ա. Բակունցի «Մուրոյի զրույցը»,[163] որը աշխուժություն մտցրեց նոր -նոր ասպարեզ իջնող քուրդ գրողների շրջանում, նպաստեց նրանց արձակի զարգացմանը։ Նույն թվականին Հ. Ջնդու և Ա. Ավդալի թարգմանությամբ, պարզ, թումանյանական ոճին համահունչ քրդերենով, առանձին գրքույկով լույս է տեսնում «Գիքորը», որ լայն ընդունելություն է գտնում քուրդ ընթերցողների կողմից։ Ռուբեն Դրամփյանը, լինելով «Ռյա թազա» թերթի թարգմանիչը, հաճախ էր հանդես գալիս գեղարվեստական գործերի թարգմանություններով։ Քրդերենին լիարժեք տիրապետելն օգնում էր պահպանել թարգմանվող ստեղծագործությունների շունչն ու ոգին։ 1933թ. Ռ. Դրամփյանը թարգմանում է Չարենցի «Լենինն ու Ալին» պոեմից մի հատված և տպագրում «Ռյա թազա» թերթում,[164] մեկ տարի անց նա թարգմանում է Թումանյանի «Անուշ» պոեմը, որի խմբագիրներից մեկն էլ եղել է Հր. Քոչարը։ 1935 թ. նա թարգմանում և հրատարակում է Լ. Ն. Տոլստոյի «Պատմվածքներ կենդանիների մասին» ժողովածուն, որում ընդգրկված են 19 պատմվածքներ։ Այս գործերի թարգմանությունը և քուրդ մանուկներին դրանք մատուցելը նորություն էր քրդական մշակույթում։

1932 թ. Հայպետհրատը լույս ընծայեց քուրդ գրողների «Առաջին ստեղծագործությունները» խորագրով ժողովածուն։[165] Չնայած գրանում ընդգրկված գործերը գրական վարպետության, նաև քերականական առումով բարձրարժեք չէին, այնուամենայնիվ, ազատ թարգմանություններ էին և աննախադեպ էին քրդական գրականության մեջ, քանի որ քուրդ գրողներն առաջին անգամ էին հանդես գալիս ինքնուրույն թարգմանական ստեղծագործություններով։ Հետաքրքիրն այն էր, որ քուրդ ընթերցողների կողմից մեծ արձագանք էին գտել Չարենցի ստեղծագործությունները, և պատահական չէր, որ ժողովածուում առաջին անգամ էր ամբողջական տեքստով Ա-

մինե Ավդալի թարգմանությամբ տպագրվում Չարենցի «Լենինն ու Ալին», ներկայացված էր նաև Ազատ Վշտունու «Ուխտը»: 1933 թ. Հ. Ջնդին թարգմանում է Չարենցի «Կոլտնտեսականի երգը»: «Լենինն ու Ալին» պոեմի երկրորդ թարգմանությունը կատարել է Ջաամե Ջալիլը և հրատարակել «Գրական ընթերցանություն» դասագրքում: Հետագայում բանաստեղծներ Միքայելե Ռաշիդը և Սահիդե Իբոն Չարենցի պոեմը ներկայացրել են առանձին գրքույկով: Չարենցից քրդականացվել են նաև «Համայնական արտերի սերմնացանները», «Ընկերները», «Հոկտեմբերին» և այլ ստեղծագործություններ:

«Ռյա թազա» թերթի աշխատակից և քրդական գրքերի խմբագիր ու սրբագրիչ Գարեգին Հակոբյանը քրդերեն լեզվով թարգմանել է մի շարք ստեղծագործություններ: Առաջին անգամ 1933 թ. նա թարգմանել է Հ. Թումանյանի «Շունն ու կատուն», որը տպագրվել է «Ռյա թազա» թերթում և մեծ հետաքրքրություն առաջացրել ընթերցողների, հատկապես քուրդ դպրոցականների շրջանում: Նույն թվականին Հ. Ջնդին թարգմանել է Թումանյանի «Ճախարակ» բանաստեղծությունը, որը նույնպես տպագրել է «Ռյա թազա» թերթում:

Քրդերեն թարգմանությունները, որոնք վկայում էին հայ գրականության և հայ գրողների հանդեպ քուրդ գրողների խորին հարգանքի ու սիրո մասին, աստիճանաբար նոր որակ էին ստանում: Ըստ որում, 1934 թվականը կարծես շրջադարձային եղավ քրդական թարգմանական գրականության համար այն առումով, որ Հ. Ջնդին, Ա. Ավդալը և Ջ. Ջալիլը, ի տարբերություն իրենց ժամանակակից այլ գրողների, քրդալեզու գրականության էջերում ընդգրկում էին հայ դասական գրականության բազմաթիվ ներկայացուցիչների:

Եվ, վերջապես, ամենակարևորն այն էր, որ 30-ական թվականներին ինչպես հայ դասականների, այնպես էլ ժամանակակից շատ գրողների գործեր քրդերեն թարգմանություններով ընդգրկվեցին դպրոցական դասագրքերում, ինչի մասին արդեն նշել ենք համապատասխան բաժնում:

Քրդական թարգմանական գրականության մեջ իրենց ուրույն տեղն ունեն հայ մեծանուն բանաստեղծ Հ. Թումանյանի ստեղծագործությունները: Թումանյանի արվեստը որքան ազգային է, նույնքան էլ համամարդկային ու հոգեհարազատ բոլոր ժողովուրդների համար: Սակայն պետք է նշել, որ Թումանյանը հատկապես սրտամոտ է քուրդ ժողովրդին թե՛ իր ստեղծագործության ժողովրդականության շնորհիվ և թե՛ այն պատճառով, որ դեռևս 1902 թ. նա մշակել է քրդական ժողովրդական «Հոգեհանգը» լեգենդը, այն վերածելով չափածոյի:[166] Թումանյանը քուրդ ժողովրդի կյանքը, նրա սխրանքները գեղեցիկ ոճով ներկայացրել է նաև իր «Լեռների հովիվը» պատմվածքում, իսկ «Գրազը» պատմվածքում անդրադարձել է հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությանը: Հայտնի է նաև, որ մեծ գրողն իր «Թմկաբերդի առումը» պոեմի նյութը վերցրել է Երվանդ Լալայանի կողմից

Ջավախքի քրդերի շրջանում հավաքված նյութերից: Ինչպես վերը նշվեց, Հ. Թումանյանը մեծ հետաքրքրություն է դրսևորել քրդական հարուստ բանահյուսության նկատմամբ և հայ գրողներին ոգեշնչել զբաղվելու բախտակից ժողովրդի այդ անգին գոհարով: 1910 թ. Ղ. Աղայանի և Վրթ. Փափազյանի հետ նա կազմում է հայկական քրեստոմատիա, որում ընդգրկված է նաև «Սիաբանդ և Խաչե» քրդական վիպերգի Գ. Սրվանձտյանցի կողմից մշակված տարբերակներից մեկը:[167]

Նա բազմիցս է եղել քրդերի մեջ, ծանոթացել նրանց կենցաղին, քրդերի ու հայերի ջերմ կապերի ականատեսը եղել: 1914-1915 թթ. գտնվելով Արևմտյան Հայաստանում և շրջագայելով Ալաշկերտի, Վանի և Սարիղամիշի նահանգներում, նա ավելի մոտիկից է ծանոթանում քուրդ ժողովրդին, ականատես լինում հայ-քրդական հակաթուրքական հերոսամարտերին: Քուրդ ժողովրդի հանդեպ նրա ջերմ վերաբերմունքի մասին է վկայում այն իրողությունը, որ երբ ռուս գրող Ս. Գորոդսկին 1916 թ. Թումանյանի որդու՝ Արտավազդի հետ մեկնում է Վան՝ որբերին հավաքելու, հայ մեծ գրողը խնդրում է նրանց. «Ջմոռանաք քուրդ երեխաներին, նրանք էլ մեզ նման անտեր են»: Եվ հենց այդ խնդրանքից հետո էր, որ մեծ թվով քուրդ երեխաներ հայ որբերի հետ բերվեցին Հայաստան:[168]

Ավելացնենք, որ Թումանյանը Թիֆլիսում 1920 թ. մի քանի անգամ եղել է Լազոյի (Հակոբ Ղազարյանի) նախաձեռնությամբ բացված քուրդ որբերի դպրոցում, հետաքրքրվել սանների կյանքով, դպրոցն էլ մեծ բանաստեղծի պատվին հաճախակի կազմակերպել է երեկոներ, որոնց ժամանակ քուրդ երեխաները հանդես են եկել նրա ստեղծագործություններով, առաջին անգամ քրդերեն լեզվով հնչել են Լազոյի թարգմանությամբ Թումանյանի ստեղծագործությունները:[169]

Թերևս Թումանյանի հումանիզմով, նրա որոշ ստեղծագործություններում առկա քրդական բառուբանի շնչով, ազնիվ ու անկեղծ հոգու ջերմությամբ է պայմանավորված քուրդ ընթերցողի սրտաբուխ սերը նրա հանդեպ: Թումանյանն իր համամարդկային բնույթի ստեղծագործությամբ հարստացրել է խորհրդային քրդական մշակույթի գանձարանը և իր հաստատուն տեղը զբաղեցրել այնտեղ: Մեծ գրողի ստեղծագործությունների թարգմանության հիմնական նախաձեռնողներից էր Ջաամե Ջալիլը: Նա թարգմանել ու «Ռյա թազա» թերթում տպագրել է «Չարի վերջը», «Թագավորն ու չարչին», «Ճամփորդը», «Գաբո բիծու շերամապահուհին», «Անիծված հարսը», «Մարոն» և այլ ստեղծագործություններ:[170] Ջ. Ջալիլն այնուհետև առանձին գրքույկներով հրատարակում է Թումանյանի գործերը, որոնցից հատկապես աչքի են ընկնում «Գաբո բիծու շերամապահուհին» և «Քաջ Նազարը»: Հետագայում, ժողովելով Թումանյանից կատարած իր բոլոր թարգմանությունները, քուրդ գրողը դրանք հրատարակում է առանձին գրքով, որում ընդգրկված են 23 ստեղծագործություններ:[171] Դա նորություն էր քրդական նորաստեղծ գրականության մեջ և, բնականաբար, իր դրական

ազդեցությունն ունեցավ վերջինիս զարգացման գործում:

Թումանյանի 100-ամյակի տոնակատարությունը մեծ ցնծությամբ ընունվեց ողջ Խորհրդային Միության ժողովուրդների կողմից: Այդ առթիվ քուրդ գրողներն առանձին ժողովածուով հրատարակեցին Թումանյանի 38 ստեղծագործություն:[172] Առաջաբանում, արժանավոյնս գնահատելով Թումանյանի ստեղծագործություններն ու դրանց դերը քրդական գրականության զարգացման գործում, գրականագետ Ամարիկե Սարդարը գրել է. «Այս ժողովածուն, որը մեծ հումանիստ բանաստեղծի 100-ամյակի կապակցությամբ է տպագրվում, թող դառնա այն մեծ հարգանքի հավաստիքը, որը քուրդ ժողովուրդը տածում է դեպի եղբայրական հայ ժողովրդի մեծ բանաստեղծը»:

Տոնախմբության օրերից մեկ տարի անց Հ. Ջնդու թարգմանությամբ հրատարակվեց քուրդ աշակերտին ու ուսուցչին չափազանց հարազատ Թումանյանական 23 ստեղծագործություններից կազմված մեկ այլ ժողովածու՝ «Մի կաթիլ մեղրը» խորագրով: Թարգմանիչն առաջաբանում նշել է, որ այն հրատարակվում է Երևանի համալսարանի քրդագիտական բաժնի ուսանողների համար և նվիրվում է ինչպես այդ բաժնի ուսուցիչներին, այնպես էլ քրդական մշակույթի հետագա զարգացմանը:[173]

Քրդական թարգմանական գրականության մեջ իրենց արժանի տեղն են գրավում Իսահակյանի ստեղծագործությունները, որոնցից շատ-շատերը տպագրվել են «Ռյա թազա» թերթում և հաղորդվել քրդական ռադիոհաղորդումների ժամանակ: Նրա «Քուրդն ու ճնճղուկը», «Քուրդ Ամոն», «Հասան Աղասո», «Սիրահար Նազոն», «Լեյլին ու Մեջնունը»և այլ ստեղծագործություններ, որոնց նյութը վերցված է քրդական բանահյուսությունից կամ քուրդ ժողովրդի կյանքից, բազմիցս թարգմանվել է քրդերեն և լայն ընդունելություն գտել ընթերցողների կողմից:

Խորհրդահայ քրդական քերթողության մեջ Իսահակյանի բանաստեղծություններն առաջին անգամ թարգմանել է Հ. Ջնդին: Նրա յուրաքանչյուր թարգմանությունից զգացվում է թարգմանչի նախասիրությունը Իսահակյանի քնարերգության նկատմամբ: Պետք է նշենք, որ Հ. Ջնդին ոչ միայն առաջինն էր, որ թարգմանեց մեծ Վարպետի գործերը, այլև նրանից հետո սկսվեց Իսահակյանի ստեղծագործությունների թարգմանության մի յուրատիպ մրցակցություն, որն էլ իր հերթին նպաստեց քրդական գրականության էլ ավելի հարստացմանը:

Քուրդ շնորհալի բանաստեղծ Ֆերիկե Ուսուբը քանիցս թարգմանել է վարպետի ստեղծագործությունները, սակայն, նրա թարգմանած «Երեցկնգա աղբյուրը» մի նոր որակ հաղորդեց քրդական գրականությանը, քանզի կատարված է իսահակյանական շնչով: Եվ պատահական չէր, որ Իսահակյանին նվիրված ցանկացած միջոցառում նոր նրբերանգներով էր հարստացնում ինչպես հայ, այնպես էլ քրդական գրական մթնոլորտը:

1975 թ. հայ ժողովրդի հետ ողջ մարդկությունը նշեց Վարպետի

ծննդյան հարյուրամյակը: Քուրդ ժողովուրդը նույնպես իր երախտագիտական խոսքն ուղղեց Վարպետին և քրդերեն լեզվով հրատարակեց մի ստվարածավալ ժողովածու, որը պատրաստել էր Ջասըմե Ջալիլը, իսկ ստեղծագործությունները թարգմանել էին Հ. Ջնդին, Մ. Ռաշիդը, Ֆ. Ուսուբը, Ա. Սարդարը և Վ. Աշոն:[174] Հարկ է նշել, որ ժողովածուում զետեղված ստեղծագործությունների թարգմանությունը կատարված է ավելի բարձր մակարդակով, պահպանված են վարպետի շունչն ու ոգին: Ժողովածուն լրացուցիչ մի ներդրում էր Խորհրդային քրդական գրականության գանձարանում: Ինչպես առաջաբանում էր գրված, այն իրոք հավերժական նվեր է քուրդ ժողովրդին ու քուրդ գրականությանը, ձոն՝ երկու ժողովուրդների բարեկամության. «Թող այս ժողովածուի թարգմանությունն ու հրատարակումը լինի այն մեծ սիրո ու հարգանքի նշանը, որ քուրդ ժողովուրդը տածում է դեպի իր մեծ բարեկամ Ավետիք Իսահակյանը»: Այս ժողովածուն նոր մակարդակի հասցրեց Իսահակյանի ստեղծագործությունների թարգմանության գործը: Քուրդ ժողովուրդը դրանով կարողացավ ամբողջական պատկերացում կազմել վարպետի ստեղծագործությունների մասին, զգալ իսահակյանական շունչն ու ոգին: Խորհրդային քրդական գրականությունը, հատկապես թարգմանությունները լայն արձագանք գտան քրդական գրական աշխարհում: Իրաքյան քուրդ բանաստեղծ Մահմադ Թովիկ Ուրդին թարգմանեց «Աբու-Լալա-Մահարի» պոեմը, որը պարզապես հայտնություն էր քրդական գրականության համար:

1963 թ. հոկտեմբերի 27-ին Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության ու եղբայրության իսկական տոնի վերածվեց Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը: Եվ դա օրինաչափ էր, քանի ու Սայաթ-Նովան անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների բարեկամության մարմնացումն է: Անմահ բանաստեղծի յուրաքանչյուր ստեղծագործություն հարազատ է նաև քուրդ ժողովրդին: Եվ պատահական չէր, որ տոնախմբության օրերին, ինչպես «Ռյա թազա» թերթում, այնպես էլ քրդական ռադիոհաղորդումներում ողջույնի ջերմ խոսքերով, Սայաթ-Նովայից կատարած թարգմանություններով հանդես եկան քուրդ գրողներն ու բանաստեղծները:

Սայաթ-Նովայի ստեղծագործությունների թարգմանությունը քրդերեն նշանակալի իրադարձություն էր քրդական մշակութային և գրական կյանքում: Այդ թարգմանությունները քրդական միջավայրում հետաքրքրություն արթնացրին Սայաթ-Նովա մեծ անհատի, նրա ստեղծագործությունների ու ապրած ժամանակաշրջանի նկատմամբ: Քուրդ գիտնականները սկսեցին հետաքրքրվել Սայաթ-Նովայի և քրդերի միջև եղած կապով, ինչի մասին կարելի էր ենթադրել, ելնելով նրա երգերի մեջ օգտագործվող որոշ քրդական բառերից: Իսկ քուրդ երգիչները մեծ հուզականությամբ ու քրդերին հարազատ լեզվով երգում էին նրա ստեղծագործությունները, որոնք պատեական ոգեշնչման աղբյուր դարձան քուրդ բանաստեղծների համար:

Հոբելյանական օրերին Հայպետհրատը հրատարակեց մեծ երգչի բա-

նաստեղծությունների քրդերեն թարգմանությամբ առանձին ժողովածու: Ժողովածուն կազմել ու թարգմանել են Հ. Ջնդին և Ֆ. Ուսուբը: Առաջաբանը գրել ու գիրքը խմբագրել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ՝ Մ. Հասրաթյանը, որը քաջածանոթ լինելով քրդական մշակույթին, քուրդ ժողովրդի անցյալ ու ներկա պատմությանն ու գրականությանը, շեշտել է. «Կուլտուրական ուշագրավ երևույթ է, որ այս ժողովածուի մեջ հայ ժողովրդի մեծ բանաստեղծի հայերեն 65 երգերից 55-ը առաջին անգամ լույս են ընծայվում նաև Առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդներից մեկի՝ քուրդ ժողովրդի լեզվով: Քուրդ ժողովուրդը, որն ունի դարերից եկող իր բացառիկ հարուստ ժողովրդական ստեղծագործությունը, ավելի լավ կհասկանա հայ մեծ երգչի լեզուն և հոգու կրած տառապանքը, Արևելքից եկող, ժողովրդի սրտից բխող նրա աննման մելոդիաները, երգերը: Թող Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի առիթով հայ երգիչը նաև քրդերեն լեզվով ավելի հարստանա և մոտի քրդական վիպական հերոսների շուրջը հյուսած գեղեցիկ ստեղծագործությունների շարքը»:[175]

Ինչպես Սայաթ-Նովայի 250-ամյակի նախօրյակին, այնպես էլ հետագայում «Ռյա թազան» էջեր էր նվիրում ժողովուրդների բարեկամության երգչին: Քուրդ գրողներ ու բանաստեղծներ Հ. Ջնդու, Ջ. Ջալիլի, Ֆ. Ուսուբի, Սահիդե Իբոյի, Շկոյե Հասանի և մյուսների թարգմանությունները սայաթնովյան շունչ հաղորդեցին և նոր ճոխ գույներով հարստացրին քրդական գրականությունը:

Ինչպես արդեն նշել ենք, հայ մեծատաղանդ գրող Հրաչյա Քոչարը նվիրվելով քրդական մշակույթի զարգացման շահերհակալ գործին՝ իր մի շարք ստեղծագործություններում անդրադարձել էր քուրդ ժողովրդի անցյալին, հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությանն ու համատեղ պայքարին: Այդ գործերը առանձին հատվածներով գրեթե ամբողջությամբ թարգմանվել են: Դրանցից առավել հետաքրքրական «Կարոտ» վիպակն է, որը թարգմանել է գրող Ամարիկե Սարդարը և նախ՝ «Ռյա թազա» թերթում, ապա՝ առանձին գրքույկով տպագրել:[176]

«Կարոտը» գրողի կյանքի վերջին տարիների ամենացայտուն գործերից է: Վիպակում հայ և քուրդ ժողովուրդների ջերմ բարեկամությունն արտացոլված է գեղարվեստական նուրբ ոճով. գլխավոր հերոսին՝ Առաքելին, տանջում է հայրենիքի կարոտը, նա անցնում է Թուրքիայի սահմանը, գնում իր հայրենի գյուղը, հանդիպում քուրդ ապստամբներին, երկար զրուցում նրանց հետ, պատմում նրանց հայ և քուրդ ժողովուրդների միջև հարատև բարեկամության մասին: «Կարոտը» ինչպես հայ, այնպես էլ քուրդ գրականության մեջ կմնա որպես երկու ժողովուրդների բարեկամության ամենավառ արտահայտություններից մեկը: Ի դեպ, Հ. Քոչարի արձակի քրդականացման գործի սկիզբը ևս կապված է Հ. Ջնդու անվան հետ: Դեռևս 1935 թ. նրա թարգմանությամբ լույս է տեսել Քոչարի «Խաչե» պատմվածքը, որն առաջին անգամ հայերեն տպագրվել է 1931 թ. «Նոր ուղի» ամսագրում:

Այո, մեծ է պրոֆեսոր Ջնդու մատուցած ծառայությունը քրդական թարգմանական գրականությանը: Նրա «Սրտի գարուն» խորագրով թարգմանությունների ժողովածուն, որը 1978 թ. քրդերեն լույս է տեսել Երևանում, ևս մեկ անգամ վկայում է քուրդ անվանի մտավորականի անկեղծ սերն ու հարգանքը հայ գրականության նկատմամբ, որն իր բարերար ազդեցությունն է թողել քրդական գրականության վրա: Սույն ժողովածուն տարբերվում է Հ. Ջնդու կողմից կազմված մյուս երկու թարգմանական ժողովածուներից, որոնց մենք արդեն անդրադարձել ենք: Այստեղ, բացի 22 հայ նշանավոր գրողների երկերից, ընդգրկված են նաև ռուսական, ուկրաինական, լիտվական, մոլդովական, գերմանական, պարսկական, ճապոնական, չինական, աֆղանական և այլ գրողների ստեղծագործություններ:

Գրող Հմայակ Սիրասը մշակել է քրդական ժողովրդական «Մամեն ու Այշեն» սիրավեպը: Հեղինակին շատ է հետաքրքրել ու հուզել քրդական ժողովրդական բանահյուսությունը և քուրդ ժողովրդի ներկան: «Մամեն և Այշեն» սիրավեպի մասին նա գրում է. «Մամե և Այշեի» պատմությունը առաջին անգամ հրատարակվեց «Հոկտեմբեր-նոյեմբեր» ժողովածուում, որի խմբագիրը Զարեհնցն էր: Բակունցի և Զարեհնցի օգնությամբ դերասան Սուրեն Քոչարյանն իսկույն այս լեգենդը մտցրեց իր ռեպերտուարի մեջ և արդեն 42 տարի է այն չի իջնում բեմահարթակներից, տրվում է ռադիոյով և հեռուստատեսությամբ»: Սիրավեպի սիրասյան մշակման առաջին թարգմանիչը ևս եղավ Հաջիե Ջնդին, իսկ նույն հեղինակի «Լաթիֆան» պոեմը թարգմանել է Ջ. Գենջոն:[177]

Քրդական մանկական գրականության մեջ նորություն էին Խնկո Ապոր «Տրամվայը Երևանում» և «Մկները ինչպես կատվի հետ կռվեցին» հեքիաթների թարգմանությունները Ջ. Ջալիլի կողմից, որոնք հետագայում թարգմանվեցին առանձին գրքով:[178]

1978թ. գրող և գրականագետ Ագիտե Խուդոյի թարգմանությամբ Երևանում հրատարակվում է հայ գրողների պատմվածքների ժողովածուն «Լորկե» խորագրով: Այս անգամ թարգմանիչը ընտրել է հայ գրողների այն ստեղծագործությունները, որոնց թեման հիմնականում վերցված է քրդական կյանքից, որոնք հավասարապես հարազատ են և՛ հայ, և՛ քուրդ ընթերցողներին: Ժողովածուում զետեղված են Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Ա. Բակունցի, Հր. Քոչարի, Վ. Անանյանի պատմվածքներից:

1982 թ. «Լույս» հրատարակչությունը Վազիրե Աշոյի թարգմանությամբ քրդերեն լեզվով հրատարակվեց «Բարեկամների խոսքը» խորագրով ժողովածուն, որի մեջ ընդգրկված են Ս. Զորյանի, Վ. Անանյանի, Հ. Քոչարի, Խ. Դաշտենցի, Գ. Բեսի, Ռ. Արամյանի, Վ. Դանիելյանի, Գ. Արշակունու, Վ. Բալայանի, Հ. Մելքոնյանի, Ռ. Հովսեփյանի ստեղծագործությունները:[179] Նա նաև թարգմանել է Աբովյանի «Քրդեր և եզդիներ» արժեքավոր գործը:

Քրդական թարգմանական գրականության մեջ աննախադեպ երևույթ էր

Պարույր Սևակի ստեղծագործությունների թարգմանությունը: «Ռյա թաղա» թերթի 1974 թ. 11-րդ համարում բանաստեղծ Ֆերիկե Ուսուրի թարգմանությամբ տպագրվեց Սևակի «Մոսկվացին» բանաստեղծությունը: Պ. Սևակի հաջորդ թարգմանիչը բանաստեղծ Տոսընե Ռաշիդն էր, որի թարգմանությամբ թերթի 1977թ. 93-րդ համարում տպագրվեցին հայ տաղանդավոր բանաստեղծի մի քանի ստեղծագործությունները: Սևակյան յուրաքանչյուր տողի թարգմանությունը թարմ շունչ էր հաղորդում քրդական գրականությանը:

Բանաստեղծ Մ. Ռաշիդի թարգմանություններին հաճախակի կարելի է հանդիպել «Ռյա թազա» թերթի էջերում, ընդ որում, սկսած Նահապետ Քուչակից, Հովհաննես Թումանյանից և Ավետիք Իսահակյանից մինչև Հովհաննես Շիրազ, Գևորգ Էմին և շատ այլ բանաստեղծներ: 1983 թվականին Մ. Ռաշիդի թարգմանությամբ Երևանում քրդերեն լեզվով հրատարակվեց Նահապետ Քուչակի ստեղծագործությունների ժողովածուն՝ «Հայրեն» խորագրով: Քրդական գրականությունը վերջին տարիներին հարստացավ ևս մեկ հայ տաղանդավոր գրողի՝ Վիլյամ Սարոյանի ստեղծագործության թարգմանությամբ: Մ. Ռաշիդը թարգմանեց նրա «Գյուղացին» պատմվածքը, որը գրողի 70-ամյակին տպագրվեց «Ռյա թազա» թերթում:

Շրջադարձային մի նոր փուլ սկսվեց քրդական թարգմանական գրականության մեջ, երբ հանդես եկավ երիտասարդ բանաստեղծ, գրականագետ Ջարկյազե Ռաշը: Նրա գրչին են պատկանում ինչպես հայ դասականների, այնպես էլ եվրոպական բազմաթիվ գրողների ստեղծագործությունների թարգմանությունները:

Եվ այսպես, հայ գրականությունը, հոգեհարազատ լինելով քուրդ գրողներին, այսօր լայն ճանաչում է գտել ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ արտերկրում բնակվող քուրդ ընթերցողների շրջանում: Հայ գրականության ընտրանու ներգրավումը քրդական գրականության մեջ մեծապես նպաստեց վերջինիս առաջընթացին, նրա ստեղծագործական որակի բարձրացմանը: Հայ գրականության թարգմանությունը դարձավ նորատեղծ քրդական մշակութային կյանքի կարևորագույն տարրերից մեկը: Պրոֆեսոր Հ. Ջնդին, անդրադառնալով հայ գրականությանը և հատկապես թարգմանական գրականությանը, գրել է. «Քուրդ գրողի համար հարազատ է հայ գրականությունը: Այս հարազատությունը ոչ միայն բացատրվում է այն բանով, որ տվյալ գրող-թարգմանիչը դաստիարակվել է դրանով, այլ նրանով, որ այդ գրականության մեջ արտացոլված է ժողովրդի տնտեսական կյանքը, որը նույնպես հարազատ է իրեն, քանի որ ինքը նույնպես Հայաստանի քաղաքացի է: Հարազատ է հողն ու ջուրը, սարն ու ձորը: Հարազատ են մարդիկ, կենցաղը, ժողովրդի հոգեբանությունը, երգն ու խաղը: Այս հանգամանքը մեծապես նպաստում է բարձր թարգմանություններ տալու գործին»:[180]

Քրդական գրականության զարգացմանն ու նրա լեզվի հարստացմանը

նպաստել են նաև ռուսական մշակույթը և գրականությունը, հատկապես թարգմանական գրականությունը: Քուրդ գրողները, ծանոթանալով ռուսական գրականությանը, իրենց վրա կրեցին նրա բարերար ազդեցությունը: Դա հատկապես ցայտուն արտահայտվեց 30-ական թվականներին, երբ առաջին անգամ քրդերեն թարգմանվեցին Պուշկինի, Լերմոնտովի, Գորկու, Մայակովսկու և այլ ռուս գրողների ստեղծագործությունները: Այդպիսով զարգացման նոր ուղիներ հարթվեցին քրդական գրականության առջև, նկատելի էր այս ամենի բարերար ներգործությունը զարգացման ողջ գործընթացի վրա: 30-ական թվականներին քրդական դասագրքերի մեջ տեղվեցին մի շարք ռուս գրողների ստեղծագործություններ, որոնք մեծ խանդավառությամբ ընդունվեցին քուրդ դպրոցականների կողմից: Այս կապակցությամբ Մ. Շահինյանը «Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում» գրքում գրել է. «Պուշկինի 150-ամյակի օրերին, երբ մեծ բանաստեղծի հոբելյանը հանդիսավոր կերպով տոնվում էր մեր Միության բոլոր անկյուններում, Պուշկինին նվիրված բազմաթիվ երեկույթներ ու դասախոսություններ կազմակերպվեցին նաև քրդական գյուղերում, իսկ քուրդ աշակերտները գեղեցիկ առոգանությամբ ու ոգեշնչված կարդում էին Պուշկինի բանաստեղծությունները: Հոբելյանական օրերին լույսընծայվեց ռուս մեծ բանաստեղծի քրդերեն թարգմանված, Երևանում հրատարակված Ընտիր երկերի մի հատորը»:[181] Միանգամայն իրավացի է մեծատաղանդ գրողը. ռուսաց լեզուն ու ռուս գրականությունը հարազատ են ինչպես քուրդ ժողովրդական զանգվածին, այնպես էլ հատկապես քուրդ գրողներին, և նրա ամեն մի ստեղծագործության թարգմանությունը նոր երևույթ էր քրդական մշակութային կյանքում, խթանում և հարստացնում էր այդ մշակույթը: Սա առանձին, լուրջ քննարկման թեմա է, որը, սակայն, դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից:

Նշենք, որ հայ գրողներին էլ, իր հերթին, լրջորեն հետաքրքրել է քրդական գրականությունը, բանահյուսության լավագույն նմուշները: Սակայն միայն խորհրդային կարգերի հաստատումից հետո հայ ընթերցողը կարողացավ լայնորեն ծանոթանալ քրդական գրականության ու մշակույթի լավագույն կողմերին, քուրդ ժողովրդի ստեղծագործական մտքին: Քրդական գրականության լավագույն նմուշների հրատարակումը հայերեն ոչ միայն բարոյական ու քաղաքական մի յուրատեսակ օժանդակություն էր զարթոնք ապրող քուրդ ժողովրդին, այլև նպաստում էր հայ և քուրդ ժողովուրդների մշակութային մերձեցմանը, նրանց գրական կապերի ամրապնդմանը:

1930-ական թվականներին, երբ քրդական գրականությունն արդեն ձևավորված էր, և օրեցօր ասպարեզ էին իջնում քուրդ նոր գրողներ, հայ մտավորականության առջև ծառացավ մի նոր ու խիստ պատասխանատու խնդիր՝ քրդական գրականությունը հայերեն թարգմանելու խնդիրը:

1932 թ. Հայաստանի պետական հրատարակչությունը Ս. Քոչարյանի թարգմանությամբ հրատարակեց Արաբ Շամիլովի «Ալագյազի քրդերը» պատմվածքների ժողովածուն: Այնուհետև հայ գրական աշխարհում ծագեց քուրդ գրողների հայերեն անթոլոգիա հրատարակելու խնդիրը, որը կարճ ժամանակահատվածում իրագործվեց: 1936 թ. Հայաստանի գրողների միությունը և Հայաստանի պետական հրատարակչությունը այդ գործը հանձնարարեցին Ա. Ավդալին: Թարգմանչական աշխատանքներին ակտիվորեն մասնակցեցին Հ. Քոչարը, Ն. Զարյանը և Ս. Տարոնցին: 1936 թ. Երևանում լույս տեսավ քուրդ գրողների այդ անթոլոգիան:[182] Արձանագրենք, որ քանզի Խորհրդային Միությունում քրդական մշակույթի կենտրոնն իրավամբ համարվում էր Հայաստանը և այլ հանրապետություններում դեռևս չկային քուրդ գրողներ, այդ անթոլոգիայում ընդգրկվեցին միայն Հայաստանի հանրապետության քուրդ գրողները: Այն խմբագրել է քրդերեն լեզվի հմուտ գիտակ Ս. Տարոնցին: Ժողովածուի հրատարակումը նոր երևույթ էր ինչպես քրդական, այնպես էլ հայկական մշակութային կյանքում: Այն ուղի հարթեց քուրդ գրողների առջև հետագայում առանձին ժողովածուներով հայերեն և ռուսերեն հրատարակելու իրենց ստեղծագործությունները: Խոսելով քրդական նորաստեղծ գրականության մասին, Ն. Զարյանը անթոլոգիայի առաջաբանում ընդգծել է. «Այս անթոլոգիան առաջին փորձն է, որով մեր պետական հրատարակչությունը ցանկանում է հայ ընթերցողին ծանոթացնել քրդական տակավին դալար գրականության առաջին պտուղների հետ ... Այս անթոլոգիայի միջոցով քուրդ երիտասարդ գրողները, որոնք ծանոթ ու հարազատ դեմքեր են և հայտնի խորհրդային գրողների ընտանիքում, հայտնի կդառնան ընթերցողների լայն զանգվածին»:[183]

Անթոլոգիան, ինչ խոսք, լրջորեն խթանեց քրդական նորանոր երկերի հայերեն թարգմանության գործը: Հայկական պարբերական մամուլում աստիճանաբար ավելի հաճախ էին երևում քուրդ գրողների ստեղծագործությունները, լայն ընդունելություն գտնելով ընթերցողների շրջանում: Հետագայում, երբ քրդական գրականությունն արդեն ճանաչում էր ձեռք բերել, լույս տեսավ երկրորդ անթոլոգիան՝ «Սովետական քուրդ բանաստեղծներ» խորագրով, որը կազմել էր Ջ. Ջալիլը և խմբագրել Ս. Տարոնցին:[184] Այս անթոլոգիան, նախորդի համեմատ, աչքի է ընկնում, նախ, գեղարվեստական բարձր մակարդակով և ապա՝ հայ թարգմանիչների բազմազանությամբ, որոնք ամենայն բարեխղճությամբ են մոտեցել իրենց գործին և խիստ հարազատ մնացել բնօրինակներին: Այն հատկապես հարուստ լինելով քրդական ժողովրդական բանահյուսության նմուշներով, ներկայացնում էր նաև Հ. Ջնգու, Ա. Ավդալի, Ջ. Ջալիլի, Վ. Նազիրի, Ջ. Գենջոյի, Մ. Ռաշիդի և Տ. Բրոյի ստեղծագործությունները, որոնք թարգմանել էին Ս. Տարոնցին, Սարմենը, Հ. Շիրազը, Խ. Դաշտենցը, Վ. Գրիգորյանը, Ս. Հարությունյանը, Լ. Միրիջանյանը, Մ. Խերանյանը և Մ. Հարությունյանը:

Ինչպես նշեցինք, հետագայում մեկը մյուսի հետևից հայերեն հրատարակվեցին քուրդ գրողների ստեղծագործությունները, որոնք էլ ավելի նպաստեցին ինչպես քրդական գրականության զարգացմանը, այնպես էլ հայ-քրդական գրական կապերի ամրապնդմանը: Այդ թարգմանություններից առավել հետաքրքրական են Ջ. Ջալիլի «Քրդական սիրավեպեր» ժողովածուն, որը հիմնականում թարգմանել է Ս. Տարոնցին, Հ. Ջնդու «Քրդական ժողովրդական վիպերգերը», որոնք հայացրել են Մ. Վեսպերը, Վ. Գրիգորյանը և Մ. Խերանյանը, Ամինե Ավդալի «Գյուլիզար» պոեմը՝ Վ. Կարենցի թարգմանությամբ, Վ. Գրիգորյանի թարգմանությամբ՝ Ա. Շամիլովի «Քուրդ հովիվը», «Բախտի ճանապարհը» և «Դրմ-դրմ» վեպերը և շատ այլ ստեղծագործություններ: Հայերեն են թարգմանվել Ա. Ավդալի «Առաջին գարունը», Ս. Սիաբանդովի «Սիաբանդ և Խաչեն», Ջ. Ջալիլի «Իմ օջախը», Ջ. Ասադի «Սրինգը»:

Հայաստանի հանրապետությունում են թարգմանվել նաև քրդական դասական գրականության լավագույն էջերը: Իրանի քուրդ տաղանդավոր բանաստեղծ Բաբա Թահեր Օրհանու ստեղծագործությունները պարսկերենից հայացրել է Սերգեյ Ումարյանը: Անդրադառնալով քուրդ մեծ բանաստեղծի տեղին ու դերին, թարգմանիչը գրել է. «Բաբա Թահերը, Օմար Խայամից հետո պարսկական գրականության մեջ երկրորդ դեմքն է: Թահերը այն մեծ բանաստեղծներից է, որը ազգային սահմաններից դուրս է եկել և դարձել համաշխարհային պոեզիայի նշանավոր դեմքերից մեկը: Իսկ նրա ներդրումը քրդական գրականության ստեղծման գործում մեծ է, և նա հիրավի համարվում է քրդական գրականության հիմնադիրներից մեկը»:

Հայաստանում քրդերեն և հայերեն լույս ընծայված քրդական երկերը աստիճանաբար լայն ճանաչում գտան ոչ միայն մեր հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս: 1977 թ. Ա. Շամիլովի «Քուրդ հովիվը» և «Ալագյազի քրդերը» գրքերը Պոլսում հրատարակվել են քրդերեն և թուրքերեն (թարգմանիչ՝ Մստաֆա Քայան): 1974 թվականին Եվրոպայում գործող «Լույս» հրատարակչությունը տպագրել է քուրդ մտավորական Իսմայիլե Դուքոյի «Անսեր ամուսնությունը» պիեսը, Օրդիխանե Ջալիլի և Ջալիլե Ջալիլի «Առակներ ու ասացվածքներ» գիրքը: 1976 թ. Շվեդիայում հրատարակվել է քուրդ միջնադարյան գրող Ֆաղիե Տայրայիի «Թամբուր» բանաստեղծությունների ժողովածուն, որը կազմել և 1974 թ. Երևանում լույս է ընծայել Արամե Ջաչանը: Շվեդիայում է հրատարակվել Սիմա Սամադի «Խազալ» ժողովածուն: Իրաքի գիտությունների ակադեմիայի քրդագիտության բաժինը հրատարակել է քուրդ նշանավոր գիտնական Ղանատե Քրդոյի մի շարք աշխատությունները, որոնք արժանացել են բարձր գնահատականի: Գերմանիայում գերմաներեն լեզվով հրատարակվել է Արաբ Շամիլովի «Քրդական ժողովրդական հեքիաթներ» հատորը, իսկ 1978 թ. Իրաքում Քյամալ Մուգհատ Ահմադի թարգմանությամբ լույս է տեսել նույն հեղինակի «Ֆեոդալական հարաբերությունները քրդերի մեջ» արժեքավոր

աշխատությունը: Արտերկրում նույնպես մեծ թիվ են կազմում Հայաստանի քուրդ գրողների հրատարակված ստեղծագործությունները: Սակայն սա առանձին ուսումնասիրության թեմա է:

Եվ այսպես, լեզվի և մշակույթի զուգակցումը հանգեցնում է մի նոր որակի, որի մեջ որոշակի դեր ունի պարզ և անպաճույճ թարգմանությունը: Այն ազգային մշակույթի գանձարանը հարստացնում է նոր արժեքներով: Անդրադառնալով մշակութային այդ կարևորագույն խնդրին, հավելենք, որ հայերենից քրդերեն և քրդերենից հայերեն թարգմանություններն առավել բազմաբովանդակ դարձրին և հարստացրին քրդական գրականությունը: Մշակութային այս կարևորագույն ձեռնարկումն աշխարհում առաջին անգամ իրացվել է Խորհրդային Հայաստանում: Նաև նշենք, որ խորհրդային ժամանակաշրջանում թարգմանությունները ոչ միայն կատարվում էին անհատների կողմից, այլև առկա էր այդ գործին պետական լրջագույն մոտեցում և աջակցություն, ինչը մեծապես նպաստեց քրդական մշակույթի գանձարանի հարստացմանը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ (ԵՐԳ-ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ԹԱՏՐՈՆ, ԿԻՆՈ, ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ)

Քրդական մշակույթի հանդեպ հայ մտավորականների հարգալից վերաբերմունքի, քրդական արվեստին ծառայելու և աջակցելու նպատակով գործնական քայլերի դիմելու մասին են վկայում այդ ոլորտում նրանց ներդրումները: Եվ դա զարմանալի չէ, քանզի բարեկամական այդ վերաբերմունքի հիմքերը գցվել են դեռևս հեթանոսության շրջանում: Հասկանալի է, որ հեթանոսությունից եկող քրդական յուրաքանչյուր երգ ու մեղեդի պիտի հարթազատ լիներ հայ ժողովրդին, նրա հեթանոսական ոգուն:

Հայերի և քրդերի համատեղ հարսանիքներն ու խնջույքները, ժողովրդական ուխտագնացություններն ու տոնախմբությունները, տարբեր ծիսակատարությունները, անշուշտ, իրենց խորը կնիքն են թողել թե՛ մեկ, թե՛ մյուս ժողովրդի երաժշտության, երգարվեստի և ընդհանրապես արվեստի բոլոր ճյուղերի վրա, մասնավորապես նպաստել քրդական արվեստի զարգացմանը: Մենք չենք փորձի խորանալ այս հարցի արմատների մեջ, վեր հանել պատմական անցյալը՝ այդպիսով շեղվելով բուն թեմայից: Ուսումնասիրության մեջ հիմնականում քննարկվում է 19-20-րդ դարերում քրդական արվեստի վրա հայկական արվեստի ունեցած ներգործությունը արվեստաբանական դիտանկյունից: Հատկապես Հայաստանի քրդական համայնքի էսթետիկական աշխարհայացքի բարեփոխման ուղղությամբ ունեցել է իր դրական ներգործությունը:

Ա. ԵՐԳ-ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշեցինք, հայկական, այնպես էլ քրդական որոշ տոնակատարություններ, ծեսեր, արարողություններ գալիս են հեթանոսության ժամանակներից: Այդ հնագույն ժամանակներից է սկիզբ առնում նաև քրդական երգը, որը բարձր է գնահատել Ն. Մառը, այն համարելով քուրդ ժողովրդի պատմության ակունքը. «Այն միջավայրում, ուր հեթանոսությունը համառորեն է դիմադրել, այնտեղ ավելի բարձր է կանգնած երգը... Քրդերի երգերը իրենց հիմնական նորմաներով ու մոտիվներով մի հարստություն են, որ նրանք ժառանգել են հեթանոսությունից, այն հեթանոսական կրոնից, որը մի ժամանակ իր հետևորդների մեջ ներառում էր նաև բազմաթիվ քրդական ցեղեր»:[1] Հասկանալի է, որ հեթանոսության շրջանից մեզ հասած քրդական

յուրաքանչյուր երգ ու մեղեդի պետք է հարազատ լինի նաև հայ ժողովրդին:

Դերսիմի ու Սասունի, Սիփանի ու Վանի, Դիարբեքիրի ու Ղարսի վեհ ու անսասան լեռները, ծաղկափթիթ դաշտերն ու քչքչացող սառնորակ աղբյուրները հայ և քուրդ աշխատավոր ժողովրդին ոգեշնչել են ստեղծագործելու, երգելու: Այդ կապակցությամբ Գ. Սրվանձտյանցը գրել է. «Այդ ժողովուրդների համար նվիրական են նաև այնպիսի լեռներն ու սարերը, որոնք իրենց վեհությամբ ու գեղեցկությամբ ոգևորել են շրջակա հայ և քուրդ երիտասարդներին, դառնալով սիրային ավանդույթների հերոսների-սիրող զույգերի ապաստան, օրինակ, Սիփանա սարը»:[2]

Հայերն ու քրդերը, դարեր շարունակ բնակվելով միևնույն տարածքում, երկուստեք հերոսաբար պայքարել են ներքին և արտաքին թշնամիների դեմ, երգեր ձոնել այն մարտիկներին, որոնք հերոսաբար մարտնչել են ոտախի դեմ: Հետևաբար, զարմանալի չէ, որ քուրդ ժողովրդի մեջ տարածված են եղել նաև հայ ֆիդայիներին նվիրված երգերը: Քրդական բազմաթիվ երգեր նվիրված են հայ-քրդական ազգային-ազատագրական համատեղ շարժման հերոսներ Քեշիշ Պողոյին, հայ ֆիդայիներ Գևորգ Ջաուշին, Մշեցի Մճոյին, քուրդ ֆիդայի Զեյնալին, նաև՝ Դերսիմի, Մուշի, Վանի հերոսամարտերին: Քրդերի մեջ հատկապես մեծ թիվ են կազմում զորավար Անդրանիկին (Անդրանիկ Թորոսի Օզանյանին) նվիրված երգերը: Հետագայում շատ երգեր են հորինվել Անդրանիկի և եզդիների զորավար Ջանգիր աղայի բարեկամության, Թուրքիայի դեմ նրանց միասնական հերոսական պայքարի մասին: Այդ երգերից շատերն առ այսօր էլ լայն տարածում ունեն ինչպես քրդերի, այնպես էլ հայերի մեջ: Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղի 85-ամյա բնակիչ Ահմադե Մստոն ջերմությամբ ու սրտաբուխ հույզով է երգում «Անդրանիկ փաշա» երգը, որը նոտագրել և 1965 թ. տպագրել է երաժշտագետ Նուրա Ջավարին «Ույա թազա» ժողովի 17-րդ համարում, որի մի ամբողջ էջը նվիրված է հայ մեծ զորավարի 100-ամյակին: Դեռևս 1830թ. հայերը հերոսաբար ոտքի ելան ջարդարար Հաֆիզ և Ռաշիդ փաշաների դեմ: Այդ ժամանակ ստեղծվեցին երգեր, որոնք հետագայում լայն տարածում գտան:[3] Տասնյակ երգեր են հյուսվել նաև 1925 թվականին Թուրքիայում շեյխ Սաիդի ապստամբության, հայ-քրդական զինակցական կապերի ու նրանց հերոսամարտերի մասին, որոնք երգվում էին ինչպես քրդերեն, այնպես էլ հայերեն:[4]

Հայկական մամուլը, անդրադառնալով քրդերի կողմից հայ ֆիդայիների գովերգմանը, գրում է. «Հայ ֆիդայիների գովքն այնուհետև անցավ քրդական անգիր գրականության մեջ: Եթե օր մը քրդախոս հայեր հավաքեին, թարգմանեին ու դասավորեին այդ անգիր տաղերը, երգերը և տեստանները, որոնք քուրդերու կողմեն յորինվեցան հայոց եղափոխական մարտիկների մասին, այն ատեն մենք պետի գտնենք ճշգրիտ պատկերը և պատմությունը, թե ինչ ազդեցություն ձգած էր հայ ֆիդային քյուրդին վրայ և թե քյուրդը ինչ ձևով վերա կառներ հայոց եղափոխական շարժումը»:[5]

Եվ այսպես, բազմաթիվ քրդական երգեր հարազատ են հայերին և, առավելևս, հայկական երգերը հարազատ են քրդերին: Մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանն իր «Հոբերանելու ծառը» և «Դանգբեժ Սլեմանը» պատմվածքներում բարձր է գնահատել քրդական երգարվեստը: Քրդական մի օջախում հյուրընկալվելով, նա մինչև ուշ գիշեր լսում է դանգբեժ Սլեմանի նվագն ու երգերը և իր այս վերջին պատմվածքում գրում. «Երգերից մեկը մի մեղեդի, սիրո հառաչանք էր, այնքան վճիտ, այնքան հուզիչ, որ բոլոր սեղանակիցներս սրտագին ախ քաշեցինք և լի բաժակներով խմեցինք Սլեմանի կենացը» (Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4-րդ, Երևան, 1975 թ., էջ 137):

Հայ անվանի երաժիշտ Ս.Մելիքյանը, անդրադառնալով այդ հարցին, գրել է. «Քրդերի երգերը մենք շատ լավ ենք ըմբռնում: Շատ անգամ հասարակ աչքով նայողը կարող է շփոթվել մեր մի քանի տեղական, ինչպես Մոկաց երգերի հետ: Ինչու՞. որովհետև նա մեզ հետ համարյա նույն արևի տակ է ապրում, նույն կյանքն է անցկացնում ինչ որ մեր լեռնցին, մոկացին»:[6]

Հայտնի է, որ ինչպես քրդական, այնպես էլ հայկական շատ երգեր փոխ են առնվել մեկը մյուսից: Հետևաբար միանգամայն բնական է այն ակնառու իրողությունը, որ հատկապես Սասունում, Դերսիմում, Դիարբեքիրում, Շատախում և Մոքսում քրդական ու հայկական հարսանիքներում հավասարապես երգվել են ինչպես քրդական, այնպես էլ հայկական երգեր: Նույն շրջաններում սգո արարողությունների ժամանակ ևս կատարվել են քրդական և հայկական սգո երգեր: Երկու լեզուներով երգեր են հորինվել ու կատարվել նաև համատեղ խնջույքներում, տոնախմբություններում ու խաղերում:

Ուշագրավ փաստ է նաև այն, որ երկու ժողովուրդների բանահյուսությունների մեջ էլ մեծ տեղ է հատկացված սիրո գաղափարին, որն էլ իր արտացոլումն է գտել հայ և քուրդ երիտասարդների սիրո մասին պատմող երգերում: Խմուրցի հայուհի Գյուլեն եղել է քրդական տաղանդավոր երգչուհի: Քրդերը նրան անվանել են «հարսանիքների ծաղիկ» (gula govenda): Նրա երգերը հավասարապես հարազատ են եղել ինչպես հային, այնպես էլ քրդին: Քուրդ երգիչ Ավդալե Զայնկեն հրապուրվել է նրա գեղեցկությամբ, նրա հետ մի շարք անգամներ մրցակցել: Բայց երգչուհին այնքան լավ է իմացել քրդական բառուբանն ու երաժշտությունը, որ պարտության է մատնել Ավդալին: Ի վերջո, երիտասարդների սերն ամրագրվել է ամուսնությամբ: Նրանք ողջ Արևմտյան Հայաստանում ու Քուրդիստանում լայն ճանաչում են գտել, իսկ նրանց ստեղծագործությունները հավասարապես ժողովրդականություն են վայելել երկու ժողովուրդների մեջ:

Հիշատակության են արժանի նաև կառուցի հայ անվանի երգիչներ Խուդոն և Օզմցի Ռբաքը, որոնք երգում և ստեղծագործում էին քրդերեն:[7] Հայկական էպոսի անմահ գոհարը՝ «Սասունցի Դավիթը», նույնպիսի ջերմությամբ, որքան քրդական «Մամ ու Ջինը», զանազան տարբերակներով առ այսօր երգվում է քուրդ ժողովրդի մեջ:

Երկու ժողովուրդների երգարվեստներում էլ կարևոր նշանակություն են

ունեցել երգերի մեղեդիները, մոտիվները։ Դրանք իրենց ռիթմով, մեղեդայնությամբ հարազատ են եղել թե՛ քրդերին, թե՛ հայերին։ Ճիշտ է, երգերը տարիների ընթացքում հղկվել են, փոխվել, և ներկայումս, անկասկած, դրանց կատարողական արվեստը զիջում է անմիջական ստեղծագործողի կատարողականությանը, բայց, միևնույն է, հուզիչ են ու չափազանց հոգեհարազատ։

Քրդական երգն ու երաժշտությունը ոչ միայն բարձր գնահատականի են արժանացել հայ ժողովրդի ու նրա լայնախոհ մտավորականության կողմից, այլև ընդունվել որպես հարազատ երգ-երաժշտություն։ Հայ անվանի ազգագրագետ-բանահավաք Ս. Հայկունին լավատեղյակ էր քրդական երաժշտությունից, այդ իսկ տեսակետից հետաքրքիր են նրա «Երաժշտական» և «Վանա սալ» հոդվածները, որոնք տպագրվել են 1885 թվականին «Մեղու Հայաստանի» 25 և 26 համարներում։ Իսկ հայ անվանի մտավորական Սիրունին, անդրադառնալով քրդական երգ-երաժշտությանը, բանահյուսությանը, արվեստին, գրում է. «Բայց ամենեն ավելի քյուրդերուն հոգեկան աշխարհն է որ պետք է մեր որոնումներուն նյութը դառնայ... Ունի նախնական ժողովուրդների կույս արվեստը, այն որ չի գրվել, բայց կապրի հոգիներու մեջ ու կանցնի սերունդե սերունդ։ Արվեստ կայ որ հողեն ու ջուրեն կը բխի, սնունդ կառնե հովեն, սարեն, արևեն կուռճանայ ու կը գեղեցկանայ բնության ծոցում ու կը սերտի անուշ մը գեղջուկեն սրտեն ներս, հոն է որ իր վերջին ձևը կը ստանա, խառնվելով գեղջուկ մարդուն հևքին ու ճյուղին։ Այդ արվեստը քուրդը ունի։ Պետք է այդ արվեստը պլպտենք, սերունդ մը յետոյ արդեն անհնար կըլլա այդ աշխատանքը»։[8] Իսկ գրող Վ. Փափազյանն իր հուշերում հաստատել է. «Քուրդը առաջ էր գնում, ճանապարհորդները հետևում էին և Սեյիդը քոլոզը ծռած սկսում էր երգել, նման չէր նրա երգը այն բոլոր երգերին, որոնք երբևիցե լսել էին ճանապարհորդները։ Զայնավոր մի պատմություն էր այն, հոսանուտ ջրվեժի նման սուր ու կարուկ խաղերի մի կույտ, որ խոսքերի կարկաչի մեջ երբեմն նետվում էր, երբեմն սլանում էր վար, բամբ ձայների խոնարհումով... առվակի նման գալարուն։ Եվ անտառի շշուկին ու թռչունների դայլայլների համերգին էր ընկնում ձայնասացության ինքնատիպ դերը»։[9]

Քրդերի երաժշտական գործիքներն էին սրինգը, զուռնան, երեք լարանի սազը, դուդուկը, դուլը, շվին, դհոլը։ Երաժշտական նույն գործիքներն են օգտագործվել ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում։ Դժվար է ճշգրիտ ասել, թե որ ժողովրդին են դրանք պատկանում, սակայն փաստ է, որ հավասարապես սիրված են եղել։ Այդ գործիքներով նվագող և երգող քուրդ ու հայ աշուղներն իրենց նուրբ արվեստով չէին զիջում Արևելքի աշուղներին, հաճախակի էին հանդես գալիս քրդական և հայկական գյուղերում, մրցակցում միմյանց հետ։ Նրանք երգում էին ինչպես քրդերեն, այնպես էլ՝ հայերեն, թուրքերեն և պարսկերեն։ Այս մասին Արշակ Չոպանյանը գրում է. «Ռուսահայաստանը լի էր հայ աշուղներով և նույնիսկ Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսը իր աշուղներն ուներ դեռ։ Բայց այդ աշուղնե-

րը կերգեին երգեր իրենց նախորդներեն ժառանգած կամ իրենցմե ստեղծվածը, ուր շատ հայկականին հետ խառն ի խուռն կը հնչեին պարսկական, թրքական, վրացական, արաբական, քրդական եղանակներ»։[10]

Քուրդ աշուղները հիմնականում ծառայում էին քուրդ աղաներին ու բեկերին, մասնակցում նրանց հարսանիքներին ու զվարճանքներին։ Հայ մեծանուն գրող Րաֆֆին, որ բազմիցս է անդրադարձել քուրդ ժողովրդի կյանքին ու կենցաղին, պատմում է, որ երբ մի անգամ հյուր է եղել քուրդ բեկերից մեկի տանը, նրա ուշադրությունը գրավել է քուրդ աշուղի կատարողական վարպետությունը. «Ընթրիքից հետո բեկը կամեցավ մեզ զվարճացնել և կանչել տվեց մի երգիչ ... երգիչն ածում էր ջութակի վրա, քուրդ աշուղի երգածները հասարակ տողեր չէին, նա երգում էր մի ամբողջ վեպ, որ ժողովրդական պոետը առել էր կենդանի անցքից»։[11] Քրդագետ Ալբերտ Այնեն, անդրադառնալով քրդական հյուրասիրությանը, ժողովրդական բանահյուսությանը և հատկապես աշուղական երգերին, պատմել է, թե ինչպես են քուրդ Սելիմ աղայի տանը հյուրասիրվել, և թե իր վրա ինչպիսի մեծ ազդեցություն է թողել քրդական երաժշտությունը. «Իրիկնահացը շատ ճոխ եղավ։ Երկրի սովորության համաձայն պատրաստված մի ոչխար բերին, շամփուրներով խորոված, գեր հավեր, որ հազվագյուտ էր Թուրքիայում, պահունի մրգեր և մի քանի տեսակ սեր։ Ճաշի ժամանակ մի ծեր երգիչ, որ յուր ցեղի բանաստեղծն ու կախարդն էր, միանգամայն երգում էր արդուզուռհաններների երեք լեզվով քրդերեն, թուրքերեն և պարսկերեն։ Հոմերոսի պես դա էլ էր կույր և ձեռքում ուներ երեք լարանի մի գործիք, լարերը մետաղից էին և պինդ, քաշած մի փոքր տախտակի վրա... երբ վեր կացան սեղանից, ծերունին վայր դրեց կիթառը, վեր առավ նիհլը, որը մի անուշ ու տխրաձայն սրինգ էր և ածեց այն եղանակի առաջաբանությունը, որով սկսվում էր պարսկական երգը»։[12]

Իսկ լիտվացի նշանավոր բանահավաք, արվեստագիտության դոկտոր Ե. Կ. Զյուրլիոսիսին, անդրադառնալով քրդական ժողովրդական երգերին, ասել է. «Քրդական ժողովրդական երգերը իմ մեջ մեծ հիացմունք են առաջացրել։ Նրանք շատ գեղեցիկ են, խորապես լիրիկ են և ինձ վրա մեծ ազդեցություն են թողել»։[13]

Պետք է նշել, որ ավանդականորեն երգն ու երաժշտությունը քրդերի մեջ մեծ մասամբ զուգորդվում են։ Քուրդ երաժիշտն ու դանգրեժը (երգիչը) օրաներում նստած, մինչև ուշ գիշեր հաճախ միասին են հանդես գալիս։ Դա մի իսկական բեմադրություն է. երգիչը պատմում է, ապա սկսում շվիի կամ սրնգի նվագակցությամբ երգել։ Քիչ անց նրան փոխարինում է մեկ ուրիշ երգիչ։ Այս նույն ավանդական ձևն ընդունված է նաև հայերի մեջ։ Ուշագրավ է այն փաստը, որ հայ երգիչներից շատերը, գիտենալով քրդական երգեր, մասնակցել են այդպիսի երեկույթների։

Տոնախմբությունների ժամանակ նույնպես ընդունված են երաժշտական նման յուրատիպ բեմականացումները։ Օրինակ, գարունը բացվելուն պես քրդերը տոնում են իրենց Նոր տարին, որը հայտնի է Նավրուզ անունով։

Սա ևս ժողովրդական մի հետաքրքիր երաժշտական բեմականացում է: Նշենք, որ այս գարնանային տոնը Հայաստանի քուրդ համայնքը թե՛ Երևանում և թե՛ գյուղերում նշում է մեծ շուքով, մասնակցում են Հայաստանի երգիչներն ու երաժիշտները՝ նոր շունչ ու գեղեցիկ բովանդակություն հաղորդելով դրան: Ինչպես արդեն նշվել է, հայկական Վարդավառն ընդունված է նաև քրդերի մեջ՝ «Գուլհայրան» անունով: Այն հատկապես տարածված է եղել Դերսիմի և Քղիի գավառներում, որտեղ հայերը և քրդերը միասին են տոնել այդ օրը, միասին մասնակցել ուխտագնացությանը: Իսկ քրդական հարսանիքը պարզապես վերածվում էր տոնախմբության, որին մասնակցում էին նաև հայերը՝ հայ քավորի բերած դհոլ-զուռնայով: Նույնպիսի պարտադրակարգով էին կազմակերպվում նաև հայկական հարսանիքները:

Քրդական երաժշտության և ընդհանրապես կատարողական արվեստի մասին բազմաթիվ բանավոր տեղեկություններ կան, սակայն գրավոր վկայությունների առաջին անգամ հանդիպում ենք 16-րդ դարում, քուրդ պատմագիր Շարաֆ խան Բիթլիսու մոտ:[14] Հետագայում, 19-րդ դարում, այդ հարցին անդրադարձել է Մելա Մահմուդ Բայազիդին:[15] Իսկ հայ երգահաններ Կարա-Մուրզան և Կոմիտասը 19-րդ դարի վերջին ոչ միայն արժանավույնս գնահատել են քրդական երգարվեստն ու երաժշտությունը, այլև հավաքել, գրառել ու մշակել են ժողովրդական բազմաթիվ երգեր, այդպիսով ոչնչացումից փրկելով լավագույն պատառիկները:

Քրիստափոր Կարա-Մուրզան քրդական երաժշտության մշակման պատմության մեջ հայտնի է «Քրդերու մարշը» և «Կոնը վոչխին» երգերով:[16] Բացի այս երկու մշակումներից, նա ավելի ուշ կրկին զբաղվել է քրդական երգերի մշակմամբ: Ինչպես վկայում է երաժշտագետ Ն. Ջավարին, Կարա-Մուրզան մշակել է ևս երկու քրդական երգ, բայց, դժբախտաբար, դրանք չեն պահպանվել:[17] Նա քրդական երաժշտություն է օգտագործել նաև իր «Շուշան» օպերայում: Բոստոնի «Պայքար» թերթը, անդրադառնալով քրդական երաժշտության բնագավառում Կարա-Մուրզայի մատուցած ծառայություններին, գրում է. «Ք. Կարա-Մուրզան եղած է քրդական երգարվեստի առաջին բանահավաքի մշակողներեն մեկը»:[18] Ճիշտ է, Կարա-Մուրզան առաջինն էր, որ սկսեց զբաղվել այդ պատվաբեր գործով, սակայն, ելնելով պատմական իրողություններից, պետք է փաստել, որ հայ երաժշտության պայծառ դեմքերից Կոմիտասը (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան) առաջինն էր, որ նվիրվեց քրդական երաժշտական բանահյուսության լավագույն նմուշների խորաքնին ու բազմակողմանի մշակման գործին: Կոմիտասին շատ հարազատ էին քուրդ ժողովուրդն ու քրդական մշակույթը, հետևաբար նա չէր կարող անտարբեր գտնվել քրդական հարուստ երգ-երաժշտության նկատմամբ: Հայ ականավոր կոմպոզիտորի համար ներշնչանքի աղբյուր են եղել քուրդ ժողովրդի հինավուրց, ինքնատիպ մեղեդիները: Տիրապետելով քրդերենին, նա շրջել է քրդերի մեջ, օրերով մնացել քրդական օբաներում, ուր ժամանակը (շավքհերին) անցնում էր նրանց երգերը, պատմվածքները, հեքիաթներն ունկնդրելով: Կոմիտասը մասնակցում էր քրդական տոնական

հանդեսներին, հարսանիքներին և գրի առնում, այնուհետև մշակում ժողովրդական երգն ու պարը, մեկամատնոտ սրտառուչ երաժշտությունը: Այս կապակցությամբ Արշակ Զոպանյանը գրել է. «Կոմիտաս վարդապետը հայ երաժշտական ֆոլկլորի, նույնիսկ արևելյան բանասեր-հավաքիչ մըն ալ եղած է... հավաքած է վերջապես քուրդ և թուրք եղանակներ»:[19] Իսկ մանկավարժ Նաչատուր Կանայանն իր հուշերում նշում է, որ Կոմիտասը եղել է քրդական Սիչանլու, Զոր, Բանդամուրդ գյուղերում: Մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ Էջմիածնի ճեմարանում ուսանելիս, Կոմիտասն իր դասընկերոջ Ուսուբ բեկի օգնությամբ շրջել է քրդական գյուղերում, ծանոթացել երաժշտական ֆոլկլորին, ջերմ ընդունելություն գտել ինչպես Ուսուբ բեկի ընտանիքի, այնպես էլ Էջմիածնի շրջանի քուրդ գյուղացիների մոտ: Իսկ Ուսուբի վրա մեծ տպավորություն է թողել հայ անվանի երգահանը: Նրան ոգեշնչել է այն հանգամանքը, որ իր հայ ընկերը՝ Կոմիտասը, մեծ հետաքրքրություն է ցուցաբերել քրդական երաժշտության նկատմամբ: Այս մասին հայ մտավորականներից Վ. Վարդանյանը գրել է. «Մի տեսակ մրցություն էր սկսվել ճեմարանականների մեջ, թե ով շատ երգեր կտա Սողոմոնին, ում երգերը շատ կհավանի: Աշակերտների մեջ կար մի եզդի տղա (Ուսուբ բեկը - Կ. Ջ): Նա շատ ուրախացավ, երբ Սողոմոնը հետաքրքրվեց նաև քրդական երգերով, պարերով և իր սրինգը նվագելով: Նա Սողոմոնից իմացավ, որ Աբովյանն էլ շատ է սիրել քրդական երգը, իմացել և երգել է»:[20] Միգուցե այս ամենը պատճառ դարձան, որ Կոմիտասի հոգում բույն դրեց իրեն և իր ժողովրդին այնքան հարազատ քրդական երաժշտությունը, որը հետագայում, Բեռլինի կոնսերվատորիայում, դարձավ նրա դիպլոմային աշխատանքի թեման: Նա Բեռլին մեկնեց՝ հոգում անթեղած հայկական ու քրդական երաժշտության շունչը և, որպես հավերժական բարեկամության խորհրդանիշ, նաև՝ քրդական մի սրինգ, որը նրան էր նվիրել իր եզդի ընկերը (Ուսուբը - Կ. Ջ.):[21] Բեռլինի կոնսերվատորիայի դահլիճում նա այդ սրնգով կատարեց քրդական երաժշտության լավագույն նմուշները: Կոմիտասին հաջողվեց հերքել եվրոպացի երաժիշտների այն թյուր կարծիքը, թե իբր քրդական երաժշտությունը պարսկական և արաբական երաժշտությունների խառնուրդն է: Նա ապացուցեց, որ այդ ինքնատիպ ազգային երաժշտությունը բխում է երաժշտասեր քուրդ ժողովրդի դարավոր պատմության խորքերից, որ քրդական և հայկական երաժշտությունները շատ նմանություններ ու առնչություններ ունեն, քանի որ այդ երկու բարեկամ ժողովուրդները դարեր շարունակ ապրել են կողք կողքի, նրանք նույն հող ու ջրի, նույն լեռների զավակներն են: Եվրոպացի երաժիշտների մեջ տեղ գտած սխալ պատկերացումների առնչությամբ Վ. Վարդանյանը գրել է. «Բեռլինի խոշոր երաժշտագետները թյուր և աղքատիկ տեղեկություններ ունեին այդ հին, խաշնարած ժողովրդի երգ-երաժշտության մասին: Նրանց էլ համարում էին պարսկաարաբական մի ճյուղը: Մինչդեռ, Կոմիտասի տեղեկությունները գալիս են բուն աղբյուրներից, նա բացահայտել է հայ-քրդական երաժշտական բազմաթիվ առնչություններ, փոխներթափան-

ցումներ»:[22]

Հայ մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակը, որը խորությամբ ուսումնասիրել է Կոմիտասի գործունեությունը, գրում է. «Այո, քրդական երաժշտությունն այնքան է հարազատ եղել Կոմիտասին, որքան որ հայկական ժողովրդական երաժշտությունը: Եվ դա պատահական չէ, այդ երկու հնագույն ժողովուրդները դարերով իրար հետ են ապրել, նրանց ճակատագիրը մեկ է: Կոմիտասը բազմաթիվ քրդական երգեր է հավաքել, նոտայագրել, չէ՞ որ այդ երկու եղբայրակից ժողովուրդները խնջույքների ժամանակ միմյանց երգեր են երգել, իսկ երգը դա ժողովուրդների բարեկամության մի իսկական կամուրջ է, որը ժողովուրդներին մերձեցնում է իրար»:[23]

Ինչպես արդեն վերը նշվեց, 1899 թ. Բեռլինի կոնսերվատորիայում Կոմիտասը հանդես է եկել քրդական երաժշտության մասին իր ուսումնասիրությամբ, որը նրա դիպլոմային աշխատանքի թեման էր:[24] Այդ աշխատանքն ընդունվում է ջերմությամբ, քանզի դրանով հզոր հակահարված է տրվում քրդական երաժշտության մասին մինչ այդ շրջանառվող բոլոր սխալ տեսակետներին: 1899 թ. մայիսի 10-ին Կոմիտասը Բեռլինում Միջազգային երաժշտական ընկերության անդամների համար մի դասախոսություն է կարդում, որում հայ հոգևոր երաժշտության հետ համատեղ դիտարկվում և ներկայացվում էր նաև հարևան մյուս ժողովուրդների, հատկապես քրդերի երաժշտության լավագույն նմուշների կառուցվածքը: Հենց այդ օրն էլ նրա անմիջական կատարմամբ հնչեց քրդական ժողովրդական մեղեդին: Ինչպես իր նամակում վկայում է հայ մտավորական Ա. Եղիազարը, այդ դասախոսության ժամանակ նա վարպետությամբ է կատարել քրդական «Լելե Գավրամբնե», «Ազ Ղուլընգըմ» երգերը, բլուրի վրա հնչեցրել ոչխարներին ջրի տանելու ու բերելու հովվական մեղեդին, «Քրդական պարեղանակը»:[25]

Դասախոսությունն այնպիսի հետաքրքրություն է առաջացրել Բեռլինի երաժշտասեր հասարակության մեջ, որ Միջազգային երաժշտական ընկերության նախագահության որոշմամբ հուլիսի 14-ին հասարակայնության մեծ շրջանակի համար այն կրկնվել է Բեռլինի Շարլենբա կոնսերվատորիայի դահլիճում:[26]

Կոմիտասը Բեռլինից վերադառնալուց հետո կրկին զբաղվել է քրդական երաժշտության նմուշների հավաքմամբ ու մշակմամբ: Այդ նպատակով նա մեկնում է քրդական գյուղեր, մասնավորապես լինում Շամիրանում և Ալագյազի լայլաներում, արժանանում քուրդ ազգաբնակչության ջերմ ընդունելությանն ու հյուրասիրությանը: Այդ մասին իր «Հավերժ ճանապարհորդ» գրքում ականատեսի իր հուշերն է ամփոփել Վ. Վարդանյանը, նկարագրելով, թե ինչպես է Կոմիտասը մի քանի հայ մտավորականների հետ բարձրանում Արագած սարը՝ ծանոթանալու քրդական երաժշտությանը. «Մերձաշնանային ընտիր օրեր էին Արագածի փեշերին, լանջերին ու գագաթին: Պարզ ու հստակ էր երկինքը, օրը ջինջ լեռնային աղբյուրի նման: Առջևից գնացողը Կոմիտասն էր, որը մերթ սրինգը հանած ոչխարականչ էր նվագում, մերթ մի քարի ծայրին կանգնած երգ էր երգում, մերթ էլ քարի կա-

քավի նման սարում աներևութանում էր, մի նոր գվարթալի անակնկալ պատրաստելով լեռնագնացների փոքրիկ արշավախմբի համար: Իսկ ակնաղբյուրին հասնելով, հովիվը ջրելու էր կանչում իր ծարաված «հոտը»: Եվ ով զարմանք: Լեռնալանջին արածող հոտը, որի տուտը ձորումն էր, թողեց իր խկական հովվին և շտապեց դեպի անծանոթ սրնգահարը: Քիչ անց հոտը ամբողջովին շրջապատեց արշավախմբին, որ հիմա մի կենդանի կղզի էր երևում, կենդանիներով շրջապատված: Հովիվը տեսնելով, որ չի կարողանում հոտին սաստել, ինքը մոտեցավ: Նրա զարմանքը ավելի մեծ եղավ, երբ տեսավ իր գելեղեղ շներին անծանոթի ոտքերի տակ տարածված: Հովիվը կեցած մնաց երկար ձեռնափայտին հենված, մինչև որ օտարականը շրթներից վար առավ սրինգը:

- Վալահ, որ դու ուզենաս, իմ ամբողջ սուրճն հետդ կտանես: Ո՛վ ես, այ մարդ:

Քրդերեն արված հարցումին նույն լեզվով էլ պատասխանեց Կոմիտասը:

- Քուրդ ես, - ավելի զարմացավ և ուրախացավ հովիվը:
- Չէ:
- Եզդի՞ ես:
- Չէ:
- Բա ո՞վ ես, որ էսքան լավ գիտես մեր երգերը, մեր լեզուն:
- Հայ:

Հովվի ուրախությանը չափ չկար: Նա մի պահ չգիտեր ինչով երախտահատույց լիներ այն մեծ բավականության համար, որ ստացել էր նրա երգից ու նվագից: Նա ձայն տվեց, կանչեց իր ընկերներին: Պատմեց նրանց դիպվածի մասին և միասին որոշեցին մեծ պատիվ տալ իրենց հյուրերին: Հապշտապ մի քանի մաքի մորթեցին ... պատվական խորտիկը դուր եկավ ոչ միայն տղամարդկանց, այլև բծախնդիր կանանց: Փառահեղ ընթրիքից հետո հիմա էլ հովիվները սկսեցին քրդական երգեր երգել ու նվագել Կոմիտասի սրինգով»:[27]

Եվ այսպես, Կոմիտասը հաճախակի էր լինում քրդերի մոտ, հավաքում նրանց երաժշտության լավագույն նմուշները, մշակում ու վերադարձնում ժողովրդին: Կոմիտասից մեզ են հասել նրա ձայնագրած 13 քրդական եղանակները և որոշ արխիվային նյութեր: Քրդական երաժշտության լավագույն գիտակներից մեկը՝ Արվեստի վաստակավոր գործիչ Ս. Գասպարյանը հաստատում է, որ «Արխիվում պահպանված Կոմիտասի ձեռագրերից N50 ծրարի մեջ զետեղված է քրդական 9 երգ, որոնք բոլորն էլ, բացառությամբ մեկի, գրված են հայկական ձայնանիշերով, խոնացած յոթերթիկի վրա: Ուշադիր կերպով զննողը նկատում է, հազիվ նշմարելի թանաքով ու մատիտով գրված այդ ստեղծագործություններից մեկը քրդական նշանավոր «Լուր-դաւրի» երաժշտության կոմիտասյան քառաձայն մշակման էսքիզն է»:[28] Մենք նույնպես ուսումնասիրեցինք այդ արխիվը և պարզվեց, որ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում են պահպանվել

հայկական ձայնանիշերով գրված նաև մի քանի այլ քրդական երգեր: Ըստ երևույթին, հեղինակը ցանկացել է հետագայում գրանք մշակել, բայց այդ աշխատանքն անավարտ է մնացել: Դրանցից առավել արժեքավոր է «Քրդական մեղեդին» բլուրի համար (սրինգ): Այդ երգերի մի մասը գրված է հայատառ քրդերենով:[29]

Նրա մշակած մի շարք երգեր մեծ ներդրում են ինչպես հայկական, այնպես էլ քրդական երաժշտության պատմության գանձարանում: Այս առթիվ կոմիտասագետ Ս. Գասպարյանը կրկին արժանավույնս գնահատելով Կոմիտասի ավանդը, գրում է. «Քառաձայն երգեցիկ խմբի համար նրա (Կոմիտաս - Կ. Ջ.) մշակած քրդական ժողովրդական երգերը առանձնահատուկ տեղ են գրավում հանճարեղ կոմպոզիտորի թողած երաժշտական ժառանգության մեջ»:[30] Յավոք, Կոմիտասն իր ունկնդրած ոչ բոլոր քրդական երգերն ու մեղեդիներն է գրի առել: Այնուամենայնիվ, այն հանգամանքը, որ մեծ երաժիշտը գրի է առել բազմաթիվ քրդական երգեր, վկայում է քուրդ ժողովրդի և նրա երաժշտության հանդեպ Կոմիտասի բարձր գնահատականի և արժեվորման, բարեկամական ջերմ վերաբերմունքի, սիրո և հարգանքի մասին:

Կոմիտասի կողմից քրդական երգի ու երաժշտության նոտագրումը բեկումնային պահ էր, նշանակալից իրադարձություն քրդական երաժշտության հետագա զարգացման ճանապարհին, որն, անկասկած, ունեցավ պատմական ու գեղարվեստական անգնահատելի նշանակություն: Հայկական մամուլը անդրադառնալով Կոմիտասյան 13 քրդական վիպերգերին, նշում է. «13 երգերն էլ յան պատրաստից բնույթով են եւ ունեն լայն շունչ եւ մեծ հնչյունների ծավալում: Երգում նախապատմություն է տրվել խոսքին: Սակայն մեղեդին արտահայտիչ է լիովին պատշաճուն է բանաստեղծական խոսքին եւ բոլոր երանգավորումներին...»: («Ալիք», 1971, 2 փետրվարի, N 24): Ընդհանրապես ձեռքի տակ եղած նրա 13 մշակումները՝ «Քրդական եղանակները» և արխիվում պահպանված որոշ նյութեր, համոզիչ կերպով ապացուցում են, որ Կոմիտասը քրդական երաժշտության մշակման գործում առաջամարտիկ է: Պրոֆեսոր Հ. Ջնդին իր «Քրդական երաժշտության վարպետը» հոդվածում («Ռյա Թազա», 22 նոյեմբերի, 1969 թ.) Կոմիտասին համարում է քրդական մշակված երաժշտության աստվածը:

Խորությամբ ուսումնասիրելով քրդական երաժշտական ֆոլկլորը, նա այն բարձր է գնահատել, քրդերին համարել երգային արվեստի մեծ սիրահարներ: Թե՛ ժանրային և թե՛ թեմատիկ առումով քրդական երգ-երաժշտության մեջ իր ուրույն տեղն ունի սիրավեպը, որը հատկապես գրավել է Կոմիտասին և նա հատուկ ուշադրություն է դարձրել հենց այդ ժանրին:

Կոմիտասի 13 քրդական երգերն առաջին անգամ տպագրվել են Մոսկվայում հրատարակվող «Էմինյան ազգագրական ժողովածուի» 5-րդ հատորում, որը կրում է «Հայ-քրդական վեպ» ընդհանուր խորագիրը: Ժողովածուի խմբագիր Խալաթյանը, կապ հաստատելով Կոմիտասի հետ, նրան խնդրել է մասնակցել գրքի աշխատանքներին: Այդ մասին տեղեկանում ենք

5-րդ հատորի առաջաբանից, որտեղ գրված է. «Ընդամենը այս գիրքը պարունակում է յուր մեջ 28 վեպ կամ պատմվածք, 13-ը ունեն քրդական երգեր-երբեմն բավական ընդարձակ (դոցա թվում 5 պատմվածք առաջ են բերված անմիջապես քրդերեն), դոցա կցված է և բնագրին շատ մոտ հայերեն թարգմանություն, որը կատարված է նույն անխոնջ բանահավաք Ս. Հայկունու աշխատանքով՝ աջակցությամբ քրդերենի հմուտ անձանց: «Էմինյան ազգագրական ժողովածուի» խմբագրությունը քրդական երգերի եղանակների մասին որոշ մի գաղափարի գիտմամբ, հանձնեց ժողովրդական երգերի մասնագետ Կոմիտաս Վարդապետին ձայնագրելու այդ եղանակները եվրոպական երաժշտական խաղերով. դոքա դետեղված են ներկա հատորիս վերջը, երգերի բնագրի հայ և եվրոպական տառադարձությամբ»:[31]

Հիրավի, Կոմիտասը համարվում է քրդական մշակված երաժշտության հիմնադիրը, նրա ակտիվ պրոպագանդիստը, երգիչը ոչ միայն Հայաստանում, այլև Եվրոպայում: Քրդական երաժշտության կոմիտասյան մշակումներում ոչ միայն պահպանված է քրդական երաժշտության ոճը, այլև արտացոլված է քուրդ ժողովրդի հարուստ ներաշխարհը, նրա հերոսական պատմությունը, մարտական ոգին, իղձերն ու երազանքները, պարզ ու ջինջ զգացմունքները: Կոմիտասի կողմից քրդական ազգային երաժշտության մշակումը կարևոր իրադարձություն էր քրդական մշակութային կյանքում, իսկ քրդական վիպերգերի ձայնագրումը պարզապես հայտնություն էր: Իրավամբ պետք է փաստել, որ Կոմիտասն ի դերև հանելով քրդական երաժշտության ազգային լավագույն հատկանիշները, եվրոպական երաժշտասեր հասարակությանն ապացուցեց այդ երաժշտության անխառն բնույթն ու բարձր արժեքը: Կոմիտասի կողմից քրդական երաժշտության ուսումնասիրությունը նաև քուրդ ժողովրդի պատմության, ազգագրության, բանահյուսության ուսումնասիրություն է: Կոմիտասի կողմից քրդական երաժշտության գեղեցիկ նմուշների տարածումը Եվրոպայում և Հայաստանում ոչ միայն գուտ ճանաչողական նշանակություն ունեցավ, այլև կենսական լիցք տվեց զարթոնք ապրող քուրդ ժողովրդին, նպաստեց հոգևոր արժեքների ամրապնդմանը: Հայ մեծ հումանիստ երաժիշտը ցույց տվեց ազգային նուրբ, հուզական, հրաշալի մեղեդին, որը բխում է քուրդ ժողովրդի հոգուց:

Կոմիտասից հետո, իհարկե, որոշ հայ երաժիշտներ, այս կամ այն առիթով, անդրադարձել են քրդական երգ-երաժշտությանը: Հայ անվանի երաժշտագետ Ռոմանոս Մելիքյանը նույնպես հետաքրքրվել է քրդական երաժշտությամբ: Այդ է վկայում թարգմանիչ ու մանկավարժ Գ. Մելոյանը, որն զբաղվել է քրդական բանահյուսությամբ, և 1926 թ. վերամշակել քրդական հայտնի վիպերգը՝ «Մամեն ու Աշեն»: Նա նշում է, որ Ռ. Մելիքյանն իրեն հանձնարարել է մշակել այդ ստեղծագործությունը: Հավանաբար մեծ երաժշտագետին հետաքրքրել է նրա երաժշտական կառուցվածքը: Սակայն պետք է նշել, որ քրդական երգ-երաժշտությունը առանձնապես բուռն վերելք ապրեց խորհրդային շրջանում: Այդ ժամանակահատվածում Խորհրդային Միության կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդների

մշակույթներն էլ ձևավորման բարդ փուլում էին, հանգամանք, որը դրական ներգործեց հատկապես այն ազգերի ու ժողովուրդների մշակույթների զարգացման վրա, որոնք մինչ այդ պետական ճանաչում չունեին: Հայ մտավորականությանն դերն այս հարցում անգնահատելի էր այն առումով, որ նրա անմիջական նախաձեռնությամբ հայաստանյան քրդական համայնքին հնարավորություն ընձեռվեց պահպանելու ժողովրդական մշակույթի ազգային ոգին, միաժամանակ այն հարստացնելով նոր բովանդակությամբ:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո հայ պրոֆեսիոնալ երաժիշտները սկսեցին զբաղվել ոչ միայն իրենց ժողովրդի երաժշտական ֆոլկլորի հավաքմամբ, ուսումնասիրությամբ և գեղարվեստական մշակմամբ, այլև՝ հարևան քուրդ ժողովրդի երաժշտական ֆոլկլորի հարցերով: Նրանք մեծ հետաքրքրություն էին դրսևորում դարերի պատմություն ունեցող այդ երաժշտության նկատմամբ, ամեն կերպ աջակցում ազգային կադրերի ստեղծմանը: Հայաստանում քրդական մշակված երաժշտության առաջընթացը նաև պայմանավորված էր քուրդ ժողովրդի սոցիալ-քաղաքական ու մշակութային կյանքի օրեցօր բարգավաճմամբ: 1930 թ. Երևանում բացված քրդական մանկավարժական տեխնիկումին կից կազմակերպվեց երգի-պարի խումբ: Նաև մայրենի լեզվով անց էին կացվում երաժշտության դասընթացներ:[32] Այդ խմբակի հիմնադիրը երաժշտագետ Գեղամ Գասպարյանն էր: Տեխնիկումում գործող այս խմբակը կարճ ժամանակամիջոցում հանրապետությունում ճանաչում ձեռք բերեց: Այն մեծապես նպաստեց քուրդ հասարակության մեջ երաժշտական մշակույթի տարածմանը: Հետագայում խումբը ղեկավարել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Սամսոն Գասպարյանը, որի շնորհիվ այն նոր որակ ձեռք բերեց:[33]

30-ական թվականներին Ս. Գասպարյանի կարևորագույն ձեռքբերումը քրդական երաժշտությունը համերգային ծրագրերում ներդրավելն էր: Մյուս կարևոր քայլը հատուկ երաժշտական ձեռնարկի ստեղծումն էր, որի անհրաժեշտությունը պայմանավորված էր տեխնիկումում և դպրոցներում քրդական երաժշտության դասավանդմամբ: Ս. Գասպարյանը, լավ տիրապետելով քրդերենին և քաջածանոթ լինելով քրդական երաժշտությանը, կազմեց նոտայագրված 12 երգերի տեքստերով քրդական երգերի ժողովածու, որը հրատարակեց 1932 թ.: Այստեղ զետեղված են «Ինտերնացիոնալ», «Հոկտեմբերի երգը», «Մուրճն ու մանգաղը», «Կոլխոզ» և այլ երգեր: Ինչպես «Ինտերնացիոնալը», այնպես էլ ութ երգեր հայերենից քրդերեն է թարգմանել հենց Ս. Գասպարյանը, նույն թվականին կազմել և հրատարակել նաև քրդերեն առաջին երգարանը:[34] 1939 թ. նա հրատարակում է քառաձայն խմբի համար մշակված «Քյալաշո» և «Լայլո» քրդական ժողովրդական երգերը: Այս ժողովրդական երգերի մշակումը շատ կարևոր էր այն առումով, որ հեղինակը կից ներկայացրել է նաև երգերի հայերեն և ռուսերեն թարգմանությունները: Գիրքը կազմված է հայերեն և ռուսերեն:

Հայրենական պատերազմի օրերին Ս. Գասպարյանը պրոֆեսոր Հ. Ջնդիի հետ քրդերեն լեզվով կազմեց քուրդ աշուղների կողմից հորինված

10 քրդական երգերի «Հայրենիք» խորագրով ժողովածուն,[35] որտեղ զետեղված էին աշուղ Ահմեդ Զոլոյի «Լենինին», «Կարմիր բանակը», «Ինքնաթիռ», «Մեր երկրի կանայք», երգիչ Ջավոյի «Մոր երգը», «Մեր հայրենիքը» և այլ երգեր: Մեկ տարի անց երկու հեղինակները կազմեցին այլ երգեր ընդգրկող երկրորդ ժողովածուն՝ «Հայրենիքի զավակները» խորագրով: Այս ժողովածուում զետեղված են Հայրենական պատերազմի ժամանակ քուրդ ժողովրդի կողմից ստեղծված այն երգերը, որոնք նվիրված էին հերոսամարտիկներին և տարածվել էին ինչպես ճակատում, այնպես էլ թիկունքում:[36] 1961 թ. Ս. Գասպարյանը, ի մի բերելով Կոմիտասի մշակած քրդական ժողովրդական երգերը և քրդական երաժշտության հետ կապված որոշ նոր նյութեր, դրանք զետեղում է «Կոմիտաս» խորագրով արժեքավոր աշխատությունում:[37] Երաժշտագետը նաև մի շարք հոդվածներ և ուսումնասիրություններ է նվիրել քրդական երաժշտական արվեստին, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է հայ մտավորականի նվիրումը քրդական մշակույթին: Իրավամբ պետք է նշել, որ Կոմիտասի գործը շարունակողն էր Սամսոն Գասպարյանը: Նա ինչպես իր «Կոմիտաս» արժեքավոր աշխատությունում, այնպես էլ մի շարք գիտական հոդվածներում անդրադառնում է քրդական երաժշտության ինքնատիպությանը, բարձր երգարվեստին. «Քրդերը երգային արվեստի մեծ սիրահարներ են: Երաժշտությունն ու պարը կազմում են նրանց կենցաղի անբաժանելի մասը: Առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում քրդական երաժշտության ֆոլկլորը, որն իր թեմատիկ և ժանրային առանձնահատկություններով, մելոդիկ հարստությամբ, ինտոնացիայով, ռիթմիկ ինքնատիպությամբ գրավել է թե նախախորհրդային և թե խորհրդային կոմպոզիտորների ուշադրությունը»:[38] Իսկ իր «Հոկտեմբերը և քրդական երաժշտական կուլտուրան» հոդվածում, որը տպագրվել է «Ռդա թեզադի» 1973 թ. փետրվարի 17-ի համարում, բարձր գնահատելով քրդական երաժշտության ձեռքբերումները, կոչ է անում հայ մտավորականությանը զբաղվել եղբայրակից քուրդ ժողովրդի երաժշտությամբ, երգերի հավաքմամբ, որոնք լայնորեն տարածված են Հայաստանում:

Մեծ են Սամսոն Գասպարյանի ծառայությունները քրդական մշակված երաժշտության ստեղծման ու զարգացման գործում: Նրա նախաձեռնությամբ ու միջնորդությամբ են կազմակերպվել քրդական երգ ու պարի մի շարք խմբեր, որոնք ճանաչում ձեռք բերեցին ողջ Խորհրդային Միությունում: Անվանի երաժշտագետ Մարգարիտ Բրուտյանը, բարձր գնահատելով այդ բնագավառում Ս. Գասպարյանի ծառայությունները, հաստատել է. «Լինելով համոզված ինտերնացիոնալիստ արվեստագետ, Ս. Գասպարյանը հսկայական աշխատանք է տարել Հայաստանում ապրող քրդերի ու ազգերի ջանցինների կուլտուրական կյանքի զարգացման գործում: Նա ձայնագրել է մի քանի տասնյակ քրդական ժողովրդական երգեր ու պարեղանակներ»:[39] Մեծ արվեստագետի ծառայությունը միշտ էլ բարձր է գնահատվել հայ և քուրդ ժողովուրդների կողմից: 1979 թվականի դեկտեմբերի 27-ին Հայաստանի արվեստի աշխատողների տանը նշվեց հայ անվանի երաժշտագետ Ս.

Գասպարյանի 70-ամյակը, որը վերածվեց հայ և քուրդ ժողովուրդների մշակութային կապերի մի իսկական տոնախմբության: Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Էդվարդ Միրզոյանը, անդրադառնալով Ս. Գասպարյանի գործունեությանը, ասաց. «Մենք՝ հայերս և քրդերս բարեկամներ ենք, դրա վառ վկայությունն է Սամսոն Գասպարյանի այն մեծ ու անգնահատելի աշխատանքը, որը կատարել է քրդական մշակութային կյանքում: Մենք նույնպես այսօր ամեն կերպ օգնում ենք մեր հարևան ու բարեկամ քուրդ ժողովրդին, արդեն երաժշտության ասպարեզում ունենք քուրդ երաժիշտներ, ինչպես Նուրեն և Ջամիլան»: Պրոֆեսոր Ռ. Աթայանը, հիշատակելով «Լայլոն», նշում է. «Հայկական կյանքում այն լայն տարածում ունի, այն երգվում է տանը, փողոցում, երգչախմբերում, այն Ս. Լիսիցյանի միջոցով բեմ բարձրացավ, իսկ շունչ առավ Ս. Գասպարյանի ձեռքերով, դարձավ բարեկամության երգ»: Երեկույթի ընթացքում Հայաստանի պետական երգչախումբը, Հայաստանի ժողովրդական դերասան Լուսինե Զաքարյանի մասնակցությամբ, քրդերեն կատարեց Ս. Գասպարյանի կողմից մշակված մի քանի քրդական ժողովրդական երգեր:

Հայաստանի կառավարության և հայ մտավորականության կարևորագույն նախաձեռնություններից էր նաև տարբեր ժամանակներում Հայաստանում քրդական երգերի գրառման նպատակով մի շարք արշավախմբերի կազմակերպումը: 1931 թ. այդպիսի մի արշավախմբի մասնակցել են Սպիրիդոն Մելիքյանը, Կարո Զաքարյանը, Արամ Քոչարյանը, Քրիստափոր Քուշնարյանը և ուրիշներ, որոնք գրի են առել 400-500 քրդական ժողովրդական երգեր:[40]

1936 թ. Հայպետհրատը հրատարակել է քրդական ժողովրդական երգերի մի ժողովածու, որը կազմված էր Կ. Զաքարյանի և Հ. Ջնդու հավաքած ու գրի առած երգերից: Ընդգրկված էին սիրային, հերոսական, պարային 162 նոտայագրված երգեր: Յուրաքանչյուր երգի վերնագիրը գրված է քրդերեն, հայերեն և ռուսերեն, այդպիսով հայ և ռուս երաժշտագետներին հնարավորություն ընձեռելով ծանոթանալու նոտայագրված քրդական տեքստերին: Բացի քրդական ժողովրդական երգերից, ներկայացված են նաև քուրդ աշուղներ Ահմե Զոլոյի «Երանի երամ լինեի», «Որդին չոբան է», «Լայլան», Ջալիլե Ռաշոյի «Ջարջարիսում չոմլիսե», «Ալի բագը և շեյխ Զոլոն», «Մենք մեր խոսքը կկատարենք» և հայ երգիչ, մանկավարժ, քրդական մշակույթի նվիրյալ Նշան Ռշտունու «Բերիվանե» երգերը: Երաժշտագետ Կ. Զաքարյանը, անդրադառնալով քրդական ժողովրդական երգերին, բարձր է գնահատել և միևնույն ժամանակ ընդգծել հայ մտավորականների անշահախնդիր նվիրումը և ներդրած ջանքերը քրդական ժողովրդական երգերի լավագույն նմուշները հավաքելու և գրառելու գործում: Ժողովածուի առաջաբանում նա գրել է. «1931 թ. ինձ բախտ վիճակվեց մասնակցել Հայաստանի Լուսժողկոմատի կողմից կազմակերպված քրդագիտական արշավախմբի աշխատանքներին: Արշավախումբը շրջագայեց Հայաստանի քրդաբնակ վայրերը՝ Ապարան, Թալին, Վաղարշապատ, Լենինականի

քրդական գինվորական վաշտ և այլն: Արշավախումբը գլխավորում էր քրդագետ պրոֆեսոր Խաչատրյանը, իսկ անդամներն էին քուրդ ընկերներ Հաջիե Ջնդին, Ջարդոյե Գենջոն: Ի՞նչ էր արշավախմբի նպատակը: Հավաքել ժողովրդի միջից ժողովրդական բանահյուսությունը, ուսումնասիրել գործածական բառերն ու դարձվածքները, որով կարելի կլինի հարստացնել ու զարգացնել նորարողբող քրդական լեզուն ու գրականությունը ... Արշավախմբի կողմից իմ առաջ խնդիր դրվեց միաժամանակ ուսումնասիրել, ժողովել ու գրի առնել քրդական ժողովրդական երգերը: Մեր շրջագայության ընթացքում ես գրի առա 80 երգ, որի վրա ավելացնելով Երևանի քրդական տեխնիկումի ուսանողներից հավաքված 45 երգերը, կազմեցի սույն ժողովածուն»:[41] Այնուհետև, անդրադառնալով քրդական ժողովրդական երգերին և քուրդ ժողովրդի կատարողական արվեստին, Կ. Զաքարյանը գրում է. «Քրդական ժողովրդական երգերում զգացվում է լեռնցուն հատուկ խիզախությունն ու համարձակությունը: Նրանց բազմապիսի պարերգերը վկայում են նրանց կենսուրախ ու անհոգ բնավորությունը ... Պետք է նշել, որ քրդերը վերին աստիճանի երաժշտական ժողովուրդ են, նրանք բոլորն էլ համարյա գիտեն երգել և տարբերվում են միմյանցից միայն կատարման որակով»:[42]

Իր ընդարձակ առաջաբանում Կ. Զաքարյանը անդրադարձել է նաև հայ-քրդական երգարվեստների փոխազդեցությանը, այդ մասին գրելով. «Քրդական ժողովրդական երգերը, ինչպես և հայկական ժողովրդական երգերը, փոխադարձաբար իրար նման են: Սա, իհարկե, պատահական երևույթ չէ: Որպես հարևան ազգեր, ինչպես անցյալում, այնպես էլ այժմ նրանք գտնվում են անմիջական շփման մեջ և բնականաբար ունեցել են փոխադարձ ազդեցություն միմյանց կենցաղի, սովորությունների և ընդհանուր կուլտուրայի վրա: Երբեմն նմանությունն այնքան ուժեղ է լինում, որ ունկնդիրը տարակուսանքի մեջ է ընկնում և դժվարանում է որոշել, թե ո՞րն է հայկականը և ո՞րը քրդականը»: Ավելացնենք, որ խնդրո առարկա ժողովածուի լույսընծայումը նոր թափ հաղորդեց քրդական մշակված երաժշտության զարգացմանը և նոր մակարդակի բարձրացրեց քուրդ աշխատավորության և հատկապես երիտասարդության գեղարվեստական դաստիարակության գործը:

30-ական թվականներին Հայաստանի արվեստի գործերի վարչության ժողովրդական ստեղծագործության տունը կազմակերպեց հայ և քուրդ երաժշտագետներից, նկարիչներից, քանդակագործներից ու գրողներից կազմված ևս մի հատուկ արշավախումբ: Արշավախմբում էին Սրբուհի Լիսիցյանը, Ուրարտուն, Քոչարը և Ջ. Գենջոն: Արշավախումբը պետք է մեկներ Աղմաղանի քրդական յայլաները: Նրա խնդիրն էր հավաքել քրդական ժողովրդական այն ստեղծագործությունները, որոնք ստեղծվել էին խորհրդային ժամանակաշրջանում, գրի առնել և ձայնագրել քրդական երգ-երաժշտության լավագույն նմուշները: Միևնույն ժամանակ նախատեսված էր պատրաստել քրդական կյանքն ու կենցաղը ներկայացնող նկարներ ու քան-

դակներ: Ինչպես նշում են արշավախմբի անդամները, նրանց վրա շատ մեծ տպավորություն են թողել քրդական երգն ու երաժշտությունը. «Քրդական օբայում Հասանե Քյալոն մեզ ընդունեց վրանում, մեծ հյուրասիրությամբ, մեր թիկունքին դրեցին մի քանի բալիշներ, մեզքներս ծածկեցին վերմակով, աստիճանաբար վրանը լցվեց ժողովրդով: Նրանք իմանալով մեր գալու նպատակը, սկսեցին երգել քրդական մելամաղձոտ երգերը... Հաջորդ օրը մենք ձայնագրեցինք քրդական 8 երգեր և պարեղանակներ: Այս հոյակապ պատմվածքներում, երգ և երաժշտությունում արտահայտված է քուրդ ժողովրդի թախծոտ ու չարքաշ անցյալը, նրանց այսօրվա երջանկությունը, պայծառ ապագան, որին նրանք հասել են խորհրդային իշխանության տարիներին... Այնուհետև քանդակեցինք մի քրդուհու: Մեր վրա բացարձակ տպավորություն թողեց նրանց հյուրասիրությունը, համերաշխությունը, ողջ օբան կարծես մի ընտանիքի անդամ լիներ, իսկ նրանց սերը դեպի երեխաները բացարձակ էր»:[43]

Գիտական նմանօրինակ արշավախմբի կազմակերպումը ոչ միայն կատարեց քրդական երաժշտության լավագույն նմուշների հավաքման, նոտագրման և կորստից փրկելու իր կարևորագույն առաքելությունը, այլև յուրովի նպաստեց քուրդ ժողովրդի հոգևոր կերտվածքի ամրակայմանը, նրա երաժշտական կենցաղի վերափոխմանը:

Բազմաթիվ հայ մտավորականներ իրենք էին նախաձեռնում քրդական երգերի հավաքման ու գրի առնելու շնորհակալ աշխատանքը: Նրանցից մեկն էլ Սպիրիդոն Մելիքյանն էր, որը շրջագայելով Ապարանի, Թալինի և Աշտարակի շրջաններում, գրի է առել ու ձայնագրել մի շարք քրդական երգեր, որոնք հետագայում տպագրվել են նրա «Հայ ժողովրդական երգեր և պարեր» երկհատորյակում:[44] Առաջին հատորում զետեղված են 47 երգեր ու մեղեդիներ, իսկ երկրորդ հատորի «Ազրբեջանական և քրդական երգեր՝ ձայնագրված Հայաստանի շրջաններում» բաժնում ընդգրկված են 15 քրդական երգեր:

Սպ. Մելիքյանը բազմիցս շրջագայել էր քրդերի մեջ, լավատեղյակ էր նրանց կենցաղին, բարքերին ու սովորույթներին, հատկապես երաժշտությանը: Անդրադառնալով հայ-քրդական դարավոր բարեկամությանն ու շեշտելով նրանց առնչակցությունը երաժշտության բնագավառում, նա գրել է. «Քրդերի երգը մենք շատ լավ ենք ըմբռնում: Շատ անգամ հասարակ աչքով նայողը կարող է շփոթել մեր մի քանի տեղական, ինչպես և Մոկաց երգերի հետ, ինչո՞. որովհետև նա մեզ հետ համարյա նույն երկրում, նույն արևի տակ է ապրում, նույն կյանքն է անցկացնում, ինչ որ մեր լեռնցին, Մոկացին»:[45] Քուրդ երաժշտագետ Ջամիլա Ջալիլը իր «Երաժշտության երախտավորը» հոդվածում, որը նվիրված է Սպիրիդոն Մելիքյանի 100-ամյակին, ջերմությամբ է խոսել մեծ երաժշտի հավաքագրման այն ներդրումների մասին, որ նա կատարել է քրդական երգերի հավաքագրման ու մշակման գործում: Ջամիլան գրել է. «Սպիրիդոն Մելիքյանը մեծ երաժշտագետ ու ազգագրագետ էր: Նրա ներդրումները մեծ են ինչպես հայ ժողովրդի երգային

արվեստի հավաքագրման ու առաջ մղման գործում, այնպես էլ քրդական ժողովրդական երգերի հավաքագրման և մշակման ուղղությամբ»:[46]

Բարձր գնահատելով քրդական երաժշտությունը, կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանն իր «Գայանե» բալետում և Մարտին Մազմանյանն իր «Մամե ու Աշե» սիմֆոնիկ պոեմում օգտագործել են քրդական ժողովրդական երաժշտության լավագույն նմուշները: Կոմպոզիտոր Կարապետ Լևոնի Կաբալևսկին նշելով մի քանի բալետների երաժշտության ու պարի մասին, որոնք իրեն շատ հարազատ են, դրանց թվում հիշատակել է Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետից «Սուսերով պարը»: Նա գրել է. «Ով ձեզանից չի իմանում Արամ Խաչատրյանի ձգող, աշխույժ «Սուսերով պարը», որի երաժշտության մեջ այնքան գեղեցիկ ու վարպետորեն է նկարագրված քրդական պարը մերկ սրերով, որի մեջ վառ կերպով արտահայտված է լեռնցու խիզախ բնավորությունը»:[47]

Արամ Խաչատրյանը միշտ էլ հետաքրքրվում էր քրդական մշակույթով, հատկապես երաժշտությամբ, օգնել է քուրդ երիտասարդ երաժիշտներին: Երաժշտագետ Ն. Զաուարին իր հոդվածներից մեկում գրել է. «1960 թ. հունիս ամսին Երևանում Ա. Խաչատրյանի երաժշտական երեկոն էր, ընդմիջմանը ես մոտեցա նրան, հայտնեցի, որ քրդուհի եմ և զբաղվում եմ երաժշտությամբ, ցանկանում եմ իմ երախտագիտական խոսքն ուղղել նրան, շնորհավորել այդ հոյակապ երեկոն»: Ինչպես նշում է Զաուարին, երբ կոմպոզիտորը տեղեկանում է, որ զրուցակիցը քրդուհի է, առավել ջերմությամբ է նրան ընդունում, խոսում քրդական երաժշտության մասին, բարեկամական խորհուրդներ տալիս, որ նա էլ ավելի խորանա, իր իսկ խոսքերով, «քրդական աննման երաժշտության մեջ»:[48]

Կոմպոզիտոր Ե. Սարդարյանը նույնպես զբաղվել է քրդական երաժշտությամբ: Նա բանաստեղծ Ֆ. Ուսուբի «Սարեր» բանաստեղծությունը վերածել է երաժշտական կոմպոզիցիայի, որը նոտագրված տպագրվել է «Ոյա թազա» թերթում և կարճ ժամանակամիջոցում լայն տարածում գտել ինչպես քուրդ, այնպես էլ հայ երաժշտասեր հասարակության շրջանում:[49] Հարկ է նշել, որ «Ոյա թազան» հաճախակի էր տպագրում հայ և քուրդ երաժիշտների կողմից նոտագրված քրդական երգեր, որոնք դրական ներգործություն ունեցան քրդական երաժշտության վրա:

Քրդական ժողովրդական երգն ու երաժշտությունը հրապուրել են նաև սիյուռքահայ երաժշտագետներին: Պարսկահայ երաժշտագետ Ռուբեն Գրիգորյանը հայ երաժշտության հետ մեկտեղ զբաղվել է քրդական երաժշտության մշակմամբ և «Հուր» ամսագրի համարներում տպագրել է մի քանի երգեր:[50] Ինչպես արդեն նշել ենք, սիյուռքահայ մամուլը բազմիցս է տպագրել քրդական երգեր, ինչին ևս մեկ անգամ չանդրադառնանք:

Քրդական ժողովրդական երաժշտության հավաքման ու ձայնագրման ուղղությամբ վերջին տարիներին շնորհակալ աշխատանք է կատարել Երևանից տրվող քրդական ռադիոհաղորդումների խմբագրությունը: Այս գործում խմբագրությանը զգալի օգնություն է ցույց տվել Հայաստանի ազգային ռադիոյի Ա. Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլը: Ա-

րամ Մերանգուլյանի մշակած քրդական երգերը ժողովրդական գործիքների նվագակցությամբ հաճախ են հաղորդվում ռադիոյով: Այժմ քրդական երաժշտական ֆոնդում կան 3000-ից ավելի քրդական ժողովրդական երգեր: Քրդական ռադիոհաղորդումների խմբագրությունը հայ ռեժիսորների անմիջական օգնությամբ շնորհակալ աշխատանք է կատարել երաժշտական կոմպոզիցիաների ստեղծման ուղղությամբ, որոնք նորություն են քրդական երաժշտական կյանքում: Երախտագիտությամբ պետք է նշել, որ այդ կոմպոզիցիաները հիմնականում պատրաստվել են քրդական նախկին թատրոնի ռեժիսոր Ցոլակ Նիկողոսյանի անմիջական ջանքերով: Այժմ այնտեղ կան 30-ից ավել ռադիոկոմպոզիցիաներ, որոնցից լավագույններն են Ս. Սիաբանդովի «Խաչե ու Սիաբանդո», Ա. Ավդալի «Գյուլիզարը», Հ. Ջնդու «Մամեն ու Այշեն», Մ. Ասադի «Սիսեն» և այլն: Քրդական ռադիոկոմպոզիցիաների մեջ իրենց ուրույն տեղն են գրավում հայ նշանավոր գրողներ Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Հր. Քոչարի, Ստ. Զորյանի և մյուսների ստեղծագործությունները, որոնք ջերմ ընդունելություն են գտել ռադիոլսողների կողմից, հարստացրել քրդական երաժշտական ֆոնդը:

Քրդական ռադիոհաղորդումների ժամանակ հանդես են գալիս ոչ միայն քուրդ, այլև հայ ինքնուս ու պրոֆեսիոնալ երգիչներ, երաժիշտներ: Հայաստանի ժողովրդական դերասան Հովհաննես Բադալյանի, Ռուբեն Մաթևոսյանի, ինքնուս երգիչներ Կարապետ Խաչոյի, Արամե Տիգրանի (Մելիքյան) և մյուսների կողմից կատարած երգերը լայն ճանաչում են գտել ոչ միայն Հայաստանի, այլև արտերկրի քուրդ բնակչության մեջ: Այսօր քրդական երգ-երաժշտության ֆոնդում կան Կարապետ Խաչոյի (Կարապետ Խաչատրյան) ձայնագրված մոտ 30 երգեր: 1946 թ. Սիրիայից վերադառնալով հայրենի Հայաստան, նա էլ ավելի կատարելագործեց քրդական երգերի իր կատարողական վարպետությունը, որոնց մասին ասում է. «Ես մանկությունս անց եմ կացրել քրդերի մեջ, սիրել քրդական երգն ու երաժշտությունը, ինձ վրա մեծ ազդեցություն է ունեցել քուրդ նշանավոր երգիչ Հասան Զղրային»:[51]

Արամե Տիգրանն իր ընտանիքի անդամների հետ կազմել էր գործիքային մի եռյակ (ինքը նվագում էր ջումբուր գործիքի վրա, մի եղբայրը՝ քյամանչայի, իսկ մյուս եղբայրը՝ դափի վրա), որը բարձր վարպետությամբ կատարում էր քրդական երգեր ու նվագում: Ինքը՝ Ա. Տիգրանը, ստեղծագործում ու երգում էր քրդերեն այնպիսի վարպետությամբ, որ չէր զիջում պրոֆեսիոնալ քուրդ երգչին: Նրա կողմից ստեղծված բազմաթիվ երգեր վաղուց են ընդգրկվել քրդական երաժշտական ոսկյա երգադարանում: Անդրադառնալով հայ-քրդական երաժշտությանը, նա ասում է. «Ես իմ մանկությունը անց եմ կացրել Սիրիայի քրդաբնակ Ղամուշլիի շրջանում: Դեռ մանուկ հասակից սիրել եմ քրդական երգ ու երաժշտությունը, որը շատ հարազատ է ինձ: Ղամուշլիի շրջանում քրդերը և հայերը խառն էին ապրում, նրանք մասնակցում էին միմյանց հարսանիքներին, ուրախություններին, խնջույքներին, սգո և ծիսական արարողություններին և ես հենց այդտեղ էլ քուրդ դանգ-

բեժներից (երգիչներից) սովորեցի շատ երգեր ու այսօր էլ մեծ հաճույքով եմ կատարում ինձ հարազատ այդ երգերն ու երաժշտությունը»:[52]

Արամե Տիգրանի երգերը մեծ ժողովրդականություն են վայելում ոչ միայն Հայաստանի քրդերի մեջ, այլև արտերկրում: Արտասահմանում հրատարակվող քրդական առաջադիմական ամսագրերից «Pejing»-ը 1984 թ. 5-րդ համարում, գնահատելով Արամե Տիգրանի ծառայությունները քրդական երաժշտության բնագավառում, գրել է. «Հայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ մեծ ներդրումներ ունեն քրդական մշակույթում: Նրանցից մեկն էլ Արամե Տիգրանն է, որն իր ողջ ստեղծագործական կյանքը նվիրել է քրդական երաժշտությանը: Նրա նուրբ ու զմայլիչ երգն ու երաժշտությունը ջերմությամբ է ընդունվում ինչպես Խորհրդային Հայաստանի քրդերի, այնպես էլ ողջ Քյուրդիստանում և Եվրոպայում բնակվող բազմահազար քրդերի կողմից»:[53]

Քուրդ անվանի բանաստեղծ Խաչիկ Մուրադովը, անդրադառնալով Արամե Տիգրանի երգարվեստին, գրում է. «Արամե Տիգրանը քրդական երգերի կատարման բարձր արվեստագետ է»:[54]

Քրդական երաժշտության մեջ ստեղծվեց մի նոր ուղղություն՝ քաղաքային երաժշտությունը, որը նույնպես հիմնվեց հայ մտավորականության կողմից: Դեռևս 30-ական թվականներին Սամսոն Գասպարյանը փորձում էր նման երգերի տեքստեր գրել, իսկ աշուղ Նազուկը, Մամե Ջոլոն երգում էին դրանք: Սակայն այս ճյուղը կատարելության հասավ Արամե Տիգրանի ծավալած գործունեության արդյունքում, որը հիմնավորապես նվիրվելով այդ ստեղծագործական աշխատանքին, ամենուր հանդես էր գալիս քուրդ հասարակության առջև և կատարում իր հորինած երգերը՝ նոր շունչ տալով քուրդ ժողովրդի ազգային ինքնագիտակցությանը և Թուրքիայում քուրդ ազատամարտիկների մղած պայքարին:

Հայաստանում արդեն ասպարեզ են իջել կատարողական բարձր վարպետությամբ օժտված բազմաթիվ քուրդ երգիչներ և երաժիշտներ, որոնցից շատերը դարձել են հանրապետության օլիմպիադաների դափնեկիրներ: Նրանցից շատերը հայ երաժիշտների ու երգիչների անմիջական օգնությամբ են խորացել երգարվեստի ու երաժշտության մեջ: Հարկ է երախտագիտությամբ նշել, որ առաջին անգամ հենց Հայաստանում են քուրդ շնորհալի երիտասարդները երաժշտական բարձրագույն կրթություն ստացել: Դուդուկահար Ագիտե Ջմոն իր բարձր կատարողականությամբ այսօր կարող է մրցել պրոֆեսիոնալ լավագույն դուդուկահարների հետ: Նրա հոգեզմայլ մեղեդիները խորապես հարազատ են ինչպես քուրդ, այնպես էլ հայ երաժշտասեր հասարակությանը: Գեղեցիկ ու խորապես ազգային են դուդուկի, զուռնայի, շվիի, գաբոյի վրա կատարած նրա բոլոր եղանակները: Նրա կողմից մշակված ու նոտայագրված «Լուր-դա-լուրը» հոգեհարազատորեն են կատարում քուրդ և հայ դուդուկահարները:[55] Նրա երաժշտությամբ են հնչում քուրդ բանաստեղծների ստեղծագործությունները, որոնք լայն տարածում են գտել արտերկրում: Ագիտե Ջմոն բազմիցս է մասնակցել հանրա-

պետական օլիմպիադաներին և արժանացել մրցանակների: 1963 թ. մասնակցելով Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի երաժիշտների կոնֆերանսին, նա արժանացել է երկրորդ մրցանակի: Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում սովորելիս նրա անմիջական ղեկավարներն եղել են հայ անվանի երաժիշտներ: Այստեղ նա կատարելագործել է իր բնատուր տաղանդը, նվագելով գաբո գործիքի վրա, որը նորույթն էր քրդական երաժշտության մեջ: Ագիտե Ջմոն հեղինակ է բազմաթիվ երաժշտական ստեղծագործությունների, որոնցից «Քրդական քայլերգը» լայն ճանաչում է գտել ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս:

Քրդուհիներ Սուսիկա Սմոյի, Ալիկա Ղաղրի, Ջադինա Շակրի զմայլելի երգերը լայն ճանաչում և ընդունելություն են գտել քուրդ և հայ ազգաբնակչության մեջ: Դրանք հաճախ են հնչում ռադիոյով: Սուսիկա Սմոյի մասին «Կոմունիստ» թերթը գրել է. «Քրդական ռադիոհաղորդումների խմբագրությունը բազմաթիվ նամակներ է ստանում հայկական և քրդական գյուղերից, որոնցով խնդրում են Սուսիկա Սմոյի կատարմամբ հաղորդել քրդական ժողովրդական երգեր ... Նա վարպետորեն է կատարում հայ գուսանների Ջիվանու, Աշոտի, Շահենի և մյուսների երգերը: Նա թարգմանել է Սայաթ-Նովայի երգերից և մեծ հուզականությամբ է քրդերեն կատարում»:[56] 1971 թ. մարտին Հայաստանի կուլտուրայի նախարարությունը և հայֆիլհարմոնիան կազմակերպեցին Ս. Սմոյի հեղինակային երեկոն: Հայաստանի ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում հավաքվել էին մեծ թվով հայ և քուրդ երաժշտասերներ: Ս.Սմոն կատարեց քրդական և հայկական ժողովրդական երգեր, որոնք ընդունվեցին ցնծությամբ:[57] Այդ օրը նրան հանձնվեց Հայաստանի կուլտուրայի նախարարության պատվոգիրը: Ինչպես զեկուցողը՝ Հայֆիլհարմոնիայի խմբագրական և ռեկլամների բաժնի վարիչ Հ. Համբարձումյանը, այնպես էլ Հայաստանի վաստակավոր դերասան Գ. Իվանյանը, նշեցին, որ Սուսիկա Սմոն մեծ ներդրում ունի ոչ միայն քրդական, այլև հայկական երգարվեստում, որ նա հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության իսկական երգիչն է:[58]

Իսկ երգչուհի Դիանա Վաքիլը ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիայի ասպիրանտուրան: Նրա հնչեղ ու զմայլիչ ձայնը խորապես հուզում է թե՛ քուրդ և թե՛ հայ ունկնդրին: Էդվարդ Միրզոյանը, մի առիթով լսելով Դիանային, ասել է. «Դու ունես գեղեցիկ մշակված ձայն, մեր երկու ժողովուրդների երաժշտությունները հարազատ են քեզ, հայ-քրդական երաժշտությունները մեր բարեկամության կամուրջներն են»: Դաշնակահարուհի Լայլա Ջամալը ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիայի ասպիրանտուրան, իրեն նվիրել հայ-քրդական երաժշտության դարավոր արվեստին: Թալինի շրջանի Ավթոնա գյուղի ուսուցիչ Ագիտե Թեջրը իր գեղեցիկ ժողովրդական երգերով հանդես է եկել քրդական ռադիոհաղորդումներում: Ինչպես ինքն է նշում, իրեն միշտ ոգևորել են Երևանից տրվող քրդական երաժշտական հաղորդումները: Նա արժանացել է ոչ միայն Հա-

յաստանի ռադիոլսողների, այլև արտասահմանյան ունկնդիրների համակրանքին: Նա նաև ինքնուս ստեղծագործող է, որի երգերը վաղուց տարածվել են ժողովրդի մեջ: Երաժշտագետ Ն. Ջավաբին, անդրադառնալով նրա կատարողականությանը, գրել է. «Ժողովրդական երգերի կատարման վարպետ Ագիտե Թեջրին բնությունը պարգևել է երաժշտական մեծ ունակություններ»:[59] Թեջրի երգերը մեծ հետաքրքրություն են առաջացրել հայ երաժշտասեր հասարակության մեջ: Պատահական չէ, որ նա նշում է. «Ես ածել եմ Հայաստանում, ինձ վրա մեծ ազդեցություն է ունեցել եղբայրական հայ ժողովրդի երաժշտությունը»: Նա մի շարք երգեր է նվիրել հայ և քուրդ ժողովուրդներին, նրանց այն հերոս զավակներին, որոնք խիզախաբար մարտնչել են թուրքական ոտնձգությունների դեմ: Դրանց թվում են «Դա լեխըն» (Դե խփեք), «Բավե բավա» (Հայրերի հայրը), «Անդրանիկ փաշա» և այլն:[60] Վերջին երգի մեջ պաթոսով ու հուզականությամբ է ներկայացված թուրքական հրոսակախմբի դեմ հայ անվանի զորավար Անդրանիկի և եղդի նշանավոր մարտիկ Ջանգիր Աղայի միասնական պայքարի հերոսական ոգին:

Այսօր ինչպես հայերի, այնպես էլ ողջ քրդության մեջ մեծ ճանաչում ունի անվանի քուրդ երգիչ Դլովանը, որը երգում է և՛ քրդերեն, և՛ հայերեն: Իսկ Էջմիածնի բնակիչ Ֆայզոյե Ռզայի, Թալինի շրջանի Հակո գյուղի բնակիչ Աֆոյե Ասադի երգերը հնչում են ոչ միայն ռադիոյով, այլև յուրաքանչյուր քրդի օջախում:

30-ական թթ. սկսեց զարգանալ գուսանական արվեստը, որի հիմնադիրներն էին աշուղներ Ահմե Զոլոն, Ահմադե Միրազին, Քամլե Բաքոն (Նազուկը) և Ջալիլե Ռաշոն, որոնք կարճ ժամանակամիջոցում մեծ համբավ ձեռք բերեցին ոչ միայն հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս: Ահմե Զոլոն և Ջալիլե Ռաշոն Մոսկվայում մասնակցել են համամիութենական օլիմպիադայի և արժանացել մրցանակների: Հետաքրքրական է, որ այս աշուղները հիմնականում հանդես էին գալիս ժամանակակից երգերով:

Քրդական գյուղերում աստիճանաբար սկսեցին ստեղծվել երգի-պարի խմբակներ: 1930-ական թթ. Ապարանի շրջանի Ալագյազ և Ջարջարիս, Թալինի շրջանի Հակո, Սորիկ և Թլքե գյուղերի երգի պարի անսամբլները (հայ արվեստագետների ղեկավարությամբ) արժանացել են Խորհրդային Միության դափնեկրի պատվավոր կոչման:

1937թ. Մոսկվայում ԽՍՀՄ Սահմանադրության օրվան և Գերագույն խորհրդի ընտրություններին նվիրված ստուգատեսին մասնակցելու համար Թալինի շրջանի Թլքի ակումբին կից քրդուհիների երգի-պարի խումբը հրավիրվեց Մոսկվա: Ի դեպ, նշենք, որ այս խումբը հայ արվեստագետների անմիջական մասնակցությամբ հանրապետությունում մեծ հեղինակություն էր ձեռք բերել, արժանացել դափնեկրի կոչման: Խումբը Մոսկվայի պետական ակադեմիական մեծ թատրոնի շենքում և կուլտուրայի այլ օջախներում կատարեց քրդական ժողովրդական խմբակային երգեր և պարեր: Հա-

մամիութենական փառատոնում այս խմբի հետ ազգային արվեստը հաջողությամբ ներկայացրեցին նաև 50-ամյա թմբկահար Մամոե Սադոն, զուռնաչիների եռյակը՝ Շամիլե Բաքոյի ղեկավարությամբ (Շամիլ, Ահմոն, Շարոն)։ Քուրդ ժողովրդի պարերգերի հիանալի կատարման համար խումբը պարգևատրվեց համամիութենական փառատոնի դիպլոմով և մեդալով։[61]

Թալինի շրջանի Սորիկ գյուղի երգի-պարի անսամբլը հանրապետության ճանաչված խմբերից էր, որ հաճախակի էր հանդես գալիս բնակչության առջև ոչ միայն քրդական, այլև հայկական գյուղերում։[62] Նույն շրջանի Ավթոնա գյուղի երգի-պարի խումբը կազմակերպվել է 1967 թ., դպրոցի դիրեկտոր Տահարե Ամարի գլխավորությամբ։ Խումբը հանրապետության մի շարք փառատոններում ու օլիմպիադաներում արժանացել է պատվոգրերի։[63]

Հայաստանի խորհրդայնացման 35-րդ տարեդարձի կապակցությամբ 1955 թ. նոյեմբերի 22-ին Երևանի ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ հանրապետական օլիմպիադա, որտեղ բազմաթիվ ինքնագործ խմբերի հետ հանդես եկավ Ապարանի շրջանի Ալագյազ գյուղի քրդական երգի-պարի անսամբլը և արժանացավ Հայաստանի կուլտուրայի նախարարության պատվոգրի։[64]

Համաշխարհային 6-րդ երիտասարդական փառատոնի առիթով հանրապետությունում նախապատրաստական մեծ աշխատանքներ ծավալվեցին։ 1957 թ. մայիսին տեղի ունեցավ Ապարանի շրջանի ինքնագործ խմբերի փառատոն, որին մասնակցեցին Ջարջարիսի և Ալագյազի քրդական երգի-պարի խմբակները։ Վերջիններս արժանացան դրամական պարգևի, իսկ Ալագյազի խումբը իրավունք ստացավ մասնակցելու հանրապետական փառատոնին։[65] Թալինի շրջանի ինքնագործ խմբերից փառատոնին մասնակցեցին նաև Սորիկ, Թլղե, Հակո գյուղերի քրդական երգի-պարի խմբերը։ Սորիկի և Թլղեի խմբերը իրավունք ստացան մասնակցելու միութենական օլիմպիադային։[66]

Հանրապետությունում լայն ճանաչում էր ստացել Նաիրիի շրջանի Պռոշյանի անվան սովխոզի քրդական երգի պարի անսամբլը, որի մեջ ընդգրկված էին 20 քուրդ տղաներ և աղջիկներ։ Այն ղեկավարում էր Ալագյազի նախկին պետական թատրոնի դերասանուհի Զիլա Ջալիլը։[67]

1977 թվականին Հոկտեմբերյանի շրջանի Մրգաշատ գյուղում Էդուարդ Մարտիրոսյանի ղեկավարությամբ գործում էր քրդական երգի պարի խումբ, որը մի քանի անգամ արժանացել է շրջանային օլիմպիադայի դափնեկրի կոչման։[68] Իսկ Ալագյազի կուլտուրայի տան «Բահար» երգի-պարի խումբը Ռոգանե Ամոյի ղեկավարությամբ հանդես է եկել ոչ միայն Անդրկովկասում, այլև Մերձին Ասիայում։

Պետք է նշել, որ թվարկված խմբերն իրենց արվեստում կատարելագործվել են հայ արվեստագետների ղեկավարությամբ, կրթվել հայ երաժշտության ու երգարվեստի մթնոլորտում, հանգամանքներ, որոնք մեկ անգամ ևս վկայում են քրդական մշակույթի հանդեպ հայ մշակութային գործիչների հոգատար վերաբերմունքի, քրդական երաժշտության զարգացման վրա հայկական երաժշտության ու երգարվեստի մեծ ներգործության մասին։ Այդպիսի խմբերի ստեղծումը մեծապես խթանեց նորանոր խմբակների ու երգիչների երևան գալու գործընթացը։ Հայաստանում աստիճանաբար զարգանում էին քրդական երաժշտությունը, երգարվեստն ու պարարվեստը, էստրադային կատարումները։ Հարկ է նշել մի կարևոր հանգամանք՝ պրոֆեսիոնալ երաժիշտների հանդես գալու փաստը, որը մեկ անգամ ևս հավաստում է այդ ոլորտում հայ մտավորականության ներդրած մեծագույն ավանդի մասին։ Թերևս մեր խոսքն ավարտուն չլինի, եթե այստեղ չհիշատակենք քուրդ մի քանի պրոֆեսիոնալ երաժիշտների անուններ, որոնք մասնագիտական բարձունքների են հասել և ճանաչում ձեռք բերել հենց Հայաստանում։ Քրդուհի Նուրա Ջաուարին հաջողությամբ ավարտել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժինը, ընդունվել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա և, 1966 թ. ավարտելով երաժշտական տեսության ու կոմպոզիցիայի ֆակուլտետը, աշխատանքի անցել ՀՀ ռադիոյի քրդական խմբագրությունում, այնուհետև հանրապետության ԳԱԱ Արվեստագիտության ինստիտուտում։ Հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական դիսերտացիան։ Այո, միայն Հայաստանում քրդուհին կարող է հասնել նման նվաճումների։ Սա աննախադեպ երևույթ է քրդական մշակութային կյանքում։ 1960 թ. «Հայպետհրատը» հայ երաժշտագետների միջնորդությամբ և աջակցությամբ հրատարակեց նրա կողմից ձայնագրված քրդական 35 պարերգերի ժողովածուն՝ իրենց տեքստերով հանդերձ։[69] Սա նույնպես քուրդ ժողովրդի մշակութային պատմության մեջ մի նորություն էր։ Գիրքն արժանացել է հայ մասնագետների բարձր գնահատականին։ Կոմպոզիտոր Կ. Զաքարյանն իր գրախոսականում գրել է. «Ժողովածուում 35 քրդական ժողովրդական երգեր ու պարերգեր են զետեղված։ Այս նախաձեռնությամբ Նուրա Ջաուարին քրդական երաժշտական արվեստի առաջընթացում շնորհակալ մեծ գործ է կատարել»։[70] Գիրքը խմբագրել է քրդական երաժշտության հմուտ գիտակ Ս. Գասպարյանը, որը գնահատելով քրդական երաժշտական բանահյուսությունը և հայ մտավորականության գործունեությունն այդ ասպարեզում, իր առաջաբանում հաստատել է. «Այս փոքրիկ ժողովածուում զետեղված քրդական պարերգերը գրի են առնված երիտասարդ քրդուհի Նուրա Ջաուարի ձեռքերով և ըստ էության հանդիսանում են սկսնակ երաժշտի առաջին փորձը... Նրանք գիտահետազոտական, ազգագրական ու ստեղծագործական լուրջ նպատակներ են հետապնդում»։[71] «Քրդական ժողովրդական պարերգերը» խորագրով 1964 թ. հրատարակվել է Նուրա Ջաուարի երկրորդ ժողովածուն, իսկ 1967 թ. Հայաստանի ԳԱԱ Արվեստի ինստիտուտը հայերեն լեզվով լույս է ընծայել նրա «Քրդական ժողովրդական երգարվեստը» մենագրությունը, որը խմբագրել է արվեստագետ Ռ. Աթայանը։ Արվեստագիտության թեկնածու Ալ. Թադևոսյանն իր գրախոսականում բարձր գնահատական է տվել այդ աշխատությանը. «Նուրա Ջաուարին քրդական ժողովրդական

երգերի հավաքագրման, գրառման և նրանց գիտական բացատրման գործում մեծ աշխատանք է կատարել»:[72]

1983 թ. Հայաստանի ԳԱԱ Արվեստի ինստիտուտը քրդերեն լեզվով հրատարակեց Ն. Ջաուարի հաջորդ արժեքավոր աշխատությունը՝ «Քրդական ժողովրդական երգեր» խորագրով, որը մի նոր ներդրում էր քրդական երգարվեստի բնագավառում: Այս ժողովածուում ամփոփված են 1965-1975 թթ. Հայաստանի տարբեր շրջանների քուրդ բնակչությունից հավաքված երգերը: Աշխատությունը արժեքավոր է նաև այն տեսակետից, որ տրված է քրդական երգերի հայերեն թարգմանությունը: Գիրքը խմբագրել է արվեստագետ Ռ. Ա. Աթայանը: Գրքի հրատարակման աշխատանքներին աջակցել են կրկին հայ մտավորականներ, արվեստագիտության թեկնածուներ Մ. Թ. Մանուկյանը և Ա. Ա. Փահլևանյանը:

Մեծ է երիտասարդ երաժշտուհու ծառայությունը ինչպես քրդական երաժշտագիտության զարգացման, այնպես էլ հայ-քրդական երաժշտական կապերի ամրապնդման գործում: «Ռյա թազա» թերթը, անդրադառնալով Ն. Ջաուարիի գործունեությանը, իրավամբ գրել է. «Քրդական ժողովրդական մշակույթի, գրականության և երաժշտության զարգացման ասպարեզում մեծ է Նուրա Ջաուարիի ներդրումը»:[73]

Քրդուհի Ջամիլա Ջալիլը նույնպես ավարտել է Երևանի կոնսերվատորիան: Այնուհետև մեկնել է Թալինի շրջան և նվիրվել հայ ու քուրդ մանուկներին երաժշտություն դասավանդելու գործին: Որպես երաժշտական բաժնի խմբագիր աշխատել է քրդական ռադիոհաղորդումների խմբագրությունում: Նա մի շարք նոր քրդական երգերի հեղինակ է: Նրա գրչին են պատկանում մի շարք երգերի նոր մշակումներ: Այսօր արդեն Ջամիլա Ջալիլը քրդական երգերի բազմաթիվ ժողովածուների հեղինակ է:

1964 թ. Երևանում հրատարակվել է Ջ. Ջալիլի «Քրդական ժողովրդական երգեր» ժողովածուն, որի մեջ ընդգրկված են 75 երգեր, հիմնականում պարերգեր:[74] Երկրորդ ժողովածուն լույս է տեսել 1965թ. Մոսկվայում, «Քրդական ժողովրդական երգեր» խորագրով: Նրա հրատարակման գործում մեծ է հայ նշանավոր երաժշտագետների ու կոմպոզիտորների ներդրումը: Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Ա. Քոչարյանն իր գրախոսականում շեշտել է. «Ես ծանոթացա քրդական ժողովրդական երգեր ու պարեր» ժողովածուի հետ, որը Ջամիլա Ջալիլն էր պատրաստել: Բոլոր եղանակները հետաքրքիր են, բխում են քրդական ժողովրդական ոգուց: Այս ժողովածուի ստեղծագործություններն շատ հաջող են գրված, որոնք ցույց են տալիս, որ ժողովածուի հեղինակը լավատեղյակ է քրդական ժողովրդական երաժշտական բանահյուսությանը և պատասխանատվությամբ է մոտեցել դրանց: Ես ի սրտե շնորհավորում եմ Ջամիլա Ջալիլի այս ծանրակշիռ աշխատանքը: Այս 60 քրդական երգերն ու պարեղանակները բավականին հարուստ են ու բազմատեսակ: Ես գտնում եմ, որ պետք է անպայման ժողովածուն հրատարակել: Դա կլինի մի նվեր ոչ միայն քուրդ ժողովրդին, այլ նաև երաժշտասեր հասարակությանը»: Աշխատության ձեռագրին ծանոթացել է նաև կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը, որը Ա. Քոչարյանի գրախոսականի վրա մակագրել է. «Միանգամայն միանում եմ Ա. Քոչարյանի գրախոսականին ու գնահատականին և միևնույն ժամանակ երաշխավորում եմ քրդական ժողովրդական երգերը տպագրելու համար»:[75]

1973 թ. Մոսկվայում «Սովետական կոմպոզիտոր» հրատարակչությունը տպագրեց Ջամիլա Ջալիլի հաջորդ՝ «Քրդական ժողովրդական երգեր և մեղեդիներ» խորագրով ժողովածուն, որը լայն ընդունելություն գտավ երաժշտասեր հասարակության կողմից: Այն հետաքրքրական է հատկապես այն առումով, որ տեքստերը գրված են լատինատառ և տրված են դրանց ռուսերեն թարգմանությունները:[76] Նշենք, որ վերջերս Երևանում հրատարակվեց նրա երկհատորանոց «Քրդական պարերգերը» նոտայագրված:

Հայաստանում են հրատարակվել Օրդիխանե Ջալիլի և Ջալիլի Ջալիլի քրդական ժողովրդական երգերի մի քանի ժողովածուները, իսկ Օրդիխանի «Քրդական պատմական երգերը» խորագրով արժեքավոր ժողովածուն 2003 թ. լույս է տեսել Սանկտ Պետերբուրգում, որի մեջ ընդգրկված երգերը հիմնականում գրառվել են Հայաստանի քուրդ և հայ բանասացների կողմից:

Ելնելով այս ամենից, կարելի է հաստատապես ասել, որ քրդական մշակված երաժշտության առաջընթացն ու այդ ոլորտում մասնագետների հանդես գալն անհնարին կլիներ առանց հայկական երաժշտարվեստի փորձի ու բազմազարյան ավանդույթների, առանց հայ ժողովրդի, հայ անվանի երաժշտագետների կողմից եղբայրական, անշահախնդիր գործնական օգնության: Եվ այսպես, Հայաստանում զարթոնք ապրող քրդական երաժշտությունը, դրա նորովի մշակումները լայն ճանաչում գտան ողջ աշխարհի երաժշտասեր հասարակության կողմից: Դրանք նոր ներդրումներ էին ողջ քրդական մշակույթում, որոնք նկատելիորեն հարստացրին նրա գանձարանը:

Բ. ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Քուրդ ժողովրդի թատերական արվեստի պատմությունը սերտորեն կապված է հայ ժողովրդի մշակութային կյանքի հետ: Հայ և քուրդ ժողովուրդների թատերական արվեստը ձևավորվել է դեռևս վաղեմի ժամանակներում, երբ երկու հարևան ու բախտակից ժողովուրդներն իրենց տոնակատարությունների, արարողությունների, պարերի, խմբական զինավարժությունների, սպորտային խաղերի ժամանակ կազմակերպում էին փոքրիկ բեմականացումներ:

Քրդական թատերական ոլորտում հայ մտավորականության գործունեությունը սկսվում է 20-րդ դարի սկզբներից: Հայտնի է, որ դեռևս 1902 թ. «Մշակ» թերթում հրատարակվել է Գրիգոր Արծրունու «Գյուլիզար»

պիեսը, սակայն նրա բեմադրության մասին հայտնի չէ: Այնուամենայնիվ, այն քրդական դրամատուրգիայի առաջին քայլն է:

1923 թվականին Թիֆլիսում հայ մտավորականներ Հովհ. Սիսյանի և Ա. Բոյաջյանի* ջանքերով «Շավաղ» ակումբում գործեցին քրդական թատերական և երգի-պարի խմբակներ: Թատերական խումբը, Բոյաջյանի անմիջական ղեկավարությամբ, հետագայում՝ Թբիլիսիի «Քրդական թատրոնը», բեմադրեց Հակոբ Ղազարյանի (Լազո) «Գուստիկ», «Դևրեշ», Հովհ. Սիսյանի «Սիրահարված Թելին», «Շամխորի սրբավայրը», իսկ 1929 թվականին Լազոյի «Զարե» պիեսները:[77] Դժբախտաբար սույն թատրոնը կարճ կյանք ունեցավ:

Սակայն քրդական թատերական արվեստը հայ գրողների, դրամատուրգների, ռեժիսորների ու նկարիչների անմիջական օգնությամբ կյանքի կոչվեց Խորհրդային Հայաստանում, ուր մի շարք քրդական գյուղերում, հայ մտավորականների ղեկավարությամբ, սկսեցին կազմակերպվել թատերական ինքնագործ խմբեր: Սկզբնական շրջանում թատերական խմբակներն իրենց ուժերով բեմադրություններ էին պատրաստում, սակայն դրանք չէին գոհացնում հանդիսատեսների օրեցօր աճող գեղագիտական ճաշակը: Անհրաժեշտ էր բեմադրել մի այնպիսի պիես, որը ստեղծագործական ոգեշնչման կմղեր խմբակների թատերական կոլեկտիվներին: Այդ գործին ձեռնամուխ եղավ Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Հ. Շալջյանը, որը գրեց չորս գործողությամբ «Ռյա թազա» պիեսը, այն Հ. Ջնդու թարգմանությամբ հրատարակվեց 1934 թ.: Առաջաբանում հեղինակը, անդրադառնալով հասարակության մեջ այդ խմբերի պահանջարկին, գրել է. «Ես այս պիեսը նվիրում եմ քրդական գյուղերի մասսայական թատրոններին»:[78] Պիեսը կարճ ժամանակահատվածում բեմադրվեց մի քանի քրդական գյուղերի թատերական խմբերի կողմից և զրական նշանակություն ունեցավ մասսաների գեղարվեստական ու գաղափարական դաստիարակության գործում, նպաստեց նոր թատերական խմբերի ստեղծմանը:

Այս ժամանակահատվածի մասին խոսելիս, հարկ է ընդգծել 1935 թ. Երևանի քրդական մանկավարժական տեխնիկումին կից կազմակերպված թատերական խմբի մեծ և գնահատանքի արժանի գործունեության մասին: Այս խմբի հիմնադիրը ևս հայ մտավորական էր: Այդ կապակցությամբ «Ռյա թազա» թերթը նշել է. «Թատերական խումբը կազմակերպվեց քրդական մանկավարժական տեխնիկումի դիրեկտոր, քուրդ ժողովրդի մշակույթի անխոնջ մարտիկ, աննկուն մանկավարժ Վարդան Պետոյանի ջանքերով»:[79] Խումբն առաջին անգամ 1935 թ. մայիսին քուրդ ուսանողության առջև հանդես եկավ Հ. Շալջյանի «Ռյա թազա» պիեսի բեմադրությամբ, որն արժանացավ հանդիսատեսի ջերմ ընդունելությանը: «Ռյա թազա» թերթին այդ մասին հիշատակում է. «Տեխնիկումի դահլիճում հավաքված էին ոչ միայն ուսանողներ, այլև քրդական գյուղերից հրավիրվածներ, մոտ 300 մարդ: Ազգային զուռնայի հնչյունների տակ երեկոն բացում է տեխնիկումի դիրեկտոր Վ. Պետոյանը: Այդ երեկոն մի իսկական տոնախմբություն էր, կատարվեցին քրդական երգեր, ընթերցվեցին բանաստեղծություններ, իսկ ամենամեծ երևույթը դա ուսանողության ուժերով Հ. Շալջյանի «Ռյա թազա» պիեսի բեմադրությունն էր»:[80] Հ. Շալջյանն այն հայ մտավորականն էր, որը Հայաստանում հիմնադրեց քրդական թատերական արվեստը. նա քրդական առաջին պիեսի հեղինակն էր: Նրա ջանքերով քրդական գյուղերում կազմակերպվեցին թատերական խմբեր: Իր պիեսի և ընդհանրապես քրդական թատերական խմբերի մասին Հ. Շալջյանը գրել է. «Այս վերջին տասը տարիների ընթացքում մի շարք անգամներ պաշտոնական հանձնարարությամբ եղել եմ քրդաբնակ վայրերում, այնուհետև երկար աշխատել քրդերի մեջ... Տարիներ շարունակ քուրդ մտավորականությունն ու աշխատավորությունը ցանկություն են հայտնել քրդական թատրոն ունենալու: Ընկ. Ա. Խանջյանը Հայաստանի կոմունիստական կուսակցության 9-րդ համաժողովում այդ մասին հայտնեց, որ պետք է քրդական թատրոնը կազմակերպվի, որովհետև քրդական թատրոնի բացման հարցը հասունացել է: Ընկ. Խանջյանի այս դիպուկ ու կոնկրետ առաջարկը քուրդ ժողովրդի կուլտուրայի առաջընթացի մասին ինձ շատ ուրախացրեց ու ոգևորեց և իմ ուժերի ներածին չափով փորձեցի գրել քուրդ ժողովրդի կյանքից առաջին պիեսը»:[81] Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանի ցուցումը ոչ միայն հայ մտավորականներին մղեց զբաղվելու քրդական թատերական արվեստի հարցերով, այլև ստեղծագործական լիքը հաղորդեց քուրդ նորաստեղծ մտավորականությանը: Քուրդ բանաստեղծ Ահմադե Միրազին գրեց իր «Անցած ժամանակը» երեք գործողությամբ պիեսը, որում հեղինակն անդրադառնում էր Թուրքիայում քուրդ կնոջ ծանր ու չարքաշ կյանքին:[82] Այս պիեսը բեմադրվեց քրդական գրեթե բոլոր թատերական խմբերում:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանի բարեկամական աջակցությամբ քրդական մանկավարժական տեխնիկումի և քրդական գյուղերում բացված մյուս թատերական խմբակների հիման վրա հետագայում կազմակերպվեց քրդական պետական թատրոնը: 1937 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի ժողկոմխորհին կից Արվեստի գործերի վարչության նախաձեռնությամբ Ապարանի շրջանում հիմնվեց շրջիկ քրդական պետական թատրոն, որը 1938 թ. տեղափոխվեց նոր կազմակերպված Ալագյազի շրջանը: Քուրդ հասարակության համար թատրոնի դերի ու նշանակության կարևորումը Հայաստանի կառավարության կողմից դիտվեց որպես առաջնահերթ ու անհետաձգելի խնդիր: Կարճ ժամանակամիջոցում թատրոնի շուրջ համախմբվեցին 14 քուրդ և քրդախոս հայ երիտասարդներ: Թատրոնի գեղարվեստական աշխատանքները ղեկավարելու համար Արվեստի գործերի վարչությունը մշտական աշխատանքի գործուղեց հանրապետության վաստակավոր դերասան Մ. Ջանանին:[83] Քրդական թատերական նորաստեղծ կոլեկտիվին անմիջական օգնություն ցույց տվեցին Գ. Սունդուկյանի անվան պետական և Ամո Խարազյանի անվան շրջիկ թատ-

րոնները։ Անվանի դերասաններ Հ. Ներսիսյանը, Ա. Ավետիսյանը, Վ. Փափազյանը և մյուսները հաճախակի գործուղվում էին Ալագյազ՝ օգնելու նորաստեղծ թատրոնին։

Թատրոնը հայ արվեստագետների անմիջական օգնությամբ հանդես էր գալիս հանրապետության քրդական և հայկական գյուղերում և ջերմ ընդունելության արժանանում։ Այս առթիվ գրող Նադո Մախմուդովը, որ Հայրենական պատերազմի օրերին Հոկտեմբերյանի կոմկուսի շրջանային կոմիտեի առաջին քարտուղարն էր, իր հուշերում գրում է. «Քրդական պետական թատրոնը մեր շրջանի հյուրն էր, այդ օրերին մեր տանն էին հայ անվանի գրողներ Ավ. Իսահակյանը և Դ. Դեմիրճյանը, որոնք նույնպես մեծ ցանկություն հայտնեցին դիտելու քրդական «Սիաբանդ ու Խաջեզարե» բեմադրությունը, բեմադրությունից հետո խոսքի վարպետներ Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը բարձրացան բեմ, ողջունեցին թատրոնի ողջ կոլեկտիվին և այդ գեղեցիկ բեմադրության համար շնորհակալություն հայտնեցին»։[84]

Թատրոնի յուրաքանչյուր բեմադրություն վեր էր ածվում տոնախմբության. բեմադրությունից առաջ հնչում էր քրդական դհոլի ու զուռնայի ձայնը, և հանդիսականները, թատրոնի բակում պար բռնած, զվարճանում էին, այդպիսով ավելի ոգևորելով դերասաններին։ Ալագյազի քրդական պետական թատրոնի հիմնադրումը նշանակալից իրադարձություն էր քրդական մշակույթի կյանքում։ Այն իրավամբ համարվում է առաջինն աշխարհում։ Այն իր բազմաբովանդակ բեմադրություններով մեծապես նպաստեց քուրդ ազգաբանակչության գեղագիտական դաստիարակության, մշակույթի զարգացման և գաղափարական առաջադիմության գործին։

Թատերական խաղացանկերում հիմնականում ընդգրկվում էին տվյալ ժամանակների կյանքը պատկերող պիեսներ, որոնցում հիմնականում մեծ տեղ էր հատկացվում հետադիմական բարքերի պատճառած վնասների և դրանց դեմ պայքարի անհրաժեշտության թեմային։ Քրդերեն թարգմանությամբ բեմադրվել են հիմնականում հայ դրամատուրգների ու գրողների՝ Գ. Սունդուկյանի «Պեպո», Ա. Շիրվանզադեի «Նամուս» և «Ջար ոգի», Վրթ. Փափազյանի «Լուր-դա-լուր» և «Ժայռ», Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար», Ն. Զարյանի «Վրեժ», Ա. Պապայանի «Բարձունք», Մ. Քոչարյանի «Հարազատ մարդիկ» և այլ պիեսներ։ Թարգմանվել ու բեմադրվել են նաև այնպիսի պիեսներ, որոնց թեման վերցված էր Հայաստանի քրդերի անցյալ ու ներկա կյանքից. Ա. Շայբունի «Ալագյազի հովտում», Ա. Գինոսյանի «Հասոն», «Միրաքի աղջիկը» և «Մուշ լեռան հովիտը»։

Հիշատակելով քրդական թատրոնին հայ մտավորականների մատուցած ծառայության մասին, «Կոմունիստ» թերթը գրել է. «Հայաստանում քուրդ ժողովուրդը կուլտուրական երջանիկ կյանք է ստեղծել և հիմնել աշխարհում առաջին քրդական պետական թատրոնը։ Առաջին անգամ քրդերեն լեզվով բեմից հնչեց քուրդ դերասանի ձայնը, բեմադրվեց Ս. Գինոսյանի «Միրաքի

աղջիկը» պիեսը։ Այդ ուղղությամբ մեծ աշխատանք է տարել թատրոնի առաջին ռեժիսոր Յոլակ Նիկողոսյանը»։[85] Մեկ այլ առիթով կրկին անդրադառնալով քրդական պետական թատրոնին, թերթը հավաստում է, որ հայ մտավորականներն ամեն կերպ օգնում էին քրդական թատրոնի կոլեկտիվին։ Թատերագետ Սուրեն Գինոսյանը մշակել և բեմականացրել է քրդական ժողովրդական «Կյաո ու Քյուլակ» երկը, բեմադրող ռեժիսորն է եղել Զ. Ղամբարյանը, նկարիչը՝ Կ. Երեմյանը։[86]

Քրդական թատրոնի հաջողություններն օրեցօր ավելի ակնբախ էին դառնում, և դրանում անհերքելի էր հայ փորձառու արվեստագետների, պրոֆեսիոնալ դերասանների ու ռեժիսորների, տաղանդավոր նկարիչների ներդրած ավանդը, որոնք ջանք չէին խնայում՝ հասարակայնությանը մատուցելու խորիմաստ, ժամանակին համահունչ և քուրդ ժողովրդի ոգուն համապատասխանող բեմական երկեր։ Հայ մտավորականները նաև ամեն կերպ փորձում էին օգնել Ալագյազի թատրոնին քրդական դիմագիծն առավել ցայտուն դարձնելու և ազգային թեմատիկան զարգացնելու հարցում։ Եվ, իրոք, այդ տարիներին հայ գրողներից շատերը սկսեցին զբաղվել քրդական ժողովրդական բանահյուսության մշակմամբ, և դրա լավագույն գոհարները վերածվեցին պիեսների։ Դրանցից կարելի է հիշատակել Ս. Տարոնցու «Մամ ու Զինե», Ս. Գինոսյանի «Կաո ու Քուլուկ», «Խաջե Սիաբանդը» երկերը։

Առանձնապես մեծ է արվեստագետ Ս. Գինոսյանի ներդրումը քրդական նորաստեղծ թատրոնի կազմակերպման և նրա կատարողական արվեստի բարձրացման գործում։ Նա այդ տարիներին գրեց «Միրաքի աղջիկը», «Հերոսը Զգիր քաղաքից» պիեսները, որոնց թեման հայ և քուրդ ժողովուրդների չարքաշ կյանքն էր Թուրքիայում, հայ և քուրդ աշխատավորության միասնական պայքարն ընդդեմ սուլթանական բռնատիրության։ Այս երկու արժեքավոր գործերը թարգմանվել են քրդերեն և ռեժիսոր Յոլակ Նիկողոսյանի կողմից բեմադրվել քրդական պետական թատրոնում։[87] Թատրոնի խաղացանկին նոր երանգ հաղորդեցին գեղեցիկ ու դյուրըմբռնելի քրդերենով, այուժեի տրամաբանված ու պարզ ընթացքով Հովհ. Թումանյանի «Գիքորի» և Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազարի» բեմականացումները։

Բարերար մթնոլորտում ձևավորվող քուրդ նորաստեղծ մտավորականությունը նույնպես աստիճանաբար ավելի ու ավելի մեծ մասնակցություն էր ցուցաբերում ազգային թատրոնի զարգացման շնորհակալ գործում, իր լուման ներդնում խաղացանկում գլխավորապես քրդական պիեսների ներգրավման հարցում։ Այդ տեսակետից ուշագրավ էր թատրոնի նախկին դիրեկտոր Միրոյե Ասադի «Սարդարն ու Խաջեն» պիեսը, որում քննադատվում էին վնասակար հին բարքերն ու սովորույթները։ Արձանագրենք, որ թատրոնը տարբեր տարիներին ղեկավարել են քուրդ մտավորականներ Ջալատե Կոտեն, Միրոե Ասադը, Ամարիկե Դալոն և Ջարդոե Գենջոն, որոնք իրենց

ձեռքբերումներին հասան կրկին հիմնականում հայ արվեստագետների հոգատար վերաբերմունքի շնորհիվ:

Քրդական պետական թատրոնը լուրջ աշխատանք կատարեց ոչ միայն Հայաստանում, այլև ընդհանրապես Անդրկովկասում բնակվող քուրդ ազգաբնակչության գեղագիտական ճաշակը զարգացնելու ուղղությամբ: Թատրոնը հաճախակի էր լինում Վրաստանում: Այս առթիվ «Զարյա Վոստոկա» թերթը իր 1940 թ. 6-9-րդ համարներում, անդրադառնալով Թիֆլիսի Մյասնիկյանի անվան ակումբի բեմում քրդական թատրոնի ներկայացրած բեմադրությանը, գրում է. «Քրդական թատրոնն իր գոյության երեք տարիների ընթացքում հասել է արվեստի բարձր կատարելության, մեծ համբավ է ձեռք բերել Հայաստանում»:

Հետագայում, երբ ստալինյան ռեակցիայի տարիներին փակվեց քրդական պետական թատրոնը, Հայաստանի մի շարք քրդական գյուղերում, այնուամենայնիվ, թատերական խմբակները չլուծարվեցին, իսկ Թալինի շրջանի Թլք գյուղի թատերական խումբը հանրապետական օլիմպիադաներում արժանացավ մրցանակի: Արագածի շրջանի Ալագյազ գյուղի կուլտուրայի տանը հայ մտավորականների նախաձեռնությամբ սկսեց գործել քրդական ժողովրդական թատրոնը: 1977 թ. հունիսի 7-ին Ալագյազի քրդական ժողովրդական թատրոնում իսկական տոնախմբություն էր. երկար ընդմիջումից հետո նորից էր բեմադրվում Ս. Գինոսյանի «Կյառն ու Քուլուքը» պիեսը (բեմադրող՝ Ս. Ստեփանյան, նկարիչ՝ Ա. Մաջարյան): Բեմադրությունը դիտելու էին եկել հայ և քուրդ մտավորականության ներկայացուցիչները, այդ թվում՝ պիեսի հեղինակ Ս. Գինոսյանը: Իսկ 1978 թ. մայիսի 22-ին Ալագյազի կուլտուրայի տան դահլիճում հավաքվել էին հայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ՝ վաստակավոր դերասան Հ. Գալոյանը, արվեստի վաստակավոր գործիչ Հ. Հովակիմյանը, «Կուլտուր-լուսավորական աշխատանք» ամսագրի խմբագիր Հ. Երանոսյանը և շատ ուրիշներ: Ներկայացվելու էր Վ. Հարությունյանի «Ալագյազի արծիվը» պիեսը, որը նվիրված է հայ-քրդական բարեկամությանը, Սարդարապատում զորավար Անդրանիկի և Ջանգիր աղայի ղեկավարությամբ թուրք զավթիչների դեմ երկու ժողովուրդների համատեղ պայքարին:[88]

Քրդական ժողովրդական թատրոնի խաղացանկը հարստանում էր. իբար էին հաջորդում «Կյառն ու Քուլուքը», «Առանց զալանի», «Ալագյազի արծիվը», «Մինդո իր աղջկան ամուսնացնում է» պիեսները, վերջին ներկայացման ձևավորումը և ռեժիսորական աշխատանքները կատարել է երիտասարդ քուրդ նկարիչ Ռզգանե Ամոն: 1980 թ. թատրոնի խաղացանկում ավելացավ մի նոր անուն. հաջողությամբ բեմադրվեց ռուս դրամատուրգ Մ. Մաքսիմովի «Սկզբից մեռնել հետո ամուսնանալ» կատակերգությունը, որը կրկին բեմականացրել էր քուրդ շնորհալի ռեժիսոր Ռզգանե Ամոն, իսկ նկարչն էր Միրանե Օկեն: Բեմադրությունում արդեն հանդես էին

գալիս քուրդ երիտասարդ աշխատավորները: Դա խոսուն վկայությունն էր այն իրողության, որ հայ արվեստագետների անմիջական օգնությամբ արդեն իսկ ասպարեզ էին իջել քրդական ազգային կադրեր:

Հայ թատերական արվեստի գործիչները մշտապես աջակցել են քրդական թատրոնին և քուրդ երիտասարդ դերասաններին: ԽՍՀՄ ժողովրդական դերասան, ռեժիսոր Վարդան Աճեմյանը ջերմությամբ է վերաբերվել քուրդ ժողովրդի արվեստին, նրա ձեռքի տակ են աճել մի շարք քուրդ երիտասարդ դերասաններ: Երևանի դրամատիկական թատրոնի քուրդ դերասան Հասանե Ղուլին վկայել է. «Ես երջանիկ եմ, որ եղել եմ այդ մեծ ռեժիսորի աշակերտը: Ինձ համար երջանկություն էր մոտիկից շփվել նրա հետ...»:[89]

Հ. Ղուլին Էջմիածնի շրջանի Ջրառատ գյուղում միջնակարգն ավարտելուց հետո 1970 թ. ընդունվել է Սունդուկյանի անվան պետական թատրոնի երկամյա թատերական ստուդիան, որը 1973թ. հաջողությամբ ավարտել և աշխատանքի է ընդունվել Երևանի դրամատիկական թատրոնում: Ինչպես Հ. Ղափլանյանը, այնպես էլ դերասան Ռոբերտ Հարությունյանը և ռեժիսոր Արմեն Խանդիկյանը տևապես աջակցել են նրան, օգնել, որ կարճ ժամանակամիջոցում դառնա թատրոնի լավագույն դերասաններից մեկը: Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռ. Զարյանը, անդրադառնալով դրամատիկական թատրոնում «Համլետի» բեմականացմանը, բարձր է գնահատել դերասանների կատարողական արվեստը, լավագույն դերասանների թվում նշելով նաև Հ. Ղուլիի անունը:[90]

Իսկ Վալոդե Խուդոն, ավարտելով Երևանի թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը, Վ. Աճեմյանի անմիջական ղեկավարությամբ խորանում է ռեժիսորական արվեստի մեջ: Նա երկար տարիներ Հայաստանի տիկնիկային թատրոնի ռեժիսորն էր: Բեմադրել է բազմաթիվ պիեսներ:

Հայկական կրկեսի կոլեկտիվի անդամ էր Հայաստանի ժողովրդական արտիստուհի (ժանգլյոր) քրդուհի Նազա Շիրայը, որը միութենական կրկեսներում ազգային հնչեղ երաժշտության տակ ներկայացնում էր իր լավագույն համարները: Ավելի քան տասը տարի Հայաստանի մանչախաղի թատրոնի հիմնադիրն, ռեժիսորն ու ղեկավարն էր Արսեն Փոլատովը, նրա արվեստը մեծ ճանաչում է ձեռք բերել նաև մեր հանրապետությունից դուրս:

Այսպիսով, Հայաստանում հայ անվանի արվեստագետների գործնական աջակցության շնորհիվ հիմնվեց քրդական թատերական արվեստը, հանդես եկան քուրդ նշանավոր ռեժիսորներ, դերասաններ, որոնք իրենց լուման ներդրեցին Հայաստանում քրդական մշակութային կյանքի զարգացման գործում, նվաճեցին հայ և քուրդ հանդիսատեսների ջերմ սերն ու հարգանքը: Թատերական արվեստն էլ ավելի բարձրացրեց քուրդ հանդիսատեսի արվեստագիտական աշխարհայացքը, կրթեց նրա գեղագիտական ճաշակը:

Գ. ՔՐԴԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ

Հայկական կինոյի նվիրյալները դեռևս հայ կինոարվեստի սկզբնավորման առաջին իսկ տարիներից հետաքրքրություն էին դրսևորում Խորհրդային Հայաստանում բնակվող քրդերի կյանքի, նրանց հին կենցաղի ու նոր կենսապայմանների հանդեպ: Արդյունքում՝ կարճ ժամանակահատվածում Հայկինոն և Հայֆիլմը նկարահանեցին քրդերի կյանքի մասին պատմող մի քանի գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր: Արվեստի այս ճյուղը շրջադարձային նորություն էր ոչ միայն քուրդ ժողովրդի, այլև ընդհանրապես բոլոր ժողովուրդների համար: Բնականաբար, քրդական ֆիլմերի հանդես գալը նպաստեց քուրդ ժողովրդի հոգևոր վերելքին, նրա գեղագիտական աշխարհայացքի ձևավորմանը:

Հայ անվանի ռեժիսոր Համո Բեկնազարյանը, մանկուց շփվելով քրդերի հետ և ծանոթ լինելով քուրդ ժողովրդի նիստուկացին, որոշեց քրդերի կյանքի մասին պատմող ֆիլմ նկարահանել: Այդ նպատակով նա փորձեց ավելի մոտիկից ծանոթանալ քուրդ ժողովրդին, եղավ քրդական գյուղերում, ուսումնասիրեց նրանց կենցաղը, ծանոթացավ հարսանեկան և այլ ծիսակատարություններին: Այդ հարցում նրան հատկապես մեծ օգնություն ցույց տվեց Լազոն (Հակոբ Ղազարյանը), որը նրան տրամադրեց իր ձեռագիր պատմվածքներից մեկը՝ «Քրդուհի Զարեի ճակատագիրը անցյալում»: Հենց այդ պատմվածքն էլ հիմք ծառայեց Համո Բեկնազարյանի համար՝ գրելու «Զարե» ֆիլմի սցենարը, որը հավանության արժանացավ Հայկինոյի գեղարվեստական խորհրդի կողմից, և սկսվեցին ֆիլմի նկարահանման նախապատրաստական աշխատանքները:

Հաջող դերաբաշխում կատարելուց հետո Հ. Բեկնազարյանի ղեկավարությամբ կազմակերպվեց արշավախումբ դեպի Արագածի լանջը, որտեղ հիմնականում պետք է նկարահանվեր ֆիլմը: Ալագյազի քրդերը գրկաբաց ընդունեցին Հայկինոյի նկարահանման խմբին և նրանց համար ոչ միայն անհրաժեշտ աշխատանքային պայմաններ ստեղծեցին, այլև սցենարի ազգագրական հարցերում շտկումներ արեցին: Մոտ երկու ամիս տևած արշավը դրական արդյունքներ տվեց: Արագածից վերադառնալուց և մի քանի նկարահանումներ կատարելուց հետո կազմակերպվեց նոր արշավ, այս անգամ՝ դեպի Սարիբուլաղ քրդական գյուղը: Հիմնականում նկարահանվելու էր «հարսանիքի» տեսարանը: Այստեղ կրկին օգնության եկան հայ և քուրդ գյուղացիները, որոնք ակտիվ մասնակցում էին թե՛ Ալագյազի և թե՛ Սարիբուլաղի նկարահանումներին:

«Զարե» ֆիլմի հաջողությունը տագանդավոր ռեժիսոր Համո Բեկնազարյանի, ինչպես նաև օպերատորներ Ա. Յալովոյի և նկարիչ Մ. Մարգունովի քրտնաջան աշխատանքի արդյունքն էր: ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Հ. Ներսիսյանը և Ա. Ավետյանը հանդես էին գալիս երիտասարդ

քրդերի դերում: Ներսիսյանի Սայդոն անչափ հուզական ու տպավորիչ էր, այնքան բնական, որ թվում էր, թե դերասանն ազգությամբ քուրդ էր: Եվ դա պատահական չէր. Ներսիսյանն ինքն է խոստովանել՝ «Ինձ հարազատ է քրդերի կենցաղը»: Գեղեցիկ քրդուհի Զարեի կերպարում հաջողությամբ հանդես եկավ Մ. Թադևոսյանը: Նույնը պետք է ասել Հայաստանի ժողովրդական արտիստուհի Նիան Մանուչարյանի մասին (Նանո): Առանձին հիշատակության է արժանի վաստակավոր արտիստ Համբարձում Խարանյանի մարմնավորած Խդոն: Իսկ ֆիլմի բարձրարվեստ երաժշտության մեջ, որը գրել է հայ անվանի կոմպոզիտոր Ա. Սպենդիարյանը, լիովին պահպանված է քրդական ժողովրդական երաժշտության ոգին:[91]

Պետք է նշել, որ «Զարեն» (1926թ.) տվյալ ժամանակաշրջանում Հայկինոյի լավագույն ֆիլմերից է և կարևոր դեր ունեցավ Խորհրդային Միության տարբեր հատվածներում բնակվող ժողովուրդներին քուրդ ժողովրդի կենցաղին ու պայքարին ծանոթացնելու գործում: Հայ և քուրդ մտավորականների աշխատանքը «Զարե» ֆիլմի վրա վերածվեց ստեղծագործական ճշմարիտ բարեկամության:

1927 թ. «Զարե» ֆիլմը ցուցադրվեց Մոսկվայում, սկզբում՝ կառավարության անդամների համար, այնուհետև ներկայացվեց հասարակության լայն շրջանակներին: Ցուցադրման ժամանակ ելույթ ունեցավ 40 հոգուց բաղկացած նվագախումբը, որը նվագակցում էր հայ երգչուհի Սերեբրյակովային: Վերջինիս կատարմամբ «Ալագյազ» երգն արժանացավ հանդիսականների հիացական գնահատականին:[92] Այնուհետև ֆիլմը ցուցադրվեց կառավարության, արևելագիտության ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության համար: Արևելագետ պրոֆեսորների գնահատմամբ «Զարե» կինոնկարը մի իսկական հայտնություն էր արևելագիտության ասպարեզում և ճանաչողական առումով բավականին արժեքավոր նույնիսկ մասնագետ արևելագետների համար: Նաև հարկ է նշել այդ արժեքավոր ֆիլմի կարևոր դերը քրդագիտության համար:[93] «Զարե» կինոնկարը Մոսկվայում արժանացավ առաջին մրցանակի: Ականավոր կինոքննադատներից Երմոլինսկին այս ֆիլմի մասին ասել է. «Մենք պատկերացնում էինք գեղեցիկ Արևելքն իր հարեմներով, ջահերով, զայլունով ու շատրվանով, բայց Հայկինոն ցույց տվեց իսկական ազատ Արևելքը «Զարեով»:[94]

Հայկական մամուլը փաստում է. «Կենցաղագրական խոշոր նշանակություն, գեղարվեստական դերը, գեղարվեստական լավագույն ձևավորումը, ռեժիսոր Բեկնազարյանի մեծ իմաստնությունը՝ կենցաղը խորհրդային երկրի քաղաքացու աչքերով նկարագրելու, անզուգական մոնտաժը և նկարի դինամիկան, օրինակելի դերակատարումները (առանձնապես Թադևոսյան, Խաչանյան, Հ. Ներսիսյան), վերին աստիճանի հաջող ֆոտոգրաֆիստները, որով Հայկինոն պարտական է օպերատոր Յարալովին, մաքուր ու հմուտ լաբորատորիական աշխատանքը և այլն և այլն. ահա «Զարեի» այն արժանիք-

ները, որով դարձրին «Զարեն» ժամանակի լավագույն նկարը»:[95] Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Գ. Բալասանյանն իր հուշերում վկայել է. «Ես երկար ժամանակ աշխատել եմ այս ֆիլմի վրա, ծանոթացել քրդական նոր ու հին կենցաղին, եղել եմ քրդական Քյարվանսարա գյուղում (Ալագածոտնի մարզ), ինձ օգնել են տեղի բնակիչները»:[96]

Եվ իսկապես, ֆիլմի ռեժիսորի, դերասանական ողջ կոլեկտիվի, տեղի քուրդ բնակիչների անձնվեր, քրտնաջան աշխատանքի շնորհիվ ֆիլմում հրաշալի է ներկայացված քրդական կենցաղում հնի ու նորի բախումն ու նորի հաղթանակը: Այս չափազանց տպավորիչ կինոնկարն իր դրական ներգործությունն ունեցավ վնասակար հին բարքերի դեմ պայքարի գործում: Մեծ էր նաև ֆիլմի նշանակությունը քրդական թատերական արվեստի զարգացման գործում:

1972 թ. Հ. Բեկնազարյանի անվան կինոստուդիան «Զարե» կինոնկարը վերամշակեց և ձայնագրեց: Այս ուղղությամբ մեծ աշխատանք կատարեցին ռեժիսորներ Գարիկ Մուշեղյանը, Արտաշես Ատոյանը, օպերատոր Երվանդ Սեթյանը և հնչունային օպերատոր Ջանիկ Մուրադյանը:[97]

«Զարե» ֆիլմը համաշխարհային կինոյի պատմության մեջ առաջին անգամ բացահայտեց Արևելքի սոցիալական կյանքի ճշմարիտ նկարագիրը: Այս մոնումենտալ կինոնկարն իր բազմաշերտ բովանդակությամբ հետագայում ևս քրդական կյանքի տարբեր ասպեկտներին նվիրված ֆիլմեր նկարահանելու գաղափարներ էր տալիս հայ կինեմատոգրաֆիայի վարպետներին:

1932 թ. Հայկինոյում նկարահանվեց ևս մի ֆիլմ «Քրդեր-եզդիներ»: Սցենարի հեղինակներն էին Գ. Բալասանյանը և Պ. Բարխուդարյանը, բեմադրող ռեժիսորը՝ Ամաս Մարտիրոսյանը, օպերատորը՝ Բ. Զավելևը, նկարիչները՝ Ս. Թուրյանն ու Ե. Լևխանյանը: Ֆիլմում պատկերված են Խորհրդային քուրդ-եզդիների պաշտամունքը, նրանց կենցաղը:[98] Հայաստանի ժողովրդական արտիստ Ավետ Ավետյանի կերտած ընչազուրկ քուրդ գյուղացի Բրոյի կերպարն անչափ ճշմարտացի է, իր անմիջականությամբ՝ գրավիչ: Ֆիլմում քուրդ մարդու փայլուն կերպավորմամբ աչքի են ընկնում ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հ. Ներսիսյանի, Հայաստանի ժողովրդական արտիստ Գ. Ավետյանի, ժողովրդական արտիստուհի Հասմիկի և շատ ուրիշների դերակատարումները:[99] Նկարահանումները կատարվել են Արագածի շրջանի Միրաք քրդական գյուղում: Քուրդ աշխատավորներն ու հոգևորականները, ակտիվորեն մասնակցելով զանգվածային տեսարանների նկարահանումներին, օգնել են քուրդ-եզդիների կենցաղին և պաշտամունքին վերաբերող հարցերում, մեծապես աջակցել բեմադրող խմբին ինչպես ստեղծագործական, այնպես էլ կազմակերպչական աշխատանքներում:

Բացի վերոհիշյալ երկու գեղարվեստական ֆիլմերից, Հայկինոյի և Հայֆիլմի նկարահանած հայկական կյանքը պատկերող այլ կինոնկարներում նույնպես հանդիպում են քրդերի կերպարներ: Այս հանգամանքը ևս մեկ

անգամ վկայում է հայ-քրդական բարեկամության ու մշակութային կապերի անխզելիության, քրդական կինոարվեստում հայ մտավորականության ներդրումների մասին:

Դրանցից առաջինը 1956 թ. ըստ Վ. Անանյանի համանուն վեպի նկարահանված «Հովազաձորի գերիները» մանկապատանեկան կինոնկարն է, որի բեմադրող ռեժիսորն է Յու. Երզնկյանը: Ձորում արգելափակված պիոներների թվում է նաև քուրդ դպրոցական Ավդալը:[100] Այս ֆիլմը քուրդ մանուկների աշխարհայացքի ձևավորման գործում իր դրական նշանակությունն ունեցավ և էլ ավելի ջերմացրեց հայ և քուրդ մանուկների փոխհարաբերությունները:

Երկրորդը 1965 թ. Հայֆիլմի նկարահանած «Բարև, ես եմ» կինոնկարն է, որի սցենարի հեղինակը Ա. Աղաբաբովն է, բեմադրող ռեժիսորը՝ Ֆրունզե Դովլաթյանը: Արագածի վրա գտնվող օդերևութաբանական կայանի տեխնիկական աշխատողների թվում է նաև երիտասարդ քրդուհին, որը ամենայն բարեխղճությամբ աշխատում է կայանում: Քրդուհու դերում հաջողությամբ հանդես է եկել դերասանուհի Գալյա Նովենցը:

1947 թ. «Հայկինոն» Հ. Քոչարյանի և Հ. Ջնդիի սցենարով նկարահանեց «Քրդերը Խորհրդային Հայաստանում», իսկ 1960 թ., Ա. Շամիլովի սցենարով, «Խորհրդային Հայաստանի քրդերը» (ռեժիսոր՝ Զ. Ժամհարյան) վավերագրական կինոնկարները: Ինչպես առաջինում, այնպես էլ երկրորդում ցույց է տրված քուրդ ժողովրդի դժվարին կյանքը անցյալում և նրա մի հատվածի վերածնունդը Հայաստանում: Պետք է նշել, որ Ա. Շամիլովի սցենարով վավերագրական կինոնկարը ցուցադրվել է ոչ միայն Խորհրդային Միությունում, այլև արտասահմանում ապրող քրդերի շրջանում, բնականաբար, հաղորդավարի տեքստը թարգմանվել է քրդերեն: Ֆիլմը դրական արձագանքների է արժանացել: Հայկինոն նկարահանել է նաև Խորհրդային Միության հերոս, Երևանի պատվավոր քաղաքացի Սամանդ Սիաբանդովի մասին մի վավերագրական կինոակնարկ, որում պատմվում է, թե ինչպես թուրքական լաճաղանից մազապուրծ քուրդ գյուղացու զավակը Հայաստանում բարձրագույն կրթություն է ստանում, աշխատում սկզբում մանկավարժ, հետո՝ Ալագյազի շրջանի կոմունիստական կուսակցության կոմիտեի առաջին քարտուղար: Մեծ հայրենականի օրերին նա կամավոր մեկնում է ռազմաճակատ, կուրծքը զարդարում 35 շքանշաններով ու հերոսի ոսկե աստղով:

«Երևան» հեռուստատեսային ստուդիան ևս մի քանի անգամ անդրադարձել է Հայաստանի քրդերի կյանքին: 1979 թ. հեռուստատեսային էկրաններին հայտնվեց մի գեղեցիկ կինոնկար՝ «Ծերունին», որում ցույց է տրված հայ և քուրդ ժողովուրդների պարզ ու անմիջական բարեկամությունը, նրանց անշահախնդիր փոխօգնությունը: Ներկայացված է պատերազմի ծանր օրերին հայ ծերունու ընտանիքի դժվարին վիճակը: Ուտելիք չկա, ծե-

րունին որդու շորերը դնում է կապոցում և գնում իր բարեկամ քրդի տունը փոխանակելու մթերքով: Քուրդը կապոցի մեջ լիքը մթերք է դնում, բայց շորերը չի վերցնում, նրան իր երախտագիտությունն է հայտնում ու բարի ճանապարհ մաղթում: Ռեժիսոր Թամարա Բեռուսկայա-Էլիբեկյանին հաջողվել է Մանուկ Մնացականյանի սցենարի հիման վրա նկարահանված այդ կինոնկարում գեղարվեստական նուրբ գեղումներով, գեղեցիկ պատկերներով ներկայացնել երկու ժողովուրդների բարեկամությունը:

Դ. ՔՐԴԱԿԱՆ ԹԵՄԱՆ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայ նկարիչներից շատերն են անդրադարձել քուրդ ժողովրդի հին ու նոր կյանքին, շրջագայել քրդերի մեջ, ծանոթացել նրանց կենցաղին, ազգային սովորույթներին և գունեղ պատկերներով այդ ամենը վերարտադրել կտավներում: Քրդական իրականությունը պատկերող հայ նկարիչներից առաջինը Մ. Հարությունյանն էր: 30-ական թվականներին Մոսկվայի գեղարվեստաթատերական ինստիտուտն ավարտելուց հետո Հայաստան վերադառնալով, նա իր նկարների ցուցահանդեսում ներկայացրեց նաև քրդական թեմայով աշխատանքներ: Գրող Զ. Դենջոն, անդրադառնալով Մ. Հարությունյանի նկարներին, գրել է. «Հարությունյանի քրդական նկարներով թեման մի նորահայտություն է քրդական մշակութային կյանքում: Պետք է մեր բարեկամ հայ նկարիչներն ավելի շատ անդրադառնան այդ թեմային, այդ ասպարեզում պետք է ստեղծել ազգային կադրեր»:[101] Այդ ցուցահանդեսին «Ոյա թազա» թերթը մի ողջ էջ էր նվիրել և գետեղել Մ. Հարությունյանի մի շարք նկարները, պրոֆեսոր Հ. Ջնդին իր հոդվածում բարձր է գնահատել այդ կտավները, մատնանշել դրանց նշանակությունը քրդական ողջ մշակույթում:[102]

Հայ նկարիչներին քրդական թեմայի հոգեհարազատ լինելու մասին է վկայում այն փաստը, որ նրանցից շատերը հաճախակի են անդրադարձել դրան: Հայաստանի տասնօրյակի առթիվ, որը պետք է կայանար 1956 թ. հունիսի 1-ից 10-ը Մոսկվայում, նախապատրաստական մեծ աշխատանք կատարեց Հայաստանի նկարիչների միությունը: Այդ առթիվ Արվեստի տունը բացվեց հայ անվանի նկարիչների ցուցահանդես: Բազմաթիվ նկարների շարքում բարձր գնահատականի արժանացան նաև այն նկարները, որոնց թեման վերցված էր քուրդ ժողովրդի կյանքից: Նկարիչ Ա. Աբրահամյանի նուրբ վրձնով էր ստեղծվել «Քրդերը յայլաներում» կտավը, որում պատկերված են քրդական վրանները, իսկ նրանցից մի փոքր հեռու մի խումբ քրդուհիներ իրենց ազգային գունազարդ շորերով հավաքվել են կրակի շուրջը և տոնում են իրենց ազգային տոնը՝ «Նավրուզը»: Նրա վրձնին են պատկանում նաև «Կթվորուհի Գյուլիզար Սուլեյմանը» և «Հերոսուհի մայր Թազա Ավդոն» կտավները: Նկարիչ Ե. Սավյանը պատկերել է մի քանի քրդուհիների՝ իրենց ազգային շորերով, իրենց վեհ ու հպարտ գեղեցկությամբ: Քրդուհու կերպարին է անդրադարձել նաև նկարիչ Վ. Գալիկյանը:[103]

Այսպիսով, թե՛ Մոսկվայում և թե՛ Երևանում բացված հայ նկարիչների ցուցահանդեսներում աստիճանաբար իրենց արժանի տեղն էին զբաղեցնում քրդական թեմաներով կտավները: Հայ նկարչի հոգուն հարազատ էր բարեկամ քրդերի կյանքը: 1957 թ. Երևանի Նկարչի տանը բացվեց հայ երիտասարդ նկարիչների ցուցահանդես: Այնտեղ ներկայացված 250 կտավների շարքում տեղ էին գտել նաև քրդական կյանքից վերցված նկարներ, որոնցից առավել աչքի էին ընկնում Լ. Կոջոյանի «Յայլաներում», Վ. Մանդակունու «Քուրդ կնոջ դիմանկարը» և այլ աշխատանքներ:[104]

1961թ. օգոստոսին Նկարչի տանը բացվեց Երանուհի ու Մարիամ Ալամազյան քույրերի նկարների ցուցահանդեսը: «Ոյա թազա» թերթի թղթակցի հետ զրույցում Երանուհի Ալամազյանը նշել է, որ իրենց միշտ էլ հետաքրքրել է քուրդ ժողովրդի ներկային ու անցյալին վերաբերող թեման, հատկապես նրանց գրավել է գեղեցիկ քրդուհին՝ իր ազգային գույնզգույն շորերով: Նա ասել է, որ իրենք դեռևս ուսանողական տարիներին նկարել են քրդական կյանքը պատկերող մի քանի աշխատանքներ (1939-40 թթ.), որոնք այսօր ցուցահանդեսում իրենց արժանի տեղն ունեն, ինչպես, օրինակ, «Քրդուհի ծխախոտագործը Բջնի գյուղից», «Քրդուհին Ապարանից», «Մի խումբ քրդեր» և «Քուրդ չոբանը»: Նկարչուհի քույրերը վերջում թղթակցին ասել են. «Մենք մեր քուրդ բարեկամներին երբեք չենք մոռանում»:[105]

Հայաստանի Հանրապետության վաստակավոր նկարչուհի Մարիամ Ալամազյանը, անդրադառնալով քրդական կտավներին, գրում է. «Քրդական դիմանկարները, որ նկարել եմ շատ վաղուց, իմ լավագույն ստեղծագործությունների շարքին եմ դասում»:[106] Արդեն 80-ամյա անվանի նկարչուհին երիտասարդի ավյունով էր ստեղծագործում: Նա կրկին չէր մոռանում իր քուրդ բարեկամներին: Ալազյազ գյուղում նա վերստին կերտում է քրդուհու կերպարը: Քրդական թեմաներով նրա աշխատանքներից են «72-ամյա հերոսուհի մայր Ռախբատա Ալոն», «Նիգար», «Թինա», «Ջամիլա» և մի շարք այլ քրդուհիների դիմանկարներ, որոնք ներկայացված են Մոսկվայի հանրահայտ Տրետյակովյան պատկերասրահում, Տուլայի մարզի գեղարվեստական և Մոսկվայի Արևելյան ժողովուրդների ցուցահանդեսներում:[107]

Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Հմայակ Ավետիսյանն այն հայ նկարիչներից է, որոնք անդրադարձել են ոչ միայն հայ հոգևոր մշակույթին և իրենց ստեղծագործություններում վեր հանել հայ ժողովրդի անցյալ ու ներկա կյանքը, այլև հարևան քուրդ ժողովրդի կյանքին: Պրոֆեսոր Հ. Ջնդին, ծանոթանալով քուրդ ժողովրդի կյանքին նվիրված նրա ստեղծագոր-

ծուլթյուններին, ասել է. «Նա ժողովուրդների բարեկամության հիասքանչ արվեստագետ է»:[108]

Քուրդ ժողովրդի, նրա հոգևոր հարուստ կերտվածքի հանդեպ մեծ հետաքրքրություն է հանդես բերել հայ նկարչական արվեստի նահապետ Մարտիրոս Սարյանը: Գրող և գրականագետ Ա. Սարդարը «Ռյա թազա» թերթի հանձնարարությամբ 1964 թ. դեկտեմբերի 7-ին եղել է վարպետի արվեստանոցում: Սարդարը գրել է. «Երբ վարպետը իմացավ, որ ես քրդական «Ռյա թազա» թերթից եմ, մեծ հաճույքով ընդունեց ինձ և իսկույն ասաց. «Ինչո՞ւ դուք ձեր թերթից մեկ համար ինձ չեք բերել, որպեսզի ես տեսնեի: Ջե՛ր որ ես քրդերին շատ եմ սիրում, նրանք իմ բարեկամներն են»: Այնուհետև, հետաքրքրվելով քրդական մշակույթով և մի քանի հարց տալուց հետո, ասում է. «Ես շատ ուրախ եմ, որ մեր երկրում քրդերն այդքան առաջ են գնացել, և նրանց ամեն մի առաջընթացն ինձ ուրախացնում է: Մենք՝ հայերս և քրդերը դարավոր հարևաններ ենք, շատ ընդհանուր բաներ գոյություն ունեն մեր կենցաղի, բնավորության, կյանքի մեջ: Ես ցանկանում եմ, որպեսզի այդ բարեկամությունը առաջ մղվի, էլ ավելի ամուր լինի, որովհետև դա մեր երկու ժողովուրդների ցանկությունն է»: Թղթակիցն այնուհետև հարցրել է. «Վարպետ, Դուք քրդական կյանքից որևիցե բան նկարե՞լ եք»: Նա առանց հապաղելու պատասխանել է. «Այո, ես մի քանի քրդերի նկարել եմ, և դրանք իմ ստեղծագործությունների ցուցահանդեսներում միշտ էլ իրենց ուրույն տեղն ունեն: Ես քրդերին շատ վաղուց գիտեմ: Քրդական պարերը, նրանց հարսանիքն էլ եմ տեսել: Նրանք մեկ-մեկու ձեռք բռնած, մեկ ոիթմով էին պարում, գյուվանդը (շուրջպար) շարունակվում էր, ոչ մեկը չէր շփոթվում, ոչ մի ավելորդ շարժում նրանց պարի մեջ չկար: Իսկ նրանց ազգային շորերը ինչքան գեղեցիկ էին, ոնց որ մի ղյուցազնական նկարիչ այն նկարած լիներ: Քրդերը բնության զավակներն են: Նրանց հագուստներն էլ գալիս են բնությունից, լեռներից: Եվ այն ամենը, ինչ բնությունից է գալիս, բնական է ու գեղեցիկ»:[109]

Անդրադառնալով Սարյանի քրդական թեմաներով նկարներին, պետք է առանձնապես նշել նրա «Քրդուհին պատգամավոր» դիմանկարը, որը նա նկարել է 1935 թվականին: Իսկ քուրդ ժողովրդի արժանավոր զավակ, գնդապետ Շամիր Թեմուրովի դիմանկարը վարպետը վրձնել է 1932 թվականին:[110]

Հայաստանի Հանրապետությունում հայ նկարիչների անմիջական օգնությամբ ասպարեզ են իջել մի շարք քուրդ նկարիչներ: Արագածի շրջանի «Ռյա թազա» գյուղի բնակիչ Սավտոե Ջաֆարն ավարտել է Մոսկվայի գեղարվեստի ինստիտուտը: Նրա նկարների թեման քուրդ ժողովրդի վերածնունդն է Հայաստանում: Մեծ վարպետի՝ Ավետիք Իսահակյանի անմիջական միջնորդությամբ Կիևի նկարչական Ակադեմիան է ընդունվել Բաքո Կալոևը, որը հետագայում անվանի նկարիչ դարձավ: Ջորոե Ֆերիկը ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի կերամիկայի ֆակուլտետը, մի քանի անգամ մասնակցել երիտասարդ արվեստագետների ցուցահանդեսին, արժանացել մրցանակի: Նրա ստեղծագործություններում հիմնական տեղ են զբաղեցնում քրդական ազգային նախշերը: Հայաստանի վաստակավոր նկարիչ Աշոտ Մամաջյանը բարձր է գնահատել Ջորոյի ստեղծագործությունը և կարևորել նրանց մեջ առկա ազգային նրբերանգները, որոնք յուրատեսակ բովանդակություն են հաղորդում նրա բոլոր աշխատանքներին:

Արտաշատի գեղարվեստական դպրոցում բազմաթիվ հայ աշակերտների հետ սովորում էին նաև քուրդ շնորհալի երեխաներ, որոնց ստեղծագործությունները լայն ճանաչում են գտել մեր հանրապետությունից դուրս: Այս դպրոցն ընդունվելուն պես Մամոե Բոզոյին անմիջապես հոգատարությամբ շրջապատեցին հայ բարեկամները, օգնեցին, ուղղություն ցույց տվեցին: Եվ բազմաշնորհ Մամոն օրեցօր խորացավ նկարչական արվեստի մեջ, դարձավ դպրոցի ամենաառաջավոր աշակերտներից մեկը: Նրա ստեղծագործությունները՝ «Յայլաներում», «Փոքրիկ տղայի դիմանկարը», «Իմ հայրը», «Արևմուտք» և «Մեր տունը», 1978 թ. ներկայացվեցին Արտաշատի նկարիչների ցուցահանդեսում: Արժանանալով ցուցահանդեսը դիտողների բարձր գնահատանքին, այդ աշխատանքներն ուղարկվեցին մանկական նկարիչների հանրապետական ցուցահանդես, այնուհետև՝ Լեհաստան, Լիբանան և Իրաք: «Ռյա թազա» թերթը, անդրադառնալով այս մանկան տաղանդին, գրել է. «Նրա ուսուցիչը՝ Արտաշատի գեղարվեստական դպրոցի տնօրեն Նորիկ Մալխասյանը, մեծ հույսեր է կապել Մամոյի հետ և մեծ հոգատարություն է ցուցաբերում նրա նկատմամբ»:[111]

Ուսումնասիրության մեջ քննարկված բոլոր հարցերի շուրջ մեր դիտարկումների արդյունքում հանգում ենք մի անհերքելի ճշմարտության. ինչպես 19-րդ դարում, այնպես էլ 20-րդ դարում հայ ժողովրդի մշակույթը և մշակութային գործիչները լրջագույն ավանդ են ունեցել ողջ քուրդ ժողովրդի և, մասնավորապես, Հայաստանում իրենց երկրորդ հայրենիքը գտած նրա բեկորների հոգևոր-մշակութային կյանքում, նպաստել այդ կյանքի աշխուժացմանը, նորացմանն ու հարստացմանը:

Մատուցված նյութերն ինքնին, ինչպես նաև դրանց վերլուծությունները վկայում են այն մասին, որ հայկական բարձրարվեստ մշակույթը, հատկապես երաժշտության ակունքները գալիս են հեռավոր անցյալից և մեծ ազդեցություն են ունեցել քրդական ողջ մշակույթի վրա: Ուշագրավ է նաև մի այլ հանգամանք. հայ մտավորականության, այդ թվում մշակութային գործիչների եղբայրական հոգատարության և աջակցության շնորհիվ աստիճանաբար ստվարանում են քուրդ մտավորականության, այդ թվում՝ մշակութային գործիչների շարքերը, քրդական մշակույթն օրեցօր ավելի է հարստանում, օժտվում նոր նրբերանգներով:

Ելնելով պատմական իրողությունից, հարկ է փաստել, որ հայ մտավորականության և Հայաստանի կառավարության կողմից քրդական մշակույթի ոլորտում ձեռնարկված յուրաքանչյուր քայլ երախտագիտությամբ է ընդունվել քուրդ ժողովրդի կողմից: Այդ վերաբերմունքն արտահայտվում է Հայաստանի կառավարության և հայ ժողովրդի հանդեպ քուրդ ժողովրդի նվիրվածությամբ:

Բոլոր դեպքերում քրդական մշակութային կյանքում առկա իրողությունը խոսուն կերպով վկայում է երկու հարևան ու բախտակից ժողովուրդների բարեկամական կապերի մասին, հավաստում, որ ժամանակի հոլովույթում դրանք ավելի ու ավելի ամրակուռ են դարձել և անբեկանելի են նաև ապագայում: Այնուամենայնիվ, այս ոլորտում անհրաժեշտ է շարունակել խորն ու բազմակողմանի ուսումնասիրությունները, քանզի հայ մտավորականության կողմից քրդական ողջ մշակույթի վրա ունեցած դրական ներգործությունը միշտ չէ, որ գտնվում է հետազոտողի համար տեսանելի մակերևույթներում: Այդ ուսումնասիրությունները կբացահայտեն քուրդ ժողովրդի մշակութային կյանքին առնչվող մինչ օրս չվերծանված բազմաթիվ պահեր, այդպիսով ոչնչացումից փրկելով այդ գանձարանի գոհարները:

ԱՄՓՈՓՈՒՄ

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբներին հայ-քրդական կապերի էլ ավելի ամրապնդումը օրակարգի հարց էր դարձել: Երկու ժողովուրդների մերձեցումը քրդերի միջավայրում լուսավորության տարածման ու մշակութային առաջընթացի նախապայմանն էր, այդպիսով ավելի էր հիմնավորվում քուրդ աշխատավորության լայն զանգվածներին օսմանա-թուրքական կառավարության ենթգամիտ քաղաքականության պարզաբանումը: Եվ նաև խորապես ուսումնասիրվել և վեր են հանվել քրդական մշակույթի ու պատմության վերաբերող բազմաբնույթ հարցեր: Այս կարևորագույն խնդիրը մտահոգում էր ոչ միայն քուրդ, այլև հայ լայնախոհ մտավորականությանը, հասարակական ու քաղաքական գործիչներին, բազմաբնույթ կազմակերպություններին, հատկապես՝ պարբերական մամուլին:

Հարկ է նշել, որ քրդական մշակույթի ու պատմության հարցերի բազմակողմանի ուսումնասիրման առաջին ու հիմնական կենտրոնը համարվել է Արևմտյան Հայաստանը: Այնուհետև այս գործընթացն աստիճանաբար ճյուղավորվել ու տարածվել է ողջ Հայաստանում և Քուրդիստանում: Այս հարցում որոշիչ նշանակություն ունեցան 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին հայկական ու քրդական միջավայրում արձանագրված քաղաքական ու սոցիալական տեղաշարժերը, հատկապես այդ տեղաշարժերի աստիճանական ներթափանցումը նաև հասարակական մտածողության ու հասարակական-քաղաքական մտքի ոլորտներ: Այդպիսով առաջացան գաղափարախոսական առաջադիմ մի շարք հոսանքներ, ստեղծվեցին քաղաքական կազմակերպություններ և վերջիններիս ձայնափող պարբերական հրատարակություններ: Քանի որ այդ տեղաշարժերն առավել ցայտուն էին արտահայտված հայկական միջավայրում, ուր արևմտահայության ազգային, քաղաքական ու մշակութային զարթոնքն աննախադեպ արագ էր ընթանում, բնականաբար, քրդական մշակութային կյանքի աշխուժացմանը նպաստող նախաձեռնությունների մեծ մասը կենտրոնացած էր

այստեղ: Թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում հայ գրականությունն ու մամուլն այն հայելին էին, ուր ցայտում կերպով իրենց արտացոլումն էին գտնում հայ-քրդական հարաբերությունները, մշակութային բազմահանգույց և ամուր կապերը, քրդերի սոցիալ-տնտեսական վիճակը, պատմության բազմաբնույթ հարցերը, հատկապես բանահյուսության հարուստ գանձարանը, կրթական, կենցաղային և այլ ոլորտներին առնչվող հարցեր:

Այս իրողությունն անառարկելիորեն վկայում է այն մասին, որ քրդական միջավայրին զուգահեռ և հաճախ նույնիսկ վերջինիս համարժեք, հայկական միջավայրը քրդական ազգային արժեքների մեծագույն գանձատունն էր: Հայ մտավորականության ոչ միայն լայնախոհ, այլև հայ-քրդական բարեկամության ջատագով լինելու շնորհիվ կործանումից ու ոչնչացումից փրկվել են քրդական դարավոր մշակույթի արժեքներ, պատմական կարևոր դրվագների հետ կապված նյութեր, սկզբնաղբյուրների մասին տեղեկություններ: Դրանք այսօր էլ կարող են ոչ միայն հարուստ նյութ տրամադրել մեր պատմաբաններին, բանասերներին, ազգագրագետներին ու լեզվաբաններին, այլև՝ օգնել գիտահետազոտական, գիտագործնական նպատակների իրագործմանը, օգտագործվել մշակութային ոլորտում և այլն:

Հայ-քրդական հարաբերություններին, այդ թվում՝ և մշակութային կապերի պատմության մեջ իրենց կարևոր ներդրումն ունեն նաև բազմաթիվ քուրդ մտավորականներ, որոնք նույնպես 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբներին գործնական քայլերի դիմեցին՝ ջանալով հայ մտավորականության օգնությամբ վեր հանել քրդական մշակույթում եղած բացերը, ամրապնդել հայ-քրդական համագործակցությունը: Նրանք փորձում էին քրդական միջավայրում ըմբռնողության հասնել լուսավորական լայնահուն և հրամայողականորեն անհրաժեշտ աշխատանքում հայ մտավորականության կարևորագույն դերի ընկալման և դրա համար գործնական հիմքեր ստեղծելու հարցում:

Եվ այսպես, 19-րդ դարի երկրորդ կեսից հայ և քուրդ հասարակական-քաղաքական ու մշակութային առավել առաջադեմ գործիչների ջանքերով ու նրանց քաղաքական հեռատես մոտեցման շնորհիվ երկու ժողովուրդների միջև ստեղծվում է հոգևոր մի նոր կամուրջ, որը բնականորեն շաղկապվում է հոգեբանության ու սովորույթների, ազգային մշակույթների ընդհանրության հողի վրա հիմնված՝ հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը խորհրդանշող հնամենի կապերին: Այսպիսով, քրդական մշակույթի ու պատմության առջև բացվում է զարգացման մի նոր հեռանկար: Քուրդ ժողովրդի մշակութային կյանքում մի նոր դարաշրջան է բացվում՝ պայմանավորված Արևելյան Հայաստանի հայ մտավորականության գործունեությամբ և 20-րդ դարի սկզբներին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ, որ հատկապես արտահայտվեց պետական գործնական մոտեցմամբ: Սա մի նոր երևույթ էր ողջ քուրդ ժողովրդի պատմության մեջ:

* * *

Քուրդ ժողովրդի մի մասը, թուրքական յաթաղանից մազապուրծ, պանդխտության ցուպը ձեռքին՝ գաղթեց Ռուսաստան և բնակություն հաստատեց Արևելյան Հայաստանում: Հայ ժողովուրդը Թուրքիայից և Իրանից գաղթած քրդերին ընդունեց սիրով ու բարեկամաբար: Սակայն պետք է նշել, որ ցարական կառավարության սիրապետության տակ գտնվող քրդերն ապրում էին սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում, զրկված էին մշակույթից, գիր ու գրականությունից: Ցարական կառավարությունն էլ իր հերթին փորձում էր անջրպետել հայերին և քրդերին: Վերջիններս ստիպված էին լինում թողնել հայկական գյուղերն ու զբաղվել քոչվոր անասնապահությամբ, իսկ նրանց հողերը հանձնվում էին տեղական իշխանություններին: Սակայն այսպիսի քաղաքականության պայմաններում կրկին հայ ժողովուրդը և նրա լայնախոհ մտավորականությունն իրենց բարերար ձեռքը մեկնեցին կործանման եզրին կանգնած քուրդ ժողովրդի այդ փոքրիկ հատվածին:

Արևելյան Հայաստանում հայ մտավորականությունն ամենուր ջանում էր ամրապնդել հայ-քրդական կապերը՝ այդ ուղղությամբ առաջնահերթ համարելով քրդերի մեջ լուսավորության տարածումը, գրականության ու մամուլի միջոցով այդ հնամենի ժողովրդի մշակութային բարձրարժեք նմուշների վերհանումն ու կործանումից փրկելը: Խորհրդային Հայաստանում սույն մարդասիրական ավանդույթներն աստիճանաբար ավելի խորացան, դրվեցին քաղաքական ու գիտական նոր ուղու վրա, որը նպաստեց քրդերի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի բարգավաճմանը: Երբեք չափազանցրած չենք լինի, ասելով, որ խորհրդային տարիներին հայ մտավորականությունը, Հայաստանի կառավարությունը մեծ և որոշիչ դեր ունեցան քրդական մշակույթի, հատկապես քրդագիտության զարգացման ու հարստացման գործում:

Մշակույթի ու պատմության հարցերի համալիրում շեշտը դնելով քրդական գրականության և արվեստի զարգացման վրա, հարկ է նշել, որ չափազանց մեծ է հայ գրականության և հայ առանձին գրողների, արվեստագետների դերը քրդական գրականության և արվեստի ստեղծման ու զարգացման գործում: Ելնելով այդ հարցի կարևորությունից, փորձել ենք լուսաբանել ու գիտական շրջանառության մեջ դնել դրա շարժառիթներն ու հիմնախնդիրները: Երախտագիտությամբ պետք է նշել, որ Հայաստանում ծնունդ առած և մի քանի տասնամյակ բուռն զարգացում ապրած խորհրդային քրդական գրականության առաջին ներկայացուցիչները եղել են քրդախոս հայ մտավորականները, ովքեր հիմնադրելով քրդական խորհրդային գրականությունն ու կանխորոշելով նրա զարգացման ուղիները, փաստորեն, դարձան քրդական բազմադարյան մշակույթի պատմության մեջ նոր գործընթացների ու երևույթների զարգացման մասնակիցը: Իսկ քրդական մշակված երաժշտությունը կյանքի կոչվեց Կոմիտասի կողմից:

Այսօր առավել քան երբևէ կարևոր է այս իրողությունների օրյեկտիվ և անա-

չառ գնահատությունն ու իմաստավորումը, դրանցից խելամտորեն դասեր քաղելը, այլ ոչ թե պատմական արժեքավոր փաստերը խեղաթյուրելն ու անցած ողջ պատմությունն անտեսելը, ենթագիտելը: Նման սուբյեկտիվ մոտեցումը կարող է միայն բացասաբար ազդել հայ և քուրդ ժողովուրդների փոխհարաբերությունների ու նրանց մշակութային կապերի, ինչու չէ, նաև՝ հայ մտավորականության, կառավարության ժողովրդավարական, ազգային արդարացի ու մարդասիրական քաղաքականության վրա:

Հայ մտավորականության դերը գերագնահատած չենք լինի, եթե ասենք, որ 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարում հայկական բազմաբնույթ աղբյուրները լրացրել են քրդական մշակույթում ու պատմությունում եղած բացը և խթանել դրանց զարգացումը: Այստեղից էլ՝ անխուսափելիությունն այն իրողության, որ հայ մշակույթի առաջավոր տարրերից սնված քրդական մշակույթն, իր հերթին, ներդրում է կատարել քրդական համաշխարհային մշակույթի գանձարանում, կործանումից փրկել նրա լավագույն գոհարները:

ՕԳՏԱԳՐՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

ՆԱԽԱԲԱՆ

1. Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները օսմանական կայսրությունում, 1989, Երևան, էջ 3:
2. Արովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1958: Խրիմյան Հայրիկ, Ծրագիր բարեկորոգման, 1909, Կ. Պոլիս: Րաֆֆի, Տաճկահայք, 1913, Վիեննա, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան: Արծրունի Գ., Թուրքաց հայերի անտեսական դրությունը, 1894, Թիֆլիս:
3. Vambmery H. Armenier and Kurden.- „Deutsche Rundschau„, Berlin, 1896, Bd LXXXVI, Januar-Marz. Rohrbach P. Armenier und Kurden. - „Verhandlungen des Gesellschafts fur Erdkunde„, , Berlin, 1900, Bd XXXVII, N 2-3. NÖldere T h. Kardû und Kurden. Sbu գիրք «Beitrage zur alten Geschichte und Geographie. Festschrift fur H. Kiepert», Berlin, 1898.
4. «Աշակ», 1880.
5. «Հայրենիք», 1928, N4958, 21 օգոստոսի:
6. Жаба А., Сборник, Заметки о курдах, Петербург, 1860, с. 32.
7. Орбели И. А. Фольклор и быт Мокса, Москва, 1982, с. 136.
8. „Памятник эпохи Руставели„, , Ленинград, 1938, с. 5.
9. «Յառաջ», 1926, N125:
10. Լեո, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1947, էջ 661:
11. Շահխազյան Յ., Քիւրդօ-հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911:
12. Ֆրանգյան Ե., Առրպատական, Թիֆլիս, 1905:
13. Անդրանիկ, Տերսիմ. Ճանապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, 1900, Գ. Ս. Երևանյան, Պատմություն Չարսանջակի հայոց, Քեյրութ, 1956:
14. Safrastian A. Kurds and Kurdistan, London, 1948.
15. Егиазаров С. А., Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, Тифлис, 1891.
16. Лерх П. И., Исследования об Иранских курдах и их предках северных халдеях, кн. 3, СПБ, 1858.
17. Никитин В. П., Курды, Москва, 1964.
18. Худавердян К. С., Культурная революция в Армении 1920-1940 гг., Ереван, 1966. Культурное строительство в Советской Армении в годы первой пятилетки /1928-1932/, Ереван, 1959.

Համբարյան Ա. Ս., Սովետական Հայաստանի քրդերը, Երևան, 1957: Մակինցյան Հ. Ս., Էջեր ինտերնացիոնալ համախմբման պատմությունից, Երևան, 1980:

19. Սուռոյան Չ. Գ., Քրդական բանահյուսության մշակումները սովետահայ գրականության մեջ, Երևան, 1980:
20. Գասպարյան Ս. Գ., Կոմիտաս, Երևան, 1969:
21. Զաուարի Ն. Հ., Քրդական ժողովրդական երգարվեստը, Երևան, 1976:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄՆ ՈՒ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՍՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Ա. ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ

1. Ачарян Р., Словарь армянских собственных имен, т. 5, Ереван, 1962, с. 225-226.
2. „Rya teze„ , h. 1 1955.
3. Լեո, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1947, էջ 661:
4. Շվոու Մ. Տ., Քրդերը Տաճկահայաստանում, Պետերբուրգ, 1905, հ. Ա, էջ 5:
5. «Հայրենիք», 1925, 12 սեպտեմբերի, N4064:
6. Ե. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., բաժին 3-րդ, թղթ. 51, էջ 5:
7. Նույն տեղում, Շահեն Կուժիկյանի արխիվ, թղթ. 52, էջ 116-117:
8. «Արձագանք», 1916, մարտ, N2:
9. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության արխիվ, Գ. Հալաջյանի ձեռագիր աշխատություն, Նյութեր Դերսիմի ազգագրության, էջ 410:
10. Շահպազյան Հ., Քյուրդո-հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 25:
11. Նույն տեղում:
12. «Անահիտ» ամսագիր, Փարիզ, 1901, N3:
13. Ազիզյան Մ., Հերոսական Շատախի Արմաշ գյուղը, Քեյրութ, 1974, էջ 11-12:
14. «Անահիտ», Փարիզ, 1900, N1-5:
15. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1850-1870 թթ., Երևան, 1955, էջ 10:
16. «Հայրենիք», 1930, N12:
17. „Армянский вестник„ ,1916, н. 33, с. 16.
18. «Հայրենիք», 1928, 29 փետրվարի, N4813:
19. Նույն տեղում, 1930, 9 օգոստոսի:

Բ. ՀԱՅ ՍՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՉԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

20. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Մատենադարան, ձեռ. 7117, էջ 144 բ.:
21. Նույն տեղում:
22. Նույն տեղում, ձեռ. 737, էջ 119-124, 150-152:
23. Ինճիճյան Ղ., Ստորագրութիւն հին Հայաստանեայց, 1822, Վենետիկ, էջ 144:
24. Ինճիճյան Ղ., Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, 1835, Վենետիկ:
25. Климович Л. И., Наследство и современность, 1975, М. с. 365.
26. Wagner M., Reise nach Persien und der Lande der kurden, Bd.1-2, Leipzig, 1852, s. 315,360.

27. Բակունց Ա., Խաչատուր Աբովյանի «Անհայտ բացակայությունը», Երևան, 1932, էջ 36:
28. Աբովյան Խ., հ. 8, Երևան 1958, էջ 246:
29. Wagner M. s 219.
30. Աբովյան Խ., հ. 7, Երևան 1956, էջ 195:
31. Աբովյան Խ., հ. 8, էջ 260:
32. Նույն տեղում, էջ 377:
33. Նույն տեղում, էջ 262-263:
34. Նույն տեղում, էջ էջ 262-263:
35. Նույն տեղում, էջ 249:
36. Նույն տեղում, էջ 257:
37. Նույն տեղում:
38. Նույն տեղում, էջ 258:
39. Նույն տեղում, էջ 255:
40. Նույն տեղում, էջ 256:
41. Հայելի գործոց և աշխատությանց Տիգրանյանի, Կ. Պոլիս, 1864, էջ 10:
42. Լապտեր լուսատու հորինյալ ի տեր Սկրտիչ վարդապետ Տիգրանյան, Կ. Պոլիս, 1866, էջ 19:
43. «Պայքար», 1930, 13 օգոստոսի, N189-203:
44. Մաշտոցի անվամբ մատենադարանի արխիվ, Ալպոյաջյանի ֆ., թղթ. 4, վավ. 913:
45. Հայելի գործոց և աշխատությանց Տիգրանյանի, Կ. Պոլիս, 1864, էջ 55:
46. Այբբենարան քրդերեն և հայերեն, «Ալիֆպեջեզ գուրմանջի ու արմանի», Կ. Պոլիս, 1860:
47. Նալբանդյան Մ., Անտիպ երկեր, Ս. Գ. Հովհաննիսյանի մեկնաբանությամբ, Երևան-Մոսկվա, 1935, էջ 465:
48. Զեյթունի գործերը Քուրդիստանի և Մուշի վանորից և վարժարաններու վիճակը, Կ. Պոլիս, 1869, էջ 123:
49. «Պայքար», 1930, N189-203:
50. «Մշակ», 1881, N 48:
51. Նույն տեղում, 1902, N 281-183:
52. Արծրունի Գ., Թուրքաց հայերի ամտեսական դրությունը, 1894, Թիֆլիս, էջ 16:
53. Նույն տեղում:
54. «Արարատ», 1889, N1-10, 1890, N1, 2, 5, 6, 7, 12:
55. Ղազարյան Յակ, Գյուլե, 1890, Թիֆլիս, էջ 60:
56. Նույն տեղում, էջ 12:
57. Ղազարյան Յակ, Խումխուր , 1893, Թիֆլիս, էջ 34:
58. Նույն տեղում, էջ 56:
59. Նույն տեղում, էջ 51:
60. «Մշակ», 1920, N74:
61. ՀՀ ներքին պատմության արխիվ, ֆ. 122, ց. 1, գ. 50, էջ 9:
62. «Մշակ», 1920, N5:
63. Նույն տեղում:
64. «Նոր դար», 1889, N104-131:
65. Егиазаров С. А., Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, Тифлис, 1891.
66. Журнал „ Наше Минуел„ /Наше прошлое/, Киев, 1918, но.1, с. 46.

67. Егиазаров С. А.
68. «Արևելյան մամուլ», 1881, էջ 226:
69. Նույն տեղում, էջ 350, 421:
70. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1955, Երևան, էջ 272:
71. «Արևելյան մամուլ», 1880, էջ 86:
72. Նույն տեղում:
73. «Ալիք», Թեհրան, 1946, 15 մարտի, N2490:
74. Ալպոյաջյան Ա., Պատմութիւն Եդեսկիոյ հայոց, Գահիրե, 1952, էջ 111:
75. Թերզիբաշյան Ա., Արծիվը իր բույնին մեջ, 1938, Փարիզ, էջ 40:
76. Դիվան Հայոց պատմության, 1915, Թիֆլիս, գիրք Ժ, էջ 345:
77. Տեր-Սիմեսյան Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Լոս Անջելես, 1952, հ. 2, էջ 351:
78. Մաշտոցի անվան մատենադարանի արխիվ, կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ 25:
79. «Հուլիս», 1911, N39:
80. Երևանյան Գ. Ս., էջ 83:
81. Անդրանիկ, Տերսիմ, Ճանապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, 1900, էջ 101-105:
82. Թոխմախյան Ա., Մասիս լեռների հարավային ստորոտները, Թիֆլիս, 1881:
83. Նույն տեղում, էջ 42:
84. Նույն տեղում, էջ 57:
85. Նույն տեղում:
86. «Մշակ», 1872, N29:
87. Նույն տեղում:
88. Բաֆֆի, Տաճկահայք, 1913, Վիեննա, էջ 221:
89. Նույն տեղում, էջ 121:
90. «Մշակ», 1903, N62:
91. Նույն տեղում:
92. Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, էջ 48:
93. Նույն տեղում, էջ 16:
94. Նույն տեղում, էջ 47:
95. Նույն տեղում, էջ 48:
96. Նույն տեղում:
97. Բաֆֆի, «Կայծեր», Երեւան 1947, էջ 124:
98. Նույն տեղում, էջ 121:
99. Նույն տեղում, էջ 228:
100. Նույն տեղում:
101. Նույն տեղում, էջ 215:
102. Անդրանիկ, Տերսիմ, Ճանապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, 1900, էջ 237:
103. Նույն տեղում, էջ 200:
104. Նույն տեղում:
105. АВПР, (Архив Внешней Политики России), Ф. „П-во в К-поле„ , 1913, д. 1605, л. 115.
106. Լալայան Ե., Ջավախքի բուրմունք, Թիֆլիս, 1882, էջ 57:
107. Լալայան Ե., Վասպուրական, Թիֆլիս, 1912:
108. Նույն տեղում, էջ 201:

109. Լալայան Ե., Վասպուրական, ազգագրություն, աստիճներ, Թիֆլիս, 1913, էջ 36:
110. Лалаян Е. А., Айсоры Ванского вилайета, Тифлис, 1914.
111. Մաշտոցի անվան մատենադարան, Գ. Հովսեփյանի ֆ., թղթ. 95, վավ. 177:

Գ. ԹՈՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՔՈՒՐԴ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԾԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

112. Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, 1977, էջ 84:
113. Մաշտոցի անվան մատենադարան, Ա. Ալպոյաջյանի ֆ., թղթ. 4, վավ. 94:
114. «Մասեաց աղավնի», 1864, նոյեմբեր, էջ 337-359:
115. «Փորձ», 1876, N2, էջ 305:
116. Նույն տեղում, 1881, N5-6, էջ 100:
117. Բազմավեպ, 1894, N4, էջ 168, 1895, N8, էջ 362, N10:, էջ 451, 1896, N4, էջ 158, N5, էջ 211, 313, 362, 403, 460:
118. «Մեղու Հայաստանի», 1882, N128-38:
119. Նույն տեղում: 1882:
120. «Արձագանք», 1890, N10, 27, 28:
121. «Լումայ», 1897, էջ 274-307:
122. Նույն տեղում, 1899, գիրք Ա:
123. Նույն տեղում:
124. Նույն տեղում:
125. Նույն տեղում, 1898, գիրք Բ, էջ 49:
126. «Մուրճ», 1905, N5, էջ 114:
127. Նույն տեղում:
128. «Նոր դար», 1896, N141:
129. Նույն տեղում, N142:

Գ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՆԴԸ ՔՐԴԱԿԱՆ ՄԾԱԿՈՒՅԹՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

130. Երեմյան Հ., Յուշարձան, Վան-Վասպուրական, հ. Ա, էջ 113:
131. «Մշակ», 1881, N23, 24:
132. Դիվան հայոց պատմության, 1915, Թիֆլիս, գիրք ԺԳ, էջ 345-346:
133. Նույն տեղում, էջ 192, 194, 209, 214, 348, 384:
134. Սրվանձտյանց Գ., Համով-հոտով, հ. Ա., Թիֆլիս, 1904, էջ 294:
135. Նույն տեղում, էջ 293:
136. Սրվանձտյանց Գ., հ. 1, Երևան, 1978, էջ 67:
137. Սրվանձտյանց Գ., Հնոց ու նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 20, 174-175:
138. «Արևելյան մամուլ», 1883, մարտ, էջ 152:
139. Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 32:
140. Նույն տեղում, էջ 47:
141. Նույն տեղում, էջ 392:
142. Սրվանձտյանց Գ., Մանանա, Կ. Պոլիս, 1876:

143. ԱՎՊՐ, Ֆ. „П-во в К-поле„ , 1913, д. 1605, л. 104.
144. «Մշակ», 1880, N211:
145. Նույն տեղում:
146. «Ազատամարտ», 1911, N641:
147. Մաշտոցի անվան մատենադարան, Ա. Այդոյաջյանի ֆ., թղթ. 4, վավ. 94, էջ 11:
148. Նույն տեղում:
149. Նույն տեղում:
150. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, գործ Գ. Հալաջյանի, թղթ. 6ա, էջ 37:
151. Հովհաննիսյան Ռ. Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 286:
152. Բդեյան Սարգիս և Սիսակ, Հարազատ պատմություն Տարոնոյ, 1962, Կահիրե, էջ 74:
153. «Ազատամարտ», 1910, N397:
154. Նույն տեղում, N266:
155. «Հայրենիք», Բոստոն, 1931, N4:
156. Տեր-Սիմեսյան Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Լոս Անջելես, 1952, հ. 4, էջ 240:
157. Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 292:
158. Տեր-Սիմեսյան Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 4, Լոս Անջելես, 1952, էջ 238-239:
159. Տեր-Սիմեսյան Ռուբեն, էջ 238-39:
160. Նույն տեղում:
161. Տեր-Սիմեսյան Ռուբեն, 2-րդ հրատ., էջ 353:
162. Նույն տեղում, 3-րդ հրատ., էջ 358:
163. Նույն տեղում, 5-րդ հրատ., էջ 19:
164. Նույն տեղում, հ. 4, էջ 238-240:
165. Նույն տեղում, հ. 5, էջ 59:
166. Նույն տեղում:
167. «Ազատամարտ», 1909, N 51:
168. Նույն տեղում:
169. Նույն տեղում, 1910, N266:
170. «Հայրենիք», 1925, 12 սեպտեմբերի:
171. Նույն տեղում:
172. Նույն տեղում, 1928, 29 փետրվարի, N4813:
173. «Ազատամարտ», 1909, N190:
174. «Արարատ», 1971, N65, 66:
175. Նույն տեղում, 3 ապրիլի:
176. Նույն տեղում, 5 ապրիլի:
177. «Դրոշակ», 1898, N6:
178. „Kûrdîstan„ 1898 N 7,11, 1900, N 25, 1902, N 30.
179. «Գործ», 1908, N53:
180. Համբարյան Ա. Ս., ձշված աշխ., էջ 250:
181. ԱՎՊՐ, Ֆ. „П-во в К-поле„ , 1912, д. 2682, л. 10.
182. Համբարյան Ա. Ս., ձշված աշխ., էջ 251: .

Ե. ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԱՍՈՒԻ ՆՈՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

183. «Մշակ», 1915, N21:
184. Նույն տեղում, 1914, N159:
185. Նույն տեղում, 1902, N 111:
186. Xarîbcanyan G., Ewledê rêvolyûsîaê, Yêrêvan, 1987, r. 3.
187. «Մշակ», 1909, N36:
188. Նույն տեղում, N237:
189. Նույն տեղում, 1913, N111:
190. Նույն տեղում, 1913, N113:
191. ԱՎՊՐ, Ֆ. „Политархив„ , 1912 -1914, оп. 482, д. 1648,л. 30.
192. «Մշակ», 1907, N104, 106:
193. «Մշակ», 1908, N202:
194. Նույն տեղում, 1910, N204, 1914, N80, 82, 85:
195. «Կոչնակ», 1911, N115:
196. Առաքելյան Հ., Ձեյթուն, Թիֆլիս, 1896, էջ 41, 42:
197. ՀՀ ԳԱԹ արխիվ, Հ. Առաքելյանի ֆ., թղթ. 14, էջ 158ա:
198. Նույն տեղում, թղթ. 21:
199. Էմինյան ազգագրական ժողովածու, 1904, Մոսկվա, հ. Ե-Զ, էջ 71-75:
200. Նույն տեղում, հ. Ե. էջ 6:
201. ՀՀ ԳԱԹ արխիվ, Ս. Հայկունու ֆ., ձեռագիր N 130:
202. Նույն տեղում:
203. Նույն տեղում, թղթ. N44, 46, 48, 89:
204. Նույն տեղում, թղթ. N 208-214:
205. Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ե., Մոսկվա-Վաղարշապատ, 1901, էջ 63:
206. Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Զ, Մոսկվա-Վաղարշապատ, 1906, էջ 7:
207. Նույն տեղում, էջ 166:
208. Նույն տեղում, հ. Ե-Զ, էջ 252:
209. Նույն տեղում, էջ 257:
210. Նույն տեղում:
211. Նույն տեղում, հ. Զ, էջ 340:
212. Հայկունի Ս., Բագրևանդ ջրաբաշխ գավառ, Էջմիածին, 1894:
213. «Մեղու Հայաստանի», 1885, N36, էջ 1-2:
214. Նույն տեղում, 1885, N77, էջ 7:
215. Նույն տեղում, N46, էջ 1-3, N49, էջ 2-3, N51, էջ 2-3, N52, էջ 2-3, N53, էջ 2-3, N54, էջ 2, N56, էջ 1-2, N57, էջ 67:
216. «Արարատ», 1896, N2, էջ 184, N3, էջ 133, N4, էջ 183, N5, էջ 238, N6, էջ 280:
217. Հայկունի Ս., Թագավոր Լուսիկ և Լմեսի Հովիկ, Էջմիածին, 1900:
218. Հայկունի Ս., Սոքսի ժողովրդական վեպ (Չարսանջակի բարբառով), 1896, ս. Էջմիածին:
219. Նույն տեղում, էջ 88:
220. Ջնդի Հ., Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ, Երևան, 1965, էջ 85:

221. Հայկունի Գ., Մասսաների երթը, Երկերի ժողովածու, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 277, 425:
222. Նույն տեղում, էջ 367:
223. Նույն տեղում, էջ 369:
224. «Մուրճ», 1904, N5, 6, 10:
225. Նույն տեղում, 1903, N11, էջ 54:
226. Նույն տեղում, 1902, N3, էջ 69:
227. Ֆրանգյան Ե., Ասրպատական, Թիֆլիս, 1905:
228. Նույն տեղում, էջ 270:
229. Նույն տեղում, էջ 93:
230. Շվոտ Մ. Տ. (Արամյանց Հ.) Քրդերը Տաճկաց Հայաստանում, Պետերբուրգ, 1905, էջ8:
231. Նույն տեղում, էջ 6:
232. Նույն տեղում, էջ 35:
233. Նույն տեղում, էջ 37:
234. Նույն տեղում, էջ 43:
235. Նույն տեղում, էջ 53:
236. Նույն տեղում, էջ 69:
237. Նույն տեղում, էջ 71:
238. Նույն տեղում, էջ 114:
239. Նույն տեղում, էջ 122:
240. Սիոն վարդապետ Տեր-Մանուելյան, Եզդի-Կուրմանջ, Ախալցիխա, 1910, էջ 4:
241. Նույն տեղում, էջ 9:
242. Նույն տեղում, էջ 16:
243. Նույն տեղում, էջ 17:
244. Նույն տեղում, էջ 17:
245. Նույն տեղում, էջ 23:
246. Նույն տեղում, էջ 29:
247. Նույն տեղում, էջ 5:
248. Նույն տեղում, էջ 23:
249. «Ազատամարտ», 1909, N15-19:
250. Նույն տեղում, 1910, N457:
251. Նույն տեղում, N 402:
252. Շահպազյան Յակոբ, Քիւրդօ-հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 2:
253. «Յառաջ», 1928, 16 սեպտեմբերի, N753:
254. «Ազատամարտ», 1912, N81-82:
255. «Անահիտ», 1900, N4-5, էջ 129-133:
256. Նույն տեղում:
257. Նույն տեղում:
258. Նույն տեղում, N3:
259. Նույն տեղում, N4-5:
260. Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Ա. Ալպոյաջյանի ֆ., թղթ, 4, վավ. 94:
261. Նույն տեղում:
262. Նույն տեղում:
263. Ալպոյաջյան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1950:
264. Ալպոյաջյան Ա., Պատմութիւն Եղոկիոյ հայոց, 1952, Կահիրե, «Պատմութիւն Սպասքիոյ հայոց», 1961, Քեյրութ:
265. «Արև», 1925, 2 մայիսի:
266. Նույն տեղում:
267. Նույն տեղում, 2 մայիսի:
268. Նույն տեղում:
269. Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Ա. Ալպոյաջյանի ֆ., թղթ. 4, վավ. 97:
270. Ա. Սաֆրաստյան, Քրդերը եւ Քրդաստան, Լոնդոն 1947:
271. АВПР, Ф. „П-во в К-поле„ , 1912, д. 1603, л. 84-85.
272. Юзбашян К. Н., Академик Иосиф Абгарович Орбели, М. 1964, ст. 33.
273. АВПР, Ф. „П-во в К-поле„ , 1912, д. 1603, л. 75.
274. Նույն տեղում:
275. АВПР, Ф. „П-во в К-поле„ , 1912, д. 1603, л. 85.
276. «Ապագայ», 1927, 15 հունվարի, N10:
277. „Заря Востока. 1927, но. 1444.
278. Орбели И. А., Фольклор и быт Мокса, Москва, 1982.
279. Орбели И. А. Введение. Памятники эпохи Руставели, Ленинград, 1938, ст. 5.
280. Նույն տեղում:
281. АВПР, Ф. „Персидский стол Б„ , 1913, д. 121, лл 21-22.
282. Նույն տեղում:
283. Նույն տեղում:
284. Орбели И. А. Курдско русский словарь, т. 2, Ереван 2002.
285. Նույն տեղում:
286. Орбели И. А., Восток и Запад в XII-XII вв. Вопросы истории, 1965 N 6. ст. 105-110.
287. ՀՀ ԳԱԹ, արխիվ, ֆ. 79, g. 1-ին:
288. Նույն տեղում:
289. Նույն տեղում ֆ. 79, թղթ. 26, 72, 629, 630:
290. «Արարատ», 1913, N4, 67:
291. Կանանյանց Ս., Անհայտ գավառներ Հին Հայաստանի, 1914, Էջմիածին, էջ 37:
292. «Հորիզոն», 1913, N34:
293. «Մշակ», 1920. N2:
294. Լեո, Հայոց պատմություն, 2-րդ մաս, 1946, էջ 779, 787:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՍՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՍՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ա. ՔՐԴԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

1. «Նոր դար», 1889, N194:
2. АКАК. Акты собрание и издание Кавказской комиссий, т. 3, ст. 443.
3. Նույն տեղում:
4. ՀՀ ՊԿՊԱ (պետական կենտրոնական պատմական արխիվ), ֆ. 100, g. 1, գ.93, էջ 2:

5. Аристова Т. Ф., Поездка к курдам Закавказья, „ Советская этнография„ , н. 6, 1968, ст. 138.
6. АКАК, т. 8, ст. 629.
7. Պուշկին Ա. Ս., Ճանապարհորդություն դեպի Էրզրում, Երևան, 1937:
8. Рукою Пушкина, МЛ, 1935, с. 872-878.
9. Գրիբոյեդով Ա. Ս., Ճանապարհորդական նոթեր, Երևան, 1953, էջ 62:
10. Международный толстовский алманах, М. 1909, ст. 39.
11. Лихутин М., Русские в Азиатской Турции, 1854-55 годах, СПБ 2, 1863, ст. 171.
12. Минорский В. Ф., Курды, заметки и впечатления, П. 1915, ст. 42.
13. АКАК, т. 8, ст. 81.
14. Аверьянов П. И. Курды в войнах России с Турцией в течение 19-го столетия, Тифлис, 1900, ст. 173.
15. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 101, g. 1, գ.58, էջ 3:
16. Аверьянов П. И. ст. 218.
17. Բադալյան Խ. Հ., Հայաստանը ռուս-թուրքական պատերազմում (1877-78 թթ.), Երևան, 1959, էջ 51:
18. Боевой подвиг Кавказских войск, Тифлис, 1884, ст. 3.
19. ՀՀ ԳԱՓ արխիվ, Հովի Թումանյանի ֆ., գործ 257, էջ 1-2:
20. „Армянский Вестник„ , 1916, н. 33 ст. 13.
21. Րաֆֆի, Տաճկահայք, Վիեննա, 1913, էջ 127:
22. «Նոր դար», 1880, N30:

Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՍՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔԻ ԿՅԱՆՔՈՒՄ (1920 – 1990 թթ.)

23. "Правда", 1934, н. 260, 20-ого сентября.
24. ՀՀՆՊԿ (ՀՀ ներքազույն պատմության կենտրոնական արխիվ), ֆ. 112, g 2, գ. 1466, էջ64:
25. Նույն տեղում:
26. Շառոյան Գ. Վ., Հողաշինությունը Հայաստանում ազգային փոքրամասնությունների շրջանում (1921-1927 թթ.), Երևան, 1962, էջ 146:
27. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 123, g. 1, գ. 1513, էջ 20:
28. Նույն տեղում, ֆ. 123, g. 1, գ. 1513, էջ 85:
29. ՀՀ ՀՔԿՓԿՊ, (ՀՀ հասարակական, քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ), ֆ. 1, g. 3, գ. 353, էջ 69:
30. Նույն տեղում, ֆ. 1, g. 7, գ. 324:

Գ. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

31. «Խորհրդային Հայաստան», 1921, N173:
32. ,,Rya teze,, , 1971, h. 27
33. ՀՀ ՀՔԿՓԿՊ արխիվ, ֆ. 1, g. 4, գ. 317, էջ 78:
34. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 122, g. 1, գ. 370, էջ 13:
35. ՀՀ ՀՔԿՓԿՊ արխիվ, ֆ. 1, g. 6, գ. 166, էջ 5-6:

36. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 112, g. 2, գ. 148, էջ 14:
37. «Խորհրդային Հայաստան», 1928, N242:
38. Նույն տեղում, 1929, N70:
39. Լուսժողկոմատի տեղեկագիր, 1929, N3:
40. «Խորհրդային Հայաստան», 1931, N186:
41. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 112, g. 4, գ. 55, էջ 1:
42. ,,Rya teze,,, 1932, h 26.
43. Նույն տեղում, N19:
44. Նույն տեղում, 1935, N17:
45. ՀՀ ՀՔԿՓԿՊ արխիվ, ֆ. 1, g. 13, գ. 11, էջ 15:
46. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 112, g. 41, էջ 37:
47. Նույն տեղում, ֆ. 112, g. 4, գ. 65, էջ 32:
48. Նույն տեղում:
49. Sarîbêgyan û H. Xaçatryan, Kitêba matêmatîkaê, sala 5-a xwendinê, Rewan, 1932.
50. Faîîyêv Gr. Kitêba xebata fîzîkîê, bona mektebêd heftsale û têxnîkoma kurmanca, sala 5-a.Rewan, 1932.
51. ,,Rya teze,, , 1933, h. 22.
52. Նույն տեղում, 1930, N2:
53. Чатоев Х. М., Курды Советской Армении, Ереван, 1965, ст. 125-129.
54. «Սովետական դպրոց», 1967, N28:
55. Աբասյան Տ. Ա., Հարազատ ընտանիքում, 1982, Երևան, էջ 58:
56. ,,Rya teze,, , 1933, h. 22.
57. Նույն տեղում, 1934, N30:
58. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 112, g. 2, գ. 576, էջ 3:
59. ,,Rya teze ,, , 1933, h. 29-30.
60. Նույն տեղում, N31:
61. Նույն տեղում, N53:
62. Նույն տեղում, 1932, N49:
63. Նույն տեղում, 1933, N42:

Դ. ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՋԱԽՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՀԱՅ ՍՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴ ԲԱԳԱՎԱՌՈՒՄ

64. Чатоев Х. М. ст. 133.
65. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 122, g. 1, գ. 926, էջ 216:
66. Նույն տեղում, ֆ. 122, g. 1, գ. 926, էջ 264:
67. Чатоев Х. М. ст. 134.
68. ,,Rya teze,, , 1965, h. 6.
69. Նույն տեղում, N26:
70. Նույն տեղում:
71. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 113, g.1, գ. 303, էջ 1-17:
72. «Խորհրդային Հայաստան», 1931, N13:
73. ,,Rya teze,, , 1931, h. 18.
74. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 112, g. 4, գ. 69, էջ 114-118:

75. ՀՀ ՀՔԿՓՊԿՊ արխիվ, ֆ. 1, ց. 25, գ. 348, էջ 156-160:
76. ,,Rya teze,, , 1937, 2-ê sêntyabrê.
77. Նույն տեղում, N8:
78. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 112, ց. 4, գ. 69, էջ 114-118:
79. ,,Rya teze,, , 1962, h. 31.
80. Նույն տեղում, 1963, N 48:
81.«Սովետական Հայաստան», 1963, N245:
82. Sayat-Nova, Yêrêvan, 1963.
83. ,,Rya teze,, , 1970, h. 27.
84. Նույն տեղում:
85. Նույն տեղում, 1980, N27:
86. ՀՀ Ազգային ռադիոյի և հեռուստատեսության քրոնական հաղորդումների խմբագրության արխիվ, գործ 5, էջ 82:
87. Նույն տեղում, գ. 5, էջ 83:
88. ,, Rya teze,, , 1934, h. 28.
89. Նույն տեղում, N30:
90. Նույն տեղում, N31:
91. Նույն տեղում, N31:
92. Նույն տեղում:
93. Նույն տեղում, N32:
94. Նույն տեղում, N32:
95. Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ֆ. կաթողիկոսական դիվան, թղթ. 76, վ. 56:
96. ՀՀ ՀՔԿՓՊ արխիվ, ֆ. 1, ց 22, գ. 301, էջ 115-17:
97. «Խորհրդային Հայաստան», 1934, N163:
98. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, հ. 21, 2003,էջ 384:
99. ,,Rya teze,, , 1934, h. 31.
100. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 112, ց. 4, գ. 64, էջ 15:
101. Ամատյան Հ., Կյանքի հուշերից, Երևան:
102. ,,Rya teze,, ,1966, h. 23.
103. ԳԱԹ արխիվ, ֆ. Շահեն Կոժինյանի, տետրակ N52, էջ 116:
104. Նույն տեղում, 129-31:
105. Նույն տեղում:
106. Նույն տեղում:
107. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 113, ց. 4, գ. 124, էջ 7-11:
108. ,,Rya teze,, ,1932, h. 29.
109. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 112, ց. 4, գ. 25, էջ 8:
110. ,,Rya teze,, ,1933, h. 15.
111. Նույն տեղում, N23:
112. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 112, ց. 4, գ. 74, էջ 1-3, 6-7:
113. «Խորհրդային Հայաստան», 1932, 26 հունվարի, N24:
114. «Անահիտ», 1933, N3-4, հոկտեմբեր, էջ 7:
115. «Մեր ճշանաբանն է հառաջ», 1963, 24 մարտի:
116. «Արարատ», Լիբանան, 1967, 6 նոյեմբերի:
117. «Լրաբեր», 1950, Նյու Յորք, N52:
118. ,,Galawiş,, , 1944, h. 6.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՔՐԴԱԿԱՆ ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920-1990 թթ.)

Ա. ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ՈՐՊԵՍ ՔՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

1. «Վերելք», 1933, N2:
2. Խորհրդային քուրդ գրողները, 1936, Երևան, էջ 8:
3. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 122, ց. 1, գ. 50, էջ 9:
4. Çaçanî K., Pizmamtîya cimeta ermanîya û kurda, Yêrêvan, 1977, rû 150.
5. Լազո, Շամս, 1921, Էջմիածին:
6. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 122, ց. 1, գ. 30, էջ 121:
7. Լազո, Շամս, 1921, Էջմիածին, էջ 3:
8. Նույն տեղում, էջ 19, 21:
9. Lazo, Serhatya Casim, 1931 Rewan.
10. Լազո, Քուրդ Ջասիմի պատմությունը, Թիֆլիս, 1923, էջ 33:
11. Maragûlov û E. Ş. Xu-xu hînbûna xwendina nivîsara kurmancî, Rewan, 1929.
12. Նույն տեղում, էջ 7:
13. Maragûlov, R. Drambyan, Ronaji. Zimanê kurmancî, ktêba ewlin, Rewan, 1929.
14. Maragûlov, R. Drambyan, Rêncberê sor, ktêba xwendinê zimanê kurmancî, seba mezina, Rewan, 1930.
15. Նույն տեղում, էջ 60:
16. Նույն տեղում:
17. ,,Rya teze,, , 1934, h. 33.
18. Նույն տեղում, N48:
19. ,,Rêncberê sor,, r, 14.
20. Նույն տեղում:
21. Drambyan R., Berbi emirê teze, Êrêvan, 1931.
22. ,,Rya teze,, , 1934, h. 32.
23. Նույն տեղում, 1934, N33, 34:
24. Պետոյան Վ., Քասենի ազգագրությունը, Երևան, 1977:
25. Falîyêv Gr. Ktêba xebata fîzîkê, tercme kir V. Pêtoyan, Rewan, 1932.
Gr. Falîyêv û A.V. Pêrîşkîn, Fîzîka, 1935, Rewan.
26. ,,Rya teze,, 1935, N55-56.
27. Drambyan R., Kolxozînkê derbdar, 1932, Rewan.
28. Tûmanyan H., Anûş, 1934, Rewan.L. N. Tolstoy, Derheqa heywenêtda, 1935, Rewan.
29. Gûrvts Yû. O. û Gangûs R. V., Zanebûna ewlin derheqa erdpîvandinê, ktêba ewlin, 1934, Rewan.
30. ,,Rya teze,, , 1931, h. 16:
31. ,,Rya teze,, , 1932, h. 18.

32. Նույն տեղում:
33. Նույն տեղում:
34. Նույն տեղում, N21:
35. Նույն տեղում, 1934, N46:
36. Nvîskarê kurmanca, Efrandina duda, Rewan. 1934.
37. ,,Rya teze,, , 1930, h. 2.
38. Նույն տեղում, N3:
39. Նույն տեղում, 1932, N23:
40. Zanebûna dinyaê, Ktêba xebatê bona mektebê dersa koma 3 û 4-a, Rewan, 1931.
41. Nvîskarê kurmanca, Efrandina duda, Rewan, 1934.
42. ,,Rya teze,, , 1934, h. 40.
43. ,,Rya teze,, , 1956, h. 59.
44. Նույն տեղում, 1958, N66:
45. Hîzanî Nûrî, Hub û xwebat, Êrêvan, 1962.

Բ. ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

46. Prof. A. Xaçatryan, Ziman-nema kurmancî, Rewan, 1932, r. 17-19.
47. ,,Rya teze,, , 1934, no. 31.
48. «Խորհրդային Հայաստան», 1934, N157:
49. Նույն տեղում:
50. Prof. A. xaçatryan û H. Cindî, Ziman-nema kurmancî, 1935, Rewan.
51. Movsîsyan Sahak, Ziman-nema kurmancî /kin /, bona mektebê dereca ewlin Rewan, 1935.
52. «Նոր դար», 1896, N141-142:
53. «Երևան», բուլղարահայ կուլտուրական միության վարչության օրգան, 1957, ապրիլի 5-12 համարներում:
54. Koçar H., Hizret, 1972, Yêrêvan rû. 4.
55. Քոչար Հ., Ընտիր երկեր, հ. 1, 1975 թ., Երևան, էջ 360:
56. ,,Rya teze,, , 1957, h 1.
57. «Երևան», Սոֆիա, 1957, N19-20:
58. Նույն տեղում:
59. ,,Rya teze,, , 1969, h. 44.
60. Խաչակյան Ավ., Հիշատակարան, Երևան, 1977, էջ 66:
61. İsahakyan Av., Emoê kurmanc, 1965, Yêrêvan, rû 3.
62. «Գրական թերթ», 28 փետրվարի, 1975 թ.:
63. ,,Rya teze,, , 1955, h.78
64. Հոկտեմբերիկ, Երևան, 1939, N5:
65. ,,Rya teze,, , 1975, h. 87.
66. Նույն տեղում:
67. Նույն տեղում, 1977, N28:
68. Նույն տեղում, 1975, N62:
69. Նույն տեղում, 1975, N49:

70. Նույն տեղում, 1982, N75:
71. Նույն տեղում, 1955, N78:
72. Նույն տեղում, 1957, N 78.
73. «Գրական թերթ», 1978, N5:
74. Նույն տեղում, 1977, N31:
75. Նույն տեղում:
76. Չաչանի Կ., Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության պատմությունից, Երևան, 1965, էջ 97:
77. ,,Rya teze,, , 1977, h. 28.
78. Նույն տեղում, 1977, N37:
79. Шагинян М., Советское Закавказье, Ереван, 1964, ст. 29-31.
80. Նույն տեղում, էջ 117:
81. Նույն տեղում, էջ 27:
82. Шагинян М., Путешествие по Советской Армении, 1952, М. ст. 347.
83. Նույն տեղում, էջ 330-31:
84. ,,Rya teze,, , 1982, h. 45.
85. «Գրական թերթ», 1981, N5:
86. ,,Rya teze,, , 1956, h. 1.
87. «Խորհրդային քուրդ գրողներ», Երևան, 1936, էջ 6:
88. Տարոնցի Ս., Դարերի լեգենդը, Երևան, 1934, էջ 89:
89. Տարոնցի Ս., Երկեր, հ. 2, Երևան, 1965, էջ 5:
90. «Հայրենիքի ձայն», 1982, N15:
91. «Խորհրդային գրականություն», 1982, N3:
92. Սարմեն, Հատընտիր, Երևան, 1951, էջ 103:
93. Նույն տեղում:
94. Սարմեն, Կարոտի կրակներ, Երևան, 1957, էջ 214:
95. ,,Rya teze,, , 1971, h. 21.
96. Նույն տեղում, 1981, N18:
97. Նույն տեղում, 1984, N16:
98. Նույն տեղում, 1981, N17:
99. Մևունց Գ., Քեհրան, 1958, Երևան:
100. ,,Rya teze,, , 1981, h. 17.
101. Նույն տեղում, 1965, N65:
102. Նույն տեղում:
103. Գրիգորյան Վ., Կրակի ու կարոտի միջով, Երևան, 1969, էջ 221:
104. ,,Rya teze,, , 1959, h. 99.
105. ,,Rya teze,, , 1968, h. 1.
106. Նույն տեղում, 1971, N51:
107. Դավթյան Վ., Ջուգաշեն ճանապարհ, Երևան, 1976, էջ 25:
108. Միտալ Կ.: Հովիվ Ազոն, Ֆիլադելֆիա, 1954, էջ 2:
109. Նույն տեղում, էջ 1-3:
110. Միտալ Կ., Դյուցազնական Երևան, 1957, էջ 433:
111. Մնսրոպ Լ., Քյուրդիստանը և քուրդերը, Փարիզ, 1957, էջ 66:
112. «Պայքար», 1958, 3-4 փետրվարի:

113. Նույն տեղում:
114. «Լրաբեր», 1953, 5 մարտի, N97:
115. Սիսակյան Կ., Դյուցազնական, էջ 209:
116. Նույն տեղում, էջ 225:
117. «Լրաբեր», 1953, N97:
118. Մեսրոպ Լ., Քյուրդիստանը և քուրդերը, Փարիզ, 1957:
119. Նույն տեղում, էջ 75:
120. Նույն տեղում, էջ 85:

Գ. ՔՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏՔԻ ՎԵՐԵԼՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

121. Զնդի Հ., Ակնարկ Սովետական Հայաստանի քրդական գրականության, Երևան, 1970, էջ 45:
122. «Սովետական Հայաստան», 1967, 24 սեպտեմբերի:
123. Նույն տեղում:
124. Շամիլով Ա., Բախտի ճանապարհ, Երևան, 1961, էջ 65:
125. Şamîlov E., Dimdim, Yêrêvan 1966.
126. «Երևան», 1967, 29 նոյեմբերի:
127. ,,Rya teze,, , 1978, h. 53.
128. Beyraqa sor, Bona koma ewlin, Rewan, 1933.
129. Cindî H., Kolxozvanê derbdar, elîfba bona mezina, Rewan, 1933.
130. Cindî H., Ktêba zimanê kurmancî, bona dersxana sisya, Rewan, 1935.
131. Cindî H., Ktêba zimanê kurmancî, bona dersxana sisya, Rewan, 1937.
132. Cindî H., C. Celîl, C. Gênşo, Ktêba zimanê kurmancî, bona dersxana 6-a, Rewan 1935.
133. Քառարան հայերենից քրդերեն լեզվի, Երևան, 1933:
134. Միաքանդով Ս., Ա. Չաչան, Հայ-քրդական բառարան, Երևան, 1957:
135. Զնդի Հ., Խորհրդային Հայաստանի քրդական գրականությունը, Երևան, 1957:
136. Զնդի Հ., Քրդական ժողովրդական վիպերգեր, Երևան, 1960:
137. Cindî H., Destegul, Yêrêvan, 1963.
138. Զնդի Հ., Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ, Երևան, 1965, էջ 5:
139. Նույն տեղում, էջ 5:
140. «Գրական թերթ», 1968, N16:
141. ,,Rya teze,, , 1978, h. 22.
142. Ktêba zimanê kurmancî, bona koma çara, Rewan, 1933.
143. «Խորհրդային Հայաստան», 1924, 8 հոկտեմբերի:
144. Ktêba zimanê kurmancî, bona koma 5-a, Rewan, 1934.
145. Evdal E., Mêtodîka zimanê kurmancî, Rewan, 1937.
146. ,,Rya teze,, , 1931, h. 18
147. Նուռ տեղում, N4:
148. Ջալիլ Ջ., Ալագյազ, Երևան, 1954, էջ 17:
149. «Լրաբեր», Նյու Յորք, 1962, 23 հունիսի N141:

150. Ktêba zimanê kurmancî, bona koma 6-a, 1935, Rewan.
151. „ Коммунист,, , 1937, н. 214.
152. Ռաշիդ Ս., Հայրենի ճամփաներով, Երևան, 1958, էջ 25:
153. «Երևան», Սոֆիա, 1957, N19-20:
154. Սախմուդով Ն. Խ., Քուրդ ժողովուրդ, Երևան, 1958:
155. Махмудов Н. Х., Маленький дуажо, Москва, 1974.
156. ,,Rya teze,, , 1972, h. 5.
157. Polat Omer, Saragul, İstambûl, 1974.
158. Նույն տեղում, էջ 105:
159. «Փյունիկ», 1979, N5:
160. Նույն տեղում:
161. Նույն տեղում:

Դ. ԹՄՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՀԱՐՍՏԱՑՆՈՒՄ Է ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

162. «Արմազամք», 1887, N28:
163. ,,Rya teze,, , 1932, i. 33.
164. Նույն տեղում, 1933, N3:
165. Efrandina ewlin, Rewan, 1932.
166. Թումանյան Հ., Երկերի ժողովածու, Երևան, 1958, հ. 1, էջ 221:
167. Հայ գրողներ, հ. 2, Թիֆլիս, 1910, էջ 228:
168. Tûmanyan Hov., Efrandinêd bijare, Yêrêvan, 1970, rû. 9.
169. ,,Rya teze,, , 1964, h. 47.
170. Նույն տեղում , 1934, h. 45, 48, 58, 1935, h. 8, 12, 53.
171. Tûmanyan Hov., Berevkirina kilama, Rewan, 1936.
172. Tûmanyan Hov., Efrandinêd bijare, Yêrêvan, 1976.
173. Tûmanyan Hov., Çilke hingiv, Yêrêvan, 1971.
174. Îsahakyan Av., Berevok, Yêrêvan, 1977.
175. Sayat- Nova Yêrêvan, 1963, rû. 3.
176. Koçar H., Hizret, Yêrêvan 1972.
177. Sîras, Memê û Eyşê, 1935, Rewan.
178. Xinko Apêr, Tramve li Rewanê, 1936, Mişka pişîkêra çawa şerkirin, Rewan, 1937.
179. Xebera dosta, Yêrêvan, 1982.
180. «Սովետական գրականություն և արվեստ», 1951, N11, էջ 67:
181. Шагинян М., Путешествие по Советской Армении, 1952, М. ст. 330.
182. Խորհրդային քուրդ գրողներ, Երևան, 1936:
183. Նույն տեղում, էջ 11:
184. Սովետական քուրդ բանաստեղծներ, Երևան, 1953:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅ ՍՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ (ԵՐԳ-ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ԹԱՏՐՈՆ, ԿԻՆՈ, ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ)

Ա. ԵՐԳ-ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

1. Марр М. Я., Еще о слове челеби, отдельний отиск из записок Восточного отделения императорского общество, т. 20, СБ. 1911.
2. Արվանճտյանց Գ., Գրոց և բրոց, Կ. Պոլիս, 1874, էջ 60:
3. Ջնդի Հ., Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ, Երևան, 1965, էջ 31:
4. «Հայրենիք», 1926, N4291, 12 հունիսի:
5. Նույն տեղում, 1933, 11 օգոստոսի:
6. ԳԱՓ արխիվ, Մելիքյանի երաժշտական ֆոնդ (1909-1910 թթ.):
7. «Յառաջ», 1928, 24 մարտի:
8. Նույն տեղում, 16, 23 սեպտեմբերի:
9. ԳԱՓ արխիվ, Վ. Փափազյանի գրական ֆ., ձեռագիր N38:
10. «Անահիտ», 1931, N1-2, մայիս, էջ 106:
11. Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963, էջ 499:
12. «Փորձ», 1876, N2, էջ 305:
13. ,,Rya teze,, , 1973, h. 51.
14. Шараф-Хан Битлиси, Шараф - Наме, т. 1, Москва, 1967.
15. Мела Махмуд Баязеди, Нравы и обычаи курдов, Москва, 1963.
16. Ջաուարի Ն., Քրդական ժողովրդական երգարվեստը, Երևան, 1976, էջ 8:
17. Նույն տեղում, էջ 9-10:
18. «Պայքար», Բոստոն, 1971, 2 դեկտեմբերի, N264:
19. «Անահիտ», 1931, N1-2, մայիս-օգոստոս:
20. Վարդանյան Վ., հավերժ ճամփորդ, Երևան, 1969, էջ 27:
21. Նույն տեղում, էջ 48:
22. Նույն տեղում, էջ 81:
23. ,,Rya teze,, , 1968, h. 1.
24. Էմինյան ազգագրական ժողովածու, Մոսկվա, 1904, հ. 5, էջ 7:
25. «Նոր դար», 1899, N115:
26. Կոմիտասական, Երևան, 1981, էջ 268:
27. Վարդանյան Վ., Հավերժ ճամփորդ, Երևան, 1969, էջ 105:
28. Գասպարյան Ս. Գ., Կոմիտաս, Երևան, 1961, էջ 180:
29. ՀՀ ԳԱՓ արխիվ, N315, 349, էջ 3, 12:
30. Գասպարյան Ս., Կոմիտաս, Երևան, 1961, էջ 180:
31. Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ե, Մոսկվա, 1904, էջ 7:
32. ,,Rya teze,, , 1935, h. 55-56.
33. Նույն տեղում:
34. Մուրադյան Մ., Սամսոն Գասպարյան, Երևան, 1980, էջ 6:
35. Weten, 10 klam bi zimanê kurmancî, hazrkirin H. Cindî û S. Gasparyan, Yêrêvan, 1942.

36. Ewledêd Weten, hazirkirin, H. Cindî û S. Gasparyan, Yêrêvan, 1943.
37. Գասպարյան Ս., Կոմիտաս, Երևան, 1961:
38. «Ալիք», Թեհրան, 1955, 17 ապրիլի, N81:
39. «Սովետական Հայաստան», 1979, N299:
40. Çaçanî K., Pizmamtîya cimeta ermanîya û kurda, Yêrêvan 1977, rû 191.
41. Klamê cimeta kurmanca, Rewan, 1936, rû. 5.
42. Նույն տեղում, էջ 6:
43. „Коммунист„ , 1937, н. 214.
44. Մելիքյան Սպ., Հայ ժողովրդական երգեր և պարեր, հ. 1, 1949, հ. 2, 1952, Երևան:
45. ՀՀ ԳԱՓ արխիվ, Սպ. Մելիքյանի Ֆ., 1914, էջ 5:
46. ,, Rya teze,, , 1982, h. 41.
47. Кабалевский Дм., Про тех китов и про многое другое, Москва, 1972, ст. 71.
48. ,, Rya teze,, , 1978, h. 36.
49. Նույն տեղում, 1967, N39:
50. «Հուր», Ա. տարի, Թեհրան, 1971, օգոստոս, թիվ 2:
51. ,, Rya teze,,, 1977, h. 36.
52. Նույն տեղում, 1977, N62:
53. ,,Pêşing,, , 1984, h. 5.
54. ,, Rya teze,, , 1977, 3- avgûstê.
55. Նույն տեղում, 1971, 5 հունվարի:
56. „Коммунист„ , 1971, 17-го марта, н. 62.
57. Նույն տեղում:
58. ,,Rya teze,, , 1971, h. 14.
59. Նույն տեղում, 1981, N12:
60. Նույն տեղում:
61. «Ավանգարդ», 1937, N 26
62. «Կոմունիզմի դրոշով», 1952, N77 (Թալինի շրջանային թերթ):
63. ,, Rya teze,, , 1981, h. 23.
64. Նույն տեղում, 1955, N85:
65. Նույն տեղում, 1957, N37:
66. Նույն տեղում, 1957, N38:
67. Նույն տեղում, 1981, N43:
68. Նույն տեղում, 1978, N45:
69. Cewarî N., Kilamêd cimeta kurdaye govendê, Yêrêvan, 1960, rû. 3.
70. Սովետական գրող հրատարակչություն, երաժշտական բաժնի արխիվ, 1958, էջ 2:
71. Cewarî N., Kilamêd cimaeta kurdaye govendê, Yêrêvan, 1960, rû. 3.
72. ,, Rya teze,,, 1976, h. 74.
73. ,, Rya teze,, , 1966, h. 22.
74. Cemîla Celîl, Kilamêd cimeta kurda, Yêrêvan, 1964.
75. Çaçanî K., Pizmamtîya cimeta ermanîya û kurda, Yêrêvan 1977, rû 193.
76. ,,Rya teze,, , 1981, h. 45.

Բ. ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ

77. «Ապագայ», 1929, N47, 27 ապրիլի:
78. Şalcyan H. pîêsa ji 4 perda / Rya teze /, Rewan, 1934.
79. ,,Rya teze,, ,1935, h. 22.
80. Նույն տեղում, N30:
81. Նույն տեղում, 1934, N19, 24:
82. Ahmedê Mîrazî, Zemanê çûyî, pîêsa ji sê perda, 1935, Rewan.
83. ,,Коммунист,, , Ереван, 1937, н. 210.
84. ,,Rya teze,, ,1986, h. 18.
85. ,,Коммунист,, , 1939, н. 140.
86. Նույն տեղում, 1944, N167, 23 օգոստոսի:
87. Նույն տեղում, 1939, N140:
88. ,, Rya teze,, , 1980, h. 38.
89. ,, Rya teze,, , 1977, h. 9.
90. «Սովետական արվեստ», 1980, N81:

Գ. ՔՐԴԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՅ ԿԻՆՈՒՐՎԵՍՏՈՒՄ

91. Հայկական կինոարվեստ, Երևան, 1958, էջ 95:
92. Նույն տեղում:
93. Նույն տեղում:
94. «Խորհրդային Հայաստան», 1927, N23:
95. Նույն տեղում:
96. ,, Rya teze,, , 1932, h. 8.
97. Նույն տեղում, 1972, N15:
98. Հայկական կինոարվեստ, Երևան, 1958, էջ 48:
99. ,, Rya teze,, , 1979, h. 100.
100. Նույն տեղում:

Դ. ՔՐԴԱԿԱՆ ԹԵՄԱՆ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

101. ,, Rya teze,, , 1933, N44:
102. Նույն տեղում:
103. Նույն տեղում, 1956, N33:
104. Նույն տեղում, 1957, N33:
105. Նույն տեղում, 1961, N70:
106. Նույն տեղում, 1986, N68:
107. Նույն տեղում:
108. Նույն տեղում, 1974, N98:
109. Նույն տեղում, 1972, N39:
110. Նույն տեղում, 1986, N96:
111. Նույն տեղում, 1981, N54:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1958, «Վերք Հայաստանի», Երևան, 1955, 470 էջ:
2. Արծրունի Գ., Թուրքաց հայերի ազգաբանական դրությունը, Թիֆլիս, 1894, 38 էջ:
3. Անդրանիկ, Տերսիմ, Ճանապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, 1900, 160 էջ:
4. Ազիզյան Մ., Հերոսական Շատախի Արմաշ գյուղը, Բեյրութ, 1974, 47 էջ:
5. Ալպոյաջյան Ա., Պատմություն Եվդոկիյո հայոց, Գահիրե, 1952, 27 էջ:
6. Առաքելյան Հ., Ձեյթուն, Թիֆլիս, 1896, 92 էջ:
7. Աբամյան Հ., Քրդերը Տաճկաց Հայաստանում, հ. 1, Պետերբուրգ, 1905, 218 էջ:
8. Աբասյան Տ., Հարազատ ընտանիքում, Երևան, 1982, 125 էջ:
9. Ամատյան Հ., Կյանքի հուշերից, Երևան, 1951:
10. Աստապյան Ա., Հարություն Սվաճյան, Երևան, 1967, 282 էջ:
11. Ավդալ Ամինե, Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, 1957, 302 էջ:
12. Ավդալ Ամինե, Քուրդ կինը նահապետական ընտանիքում ըստ ազգագրական և ֆոլկլորային նյութերի, հ. 1, Երևան, 1948, 214-301 էջ:
13. Ավդալ Ամինե, Առաջին գարունը, Երևան, 1961, 119 էջ:
14. Ավդալ Ամինե, Գյուլիզար (պոեմ), քրդերենից թարգմանեց Վահագն Կարենցը, Երևան, 1956, 93 էջ:
15. Աղաբաբյան Ս. XX դարի հայ գրականության զուգահեռականներում, Երևան, 1983, 428 էջ:
16. Ավդալբեկյան Խ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917), Երևան, 1959, 442 էջ:
17. Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, Երևան, 1989, 358 էջ:
18. Բակունց Ա., Խաչատուր Աբովյանի «Անհայտ բացակայությունը», Երևան, 1932, 62էջ:
19. Բաղրամյան Ռ., Դերսիմի բարբառային քարտեզը, Երևան, 1960, 176 էջ:
20. Գասպարյան Ս., Կոմիտաս, Երևան, 1969, 145 էջ:
21. Գրիգորյան Ա., Ճանապարհորդական նոթեր, Երևան, 1953, 171 էջ:
22. Գրիգորյան Վ., Կրակի ու կարոտի միջով, Երևան, 1969, 274 էջ:
23. Գրիգորյան Գր., Հայ ժողովրդի բանահյուսություն, Երևան, 1980, 470 էջ:
24. Դարանաղացի ժամանակագրություն, Երուսաղեմ, 1915:
25. Դավթյան Վ., Ջուգահեռ ճանապարհ, Երևան, 1976, 403 էջ:
26. Երևանյան Գ., Պատմություն Չարսանջակի հայոց, Բեյրութ, 1956:
27. Ձեյթունի գործը, Քուրդիստանի և Սուշի վանքից և վարժարաններու վիճակը, Կ. Պոլիս, 1869:
28. Ջուլալյան Մ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI-XVII դարեր), Երևան, 1966, 261 էջ:
29. Էջեր հայ ժողովրդի պատմության և բանահյուսության, Երևան, 1971, 338 էջ:
30. Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ե, Զ, Մոսկվա, 1904, 303 և 419 էջ:
31. Թերզիաբաշյան Ա., Արծիվը իր բույնի մեջ, Փարիզ, 1938, 246 էջ:
32. Թերզյան Հ., Կիլիկիոյ աղետը, Կ. Պոլիս, 1912, 161-336 էջ:
33. Թոխմախյան Ա., Մասիս լեռների հարավային ստորոտները, Թիֆլիս, 1882, I մաս, 58 էջ, II մաս 66 էջ:
34. Թումանյան Հ., Երկերի ժողովածու, Երևան, 1958, 520 էջ:
35. Թուբշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1965, 269 էջ:
36. Ինճիճյան Ղ., Ստորագրություն հին Հայաստանյայց, Վենետիկ, 1822, 522 էջ:
37. Ինճիճյան Ղ., Հնախոսություն աշխարհագրական Հայաստանյայց աշխարհի, հ. 1, Վենետիկ, 1835, 475 էջ:

38. Խաչիկյան Ավ., Հիշատակարան, Երևան, 1977, 471 էջ:
39. Խաչիկյան Ավ., Երկերի ժողովածու, Երևան, 1975, 243 էջ:
40. Լեո, Հայոց պատմություն, հ. 1, Թիֆլիս, 1917, 730 էջ, հ. 2, Երևան, 1947, 761 էջ:
41. Լալայան Ե., «Ջավախքի բուրմունք», հ. 1, Թիֆլիս, 1867, 318 էջ:
42. Լալայան Ե., Վասպուրական, Թիֆլիս, 1912, 230 էջ:
43. Լալայան Ե., Վասպուրական, ազգագրություն ասորիների, Թիֆլիս, 1913, 52 էջ:
44. Լազո (Հակոբ Ղազարյան), Շամս, Քահրե ավրըն, Էջմիածին, 1921:
45. Լազիստան, Հայաստան, Քուրդիստան, Վաղարշապատ, 1893, 161 էջ:
46. Լազո, Քուրդ Ջասիմի պատմությունը, Թիֆլիս, 1923, 35 էջ:
47. Լապտեր, լուսատու, Տեր Սկրտիչ վարդապետ Տիգրանյան, Կ. Պոլիս, 1860:
48. Խրիմյան Հայրիկ, Ծրագիր բարեկարգմանց, Կ. Պոլիս, 1909:
49. Խորհրդային քուրդ գրողներ, Երևան, 1936, 154 էջ:
50. Կարա Սելիք, Կարնոյ հիշատակին, Վիեննա, 1896:
51. Կոմիտասական, Երևան, 1969, 258 էջ:
52. Հայկունի Ս., Բագրևանդ ջրաբաշխ գավառ, Էջմիածին, 1894, 384 էջ:
53. Հայկունի Ս., Թագավոր Լուսիկ և Լմեռի Հովիկ, Էջմիածին, 1900:
54. Հայկունի Ս., Մոքսի ժողովրդական վեպ (Չարասնջակի բարբառով), Էջմիածին, 1896, 88 էջ:
55. Հայկական կինոարվեստ, Երևան, 1958:
56. Հակոբյան Գ., Նեղքին Քասեմի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, 458 էջ:
57. Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, 386 էջ:
58. Հայելի գործոց և աշխատությանց Տիգրանյանի, Կ. Պոլիս, 1864:
59. Համբարյան Ա., Քրդերը Սովետական Հայաստանում, Երևան, 1957, 41 էջ:
60. Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-14), Երևան, 1979, 309 էջ:
61. Հովհաննիսյան Հ., Էջեր Հայաստանի աղրքեջանական ու քրդական թատրոնների պատմությունից, Երևան, 1976, 65 էջ:
62. Ղազարյան Հ., Հարություն Սվաճյան, Երևան, 1986, 421 էջ:
63. Ղազարյան Յակ., Գյուլե, Թիֆլիս, 1890:
64. Ղազարյան Յակ., Խունխուրը, Թիֆլիս, 1893:
65. Ղազարյան Վ., Սովետական կուլտուրայի առաջին քայլերը, Երևան, 1964:
66. Ղանալալյան Ա., Հայ գրականության բանահյուսությունը, Երևան, 1986, 305 էջ:
67. Ղազարյան Հ., Մատթեոս Սամուրյան, Երևան, 1961, 192 էջ:
68. Մախմուդով Ն., Քուրդ ժողովուրդ, Երևան, 1959, 258 էջ:
69. Մախմուդով Ն., Փոքրիկ Դաւաժոն, Երևան, 1965, 176 էջ:
70. Մախմուդով Ն., Հարազատ վայրերում, Երևան, 1978, 332 էջ:
71. Մեսրոպ Լ., Քուրդիստան և քրդեր, Երևան, 1954, 87 էջ:
72. Մելիքյան Ս., Հայ ժողովրդական երգեր և պարեր, հ. 1, Երևան, 1949:
73. Մերծավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 21, Երևան, 2002, 405 էջ:
74. Միքայելե Ռաշիդ, Հայրենի ճամփաներով, Երևան, 1958, 83 էջ:
75. Մնացոյան Չ., Քրդական բանահյուսության մշակումները Սովետահայ գրականության մեջ, Երևան, 1980, 49 էջ:
76. Մինասյան Ս., Տավրոսյան եղերաբակցություն, 1923:
77. Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1850-1870 թթ., Երևան, 1955, էջ 530:
78. Նալբանդյան Մ., Ամբող երկեր, Ա. Գ. Հովհաննիսյանի մեկնաբանություններով, Երևան-Մոսկվա, 1935:

79. Շամիլով Ա., Դըլ-դրմ բերդը (վեպ), թարգմ. Վ. Գրիգորյան, Երևան 1978, 218 էջ:
80. Շամիլով Ա., Ալագյազի քրդերը, թարգմ. Մ. Քոչար, Երևան, 1932, 56 էջ:
81. Շամիլով Ա., Բախտի ճանապարհ (վեպ), թարգմ. Վ. Գրիգորյան, Երևան, 1961, 359 էջ:
82. Շառոյան Գ., Սոցիալիստական հողագործությունը Հայաստանում (1926-29 թթ.), Երևան, 1962:
83. Շառոյան Գ., Հողաշինությունը Հայաստանում ազգային փոքրամասնությունների շրջանում (1921-1927 թթ.), Երևան, 1965:
84. Շվոռ Մ., Քրդերը Տաճկահայաստանում, հ. Ա, Պետերբուրգ, 1905:
85. Շապազյան Յ., Քիւրդօ-հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911:
86. Չըրայե Լոռնի, Չեկըր Սկրտիչ Տիգրանյանը, Կ. Պոլիս, 1866:
87. Չաչանի Կ., Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության պատմությունից, Երևան, 1965, 130 էջ:
88. Չաչանի Կ., Սովետական Հայաստանի քրդերը 40 տարում, Երևան, 1960, 33 էջ:
89. Չաչանի Կ., Հայկական պարբերական մամուլը քրդերի մասին, մատենագիտություն, 1980, 189 էջ:
90. Չաչանի Կ., Հայ մտավորականության դերը քրդական մշակույթի զարգացման գործում, Երևան, 1987, 31 էջ:
91. Չաչանի Կ., Եղբայրական հայ ժողովրդի ընտանիքում: Երևան, 1980, 25 էջ:
92. Պուշկին Ա., Ճանապարհորդություն դեպի Էրզրում, Երևան, 1937:
93. Պռոշյան Պ., Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1958:
94. Պռոշյան Պ., Հուշոտ, Թիֆլիս, 1900:
95. Պռոշյան Պ., Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1941:
96. Պետոյան Վ., Քասեմի ազգագրությունը, Երևան, 1977:
97. Պետոյան Վ., Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, 549 էջ:
98. Պողոսյան Ս., Քրդերը և հայկական հարցը, Երևան, 1991, 453 էջ:
99. Ջնդի Հ., Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ, Երևան, 1965, 147 էջ:
100. Ջնդի Հ., Ակնարկ Սովետական Հայաստանի քրդական գրականության, Երևան, 1970, 171 էջ:
101. Ջնդի Հ., Քրդական ժողովրդական վիպերգեր, Երևան, 1960, 91 էջ:
102. Ջասիմե Ջ., Սայրենի աղբյուր, թարգմ. Ս. Տարոնցի, Երևան, 1957, 115 էջ:
103. Ջաուարի Ն., Քրդական ժողովրդական երգարվեստը, Երևան, 1976:
104. Ռուբեն Տեր-Սինասյան, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1-7, Լոս Անջելես, 1952:
105. Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, Հայ մշակույթի գործիչներ, հ. Ա, Երևան, 1973, 319 էջ:
106. Սարմեն, Կարոտի կրակներ, Երևան, 1957, 243 էջ:
107. Սարմեն, Հառընտիր, Երևան, 1951, 192 էջ:
108. Սիսաքանով Ս., Ա. Չաչան, Հայ-քրդական բառարան, Երևան, 1957, 352 էջ:
109. Սովետական քուրդ բանաստեղծներ, Երևան, 1953, 168 էջ:
110. Սասնա ծռեր, հ. 1, Երևան, 1936, 78 էջ:
111. Սարգիս և Միսակ Բդեյանցներ, Հարազատ պատմություն Տարոնոյ, Գահիրե, 1962:
112. Սրվանձյան Հ., Հրապարակախոսություն, Երևան, 1960, 552 էջ:
113. Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, 630 էջ:
114. Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978, 665 էջ:
115. Սրվանձտյանց Գ., Համով-հոտով, հ. Ա, Թիֆլիս, 1904, 415 էջ:
116. Սիտալ Կ., Դյուցազնական, Երևան, 1957, 522 էջ:

117. Սիտալ Կ., Հովիվ Ազոն, Ֆիլադելֆիա, 1954, 132 էջ:
118. Սասունի Ա., Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները, Քեյրութ, 1969, 331 էջ:
119. Սաֆրաստյան Ա., (կազմեց), Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասյան մյուս ժողովուրդների մասին, Երևան, 1961, 403 էջ:
120. Վահե Հայկ, Խարբերդը և անոր ոսկեղեն դաշտը, Նյու Յորք, 1959:
121. Վարդանյան Վ., Հավերժ ճամփորդ, Երևան, 1969, էջ 51:
122. Տիգրանյան Մ., Ալիխպենջիզ գուրմանջի վա արմանի, Կ. Պոլիս, 1860:
123. Ռաֆֆի, Տաճկահայք, Վիեննա, 1913, 175 էջ:
124. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1964, 531 էջ:
125. Ռաֆֆի, Կայծեր, Երևան, 1947, 600 էջ:
126. Փոլադյան Ա., Քրդերը Արասյան խալիֆաթության ժամանակաշրջանում, Երևան, 1999, 300 էջ:
127. Փափազյան Վ., Իմ հուշերը, հ. Ա., Բոստոն, 1950, 599 էջ:
128 .Քրդական ժողովրդական երգեր, Երևան, 1936, 76 էջ:
130. Քոչենյան Ա., Ակնը ու ակնցիք, 1025-1915, Պարքրել, 1952:
131. Ֆրանգյան Ե., Առաքառական, Թիֆլիս, 1905:

Çavkanî
Bi zmanê kurdî

1. Avêtîk Îsahakyan. Emoê kurmanc, Yêrêvan 1955, 66 rû.
2. Avêtîk Îsahakyan. Berevok, Yêrêvan 1977, 330 rû.
3. Alêksanyan, N. Vladîmîr Îlîç Lênîn zndanê û srgûnîêda, Rewan 1930.
4. Araratyan A. koçekê derewîn, pîêsîa, Rewan 1930, 32 rû.
5. Ahmedê M. Zemanê çûyî, pîêsa ji sê perça, Rewan 1935.
6. Barkov A. û Polovnîkîn. Dinya zanebûna fîzîkîê, ktêba dersa bona dersxana 5-a, Rewan 1936, 232 rû.
7. Bahara dila, Berevoka tercma, tercme kir H. Cindî, Yêrêvan 1978, 83 rû.
8. Cindî H. Ktêba zimanê kurmancî bona dersxana sisya, Rewan 1935, 138 rû.
9. Cindî H. Beyraqa sor, bona koma ewlin, Rewan 1932, 105 rû.
10. Cindî H. Emrê teze, bona koma duda, Rewan 1932, 58 rû.
11. Cindî H. mêtodîka zimanê kurmancî, Rewan 1932, 30 rû.
12. Cindî H. Kolxozvanê derbdar. Elîfba bona mezina, Rewan 1933, 61 rû.
13. Cindî H. Ktêba zimanê kurmancî bona mezina, dersxana sisya, Rewan 1935, 138 rû.
14. Drambyan R. Ber bi emirê teze, ktêba xwendinê, Rewan 1931, 213 rû.
15. Drambyan R. Kolxozvanê derbdar, ktêba dersa bona koma sisya, Rewan 1931, 215 rû.
16 .Drambyan R. Emînê Evdal. Kolxozvanê derbdar, ktêba zimanê kurmancî bona koma 4-a. Rewan 1932, 105 rû.
17. Drambyan R. Dinya teze, ktêba zimanê kurmancî seba koma 5, 6, 7, Rewan 1932, 115 rû.
18. Çarêns Y. Lênîn û Elî. Tercme kirin Mîkaêlê Reşîd, Sehîdê Îbo, Yêrêvan 1957, 20 rû.
19. Çaçan A.Xwendina borcî, Rewan 1931, 22 rû.
20. Çaçan A. Gulbahar, Yêrêvan 1957, 129 rû.
21. Çaçanî K. Pizmamtîya cimetê ermenîya û kurda Yêrêvan 1977, 212 rû.
22. Çaçanî K. Zimanê me, / elfabêya kurdî/, Yêrêvan 2002, 75 rû.
23. Efrandina ewlin, Rewan 1932, 72 rû.
24. Evdal E. Ktêba zimanê kurmancî bona koma çara, Rewan 1933, 174 rû.
25. Evdal E. Ktêba zimanê kurmancî bona koma pênca, Rewan 1934, 186 rû.
26. Faîyêv Gr. ktêba xebata fîzîkîê bona mektebêd heftsale, tertîb kir V. Pêtoyan, Rewan 1931, 132 rû.
27. Fetî. Xebata pîonêra welatê meda, Rewan 1931, 22 rû.
28. Faîyêv Gr. Pêrîşkîn A. Fîzîka, ktêba dersê bona mektebê dersa orte. Tercmekir V. Pêtoyan, Rewan 1935, 138 rû.
29. Folklora kurmanca. Kitêba pêşin berevkirin û hazir kirin H. Cindî, E. Evdal, Rewan 1936, 664 rû.
30. Êlîbêgyan H. Zanebûna dinîayê, kitêba dersê bona dereca ewlin. Tercmekir Casimê Celîl, Rewan 1934, 20 rû.
31. Gasparyan S. 12 kilam seba mektebê kurmanca, Rewan 1932, 80 rû.

32. Gûrvîts Yû. Gongûs R. Zanebûna ewlin derheqa erdpîvandinê, tercmekir R. Drambyan, Rewan 1934, rû.
33. Konstîtûsîa Tîfaqa Cumurhetêd Sosîalîstîyê Sovêtê, tercmekir R. Drambyan. Rewan 1936, 31 rû.
34. Klamê cimeta kurmanca, berevkir û nivîsî Karo Zakaryan, Rewan 1936, 164 rû.
35. Kîsêlyov A. Ktêba algêbrayê, bona dersxana 6-7-a, Rewan 1937, 154 rû.
36. Ktêba zimanê kurmancî, bona dersxana duda, Rewan 1937, 99 rû.
37. Lazo, Serhatîya Casim, Rewan 1931, 32 rû.
38. Lorkê, Berevoka serhatyê nivîsarkarê ermenya, Yêrêvan 1978, 149 rû.
39. Maragûlov Î. Şamîlov E. Xwe-xwe hînbûna xwendina nivîsara kurmancî. Ktêba ewlin, Rewan 1929, 58 rû.
40. Maragûlov Î, Drambyan R. Ronayî, zimanê kurmancî, ktêba ewlin, Rewan 1929, 91 rû.
41. Maragûlov Î, Drambyan R. Rencberê sor. Ktêba xwendina zimanê kurmancî, seba mezina, Rewan 1930, 152 rû.
42. Maragûlov Î., Drambyan R. Ronayî. Zimanê kurmancî, kitêba duda, Rewan 1930, 130 rû.
43. Meksîmê Xemo, Zimanê kurdî, Lîtêratûra, kitêba hînbûnê bona dersxana 2-8 -a Yêrêvan 1990, 205 rû.
44. Movsêsyan S. Ziman-nema kurmancî, Rewan 1935, 74 rû.
45. Mîrazî A. Zemanê çûyî, pîêsa, Rewan 1935, 52 rû.
46. Nûrî û Fetî. Ktêba seyasetîyê, Rewan 1932, 164 rû.
47. Nadirî W. Nûbar, Rewan 1935, 92 rû.
48. Nadirî W. Reva jinê, pîêsîa, Rewan 1935, 29 rû.
49. Nadirî W. Zimanê kurmancî, Rewan 1947, 119 rû.
50. Popova N. Hesab, sala ewlin, Rewan 1933, 82 rû.
51. Popova N. Kitêba hesaba, Rewan 1934, 68 rû.
52. Popova N. Kitêba arîfmêtîkaê bona dersxana sisya. Tercmekr C. Bakoêv, Rewan 1935, 86 rû.
53. Popova N. Kitêba arîfmêtîkê bona dersxana 3-4 -a. Tercmekr C. Celîl, Rewan 1937, 79 rû.
54. Pûşkîn A. Efrandin û hikyat , Rewan 1937, 138 rû.
55. Pûşkîn A. Şiyêr, hikyat û proza, Yêrêvan 1949, 159 rû.
56. Programa zimanê kurmancî, Rewan 1938, 44 rû.
57. Qanatê Kurdo, Zimanê kurdî, Rêziman, bona koma 3-4, Yêrêvan 1987, 126 rû.
58. Şavarşyan A. Vardanyan L. Matêmatîka, bona koma sala ewlin. Tercmekir H. Cindî. Rewan 1933, 140 rû.
59. Şavarşyan A. Vardanyan L. Matêmatîka, bona koma duda. Tercmekir E. Evdal, Rewan 1933, 138 rû.
60. Şavarşyan A. Vardanyan L. Matêmatîka, bona sala çara. Tercmekir R. Drambyan, Rewan 1933, 247 rû.
61. Şalcyan H. Rîya teze. Pîêsa. Tercmekir H. Cindî Rewan 1934, 57 rû.
62. Şamîlov E, Jîyîna bextewar, Yrêvan, 1959, 115 rû.

63. Şamîlov E. Şivanê kurmanca, Rewan 1935, 135 rû.
64. Şero E. Birqandina ewlin. Rewan 1935, 34 rû.
65. Tûmanyan H. Gîkor. Tercmekir E Evdal, Rewan 1932, 40 rû.
66. Tûmanyan H. Efrandinêd bijare, Yêrêvan 1970, 144 rû.
67. Tûmanyan H. Anûş. Tercmekir Casimê Celîl, Rewan 1934, 64 rû.
68. Tûmanyan H. Se û pişîk. Tercmekir H. Cindî, Rewan 1935, 15 rû.
69. Tûmanyan H. Kalkê Gabo çawa kurmê hevirmiş xaydike. Tercmekir C. Celîl, Rewan 1935, 8 rû.
70. Tûmanyan H. Xayî û xulam. Tercmekir C. Celîl, Rewan 1936, 12 rû.
71. Tûmanyan H. Axirya reş. Tercmekir C. Celîl, Rewan 1937, 10 rû.
72. Tûmanyan H. Nezerê mêrxas. Tercmekir C. Celîl, Rewan 1937, 32 rû.
73. Xaçatryan A. Zimannema kurmancî, Rewan 1932, 96 rû.
74. Xebernema ji zimanê fileyî-kurmancî, Rewan 1933, 330 rû.
75. Xinko Apêr. Tramve li Rewanê, Rewan 1936, 16 rû.

Ռուսերեն լեզվով
На русском языке

1. Аристова Т. Ф. Курды Закавказья /историко- этнографический очерк/, Москва 1966, 208 стр.
2. Аристова Т. Ф. Поездка к курдам Закавказья, „ Советская этнография„ н. 6, 1958, . 134-146 стр.
3. Аверьянов П. И. Курды в войнах России с Турцией в течение 19-го столетия Тифлис 1900,136 стр.
4. Аванесов С, Положение национальных меншинств в Турции, Ереван 1963. 168 стр.
5. Боевой подвиг Кавказских войск. Тифлис 1884.
6. Гасратян М. А. Курды Турции в новейшее время, Ереван 1990, 384 стр.
7. Джамила Джалил. Курдские народные песнии и инструментальные мелодии, Москва 1973, 174 стр.
8. Джалиле Джалил. Курды Османской империи в первой половине 19-го века. Москва 1973, 197 стр.
9. Егиазаров С. А. Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, Тифлис 1891, 234 стр.
10. ЗКОИРГО /Записки Закавказского отд. имп. русского географич. об-ва/ к. 19, Тифлис 1897.
11. История Курдистана, Москва 1999, 519 стр.
12. ИКОИРГО /Известия Кавказского отд. императорского. русского географич. об-ва/ том 13, Тифлис 1915.
13. ИШКВО / Известия штаба Кавказского военного округа/, Тифлис 1900, 1904, 1905.
14. Кабалевский Дм., Про тех китов и про многое другое, Москва 1972,
15. Лалаян Е. А. Айсоры Ванского Вилайета, ЗКОРГО к. 28, выпуск 4, Тифлис 1914, стр. 1-38.
16. Лазарев М. С. Империализм и курдский вопрос /1917-1923/, Москва 1989, 327 стр.
17. Лудшвейт Е. Ф. Турция в годы первой мировой войны, 1914-1918. Москва 1966, 215 стр.
18. Лерх П. И. Исследования об Иранских курдах и их предках северных халдеях, кн. 3, СПБ, 1858, 139 стр.
19. Лихутин М. Русские в Азиатской Турции, 1854-55 годах, СПБ 2, 1863, 446 стр.
20. Международный толстовский алманах, М. 1909,
21. Минорский В. Ф. Курды, заметки и впечатления, Петербург 1915, 44 стр.
22. Марр Н. Я. Еще о слове челеби, ЗВОИРАО т. 20, 1912, стр. 99-151.
23. Мела Махмуд Баязеди, Нравы и обычаи курдов, Москва 1962.
24. Мирзоев К. И. Курды, Малая энциклопедия, Алматы 2001, 303 стр.
25. Никитин В. П.Курды, Москва, 1964.
26. Орбели И. А.Фольклор и быт Мокса, Москва 1982, 141 стр.
27. Орбели И. А., Курдско-русский словарь, т. 2, Ереван 2002, 200 стр.
28. Хамоян М. Основы фразеологии курдского языка, Ереван 1988, 279 стр.
29. Худавердян К. С. Культурная революция в Соетской Армении 1920-1940 гг, Ереван 304 стр.
30. Худавердян К. С. Культурное строительство в Советской Армении в годы первой пятилетки /1928-1932 /, Ереван 1959, 69 стр.
31. Чатоев Х. М. Участие курдов Советского Союза в Великой Отечественной войне, Ереван, 1970, 171 стр.

32. Чатоев Х. М. Курды Советской Армении, Ереван 1965, 153 стр.
33. Чачани К. А. Армянская периодическая печать о курдах /1850-1920/, Ереван 1980, 166 стр.
34. Шараф-Хан Битлиси ибн Шамсаддин, Шараф - Наме, т. 1 Москва 1967, 618 стр.
35. Шамилов А. Ш. К вопросу о феодализме у курдов, Ереван 1936, 52 стр.
36. Юзбашян К. Н. Академик Иосиф Абгарович Орбели, М. 1964, 159.

ԱՐԽԻՎՆԵՐ

1. АВПР, Ф. „Посольство в Константинополе„ , 1913, д. 1605, л. 85.
2. АВПР, Ф. „П-во в К-поле„ , 1912, д. 1603, л. 75, 84, 85, д. 2682, л. 18.
3. АВПР, Ф. „Политархив„ , 1912 -1914, оп. 482, д. 1648, л. 8.
4. АВПР, Ф. „Персидский стол Б„ , 1913, д. 121, лл 21-22.
5. Մաշտոցի անվան մատենադարան, Գ. Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 95, վավ. 177:
6. Մատենադարան, Ալպոյաջյանի ֆ., թղթ. 4, վավ. 9/4:
7. Մատենադարան, ֆ. կաթողիկոսական դիվան, թղթ. 76, վավ. 56:
8. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, գործ Գ. Հալաջյանի, թղթ. 6ա, էջ 37:
9. ՀՀ ԳԱԹ արխիվ, Հ. Առաքելյանի ֆ. կամ ֆ. 14, թղթ. 21, 158/ա:
10. ՀՀ ԳԱԹ, արխիվ, Ս. Հայկունու ֆ., ձեռագիր 130, թղթ. 44,46, 48, 89, 208-214:
11. ՀՀ ԳԱԹ արխիվ, ֆ. 79, ց. 1-ին, թղթ. 1500-2000:
12. ՀՀ հասարակական, քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 353, էջ 69:
13. Նույն տեղում, ֆ. 1, ց. 7, գ. 324:
14. Նույն տեղում, ֆ. 1, ց. 4, գ. 317, էջ 78:
15. Նույն տեղում, ֆ. 1, ց. 6, գ. 166, էջ 5-6:
16. Նույն տեղում, ֆ. 1, ց. 13, գ. 11, էջ 15:
17. Նույն տեղում, ֆ. 1, ց. 22, գ. 301, էջ 115-17:
19. ՀՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (ՊԿՊԱ), ֆ. 101, ց. 1, գ. 58, էջ 3:
20. ՊԿՊԱ, ֆ. 101, ց. 1, գ. 58, էջ 3:
21. ՀՀ նորագույն պատմության կենտրոնական արխիվ, ֆ. 112, ց. 2, գ. 1466, էջ 64:
22. Նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 1513, էջ 20, գ. 926, էջ 216:
23. Նույն տեղում, ֆ. 122, ց. 1, գ. 370, էջ 13:
24. Նույն տեղում, ֆ. 112, ց.2, գ. 148, էջ 14:
25. Նույն տեղում, ֆ. 112, ց. 4, գ. 55, էջ 1:
26. Նույն տեղում, ֆ. 113, ց. 1, գ. 303, էջ 1-17:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.
ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄՆ ՈՒ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Ա. ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ.....19
Բ. ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ.....25
Գ. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՔՈՒՐԴ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ.....60
Դ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՆԴԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....67
Ե. ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՄՈՒԼԻ ՆՈՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....86

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ա. ՔՐԴԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ.....121
Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՅԱՆՔՈՒՄ (1920 - 1990 թթ.).....127
Գ. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.....131
Դ. ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՋԱԽՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....140

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.
ՔՐԴԱԿԱՆ ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920-1990 թթ.)

Ա. ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ՈՐՊԵՍ ՔՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ.....161
Բ. ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ.....173
Գ. ՔՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏՔԻ ՎԵՐԵԼՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....196
Դ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՀԱՐՍՏԱՑՆՈՒՄ Է ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....212

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.
ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ (ԵՐԳ - ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ԹԱՏՐՈՆ, ԿԻՆՈ, ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ)

Ա. ԵՐԳ-ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ.....225
Բ. ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ.....245
Գ. ՔՐԴԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ.....256
Դ. ՔՐԴԱԿԱՆ ԹԵՄԱՆ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....260

ԱՄՓՈՓՈՒՄ.....265

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....269

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հայերեն լեզվով.....289
Քրդերեն լեզվով.....293
Ռուսերեն լեզվով.....296

ՄԱՄՈՒԼ.....298

ԱՐԽԻՎՆԵՐ.....300

ՉԱՉԱՆՅԱՆ ԿԱՐԼԵՆ
(ԿԱՐԼԵՆԵ ՉԱՉԱՆԻ)

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԸ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ (1850-1990 թթ.)

ЧАЧАНЯН КАРЛЕН
(КАРЛЕНЕ ЧАЧАНИ)

ВКЛАД АРМЯНСКОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ В ИЗУЧЕНИЕ КУРДСКОЙ КУЛЬТУРЫ И ИСТОРИИ (1850-1990 г.)

«ՎԱՆ ԱՐՅԱՆ»
ԵՐԵՎԱՆ
2004

Հրատարակիչ-խմբագիր՝
ՎԱՆ ԱՐՅԱՆ

Համակարգչային ձեւավորումը՝
Լորա ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ

Սրբագրիչ՝
Նարինե ՍԱՆՈՅԱՆ

Չափը՝ 60X84, 1/16: Ծավալը՝ 19 տպ. մամուլ:
Թուղթը եւ տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 300 օրինակ

Տպագրվել է «Վան Արյան» հրատարակչատան տպարանում